Էջմիածին

Գ 1993

4 Հայոց Արեւելեան կողմերի լուսաւորիչ սուրբ Եղիշէ առաքեալի նահատակութիւնը եւ նշխարների գիւտը

7 Ս. ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ Սուրբ Հռիփսիմեանների պատմութիւնը

13 Ս. ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ Սուրբ Հռիփսիմէի եւ նրա վկայակիցների յիշատակին եւ նրանց նահատակութեանը [նուիրուած] ներբողեան՝ հրաշազարդ յօրինուածներով

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

32 ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ Յաղագս պաշտամանց

50 ԱԲԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՕՂԼՈՒԳԵԱՆ Մի քանի դիտողութիւններ Անանիա վարդապետ Սանահնեցու «Ընդդէմ երկաբնակաց» ճառի հրատարակութեան առիթով

57 ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ Մկրտութեան արարողութեան աստուածաբանութիւնը

89 ՅԱԿՈԲ ՔԵՈՍԷԵԱՆ Հայ եկեղեցու աստուածաբանութիւնը շարականներում եւ տաղերում

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

122 ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ Ս. Յովհան Մանդակունի

Ս. ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

123 Ա. Թուղթ յանցաւոր-վարքի խոստովանութեան մասին

128 Բ. Թուղթ ապաշխարութեան մասին

134 Գ. Թուղթ պահքի պնդութեան մասին

140 Դ. Ընդունելի եւ անընդունելի աղօթքի մասին

147 ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ Սուրբ Եփրեմ Ասորի

151 Ս. ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ Սուրբ հայր Եփրեմ Խուրի Ասորու զօրաւոր աղօթքը

174 ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ Անանիայի վարդապետի հայոց բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց, զոր գրեաց հրամանաւ տեառն Պետրոսի հայոց վերադիտողի (շարունակութիւն)

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ

218 ՅԱԿՈԲ ՔԵՈՍԷԵԱՆ «Մեկնութիւն Թագաւորութեան

Գլխ. խմբագիր՝
Մեսրոպ քահանայ
Արամեան

Պատ. քարտուղար՝
Տիգրան
Խաչատրեան

Տեխ. խմբագիր՝
Յովհաննէս
Կիզողեան

Վերստուգող
սրբագրիչ՝
Շուշան Վարդանեան

Նկարիչ՝
Արմէն Քիւրքչեան

վասն Դաւթի եւ Սաւուղայ...»
221 Մեկնութիւն Թագաւորութեան վասն Դաւթի եւ Սաւուղայ ի սպանելոյն Գաւղիաթի՝ Յովհաննու Ոսկեբերանի եւ Եփրեմի եւ Յիպոդիտեայ ասացեալ
246 ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ Եղիշէի «Հայր մերի» մեկնութիւնը
248 Ս. ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ «Հայր մեր» աղօթքի մասին

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

256 Սուրբ Տրդատ թագաւորի վարքը
265 Սուրբ Գեւորգ զօրավարի վկայաբանութիւնը
277 Երանելի աբբայ Մարկոսի վարքը
287 Երանելի Սիմէոն Սիւնակեացի վարքը

ՀԱՅՈՑ ՆՈՐ ՎԿԱՆԵՐԸ

291 Դաւիթ Խարբերդցի
293 Լոյս Գրիգոր
301 Միքայէլ ծայրագոյն վարդապետ Աջապահեան
303 Աշոտ քահանայ

ՀՈԳԵՒՈՐ ՄՇԱԿՈՅԹ

306 ՎԻԳԷՆ ՂԱՋԱՐԵԱՆ Գեղագիտական ըմբռնումները խորանների մեկնութիւններում
320 ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ Հոգեւոր պատկերըմբռնողութիւնը եւ կանոնի նշանակութիւնը եկեղեցական կերպարուեստում
329 ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ Պատկերուսոյց գիրք

ԳԱՆՁԱՍԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
375019, ԵՐԵՒԱՆ, ԲԱՂՐԱՄԵԱՆ 24 Գ
հեռ. 271520

ԵՐԵՒԱՆ 1993

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՎԱՉԳԵՆԻ Ա
ՍՐԲԱՉՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. ՊԱՐԳԵՒԻ
ՍՐԲԱՉԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ

ՍՈՅՆ ՀԱՏՈՐԸ ՏՊԱԳՐՈՒՄ Է
ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԿԱՆԱԴԱՅԻ ԹԵՄԻ
ՄԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՄԲ

ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿՈՂՄԵՐԻ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՍՈՒՐԲ ԵՂԻՇԷ[1] ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՇԽԱՐՆԵՐԻ ԳԻՒՏԸ

... Եւ Իր սուրբ եւ ցանկալի աշակերտներին առաքեց աշխարհով մէկ՝ քարոզելու, որով եւ մեր արեւելեան կողմերին վիճակուեց ս. Թադէոս առաքեալը: Սա, գալով[2] Հայք՝ Արտազ գաւառ, այնտեղ մարտիրոսական վախճան է ընդունում հայոց Սանատրուկ արքայից: Եւ նրա աշակերտ ս. Եղիշէն վերադառնում է Երուսաղէմ եւ պատմում իր առաքելակիցների տենչալի նահատակութեան մասին: Այնտեղ Սուրբ Հոգու ազդմամբ Եղիշէն ձեռնադրւում է Յակոբոս Տեառնեղբօր ձեռքով, որը Երուսաղէմի առաջին հայրապետն էր, եւ, իրեն վիճակ ստանալով արեւելեան կողմերը, Երուսաղէմից[3] ճանապարհւում է Պարսկաստան[4], մտնում Մազքութ՝ շրջանցելով Հայաստանը, Չողում[5] քարոզութեան սկիզբը դնում եւ, տարբեր վայրերում շատերի ուսուցանելով[6], յայտնում փրկութիւնը: Այնտեղից գալիս է Ուտիք[7] գաւառի Սրհառն քաղաք երեք աշակերտների հետ, որոնց անօրէն հարազատներից ոմանք ետեւից գալիս են, եւ աշակերտներից մէկը[8] նրանցից

1 Եղիշէ առաքեալից բացի հայոց արեւելեան կողմեր են գնացել Քրիստոսի եօթանասուներկու աշակերտներից Թադէոս եւ Խադ առաքեալները (Տե՛ս Միխայէլ Ասորի, «Ժամանակագրութիւն», «Յաղագս քահանայութեան», Երուսաղէմ, 1871, էջ 33): Արցախում նրանց նշխարների վրայ կառուցուած են վանքեր՝ Դադիվանք (Թադէոսի վանք) եւ Խադարի վանք կամ Խաթրավանք:

2 Փրկչական 34—35 թթ.

3 Փրկչական 70 թուականին (տե՛ս ծ. վրդ. Բարխուդարեան, «Պատմութիւն Աղուանից», Վաղարշապատ, 1902թ., Ա, էջ 51):

4 Ըստ Յայսմաւուրքի՝ «ի Քրդստան, ի Հայաստան, ի Պարսկաստան եւ գնացեալ եհաս աշխարհն Աղուանից» (Յայսմաւուրք, սեպտեմբեր ԻԱ, ՁԲ):

5 Այս քաղաքում յետագայում նահատակւում է Աղուանքի հայրապետ ս. Գրիգորիսը: Հնում այս քաղաքը մինչեւ Փրկչի 559 թ. կաթողիկոսների նստավայր է եղել (տե՛ս Բարխուդարեան, «Աղուանից երկիր եւ դրացիք», Թիֆլիս, 1893, էջ 105):

6 Շարունակ քարոզեում եւ ուսուցանում է Ճըբաց, Լիկեան, Բաքուայ, Շամախու գաւառներում (տե՛ս ծ. վրդ. Բարխուդարեան, «Պատմութիւն Աղուանի», Վաղարշապատ, 1902թ., Ա, էջ 51):

7 Հասնում է Ուտեաց Կապաղակ (այժմ՝ Ղապալու) (տե՛ս նոյն տեղում):

8 Խօսքը Եղիշէ առաքեալի աշակերտ Վլասի մասին, որն ամփոփուած է Նիժում՝ Եղիշէ առաքեալի անուան եկեղեցու սեղանի տակ (տե՛ս Բարխուդարեան, «Աղուանից երկիր եւ դրացիք», Թիֆլիս, 1893, էջ 284): Իսկ Ս. Ջալալեանը նկարագրում է. «Ընդ մէջ գեղջս էր դամբարան Վլաս նահատակին, ի վերայ որոյ գոյ փոքրիկ մատուռ, զորմէ աւանդութեամբ ելեթ գիտելոյն առնէին զուխտաւորութիւն. յետ որոյ Աստուածատուր քահանայ ազգաւ Ռուսի, առ ի շինել զհոյակապ եկեղեցի, քակեաց մատուռն զայն մարդաչափ խորութեամբ, ուր անոր երեւեցաւ տապանավէմ, ի վերայ որոյ կայր գրեալ. «Վլաս՝ աշակերտ Եղիշէի, ի բառնալ վիմին երեւեցան ոսկերք սրբոյն եւ ի նմին տապանի երեք խաչ... հանեալ անտի զնշխարսն՝ դնէ ի ներքոյ սեղանոյն, եւ այլն»» (տե՛ս Ջալալեան, «Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան», Ի Տփխիս, հտ. Բ, էջ 381):

ընդունում է նահատակութեան վախճանը: Իսկ երկուսը, թողնելով երանելի Եղիշային, գնում են ամբարիշտ ու խողխողիչ այրերի ետեւից: Իսկ սուրբ հայրապետը, գալով Գիս[9], եկեղեցի կանգնեցրեց եւ անարիւն պատարագ մատուցեց[10]: Այս տեղում եղաւ արեւելեան կողմերի եկեղեցիների մայրաքաղաքների եւ լուսաւորութեան սկիզբը: Եւ, այնտեղից[11] Ջերգունի դաշտով անցնելով դէպի դիցամոլ կռապաշտների զոհարանի տեղը[12], այնտեղ ստացաւ նահատակութեան պսակը[13]: Եւ անայլայլ է, թէ ինչպէս եղաւ իրերի վախճանը: Եւ պատուական նշխարներն այնտեղ մահապարտների մի գբում գցուեցին եւ բազում ժամանակներ ծածկուած մնացին Հոմենք կոչուած տեղում:

Պէտք չէ ճշմարտութիւնը ծածկուի, եւ լոյսը փակի տակ լինի: Բազում ժամանակներ անց երկիւղած այրերից ոմանք, տեսիլքով նրան տեսնելով, միախումբ հաւաքւում են գբի տեղում եւ այնտեղ տեսնում շեղջակուտուած բազում ոսկորներ: Եւ բոլորը տարակուսեցին[14], սակայն հանեցին, դիզեցին եւ այն գիշեր աղօթքներով հսկեցին: Եւ առաւօտեան մեծ շարժում եղաւ, մինչեւ որ այնտեղ եղողները գետնին ընկան[15], եւ անապատից սաստիկ հողմ եկաւ, անսուրբերի ոսկորներն ամբողջ դաշտով մէկ ցիրուցան արեց, եւ տեղում մնացին միայն առաքելական այն նշխարները, որոնց միջից Ուռեկան գիւղի մեծահաւատ ոմն Ստեփանոս քահանայ միայն, գլուխը յափշտակելով, աճապարելով իր երիվարով հեռացաւ: Եւ երբ բազմութիւնը նրա ետեւից շարժուեց, խաւարային մառախուղը, շանթերով մէջտեղ գալով, զարհուրեցրեց նրանց, եւ նրանք վերադարձան իրենց հաւաքատեղին: Եւ երբ սուրբ Եղիշէն տեսիլքով յայտնուեց, նրա նշխարները սուրբ Ստեփանոս քահանայի ձեռքով տարան, ամփոփեցին այնտեղ, ուր

9 Ըստ Կաղանկատուացու՝ Աղուանից առաջին եւ մայր եկեղեցին է՝ Շաքի քաղաքից վերեւ, Կովկաս սարի ստորոտում, Գիս գետակի աջ ափին, որտեղ կառուցում է Գիս կոչուող վանք (տեղական արտասանութեամբ՝ Քիշ): Ե դարում ս. Մեսրոպն իր աշակերտներով գալիս է այստեղ, նորոգում Եկեղեցու հաւատքը եւ դաւանութիւնը, ապա, չարագործների երկիւղից ստիպուած, գետնի մէջ ամփոփում է այն Խաչը, որի մէջ կար կենաց փայտի մասը: Ամփոփած տեղում նահատակւում է ս. Մեսրոպի աշակերտների կէսը (տե՛ս Բարխուդարեան, «Աղուանից երկիր եւ դրացիք», Թիֆլիս, 1893, էջ 269—270):

10 «Եւ անդ դարձոյց զբազումս ի հաւատս Քրիստոսի: Եւ, մկրտեալ զամենեսեան, հաղորդեաց Մարմնոյ եւ Արեան Քրիստոսի, շինեաց եկեղեցիս եւ կարգեաց քահանայս» (տե՛ս Յայսմաւուրք):

11 Դառնալով Կապաղակ գաւառը՝ շարունակ քարոզելով անցնում է Ջարդունի դաշտով (տե՛ս Բարխուդարեան, «Պատմութիւն Աղուանի», Վաղարշապատ, 1902թ., Ա, էջ 52):

12 Հոմենք կոչուած մահապարտների հորը, որի մոտ կռատուն է եղել (տե՛ս նոյն):

13 «Մնդ կատարեցաւ՝ քարկոծեալ անօրինացն» (տե՛ս Յայսմաւուրք):

14 «Եւ ոչ գիտէին զնա, թէ ով ոք իցէ» (տե՛ս նոյն):

15 «Դարձեալ երեւեցաւ եւ ասաց, թէ՝ ես եմ առաքեալն Եղիշէ՝ աշակերտ մեծին Թադէոսի առաքելոյն» (տե՛ս նոյն):

դրուած էր գլուխը՝ Ուռեկան աւանում[16]: Եւ ապա այնտեղից տեղափոխեցին Ներսմիհրի սուրբ ուխտը, որն այժմ Ջրվշտիկ է կոչւում՝ ի փառս ամենակալ Տէր Աստուծոյ: Իսկ բազում ժամանակներ անց Աղուանից Վաչագան բարեպաշտ արքան[17] նահատակութեան գբի վրայ սիւն կանգնեցրեց[18]: Արքայի սենեկապանն էլ, սեան վրայ մենակեաց լինելով, վախճանուեց[19]:

ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ, «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ»

16 Գլխոյ վանք կամ Հիւրեկա վանք

17 Վաչագան Գ՝ թաղուած նոյն վանքում, մի մատուռի մէջ. տապանի վրայ գրուած է. «Այս է հանգիստ Վաչագան, թագաւորին»:

18 Բարխուդարեանը գրում է. «Այժմ անյայտացած է սիւնն, որն լցուած է բացի մի կանգուն խորութիւնից. յաճախում է հայերից եւ մահմեդականներից ուխտաւորաց մեծ բազմութիւն» (տե՛ս Բարխուդարեան, «Աղուանից երկիր եւ դրացիք», Թիֆլիս, 1893, էջ 256):

19 «Եւ, բազում ճգնութեամբ կեցեալ, հանգեաւ ի Քրիստոս, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն»:



ՏՕՆԱԿԱՆ

Ս. ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Սուրբ Հռիփսիմեանների կեանքի, վարքի եւ զանազան վայրերի մասին, որ գրուած չեն բազմաքանակ ճոխաբան պատմութիւնների մէջ, քննութեան առնելով բազում յոյն մատենագիրների եւ ըմբռնելով ճառերի միտքը, որոնք կեղծիքից հեռու էին եւ ճշմարտութեամբ լի, կարգեցի քեզ համար այս գրուածքի մէջ, որին, կարծում եմ, միտք ունեցողներից ոչ ոք չի ընդդիմանայ, բացի նրանից գուցէ, ով, կեղծիքը սիրելով, կքանայ աղաւաղել այս պատմութեան ոճը: Երբ Ատտիկէում ընթերցում էի ելլադացի իմաստունների ատենաբանութիւնները, շատ անգամ եմ հանդիպել այս գրուածքի ոճին, որը յարմար էր գալիս մեր այս պատմութեան հիւսմանը: Մեզ յոյժ պիտանի եւ օգտակար է թւում Դաւիթ Հռոմէացու «Եկլեսիաստէս» անուանուած գիրքը, որ ես թարգմանել կամեցայ եւ ժամանակ չունեցայ. մնաց այլ տեղի եւ կամ իմաստունի: Քանզի ես, լինելով մահկանացու, ծեր եւ հիւանդոտ, հրեշտակ կամ Բարձրեալի որդի չլինելու պատճառով երկնչելով, ինչպէս որ ասում է աստուածային խօսքը, փոքր—ինչ երկ-

որդեցի նոյն այն գիրքը, որ թողել է հմուտ քարտուղար Ագաթանգեղոսը, որն, իհարկէ, չէր կարող բոլոր խօսքերն ու գործերն իր մտքի մէջ ծովացնել եւ ուրիշներին էլ [ասելիք] թողեց:

Եւ արդ, նոյն այդ գրքում պատմւում է, որ սուրբը նոյն թագաւորական տոհմից էր, ինչ Օգոստոս կայսրը՝ թագաւորների ցեղապետը: Գայիանէն նոյնպէս նոյն ցեղից էր՝ առաքինի եւ զարմանալի հօր եւ մօր դուստր: Առաքելական դասերին նախանձախնդիր լինելով, ինչպէս գրում է՝ նրանք իրենց իմացութեամբ շատ մօտ էին նրանց, որոնց հին համբաւ ունեցող գործերը մոռացութեան չէին մատնել՝ ընտելանալով կամ ծուլանալով, ինչպէս որ մեր ժամանակներում է, երբ աստուածպաշտութիւնը նուաղել է, սրբութիւնը՝ լռել, իսկ մեղքը՝ գլուխ բարձրացրել: Այլ տղամարդիկ առաքեալների նման լաւ գործերին էին նախանձախնդիր, իսկ կանայք զգաստանում էին՝ նախանձելով Աստուածածնին, Քրիստոսի մայրեր լինելով, ինչպէս ասաց հայրերից մէկը: Այսպիսին էին նաեւ սուրբ Հռիփսիմէի ծնողները, որն Աւազանից ի վեր սուրբ Գայիանէի սանն էր, ով վանական կոյսերի մայրն էր Հռոմում գտնուող սուրբ Պօղոս առաքեալի վանքում, որը երանելին իրեն տեղ ընտրեց՝ առաքեալից հրաման ստանալով՝ պարտ եւ պատշաճ կերպով աղօթելու. եւ նրանից յետոյ ուրիշներն էլ աշակերտեցին՝ երեք հարիւր հոգի՝ պահելով առաքեալի այս հրամանը: Եւ լինելով այս վայրի տեսուչը՝ Գայիանէն Հռիփսիմէին դաստիարակեց իր մօտ՝ զգաստացած կոյսերի մէջ, եւ երբ նրա աղօթքի պտուղն արբունքի հասաւ, տեսնելով նրա հոգու մեծանձնութիւնը, սուրբ Աստուածածնի աղախինը լինելու պատուին նրան կարգեց եւ տուեց՝ ուխտերով եւ աղօթքներով ծառայելու Աստուածածնին: Նրա պարանոցն է գցում նաեւ սուրբ Յակոբ [Տեառնեղբօր] խաչը՝ տէրունական արեամբ ներկուած, որը հատուել էր Կենաց Փայտից Պատրոնիկէ տիկնոջ խնդրանքով, որը եւ ինքն էր պահպանել նոյն Տեառնեղբօր միջոցով եւ մեծ փափագով ու երկիւղածութեամբ առաւ եւ գցեց մեծ սուրբ Հռիփսիմէի պարանոցը, ինչպէս որ մի ժամանակ Ռեբեկայի ականջներին գինդերը [գցեցին]՝ հարսնանալու հաւատքի հայր Աբրահամին. թէպէտ եւ [դրանք իրար] նման չեն, բայց երկուսն էլ Եկեղեցու խորհրդի համար եղաւ. եւ այս մասին՝ այսքանը:

Եւ երբ յուզումնալից ժամանակը հասաւ, ազնուական ծագման եւ սքանչելատեսիլ գեղեցկութեան համար նրան, ով աշխարհում նոյնպէս փայլում էր հոգով, որոշեցին տիեզերապետութեան թագուհին դարձնել՝ ի պատիւ հռոմէացիների տան: Եւ Գայիանէն, հոգու աչքով [այդ մասին] իմանալով, առնում է նրան, փախչում Եգիպտոս՝ Աղեքսանդրիա [քաղաքը]. այնտեղից էլ գնում է Երուսաղէմ՝ երկրպագելու տեղի սուրբ վայրերը: Եւ, մտնելով քարայրը, Սրբուհու առաջ աղօթքներ եւ պաղատանքներ էին մատուցում, որ օգնի վտանգուած եւ փախցուած կոյսին, որը նրա աղախինն էր եղել մանկութիւնից: Այնտեղից գնացին Գեթսեման՝ Աստուածածնի գերեզմանը, եւ [Գայիանէն], այնտեղ աղօթելով, ասում էր. «Մա՛յր Լուսոյ, Կո՛յս անարատ, որ կուսութեան վերակացու ես եւ սրբութեան օգնական, ընդունի՛ր աղերսական աղօթքներն անարժան աղախնուցս. եւ իմ հոգեորդուն, որ սնեցի՝ քեզ աղախին տալով, զգաստացնելով արդարացրո՛ւ արժանաւորապէս եւ մի՛ թող, որ օտարը փորձութեան ենթարկի նրան, եւ մի՛ թող, որ աղտեղանայ պիղծ թագաւորների ձեռքով, որպէսզի մեր՝ քեզ հետ կապած ուխտը չխափանուի: Այլ յիշի՛ր իմ պանդխտութիւնը եւ մեր կեանքի ալեկոծումները, որոնք քեզ համար են, յիշի՛ր եւ քո Որդու եւ մեր Աստուծոյ չարչարանքները եւ ողորմի՛ր մեզ, որի համար օրհնում ենք քեզ»: Եւ, Աստուածածնին երկրպագելով եւ շատ արտասուք հեղելով, մէկ ամիս մնացին այնտեղ: Ապա [Աստուածածինը] տեսիլքով երեւաց սուրբերին, եւ հրաման ստացան գնալ Հայք՝ Արարատեան երկիրը, Թադէոս առաքեալի վիճակը: «Եւ այն փայտեղէն պատկերը, որ դրուած է եղել իմ վերափոխման օրը, ա՛յն փնտրէք՝ ձեր կեանքի ուղին աւարտելով արեամբ»:

Եւ, այնտեղից խնդութեամբ դառնալով, եկան Եդեսիա քաղաքը եւ, երկրպագելով փրկչական պատկերին, ուրախութեամբ լցուեցին, եւ թուաց նրանց, թէ մարմնացած Բանն են տեսնում: Դարձեալ սքանչելի տեսիլքը տեսնելով՝ յորդորւում էին ճգնութիւնների: Եւ կանանց մի մասը, նրանցից բաժանուելով, մնաց նոյն քաղաքում, Աբգարի մեծ եկեղեցում՝ կրօնաւորելով սուրբ Թադէոսի [դրած] հիմքի վրայ: Նոյնպէս էլ մնացին այնտեղ՝ Դարանաղեաց գաւառում, Սեպուհ կոչուող լեռան խորշում, որ անուանուեց Մանեայ այրք:

Սուրբերից աւելի քան եօթանասուն հոգի, ասում է պատմագիրը, ելնելով նրանց հետ հռոմէացիների քաղաքից, բնակութիւն հաստատեց զանազան վայրերում: Իսկ տեղում մնացած քոյրերը եւ Գայիանէի Եւզոյի անունով քոյրը, քոյրերի հետ միաբանուած, բարի վկայութեամբ նահատակուեցին ամբարիշտ Դիոկղետիանոսի կողմից, որն իր չարութեան թոյնը նրանց վրայ թափեց, որոնք Քրիստոսի վկաներ դարձան՝ մեծ առաքելուհուն մահուան վճռով չբռնելու պատճառով: Եւ բազում տառապանքներով եկան, հասան Բզնունեաց գաւառ, Խլաթ քաղաք՝ երեկոյեան այնտեղ օթեւանելով: Եւ այնտեղից տեղափոխուեցին եւ գնացին Մոկաց գաւառը՝ Սուրբ Խաչ կոչուող վայրը, որտեղ Աստուած մեծ սքանչելիքներ կատարեց նրանց միջոցով՝ Եսայու եւ Դանիէլի պատուական սուրբ խաչով, որի մասին թէ՛ ես եւ թէ՛ դու գիտենք, եւ արժէ՞ արդեօք երկրորդել: Երբ առաքելանման քահանաներն ու սուրբ կոյսերը հասան Կճաւ կոչուող վայրը, որ դեւերի պաշտամունքով էր լցուած, ընդդիմամարտելով արգելեցին ձիերի

մէջ, որ դեւերը, զայրացած յարձակուելով, խեղում, այլանդակում, պնչատում էին իրենց պաշտօնեաներին: Այնտեղ առաքելանշան քահանաները, հալածելով նրանց եւ քանդելով նրանց պաշտամունքային շինութիւնները, բժշկում էին խեղեալներին, որի համար էլ տեղը Կաճաւ կոչուեց: Սուրբ Գայիանէն այնտեղ թողեց իր խաչը որպէս դեւերի ախոյեան, ինչպէս աւազակի համար, որտեղ եւ յետոյ վանք հաստատեց սուրբ Գրիգորը:

Եւ իրենց յայտնի դարձած անուան պատճառով նրանք գաղտնի գնացին Կորդուաց [գաւառի] միջով դէպի Սողոփ լեռը՝ Բերկրացւոց գաւառում, որտեղ աչացաւութեան ախտով վարակուեցին եւ երբ աղօթեցին, երկու աղբիւր բխեց, որոնց ջուրը ժանգ ունէր՝ կարմիր էր եւ սպիտակ. եւ մինչեւ այսօր սրբուհիների անունով օգնում է աչքի ցաւ ունեցողներին: Բայց այս լեռան մասին ասորիները պատմում են, թէ երբ նուազեցին հեղեղների ջրերը, տապանը հասաւ այն լեռան գագաթին, որը Սարարադ լեռն է, եւ նրանց միջով սղոցաձուկն անցնում եւ արգելակում է նաւը. եւ գիւղաքաղաքի անունը Թմնիս դրուեց, այսինքն թէ՝ ութ հոգի ելան տապանից:

Իսկ սուրբերն, իրենց ապահով զգալով, խրճիթներ շինեցին եւ բնակուեցին: Եւ այնտեղից գնացին եւ օթեւանեցին գետի վտակների կամրջի մօտ՝ Տմորեաց կողմում, ծառաւէտ ընկուզուտ վայրերում: Եւ, այնտեղից տեղափոխուելով, մտնում են Հայաստան գաւառը, Մշկունեաց լեռան խորին խորշի մէջ: Սրա մասին պատմւում է, թէ այնտեղ մշկապորտ այծեամներ կան, ուր եւ, բազում հալածական բորոտներ գտնելով, ընտրեալ քահանաները նրանց բժշկում են սուրբ խաչով, ուր եւ Տիրոջից աղբիւր շնորհուեց նրանց. եւ այստեղ ծեր կանայք մնում էին մինչեւ իրենց մահուան օրը: Եւ, այնտեղից չուելով եւ կանգ առնելով Բժունեաց սահմանին, մնացին այնտեղ բազում օրեր: Եւ, այնտեղից տեղափոխուելով, բնակուեցին գետի միւս ափի յորդաբուխ աղբիւրի մօտ՝ քաջալերուելով Սուրբ Հոգու շնորհներով. շատ օրեր անցկացրին՝ զուարճանալով տեղանքի բարեհամբաւութեամբ: Այնուհետեւ նրանց մի մասն այստեղ մնաց՝ այն վայրում, որի անունը Սուրբ Տիկին է:

Եւ այնտեղից առաջ անցան (որտեղից սկիզբ է առնում բովանդակ գետը, որտեղ որ փոքրագոյն, անօգուտ ջրերը Կանգուարայ լեռներից, որ Ագռաւաքար է կոչւում, հոսելով եւ գարնանային վտակները գետանալով, գալիս են օժանդակելու մեծ գետին, որ Տիգրիս է կոչւում) եւ հասան մի վայր եւ [այնտեղ] գտան սակաւաթիւ քրիստոնեաների, որոնք նշանակերտած պահում էին Տիրամօր պատկերը, որին ուրախացած երկրպագեցին եւ Սրբուհուն գոհութիւն էին յայտնում: Եւ սակաւ օրեր մնացին [այնտեղ], քանզի հաւատացեալները չկամեցան՝ կասկածանքներից երկուութեան մէջ

լինելով. եւ նրանք գնացին դէպի Պաղատ լեռան գլուխը, որտեղ, ասում էին, մեծ քանակութեամբ դեւեր կան, որ մեծարում են Արամազդի եւ Աստղիկի տունը: Եւ յաճախ պաշտամունքով տօն են անում, որը Պաղատն է: Եւ այնտեղից լեռան զառիվայր, արեգակնահայեաց կողմի խոր ձորով մի փոքր գնացին դէպի հարաւ, դէպի լեռան այն կատարը, որը վար է իջնում, աստուածների կրակի, անյագ հրի, անդադար այրման տունը. եւ քարեր էին հոսում յորդաբուխ աղբիւրի ակունքից, որ բխում է լեռան ստորոտում՝ բարձր ապառաժի առաջ, այն տեղում, որը կոչւում է Բութ: Քանզի քոյրը կրակն էր վառում, իսկ եղբայրը՝ աղբիւրը [բխեցնում]:

Եւ քարայրում որջացած ապրում էին երկու վիշապ՝ դիւացած եւ սեւացած, որոնց կոյս աղջիկներ եւ անմեղ պատանիներ էին զոհաբերում: Դեւերը, [illegible]անց արեամբ զուարճացած, նաեւ բագիններով, հրով եւ աղբիւրներով զարհուրելի տեսարան եւ փայլատակում, թնդիւններ եւ դոփիւններ էին ներկայացնում: Եւ խոր ձորերի մէջ լցուած էին մահաբեր թոյներով լի օձեր եւ կարիճներ: Սուրբ կանայք այնտեղ են հասնում եւ, աղօթքներով ու արտասուքներով երկինք հայելով, առնում են սուրբ նշանը եւ պահում աղբիւրի վրայ, եւ դեւերը փախչում, մտնում են բագինը՝ վա՜յ—վա՜յ աղաղակելով: Եւ լեռներով մէկ ուրիշ ձայն չէր լսւում, բացի [նրանց] վայումի ճիչերից: Եւ նրանք անցնում են այն ձորի միջով, որտեղ մինչեւ այսօր քարացած մարմնով օձերը մնում են: Եւ բագիններից փախած դեւերն ընկնում էին Մարաց երկիրը: Եւ պատկերը փշրեցին սուրբ խաչի զօրութեամբ, որը գիւղի բնակիչները տեսնելով՝ սուրբ երանելիների միջոցով հաւատացին Քրիստոսին:

Եւ, այնտեղից դուրս գալով եւ հիւսիսի կողմով իջնելով, եկան Կորիթ կոչուող գիւղը: Կուռքերին փշրեցին, թունաւոր օձերին սպանեցին սուրբ խաչի նշանով եւ դեւերի աղբիւրը ցամաքեցրին, որտեղ եւ յետոյ սուրբ Գրիգորը երկու եկեղեցի շինեց եւ Կորիթում փայտեղէն սեղան պատրաստեց եւ իր գօտին ու գաւազանը որպէս նշան թողեց այնտեղ: Իսկ սուրբերը, Տոսբ գաւառ հասնելով, սուրբ նշանը թողնում են լեռան հարաւային կողմից՝ Վանի դիմաց՝ վանքի շատ փոքր խուցեր շինելով. այնտեղ մնացին՝ սպառնացող հալածանքների կասկածի պատճառով: Եւ այնտեղ Վարագ լեռան վրայ ամրացան, որովհետեւ լսեցին, որ որոնում են իրենց, ցանուցիր բնակուեցին լեռան խորշում՝ իրենց համար գետնափոր բնակարաններ շինելով: Այսպէս սուրբ քահանաներից երկու հոգի ապրեցին նոյն տեղում մինչեւ առ Քրիստոս իրենց կոչման եւ վախճանի օրը: Եւ նրանց [բնակութեան] տեղերը կոչուեցին Ուրբաթայրեր, քանզի ուրբաթից ուրբաթ սուրբ պատարագ էին մատուցում եւ արժանաւորապէս բաշխում Տիրոջ Մարմինը եւ Արիւնը սուրբ կանանց:

Արդ, ո՞վ կարող է պատմել Տիրոջ զօրութիւնների մասին՝ լսելի դարձնելու համար Նրա սքանչելիքները, Ով Իր ողորմութեամբ գերազանց լոյս ծագեցրեց մեզ համար արեւմուտքից մինչ Հայաստան երկրի արեւելքը, մանաւանդ՝ կանանց միջոցով, որոնցի՛ց աշխարհի մտան մեղքերը. Ով ամենակարող է, եւ անհնար ոչինչ չկայ Նրա համար: Արդ, Արարատեան գաւառի Վաղարշապատ քաղաքում երանելիների մահուան, չարչարանքների եւ նահատակութեան մասին կիմանաս Ագաթանգեղոսի պատմութիւններից: Որոնց միջոցով բարձունքներից անստուեր Արեգակը ծագեց մեզ համար՝ լուսաւորելով մեզ աստուածգիտութեան լոյսով, պայծառացնելով տօնասէր եւ աստուածասէր հաւատացեալ ժողովուրդների սրտերը. որի համար էլ Քրիստոսին վայել է փառք եւ զօրութիւն եւ իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Գրաբարից փոխադրեց Գուրգէն Գասպարեանը



ՏՕՆԱԿԱՆ

Ս. ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԷԻ ԵՒ ՆՐԱ ՎԿԱՅԱԿԻՑՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԵՒ ՆՐԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆԸ [ՆՈՒԻՐՈՒԱԾ] ՆԵՐԲՈՂԵԱՆ՝ ՀՐԱՇԱՋԱՐԴ ՅՕՐԻՆՈՒԱԾՆԵՐՈՎ

Նորահրաշ եւ գերապայծառ է տօնն այս, եւ հոգեւոր ցնծութեան աւետիսն ընդհանուր առձայնում է բոլոր հայաստանցիներիս՝ մշտահոս առաքինութեամբ, լուսերանգ ծաղիկներով պսակելով աստուածասէր անձանց, որոնք ցնծում են վկաների պատուով եւ զուարճանում նահատակների արեամբ: Կուսական է տօնն այս եւ բոցեղէն զուարթուն երկնայինների կուսական դասակցութիւնների լուսաւոր խմբերին յորդորում է տօնակից եւ զուարճակից լինել, իսկ ասքանազեան ազգին՝ այսօր տեսնել սա՝ Քրիստոսի փառքի փայլմամբ պսակուելով եւ հրճուելով: Մարտիրոսական է տօնն այս եւ ճգնաւորական հանդէս եւ վկաների բոլոր պսակակապ թագազարդուած դասերին, այծառ եւ մեծ սուրբ առաքեալների եւ մարգարէ-

ների աստուածազգեաց խմբերով հանդերձ, հրաւիրում է դէպի նոր Սիոն՝ պարակից լինելու առագաստի մանկանց, երկնատոր հարսանեաց հոգեւոր երգերը երգելու՝ ի փառս անմահ Փեսայի:

Այսօր ցնծութիւն է երկնի եւ երկրի եւ երկնաւոր շնորհների մեծ աւետիքը. պայծառ լոյսով շրջափայլելով Թորգոմի տան մէջ՝ հաւատացեալների հոգում երկնի ցնծութիւնն է շարժում: Որովհետեւ կենդանի Լոյսը, որ փայլատակում էր երկնքից Հռիփսիմեանների վրայ, այստեղ բացափայլեց փայլակնաբորբ ճառագայթներով. [այն] ոչնչացնում է անէծքների փուշը եւ վկայական արեամբ նորոգում երկնայինը, այստեղ ծաղկեցնում բանաւոր բոյսերի արդարութեան բողբոջները, սաղմոսների անուշահոտութիւն բուրում. այստեղ հնչում է անմահ Թագաւորի փառքը: Այսօր ցնծութիւնն է երկնի, որովհետեւ աստուածազգեաց հարսը երկրի վրայ ընդունեց՝ պսակը վայելչապէս դրած, լոյսով եւ անմահութեամբ զգեստաւորուած, եւ խաչազգեաց օրիորդները, նրա հետ կուսական արեամբ ծիրանաւորուած, երկնագումար սերովբէների անցնող խմբի հետ մտան Սրբութիւն Սրբոցի լուսոյ առագաստը՝ փեսայացած Բանի մօտ՝ Նրա աջ կողմում կանգնելու որպէս սուրբ դշխոյ՝ ոսկեհուռ պսակուած: Եւ հրեշտակների զօրքերը, վկաների ծաղկաձեւ վարդագոյն արեան անոյշ հոտի փափագն ունենալով, իջնում են, եւ հողեղէնը հրեղէնին է միանում, որը յաւէտ հրաշացնում է վկաների հանդէսը: Այսօր գերահրաշ եւ լուսապայծառ փառքով ցնծում է Հայաստանեայց Եկեղեցին կուսականների տօնով, որով Երրորդութեան լոյսն ընդունեց [իր մէջ], մերկացաւ մեղքի հնութիւնից. հարսնազգեաց արփիափայլ հրաշքներով, թագը գլխին հրճւում է եւ պարծենում իր պսակիչ Քրիստոսով՝ վկաների հանդէսը տօնելով: Այսօր յիշատակն է Քրիստոսի սուրբ եւ մաքուր, անարատ հարսի (Հռիփսիմէի մասին է խօսքս) եւ նրա հետ՝ զգաստութեան աղբիւր եւ հաւատի մայր Գայիանէի. եւ սրբութեան որդիները՝ իմաստուն կոյսերը՝ մշտավառ լոյսով ջահազգեաց, ծագում են արեւմուտքից՝ Երրորդութեան համապայծառ լոյսը փայլեցնելով Հայաստան աշխարհում:

Եկէ՛ք այսուհետ, Քրիստոսի նո՛ր ժողովուրդներ եւ սրբութեան անթառա՛մ ծաղիկներ, իմաստուն կոյսերին այժմ բարեբանութեան պտուղներով հատուցենք ի պատիւ վկաների՝ այստեղ, որտեղ կուսութիւն եւ զգաստութիւն է պէտք, կենսաբեր ողկոյզ պտղաբերելով: Եկէք փութա՛նք անմահութեան խորհուրդների պտուղը քաղելու եւ աստուածազգեաց յարութեան հոտը բուրելու եւ, այս վկաների կուսական տօնը մեծարելով, մեր աշխարհին բարի համբաւը բերենք՝ ասելով.

«Ուրախացի՛ր եւ ցնծա՛, Հայաստա՛ն աշխարհ, նո՛ր Իսրայէլ, երկի՛ր աւետեաց եւ դրա՛խտ աստուածատունկ՝ զարդարուած առաքեալներով եւ

մարգարէներով եւ սրբերի լուսեղէն դասերով. վկաների արեամբ քո մէջ մոլորութեան բոցը մարեց, եւ, ճշմարտութեան ջահը վառուած, բոցն է բորբոքում, լոյսը՝ անաղօտաբորբոք ճառագայթներով:

Ուրախացի՛ր եւ ցնծա՛ մարգարէական աւետիսներով, Սիո՛ն լեռ, հիւսիսային կո՛ղմ, մեծ թագաւորի քաղա՛ք. կուսական արեամբ քո մէջ մեղքի ջրհեղեղը ցածրացաւ, եւ աւետարանական գետերն ահա, ձայն բարձրացնելով իրենց ընթացքի մէջ, տիեզերատարած եւ լուսաստիւ հրահոսան վտակները յագեցնում են քո դրախտը բանական երկնային տունկերի՝ յարազուարճ եւ մշտափթիթ լուսեղէն կանաչութեամբ ծաղկած պտղով ունենալով էական Լոյսի ճանաչողութիւնը:

Ջուարճացի՛ր եւ հրճուի՛ր, նո՛ր Սիոն, արթնացրո՛ւ որդիներիդ թմբուկներով եւ պարերով դէպի հարսանեաց երգերը եւ ընդառա՛ջ գնա երկնաւոր հարսին. զի գալիս է ահա սուրբ հարսը Լիբանանից՝ վայելուչ լոյսով զարդարուած, մարմինը արեգակով պարուրած եւ լուսինը ոտքերին. եւ, Քրիստոսի փառքի ճառագայթարձակ փայլմամբ պսակուած, խանդակաթ սիրով ձայնում է Նրան. «Կհամբուրես ինձ համբոյրներով Քո բերանի, զի Քո ետեւից եկաւ անձն իմ» [տե՛ս Երգ Ա 1]: Ահա գալիս է կոյս հարսը՝ հոգու թեւերով սլանալով, փայլելով կուսութեան բազմապայծառ լոյսով: Գալիս է հանդիպելու անմահ Փեսային՝ ասելով. «Թափուած իւղ է Քո անունը, որի համար սիրեցին օրիորդները Քեզ» [Երգ Ա 2]: Գալիս է՝ իր գիմաց ունենալով արդարութեան Արեգակին, եւ նրա շուրջը լուսաճաճանչ աստղերը ճառագայթելով՝ բազմագին լոյսի կուտակումն արեւմուտքից սփռում—տարածում են մինչեւ հիւսիսի կողմերը: Գալիս է իրաւունքով եւ արդարութեամբ խօսողը՝ իր շուրջը սպասաւոր ունենալով երկնային զօրքերին, հրանիւթերի խմբերին. եւ խաչազգեաց օրիորդները հրճւում են նրա հետ՝ ասելով. «Ցնծանք եւ ուրախանանք քեզանով, զի քոնն է ճշմարտապէս ուրախանալը, որովհետեւ քեզ սիրեց Ուղղութիւնը» [տե՛ս Երգ Ա 3]: Գալիս, մտնում է ցնծութեամբ արեան առագաստը՝ տեսնելով իր Տիրոջը ցնծութեամբ նոր առագաստ եկած՝ Խաչի վրայ զոհուելու. հրով եւ արեամբ հարսնանում է Նրա՛ն, Ով աստուածութեան հրի մէջ մաքրեց իրեն եւ, Իր արեամբ ծիրանաներկելով, խաչազգեաց լոյսով պսակելով, հարսնացրեց Իրեն եւ անապական կուսութեամբ ծնեց կենդանի յոյսով. եւ Սուրբ Հոգին էր հովանաւորում այդ աստուածային հարսանիքը: Այսպիսին է բազմերջանիկ եւ սուրբ կոյս Հռիփսիմէն, եւ այս է նրա կուսութեան եւ փառքի սպասաւորութիւնը:

Արդ, քանի որ ովքեր արքայական հարսանիքի եւ կամ հանդիսական մարտերի գովեստն են դրուատում, պաճուճաբանելով աշխարհն ու ազգը՝ դէպքերն են պանծացնում, իսկ մեր մէջ գովասանքի արժանացողը

սուրբ հարսն է, յաղթող նահատակներն ու իմաստուն կոյսերը, սրանց ո՛չ թէ ստորին երեւոյթներն են պաճուճազարդ խօսքով արուեստախօսում, այլ երկնքից ի վերուստ Սուրբ Հոգին է հիացումով գովում, որոնք երկնքով մէկ փայլատակում են արեգակի փայլով: Բայց քանզի այս Սուրբ Հոգով պսակուած հարսը, որպէս իմ հոգու մայր, անապական կուսութեամբ ծնունդ տալով ինձ եւ գգուելով սրբութեան գրկում, կուսական արեամբ աստուածգիտութեան կաթն արբեցնելով, հաղորդակից դարձրեց կենաց Բանին, եւ ծնունդից ի վեր մայրերի մօտ առանց ուսման բնաւորուած այն բնաւորական գութը ստիպում է իմ դեռաբոյս անձին սուրբ մօրս եւ կոյսի աստուածավայելուչ փառքը ներբողել՝ նրա հոգեւոր ծնունդների յարախմբերի մէջ, այդ պատճառով էլ շատից քիչը սկսեցի՝ առաջնորդ ունենալով կենաց Բանը:

Սա, ինչպէս յայտնի է բոլորին, հռոմէացիների գերապայծառ նահանգից էր. կայսեր ծիրանափառ օգոստականներից բուսեց որպէս երկնային ծաղիկ Պօղոսի եւ Պետրոսի հեղած առաքելական արեամբ ոռոգուած անդաստանում, ծիրանազգեստ մաքրութեամբ փթթելով սրբուհի Գայիանէի կուսական գրկում, նրանց վկայարանում սուրբ սեղանին մերձ սնուելով՝ զարգանում էր՝ հասնելու համար առաքելական հաւատքի վկայութեան հասակին: Նրանց իսկ փեսաւէրների կողմից հօր աստուածազգեաց համաձայնութեամբ Բանին է ընծայւում. հրճուելով առաքելական զարդով, իրեն զգաստութեան կենդանութեամբ պատած, պճնուած բազմալոյս առաքինութեամբ, պսակուած Երրորդութեան համապայծառ լոյսով՝ հոգով նմանւում էր Ստեղծիչի պատկերին, անապական եւ անեղծ կուսութեամբ առագաստուած՝ սպասում էր Քրիստոսին՝ երկնքի Արքային: Ոչ միայն հոգու մաքրութեամբ, կուսութեան բազմապայծառ ճառագայթներով էր փայլում, այլ, ամէն տեսակ ոսկուց աւելի սրբուած եւ մաքրագոյն լինելով, որպէս արդարեւ ճշմարիտ լոյսի հայելի, մարմնի գեղեցիկ ստեղծուածով արեգակնապէս փայլում էր աւելի, քան կանանց ծնունդները: Մեզ հետ նաեւ Սուրբ Հոգին կերգի այս մասին. «Թագաւորի դստեր ողջ փառքն ի ներքուստ է» [Սաղմ. ԽԴ 14]: Հարազատ գեղեցկութիւն շտեմարանած Քրիստոսի հարս, կենդանի լոյսի պատկեր, անկողոպտելի նուէր, Աստուծոյ ընծայած անկոխ անդաստան, անմահութեան խորհրդի բուրաստան, անթառամելի կենաց ծաղիկ, հոգու սեղան, Աստուծոյ խնկանոց, բազմափայլ լոյսի աշտանակ, կնքուած աղբիւր՝ ըստ սողոմոնեան Երգի՝ պահուած միայն սերովբէների Արքայի համար, Երկրորդ Ադամի՝ հրեղէն դասերով շրջափակուած բանաւոր դրախտ:

Այս դրախտը նախաչար օձն էր ջանում մտնել, ինչպէս սկզբում՝ հակառակ առաջին ստեղծուածին: Իր լրբենի չարութիւններով աստուածազգեաց փառքից ջանում էր կողոպտել Բանին հարսնացած բազմերջանիկ կոյսին՝ ինչպէս դաւաճանող կնոջը, այդ չյագեցողը չարիքից, որը եւ, հրեշտակների խմբի մէջ մտնելով, Յոբին էր ցանկանում [կործանել] եւ, Տիրոջը տեսնելով յանցաւոր մարդու կերպարանքով, մարդկութեան վրայ ընթանալով, փորձութեան էր ենթարկում՝ անգիտանալով, որ կործանուելու է Աստուածութեամբ: Սա, Արարչի պատկերի կերպարանքն ընդունածին՝ Բարձրեալի զօրութեամբ հովանաւորուած կոյսին տեսնելով յանցաւոր կնոջ կերպարանքով, փորձում էր թոյներով մահու տալ նրան: Գեղեցկապատիր պտղի փոխարէն ոսկեկուռ ծիրանազարդ կայսերական պատուով շքեղացած՝ հռոմէացիների գոռոզը մոլեկան տռփանքով այրւում էր նրան հարսնացնելու տենչանքից, որպէսզի դրանով երանութեան դրախտից հանի Պօղոսի կողմից միջնորդուած Քրիստոսի հարսին՝ սուրբ կոյսին եւ մաքուր աղաւնուն, որը վարձ էր ստացել դրախտի վայելչութիւնը, արքայութիւնն անանց, ուրախութիւնն անվախճան, լոյսի որդեգրութեան առագաստը, լոյսի խորանները եւ հրանիւթերի խմբերի ցնծութեան պարը եւ, աստուածայինի սիրով վառուած, տենչում էր արդարութեամբ երեւալ Աստուծոյ փառքին, վայելչութեան պսակ լինել Տիրոջ եւ արքայութեան թագ՝ Աստուծոյ ձեռքին: Չարը նրան էր յանդգնում փորձել՝ չգիտակցելով, թէ նրանով լուծարուելու է նրա գոռոզացած իշխանութիւնը՝ օձի նզովքներով հանդերձ. եւ նրա կուսութեան լոյսի որդիները, ոտնակոխ անելով, փշրում են նրա չարութեան գլուխը՝ անխայթելի գարշապարներով երանութեան ճանապարհով ընթանալու համար՝ որպէս դէպի լոյս հրաւիրուածներ եւ փառաւորուածներ, ուստի [չարը] վերստին կործանուեց:

Արդ, չարին՝ այսքանը. իսկ կոյսին՝ ի՞նչ. խանդաղատական ձայն էր արձակում փեսաւէրներին, թէ՝ «Ո՞վ կարող է մեզ բաժանել Քո սիրուց» [Հռոմ. Ը 35], եւ թէ՝ «Ահա մենք թողեցինք ամէն ինչ եւ եկանք Քո ետեւից» [Մարկ. Ժ 28], եւ թէ՝ «Աստուծով ապրենք եւ Քրիստոսի հետ խաչուենք» եւ թէ՝ «Նրա հովանու տակ փափագելով կնստենք [տե՛ս Երգ Բ 3], եւ Քո աջը թող ընդունի մեզ յանուն կենարար Փրկչի», որովհետեւ ասաց. «Վե՛ր կացէք, գնա՛նք այստեղից» [Մատթ. ԻՁ 46]: Ջուարթուն սուրբ հողեղէն սերովբէն, այս ձայնից զարթնելով իմաստուն կոյսերի դասերի հետ, զգաստ եւ մաքուր կուսութեան հոգեւոր թեւերով սլանալով համանման այն թեթեւ ամպին, որին նստած Տէրը Եգիպտոս էր մտնում, երկրի ծագերից բարձրանում էր այնտեղ հաստատուած եւ երկնքով շրջափակուած լեռների գլուխը. լեռներ, ուր Աստուած է բնակւում, որոնք, մարգարէութեան համաձայն, ցնծում են Տիրոջ առաջ՝ Պօղոսն ու Պետրոսը, որոնց գրկից գտնուեց այս լուսաւորը:

Որոտատեսիլ ամպը Սուրբ Հոգու անձրեւն է հոսեցնում եւ հիւսիսի

կողմից՝ ցողելով Այրարատ աշխարհը՝ երկնաւոր մշակներ Թադէոս եւ Բարթողոմէոս սուրբ առաքեալների անդաստանը՝ զուարթացնելու նրանց քարոզութեան բազմաձաղիկ բոյսը:

Անստուեր լոյսի առաւօտը, բազմաստեղ լոյսով ծագելով, հասաւ հոգեւոր աստղերի լամպարաջահ դասերին՝ աւետարանելու համար արդարութեան Արեգակի ծագումը բազմափայլ ճառագայթարձակ լոյսով. երեք անգամ հինգ տարով երկրի ծոցում գիշերեց, որ ելնի եւ մշտնջենաւոր ցերեկ տարածի այս աշխարհում: Բազմալոյս ճառագայթը պարունակուեց, ամփոփուեց նոր աշխարհիս հնձաններում՝ կենաց Որթից մեզ համար պայծառ եւ կանխահաս ողկոյզը պտղաբերելով, կուսութեան բաժակով արբեցնելու համար մեզ այն խաղողի արիւնը, որը Խաչի հնձանում քամուեց եւ տիեզերքին անմահութեամբ արբեցրեց:

Խռովուեց այն գոռոզ պաշտօտեալը՝ չարի արբանեակը, Հերովդէսի նմանակը, երբ տեսաւ, որ խաբուել է կոյսից եւ, սաստիկ ցասմամբ գոռալով, իր տիեզերակալ իշխանութիւնն էր շարժում. եւ կատաղի ցասմամբ իր դառնութիւնը թափուս էր Եկեղեցու հիմքերին՝ քանդելու, կործանելու եւ սրբերի արեամբ աշխարհն արբեցնելու: Արեւմուտքի այդ չարը լուր էր ուղարկում արեւելք. պարթեւազգիների տէրութիւնն էր շարժում, որ որոնեն չքնաղ մարգարիտին՝ իրենց տէրութեան հնձաններում թաքնուած գանձին: Սողում, շրջում էր աշխարհում օձը սկզբնաչար, մահաշունչ թոյնով էր լցնում թագաւորներին եւ նրանց զօրքերին. պտտւում, թափառում էր երկնքի տակ. չարանում էր վկաների մարտից՝ տեսնելով իր կողմից խաբուած ազնուականների զօրաժողով գումարելը: Երկնչում էր՝ տեսնելով իր յաղթահարուելը սուրբ Կոյս Մարիամից եւ որ նրա դուստր Հռիփսիմէով զրկուելու է բոլորի վրայ ունեցած տիեզերապետութիւնից:

Այսպէս ճշմարտութեան ճառագայթն էր փայլում Հայաստան աշխարհում, եւ աւետեաց ձայնն էր հնչում Թորգոմի տանը. քանզի շփոթուած Պարթեւաց տէրութիւնը խռովւում էր՝ մեծայոյզ քննութեամբ որոնելու ելած բազմալոյս անայլայլ մարգարիտին, որ եկել էր՝ նրանց անանց մեծութեամբ մեծացնելու: Եւ հոյակապ յաղթութեամբ, քաջութեամբ պսակուածը՝ քաջ այրերի հսկայազօր արքայ սեգ Տրդատը, մոլեգնոտ տոփանքով տենչում էր իրեն սեփականացնել էական Լոյսին հարսնացած Հռիփսիմէ դշխոյին՝ նրան, ով պատշաճ էր իր Փեսային: Եւ պարթեւ զօրքերը հարսանեաց փողերով եւ սրինգներով շտապում էին արքայական պարով համոզել նրան, ով եկել էր՝ նրանց գրելու երկնքի Արքայի զօրութեան զօրքերի մէջ, սաղմոսների օրհնութեան երգով մօտեցնելու նրանց անմարմինների խմբերին: Եւ թագաւորազուն օրիորդները եւ հայկազեաններիս կոյսերը ոսկեկուռ, շքեղաշուք, երփն—երփն զարդերով, թմբուկներով եւ պարերով գալիս էին,

որ արքունի սենեակը տանեն նրան, ով եկել էր նրանց հարսնազգեստելու Երրորդութեան լոյսով, վերին Սիոնի դուստրերի կարգին դասելու լուսերամների դասի հետ, առագաստելու անեղաշէն հարսնարանին:

Եւ նրանք՝ սա, իսկ վկաներն՝ ի՞նչ: Զգաստութեան եւ սրբութեան մայրը՝ առաքելուհի Գայիանէն, որ աղբիւրն էր հոգեւոր շնորհների, որ կուսական ակներով մարգարիտ պսակ էր հիւսում սերովբէների Արքային, բացելով իր վկայական բերանը, քաղցրաձայն վարդապետութեամբ յորդորում էր իր [հոգեւոր] զաւակին եւ օրիորդներին՝ Քրիստոսի մշտալոյս հարսի հետ փութալ դէպի նշանակուած նպատակը՝ դէպի քրիստոսադիր պսակահամբար կէտը*: Մեղր էր կաթեցնում իր շուրթերից Քրիստոսի քոյրն ու հարսը՝ Գայիանէն. մեղր ու կաթ էր իր լեզուով կաթեցնում սուրբ կոյս Հռիփսիմէի լսելիքի մէջ՝ յիշեցնելով նրան քաղցր սնունդը, հայրենեաց ծիրանազարդ փառքի լքելը, Քրիստոսին հարսնանալը, Նրա մարմնաւորումը յանուն մեզ, Խաչի վրայ զեռուելը, Նրա միւսանգամ Գալուստը, ահեղ Ատեանը, անապական պարգեւները: Կուսութեան հանդէսի աշխարհաժողով մարտում այսպիսի աւետարանական վարժութիւններով էր մարզում մեծ նահատակին ընդդէմ խրոխտ ախոյեանի՝ նրան առաքեալների եւ մարգարէների եւ նրանց միջոցով էլ՝ Քրիստոսի դուստր կոչելով: Եւ նա՝ սա:

Իսկ նահատակը նահատակադիրի մօտ, աչքերը դէպի վեր՝ դէպի գերաշխարհիկ կայանները բարձրացնելով, Նրան էր օգնութեան կանչում. Ո՞ւմ՝ իր Տիրոջը եւ Աստծուն, անմահ Փեսային, Ով փրկեց Շուշանին եւ ապրեցրեց Թեկղին եւ հնոցի մէջ ցող ցանեց [տե՛ս Դան. Գ]. Նրա թեւերի տակ էր տենչում հովանի գտնել, ազատուել անարժաններից: Լսեց կոյսի աղօթքները Թագաւորը, Ում ցանկալի էր նրա գեղեցկութիւնը, եւ երկնքի ահաւոր զօրութեամբ Իրեն ցոյց տուեց նրան, ահեղ որոտմամբ ցրեց լկտիների ահաբեկուած զօրքը: Բացում էր հաստատութիւնը**, անունով էր կանչում Իր հարսին՝ Իր անճառելի փառքը ցոյց տալով նրան, ա՛յն լուսոյ խորանը, ուր հրաւիրուեց, նրա համար պատրաստուած բազմապայծառ պսակը եւ հրեղէնների խմբերը, որոնք սպասում են երկնքի դռների մօտ՝ նրան առագաստի մէջ ընդունելու համար. խոստանում էր նրա հետ լինել յաւիտեան եւ նրանով այս աշխարհը հաշտեցնել Իր հետ եւ աւետարանական լոյսով՝ ոլորտները հիւսիսի:

Փեսայի ձայնից զօրացաւ կոյսը, հրապարակ ելաւ ախոյեանի դէմ,

---

* պսակահամբար կէտ — ասպարէզի ծայրին գտնուող այն կէտը, որտեղ պահում էր յաղթութեան պսակը

** հաստատութիւն — երկրի եւ երկնքի միջեւ ընկած հաստատուն տարածք, երկնքից ներքեւ, որտեղ գտնւում են լուսաւորները

որը մարմնի եւ մեղքի գրգիռներով փոթորկուող խաւարի մէջ էր: Ելնում էր մեղքերի դէմ մարտի ճակատ՝ սպանելով մեղքը եւ այն գտնողին: Արդարութեամբ վառուած իր Հօր՝ երկնաւոր նահատակի զէնքերով ու զարդերով, որ նրանով առաքելական ըմբշամարտիկ դարձաւ՝ սպառազինուելով հաւատի զրահներով, որպէս յուսոյ սաղաւարտ դնելով Նրա հաւատի վահանը, Նրա պէս մէջքին սրբութեամբ կամար կապած, ունենալով հոգու սուսերը՝ կուսական փողով Նրա ձայնն էր հնչեցնում ընդդէմ մեղաց մարտի, թէ՝ «Ո՞վ կարող է հեռացնել ինձ Քրիստոսի սիրուց՝ սո՞ւրը, հո՞ւրը, խա՞չը, մարմնիս յօշոտո՞ւմը, ոսկորներիս կոտորո՞ւմը. այլեւ նոյնիսկ հանդերձեալ յաւիտեանները չեն կարող զատել ինձ Նրա նկատմամբ կենդանի սիրուց. Ում ես հարսնացայ» [տե՛ս Հռոմ. Ը 35—39]: Կոյսը յարդարում էր [կռուի] ճակատը, երբ, դահիճների կողմից ձգուած, բռնութեամբ փակուած էր արքունի սենեակում՝ կուսութեան ասպարէզում: Դարձեալ վեր էր բարձրացնում աչքերը, դարձեալ՝ կուսական մաղթանքներ, դարձեալ՝ փարելի պաղատանքներ, դարձեալ՝ խանդաղատական արտասուք եւ աղերսալի աղօթքներ: Ո՞ւմ ուղղուած. Նրա՛ն, որ ծովը ճեղքեց եւ սանձեց Յորդանանը, մարգարէին կորզեց կէտի [որովայնից] եւ մահը կողոպտեց եւ գոռոզացած քաղդէացուն* ճարակաւորների խմբի մէջ արտաքսեց: Այդ զօրութեանն էր աղաչում կոյսը հովանի լինել իրեն՝ ասելով. «Արթնացրո՛ւ Քո զօրութիւնները եւ արի՛ մեզ ապրեցնելու. Քո գթութիւնները դէպի ինձ կգան, եւ կապրեմ ես, որովհետեւ Քոնն եմ ես. ուստի ապրեցրո՛ւ ինձ» [տե՛ս Սաղմ. Հթ 3]:

Գալիս հասնում էր մոլեգնած ընդդիմամարտը՝ կատաղի զայրացմամբ ցնորուած, բորբոքուած մեղքերի բոցով: Ուզում էր այրել անթառամ կուսութեան բոցատերեւ վարդը, որ կենաց ցօղով էր փթթում՝ հոգու զօրութիւնը հագած: Կոյսն էլ էր հանդէս մտնում: Նոր էր հանդէսն այդ՝ հրեշտակների եւ մարդկանց մտքից ու խօսքից վեր: Հանդէս էր մտնում խաչազգեաց կոյսը ծիրանազգեստ արքայի առաջ, որ հարսանեաց թագ ու զարդերով էր պճնուած: Հանդէս էր մտնում կոյսը, որ Խաչով էր պսակուած եւ խաչուած՝ աշխարհում, նրա առաջ, ով թագով խրոխտացած գլուխն էր բարձրացնում եւ որպէս փեսայ սրտաշարժութեամբ ցնծում առագաստում: Կոյսը դէմ էր դուրս գալիս հսկային, որ, զօրութեամբ փքուած, տիեզերքն էր դղրդացնում եւ գոռալով խրոխտանում, թէ կջնջի մարաց եւ պարսից զօրութիւնը: Ճակատելու էր ելնում զգաստութեամբ զինուած կոյսն ահեղ պագշոտած վայրագի դէմ, որն, ըստ առակաւոր խօսքի, սիգալիս աւերում էր գետաթմբերը եւ ցամաքեցնում ծովերի յորձանքները: Բռնաւորը, հանդէսների զօրութեամբ պերճացած, նա, ով պարսից դէմ կռուելիս ցրում էր փղերի երամակները, յունաց ըմբշամարտի հանդէսներին ցուլերի եղջիւրներն էր ձեռքով պոկում եւ ափերով հսկային էր պատառոտում, դէմ էր դուրս գալիս կոյսին, որն ուսին Խաչ ունէր դրած եւ տենչում էր ծարաւած սիրով խաչակից լինել կուսածին Արարչին:

Արդարեւ, նոր էր հանդէսը. հրեշտակների զօրքերը նրանց հետ, հանդէսով սքանչացած, կուսածին Արքայի փառքն էին հիացած երգում: Սաստկանում էր հանդէսն ընդդիմամարտների, մօտենում էր պսակների [դնելու] պահը. քանզի յաղթում էր կոյսը, յաղթւում էր արքան, վանում էր կինը, վանւում էր հսկան. մանուկ՝ կոյսը զգետնում էր տիեզերասաստ բռնաւորին. թագը փշրուած էր, արքայական արդուզարդը՝ կողոպտուած, կոյսի անկողոպտելի մաքրութեան զգեստն անապական էր մնացել. կոյսի ոտքերի տակ գետնատարած ընկել էր մահաշունչ վիշապը, որը կոյսի արեամբ էր կենդանակերպուելու երանութեան պատկերով: Քանզի կոյսին հովանի էր այն բազուկը, որ Խաչի վրայ բարձրացաւ, որ ձգեց երկինքը եւ երկիրը հաստատեց, սանձեց ծովը եւ ամէն ինչ Իր ձեռքում ունի: Նա Իր աջով ետ էր պահում անհպելի կոյսին՝ Իր կողմը ձգելով եւ ձախով դէպի նպատակն էր ուղղում նրան [տե՛ս Երգ Ը 3]: Եւ քանզի գիշերուայ ժամին էր կատարւում հանդէսը, նաեւ անաստուածութեան խաւարի մութն էր պատում նրանց, ովքեր այնտեղ էին. սակայն որպէս փայլակ արեգակնապէս ցոլանում էր արքունական սենեակից, անթաց ոտքով պատռելով մեղքերի ծովը, Լիբանանի գեղեցկուհին՝ Քրիստոսի հարս անուանուածը, մաքուր այդ աղաւնին՝ ձիթենու տերեւը բերանում՝ հոգու աւետիս տալու Նրան, Ով անդունդի խորքերն իջաւ, ինչպէս Նոյը՝ ծոցը տապանի, տասնհինգ տարի տքնելով՝ մեծ աւետիքին էր սպասում մեր աշխարհի հայրը, հոգեւոր լոյսի ճառագայթը, Միածնի քարոզը, մեծ լուսաւորիչը. հոգու թեւերով թռած լուսազգեաց աղաւնին աւետիսի քաղցրաբարբառ հնչումն առձայնում էր հնձանում, որտեղ տրտմազգեստ նստում էին զգաստների խմբերը:

«Ջուարճացի՛ր,— ասում է,— ուրա՛խ եղիր, Գայիանէ՛, մա՛յր՝ լոյսի որդիների. ուրա՛խ եղիր եւ ցնծա՛, մարգարէական օրհնութեամբ անապա՛տ ծարաւի. ահա՛ ծաղկեցիր որպէս շուշան եւ քո գրկում բուսած իմ կուսութեան անթառամ վարդը փթթեցրիր ի փառս եւ ի զարդ Հայաստան աշխարհիս: Արդ, մա՛յր իմ, ուղարկի՛ր ինձ այն առագաստը, ուր հրաւիրուեցի: Փութա՛, շտապում եմ ես, քանզի «Եղբօրորդին իմ անցաւ, եւ իմ ոգին դուրս եկաւ Նրա խօսքի հետ» [Երգ Ե 6]: Գնում եմ փնտրելու Նրան, Ով սիրում է իմ անձը. որտե՞ղ է հովւում, որտե՞ղ է հանգստացնում. շուշանների մէջ, բուրաստաններում, վայրի խոտերի մէջ՝ խաղաղ ջրերի մօտ, քանզի Նրա թեւերի հովանու տակ ես հանգիստ առայ՝ անստուեր լոյսի մէջ: Ե՛լ, տե՛ս նահատակ կոյսիս. հանդէսն աւարտեցի, ախոյեանին յաղթե-

* Նկատի ունի Նաբուգոդոնոսորին:

ցի, պատերազմը ետ մղեցի. մարտի տապից պապակած՝ ծարաւում եմ. տենչում եմ հոգեւոր կենաց Աղբիւրին մերձենալ. Ով Խաչի վրայ՝ Գողգոթայում, ինձ համար ծարաւել էր. ձայնում է ինձ, որ խաչակցեմ Իրեն: Ե՛կ, տե՛ս ինձ՝ իմ մաքուր կուսութեամբ Խաչի վրայ Նրան փարած, իմ արիւնաներկ շրթունքներով, աստուածային ըմպելիքի աղբիւրն ինձ մօտեցնելով, որին Նա ծարաւեց, ջրի աղբիւր հանեց՝ կողից բխեցնելով, որից ինձ ծնեց հարսը, որը եւ ես ըմպելով՝ կդառնամ կենդանի ջրի աղբիւր, որ հոսում է դէպի յաւիտենական կեանք:

Եւ ձե՛զ աւետիք, Սիոնի երկնամի՛ լուսերամներ եւ իմաստո՛ւն կոյսեր, ելէ՛ք եւ տեսէ՛ք ձեր ոշխոյին՝ Հռիփսիմէին, այն պսակով, որով պսակեց նրան իր Տէրը նրա հարսնութեան օրը [տե՛ս Երգ Գ 11]. փութացէ՛ք եւ ելէ՛ք, ես ձայն եմ տալիս. «Եղբօրորդին իմ խնկի պարտէզ իջաւ՝ զմուռս քաղելու» [տե՛ս Երգ Ջ 1]: Գնում եմ Նրա հետ դէպի զմուռսի լեռը՝ Նրա մահուան վայրը, որովհետեւ ձեր ամպերով Նրա հետ ելայ դէպի կնդրուկի բլուրը՝ Աստուածութեան լոյսի վայրը [տե՛ս Երգ Դ 6]: Թողէ՛ք ձեր հնձանները, սլացէ՛ք հոգու թեւերով, մաքո՛ւր աղաւնիներ եւ իմ հարսանիքի՛ օրիորդներ. իմ հարսնութեան վարդագոյն զարդարանքով զարդարուեցի: Ընդառա՛ջ ելէք իմ արիւնաներկ, կամարազգեստ Փեսային, որպէսզի դուք էլ ինձ հետ փայլէք Նրա արքունական ծիրանիներով՝ ի փառս եւ ի զարդ հրեշտակների եւ մարդկանց:

Աւետեաց ձա՛յն հնչեցրէք արեւմուտքում, փո՛ղ հարէք Հռոմում: Ջուարճացի՛ր եւ ուրա՛խ եղիր, տիեզերական մայրաքաղաք, որ նստած ես արեւմուտքում՝ առաքելաջահ լոյսով պսակուած, աշխարհատարած ճառագայթներով. քո ծիրանազգեստ դուստրերը ճառագայթելով փայլում են արեւելքում, երբ հանդիպում են Նրան, որ արեւելքից է ծագում, լինելով նոր Սիոնի դուստրեր եւ օրիորդներ եւ պարողներ լուսոյ հարսանիքի: Ուրա՛խ եղիր եւ ցնծա՛, հռոմեացո՛ւ Եկեղեցի, Հռիփսիմէի մա՛յր եւ հա՛րս անմահ Փեսայի, հա՛րս առաքելական, որ Աւետարանի թեւերը քեզնից սլացան դէպի արեւելք: Այսօր խաչուած Տիրոջ հետ առագաստ է մտնում՝ բաժակի արեամբ ծիրանազգեստուած եւ պսակուած, անապական կուսութեամբ ծնելով լուսոյ Հօր արեւելքի որդիներին:

Եւ ձե՛զ աւետիք, Քրիստոսի՛ առաքեալներ եւ ի՛մ փեսաւէրներ. ահա՛ առագաստ եմ գնում ես՝ ձեր կողմից հրաւիրուածս: Ուրա՛խ եղէք, զի սիրեցի Տիրոջը, ինչպէս որ ձեր կողմից պատուիրուեց. ձեր բարիքներով մարտ մղեցի, հաւատը պահեցի, ընթացքը կատարեցի, խաչուեցի աշխարհում, մերկացայ հին մարդուց, երկրաւոր անդամները մեռցրի, սպանեցի ախտերը, դատապարտեցի մեղքը, հանգցրի նրա ցանկութեան բոցը, յաղթեցի հեշտութիւններին, խայտառակեցի օձին, չէզոքացրի նրա թոյները,

ընդոտնեցի մահը եւ, իմ Խաչն առած, գնում եմ Խաչուածի հետ դէպի Նրա չարչարանքների առագաստը: Եկէ՛ք, ցնծացէ՛ք իմ նոր հարսանիքին. իմ Փեսայի վարդագոյն արիւնը եւ [Աստուածութեան] հուրը հեղուած են որպէս զարդ՝ Խաչի վրայ. Նրա հետ եմ թագ առնում, Ում ինձ հարս տուեցիք:

Երկնաւոր աւետեաց ձայն հնչեց քո մէջ. Հայաստա՛ն աշխարհ՝ հանդէսի ասպարէ՛զ եւ իմ արեան հոսանքների առագա՛ստ: Ուրախացի՛ր եւ ցնծա՛, զի մեծացրեց Տէրը՝ քեզ մօտ ուղարկելով. ահա ցող եմ ցողում քեզ վրայ՝ քաղցրութեան ցող՝ իմ արեան կուսական շիթերը՝ դալարեցնելու համար քո վայրերը աստուածգիտութեամբ, շուշանազարդելով քո հովիտները մարգարէների ծաղիկներով՝ քո մէջ առաքելական բուրաստանը փթթեցնելու համար, մշակելու քեզ որպէս իմ Փեսայի դրախտը. որպէսզի «իջնի իմ Եղբօրորդին Իր պարտէզը եւ ուտի Իր ծառերի պտուղները» [տե՛ս Երգ Ե 1]: Բերկրի՛ր, Այրարա՛տ, աստուածապարգեւ աւետիսներով. ահա՛ բարձրանում եմ քո Գողգոթան՝ Արարչի չարչարանքների բաժակն ըմպելու իմ կուսութեան բաժակով, քեզ՝ ծարաւիդ արբեցնելու կենարար արեան բաժակը՝ անմահութեան եւ լոյսի:

Եւ քե՛զ աւետիք, երկնաւո՛ր նահատակ եւ փրկութեա՛ն քարոզ, բազմափա՛յլ ճառագայթ, որ փակուած ես գբի մէջ. ահա՛ քեզ օգնութեան եմ հասնում՝ արեւմուտքից արեւելք սլանալով իմ կուսութեան թեթեւընթաց ամպով. եկայ՝ իմ հայրերի՝ Պետրոսի եւ Պօղոսի Աւետարանի տիեզերածաւալ լոյսի փայլակնաբորբոք ճառագայթը ծագեցնելու քո վայրերում, վանելու, փարատելու խաւարի մէգը, որ արգելելով փակել է քո՝ կենդանի լոյսիդ ճառագայթը: Ծագի՛ր, մե՛ծ լուսաւոր, խոր անդունդներից քաղցրանուագ քո լոյսով՝ քո սուրբ հայրերի՝ Թադէոսի եւ Բարթողոմէոսի Աւետարանի լոյսով փթթեցնելու հիւսիսի աշխարհարձակ ճառագայթալոյս փայլումը: Քո վրանը խփի՛ր արեւի դիմաց [տե՛ս Սաղմ. ԺԸ 6] եւ ելի՛ր, արդարութեա՛ն Արեգակ, ցնծութեամբ ողջոյնի ընթանալու արիւնազգեստ հարսին, որը, մարտիրոսական արեամբ ճգնելով, եկել է քո խորանի՝ անմահ Փեսայի հարսնարանը: Ե՛կ, հանդիպեցրո՛ւ թաքնուած ողորմութիւնդ իմ ճշմարտութեանը. քանզի իմ եւ քո խաղաղութիւնը մեր հայրերի համբոյրով ողջոյն եւ խաղաղութիւն է լցնում այս աշխարհում: Ահա բացեցի երկինքը, Սուրբ Հոգու որոտումը հնչեցրի քո դաշտում՝ քաղցրութեան ցող ցողելու հովիտներում, արեամբ ոռոգելու եւ զուարթացնելու քո բոյսերի արդիւնք արդարութեան ցողը, վաստակա՛ծ երկրագործ: Ահա խլեցի քո անդաստանից անէծքի փուշը, մեղքի տատասկն իմ կուսական հանդէսով: Ե՛լ, սերմանի՛ր, քա՛ջ սերմնացան, Լոյսի աւետարանի սերմերը, որպէսզի հնձի հասնելու ժամանակ ցնծանք միասին: Ահա իմ՝ քո արեանը խառ-

նուած վտակները հանգցնում են խաւարի բոցը, վառելով բորբոքում աստուածային Լոյսի հուրը՝ սրբելու քո արեամբ ներկուած անդաստանները: Ե՛լ, տնկի՛ր, քրտնաթո՛ր մշակ, կենաց որթը, ծաղկած ողկոյզը՝ Հօր կողմից մշակուած խաղողի արիւնը՝ քո սուրբ աջով վկայուած. յուրախութիւն վերիններին եւ ներքիններին պատուի՛ր իմ հարսանեաց տաճարում: Ահա ճմլւում եմ քո հնձաններում, իմ կուսութեան բաժակով, անմահութեան հոսանքներով արբեցրո՛ւ քո ծարաւած ժողովրդին, հրով եւ սրով կոտորուածներիս՝ մեր վարդապետութեան ծաղիկներին, եւ քո նոր ժողովրդին բոլորեալ պսա՛կ հաւաքիր, որպէսզի սրանով մտնեն մեզ մօտ՝ լուսոյ յարկերը:

Ցնծա՛ եւ ուրախացիր եւ դո՛ւ՝ վերի՛ն Սիոն, կենդանեա՛ց քաղաք եւ իմ սրբութեա՛ն առագաստ, դո՛ւ՝ ազատդ եւ մայրը հայր Պօղոսի եւ Լոյսի բոլոր որդիների: Բա՛ց քո դռները եւ ընդունի՛ր Բանի մօտ հրաւիրուած, Նրա ծիրանին հագած եւ Նրա Խաչով պսակուած հարսին. գալիս, առագաստ է մտնում, եւ կոյսերը՝ նրա հետ: Բարձրացրո՛ւ քո աչքերը, Սիո՛ն, եւ տե՛ս ամպի նման սաւառնող, արեան գոյնով պճնուած քո դուստրերին՝ Հռիփսիմէի՝ Թագաւորի դստեր հետ, որին Բանը կանչում է դէպի սենեակը Թագաւորի: Եւ դո՛ւք՝ հրեշտակների՝ զօրքեր, որ հանդիսակիցն էք իմ կուսութեան մարտի ցնծութեանը, ելէ՛ք՝ ժողովելու յոգնած հոգիներին, որ հրոյ եւ արեան մարտի մէջ են սպասում, [քանզի] շտապում ենք հասնել կենդանի Աղբիւրին:

Ցնծութեան աւետի՛ք քեզ, Լուսոյ Մայր Մարիա՛մ, աղբի՛ւր մաքրութեան, քո լոյսով ես մերկացայ անէծքից՝ ինձ վրայ գցելով քո սրբութեան լոյսի ճառագայթը. գալիս եմ հարսնանալու քո Որդուն եւ Նրա արեան վարդագոյնն ունեմ գլխիս որպէս պսակ: Ցնծութեամբ ընդունի՛ր ինձ՝ քո լուսոյ յարկում հանգստանալու համար, որովհետեւ հրոյ եւ արեան մարտով հանգցրի մեղքի բոցը եւ, իմ կուսութեան վարդն անթառամ պահելով, ծաղկեցրի տիեզերքն իմ արեան ցողով՝ տենչմամբ փափագելով քեզ ի ողջոյն, Լուսո՛յ Մայր: Մտցրո՛ւ առագաստ՝ Սրբութիւն Սրբոցը, Թագաւորի մօտ, Որն իմ գեղեցկութեան ցանկութիւնն ունեցաւ, որպէսզի ես էլ յագենամ Նրա լոյսի փառքից»:

Այս խօսքը, կոյսից միաձայն հնչելով, երկնաւոր ցնծութեամբ մաքրեց օդերը, երկիրը երկինք երեւացրեց, դրախտը բացեց, նրա ծաղիկների անմահութեան հոտը բուրեց երկրում. երկնակամարը պատռեց եւ հողեղէններին մօտեցրեց հրաբուխ դասերին:

Լսեց կոյսի աւետիսը կուսածին լոյսից վանուած խաւարասէր վիշապը մահաշունչ եւ տագնապեց. քանզի այն զէնքով, որով մահու թոյնը սկզբում առաջին կոյսի բնութեանը խառնեց, նոյն զէնքով իրեն հերձուած

էր տեսնում եւ մեղքի թոյնը՝ սպանուած՝ վկայուելով այս կոյսով, որ Մարիամի լոյսի կերպարանքով էր նկարուած. քանզի չարն իրեն լուծարուած եւ պարտուած տեսաւ, շտապում էր յագեցնել իր ծարաւը սրբերի արեամբ: Եւ ի՞նչ էր գործում. եբրայեցիների պէս [կտիների մոլեգնած խմբերին՝ արեամբ կատաղած, զայրացմամբ մութ գիշերով սուսերներով եւ ջահերով մղում էր Քրիստոսի հարսի ետեւից, որը դիմելով գնում էր դէպի ասպարէզ, դէպի մահ, ինչպէս ոչխարը՝ մորթուելու, եւ դարձեալ կատարւում էր գրուածը. «Խռովեցին հեթանոսները, թագաւորներն ու զօրքերը հաւաքուեցին միասին Տիրոջ եւ Նրա Օծեալի համար» [տե՛ս Սաղմ. Բ 1—2]:

Հարսը, Աւետարանի հետ վկայելիս, իմանալով Փեսայի ծագումը, գիշերով զինավառում էր կոյսերին: Բարձրանում էր կառափման վայրը՝ արեան ողջոյն եւ սիրոյ համբոյր տալու Նրան, Ում սիրեց եւ, մաքրութեան կոյսի կերպարանքով սլանալով նախատեսուած վայրը եւ նայելով Փեսայի ճառագայթին, խանդաղակաթ սիրով բաղձում էր Նրա լոյսին միանալ: «Տէ՛ր,— ասում է,— ընդունի՛ր ոգիս, որ սիրեց Քեզ եւ անձը դրեց Քեզ համար. արդարեւ սիրեցի Քեզ ողջ սրտով եւ Քո սիրով կենդանագրեցի իմ մէջ Քո անհպելի գեղեցկութիւնը. սիրոյ վայելչութեամբ վառուած՝ հրով այրեցի մեղքերը եւ օձի թոյները սպանեցի. եւ իմ կուսութեան սրբութեան սիրոյ աղբիւրը կնքեցի, Քո արեան լոյսի շիթերն ըմպեցի իմ արեան բաժակով. արբեցրո՛ւ ինձ կենարար աջովդ, որը, Խաչի վրայ տարածուելով, գրկեց ինձ, զի եւ Ե՛ս ուրախութեամբ լցուած լինեմ»:

Այսպիսի խանդաղատական մաղթանքներով էր կոյսն աղաչում Փեսային եւ, ընծայելով իրեն, խոնարհեցնում էր գլուխը դէպի պսակը. քանզի հասաւ այնուհետեւ խաւարազգեաց վանիչը՝ իր հետ առած պարթեւազն իշխաններին ու զօրքին՝ հրաբորբոք ջահերով՝ խամրեցնելու, այրելու կուսութեան անթառամ վարդը, որ հրի լուսեղէն կանաչութեամբ էր ծաղկել: Չգիտէր չարը, որ իր մոլորութեան բոցը նրա այրմամբ էր շիջանուելու, եւ պարթեւները նրա արեան ցողով ծաղկելու էին Աստուածութեան գաւիթներում. այլ մոլեգնած, ըստ իր բնական չարութեան, ինչպէս մի ժամանակ խաչողներին էր փութացնում դէպի տերունական մահը՝ զինուորներին կատակներ էր յուշում՝ հանդերձներից մերկանալը, կարմիր քղամիդը, եղեգնը, փշէ պսակը. չգիտակցելով՝ հակառակ իրեն էր դրանք հնարում. քանզի Տէրը դրանցով մեզ փրկեց, իսկ նրան ընկճելով կործանում էր: Վասնզի կողոպտում էր՝ մեզանից վերցրած մեղքի ծածկոյթ հանդերձներից մերկանալով եւ նրան բռնազգեցիկ փառքից մերկացնելով. եւ արիւնների շաղախման անօրէն անէծքները բարձրացրեց կարմիր քղամիդի վրայ՝ Իր Աստուածութեան ծիրանին հագցնելով մեզ: Նրան պարտաւորելով՝ անմահ սպանման էր մատնում եւ պարտաւորութեան յանցանքների գիրը ջնջեց

եղեգնով՝ մեզ գրելով կենաց որդեգրութեան: Նրան դատապարտելով արտաքսում էր դէպի տարտարոսազէն խաւարը. եւ փշերի անէծքը ջնջում էր պսակով՝ մեզ պսակելով Երրորդութեան լոյսով: Նրան նզովքներով, որպէս փուշ, տալիս էր այրուելու մշտնջենավառ հրի մէջ՝ ըստ գրուածի, թէ՝ «Մեղաւորներն այրուելու են փշերի պէս» [տե՛ս Եսայի ԼԳ 12]: Այսպէս եւ սրբերին հակառակ էր գործում իր չարութեամբ, քանզի նրա կողմից հրապուրուած թագաւորի իշխաններն ու զօրքը դառը եւ անողորմ տանջանքների էին ենթարկում մարմինը. եւ սա մեզ համար կենաց առիթ էր լինում, իսկ չարի համար՝ մահուան: Քանզի Բանին միացած մաքուրը, կապուած լինելով, մեզ ազատում էր բազմաստուածութեան կապանքներից՝ կապելով չարի իշխանութիւնը: Մերկացնում էր սրբութեամբ առագաստեալ լուսազգեաց մարմինը եւ, մեզ զգեստաւորելով Աւազանի լոյսի սրբութեամբ, մերկացնում էր չարի կարծեցեալ փառքը: Այրում, տապակւում էր մարմինը հրաբորբոք կանթեղներից՝ կենդանախարուկուելով աստուածային լոյսի հրով, եւ հրդեհուելով կիզում էր չարի մոլորութիւնը՝ մեր մէջ բորբոքելով հոգեւոր հրի բոցը, որ գցեց երկիր: Սրով հերձւում էր մաքրազգեաց կուսական որովայնը. եւ, Սուրբ Հոգով յղանալով կենաց խօսքը, հոգեւոր երկունքով մեզ ծնունդ տալով Լուսոյ Հօր որդեգրութեան մէջ, ջնջում էր օձի բազմածնունդ չարութիւնը: Հատում էր երկնաւետեաց քարոզ լեզուն եւ լռեցնում կռապաշտութեան հնչմունքը՝ հոգեւոր երգերի օրհնութիւնների քաղցրութեանը մեզ յորդորելով: Փորուելով հանգչում էին սուրբ վկայի՝ լոյսով վայելչացած աչքերը, եւ մարելով խաւարեցնում էր մոլորութեան կայծակը՝ ծագեցնելով մեզ Երրորդութեան ճառագայթները: Կոտորում, յօշում էր կենդանի մարմնի բովանդակ անդամները եւ սպանում էր մեղքի անդամները, որպէսզի մեզ դարձնի արդարութեան անդամներ՝ իրենով միացնելով գլուխ Քրիստոսին՝ Աստուծոյ աճմամբ աճելու:

Սա է Քրիստոսի սուրբ եւ անարատ հարսի հանդէսը, որը սպանեց մեղքերը եւ, իր արեամբ ջրելով օձի թոյները, մեղքի ծառայութիւնից գնաց անդատապարտելի ազատութեան՝ դէպի Լուսոյ Հօր որդեգրութիւնը: Եւ նրա հետ եղած սրբութեան օրիորդները նոյն այդ հանդէսով՝ արեամբ պսակուած, մահը ոտնակոխ արած եւ օձի գլուխը փշրած, խաչազգեաց մշտավառ լոյսով նրա ետեւից ելան երկնի Արքայի լուսոյ առագաստը: Եւ կատարուեց գիրը, որն ասում է, թէ՝ «Թագաւորի մօտ են տարուելու կոյսերը նրա ետեւից, եւ նրա ընկերները տարուելու են Նրա մօտ» [Սաղմ. ԽԴ 15]: Իսկ մատնիչը ամաչելով հեռացաւ սրբերի դէմ չարութեամբ [դաւեր] էր նիւթում եւ տագնապով շտապում դէպի հրաւիրող խաւարը:

Իսկ նա, ով Լոյսի կողմից հրաւիրուեց՝ աստուածազգեաց հարսը, ընկճելով չարի խոհերը, հանգցրեց մահու խայթոցը. եւ, էական Լոյսի

սկարագրին կենդանակերպուելով, վեր բարձրացաւ որպէս փայլակ, լուսավառ լամպարաջահ վարքով իմաստուն կոյսերի հետ՝ ճառագայթելով վերին խորանում: Այնտեղ էր տեսնում աւետեաց երկիրը, կենդանեաց աշխարհը, սրբութեան լեռը, լուսոյ օթեւանները, երկնային տունկերի ծաղկած բուրաստանները, անդրանիկների հաւաքները, հրանիւթերի խմբերին, լոյսի մէջ թագաւորածների հրապարակները, հրանիւթերի հոյլերը, սերովբէների բանակները եւ, նայելով նրանց ծարաւի սիրով, հարցնում էր. «Տեսե՞լ էք իմ հոգու Սիրելիին» [Երգ Գ 3]:

Որից հիացան վերին զօրքերը՝ տեսնելով Արարչի պատկերով կենդանակերպուած հողին, որն, անցնելով իշխանութիւնների վրայով, խնդրում էր մտնել ներքին կողմը՝ անմերձենալի Լոյսի մօտ: Զայնելով գոչում էին վերիններն իրար. «Ո՞վ է սա, որ ելնում է անապատից [Երգ Գ 6], գալիս է սպիտակացած, յենուած՝ իր Եղբօրորդուն [Երգ Ը 5], զարդարուած է արեան գոյնով. կարմիր վարդերից պսակ ունենալով՝ ձայնում էր՝ ասելով. «Թող համբուրի ինձ Իր բերանի համբոյրներով» [Երգ Ա 1]: Եւ կամ ովքեր են սրանք, որ սրա հետ, թռչող ամպերի եւ երամացած աղաւնիների նման, դէպի մեզ են գալիս»:

Եւ լսում էին Տիրոջը, Որն ասում էր. «Սրանք յուսացել են Ինձ, եւ Ես կտանեմ նրանց դէպի Իմ սրբութեան լեռը եւ կուրախացնեմ Իմ փառքի խորանում»: Կանչում էր եւ հարսին. «Կգաս եւ կհանգչես Իմ թեւերի հովանու ներքոյ, քո՛յր Իմ հարս, քանզի գեղեցիկ ես բոլորովին, եւ չկայ որեւէ արատ քեզ վրայ [Երգ Դ 7], դի՛ր ինձ իբրեւ կնիք քո սրտին եւ իբրեւ մատանի՝ քո բազկին [Երգ Ը 6]»: Զայնում էր եւ օրիորդներին. «Եկէ՛ք Ինձ մօտ, վաստակածնե՛ր եւ յոգնածնե՛ր, կանա՛յք, որ դիմելով գալիս էք հանդէսից, եւ Ես կընդունեմ ձեզ [տե՛ս Մատթ. ԺԱ 28]. եւ կլինէք դուք իմ ուստերի եւ դուստերի մէջ, եւ Ես ձեզ Աստուած կլինեմ [տե՛ս Եզեկ. ԺԴ 11, ԼԷ 23]. որպէսզի ուրախութիւնն Իմ ձեր մէջ լինի, եւ ձեր ուրախութիւնը կատարեալ լինի [Յովհ. ԺԵ 11]»:

Ցնծութեան ձայնից լցւում էր վերին Սիոնը. զուարթունների եւ կոյսերի միասին երամացած խմբերը հարսանեաց երգեր էին երգում՝ ուղղուած Փեսային. «Ահա՛ դշխոն Քո աջ կողմում՝ զարդարուած եւ պաճուճուած ոսկեհուռ հանդերձներով», եւ հարսին. «Սա է քո Տէրը, պիտի երկրպագես Սրան [տե՛ս Սաղմ. ԽԴ 12]. վասնզի, տեսնելով գեղեցկութիւնը քո, սիրեց քեզ. եւ կլինես դու վայելչութեան պսակ Տիրոջ ձեռքին եւ թագ արքայութեան՝ քո Աստուծոյ ձեռքին»:

Բացում էր այնուհետեւ առագաստը, մտնում էր Սրբութիւն Սրբոցը՝ փեսայացած Բանի մօտ: «Տարաւ ինձ Արքան Իր սենեակը [Երգ Ա 3], եւ հպուեցի անմերձենալի Լոյսին եւ Նրան միաւորուած ճառագայթ [եղայ],—

ասում էր:— Ահա գտայ իմ հոգու Սիրելիին, բռնեցի նրան եւ չեմ թողնելու [Երգ Գ 4], այլ նստելու եմ Նրա հովանու տակ [Երգ Բ 3]» եւ բարձունքներից միացած Սրա դարձին՝ հագած Նրա զօրութիւնը: Կոյսը, բարձունքներից նայելով, ստորինների մէջ հովիտներն էր նկատում, ուր իր արեան վտակներն էին, որովհետեւ կռապաշտութիւնների քարացած սառնամանիքն անշարժ էր մնում քաջ պտուղների մօտ: Այդ պատճառով էլ հոգու իշխանութեամբ հրամայում էր զօրութեան ձայնով՝ ասելով. «Վե՛ր կաց, գնա՛, հիւսիսայի՛ն քամի, եւ ե՛կ, հարաւայի՛ն քամի. փչի՛ր իմ պարտէզի մէջ, եւ թող բուրեն իմ խունկերը» [Երգ Դ 16]: Եւ հրամայածն անմիջապէս կատարւում էր:

Քանզի խորքերից ծագեց արդարութեան արեգակը՝ սուրբ Լուսաւորիչը. Աւետարանի լոյսի ջերմ ճառագայթը վառելով՝ բորբոքում էր հիւսիսի պաղութիւնները, լուծարում ամբարշտութեան ձմեռը, հակառակ հողմերով հանդարտեցնում էր նաեւ մեղքերի փրփրատեսակ ալիքների լեռնացայտ կուտակները. իսկ օդը սառեցնողը, որը հոգով եռալն արգելում էր, որը մահաթոյն վիշապն էր փչում, աւելի քան հիւսիսայինը գումարում էր անգիտութեան խաւարը՝ մէգով հանդերձ: Իսկ քաղցրուսոյց Բանի հարաւայինը ծաւալելով Սուրբ Հոգու տեղացած անձրեւի մէջ՝ ծաղկեցնում է աստուածգիտութեան բողբոջներով Հայաստանը՝ քաղցր պտղով վայելչացածներիս, որպէսզի դառնանք արդարութեան դրախտ խունկերի՝ հոգեւոր տունկերի անուշահոտութիւնը բուրելու համար ի փառս Աստուծոյ: Եւ լրացնում է կուսական մաղթանքը, թէ՝ «Թող իջնի իմ Եղբօրորդին Իր պարտէզը եւ ուտի Իր ծառերի պտուղները» [Երգ Ե 1]: Քանզի հոգեւոր հարսանեաց խորհուրդը կատարման հասնելով եւ փրկութեան երկունքի ժամը հասնելով՝ Սուրբ Հոգին կոյսի որդիների մէջ մի վայրկեանում ծնում էր ողջ Պարթեւաց տէրութիւնը. եւ իրականանում էր գիրը. «Երկնեց Սիոնը, եւ ծնուեց ողջ մի ազգ» [Եսայի ԿՁ 8]. ինչպէս յայտնում էին արքունի բիւր բանակները, որոնք, Հոգուց ծնուելով, մի ժամում Եփրատի մէջ որդեգրութեան աւետիսը ստացան՝ ի վերուստ շողալով լոյսի ծագմամբ:

Նաեւ մոլեգնած բռնաւորը, որ փափագում էր կոյսին իրեն սեփականացնել, Քրիստոսի կողմից իւրացուեց. եւ, իր մէջ ախտերի բոցը հանգցնելով, ճշմարտութեան հրով վառուած, կոյսին որդի գրուեց եւ, Բանի քարոզը լինելով, հայրենի տէրութիւնը լցնում էր Աւետարանի լոյսով: Եւ ոչ միայն՝ այս, այլեւ՝ Աստուածութեան գանձերը՝ սրբի կուսական մարմնի ծաղիկները, որը սպանել էր, ժողովելով ամփոփում էր որպէս գանձ իր համար, որպէս յաւիտենական մեծութիւն: Եւ իր զօրութեան քաջութեան քրտինքը սուրբերի վկայարանում է թողնում յաւիտենապէս եւ իրեն բարութեան օրինակ յարդարում բոլորի համար, առաքելաջան հանդէսով լուսաւորում արեւելքը Երրորդութեան լոյսով:

Նաեւ արեւմուտքում էր շիջանում մոլորութեան բոցը վկաների արեամբ՝ Աւետարանի ճառագայթը լոյսի հետ շրջափայլելով ամէնուր: Քանզի Աստուծոյ այն ատելին եւ ցանկասէրը եւ գարշելին՝ Դիոկղետիանոսը, որը, սուրբ Հռիփսիմէից իր կրած անարգանքների պատճառով չարացած, ոգորում էր տիեզերքում՝ լռեցնելու ճշմարտութեան կրօնը, յանկարծակի հանգելով՝ մէջտեղից ջնջուեց—վերացաւ՝ իր համախոհ օձի ծնունդներով հանդերձ: Նոյն սուրբ կոյսի տանից ծագեց փրկութեան եղջիւրը՝ ի Տէր յուսացեալ թագաւորը, սուրբ եւ յաղթող Կոստանդիանոս կայսրը: Եւ, գործակից լինելով մեր Տրդատ արքային, առհասարակ ջնջեցին բազմաստուածութեան վրդովմունքները՝ խաղաղութիւն հաստատելով ողջ աշխարհում. եւ, Աւետարանի լոյսն առաքելաբար իրենց մէջ ընդունելով, տիեզերասաստ զօրութեամբ երկնքի տակիններին նուաճեցին ի հնազանդութիւն վերին թագաւորութեանը: Եւ լրացաւ գիրը, որ ասում է. «Խոստովանելու են Քեզ երկրի թագաւորները» [Սաղմ. ՃԼԷ 4], եւ թէ՝ «Երկրի՛ թագաւորութիւններ, օրհնեցէ՛ք Տիրոջը» [Սաղմ. ԿԷ 33]:

Այսպիսով կատարուեց բոլորիս ուղղուած՝ սուրբ կոյս Հռիփսիմէի բազմերանեան վայելչութեան աւետիքը, ինչպէս որ յայտնի է բոլորին: Այսօր այս տօնի խորհուրդը մեզ հոգեւոր օրհնութիւնների քաղցրաձայնութեանը յորդորեց. ա՛յս է կուսական վկաների հանդէսը: Սրա՞նք են, որ, մեր աշխարհին որպէս լուսաւորներ փայլելով, Աստուածութեան հնչիւններով լցրին բոլորիս, որոնք մեր երկրում ծաղկած Աստուածութեան գանձերն են, լուսաւոր աստղեր, Եկեղեցու ծաղիկներ, ճանապարհներ մեզ համար եւ կենաց դուռ դէպի երկինք, բանաւոր ողջակէզներ, կատարեալ զենումներ, ընդունելի պատարագներ, ճշմարտութեան քարոզներ, ստութեան արձանացուցիչներ, մոլութեան լուծում, չարութեան հալածիչներ, աշխարհի մաքրութեան համար մեղքերի ջրհեղեղ, մարդկային ազգի պարծանքներ, մեզ՝ յոյս հանդերձեալ կեանքում՝ ի Քրիստոս Յիսուս: Սրանց նախանձաւոր լինենք բոլորս՝ նմանապէս սիրելու Քրիստոսին, որպէսզի ընդունենք ողորմութիւնը եւ շնորհներ գտնենք պէտք եղած ժամանակ՝ սրանց օգնականութեամբ:

Սրանք իմ խօսքերից քեզ պտուղ, ո՜վ երջանիկդ կանանց մէջ, յաղթո՛ղ նահատակ եւ սո՛ւրբ հարս, դո՛ւ՝ ոչ թէ դոմբիական մարտերի յաղթանակի ձիթենու պսակ եւ ոչ էլ՝ ոսկեկուռ ակներով փայլող թագ՝ զարդարելու արքայական հարսանիքը, այլ՝ մաքուր ընտանեգոյն ընծայ Բանը սիրողներին եւ իմաստութեան ծաղիկ ի Քրիստոս. արեամբ ոռոգուած բուրաստան, որ, որպէս զարդ քո հարսնութեանը, համահաւաքուել ես այն ծաղիկներով, որոնցով պսակւում ես. քրտինքի առաջին կաթիլներն իմ նո-

ռաբոյս հոգու, որ սիրում է քեզ, իսկապես սիրեցեա՛լդ բարու, ընդունի՛ր գթութեամբ որպէս արդարեւ գորովագութ մայր, եւ դէպի ինձ դարձրու Սիրողի՝ քեզ փեսայացած Բանի գթութիւնը, որպէսզի ես ցնծամ քեզ հետ, երբ Նրա լոյսի փառքը երեւայ: Եւ մեզ բոլորիս, ում քո արեամբ ծնեցիր Բանին որդեգրելու համար, մշտահայց աղօթքներով Նրան յանձնիր, ծածկուա՛ծդ Նրա թեւերի հովանու տակ: Որպէսզի Աւետարանի լոյսով առաջնորդուածներս, այս յաւիտեանի անգոների միջով անցնելով, հանդերձեալին ժամանենք՝ հասնելու Կեանքին՝ նոյն Ինքն Յիսուս Քրիստոսին՝ մեր Տիրոջը: Որի հետ եւ Հօրը, միանգամայն եւ Սուրբ Հոգուն վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Գրաբարից փոխադրեց ԳՈՒՐԳԷՆ ԳԱՍՊԱՐԵԱՆԸ



Աստուածաբանական ուսումնասիրություններ

ՅԱՂԱԳՍ ՊԱՇՏԱՄԱՆՑ*

206. ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Պաշտամունքին մասին ընդհանուր կերպով խօսեցանք, երբ Աստուածութեան եւ կրօնից մասին իմաստասիրական սկզբունքներ յառաջ բերինք: Հիմա մեզի կը մնայ խօսիլ յատկապէս պաշտամունքի մասին, ինչպէս որ կ'իմանանք եւ կը կատարենք զայն քրիստոնէական հաւատքին համաձայն:

Հարկ չկայ ուրեմն ըսելու, թէ ինչ է պաշտօնը կամ պաշտամունքը, եւ թէ ինչ տարբերութիւն կայ ներքին կամ արտաքին կամ հրապարակային պաշտամունքներուն միջեւ. հարկ է միայն, որ ըսենք, թէ ինչպէս կը բաժնուին պաշտամունքները իրենց աստիճաններուն համեմատ, որոնք յունա-լատին բառերով կ'ըսուին latria *եւ* dulia, *եւ զոր մեր լեզուին մէջ թարգմանուած կը գտնենք երբեմն* երկրպագութիւն *եւ* մեծարանք *բառերով եւ երբեմն՝* պաշտելութիւն *եւ* յարգութիւն *բառերով:*

Բուն պաշտելութիւնը կամ պաշտելութեան պաշտամունքը միայն Աստուծոյ է սեփական, իսկ յարգութեան պաշտամունքը ընծայելի կը նկատենք Աստուծոյ ընտրելի սուրբերուն կամ սիրելիներուն: Կայ նաեւ hyperdulia, *որ եւ՝* գերյարգութիւն, *միջսահման աստիճան մը, տարբեր պաշտելութենէ եւ աւելի, քան յարգութիւնը, զոր ոմանք յատկապէս կազմած են Աստուածածին Մարիամու համար: Պաշտելութեան եւ յարգութեան աստիճանները ի դէպ է ցոյց տալ օրինակովը պատուոյ եւ մեծարանքի այն աստիճաններուն, զորս սովոր ենք ընծայել թագաւորին եւ աւագանիին:*

207. ՊԱՅՄԱՆՔ ՊԱՇՏԱՄԱՆՑ

Ուղիղ հասկնալու համար պաշտամունքները, որոնք կրնան ընծայուիլ որու որ պատշաճ նկատուին կամ որոնց մասին կրնան խնդիրներ յուզուիլ եւ ծնունդ տալ տարբերեալ կարծիքներու, ի դէպ է յիշել ինչ-ինչ տեղեկութիւններ:

Նախ՝ պաշտամունքի ատեն գործածուած բառերը, խօսքերը, գործերը եւ շարժուածքները անպատճառ միեւնոյն կերպով որոշիչ իմաստ մը չեն կրնար ունենալ, որովհետեւ միեւնոյն բառը կամ գործը երբեմն կ'ուղղուին զանազաններու, որոնք միեւնոյն աստիճանի վրայ չեն կրնար նկատուիլ: Ասիկա գիտելի է մասնաւորապէս երկրպագութիւն բառին համար (adoration), *որ աստուածային պաշտելութեան գերագոյն բացատրութիւնն է, բայց կը տեսնենք նաեւ, որ Աբրահամ [Ծննդ. ԺԸ 2] եւ Ղովտ [Ծննդ. ԺԹ 1] կ'երկրպագեն հրեշտակներուն. Աբրահամ դարձեալ՝ քետացւոց իշխաններուն [Ծննդ. ԻԳ 7]. Յովսէփի որդիները կ'երկրպագեն Յակոբի [Ծննդ. ԽԸ 12], եւ յաճախ կը տեսնուի, որ երկրպագութիւն կ'ընծայուի մարդոց, առանց, սակայն, իբր Աստուած պաշտելու զանոնք: Եւ որովհետեւ միեւնոյն խօսք մը կամ գործ մը կրնայ տարբեր իմացուածներ ունենալ, հետեւաբար եւ հնար է իմացուածի այդ տարբերութեան համեմատ միեւնոյն խօսքը կամ գործը հաստատել կամ ժխտել: Այս պատճառաւ, իբրեւ պաշտամանց վերջնական եւ որոշիչ կէտ, ի դէպ է ունենալ սահմանուած բառեր, որոնք կարենան հեռացնել խօսքի երկդիմութիւնները: Եւ որովհետեւ սովորական կիրառութիւնը ընդունած է արդէն յունարէնէ առնուած լաղրիական եւ տուլիական բառերը, եւ յաճախ յունարէն բառերով կազմուած են գիտական ճշդաբանութիւնները, եթէ անդէպ նկատենք մենք ալ նոյնութեամբ գործածել զանոնք, գոնէ պէտք է վերեւ նշանակուած անոնց հայերէն հոմանիշները կամ ուրիշ նմաններ կիրարկենք անփոփոխ կերպով:*

208. ՊԱՇՏՕՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ

Բայց պաշտամանց ձեւերով եւ բանաձեւերով զբաղելէ աւելի պէտք է նկատի ունենանք պաշտամանց նպատակները եւ առարկաները: Ու, բարձրագոյնէն անշուշտ սկսելով, հարկ է, որ խօսինք նախ այն պաշտամունքին մասին, զոր կը մատուցանենք Աստուծոյ: Առանց երկբայութեան՝ պաշտամունք ըսուածը իր ամբողջական, լրացեալ եւ գերագանց առումովը եւ աստիճանովը բարձրեալն Աստուծոյ միայն կը պատշաճի: Ոչ ոք կը ժխտէ ասիկա, եթէ, անշուշտ, աստուածուրաց չէ, եւ, մանաւանդ, եթէ բուն լաղրիական պաշտօնը կ'ուզենք ըսել:

Կրնանք նաեւ ըսել, թէ պաշտօնը Աստուծոյ միայն վայել է եւ Աստուծմէ զատ՝ ուրիշ ոչ մէկուն, եւ թէ արարածի ընծայուած պաշտօնը, ինչ կերպով որ ալ լինի, անպատշաճ է:

Բայց երբ այսպէս կ'ըսենք, տուլիական պաշտօնը պէտք է գատենք բոլոր միւս պաշտօններէն եւ լոկ պատիւ, մեծարանք եւ յարգանք կոչենք զայն:

209. ՊԱՇՏՕՆ ԵՐԿՐՈՐԴՈՒԹԵԱՆ

Ինչ որ կ'ըսուի Աստուծոյ մասին, կ'ըսուի միանգամայն Երրորդու-

* Տե՛ս Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, «Տեղիք Աստուածաբանութեան», Երուսաղէմ, 1981, էջ 171-183:

թեան մասին եւ Անոր իւրաքանչիւր Անձին մասին առանձնաբար, երբ իւրաքանչիւր Դէմքը առանձնաբար առնուի: Կը հետեւի արդէն Երրորդութեան խորհուրդին վերաբերմամբ մեր ըսածներէն, թէ այս վարդապետութեան հիմը տարբեր չէ Աստուծոյ միութենէն, եւ թէ ինչ որ քրիստոնէական յայտնութեան համեմատ կը դաւանինք Աստուծոյ մասին, համաձայն է անոր, զոր գիտենք Աստուծոյ մասին իմաստասիրական ճշմարտութեամբ:

210. ՊԱՇՏՕՆ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ

Երրորդութեան խորհուրդէն անցնելով մարդեղութեան խորհուրդին եւ խօսելով Քրիստոսի ընծայելի պաշտամունքին մասին՝ հարկ է, որ ըսենք, թէ բացայայտ է Ս. Գրքին պատգամը, թէ արժան է Քրիստոսի ընծայել երկրպագութիւն, զի մեռասան առաքեալներն ալ Գալիլիոյ լեռան վրայ «իբրեւ տեսին զՆա, երկիրպագին Նմա» [Մատթ. ԻԸ 17], որովհետեւ Իրեն համար ըսուած է. «Երկիր պագցեն Նմա ամենայն հրեշտակք Աստուծոյ» [Եբր. Ա 6]:

Ու այս պատճառաւ՝ «յանուն Յիսուս Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց» [Փիլ. Բ 10]: Բայց թէ պաշտամունքներէն ո՞րը ընծայելի է Քրիստոսի, դժուար չէ ճշդել, թէեւ գտնուեցան ոմանք, որ իրենց քմահաճութեամբ մեկնեցին զայն: Նեստոր կ'ըսէր, թէ «յանուն ծածկեալին պիտի երկրպագէ տեսանելիէն»: Այլ ասիկա երկուքի բաժնել էր երկրպագութիւնը: Նեստորի կը մոտենան նաեւ անոնք, որ Քրիստոսի ընծայուած երկրպագութեան մէջ կը բաժնեն բացարձակը յարաբերականէն եւ մարդկութիւնը սոսկ յարաբերական պաշտամունքով կ'ուզին պատուել: Նման կերպով կը խօսին նաեւ, կարծէք, լատինները, երբ ըստինքեան երկրպագութիւնը կը բաժնեն վասն Ինքեան երկրպագութենէն: Մենք հաստատուն կենանք միաւորական վարդապետութեան վրայ եւ մի Քրիստոսը միշտ Իր անբաժանելի միաւորութեանը մէջ եւ Իրեն ընծայած մեր երկրպագութիւնը երկուքի չբաժանենք, որպէսզի ձայնակից չերեւինք անոնց, որոնք, ըստ Աթանասի, կ'ըսեն. «Ի բա՛ց կաց ի մարմնոյդ, զի պաշտեսցուք զՔեզ»*:

211. ԽԱՉ ԵՒ ՊԱՏԿԵՐ

Վերեւ յառաջ բերուած Պօղոսի խօսքերուն մէջ տեսանք Քրիստոսի անունը՝ երկրպագելի բոլոր երկնի եւ երկրի եւ, նոյնիսկ, դժոխոց արարածներէն [Փիլ. Բ 10]: Ենորհալի, իբրեւ բացատրութիւն այդ խօսքերուն, կ'ըսէ, թէ անունը ոչ այլ ինչ է, բայց եթէ՝ ձայն, որ ականջներուն կու-

* Թուղթ առ Ատելփիս

տայ նշանակուած իրին զգայութիւնը եւ էութիւնը: Այդ անունին համանման է, – կ'ըսէ, – պատկերն ալ, որովհետեւ այս ալ ձեւ մըն է, որ կուտայ նշանակուած իրին զգայութիւնը եւ էութիւնը կ'արթնցնէ, այս պատճառաւ Քրիստոսի ընծայուած պաշտամունքին համանման պաշտամունք կ'ընծայուի նաեւ Խաչին եւ փրկչական պատկերին: Սակայն երբ Խաչը կը պաշտենք, եթէ բուն իսկ այն խաչափայտն է, որուն վրայ բեւեռեցաւ Քրիստոս, եւ կամ նոյն խաչափայտէն նշխար մըն է եւ կամ անոր նմանութեամբ նորակերտուած մը, միշտ ստոյգ է, թէ, «աստուածընկալ Խաչը տեսանելով, ո՛չ իբրեւ նիւթին, այլ՝ անոր վրայ եղած Աներեւոյթին է, որ պաշտօնը կը մատուցանենք. այսպէս եւ փրկչական պատկերին ո՛չ թէ նիւթին եւ ներկերուն, այլ՝ Քրիստոսի, որ է պատկեր աներեւոյթ Հօր Աստուծոյ, կ'երկրպագենք»*: Ըստ այսմ, ուրեմն, Խաչին եւ փրկչական պատկերին ընծայուած պաշտօնը ուղղուած է ոչ թէ Խաչին կամ պատկերին նիւթին, այլ՝ միայն եւ միշտ նշանակուած իրին, այսինքն՝ Քրիստոսին, Որուն զգայութիւնը եւ էութիւնը կը զարթուցանեն անոնք մեր մէջ արտաքին զգայութեան ներքին միջնորդով:

212. ԽԱՉԵՐՈՒ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ՕԳՈՒՄԸ

Ձեռակերտ խաչերուն համար մեր Եկեղեցին հաստատուն կանոնն է օծել զանոնք ս. Միւռոնով եւ յետոյ գործածել իբրեւ նշան պաշտամունքի. «Զի եթէ ոք խաչ արասցէ փայտեայ կամ յինչ եւ իցէ նիւթոյ եւ ոչ տացէ քահանային օրհնել եւ օծանել զնա եւ միւռոնովն սրբել, ո՛չ է պարտ զնա ի պատուի ընդունիլ եւ երկրպագութիւն մատուցանել»**: Որովհետեւ երբ լոկ չօրհնուած նիւթին երկրպագութիւն մատուցուի, այն ատեն աշխարհի նկարակերտութեանց կամ ուրիշ նիւթերու մէջ եղած որեւէ քառակուսի ձեւ պէտք է երկրպագելի ըլլայ***: Իսկ ս. Միւռոնը թէեւ ըստինքեան պաշտելի նիւթ չէ, բայց նուիրական միջնորդ եւ հաստատուն նշանակ մըն է, որով հասարակ իրաց կարգէն եւ մարմնաւոր տարազով եւ նիւթով եղած բան մը կը զանազանուի կիրառութեամբ եւ նշանակութեամբ եւ յատկապէս կ'որոշուի հոգեւոր նշանակութեամբ, կիրառութեամբ եւ գործածութեամբ: Ու ասիկա շատ ալ պատշաճ բան մըն է, զի ինչպէս պաշտամունքին պաշտօնեան կ'օծուի, նոյնպէս եւ պէտք է օծուին պաշտամունքին գործիք եղած առարկաներն ու սպասները: Եթէ ուզէ ըսել, թէ օծումը կրնայ աւելորդապաշտութեան կարծիքներ գրգռել՝ կարծել տալով ռամիկին, թէ իրական փոփոխութիւն մը կը կատարուի նշանակներուն մէջ, աւելի ճահագոյն կ'երեւի ի հակառակէն ըսել, թէ նիւթական միջնորդներով զօրացած կրօնական պաշտամանց զգացումը պէտք չէ

* Ենորհալի
** Օձնեցի
*** Ենորհալի

շատ տարածուի խտրութիւն չդրուած նշանակներու կիրառութեամբ, որ շատ աւելի մնասակար աւելորդապաշտութիւն մըն է: Եւ ի՞նչ կարելի է խորհիլ եւ իմաստութեամբ հնարել, որպէսզի թոյլ չտրուի, որ տգէտները չզեղծանեն, եւ գիտցողները չխնծծեն:

213. ՊԱՇՏՕՆ ՍՐԲՈՑ

Կարգը եկաւ այժմ խօսելու սրբոց ընծայական պաշտամունքին վրայ: Պաշտօն բառով հոս պէտք է հասկնալ տուլիականը. եւ եթէ պաշտօն բառը, որ իր հասարակ առումին մէջ ոչինչ ունի ծանր, զի կը նշանակէ պարզապէս ծառայութիւն, ծանր թուի ոմանց, հնար է անոր տեղ գործածել յարգութիւն բառը, թէեւ, ըստ մեր հասկացողութեան, աւելի ծանր է յարգութիւն բառը, որ ցոյց կու տայ բանական էակին բարոյական մէկ գործը, քան՝ պաշտօնը, որ պարզապէս ցոյց կու տայ նիւթական եւ արտաքին գործ:

Կը նկատենք դարձեալ, թէ պաշտամանց կամ յարգութեանց արտաքին ձեւերը ըստինքեան աննպատակ են եւ իրենց սեփական արժէքներուն մէջ իսկական տարբերութիւն կամ էական առաւելութիւն չունին, այլ ամէն ինչ կախուած է առումէն եւ դիտումէն, որով իւրաքանչիւր անձ կամ ընդհանուր սովորոյթ կապուած է անոնց: Այսպէս, ո՛չ ճրագը ստորին է, քան՝ խունկը, եւ ո՛չ ծնրադրութիւնը աւելի բարձր, քան՝ բազկատարածութիւնը եւ այլն: Ո՞չ ապաքէն պաշտամանց եւ յարգութեանց զանազան ձեւերուն մէջ գլուխը ծածկելը կամ կօշիկը ոտքէն հանելը պատուել–անպատուել է փոխադարձաբար՝ զանազան սովորութիւններուն համեմատ: Ապա ուրեմն, ոչ մէկ խնդիր կրնայ ըլլալ բառերու, ձեւերու, գործերու եւ նշաններու մասին, զորս կարելի է ընծայել ի պատիւ սրբոց, բայց միշտ պէտք է ցոյց տալ, թէ պաշտօնը, զոր Քրիստոսի Եկեղեցին կ'ընծայէ հրեշտակաց, արդարներուն եւ սրբոց, գերծ է կռապաշտական զեղծմանց մեղադրանքէն:

214. ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

Միասին նկատի կ'առնենք սուրբերը եւ հրեշտակները, այսինքն՝ արտաքոյ աշխարհիս եղած անմարմին բանաւոր էակները եւ մարդեղէն անոնք, որոնք, հասարակաց կարծեաց համեմատ, ուղղութեամբ եւ արդարութեամբ եւ կամ կատարեալ ապաշխարութեամբ մեկնեցան այս աշխարհէն՝ իրենց կեանքը անցնելով կամ պատարագելով Քրիստոսի հաւատքին եւ Եկեղեցիին վրայ եւ հաւատացելոց օգտին: Անոնք, որ ի բնէ աննիւթ են կամ որոնք նիւթականէն մերկացան, կրնան այս տեսակէտով մէկ գիծի վրայ համարուիլ:

Սուրբ Գիրքը ոչ սակաւ օրինակներ ունի հրեշտակաց ընծայուած երկրպագութեան: Թողունք Աբրահամի եւ Ղովտի ըրածները, զորս յիշեցինք վերեւ, որովհետեւ, թերեւս, երկրպագած ատեն զանոնք չէին ճանչնար իբրեւ հրեշտակներ, այլ իբրեւ պատուաւոր պանդուխտներ՝ մեծարանքի եւ սպասարկութեան արժանի, եւ լոկ մարդկային պատիւ է, որ կ'ընծայէին ժամանակի ձեւերուն համեմատ: Բաղաամ, երբ տեսաւ հրեշտակը, «անկեալ ի վերայ երեսաց իւրոց, երկիր եպագ նմա» [Թիւ. ԻԲ 31]: Դիտելի է, որ, ըստ Ս. Գրոց, «երեսաց Տէր զաչս բացումս» այդպէս ընելու համար: Յեսու, տեսնելով սուսերամերկ մարդը եւ լսելով, թէ զօրավար է ի զօրու Տեառն, այսինքն՝ երկնային զօրաց, «անկաւ ի վերայ երեսաց իւրոց եւ երկիր եպագ» [Յես. Ե՛15]. ու սոմնացի կինը, Եղիսէի ձեռքով իր որդւոյն յարութիւն առնելէն ետքը, գիտնալով, թէ Աստուծոյ մարդ է ան, «անկաւ առ ոտս նորա եւ երկիր եպագ նմա յերկիր» [Դ Թագ. Դ 37]: Երրորդ յիսնապետը, երբ մարդ ղրկեց Եղիան ձերբակալելու համար եւ տեսաւ առաջիններուն պատժուիլը, «անկաւ ի վերայ ծնգաց իւրոց առաջի Եղիայի եւ աղաչէր զնա»՝ զայն կոչելով «ա՛յրդ Աստուծոյ» [Դ Թագ. Ա 13]: Աստուած Ինքնին հրամայեց պատիւի արժանի նկատել հրեշտակները:

215. ՆՇԱՆԱԿ ՊԱՏՈՒՈՅ

Եկեղեցւոյ հին յիշատակարաններուն մէջ յաճախ կը հանդիպինք սուրբերու ընծայուած պատուոյ եւ մեծարանաց նշաններու, ինչպէս են՝ հանդէսով անոնց մահուան կամ նահատակութեան տարեդարձները կատարել, պատուել անոնց յիշատակը պատուոյն որոշ օրերուն մէջ, շինել անոնց գերեզմաններուն վրայ կամ մօտը պաշտամունքի վայրեր, որոնք կը կոչուին վկայարան կամ մարտիրոսական, խորհրդական կամ բարեպաշտական պատարագներ մատուցանել անոնց վկայարաններուն մէջ յանուն վայրին կամ սուրբին: Ու այն չափ յայտնի է, որ նախնի սուրբ Հայրերու եկեղեցական մատենագրութեան գիրքերուն մէջ անպակաս են գովութեան խօսքեր, ներբողական ճառեր եւ վկայաբանութիւններ՝ նուիրուած անոնց յիշատակին:

216. ՓԱՍՏՔ ՍՈՒՐԲԵՐՈՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻՆ

Ընդհանուր սովորոյթ է մարդկութեան, որ զանոնք, որ իրեն երախտաւորներ կը ճանչնայ կամ իրենց գործերովը զարմանալի կամ կեանքովը օրինակելի, անոնցմէ իրեն համար պաշտամունքի, պատուոյ եւ յարգանքի առարկայ եղողներ կ'ընտրէ իր սրտի բերմանց համաձայն՝ առանց խտրութիւն դնելու ողջ կամ մեռած եղողներուն: Կը մեծարէ իշխանները եւ պետերը, գրողները, բարերարները եւ որեւէ հոգեւոր թէ մարմնաւոր

ձիրքերով փայլածները: Կը մեծարէ օգնականները եւ աջակիցները, իշխանաց եւ մեծամեծաց սպասաւորներն ու պաշտօնեաները, նշանաւոր անձնաւորութեանց մերձաւորները կամ ժառանգները, բարիներու եւ քաջերու, բարեգործներու եւ քաջագործներու յիշատակները:

Երբ մարդկային ամէն ընկերութեանց մէջ այսպէս է իրականութիւնը այդ մասին, միթէ բանաւոր չէ՞, որ Եկեղեցին եւս այդպէս վարուի, իր ըմբռնումին եւ սկզբանց համեմատ, բարի եւ բարեգործ ճանչցուածներուն վերաբերմամբ: Զգուշանալի է, անշուշտ, որ սուրբերուն ընծայուած պաշտօնը չշփոթուի աստուածայինին հետ, որ քաջազունները դիւցազուններուն հետ չխառնուին, եւ դիւցազունները աստուածներ չհամարուին: Այս գեղծումէն շատ հեռու է հիմնական սկզբունքը քրիստոնէութեան, որմէ աւելի ամուր կրօնական դրութիւն մը չկայ արդարեւ՝ պահպանելու համար Աստուծոյ ստորոգելիները: Ուստի եւ իրաւամբ կ'ըսէր Լայպնից՝ բողոքական իմաստասէրը. «Հարկ է գիտնալ, թէ սրբոց կամ նշխարներուն պաշտօնը այնքան ատեն կրնայ մնալ, որքան ատեն Աստուծոյ կը վերաբերի ան, վասնզի չի կրնար ըլլալ եւ ոչ մէկ կրօնական գործ, որ ի վերջոյ չվերածուի կամ չյանգի մի եւ ամենակալ Աստուծոյ»:

Ուստի եւ երբ սուրբերը կը պատուին, այնպէս հարկ է իմանալ զայն, ինչպէս Ս. Գիրքը կ'ըսէ. «Ինձ յոյժ մեծարոյ եղեն բարեկամք Քո, Աստուա՛ծ» [Սաղմ. ՃԼԸ 17], կամ «Օրհնեցէ՛ք զԱստուած ի սրբութեան Նորա» [Սաղմ. ՃԾ 1]: Ստոյգ է, թէ Եկեղեցւոյ երկրորդ դարուն կը կատարուէին արդէն մարտիրոսաց վկայութեան յիշատակի օրերը, եւ անոնց շիրիմներուն վրայ սուրբ համախմբութիւններ հաստատուած էին:

217. ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ՊԱՇՏՕՆԻՆ ԴԷՄ

Մեզի անծանօթ չէ աստուածային հրամանը, թէ՝ «Ի Տեառնէ Աստուծոյ քումմէ երկիցես եւ զՆա միայն պաշտեսցես» [Բ Օրին. Զ 13], զոր Քրիստոս ալ կը կրկնէր փորձողին դէմ, թէ՝ «Գրեալ է՝ Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես եւ զՆա միայն պաշտեսցես» [Մատթ. Դ 10]: Ցայտնի են Պօղոսի խօսքերն ալ. «Միոյն Աստուծոյ փառք եւ պատիւ» [Ա Տիմ. Ա 17]: Համաձայն աստուածային պատգամին՝ «զփառս Իմ այլում ո՛չ տացց» [Ես. ԽԲ 8]: Գիտենք Պետրոսի խօսքն ալ, երբ Կուռնելիոս, «անկեալ առ ոտսն, երկիր պագանէր», յանդիմանելով կը կասեցնէր. «Ցո՛ւտն կաց, եւ ես ինքն մարդ եմ» [Գործք Ժ 25, 26]: Նոյնպէս կը պատմուի տեսանողին տեսիլքին մէջ, երբ Յովհաննէս, երէցի մը ոտքը ինկած, կ'երկրպագէր անոր. «Անսա՛, մի՛ անկանիր առաջի իմ, քանզի եւ ես ծառայակից քո եմ եւ եղբարց քոց, որք ունին զվկայութիւնն Յիսուսի Քրիստոսի. Տեառն Աստուծո՛յ միայն երկրպագեա» [Յայտ. ԺԹ 10]:

Բայց այս բոլոր հրամաններուն եւ յանդիմանութիւններուն մէջ

միշտ կը գտնենք արգելք՝ Աստուծոյ սահմանուած պաշտօնը չտալու սուրբերուն եւ հրեշտակներուն կամ, առ առաւելն, չգործածելու այն ձեւերը եւ կերպերը, որոնք Աստուծոյ միայն պահուած են, եւ ո՛չ թէ՝ մեծարանք չտալու արժանաւորներուն՝ իրենց արժանաւորութեան համեմատ:

Պաշտելութիւն եւ պաշտօն բառերն ալ պէտք չէ տհաճութիւն պատճառեն, զի անոնց ընդհանուր իմաստն է սպասարկութիւն, ոչ ալ՝ երկրպագութիւն բառը, որուն գործածութիւնը անսովոր չէ երբէք նոյնիսկ մարդոց մէջ իրարու հանդէպ: Հետեւաբար, բաւական է ուշադիր ըլլալ միայն պաշտամունքի երկու կերպերուն. այն, որ կատարեալ է եւ է «յինքեան» եւ այն, որ մասնակի է եւ յարաբերական: Ու այս երկրորդն է, որ մենք արժան կը դատենք Աստուծոյ սիրելեաց համար ու այդ կերպով բնաւ ուրացած չենք ըլլար, թէ ճշմարիտ եւ բացարձակ պաշտօնը Աստուծոյ է եւ ո՛չ թէ՝ ուրիշին: Նաեւ, եթէ ս. հարց գիրքերուն մէջ պատահի մեզի կարդալ, թէ պէտք չէ պաշտել սուրբերը, պէտք է յիշել, թէ նոյն ս. հայրերն են, որ մեզի սորվեցուցին սրբոց յիշատակները տօնախմբել եւ այդ արգելումով անոնք չէին կրնար ուրիշ բան հասկնալ, եթէ ոչ՝ բացարձակ եւ ճշմարիտ պաշտօնը, զոր լաղրիական կոչեցինք:

218. ՁԵՒԵՐՈՒ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆ

Գալով պաշտամունքի տեսակ-տեսակ նշաններուն՝ հարկ է վերստին յիշել, թէ չկայ որեւէ գործ կամ ձեւ, որ ըստ ինքեան ունենայ լաղրիական իմաստ եւ չկարենայ փոխանակուիլ տուլիականին հետ: Նոյնպէս, ընդհանուր սովորութիւն մը նուիրագործած է ինչ-ինչ ձեւեր եւ գործեր, գոնէ որոշ շրջանակներու, տեղերու եւ ժամանակներու մէջ՝ անոնց հետ կապելով յատուկ եւ սահմանուած իմաստներ, զորս կարծէք զլացած է ուրիշներուն: Պաշտամունքի այդ կարգի գործերուն մէջ կրնանք յիշել սրբոց տօները, որովհետեւ տարուէ-տարի կը կատարենք հանդիսութիւններ անոնց, կ'երգենք անոնց գովաբանութիւնները եւ կը փառաւորենք անոնց անունները: Իսկ եթէ ասօն բառը ծանր կու գայ, Եկեղեցին, աւելի ճշդաբանելով, կարծէք, երբեմն աւելի կը սիրէ ըսել՝ «որոց այսօր է յիշատակ», քան ըսել՝ «որոց տօն է այսօր»: Իսկ ասօն յորջորջումը աւելի երգերուն, քերթողական ասացուածքներուն մէջ է, որ կը գործածուի: Ցայտնի է, թէ յիշատակաց օրերու ցուցակը կը կոչուի «Տօնացոյց», բայց ատիկա ժողովրդական կոչում մըն է, մինչ Ժամագրաց մաղթանքը միշտ կը նախընտրէ յիշատակ բառաձեւը: Իսկ յիշատակները կը կարդացուին նաեւ բոլոր ականաւոր անձանց եւ երախտաւորաց համար, եւ յիշատակեալներուն մէջ բարի գործեր կամ ընդունած երախտիքներ միայն կը յիշատակուին, բարիքներ, զորս մարդիկ կը սիրեն հրճուանքով միայն յիշել: Մինչեւ այսօր ամէն տեղ կը կատարուին տարեդարձներ, կը գովաբանուին անձեր, կը

պատմուին անոնց արդիւնքներ, կը փառաբանուին անոնց անունները: Իրենց ծագմանը մէջ նոյն կերպով պէտք է հասկնալ տօներն ալ, զորս Եկեղեցին կը կատարէ իր երախտաւորներուն համար, որոնք կամ անձնազոհութեամբ, կամ քրտնաթոր ջանքերով եւ կամ գովելի արդիւնքներով նշանաւոր հանդիսացած են անցեալին մէջ:

219. ՍՈՒՐԲԵՐՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՒԱԾ ԱՂՕԹՔ

Բայց կայ կէտ մը, որով սուրբերուն տօները կը տարբերին ոչ կրօնական տօներէն ու եկեղեցական յիշատակները՝ քաղաքական յիշատակներէն: Եւ այդ է այն աղօթքը կամ մաղթանքը, զոր հաւատացեալները կը մատուցանեն յանուն սրբոց: Քաղաքական տօներուն մէջ երբէք չենք ակնկալեր, յիշատակութեանց ընթացքին, նոր նպաստներ ընդունիլ յիշատակուածներէն: Կը բաւականանանք միայն ընդունուած փառքի եւ նպաստի յիշատակութեամբ: Այդ տարբերութիւնն է սրբոց բարեխօսութեան վրայ յուզուած խնդիրը, որուն դէմ կը մաքառին արեւմտեան նորաղանդները: Բայց սուրբերուն մատուցուած աղօթքը եւ անոնց ընծայուած աղերսները նոր բան մը չեն եւ կ'արդարանան եւս սովորական սկզբունքներով, մանաւանդ թէ՝ տարբեր ալ չեն մարդոց նոր սովորութենէն: Երբ վախճանեալներու յիշատակներ կը կատարուին քաղաքական կեանքի մէջ, անոնց հետ յարաբերութեան ձեւեր, խօսքեր կամ գործեր չեն լինիր, զի ողջերուն եւ մեռածներուն միջեւ քաղաքական ոչ մէկ առնչութիւն չէ կարելի ըմբռնել: Իսկ երբ ողջերուն համար կը լինին տօնախմբութիւններ, որովհետեւ անոնց հետ քաղաքական յարաբերութիւնք չեն խզուած եւ բաց են նոր ակնկալութեանց դռները, բովանդակ տօնախմբութեան մէջ դիտում կը զգացուի եւ, անշուշտ, իրաւամբ տօնելիներէն ակնկալելու նոր արդիւնքներ, նոր նպաստներ կամ որեւէ ուրիշ շահեր, որոնք տակաւին չեն եղած: Եկեղեցին հոգեկան է, եւ իր յարաբերութիւնները հոգեկան են՝ ըստ իր սկզբունքներուն: Իր յարաբերութիւնները վախճանեալներուն հետ չեն դադրած, անոնց առնչութիւնները չեն խզուած ողջերուն հետ, եւ, իբրեւ ողջեր, ողջերու հետ հաղորդակցութեան մէջ են անոնք հոգեւորապէս: Ննջեցեալներուն վերաբերմամբ քրիստոնէական հաւատքը այս է: Անտեղի՞ է, ուրեմն, որ իրերու հոգեկան կարգին մէջ միեւնոյն կերպով աղերսներ մատուցուին բարի եւ բարեգործ ննջեցեալներուն, ինչպէս քաղաքական իրաց կարգին մէջ կը մատուցուին աղերսներ բարի եւ բարեգործ ողջերուն:

220. ՍՈՒՐԲԵՐՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՒԱԾ ԱՂՕԹՔԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Այս վարդապետութիւնը կը վերաբերի բուն այն աղօթքներուն, որոնք սուրբերուն կ'ուղղուին, եւ կը կոչուի «խնդիր բարեխօսութեան սրբոց» եւ կը պարունակէ հետեւեալ պայմանները. նախ՝ թէ սուրբերուն դիմելը անտեղի բան մը չէ. երկրորդ՝ օգնութիւն եւ շնորհներ կ'ակնկալենք ո՛չ թէ սուրբերէն, այլ՝ Աստուծմէ՝ սուրբերու միջնորդութեամբ: Սուրբերուն միջնորդութիւնը իր զօրութիւնը կ'առնէ Քրիստոսի եւ ո՛չ թէ՝ իրենց արդիւնքներէն. այնպէս որ, աւելի ի դէպ պիտի ըլլար այդ միջնորդութիւնը, իսկական միջնորդութենէ աւելի, կոչել երկրորդական միջնորդութիւն: Երրորդ՝ սուրբերուն միջնորդութիւնը անպտուղ եւ ապարդիւն չէ եւ որեւէ կերպով կը նպաստէ մեր հայցուածներուն ընդունելութեան: Բարեխօսութեան խնդիրը, ուրեմն, չունի այն ընդարձակութիւնը, զոր ի զուր անոր կու տան հակառակորդները, որպէսզի իրենց հնարաւոր ըլլայ գժուարութիւններ հանել անկէ:

221. ՍՐԲՈՑ ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԵՐԸ

Ի հաստատութիւն այն վարդապետութեան, որ կը պաշտպանէ սուրբերուն մատուցուած աղօթքը եւ անոնց բարեխօսութիւնը, կրնանք, ուրեմն, անխտիր կիրարկել այն խօսքերը, որոնք ողջերուն եւ մեռածներուն կը վերաբերին, որովհետեւ քրիստոնէական հաւատքի տեսակէտով միեւնոյն բանը ըսել է՝ ողջերու՝ իրարու աղօթք խնդրելը կամ իրարու համար աղօթելը կամ ողջերու եւ մեռածներու փոխադարձաբար նոյնը ընելը: Ըստ այսմ՝ մեր խօսքերուն ի ճահ կու գան Պօղոսի կողմէ հաւատացեալներուն ուղղուած սա յանձնարարութիւնները. «Աղաչեմ զձեզ, եղբարք, ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ սիրով Հոգւոյն՝ պատերազմակից լինել ինձ յաղօթս վասն իմ առ Աստուած» [Հռոմ. ԺԵ 30], եւ թէ՝ «Տքնեսջիք ամենայն ժուժկալութեամբ եւ խնդրուածովք վասն ամենայն սրբոց եւ վասն իմ» [Եփես. Զ 18], եւ թէ՝ «Աղօթս արարէք եւ ի վերայ մեր» [Ա Թես. Ե 25]:

222. ՓԱՍՏԵՐ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

Սուրբ Գիրքին մէջ պակաս չեն օրինակներ, որոնցմով կը հաստատուի, թէ աղօթքին արդիւնքով սուրբերը եւ հրեշտակները կը բարեխօսեն մարդոց համար: Աստուած կ'ըսէր Երեմիայի. «Եթէ կացցին Մովսէս եւ Սամուէլ առաջի երեսաց Իմոց, ո՛չ եղիցի Անձն Իմ ընդ նոսա. ի բա՛ց արձակեա զժողովուրդդ զայդ յերեսաց Իմոց» [Երեմ. ԺԵ 1]: Ուրեմն, հնար էր Մովսէսի եւ Եղիայի՝ միջնորդել Աստուծոյ ժողովուրդին փրկութեան համար: Նաեւ Զաքարիա կը տեսնէր հրեշտակը, որ Աստուծոյ կ'աղօթէր ժողովուրդին համար, եւ կ'ըսէր. «Տէ՛ր ամենակալ, մինչեւ ցե՞րբ ոչ ողորմեսցիս ի վերայ Երուսաղեմի եւ քաղաքացն Յուդայ, զորս անտես արարեր» [Զաք. Ա 12]: Նոյնը չէ՞, որ պիտի կարենանք եզրակացնել՝ ըսելով, թէ Իսրայէլ կը մարտնչէր ժողովուրդին համար պարսից իշ-

խանին հետ, եւ թէ Միքայէլ՝ մին երկնային զօրաց առաջին իշխաններէն, «եկն օգնել նմա», ինչպէս կը պատմուի Դանիէլի տեսիլքին մէջ [Դան. Ժ 13]:

Այս ամէնը կը հաստատեն, թէ հրեշտակները եւ ննջեցեալ արդարները կ'աղօթեն ողջերուն համար, ու այդ իսկ հիմն է սրբոց բարեխօսութեան: Այս միտքով կարելի է մեկնել նաեւ Յայտնութեան այն խօսքը, ուր կը տեսնուին քսանչորս երէցներ, որոնք ի ձեռին ունին «բուրվառ ոսկի՝ լի խնկով, որ է աղօթք սրբոցն» [Յայտ. Ե 8]: Ասոնց վրայ աւելցուցէք տակաւին Աստուծոյ հրամանը Յորի բարեկամներուն՝ դիմելու անոր, «զի Յոբ՝ ծառայ Իմ, արասցէ աղօթս վասն ձեր», վասնզի իրենք ալ առաջ խրատ կու տային անոր. «Արդ, աղէ, կարդա՛, թէ ոք տացէ՞ քեզ ձայն, կամ թէ զոք ի հրեշտակաց սրբոց տեսցե՞ս» [Յոբ ԽԲ 8, Ե 1]: Ինչպէս որ կը կանչէին Բաբելոնի մանուկները. «Վասն Աբրահամու՝ սիրելւոյ Քո եւ վասն Իսահակայ՝ ծառայի Քո եւ վասն Իսրայելի՝ սրբոյ Քո» [Դան. Գ 35]:

223. ՓԱՍՏ ԱՌԱՆԴՈՒԹԵՆԷ

Առաջին եւ հիմնական փաստը աւանդութենէ հանուած նախադրյութեան փաստն է, որովհետեւ ինչ որ այսօր կայ եւ կը կատարուի բոլոր հնագոյն, աւանդական եւ ծիսական Եկեղեցիներուն մէջ, կար եւ կը կատարուէր նախկին դարերուն եւս, եւ անկարելի է ցոյց տալ այն դարը, երբ սովորութիւն չկար, եւ կամ երբ ան մուծուեցաւ ի նորոյ: Ասոնց վրայ պէտք է աւելցնել նաեւ ծիսարաններուն հաւատքը, որոնք թէեւ դարուց ի դարս ճոխացան եւ աճեցան, բայց անոնց մէջ էականները նախնականներն են, հինաւուրց, որ մինչեւ առաքելոց ժամանակները կը հասնին:

Ստոյգ է, անշուշտ, թէ սրբոց բարեխօսութեան խնդիրը Ե դարուն է, որ սկսաւ յուզուիլ. բայց ասիկա վարդապետութեան ո՛չ թէ նորութիւնը ցոյց կու տայ, այլ՝ ստուգութիւնը եւ հնութիւնը: Մարտիրոսներուն միջնորդութեան կամ մարտիրոսութեան համար ապաշխարողաց շնորհուած ներողութիւնները նշաններ են այս վարդապետութեան հնութեան, ինչպէս նաեւ՝ մարտիրոսներուն շիրիմներուն արձանագրութիւնները եւ անոնց վկայաբանութեանց վերջաբանները, որոնց մէջ ակներեւ կը հայցեն վկաներուն միջնորդութիւնը:

224. ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ըստ կարծեաց հակառակողներու՝ բարեխօսութեան վարդապետութիւնը համապատասխան չէ քրիստոնէական վարդապետութեան հիմնական սկզբունքներուն, որոնք կ'ուսուցանեն.

ա. Զ.Քրիստոս միայն ճանչնալ միջնորդ. «Մի միջնորդ Աստուծոյ եւ մարդկան, Մարդն Յիսուս Քրիստոս» [Ա Տիմ. Բ 5]:

բ. Դիմել միայն անոր, որուն կը հաւատայ. «Իսկ զի՞նչ կարդասցեն յոր ոչն հաւատացին» [Հռոմ. Ժ 14]:

գ. Դիմել միայն անոր, որ կարող է, եւ ընդունուած բարութեանց խոստովանութիւնը Իրեն միայն ընծայել. «Խոստովան եղերուք Տեառն եւ կարդացէ՛ք զանուն Նորա» [Սաղմ. ՃԴ 1]:

դ. Ընդունելի են միայն Քրիստոսի անուամբ եղած խնդրանքները. «Զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ Իմմէ յանուն Իմ, տացէ ձեզ» [Յովհ. ԺԶ 23]:

ե. Անէծքի սպառնալիքով արգիլուած է յուսալ մարդոցմէ. «Անիծեալ լիցի մարդ, որ արասցէ զյոյս իւր ի մարդ» [Երեմ. ԺԷ 5]:

Բայց այս եւ այս կարգի խօսքերը պաշտամունքին, աղօթքին եւ յոյսին վերջին եւ բացարձակ նպատակին է, որ կ'ակնարկեն, կը խօսին միջնորդութեան արդիւնքին եւ մատուցուած փրկանաց մասին ու չեն մերժեր բնաւ նոյն նպատակին մօտենալու նպաստն ու աջակցութիւնը:

Սուրբերուն երբէք չենք ընծայեր բան մը, որուն վերջը ի Քրիստոս չյանգի, ու ոչինչ կ'ակնկալենք անոնցմէ՝ իբրեւ թէ իրենց միջոցաւ կատարելի. այլ միայն զանոնք կ'ընենք ընտրելագոյն ծառայակիցներ, որոնք մենէ աւելի համարձակութիւն ունին մեր Տիրոջ առջեւ: Այս մեկնութեան ճշդութիւնը վերեւ յառաջ բերուած առարկութեան մէջ է նոյնիսկ. «Անիծեալ լիցի մարդ, որ արասցէ զյոյս իւր ի մարդ», որուն իմաստը լրացնելու համար կը յարէ Երեմիա. «Եւ ապստամբիցէ ի Տեառնէ սիրտ նորա» [Երեմ. ԺԷ 5]:

225. ՊԱՅՄԱՆՔ ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵԱՆ

Բայց որպէսզի կարելի ըլլար իրական համարել սրբոց բարեխօսութիւնը, պէտք էր, որ.

ա. Միջոցներ ունենայինք փոխանակելու մեր խորհուրդները եւ մեր միտքերը հաղորդելու անոնց, որոնք այլեւս աշխարհի վրայ չեն. ինչ որ մեզի կը պակսի բացարձակապէս:

բ. Պէտք է, որ անոնք, որ ոչ եւս են յաշխարհի, միջոցներ ունենային իմանալու մեր հայցուածքները, մինչ, ընդհակառակն, ըստ Ս. Գրոց, «մեռեալքն ոչ են գիտակ եւ ոչ իմիք» [Ժող. Թ 5], որուն համար մարգարէն ի դիմաց ժողովուրդին կ'ըսէր Աստուծոյ. «Աբրահամ ոչ գիտաց զմեզ, եւ Իսրայէլ ոչ ծանեաւ զմեզ, այլ դու, Տէր, Հա՛յր մեր, փրկեա՛ զմեզ» [Ես. ԿԳ 16]:

գ. Պէտք էր գիտնալ, թէ սուրբերը, որոնց կը գիմենք, տառապեալ անձեւորութիւնն՞ը են եւ թէ արդար եւ արդարացեա՞լ են արդեօք Աս-

տուծոյ առջեւ. մինչդեռ երկրայական է առաջինը, անյայտ է վերջինը: Հարկ էր, վերջապէս, որ գիտնայինք, թէ մեռեալներուն կացութիւնը ունի՞ գործունէութեան վիճակներ, մինչ, ընդհակառակն, ըստ քրիստոնէական դրութեան, այլեւս աշխարհի վրայ չեղողները ի վիճակի չեն գործունէութեան, այլ կատարեալ անգործութեան մէջ են, որուն համար անոնք իրենց համար նոյն իսկ որեւէ արդիւնք մը ձեռք բերել կամ բարի կամ չար գործ մը կատարել [չեն կրնար]. այլ կը մնան, ինչպէս որ էին՝ անկարող փոփոխելու իրենց վախճանական կացութիւնը:

226. ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԱՅԴ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Կարելի չէ անգիտանալ, թէ այս խնդիրներուն լուծումները կը նպաստեն առաջադրուած վարդապետութեան կատարեալ բացատրութեան, բայց ո՛չ թէ ըստ էութեան եւ գոյութեան ճշմարտութեան, այլ՝ ըստ եղանակի բացայայտութեան եւ մեկնաբանութեան. ու մենք գիտենք, թէ ճշմարտութեան գոյութիւնը անկախ է անոր բացատրութենէն: Արդ, թէ ի՞նչ կերպով եւ ինչպիսի՞ նշաններով կամ միջնորդներով մեզի հնար պիտի ըլլայ մեր խորհուրդները հասցնել ննջեցեալներուն կամ թէ անոնք ի՞նչ կերպով պիտի կարող ըլլան իմանալ մեր խորհուրդները, այդ մասին ոչինչ գիտենք: Սակայն Քրիստոս կը հաւաստէ մեզի, թէ «ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ի վերայ միոյ մեղաւորի, որ ապաշխարիցէ» [Ղուկ. ԺԵ 10], ինչ որ չէր կրնար ըլլալ, եթէ հրեշտակները չծանօթանային մարդոց գործերուն: Ու Պատմոսի տեսնողը կը պատմէ, թէ «եւ ծուխ խնկոցն՝ աղօթք սրբոցն, ի ձեռաց հրեշտակացն առաջի Աստուծոյ» [Յայտ. Ը 4]: Արդ, ինչ որ հրեշտակաց, այսինքն՝ աննիւթական եւ աշխարհի հետ անհաղորդ էակներու համար կ'ըսուի, պէտք է ըսուի նաեւ մարմինէն մերկացածներուն համար, որոնք այլեւս հրեշտակներուն պէս են: Ժողովողին խօսքը կը վերաբերի սովորական եւ կենցաղական դրութեան եւ երկրի վրայ եղողներուն, որովհետեւ մեռելները այլեւս կեանք չունին երկրի վրայ եւ ոչ ալ մասնակցութիւն՝ մարդկային ընկերութեան հետ: Բոլորովին տարբեր է հոգեկան հաղորդակցութիւնը, որուն մասին կը խօսինք: Իսկ ինչ որ Աբրահամու եւ Յակոբայ մասին կը գրէ մարգարէն, բաղդատական է սովորական երբայարաբերութեան համաձայն, կամ թէ պարզապէս կը թուի ենթադրել, թէ Աբրահամ եւ Յակոբ առաջ կը պաշտպանէին, ինչ որ հիմա այլեւս չեն ըներ: Բայց թէ ննջեցեալները ինչպէ՞ս գիտակ կ'ըլլան մեր հայցուածներուն, սովորութիւն է ըսել, թէ աստուածային մասնաւոր տնօրինութեամբ մըն է, որ կը կատարուի ասիկա: Բայց չենք կրնար ոչինչ ճշդել այդ մասին, եւ Ս. Գիրքը եւ եկեղեցական աւանդութիւնը կատարուածին կերպին մասին է միայն, որ մեկնութիւններ կու տան մեզի:

227. ՋԱՆԱՁԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Գալով սուրբ կոչուածներու պատմական գոյութեան եւ անոնց արդեանց եւ արժանեաց ստուգութեան՝ այդ ամէնը ոչ մէկ կերպով կապ ունի վարդապետութեան հետ: Այնպէս որ, եթէ այդ տեսակէտով սխալմունքներ եղած լինին անգամ, եւ եթէ յիշատակուին անձինք, որոնք բնաւ գոյութիւն չեն ունեցած կամ թէ՝ իբրեւ սուրբ հռչակուած լինին անձեր, որոնք այդպէս կոչուելու արժանի չէին իրապէս եւ ոչ ալ ընտրեալներուն հետ դասուելիք, սխալանքը պատմական եղած կ'ըլլայ եւ ո՛չ թէ՝ դաւանական: Ու վարդապետութիւնը կը մնայ անյողդողդ:

228. ԴԱՒԱՆԱԿԱՆ ԿԷՏ

Վերադառնալով դաւանական տեսակէտին՝ պէտք է դիտել տանք, թէ այս խնդրոյն վերաբերմամբ տարբերութիւն մը կայ Հռոմէական վարդապետութեան եւ մերինին միջեւ եւ, առ Հասարակ, Արեւմտեայց եւ Արեւելեայց միջեւ: Վասնզի մինչեւ լատինները դատաստանը կատարուած կը համարեն, վճիռը՝ արձակուած, սուրբերը՝ փառաւորուած, երանական տեսութեան մէջ հաստատուած եւ իբրեւ սեփական արժանիքովը եւ իրենց առաւելագոյն արդեանց զօրութեամբը կարող նպաստելու մարդոց՝ առաջի Աստուծոյ Աթոռին, մեր Եկեղեցին վճիռն ու փառքը վերջին Դատաստանին կը թողու եւ սուրբերը կը նկատէ իբրեւ փառաւորուածներ Աստուծոյ Աթոռին առջեւ եւ իբրեւ ընտրեալներ եւ պատրաստուածներ փառքի՝ բարեաց յոյսով հանգչած երկնից օթեւաններուն մէջ: Ու թէպէտ Եկեղեցին գիտէ, թէ մարմնոյ կեանքէն ետքը կը դադարի անհատական գործունէութիւնը, եւ իւրաքանչիւր ոք կը մնայ հոգեկան այն վիճակին մէջ, զոր ունէր մահուան րոպէին, բայց ասիկա չարգիլեր, որ արդարութեան վիճակի մէջ գտնուողները կարող լինին Աստուծոյ մատուցած իրենց աղօթքներուն մէջ նպաստաւոր ըլլալու մարդոց, երբ յօժարին այդ բանին կամ երբ մէկը խնդրէ զայդ իրենցմէ: Ասով աւելի եւս կը հաւաստուի այն նմանութիւնը, զոր ցոյց տուինք վերեւ ընդմէջ բարեկրօն անձերէ խնդրուած աղօթքին եւ այն աղօթքին, զոր կրնանք խնդրել արդար ննջեցեալներէն՝ անոնց հայցուածները եւ մաղթանքները համարելով արժանաւորագոյն եւ արժանընդունակ:

229. ՊԱՇՏՕՆ ՆԵԽԱՐԱՑ

Սուրբերուն ընծայուած յարգանաց կամ պաշտամանց մէջ տօներէն եւ աղօթքներէն ետքը կայ դեռ անոնց նշխարներուն կամ պատկերներուն մատուցուած մեծարանքը: Ինչ որ հիմին եւ սկզբունքին մէջ օրինաւոր է, կը տարածուի նաեւ պարագաներու վրայ. այս սկզբունքով կը վարուինք պաշտամանց վարդապետութեան մէջ, երբ բուն առարկային

պատշաճ եղածը կը տարածենք անոր պարագայից վրայ եւս: Սուրբերուն պաշտօնը եւ յարգութիւնը ընդունեցինք ի շնորհս Քրիստոսի, նշխարներու եւ պատկերներու պաշտօնն ու յարգութիւնը եւս կ'ընդունինք ի շնորհս սուրբերուն եւ իբրեւ նշանակ իրենց անձնաւորութեանց: Նշխար ըսելով նախ կ'իմանանք անոնց մարմիններու մնացորդները, ինչպէս՝ ոսկր, աճիւն, երբեմն նաեւ՝ մազերը եւ մորթը եւ արիւնազանգ իրերը, որոնք կը նկատուին իբրեւ մասունք մարմիններու, զորս անոնք կրեցին եւ որով գործեցին արդարութիւնը կամ զորս պատարագեցին արդարութեան համար: Նշխար ըսելով՝ դեռ երկրորդաբար կ'իմանանք նաեւ անշունչ այն իրերը, զորս գործածեցին անոնք իրենց կենդանութեան, ինչպէս են զգեստները եւ այլն: Նմանապէս անոնց մարմնին հետ շփման մէջ եղած իրերը, ինչպէս են տանջանքի գործիքները ու այն իրերը, որոնք անոնց նշխարներուն հպած են, ինչպէս՝ շիրիմներու բեկորները, գերեզմանի հողը եւ այլն: Անշունչ իրերը միայն յիշեցինք, զի շնչաւորները՝ կենդանիները եւ մարդիկ, իրենց ընութենէն է, որ կը գտնեն իրենց արժանիքը եւ ո՛չ թէ՝ այլոց հետ ունեցած իրենց շփումէն: Այս պատճառաւ կը պատուին տանջանքի գործիքները, բայց ո՛չ՝ տանջող ձեռքերը, կը յարգուին սուրբերու հանդերձները, բայց ո՛չ երբէք՝ անոնց պաշտօնեաները կամ ծառաները: Այս կանոնը Եկեղեցին չէ, որ կը յօրինէ, այլ կենցաղական եւ սովորական օրինակէն կ'առնէ զայն:

230. ՀԱՏԱԿՈՏՈՐՆԵՐ

Ծանօթ է, թէ արեւմուտքի մէջ նորաղանդ լուտերականները ահագին պայքար յարուցին նշխարներու պաշտօնին դէմ՝ զայրացած այն ծայրայեղ եռանդին համար մանաւանդ, զոր Հռոմէական Եկեղեցին ցոյց կու տար մասունքներուն նկատմամբ, զոր աւելի սաստկացուց, երբ խաչակիրները Արեւելք դարձին բազմաթիւ նշխարներ բերին միասին՝ առանց գիտնալու, թէ ուսկի՞ց առած էին զանոնք եւ, նոյնիսկ, թէ ո՞ր սուրբերունն էին: Նշխարամոլական այս չափազանցութեան ուրիշ պատճառ մը եղան Հռոմի գետնաղամբանները, մանաւանդ երբ նորանոր խուզարկութիւններ ի լոյս հանեցին բազմաթիւ ոսկերոտիներ, որոնք ամէնքն ալ համարուեցան սուրբերու ոսկորներ, եւ որովհետեւ անունները յայտնի չէին՝ աւելի կամ նուազ անուանակոչութիւններ անոնց համար: Հեռո՛ւ մեզմէ պաշտպան կանգնիլ այդպիսի մոլեռանդ պաշտամունքներու. զեղծումները չեն կրնար ստիպել մեզ ճշմարտութիւնը չտեսնելու:

Մեր մէջ ալ կան նշխարաց յարգութեան հետքեր՝ Հռիփսիմեանց եւ Գայիանեանց վկայարանէն մինչեւ լուսաւորչաշէն տաճարները, ուր հաւաքուեցան Կարապետի եւ Աթանագինէի նշխարները: Բայց ո՞ւր էր, որ այն ձեւն ու կերպը, զոր ի գործ դրաւ Լուսաւորիչ, ի հոգ դամբանի ծածկելով զանոնք եւ վիմարդեայ շիրիմներ դնելով անոնց վրայ, պահուած ըլլար ընդմիշտ մեր մէջ, եւ չերեւէին թանկագին ու ճարտարագործ տփիկներու մէջ փակուած մասանց փշուրներ:

231. ՊԱՏՄԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Բայց ինչ որ ալ ըլլայ, դաւանական տեսակէտով անընդունելի ուչինչ կայ այս մասին: Սուրբ Գիրքը, ս. Հայրերը, եկեղեցական աւանդութիւնը եւ աստուածաբանական փաստը կը հաստատեն նշխարներու յարգական օրինաւորութիւնը: Աւետարանը ցոյց կու տայ տեառտես կինը, որ «մատուցեալ յետոյ մերձեցաւ ի դրօշակ հանդերձից Քրիստոսի» [Մատթ. Թ 20], եւ Աւետարանի պատմութիւնը կը յիշատակէ բազմաթիւ երուսաղէմացիներ, որոնք հրապարակները կը բերէին «զհիւանդս եւ դնել պատգարակօք եւ մահճօք իւրեանց, զի, ընդ անցանելն Պետրոսի, գոնէ հովանի նորա հասցէ ումեք ի նոցանէ» [Գործք Ե 15]. ու եփեսացի հաւատացեալներու համար կ'ըսուի. «Ի հիւանդս տանել ի քրտանէ նորա թաշկինակս կամ վարշամակս եւ մերժել ի նոցանէ ախտիցն» [Գործք ԺԹ 12]:

Փոյթը, զոր նախնի հաւատացեալներ ցոյց կու տային վկաներուն նշխարները թաղելու եւ պատուելու համար, եւ հալածողներուն հակառակ ջանքը՝ ծովակուր ընկղմումով կամ հրակէզ սպառումով ջնջելու մարտիրոսաց մարմինները՝ խափանելու համար հաւատացեալներու յարգութիւնը, սրբոց գերեզմաններուն վրայ կամ կողքին կանգնուած մատուռները, վկաներու շիրիմներուն վրայ դրոշմուած արմաւենիի ոստերու նշանները եւ տէրունական սկզբնատառերը, որոնցմով հաւատացեալներու յարգանքէն մատնանիշ կ'ըլլային ընտրեալներու դամբարանները, ծիսական համբոյրը, զոր անոնց ոսկորներուն կու տային հաւատացեալք եւ դեռ ուրիշ բազմադիմի պարագաներ եւ հնախօսական նշաններ, որոնք կը քաղուին գրութիւններէ եւ արձանագրութիւններէ, կը բաւեն հաստատելու համար, թէ Եկեղեցւոյ մէջ հնաւանդ է նշխարներու յարգութիւնը. եւ, ըստ եկեղեցական օրէնքի ցուցմանց, ինչ որ հնաւանդ է եւ նախկին, է ճշմարիտ: Եւ իրաւամբ իսկ, զի ինչպէս աշխարհ ամենայն իր սիրոյ եւ մեծարանաց հաւատիքը իրեններուն կը փութայ յայտնել անոնց նշխարներուն ընձեռուած պատուոյ եւ գորովի նշաններով, նոյնպէս նաեւ՝ Եկեղեցին պարտաւոր է նոյնը ընել, իր ըմբռնումին համեմատ, իրեններուն:

232. ՊԱՇՏՕՆ ՊԱՏԿԵՐԱՑ

Պատկերներու խնդիրն ալ խօսից կարգին կը պատկանի:

Յայտնի է այն մեծ դղրդիւնը, զոր պատկերամարտութեան ազանգը հանեց Ը դարուն, եւ Նիկիոյ Բ Ժողովին վճիռը 787-ին, զոր յոյնք եւ

լատինք ընդհանրական կը համարեն: Ցայտնի են նոյնպէս այն անցքերը, որոնք այնուհետեւ պատահեցան մանաւանդ Արեւելքի մէջ՝ փոխադարձապէս զօրանալովը պատկերները յարգողներուն եւ անարգողներուն: Այստեղ ծայրայեղութենէ խորշիլ. երբ կը խորհինք, թէ, եկեղեցւոյ մէջ պատկեր պահելով, կռապաշտ եղած չենք ըլլար, միեւնոյն ատեն չենք կրնար նաեւ ընդունիլ, թէ պէտք է անխտիր ամէն տեսակ պատկեր մտցնել եկեղեցւոյ մէջ եւ կամ պատկերներով խճողել տաճարները:

Մեր Եկեղեցին կը խորշի կռեալ եւ քանդակեալ պատկերներէ՝ տաւօրէն պահելով Հին Օրէնքի արգելքը այս մասին. «Մի՛ արասցես դու քեզ կուռս» [Ելք Ի 4], այսինքն՝ «պատկերս կռեալս»: Իսկ գործածած նկարներուն մէջ միշտ կը զանազանէ որմերուն կամ սպասներուն վրայ իբրեւ զարդ գրածները բուն նուիրական պատկերներէն, որոնք իւրաքանչիւր տաճարի մէջ որոշ թիւով, այսինքն՝ սակաւաթիւ, պէտք է լինին: Դարձեալ, այս վերջինները պէտք է ըլլան կա՛մ Փրկչական եւ կա՛մ Փրկիչը Աստուածածնի հետ եւ ո՛չ թէ՝ միայն Աստուածամայրը կամ սուրբերը: Որովհետեւ նոյնիսկ սուրբերուն նուիրուած տաճարներուն մէջ Սեղանին վրայ եղած պատկերները միշտ Փրկչինը կ'ըլլան Աստուածամօր հետ միասին: Այս վերապահումներով հանդերձ, սրբոց պատկերներուն հակառակ չենք վարդապետական տեսակէտով եւ պատկերայարգները կամ պատկերապաշտները կռապաշտ նկատելը համաձայն չենք գտներ ողջամտութեան:

233. ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Պատկերամարտներուն ամենէն հզօր փաստն էր աստուածային պատուիրանը. «Մի՛ արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս ի վեր է եւ որ ինչ յերկրի խոնարհ եւ որ ինչ ջուրս ի ներքոյ երկրի, եւ մի՛ պաշտեսցես զնոսա» [Ելք Ի 4-5]: Իսկ պաշտպանները կ'ըսէին, թէ ատիկա պատկերներուն համար չէ ըսուած, այլ՝ աստուածներուն, զի պատուիրանէն առաջ որոշ կերպով գրուած է. «Մի՛ եղիցին քեզ այլ աստուածք, բաց յինէն», եւ ի վերջոյ կ'աւելացուի. «Զի Ես եմ Տէր Աստուած քո, Աստուած նախանձոտ»: Ի հաստատութիւն նոյն իմաստին՝ պաշտպանները մէջ կը բերեն քերովբէները, որոնց պատկերները Մովսէս գրաւ Տապանակին վրայ [Ելք ԻԴ 18], եւ պղինձէ օձը, զոր Մովսէս Աստուծոյ հրամանով կանգնեց, եւ, նոյնիսկ, Տապանակը՝ իբրեւ պատկեր աներեւոյթն Աստուծոյ, որուն, կարծես, լաղրիական պաշտօն կը մատուցանէին հրեաները, զոր օրինակ՝ Յեսու, որ «պատառեաց զհանդերձս իւր եւ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր առաջի Տապանակին Տեառն մինչեւ ցերեկոյ, ինքն եւ ծերքն Իսրայէլի» [Յես. Է 6], ինչպէս եւ Դաւիթ կ'երգէր. «Բա՛րձր արարէք զՏէր Աստուած մեր, երկի՛ր պագէք պատուանդանի ոտից Նորա, զի սուրբ է» [Սաղմ. ՂԹ 5], ուր յայտնապէս Տապանակին մասին են իր խօսքերը, ըստ այնմ, թէ՝ «Ի սրտէ իմում եղեւ շինել տուն հանգստեան Տապանակի ուխտին Տեառն եւ կայան ոտից Տեառն մերոյ» [Ա Մնաց. ԻԸ 2]:

234. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՐՈՇՄՈՒՆՔ

Եկեղեցական աւանդութենէ եղած փաստերը միւս Նիկիոյ Ժողովին որոշման մէջ են, ինչպէս նաեւ՝ հնախօսական բեկորներու մէջ, որոնք ամէնուրեք կը գտնուին, եւ նորերը միշտ ի լոյս կ'ելլեն հնադարեան մնացորդներու խուզարկութեանց եւ պեղումներու ընթացքին: Որմնանկարներ, վկաներու պատկերներ, Փրկչի եւ Աստուածամօր պատկերներ կամ զանազան պատմական անցքերու տեսարաններ Հին եւ Նոր Կտակարաններէն, կենդանիներու կերպարանքներ, խորհրդաւոր նշանակներով բազմատեսակ զարդեր բազմաթիւ են հին շէնքերու եւ քրիստոնէական թանգարաններու մէջ. եւ ասիկա՝ ո՛չ միայն լատինաց Արեւմտեան աշխարհին մէջ, այլ նաեւ՝ յունաց Արեւելեան Եկեղեցիի պարագային: Մեր մօտ ալ զանազան յիշատակարանական մնացորդներու մէջ կը տեսնուին նոյները. միայն թէ պէտք չէ անդէպ կերպով կատարել պատկերներուն կիրառութիւնը:

Վարէն վեր ելլելով՝ նախ՝ կենդանիներու եւ բոյսերու նմանութիւնները՝ իբրեւ լոկ զարդ, ապա՝ մարդոց եւ հրեշտակներու նմանութիւնները՝ նոյնպէս որպէս զարդ, ապա՝ անձերու կերպարանքները եւ պատմական գործերու ստուերագրութիւնները՝ ի յիշատակ ապագայից, յետոյ՝ սուրբերու պատկերները առանց որեւէ յարաբերութեան պաշտամունքի հետ, այլ՝ լոկ իբր յիշատակ, ապա՝ Քրիստոսի Խաչին ձեւերը: Յետոյ կու գան փրկչական նկարներ Աստուածամայրով հանդերձ կամ առանց անոր՝ օծուած եւ Սեղանի վրայ դրուած:

Մինչեւ այստեղ յիշուածները մեր Եկեղեցւոյ աւանդական յիշատակութիւններն են: Իսկ Եկեղեցւոյ մէջ զանազան անկիւնները պաշտամունքի համար դրուած եւ օծուած փրկչական, տէրունական կամ Աստուածամօր կամ ընտրեալներու պատկերները նորամուտ են, յունականէն փոխադրուած մեր մօտ: Գալով անպատկեր կռեալներուն կամ քանդակուածներուն, ասոնք տպաւորիչ չեն մուծուած մեր մէջ եւ առատօրէն կ'երեւին մանաւանդ լատինաց եկեղեցիներէն ներս: Ասոնց մասին հարկ չկայ խօսելու, զի մեր նպատակն է մեր դաւանութեան հետ առնչութիւն ունեցող պարագաներ միայն նկատի ունենալ:

Արէլ վարդապետ Օղլուգեան

ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՆԱՀՆԵՑՈՒ «ԸՆԴԴԷՄ ԵՐԿԱԲՆԱԿԱՑ» ՃԱՌԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ[1] ԱՌԻԹՈՎ

Անանիա վարդապետ Սանահնեցու «Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց, զոր գրեաց հրամանաւ Տեառն Պետրոսի Հայոց Վերադիտողի» խորագիրը կրող ընդարձակ ճառն աւարտւում է հետեւեալ չորս ենթավերնագրերով. «Սակս անխտիր հաղորդելոյ»[2], «Վասն մեծի հինգշաբթին»[3], «Առ ապականացու աստղսն է զմարմինն Տեառն»[4] եւ «Վկայութիւնք»[5]: Նշուած վերտառութիւնների թէ՛ կիրառութեան ձեւերը եւ թէ՛ «Ընդդէմ երկաբնակաց»—ի բովանդակային կառոյցը կասկած չեն թողնում այն մասին, որ դրանք բնագրում աւելացուել են յետագայ գրիչների կողմից՝ տուեալ հատուածների իմաստը վեր հանելու եւ ընթերցողի ուշադրութեանը յանձնելու նպատակով: Ինչպէս հանդիպում ենք մեր այլ ձեռագրերում, ենթավերնագրային սոյն յաւելումներն, առանց բնագիրն ընդհատելու, կարող էին նոյնքան լաւ զետեղուել մատեանի լուսանցքներում: Այլապէս, Անանիա Սանահնեցու «Ընդդէմ երկաբնակաց» ճառը մինչեւ վերջին «Վկայութիւնք» հատուածը միաձոյլ եւ երկարաշունչ մի գրուածք է: Սրանցից առաջին երեքը մեր մատենագրութեան մէջ ստացել են կրօնական բնոյթ եւ մաս են կազմել հաղորդութեանը վերաբերող կանոնական որոշ ժողովածուների[6]:

Ճառի յատկապէս Բ՝ «Վասն մեծի հինգշաբթին» հատուածից ընթերցողներն ստանում են տարօրինակ տպաւորութիւն: Հակադրուելով յոյներին՝ Անանիա վարդապետ Սանահնեցին պաշտպանում է այն տեսակէտը, «որ ոչ է [պարտ յաւուր Մեծի Հինգշաբթին] ամենեցուն ժողովրդականաց հաղորդել, բայց միայն քահանայիցն»: Արդարեւ, Հայ Եկեղեցում եղե՞լ է արդեօք Աւագ Հինգշաբթի օրը հաւատացեալ ժողովրդին հաղորդութիւն չտալու մի աւանդութիւն, որի մասին այնքան նախանձայուզութեամբ խօսում է Անանիա

1 Տե՛ս Անանիա վարդապետի հայոց Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց, զոր գրեաց հրամանաւ Տեառն Պետրոսի Հայոց Վերադիտողի, հրտ. 3. Քեռսէեանի, Գանձասար, Ա, 1992, էջ 204—234 եւ Բ, էջ 168—211:
2 Տե՛ս Գանձասար, Բ, անդ, 191—193:
3 Տե՛ս անդ, էջ 193—195:
4 Տե՛ս անդ, էջ 195—197:
5 Տե՛ս անդ, էջ 197—211:
6 Հմմտ. Կանոնք ա. ժողովոց հայոց Եկեղեցւոյ, խմբ. Արիստակէս արք. Դաւթեանի, Թիֆլիս, 1904, էջ 134—138:

վարդապետ Սանահնեցին:

Մինչեւ Ը դարի երեսնական թուականները մեր մատենագրութիւնից մեզ ծանօթ չէ մի տեղիք, որտեղ հարց արծարծուած լինի Աւագ Հինգշաբթի օրը ժողովրդին հաղորդութիւն չտալու մասին: Այս առնչութեամբ մատենագրական առաջին վկայութեանը հանդիպում ենք Յովհաննէս Իմաստասէր Օձնեցի կաթողիկոսի անունը կրող «Սակս ժողովոց, որ եղեն ի Հայք»[1] գրութեան մէջ: Այստեղ հեղինակը, աստուածաբանական ձախող ելակէտերից մեկնելով, հանգամանօրէն հրահանգում է.

«... Յաւրինաւոր սուրբ Զատկին ի Մեծի Հինգշաբթոջն ո՛չ հրամայեմք հաղորդել ժողովրդեան Մարմնոյ եւ Արեան Տեառն, զի, մի՛ քաղկեդոնական ախտիւն շաղախեալ, կործանեսցին յուղիղ հաւատոց անտի [...] Յայս աւրինակ եւ մեք տրոհեալ որոշեմք զժողովուրդն ի սուրբ Խորհրդոյ Մեծի Հինգշաբթին, զի թէպէտ եւ փրկագործութեան կատարի Խորհուրդն, այլ ազատութիւն երախայիցն չէ եւս է կատարեալ. բայց ի թարգմանութեան նստելով, քահանայիցն պատմիչ լինելով ժողովրդեանն եւ հրաւիրելոցն զազատութիւն խոստանալով, իբրեւ Աստուածորդին՝ իւրայոցն, նոյնպէս եւ՝ քահանայքն իւրոյ հաւատին: Եւ դարձեալ եւս, զի թիւ պահոց պասեքին չէ եւս կատարեալ, եւ լուծումն ազատութեան չէ եւս եղեալ է ի ծառայութենէ մեղսածին ախտիցն, յորում լինի թողութիւն ծառայից, գեւոյից եւ պարտուց, զի Տէրն մեր Յիսուս Քրիստոս չէ եւս խաչեալ եւ զմահ լուծեալ եւ անարգեալ եւ ոչ ի գերեզմանի եղեալ եւ ոչ եռաւրեայ զՅարութիւնն ի մեզ ցուցեալ եւ ոչ զաւետիս Յարութեանն ընկալեալ ուրուք յումեքէ. զայս ամենայն ի Հինգշաբթոջն ոչ գտանեմք այսպէս եղեալ, այլ ասեմք, ի Տեառնէ պատմիչ լինելով, դեռ զկնի այնր ամենայնի եւ ի հին Զատկին զփրկագործ խորհուրդն կատարեմք, եւ մեք, Քրիստոսի Մարմնովն սպասաւորեալք, յաւրինակ Տեառն մերոյ Փրկչին Իւրով աշակերտաւքն, որպէս եւ այժմ վերադիտողին միայն հրամայեմք քահանայիւք հաղորդել ահաւոր Խորհրդոյն եւ զգռեհիկսն արտաքս ելանել»[2]:

Մեր բանասիրութեան մէջ այսօր կասկած չկայ այն մասին, որ սոյն գրութիւնը Յովհաննէս Իմաստասէր կաթողիկոսի գրական արգասիքը չէ, այլ հաւանաբար՝ նրան ժամանակակից մի հեղինակի: Նա քաջածանօթ է Հայ Եկեղեցում կատարուած ժամանակի իրադարձութիւններին, եւ թղթում արծարծուած հարցերն էլ միանգամայն համապատասխանում են դարի՝ անապականութեան վերաբերեալ հայ—ասորական ընդհանրացումներին եւ հակաքաղկեդոնական վէճերին: Թէեւ հեղինակը, կեղծելով Յովհաննէս կաթո-

1 Տե՛ս Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 220—233:
2 Հմմտ. անդ, էջ 227—229:

դիկոսի անունը[1], աշխատում է մեծ հայրապետի կնիքը դնել գրութեան վրայ, բայց եւ այնպէս չի կարողանում հեղինակային պատկանելութեան հարցում տարհամոզել ընթերցողին: Գրութեան ոճը խոտոր է Օձնեցուն, լեզուն չունի Օձնեցու հարազատ գրութիւնների գեղեցկութիւնը, իսկ աստուածաբանական դատողութիւնները զուրկ են նրա մտքերի սլացքից, չասելու համար՝ ուղղակի խոնարհ են: Ահաւասիկ այս մասին հայ բանասիրութեան եւ եկեղեցական պատմութեան մեծ երախտաւոր Մաղաքիա արք. Օրմանեանի կարծիքը.

«... Քանիցս յիշեցինք «Սակս ժողովոց» գրուածքը, որ նոյնիսկ Յովհաննէս կաթողիկոսի բերնէն «ես Յովհաննէս, ինձ Յովհաննէսի» բացատրութիւնները գործածած է, եւ որուն նպատակն է ցուցնել, թէ իրմէ առաջ եղող վեց կաթողիկոսներ՝ Եզրէ Եղիա, քաղկեդոնիկ են եղեր եւ Հայ Եկեղեցին մոլորցուցեր, եւ ինքն՝ Յովհաննէս, յաջողեր է Եկեղեցին ուղղութեան բերել: Այդ գրուածքին ոչ միայն փքուռոյց ձեւը եւ ստորին ոճը անյարմար է Իմաստասէրին գրիչին, այլեւ պէտք է Օձնեցին բոլորովին անտեղեակ ենթադրել անցեալին՝ ձրիապէս անարգելու համար իր նախորդները, որոնց հաւատոյ գիրերը եւ ժողովական գործերը արդէն յառաջ բերինք, եւ ինքն ալ, որ հին գիրերու հաւաքող մըն էր, անծանօթ չէր կրնար ըլլալ: Բաց աստի, Մանազկերտի ժողովը պարզապէս հայոց քաղկեդոնիկութիւնը սրբելու նպատակով գումարուած ըսել՝ անյարմար կու գայ, վասնզի այս դիտման համար Օձնեցին պէտք չունէր ասորւոց գործակցութեան: Ուստի թէ՛ գործին եւ թէ՛ գիրին ուսումնասիրութեամբ հնար չէ իբր Օձնեցիի վաւերական գործ մը նկատել այն գրութիւնը, այլ, անոր անունը կեղծելով, որեւէ ապիկար մէկէ մը գրուած ըսել»[2]:

«Սակս ժողովոց» թղթում Եզր կաթողիկոսի անուան յաճախակի եւ անարգական յիշատակումը, ինչպէս նաեւ հանգամանօրէն Կարնոյ ժողովի, երկաբնակութեան եւ Սեւերիոս Անտիոքացու յարուցած ապականութեան ուսմունքի դատապարտումը յուշում են այն մասին, որ սոյն թղթի հեղինակը Մայրագոմեցու կուսակցութեանը յարող կրքոտ մի հակաքաղկեդոնական է[3]: Ի դէպ, այս թուղթը խօսում է նաեւ այն փաստի մասին, որ է դարի երեսնակ-

1 «...Պարգեւեալ ընձեռեցաւ Աթոռ հայրապետութեան սրբոյ Գրիգորի. ինձ Յովհաննիսի ներգեւեալ տարապատկան փանաքէի», «...Շնորհեցաւ ինձ Յովհաննէսի կաթուղիկոսի առնել է—րդ ժողով ի Մանազկերտ», «...Զոր ես Յովհաննէս Հայոց հայրապետս կարգեցի ձեզ կէտ սահմանադրութեան» եւն.: Հմմտ. անդ, էջ 222, 223, 227:

2 Հմմտ. Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Ա, Կ. Պոլիս, 1913, էջ 842:

3 Հարկ է այստեղ նշել, որ «Գիրք թղթոց»—ում հրատարակուած «Նորին Յովհաննու Հայոց կաթուղիկոսի ընդդէմ այնոցիկ, որ ապականեն զաւուրբ Խորհուրդն ի ձեռն խմորոյ եւ ջրոյ» խորագրով թուղթը եւս Օձնեցու վաւերական գրութիւնը չէ: «Սակս ժողովոցն» ու այս թուղթը արդիւնք են միեւնոյն հեղինակի եւ գրչի՝ լեզուական, ոճաբանական ու ծիսական հարցեր քննարկելու համաբնոյթ մտածողութեան պատճառով: Ըստ մեզ՝ այն գործն է Մայրագոմեցու կուսակցութեանը յարող հակաքաղկեդոնական նոյն հեղինակի: Հմմտ. Գիրք թղթոց, անդ, էջ 233—238:

կան թուականներին Հայ Եկեղեցում Եզր կաթողիկոսի եւ Յովհան Մայրագոմեցու միջեւ սկիզբ առած պայքարը Ը դարի քսանական թուականներին աւարտւում է մայրագոմեցիականների[1] վերջնական յաղթանակով, որի պսակն են հանդիսանում Դուինի (719 թ.) եւ Մանազկերտի (726 թ.) ժողովները:

Դառնալով Աւագ Հինգշաբթի օրը ժողովրդին հաղորդութիւն չտալու հարցին՝ Օրմանեան սրբազանը «Սակս ժողովոցի» քննադատութեան կապակցութեամբ նշում է. «...Միեւնոյն պատճառով որեւէ կարեւորութեան արժանի չեն կրնար ըլլալ քանի մը տարօրինակ կարգադրութիւններ, որ նոյն գրուածին մէջ կը հանդիպին: Այսպէս է մեծ պահոց վրայ խօսած ատեն ըսելը, թէ՝ «Զշաբաթ եւ կիրակի պայծառութեան՝ ի կթոց կերակուրս հրամայեմ լուծանել յուրախութիւն զաւշոտացն եւ որովայնամոլիցն», որպէսզի այս կերպով «ածցուք զբռամբ զարտաքինսն եւ զանհաւան ազգս մեր»: Նոյն է եւս հրամայելը. «Ոչ հաղորդել ժողովրդեան Մարմնոյ եւ Արեան Տեառն ի Մեծի Հինգշաբթոջն», իբր թէ անկէ քաղկեդոնական վտանգ ըլլալու վտանգ կը ծագէր: Կարգելի եւս. «Ոչ զոք ի դպրաց կամ ի մանկանց ուսումնասիրաց կալ յեկեղեցւոջ սակս վկայութիւն տալոյ»: Նմանապէս նզովք կը կարդայ անոնց, որ «զձու եւ զձուկն եւ զձէթ եւ զթան եւ զիւղ եւ զպանիր եւ զգինի միաճաշակ կերակուր» չեն ընդունիր, կամ «զկիրակէ իբրեւ զուրբաթ» կը պահեն կամ թէ «յուրբաթու եւ ի չորեքշաբաթու յիշատակ առնեն մարտիրոսաց» կամ «զԾնունդն յառաջ, քան զՅայտնութիւնն առնեն», որոնցմով իրաւ կ'ուզուի յունական ծէսեր արգելել, բայց այնպիսի բացատրութիւններով, որոնք ամենեւին չեն համաձայնիր Օձնեցիին վեհ հոգեւոր եւ վսեմ գրչին»[2]:

Օտար աղբիւրներից մեզ ծանօթ է Կեղծ—Յովհաննէս Դամասկացու «Պատասխանիք առ Հայս» գրութիւնը, որտեղ, ի թիւս այլ մեղադրանքների, յունադաւան հեղինակը հայերին մեղադրում է. «Վասն զի ի Մեծի Հինգշաբթին, ի ժամու ընթրեաց Տեառն, որ հաղորդութիւն կարգէ ամենայն քրիստոնէից, նոքա ոչ հաղորդին»[3]:

Այս թուղթը հրատարակող Բաբգէն վրդ. Կիւլէսէրեանը, թէեւ «Պա-

1 Թէեւ Մայրագոմեցին, ինքն էլ մեղադրուելով երեւութականութեան մէջ, դատապարտուել էր, իսկ Թէոդորոս Քռթենատրն էլ նրա դէմ հանդէս էր եկել «Ընդդէմ Մայրագումացոյն» ճառով, (չնայած որոշ բանասէրներ կասկածում են, որ ճառն ուղղակի Մայրագոմեցու դէմ է, իսկ խորագիրն էլ, թւում է, թէ ճառի վրայ աւելացուել է յետագայում), այնուամենայնիւ պատմական փաստերը մեզ հիմք են տալիս ընդունել, որ վերոյիշեալ պայքարը Եզրով ու Մայրագոմեցիով չի վերջացել, այլ շարունակուել է մինչեւ Ը դար:

2 Հմմտ. Օրմանեան, անդ, էջ 842—843:

3 Հմմտ. Նորին Յոհաննու Դամասկացւոյ՝ Պատասխանիք առ Հայս, բանք համառոտեալք. հրտ. Բ. Կիւլէսէրեանի, Լոյս, Կ. Պոլիս, 1905, էջ 1114 եւ 1906, էջ 1126:

տասխանիքի» խմբագրութեան հաւանական թուական է կարծում Ը դարը (մի բան, որ կհամապատասխանէր «Սակս ժողովոցում» արծարծուող որոշ հարցերի, յատկապէս՝ Աւագ Հինգշաբթի օրը ժողովրդին հաղորդութիւն չտալու խնդրի հետ), սակայն թղթում յիշատակուող որոշ անուններ, որպիսիք են՝ Մաթոսիկ (Ուռհայեցի՞), Անանիա (Սանահնեցի՞), Կունդ (Սարգի՞ս) եւն, դժուարացնում են այս գրութեան՝ Ը դարի գործ լինելու տեսակէտն ընդունել[1]: Հակուած ենք այն տեղափոխելու ԺԱ–ԺԲ դարերը, որովհետեւ աստուածաբանական նոյն հարցերի յուզումը գտնում ենք հէնց Անանիա Սանահնեցու «Ընդդէմ երկաբնակաց» հակաճառական թղթում: Այս փաստը նշանակում է, որ Ը-ից մինչեւ ԺԱ դարն ընկած ժամանակահատուածում մատենագրական լուրջ վկայութիւններ չունենք այն մասին, որ Հայ Եկեղեցում գոյութիւն է ունեցել Աւագ Հինգշաբթի օրը ժողովրդին հաղորդութիւն չտալու վերաբերեալ յատուկ մի աւանդութիւն: Այստեղից եզրակացնում ենք.

ա) ԺԱ դարը հայ–բիւզանդական վէճերի ամենաբուռն շրջաններից մէկն է: Պետրոս Գետադարձ կաթողիկոսի եւ Գագիկ տարաբախտ թագաւորի օրօք՝ 1045 թուականին, հայերն ստիպւում են իրենց Անի մայրաքաղաքը յանձնել բիւզանդացիներին: Անանիա վարդապետ Սանահնեցու հակաճառութեան վերտառութիւնն արդէն իսկ ·ուշում է, որ նա իր թուղթը գրել է «Հրամանաւ Տեառն Պետրոսի Հայոց Վերադիտողի»: Պետրոս Գետադարձ կաթողիկոսը ԺԱ դարի հայ–բիւզանդական վէճերի կարեւոր դէմքերից մէկն է: Ինչպէս անցեալում, նոյնպէս եւ պատմական այս տխուր ժամանակահատուածում, երբ հայերն ընկրկում են ի քաղաքականս, ոչինչ չի խնայւում պահպանելու համար ազգի ինքնուրոյնութիւնն ու անկախութիւնը գէթ եկեղեցական հոգեւոր բնագաւառում: Ուստի յոյների կողմից Հայ Եկեղեցու դէմ ուղղուած ամէն մի նկրտում՝ դաւանաբանական թէ ծիսական, մերժւում եւ ետ է մղւում ամենայն վճռականութեամբ:

բ) Այս դէպքում յաճախ վտանգն այն է, որ աստուածաբանական դատողութիւնները մթագնւում են ի խնդիր ազգային շահերի ու զգացմունքների, եւ դա միանգամայն հասկանալի է: Այլապէս, նկատի ունենալով հէնց «Ընդդէմ երկաբնակացը», հնարաւոր չէ բացատրել այն պարագան, որ մի կողմից՝ Անանիա Սանահնեցին օգտագործում է աստուածաբանական փայլուն մտածողութիւն եւ իմաստասիրական խրթին հարցեր վերլուծելու կուռ տրամաբանութիւն, միւս կողմից էլ՝ մեզ համար անհասկանալի եւ Հայ Եկեղեցու ոգուն անհարազատ մի մակերեսայնութիւն:

գ) Չնայած այս մակերեսայնութեանը՝ ընթերցողն իսկ զգում է, որ թղթի հեղինակը պատկառազդու մի դէմք է: Աւագ Հինգշաբթի օրը ժողովրդին չհաղորդելու սովորութիւնը նա հիմնում է նորկտակարանեան այնպիսի տուեալների ու եզրայանգումների վրայ, որ ընթերցողը ստիպւում է հաշուի առնել դրանք: Այսուհանդերձ, հայեցակետ ընդունել այն բացատրութիւնը, թէ «ոչ է [պարտ յաւուր Մեծի Հինգշաբթին] ամենեցուն ժողովրդականաց հաղորդել, բայց միայն՝ քահանայիցն, որպէս ուսոյց մեզ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, այն երկոտասանիցն միայն բաշխեաց, թէպէտ բազումք գոյին աշակերտեալք եւ հաւատացեալք ի Նա, զի ի ծածուկ ի գաղտնիս միայն աշակերտացն ուսուցանէր առնել...»[1], չի արդարացւում, որովհետեւ Քրիստոսի տասներկու առաքեալները ոչ թէ ղեւտական կամ քահանայական ցեղի ներկայացուցիչներ էին, այլ՝ Իսրայէլի տասներկու ցեղերի: Այսինքն՝ նրանք խորհրդանշաբար ներկայացնում էին ամբողջ Իսրայէլը (ժողովրդին), որի փրկութեան համար Եահուէն աշխարհ էր ուղարկել իր Միածին Որդուն:

դ) Աւագ Հինգշաբթի օրը ժողովրդին հաղորդութիւն չտալու մասին առկայ մատենագրական տեղիքները, որոնք, ինչպէս նշեցինք, խիստ սակաւ են, հնարաւոր չէ անտեսել: Դրանք անհերքելի վկայութիւններ են այն մասին, որ նախ՝ այս հարցի շուրջ վէճեր եղել են, եւ երկրորդ՝ հայոց մէջ, հաւանաբար, նման մի սովորութիւն գոյութիւն ունեցել է: Սակայն պէտք է տարբերել ծիսական սովորութիւններն աւանդութիւնից: Սովորութիւնն, այս պարագայում, հատուածական եւ անցողիկ է: Մինչդեռ աւանդութիւնը պատմութեան մէջ երկարատեւ եւ բոլորի համար պարտաւորիչ է: Այն պէտք է աւելի խորը հիմքեր ունենայ, քան՝ սովորութիւնը: Սովորութիւնը կարող է վերածուել աւանդութեան, հակառակը, սակայն, անհնար է: Այն սովորութիւնը, որ չի վերածւում աւանդութեան, չի արժանանում յատուկ ուշադրութեան, նաեւ սխալ կլինէր այն վերագրել ընդհանուրին, ինչպէս խնդրոյ առարկայի պարագայում է, որ թիւրիմացաբար հասցեագրուել է ամբողջ Հայ Եկեղեցուն: Եւ յետոյ, առանձին անհատների, այս դէպքում՝ վարդապետների տեսակէտը չի պարտաւորեցնում ամբողջ Եկեղեցուն: Մինչեւ Ը դար մեզ չի հասել մատենագրական որեւէ տեղիք, որը վկայէր Հայ Եկեղեցում Աւագ Հինգշաբթի օրը ժողովրդին հաղորդութիւն չտալու սովորութեան կիրառութեան մասին: Նմանապէս, ԺԱ դարից յետոյ չունենք այս առիթով վկայութիւններ, որոնք հաստատէին Անանիա վարդապետ Սանահնեցու տեսակէտը:

Չնայած այն իրողութեան, որ Անանիա վարդապետ Սանահնեցին իր փայլուն հակաճառականում ակնարկութիւն չի անում «Սակս ժողովոց» թղթի մասին, բայց եւ այնպէս, նկատի ունենալով երկու թղթերի միջեւ առկայ բովանդակային եւ աստուածաբանական մօտեցումների նմանութիւնները, պէտք է ենթադրել, որ նրան ծանօթ է եղել Յովհաննէս Իմաստասէր կաթողիկոսի անունով աւանդուած թուղթը: Եւ քանի որ այն կրել է Օձնեցի կաթողիկոսի նման հեղինակաւոր մի անձնաւորութեան անունը, ուստի նրանում աւանդուածը Անանիա վարդապետ Սանահնեցին իբրեւ վաւե-

1 Նոյնիսկ տարակուսելի է այս թղթի՝ յունարէնից թարգմանուած լինելու պարագան: Այն մի հայ հոռոմի (յունադաւան) գործ է թւում, որն օգտագործել է յունական ոճաբանութիւններ: Դժուար է հաստատել այն փաստին, որ օտար մի հեղինակ Հայ Եկեղեցու ծիսական մանրամասնութիւնների վերաբերեալ այնքան լայն տեղեկութիւններ ունենար, որպիսիք ունի այս Կեղծ–Յովհաննէս Դամասկացին:

1 Հմմտ. Գանձասար, Բ, անդ. էջ 193:

ական է ընդունել եւ աստուածաբանական դատողութիւնների ամբողջ թափով օգտագործել «Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց» խորագիրը կրող իր ընդարձակ թղթում:

Այսօր մեր Եկեղեցում աւանդական որեւէ արգելք չկայ Աւագ Հինգշաբթի օրը հաւատացեալներին հաղորդութիւն տալու վերաբերեալ: Ընդհակառակը՝ հաղորդութեան խորհրդի հաստատման օրուայ առիթով բոլոր եկեղեցիներում հաւատացեալներին բացատրւում է սրբազան խորհրդի իմաստը եւ կոչ է արւում հաղորդուողներին. «Փորձեսցէ մարդ զանձն իւր եւ ապա ի հացէ անտի կերիցէ եւ ի բաժակէն արբցէ: Զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ, դատաստանս անձին իւրում ուտէ եւ ըմպէ, զի ոչ խտրէ զՄարմինն Տեառն»[1]:

1 Ա Կորնթ. ԺԱ 28–29

Մեսրոպ քահանայ Արամեան

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ՄՈՒՏՔ

Աստուածճանաչողութեան անկման հետեւանքով հոգեւոր ժառանգութեան մի շարք կարեւոր ոլորտներ ենթարկւում են վտանգաւոր աղաւաղումների եւ առժամանակեայ, անպատշաճ բնորոշումների: Այդպիսի ոլորտներից է եկեղեցական ծէսը[1]: Արդի իրականութեան մէջ ծէսը գրեթէ կորցնում է իր բուն փրկաբանական նշանակութիւնը, մեր ծիսական ըմբռնումները դառնում են խիստ կրաւորական (passive) եւ պատահմունքային, ծէսի «տպաւորիչ» եւ «անհասկանալի» արարողականութիւնը տեղի է տալիս հակասական զգացողութիւնների: Ծէսի ներքին զօրութիւնը, տպաւորականութիւնը, խորհրդաւոր անըմբռնելիութիւնը, բարձր նշանակալիութիւնը (սիմվոլիզմ) անկենդան մակերեսային հաւատքի դէպքում առիթ են դառնում զանազան խաբուսիկ ներգործութիւնների, իսկ հաւատքի բացակայութեան դէպքում՝ բազմապիսի վաղակարծ եզրայանգումների: Եկեղեցին մշտապէս մերժել է նմանօրինակ արտաքին, օտար մօտեցումները ծէսին՝ բացայայտելով նրա շնորհական—խորհրդական էութիւնը եւ փրկաբանական ուղղորդուածութիւնը[2], որն արգասաւորւում է կենդանի հաւատք ունեցող հոգիներում:

Ծէսի ճիշտ ըմբռնումը պահանջում է թէ՛ դաւանական մաքրութիւն եւ թէ՛ ներանձնական աստուածպաշտութեան արթնութիւն, որոնց առկայութեան դէպքում կարելի է կենդանի կերպով առնչուել ծէսի վերին, երկնային իրականութեանը: Ծէսն այն ասպարէզն է, ուր հոգեւոր ժառանգութեան տեսական եւ գործնական սկզբունքները ներդաշնակւում են փրկութեան համար անհրաժեշտ ծաւալումներով եւ խտութեամբ: Տեսականի եւ բարոյականի այս ծիսական առնչումն արտայայտուած է աստուածաբանութեան մէջ ընդունուած եռակարգութեամբ՝ տեսական կամ դաւանական, բարոյական կամ գործնական, ծիսական կամ աստուածպաշտական:

Ծէսի ծալքերում անթեղուած աստուածաբանական իմաստների բա-

1 Ծէս ենք անուանում Եկեղեցու արարողութիւնների ամբողջութիւնը՝ խորհուրդներ, բարեպաշտական արարողութիւններ, ժամերգութիւն:

2 Ըստ ս. Դիոնեսիոս Արիսպագացու՝ քահանայապետական կարգը երկնային քահանայապետութեան արտապատկերն է մարդկային բնութեան վրայ եւ *աստուածային բարերարութեամբ* հաստատուած է «առ փրկութիւն եւ առ ի յաստուածանալ ամենայն բանականաց եւ իմանալեաց էութեանց» (տե՛ս ս. Դիոնեսիոս Արիսպագացի, «Եթէ զի՞նչ է եկեղեցականիս քահանայապետութեան աւանդութիւն, եւ զի՞նչ այնորիկ դիտումն», "The Armenian Version of the works attributed to Dionysius the Areopagite", edited by Robert W. Thomson, Louvain, 1987, էջ 58):

ցայայտումը յատկապէս կարեւոր է մեր օրերի համար: Եթէ մի ժամանակ ծէսի շնորհական իւրացումը զուգակցւում էր հայրերի հոգեշունչ բացատրութիւններով, վարդապետական գրուածքներով, ապա մեր օրերում թէ՛ շնորհի նուազումը, թէ՛ վարդապետական խօսքի սակաւութիւնը, թէ՛ հայրերի գրուածքներին անտեղեակ լինելը յանգեցնում են ուղղակի ծիսաբանական աղէտի:

Ծիսականը պէտք է ուղեկցուի անհրաժեշտ աստուածաբանական զուգակշռով, այլապէս ծէսը վերածւում է թատերական անախրոնիզմի կամ անհոգի պարտադրանքի՝ կորցնելով իր փրկական նշանակութիւնը. խօսքը վերաբերում է թէ՛ անհարկի ճոխացումներին եւ օտար, խորթ տարրերի ներմուծմանը, թէ՛ յանդուգն, կոպիտ կրճատումներին: Ծէսն իր էութեամբ անկրճատելի է, քանզի ծէսի իւրաքանչիւր տարր հոգեւոր օրինաչափութեան արտայայտութիւն է:

Աստուծոյ գոյութեան անդրանցականութիւնը, իմանալի եւ զգալի աշխարհների ոչ միարժէք հայելացումը, աստուածգիտութեան շնորհական բնոյթն ինքնին ակնարկում են աստուածպաշտութեան որոշակի զգայական—նշանական ծիսականութիւն: Ծէսն արարչադիր է, «քանզի էութիւն մերոյս քահանայապետութեան է աստուածաւանդն ասացեալք»[1]: Այն ունի իր հինկտակարանեան զարգացման ստուերակերպ ընթացքը, սակայն իր տնօրինական ամբողջութեանն ու կատարելութեանն է հասնում Բան—Աստուծոյ մարմնաւորումով. Քրիստոսի մարդեղութիւնը ծէսի սրբազան հիմքն է. «Առէ՛ք, կերա՛ք, այս է Մարմին Իմ...» [Մատթ. ԻՁ 26]:

Ծէսը խորհրդական հանդիպում է Աստուծոյ հետ... Այդ հանդիպմանը պէտք է նախապատրաստուել, այլապէս Աստուծոյ սրբարար զօրութիւնը, որ սրբացնում եւ կատարեալ է դարձնում մարդուն, կարող է դատապարտել [տե՛ս Մատթ. ԻԲ 11—14]: Առանձնական նախապատրաստութիւնը ծէսի շնորհական իւրացման նախադրեալն է: Ծէսը հեռու է ամէն տեսակ մոգականութիւնից եւ ճակատագրական անխուսափելիութիւնից, այլ ընդհակառակը՝ նրա փրկաբանական զօրութիւնը գործում է կամքի ազատութեանը ներդաշնակ: Սակայն որոշակի անդէպ, կեղակարծ հոգեվիճակներում ծէսի զօրութիւնը, տպաւորութիւնը, վայելչութիւնը կարող են կարծուել որպէս մոգական ներգործութիւններ, ինչը խորապէս բացասում է եկեղեցական ծէսի էութեանը:

Երկնային վայելչութիւնը ներյատուկ է ծէսին. աստուածային իրականութեան անիմանալի գեղեցկութիւնը, սուրբերի ժառանգութեան յարազուարճ բերկրանքը, իմանալի զուարթունների վեհութիւնը խորապէս ներթափանցուած են եկեղեցական արարողութեան մէջ: Ուստի ծէսի ժամանակ մեր հոգին տպաւորւում է երկնայինով՝ թօթափուելով աշխարհիկ, մեղսահակ տպաւորութիւններից: Մեր հոգու բոլոր զօրութիւնները համակւում են

1 ա. Դիոնեսիոս Արիսպագացի. «Եթէ զի՞նչ է եկեղեցականիս քահանայապետութեան աւանդութիւն, եւ զի՞նչ այնորիկ դիտումն», էջ 58

աղօթական զուարթութեամբ եւ երկնային սիրոյ բաղձանքով, մեր մտքի շարժումները՝ աստուածային երկիւղով եւ շնորհական ուշադրութեամբ: Մեր զգայարանները կնքւում են աստուածային տպաւորութիւններով. տեսողութիւնը՝ սրբազան արարողութեան վայելչութեամբ, լսողութիւնն՝ աղօթքով, սաղմոսներով եւ երաժշտութեամբ, հոտոտելիքը՝ խունկի բուրմունքով, շօշափելիքը՝ Խաչ, Աւետարան, Սրբութիւններ համբուրելով, ճաշակելիքը՝ կենդանարար Հաղորդութեան ճաշակմամբ:

Յաղթանակած եւ մարտնչող Եկեղեցիները կենդանի մասնակիցներն են ծիսական իրականութեան, որը մեծ հոգեկան զգուշութիւն եւ զգաստութիւն է պահանջում ծէսի իւրաքանչիւր երկրաւոր մասնակցից եւ յատկապէս՝ սպասաւորող հոգեւորականից: Վերջինիս սրբակենցաղութիւնը եւ աստուածսիրութիւնը ծէսի շնորհառատութեան նախապայմանն են. առհասարակ, ծիսական նոմինալիզմը (ըստ որի՝ ծէսը գործում է անկախ հոգեւորականի ներքին վիճակից) հասարակական կեանքում վտանգաւոր հետեւանքների կարող է յանգեցնել, քանզի հոգեւորականի սրբութիւնն ամենեւին էլ անկարեւոր մի գործօն չէ: Ծէսը վերելք է դէպի երկինք, դէպի Աստուծոյ սուրբերի քաղաք. հոգեւորականն այդ երկնային վերընթացի ուղեկցողն է...

Աստուածպաշտութիւնը նուիրական գաղտնիք է: Այն պէտք է ծածկուած, դրսի համար պաշտպանուած լինի եւ ապահով փոխանցականութիւն ունենայ: Հոգեւոր ժառանգութեան ծիսական ծրարումն ապահովում է սրբութիւնն անարժանութիւնից, «զի վարագուրաւ ծածկեսցի յանարժանիցն ծածուկ խորհուրդն ի նոսա: Զի որք անարժան են հաւատով եւ մտօք եւ վարուք, ոչ տեսցեն՝ ըստ այնմ՝ «Մի՛ տայք զսրբութիւն շանց...» [Մատթ. է 6]»[1]: Առհասարակ, ծիսական զգուշութիւնը պէտք է լինի հոգեւորականի մշտական ուղեկիցը, որպէսզի նա դատապարտութեան տակ չյայտնուի: Նման զգուշաւորութեան կոչով է ս. Դիոնեսիոսը դիմում նրանց. «Այլ տե՛ս, որպէս զի մի՛ արտաքս կաքաւեցուցցես զսրբութիւն սրբութեանցն, այլ երկիւղի եւ զթաքնութեան Աստուծոյ իմանալեաւք եւ աներեւութիւք գիտութեամբք պատուեսցես անհաղորդս եւ անարատս զնոսա պահեալ յանկատարիցն. զի սրբազանիցն միայն է սրբազան վայելչութեամբ առ սրբազանսն կցորդութիւն»[2]:

Այսօր աւելի քան երբեւէ մեզ պէտք է ծիսական—աստուածպաշտական արթնութիւն, նախապատրաստութիւն, երկիւղած ներկայութիւն, իրագործում կեանքում: Ծէսի էութիւնն աստուածպաշտութիւնն է. այն սկսւում է մեր ներսում՝ ապաշխարութեամբ Աստուծոյ առաջ մեր սիրտը փշրելով, սեփական մեղքի խորը գիտակցումով, կամքը հնազանդեցնելով, մտքերի եւ խորհուրդների զգուշութեամբ, հոգեւոր խոնարհութեամբ... Ծէսի ժամանակ

1 ա. Գրիգոր Տաթեւացի, «Վասն է խորհրդոյ Եկեղեցւոյ», «Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր: Արարեալ արբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», Կ. Պոլիս, 1741, էջ 144

2 ա. Դիոնեսիոս Արիսպագացի, «Եթէ զի՞նչ է եկեղեցականիս քահանայապետութեան աւանդութիւն, եւ զի՞նչ այնորիկ դիտումն», էջ 54

հաւաքում են պտուղները, ծէսն ամբողջացնում է նախապատրաստութեան արդիւնքը... Սակայն ծէսը, սկիզբ առնելով մարդու հոգու խորքում եւ խորհրդականօրէն կնքուելով արարողութեան կատարմամբ, չի վերջանում: Այն պէտք է իրագործուի կեանքում, ծիսական իրականութիւնը պէտք է տեղափոխուի կեանք եւ պայծառակերպի այդ կեանքը: Քրիստոնեան Քրիստոսի Խորհուրդի կրողն է այս աշխարհում, նրա կեանքը պէտք է լինի վկայութիւն ուրիշների համար եւ խորհրդաբար այնպէս լուսաւորի մարդկանց, ինչպէս Քրիստոսի փրկութեան լոյսը՝ Եկեղեցու սրբազան արարողութիւնների միջոցով:

* * *

Ծիսական ժառանգութեան մէջ առանձնակի տեղ են գրաւում Եկեղեցու եօթ խորհուրդներն[1] իրենց բացառիկ քրիստոսաւանդ ակունքներով եւ փրկաբանական նշանակութեամբ: Եկեղեցու խորհուրդների մասին մեր ըմբռնումները յաճախ սահմանափակւում են բարոյա—ներածական եւ տեսական դիտարկումներով: Որքան էլ նման մօտեցումները կարեւոր են, այսուհանդերձ բերում են սահմանափակ ճանաչողութեան (եւ յաճախ՝ սխալ շեշտադրումների): Այնինչ ամբողջական ներթափանցման համար խորհուրդներին պէտք է մօտենալ ծիսական տեսանկիւնից, որովհետեւ ծէսն է մարմնաւորում աստուածային խորհուրդները, ծէսն է խորհուրդների կրիչը... Երբեմն խորհուրդների վրայ կառուցւում է այնպիսի տեսութիւն, որն, աստուածաբանական լուրջ խմորումներ ունենալով հանդերձ, հեռու է լինում արարողական ներքին իրականութիւնից, երբեմն այդ տեսական կառոյցները ոչ ցանկալի ազդեցութիւններ են ունենում ծէսի վրայ եւ խեղաթիւրում են սրբազան կարգը: Պէտք է յիշել, որ սրբազան աւանդութիւնը նախ եւ առաջ ծիսականն է: Քրիստոս, ասելով՝ «զայս արասջիք առ Իմոյ յիշատակի» [Ղուկ. ԻԲ 19], ծիսականօրէն աւանդեց Իր փրկութեան ժառանգութիւնը:

Խորհուրդի եւ արարողութեան միջեւ գոյութիւն ունի խորը ներքին համաձայնութիւն եւ խորհրդա—նշանական ներդաշնակութիւն, որը մենք կանուանենք աստուածաբանական—ծիսական հաւասարակշռութիւն: Այդ հաւասարակշռութեան խախտումը սասանում է աստուածպաշտութեան հիմքերը: Ծէսի չափազանց ծանրաբեռնումը եւ ճոխացումը դժուարացնում են նրա իւրացումը, իսկ կրճատումները նուաղեցնում, թերացնում են խորհուրդի սրբազան ներգործութիւնը եւ կրաւորացնում մեր կրօնական գիտակցութիւնը: Տեսութիւնը նոյնպէս պէտք է զուգահեռուի ծէսին, տեսութիւնը պիտի նախապատրաստի մեր հոգին՝ *աւանդուած սրբազան նշանների*[2] եւ խօսքերի միջոցով հաղորդակցուելու Աստուծոյ փրկաբեր խորհուրդներին:

1 Եկեղեցու եօթ խորհուրդներն են՝ Մկրտութիւն, Դրոշմ, Վերջին օծում, Ապաշխարութիւն, Հաղորդութիւն, Պսակ, Քահանայական ձեռնադրութիւն:
2 Տե՛ս ս. Դիոնեսիոս Արիսպագացի, «Եթէ զի՞նչ է եկեղեցական քահանայապետութեան աւանդութիւն, եւ զի՞նչ այնորիկ դիտումն», էջ 58

Ժամանակները բերում են իրենց հրամայականները, բայց որքան էլ այդ հրամայականները ճնշեն մեր կրօնական գիտակցութիւնը, այսուհանդերձ պարտաւոր ենք պահպանել սրբազան կարգ ու կանոնն իր աստուածաբանական հիմքերով: Երբ ծիսական բարեկարգութեան հարց է առաջանում, հարկ է ուսումնասիրել ծէսի զարգացման հետագիծը, կատարել բոլոր անհրաժեշտ աստուածաբանական պնդումները, ապա անցնել նորոգման... Նորոգում նշանակում է հնի, աւանդականի նորովի բացայայտում եւ ոչ թէ՝ աւերում: Երբ եկեղեցու շինութիւն է վերականգնւում, նախ ուսումնասիրում են կառոյցի ճարտարապետութիւնը, ապա զգուշութեամբ վերականգնում, որպէսզի չաղաւաղեն հնի վեհութիւնը եւ գեղեցկութիւնը: Որքա՞ն աւելի կարեւոր է Եկեղեցու ներքին—աստուածպաշտական շինութիւնը, որքա՞ն աւելի մեծ զգուշութիւն է մեզ պէտք...

Այս տեսանկիւնից առանձնայատուկ ուշադրութիւն է պահանջում Մկրտութեան խորհուրդը: Մկրտութիւնն այսօր ամենից կիրառական ծէսերից է մեր իրականութեան մէջ, սակայն պէտք է ցաւով նշել, որ շատ քչերն են ճշմարիտ գիտակցումով մօտենում այդ մեծ աստուածային խորհուրդին: Եւ պատճառը ոչ միայն անտեղեակութեան մէջ է, այլ՝ առաւելապէս նրանում, որ խախտուած է խորհուրդի ծիսական—աստուածաբանական հաւասարակշռութիւնը, խորհուրդը խիստ անպաշտպան է դարձել արտաքին աշխարհի նկատմամբ... Այսօր որեւէ մէկը կարող է մտնել եկեղեցի եւ անարգել մկրտուել (ինչը բացառուած էր հին Եկեղեցում)՝ առանց նախապատրաստութեան, առանց գիտակցելու, որ Մկրտութիւնը վերստին ծնունդ եւ տնկակցութիւն է Քրիստոսի չարչարանքներին, մահուանը եւ հետեւաբար՝ յարութեանը, որ Մկրտութեամբ մարդը մուտք է գործում Քրիստոսի Եկեղեցի, դառնում Քրիստոսի փրկագործութեան անմիջական հաղորդակիցը եւ երկնքի արքայութեան ժառանգորդը... Մարդը մտնում է եկեղեցի, եւ նրա վրայ ահեղ խորհուրդ է կատարւում, սակայն նա, ոչ մի հոգեւոր ապրում չունենալով, դուրս է գալիս՝ շարունակելով իր՝ Աստծուց կտրուած գոյութեան ընթացքը: Ոչ մի հոգ չի տարւում մկրտուածի յետագայ հոգեւոր կեանքի կազմակերպման համար... Եւ սա նախ եւ առաջ տեղի է ունենում ծէսի անհրաժեշտ մասերի բացակայութեան եւ, առհասարակ, ծէսի ոչ ճիշտ մատուցման պատճառով: Մի բան է պարզ, որ Մկրտութեան արարողութեան բարեկարգման հարցն այսօրուայ հրատապ պահանջներից է, եւ պէտք է վերջապէս մէկ հաստատագրուած եւ սրբագրուած ծէս գործի բոլոր հայ եկեղեցիներում: Անշուշտ, անցեալ դարի եւ դարասկզբի տպագիր մաշտոցների արարողութիւնները խիստ ծանրաբեռնուած են օտար տարրերով եւ

յենուած չեն որեւէ գիտական ուսումնասիրութեան վրայ[1] (խօսքը վերաբերում է նաեւ խիստ կրճատուած վերջին հրատարակութիւններին[2]), այլ լի են հրատարակիչների կամայականութիւններով: Այսօր մենք ունենք մեր ձեռագիր մաշտոցների Մկրտութեան արարողութեան քննական բնագրերը[3], եւ արդէն լոյս է տեսել Gabriele Winkler, "Das armenische Initiationsritual. Entwicklungsgeschichtliche u. liturgievergleichende Untersuchung der Quellen des 3—5" աշխատութիւնը, որոնց շնորհիւ կարող ենք որոշակի պատկերացում ձեռք բերել հայկական ծէսի զարգացման օրինաչափութիւնների մասին: Այսուհանդերձ, սա դեռ բաւարար չէ բարեկարգութեան համար. անհրաժեշտ է տալ ծէսի աստուածաբանական հիմնաւորումները, որից յետոյ միայն կարելի է զատել կարեւորն անկարեւորից եւ ընդունել ծէսի այն տարբերակը, որն աւանդական է, աստուածաբանական տեսանկիւնից՝ կուռ եւ համապատասխանում է արդի ծիսական հոգեբանութեանը:

ՄԵՐ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՐՈՒԱԳԾԵՐԸ

Մեր ուշադրութիւնն անմիջապէս գրաւեց մեր զոյգ երկաթագիր մաշտոցների[4] Մկրտութեան արարողութիւնը[5], որը յոյժ պատշաճ նկատուեց սոյն ուսումնասիրութեան համար: Այդ արարողութիւնը գրեթէ անաղարտօրէն պարունակում է դասական ծէսի հիմնական կառոյցը, զերծ է խճողումներից եւ յետամուտ տարրերից, արտացոլում է մեր հնագոյն աւանդութիւնը եւ զգալիօրէն կարճ տեւողութիւն ունի տպագիր (նկատի չունենք վերջին խիստ կրճատուած մաշտոցները) մաշտոցների համեմատութեամբ: Ծէսն ունի հետեւեալ կառուցուածքը.

ԿԱՆՈՆ ԵՐԱԽԱՅՈՒԹԵԱՆ

ա) երախայութեան սկիզբ կամ երախաների[6] ձեռնադրութիւն

բ) նախապատրաստական աղօթքներ (եկեղեցուց դուրս)

գ) հանդիսաւոր խոստումներ (հրաժարում սատանայից եւ հաւատքի խոստովանութիւն)

ԿԱՆՈՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

ա) մուտք եկեղեցի

1 Տե՛ս հ. Սահակ Ճեմճեմեան, «Մկրտութեան արարողութիւնը մաշտոցներու մէջ», Բազմավէպ, Վենետիկ, 1971, հ. 1—2, էջ 26:
2 Տե՛ս «Մաշտոց, յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս ըստ սահմանադրութեան սուրբ Եկեղեցւոյս Հայոց», Երուսաղէմ, 1977: նոյն վերտառութեամբ, Մնթիլիաս, 1988:
3 հ. Սահակ Ճեմճեմեան, «Մկրտութեան արարողութիւնը մաշտոցներու մէջ», Բազմավէպ, 1971, 1972
4 Ձեռ. N 457 (ս. Ղազար), N 1001 (Երեւան)
5 հ. Սահակ Ճեմճեմեան, «Մկրտութեան արարողութիւնը մաշտոցներու մէջ», Բազմավէպ, 1971, հ. 1—2, էջ 36—46; 1972, հ. 2—3, էջ 211—231
6 Բնագրերում հանդիպում է նաեւ *երեխայ* ձեւը:

բ) իւղի օրհնութիւն

գ) ջրի օրհնութիւն

դ) բուն Մկրտութիւն

ԿԱՆՈՆ ԴՐՈՇՄԻ

ա) օծում

բ) զգեստաւորում

գ) երկրպագութիւն Սեղանին

ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՁԱԿՈՒՄ

ՈՒԹ ՕՐ ՅԵՏՈՅ

Հայկական ծէսը բաղդատելով վաղքրիստոնէական արարողութիւնների հետ՝[1] կարելի է եզրակացնել, որ այն, իր մէջ ամփոփելով եւ բիւրեղացնելով Մկրտութեան խորհուրդի շուրջ ծաւալուած աստուածաբանական շարժումները, մի ինքնատիպ արարողութիւն է եւ արտայայտութիւն է հնագոյն աւանդութեան, որը, հաւանաբար, Հայաստան է բերուել ս. Գրիգոր Լուսաւորչի կողմից: Մենք սոյն աշխատութեան մէջ յաջորդաբար կբացայայտենք Մկրտութեան արարողութեան առանձին մասերի աստուածաբանական իմաստները եւ պատմական զարգացման նախընթացը եւ կտեսնենք, որ Մկրտութիւնն առանձին արարողութիւնների անբաժանելի եւ անկրճատելի միասնութիւն է, եւ որեւէ մասի աղաւաղումը կամ դուրսմղումը ծէսից ծանր հետեւանքների առիթ է դառնում թէ՛ մարդու ներանձնական, թէ՛ հասարակական կեանքում: Այսուհանդերձ, այս տեսքով, թերեւս, այն անհնար լինի գործածել այսօր, սակայն աննշան յաւելումներով (նարօտի օրհնութիւն, մի քանի շարականներ) կարելի է վերադառնալ մեր հայկական ծէսի պարզ եւ աստուածաբանական տեսանկիւնից կուռ վեհութեանը՝ թօթափելով յետագայ դարերի օտարամուտ, անհարկի խճողումներից: Մէկ կարեւոր նկատառում եւս. բնիկ հայկական ծէսում խստօրէն ընդգծուած է մկրտուողի անհատական դարձը, եւ բոլոր հարց ու պատասխաններում, հանդիսաւոր խոստումներում մենք տեսնում ենք մկրտողի կողմից արտասանուող եզակի ձեւեր՝ ի տարբերութիւն հոգեւորականի կողմից այսօր արտասանուող յոգնակի ձեւերի, ուր անհատի մասնակցութիւնը հասած է նուազագոյնի: Ուրեմն, մեր հայրերի հոգը եղել է մարդու փրկութիւնը, որը սկսւում է Մկրտութեամբ, եւ ցանկալի է, որ այդ մտահոգութեամբ այսօր էլ համակուած լինէինք: Հոգեւոր կեանքի մէջ Մկրտութիւնն էական սկիզբ է, եւ այդ սկզբով մեծապէս պայմանաւորուած է մարդու ողջ յետագայ կեանքն ու գործունէութիւնը:

1 J. G. Davies, "The Early Christian Church", Michigan, 1987, p. 102—104, 148—150, 200—203, 262—266

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Պատրաստութիւնն աստուածմարդկային յարաբերութեան անհրաժեշտ նախապայմանն է: Հնուց սկսած՝ մարդ մինչեւ Աստծուն կամ սրբութիւններին մերձենալը պէտք է անցներ մարմնական եւ հոգեկան պատրաստութեան երկարատեւ շրջան, որպէսզի լիապէս արժանանար Աստուծոյ հետ հաղորդակցման:

Մկրտութիւնը, հանդիսանալով Եկեղեցու աստուածպաշտական համակարգի սկզբնարար հիմքը, նոյնպէս պահանջում է լուրջ պատրաստութիւն: Հին Եկեղեցում գոյութիւն ունէր բաւականին երկար նախապատրաստական շրջան՝ մէկից երեք տարի: Մկրտութեանը նախապատրաստուողները, որոնց անուանում էին *ընծայութեան կոչուածներ*[1], աստիճանաբար ներածւում էին Եկեղեցու մէջ: Նրանց վրայ կատարւում էին երդմնեցուցման[2] մասնաւոր արարողութիւններ, նրանց մանրազնին կերպով ուսուցանում էին հաւատքի տեսական (Սուրբ Գիրք, դաւանութիւն) եւ գործնական (աղօթք, պահք, ճգնութիւններ) սկզբունքները: Այս երկար նախապատրաստութեանն անմիջապէս յաջորդում էր համեմատաբար աւելի կարճ շրջան, որը տեւում էր 40 օր մինչեւ Զատիկ[3], երբ կոչուածները լարուած աղօթքով

1 Նրանց նաեւ անուանում էին պարզապէս *կոչուածներ* կամ *երախաներ:* Ս. Դիոնեսիոս Արիսպագացին նրանց անուանում է *զգաստացածներ:* Արեւելքում նրանց անուանում էին *լուսատրուողներ* կամ *մկրտուողներ,* Արեւմուտքում՝ *խնդրողներ* կամ *ընտրեալներ,* Երուսաղէմում՝ ուղղակի՝ *հաւատարիմներ* կամ *հաւատացեալներ* (տե՛ս Ճառ Ե, «Երանելւոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի կոչումն ընծայութեան» («Կոչումն ընծայութեան»), Վենետիկ, 1832, էջ 74—75):

2 Երդմնեցուցչութիւնը դեւերի հալածման (exorcist) արարողութիւն է, որը հնում մեծ կիրառութիւն ունէր: Մասնաւորաբար, յաճախ կատարւում էր երախաների վրայ, որոնց պատրաստում էին Մկրտութեան: Երդմնեցուցման արարողութեան մէջ մտնում էին յատուկ աղօթքներ՝ սուրբգրային դրուագների յիշատակմամբ, տեառնագրումներ, փչումներ: Երախայի երեսը ծածկում էին, որպէսզի միտքը եւ տեսողութիւնը զերծ պահէին թափառումներից: Փչումը նշանակն էր մեղքերից մաքրման եւ անամօթ ու նախաչար սատանայի հալածման: Միաժամանակ փչումը ցոյց էր տալիս Սուրբ Հոգու ներգործութիւնը, որի համար էլ մեծ զօրութիւն ունէր անտեսանելի թշնամիների դէմ: Երդմնեցուցման արարողութիւնը հնում անհրաժեշտ մաս էր կազմում Մկրտութեան նախապատրաստութեան. այն այսօր էլ որոշ Եկեղեցիներում Մկրտութեան արարողութեան բաղկացուցիչ մասերից է: Մեզ մօտ երդմնեցուցչութիւնը դարձել է առանձին արարողութիւն, որը կոչւում է «Կանոն վասն այսահարաց եւ լուսնոտից» (տե՛ս «Մաշտոց», Վաղարշապատ, 1905, էջ 261—310):

3 Իրականում հէնց Մկրտութեան նախապատրաստութեան շրջանից էլ առաջացել է Մեծ Պահքը:

ու պահքով պատրաստւում էին սուրբ Գիշերուան[1]: Այդ գիշեր Քրիստոսի Յարութեան տօնին նրանք մկրտւում էին եւ այդպիսով ստանում նոր կեանքի փրկութիւնը եւ Քրիստոսի լոյսը:

Յետագայում Մկրտութեան նախապատրաստութեան այս ընթացքը փոփոխութիւններ է կրում՝ մնալով սակայն որպէս Մկրտութեան անքակտելի մաս: Այն դառնում է Զատկից անկախ՝ պահպանելով իր զատկական իմաստն ու էութիւնը: Ինչպէ՞ս է այս մեծ խորհուրդի նախապատրաստութիւնն արտացոլուած հայկական ծէսում, ինչպիսի՞ն է եղել մեր Եկեղեցու վերաբերմունքը... Մեր Մկրտութեան արարողութիւնը սկսւում է մի խրատով (այն աննշան զանազանութիւններով առկայ է բոլոր թէ՛ տպագիր, թէ՛ ձեռագիր մաշտոցներում), որն այսօր գրեթէ կատարեալ անտեսման է մատնուած, սակայն հէնց այս խրատով է սկսւում Մկրտութեան խորհուրդը, եւ նրանում յստակօրէն սահմանագծուած է մեր Եկեղեցու վերաբերմունքը վերստին ծնունդեան խորհուրդին մերձենալ կամեցողների նկատմամբ:

Յորժամ քրիստոնեայ առնեն, նախ չէ պարտ յեկեղեցին թողով, այլ ձեռնադրեսցէ յաւուրս երիս շաբաթօք կամ աւելի նախ քան զՄկրտութիւնն, որով եւ զհաւատս եւ զՄկրտութիւնն Եկեղեցւոյն բաւականացի ուսանել ի վարդապետէն. յաւուրս՝ նախ զԱստուածութիւն Սրբոյ Երրորդութեանն եւ զարարչութեան եւ զլինելութեան արարածոց եւ ապա՝ զընտրութիւն արանց արդարոց. յետոյ՝ զԾնունդն Քրիստոսի եւ կարգաւ զամենայն տնտեսութեանն եւ զխաչին մեծ խորհուրդն եւ զթաղումն եւ զՅարութիւնն եւ առ հայր զհամբարձումն եւ զմիաւանգայ զԳալուստն եւ զյարութիւն ամենայն մարմնոց եւ զհատուցումն ըստ իւրաքանչիւր գործոց: Զայս ուսուցանելով՝ խրատեսցեր [մէկին] քրիստոնեայ եւ դարձնում, նախ պէտք չէ թողնել եկեղեցի [մտնի], այլ պէտք է ձեռնադրուի երեք շաբաթ կամ աւելի՝ նախքան Մկրտութիւնը, որի ընթացքում էլ հաւատքի վարդապետից ուսանել Եկեղեցու հաւատքը եւ Մկրտութիւնը. սկզբից նախ՝ Սուրբ Երրորդութեան Աստուածութիւնը, արարածների արարչութիւնը եւ լինելութիւնը, ապա՝ արդար այրերի ընտրութիւնը, յետոյ՝ Քրիստոսի Ծնունդը եւ, ըստ կարգի, [փրկագործութեան] տնտեսութեան ողջ [ընթացքը]՝ Խաչի մեծ խորհուրդը, Թաղումը, Յարութիւնը, առ հայր Համբարձումը, միւս Գալուստը, բոլոր մարմինների յարութիւնը եւ հատուցումն ըստ իւրաքանչիւր գործի: Այս ուսուցանելով՝ պէտք է խրատի ստէպ ապո-

1 «Իսկ եթէ եղիցի աւր տաւնին, հարազատագոյն է առ ի Մկրտութիւնն: Քանզի աւրն այն յիշատակ է յարութեան, իսկ Մկրտութիւն զարթութիւն է առ ի յարութիւն: Ի Յարութեան զյարութեան շնորհն ընկալցուք: Յաղագս այսորիկ ի հեռուստ Եկեղեցի զյինքենէ սնեալն քարոզութեամբ կոչէ. զի զորս կանխաւն երկնէր, ծնցի յայնժամ եւ, զատուցեալ ի կաթաւէ, զնոսա բանիւ խորհրդեանն ճաշակեսցէ զհաստատուն աւանդիցն կերակուր» (ս. Բարսեղ Կեսարացի, «Խաւաք յորդորականք ի Մկրտութիւն», «Գիրք Պահոց», ՄՄ, ձեռ. N 822, էջ 241ա):

ցէ աղօթից ստէպ կայ: Այս կարգաւորութիւն չափահասակացն է: Նախ՝ երախայ ձեռնադրեացի զկատարեալ հաւատն եւ զտոյսն:

թէ: Այս կարգաւորութիւնը չափահասակների համար է: Նախ պէտք է չափահասներին եւ մանուկներին երախայ ձեռնադրել[1]*:*

Այս խրատից երեւում է, որ մկրտուել ցանկացողն անհրաժեշտաբար պէտք է անցնի երախայութեան շրջան, որի ընթացքում կարողանայ ձեռք բերել դաւանական մաքրութիւն եւ ներքին կեանքի հաստատութիւն: Միայն այս նախադրեալների դէպքում նա կարող է ճշմարտապէս ընդառաջ գնալ Աստուծոյ մեծ շնորհներին...

Հին Եկեղեցում մկրտուել ցանկացողին բերում էին տեղական եկեղեցու եպիսկոպոսի մօտ, որը քահանայ էր, հովիւ եւ տեղական համայնքի վարդապետ: Այսպէս կոչուած հաւատարիմները կամ խորհրդազգածները պէտք է վկայէին թեկնածուի դարձի լուրջ բնոյթի մասին[2]: Վստահանալով դարձի եկածի մտադրութեան լրջութեան մէջ՝ եպիսկոպոսը նրա անունը մտցնում էր ընծայութեան կոչուածների ցուցակի մէջ: Ապա երեք անգամ նորադարձի դէմքը տեառնագրում էր եւ ձեռքը դնում նրա գլխին: Այս սկզբնական արարողութիւնը նշանակում էր, որ Քրիստոս ընդունել է այս մարդուն Իր ժառանգութեան մէջ եւ նրա անունը մտցնում է Կենաց Գրքի մէջ[3]: Յովհան Ոսկեբերանի ժամանակ սա կատարւում էր անմիջապէս Մեծ Պահքից առաջ[4]:

Այս գործողութիւնները Մկրտութեան կարգաւորութեան առաջին աստիճանն են, եւ նրանց իմաստը բացայայտւում է կոչուածների վրայ կատարուող առաջին (կամ քրիստոնէական ձեռնադրութեան) աղօթքով:

1 Արարողութիւնը ներկայացւում է ըստ ս. Ղազարի N 457 ձեռագրի: Թարգմանելիս հարկ եղած դէպքում կհետեւենք Երեւանի N 1001 ձեռագրին կամ այլ ձեռագրերի, որը ցոյց կտանք տողատակում:

2 Այս ամենին, ըստ Դիոնեսիոսի, նախորդում է Աստուծոյ փրկութեան քարոզութիւնը քահանայապետի (եպիսկոպոսի) կողմից, որն, ընկնելով ոմանց սրտերը, փրկութեան փափագ է առաջացնում եւ զգաստացնում: Զգաստացածը դիմում է խորհրդազգածներից մէկին՝ խնդրելով իրեն առաջնորդել քահանայապետի մօտ: «Եւ ինքն բոլորովիմբ զհետեւելն խոստացի աւանդեցելոցն եւ աղաչեսցէ զմատչելն իւր եւ ամենեցին զնոյն հետայն կենացն զվերակացութիւնն ընդունել: Իսկ նորա թէ եւ է ընդ նորա փրկութիւնն սրբազնաբար հաճեալ, սակայն առ իրին բարձրութիւն ընդդիմադրեալ զմարդկաւրէնն, տոկմամբ մեծաւ եւ դժուարին կայիւք: Սակայն կատարել զարարողութիւն խնդրոյն բարետեսակութեամբ խոստացեալ եւ առեալ ածէ զնա առ քահանայապետութեանն մականուն» (ս. Դիոնեսիոս Արիսպագացի, «Խորհուրդ Մկրտութեան», էջ 61):

3 Տե՛ս ս. Դիոնեսիոս Արիսպագացի, «Յաղագս ի Մկրտութիւնն կատարմանց», Տեսութիւն, էջ 66:

4 T. M. Finn, "The Liturgy of Baptism in the Baptismal Instructions of St. John Chrysostom", Washington, 1967, c. 50—51

Ասի աղմոս ի թիւ.

ՃԼ. «Տէր, ոչ բարձրացաւ սիրտ իմ»:

Աղօթք ի վերայ երախային նախ քան զՄկրտութիւնն: Այս է Մկրտութեան սկիզբն.

«Տէր Աստուած մեր, Աստուած բարերար, որ զվրիպեալս եւ զհեռացեալս ի Քէն զազգս մարդկան՝ զմերժեալս եւ զանկեալս ի դրախտէն փափկութեան, զոր ոչ կարեցեր անտես առնել, այլ գթացեալ խոնարհեցար ի Քումմէ բարձրութենէդ ի մեր նուաստ բնութիւնս եւ, առնելով զքոյորս մեր բայց ի մեղաց, չարչարանօք մահու, խաչի զփրկութիւն եւ զդարձ մեր գնեալ, վերստին շնորհեցեր մեզ զկենդանութիւն: Ընկա՛լ եւ այժմ, բարերա՛ր Տէր, զբարս յօժարութեան ստեղծուածոյս Քո, որ դիմեաց մերձենալ ի սուրբ եւ ի միայն ճշմարիտ Աստուածութիւն Քո՝ քրիստոնեայ անուն յանձին կրելով: Եւ տո՛ր զօրութիւն եւ օգնութիւն եւ արժանաւորիլ եւ հասանել ի մաքրութիւն սուրբ Աւազանին ամբիծ կենացդ եւ ի ժառանգութիւնն որդեգրութեան արքայութեանդ երկնից Քրիստոսի Յիսուսի՝ Տերամբ մերով, Որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Թիւ[1] *սաղմոս է սաղմոս.*

ՃԼ. «Տէր, չբարձրացաւ իմ սիրտը»:

Աղօթք երախայի վրայ մինչեւ Մկրտութիւնը: Այս է Մկրտութեան սկիզբը.

«Տէ՛ր Աստուած մեր, բարերա՛ր Աստուած, որ Քեզանից վրիպած եւ հեռացած մարդկութեանը՝ մերժուած եւ ընկած դրախտի փափկութիւնից, չկարողացար անտեսել, այլ գթալով խոնարհուեցիր Քո բարձրութիւնից դէպի մեր նուաստ բնութիւնը եւ, ամբողջապէս վերցնելով մեր [բնութիւնն] առանց մեղքի, խաչի եւ մահուան չարչարանքներով գնելով մեր փրկութիւնը եւ դարձը, վերստին մեզ կենդանութիւն շնորհեցիր: Ընդունի՛ր եւ այժմ, բարերա՛ր Տէր, Քո այս ստեղծուածի բարեյօժարութիւնը, որ որոշեց մերձենալ Քո սուրբ եւ միայն ճշմարիտ Աստուածութեանը՝ քրիստոնեայ անուանուելով[2]: Եւ տո՛ր զօրութիւն եւ օգնութիւն եւ արժանաւոր լինել եւ հասնել անբիծ կեանքիդ սուրբ Աւազանի մաքրութեանը եւ երկնքի արքայութեանդ որդեգրութեան ժառանգութեանը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսով, Որին վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Զեռնադրումով մարդը դառնում է քրիստոնեայ, սակայն քրիստոնեան դեռեւս *հաւատարիմ* չէ: Հնում երախայութեան կարգ մտածները գտնւում էին եկեղեցական հսկողութեան տակ. նրանք պէտք է յաճախէին աստուածպաշտական հաւաքներին, ուր նրանց համար յատուկ աղօթքներ էին կատարւում, ապաշխարութեան գործերով եւ առհասարակ իրենց ողջ վարքագծով վկայէին իրենց փրկուելու աներկբայ մտադրութեան մասին: Մկրտուողները պէտք է լինէին խիստ պահքի եւ ժուժկալութեան մէջ, նրանց

1 այսինքն՝ առանց երգելու, արտասանելով

2 ըստ N 1001 (Երեւան) ձեռագրի

թէ՛ խօսքերը, թէ՛ գործերը պէտք է ներծծուած լինէին ապաշխարական փշրուածութեամբ... Քառասնորդական պահքի նախապատրաստական շրջանը նրանց համար խոստովանութեան շրջան էր. «Ժամանակ խոստովանութեան է ժամանակս, որ հասեալ կայ. Ե՛կ, լե՛ր խոստովան, զինչ գործեալ է, ինչ որ բանիւք, որ գործովք, որ ի տուէ, որ ի գիշերի: Եւ լե՛ր խոստովան ի ժամանակի ընդունելութեան, զի յաւուրն փրկութեան ընդունել մարթասցես զգանձն երկնաւոր»[1]: Ընծայութեան կոչուածը պէտք է ուշադրութեամբ հետեւէր քարոզուող խօսքերին, ուսուցանուածը զգուշութեամբ ծրարէր իր սրտում, հեռանար աշխարհիկ հոգսերից՝ ստանալու փրկութեան շնորհը. «Տո՛ւր պարապ անձին քում՝ կանխեալ ընդ ձեռնադրութեամբքն: Դեգերեա՛ց, կա՛ց ի կոչմունս ընծայութեան, եւ յո՛ւշ լիցին քեզ բանքն ամենայն, զոր խօսիցին: Ասեն նոքա՝ ո՛չ միայն զի լսելով լուիցես, այլ զի հաւատովք կնքիցես՝ ծրարեալ ի սրտի քում: Զամենայն հոգս մարդկան ի բա՛ց ջնջեա ի քէն, զի վասն ոգւոց ընթանաս: Ջիրս աշխարհիս ապաքէն ցապաք թողլոց ես. փոքր է այս, որ լքեալս լինի, եւ մեծամեծ է այն, որ ի Տեառնէն շնորհի: Թո՛ղ, լի՛ք ի բաց զառժամայնս եւ հաւատա՛ դու ի պատրաստեալն: Ջայնչափ բոլորեալ թիւս տարերց տարեկանաց անցեր՝ զաշխարհաւ զուր տարապարտուց զբաղեալ. արդ, զայս քառասնօրեայ ժամանակ ո՞չ եկեսցես՝ կանխեալ յաճախութեամբ, վասն քոյին ոգւոյդ փրկութեան»[2]: Մկրտութեան նախապատրաստուողը չպէտք է քնէր որեւէ մէկի, այլ աղօթական ներհայեցողութեամբ պատրաստէր իր անձը Սուրբ Հոգու շնորհների... Նա պէտք է ներէր իր նկատմամբ բոլոր յանցաւորներին, որպէսզի ինքն էլ Աստծուց ներում ստանար, պէտք է *իր անձը պարարէր Սուրբ Գրքի կենարար խօսքերով*, իր ողջ էութեամբ դառնար առ Աստուած, «եւ Ինքն Քրիստոս՝ մեծ Քահանայապետն, զձերոցն բարուց նպաստ ընկալեալ, մատուցանիցէ զձեզ զամենասեան առաջի Հօր եւ ասիցէ. «Ահաւասի՛կ Ես եւ մանկունք Իմ, զոր ետ Ինձ Աստուած» [Եսայ. Ը 18]»[3]:

ՍԿԻԶԲ

Եւ ապա յաւուրս Մկրտութեան առ դրսոն եկեղեցւոյն կատարելոց է քահանայն զայս կարգ՝ հանդերձ միաբան ուխտիւն, ի վերայ տղայոց եւ չափահասակաց:

Ասի սաղմոս ի թիւ Գ.

ԻԴ. «Առ Քեզ, Տէր, համբարձի զանձն իմ»:

ԻԵ. «Դատ արա ինձ, Տէր»:

Եւ ապա Մկրտութեան օրը քահանան միաբան ուխտով հանդերձ եկեղեցու դրսոն առջեւ կատարելու է հետեւեալ կարգը մանուկների եւ չափահասների վրայ:

Ապա թիւ սաղմոս.

ԻԴ. «Տէր, դէպի Քեզ եմ բարձրացնում իմ անձը»:

ԻԵ. «Դատ արա ինձ, Տէր»:

1 ա. Կիւրեղ Երուսաղէմացի. Ճառ Ա. «Լոյսն ընծայութեան», էջ 5
2 նոյն, էջ 5—6
3 նոյն, էջ 7

Ծ. «Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ, ըստ մեծի ողորմութեան Քում»:

Սարկաւագն քարոզէ.

«Եւ եւս վասն երախայիս աղաչեսցուք զմարդասէրն Աստուած, զի ողորմեսցի սմա ըստ մեծի ողորմութեանն Իւրում եւ արժանի արասցէ լուացման վերստին ծննդեան եւ զգեստու անապականութեան եւ զուգաթուեսցէ ընդ հաւատացեալս անուան Իւրոյ եւ կեցուսցէ ողորմութեամբ Իւրով շնորհիւ: Ամենակալ եւ արարիչ Տէր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛»:

Գ. «Տէր, ողորմեա՛»:

Քահանայն ասէ զաղօթս զայս ի վերայ.

«Ընկալ, մարդասէր Տէր, զընծայեալս ի Քեզ զերախայս, սրբեա՛ զմիտս եւ զխորհուրդ սորա յամենայն ենգութենց հակառակորդին եւ արժանի՛ արա զսա ի ձեռն Աւազանին լուանալ զինութիւն մեղաց իւրոց եւ նորոգել լուսով շնորհաց Քրիստոսի Քո: Որպէս զի եւ սա մեօք հանդերձ փառաւորեսցէ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Քարոզէ սարկաւագն.

«Եւ եւս վասն քաւութեան մեղաց, իջանելով ողորմութենց Աստուծոյ ի վերայ երախայիս, զՏէր աղաչեսցուք»:

Գ. «Տէր, ողորմեա՛»:

Քահանայն ասէ զաղօթս.

«Տէր Աստուա՛ծ՝ մեծ եւ փառաւորեալ յամենայն արարածոց, ի Քո անուրջ անուանդ ապաւինելով՝ ծառայս Քո խոնարհեցոյց զգլուխս իւր անուանդ Քո սրբոյ, որում կրկնի

Ծ. «Ողորմի՛ ինձ, Աստուա՛ծ, ըստ Քո մեծ ողորմութեան»:

Սարկաւագը քարոզում է.

«Եւ դարձեալ այս երախայի համար աղաչենք մարդասէր Աստծուն, որպէսզի ողորմի սրան ըստ Իր մեծ ողորմութեան եւ արժանի անի վերստին ծննդեան լուացման եւ անապականութեան զգեստի եւ կարգի Իր անուան հաւատացեալների հետ եւ ապրեցնի Իր ողորմութեան շնորհիւ: Ամենակալ եւ Արարիչ Տէր Աստուած մեր, ապրեցրո՛ւ եւ ողորմի՛ր»:

Երեք «Տէր, ողորմեա՛»:

Քահանան ասում է այս աղօթքը [մկրտուողի] վրայ.

«Ընդունի՛ր, մարդասէ՛ր Տէր, Քեզ ընծայուող այս երախային, սրբի՛ր սրա միտքը եւ խորհուրդը հակառակորդի բոլոր ենգութիւններից եւ արժանացրո՛ւ սրան Աւազանի միջոցով լուանալ իր մեղքերի հնութիւնը եւ նորոգուել Քո Քրիստոսի շնորհների լոյսով: Որպէսզի սա էլ մեզ հետ փառաւորի Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Սարկաւագը քարոզում է.

«Եւ դարձեալ մեղքերի քաւութեան, Աստուծոյ ողորմութիւններն այս երախայի վրայ իջնելու համար աղաչենք Տիրոջը»:

Երեք «Տէր, ողորմեա՛»:

Քահանան ասում է այս աղօթքը:

«Տէր Աստուա՛ծ՝ մեծ եւ փառաւորուած բոլոր արարածներից, Քո այս ծառան, ապաւինելով Քո սիրուր անուանդ, խոնարհեցրեց իր գլուխը Քո սուրբ անուանդ առջեւ, որին

ամենայն ծունր երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետականաց, եւ ամենայն լեզու խոստովան լիցի, եթէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր: Յայդմ ահաւոր անուանէդ հաղորդութիւն ընկալցի սա, որ հալածեաց զխաբէութիւն դիւաց եւ զկռապաշտութիւն մոլորութեան եւ զամենայն սատանայական որոգայթս խափանեաց: Հայեա՛ց, Տէր, ողորմութեամբ Քո ի սա. մերժա՛ եւ հեռացո՛ ի սմանէ՝ ամենայաղթ կոչմամբ անուան Քո ի վերայ սորա, զօրեալ յայսոց պղծոց զխորհուրդս, զրանս եւ զգործս եւ զամենայն խարդախութիւնս, որովք սովոր են խաբել եւ կորուսանել զմարդիկ չար դեւք: Որպէսզի, զարհուրեալ ի յաղթող անուանէդ, սազգապեսցի եւ սանջեսցի աներեւոյթ սանջանօք, երդմամբ հեռացեալ ի սմանէ՝ եւ այլ մի՛ եւս դարձցի ի սա: Լցո՛ երկնային շնորհօք եւ զուարճացո՛ ամենաբարի կոչմամբդ՝ քրիստոնեայ անուանելով: Եւ արժանի լիցի ի դէպ ժամանակի Մկրտութեան վերսին ծննդեան եւ, ընդունելով զՀոգիդ Սուրբ, մարմին եւ անդամ եղիցի Եկեղեցւոյ Քում սրբոյ. եւ անարատ քրիստոնէութեամբ կրօնաւորեալ յայսմ աշխարհիս՝ եւ հանդերձեալոց բարեացդ հասցուք ընդ ամենայն սիրելեաց անուանդ Քո՝ փառաւորելով զանփոփոխելի Տէրութիւնդ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

ծունր են մատուցում բոլոր երկնաւորները, երկրաւորները եւ սանդարամետականները, եւ ամէն լեզու թող խոստովանի, թէ Տէր է Յիսուս Քրիստոս ի փառս Հայր Աստուծոյ: Թո՛ղ հաղորդուի սա այդ ահաւոր անուանդ, որ հալածեց դեւերի խաբէութիւնն ու կռապաշտութեան մոլորութիւնը եւ խափանեց բոլոր սատանայական որոգայթները: Տէ՛ր, նայի՛ր Քո ողորմութեամբ սրան, Քո անուան ամենայաղթ կոչմամբ սրա վրայ՝ մերժի՛ր եւ հեռացրու սրանից պիղծ այսերի կողմից թաքցրած խորհուրդները, խօսքերը, գործերը եւ բոլոր խարդախութիւնները, որոնցով չար դեւերը սովոր են խաբել եւ կործանել մարդկանց: Որպէսզի, զարհուրելով Քո յաղթող անունից, սազգապի եւ տանջուի աներեւոյթ տանջանքով՝ երդմամբ հեռանալով սրանից, եւ այլեւս չդառնայ սրա մէջ: Լցո՛ւ երկնային շնորհներովդ եւ զուարճացրո՛ ամենաբարի կոչմամբդ՝ քրիստոնեայ անուանելով: Եւ թող արժանի լինի ժամանակի յարմարութեամբ վերսին ծննդեան Մկրտութեանը եւ, ընդունելով Սուրբ Հոգիդ, մարմին եւ անդամ թող լինի Քո սուրբ Եկեղեցուն: Եւ, անարատ քրիստոնէութեամբ կրօնաւորելով այս աշխարհում, նաեւ հանդերձեալ բարիքներիդ հասնենք բոլոր Քո անունդ սիրողներիդ հետ՝ փառաւորելով Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անփոփոխելի Տէրութիւնդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Չարի[1] իշխանութիւնը մարդկային բնութեան մէջ հաստատուեց նախաստեղծների պատուիրանազանցութեամբ: Մարդը, լսելով սատանային, մերժեց Աստուծոյ սէրը եւ բարիքները, խախտեց պատուիրանը, զրկուեց հայրենի դրախտի փափկութիւնից եւ արժանացաւ այս տխրական երկրի պանդխտութեանը. մարդը, որ ստեղծուած էր Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ՝ վայելելու աստուածային բարիքների ամբողջութիւնը, յափշտակուեց չարի պատրանքներով... Չարն իր նենգութիւններով, մոլորութիւններով, որոգայթներով առգրաւեցաւ եւ արմատացաւ մարդկային բնութեան մէջ՝ իր խաբէութիւնների մէջ ստրկացնելով մարդկային ինքնութիւնը, խափանելով մարդկային կամքի աստուածադիր ազատութիւնը:

Քրիստոսի փրկագործութեամբ մարդկային բնութիւնն ազատագրուել է չարի իշխանութիւնից: Բանն—Աստուած ճշմարտապէս մարդացաւ եւ, առանց մեղքի անցնելով մարդկային բնութեան կրքերի միջով, դատապարտեց մեղքը մարմնի մէջ... Քրիստոսի յարութեամբ մարդը ձեռք է բերել կատարեալ հոգեւոր ազատութիւն եւ ազատուել մահուան դատապարտութիւններից: Նրան *ծունր են մատուցում բոլոր երկնաւորները, երկրաւորները եւ սանդարամետականները. Յիսուս Քրիստոս Տէր է ի փառս Հայր Աստուծոյ. ամէն:* Նրա ամենայաղթ եւ *ահաւոր անուան* հաղորդակցութիւնը սրբում է *հակառակորդի բոլոր նենգութիւններից*, հալածում *դեւերի խաբէութիւնը եւ կռապաշտութեան մոլորութիւնը...*

Սակայն Աստուծոյ փրկութեանը պէտք է ընդառաջ գնալ, մարդը չի կարող կրաւորապէս, առանց Աստուծոյ լոյսի առջեւ բացուելու, առանց սեփական կամքն Աստուծոյ կամքին ներդաշնակելու հաղորդակից դառնալ Քրիստոսի բերած հոգեւոր ազատութեանը: Մկրտութեան արարողութեան այս հանդիսաւոր սկիզբն արդէն իսկ ուրուագծում է մարդու փրկաբանական նախընթացը: Մարդը դեռ մուտք չի գործել Քրիստոսի Եկեղեցին: Նա կամովի եկել է եկեղեցու դռան առջեւ եւ իր գլուխը խոնարհեցրել Աստուծոյ փրկութեան առջեւ. այսուհանդերձ, նա դեռեւս իրաւունք չունի մուտք գործել Աստուծոյ Եկեղեցի... Նրան ընդառաջ են ելել Եկեղեցու սպասաւորները՝ զօրացնելու եւ նախապատրաստելու իրենց աղօթքներով, հաւաստիանալու նրա՝ առ Աստուած դարձի ճշմարտացիութեան մէջ եւ ապա ուղեկցելու նրան դէպի Եկեղեցի: Նրանք քահանայի միջոցով խնդրում են մարդասէր Տիրոջը՝ ընծայելին արժանաւորել Աւազանի Մկրտութեանը, *լցնել երկնային շնորհներով* եւ *զուարճացնել երկնային կոչմամբ*, որպէսզի իրենց հետ ի զօրու լինի **փառաւորել Ամենասուրբ Երրորդութեանը:**

1 Մինչեւ զգալի աշխարհ ներթափանցելը չարը սկիզբ էր առել իմանալի աշխարհում, սակայն՝ ոչ թէ Աստուծոյ արարչութեամբ, որն ըստ ամենայնի բարի է, այլ՝ որոշ հրեշտակների անձնիշխան կամքով... Վերջիններիս կողմից տեղի է ունենում խռովութիւն, նրանք ատելութեամբ են համակւում Աստուծոյ եւ Նրա արարչութեան նկատմամբ, նրանց կամքը սկսում է մերժել աստուածային բարութիւնը, ժխտել էն, կուրօրէն ձգտել դէպի ոչէն... Դառնալով խաւարի ոգիներ՝ ընկած հրեշտակները մնում են որպէս Աստուծոյ արարածներ, այսինքն՝ լուսեղէն, հրեշտակային բնութիւն ունեն:

Այս աղօթքներին յաջորդող հարցերն ու պատասխանները ցոյց են տալիս հոգու այն անհրաժեշտ նախապատրաստուածութիւնը, որից յետոյ նա կարող է ճշմարտացիօրէն մուտք գործել Քրիստոսի ժառանգութեան մէջ:

ՀՐԱԺԱՐՈՒՄ

Եւ ապա հրամայէ երախային դառնալ յարեւմուտս եւ երդմնեցուցանէ երիցս անգամ՝ ասելով այսպէս.	*Ապա հրամայում է երախային դառնալ արեւմուտք եւ երդուեցնում է երեք անգամ՝ ասելով այսպէս.*
«Հրաժարիմք ի քէն, սատանայ, եւ յամենայն խաբէութենէ քումմէ եւ ի պատրանաց քոց եւ ի պաշտամանէ քումմէ եւ ի գնացից քոց եւ ի հրեշտակաց քոց»:	**«Հրաժարւում ենք քեզանից, սատանայ, քո ողջ խաբէութիւնից, քո պատրանքներից, քո պաշտամունքից, քո ընթացքից եւ քո հրեշտակներից»:**
Եւ դարձեալ հարցանէ քահանայն.	*Եւ դարձեալ քահանան հարցնում է.*
«Հրաժարե՞ն, հրաժարե՞ն, հրաժարե՞ն»:	**«Հրաժարւո՞ւմ ես, հրաժարւո՞ւմ ես, հրաժարւո՞ւմ ես»:**
Եւ ըստ միոյ միոյ հարցմանն ասասցէ.	Եւ իւրաքանչիւր հարցումին պիտի ասի.
«Հրաժարեմ»:	**«Հրաժարւում եմ»:**

Այսօրուայ Մկրտութեան արարողութեան մէջ գործածուող անուղղակի, անդէմ, ընդհանուր ձեւն ուղիղ արտայայտութիւնն է մեր կրօնական գիտակցութեան անկման: Բնիկ հայկական ծէսում առկայ հրաժարման արարողութիւնը զերծ է չարը մերժելու այսօրուայ անորոշ ձեւակերպումներից, երբ մկրտուողի փոխարէն ամէն ինչ յոգնակիաբար ասւում է քահանայի կողմից: Քահանայի եւ մկրտուողի հարց ու պատասխանը ստեղծում են այն հոգեբանական միջավայրը, ուր առաւելագոյնս դրսեւորւում է մկրտուողի կամովի դարձը *սատանայից, նրա ողջ խաբէութիւնից, պաշտամունքից, ընթացքից եւ հրեշտակներից:*

Արեւմուտքը նշանակն է խաւարի, սատանայի բնակավայրի: Մկրտուողը չի երկնչում դէմ առ դէմ կանգնել սատանայի առաջ. նա անցել է պատրաստութեան երկարատեւ շրջան: Սակայն նրան առաւելապէս զօրացրել են քահանայի քիչ առաջ կարդացած աղօթքները:

Չարի մերժումը մարդու կամքի ազատութեան վկայութիւնն է: Այս մերժումը նախ եւ առաջ մարդու ներքին նախապատրաստութեան արտայայտութիւնն է. մարդը երկարատեւ նախապատրաստութեամբ ներքնապէս հեռացել է չարից, որը կոչւում է մեռելութիւն *այս աշխարհի*[1] նկատմամբ, այսինքն՝ սեփական մարմնի անդամների, զգայութիւնների, հոգու շարժումների, մտքի զօրութիւնների անկենդանութիւն մեղքի նկատմամբ: Մերժումը միաժամանակ հոգեւոր զգաստութեան եւ շրջահայեցութեան սկիզբ է մեր ներսում, մեր գործերում հրաժարուելով չարից՝ մենք պէտք է զգուշանանք նրա հրապոյրներից. «Հրապուրեալ հրապուրէ նա, այլ ոչ եթէ բոնութեամբ յաղթահարեալ կարէ որ ոչն անսան նմա»[1]: Յատկապէս պէտք է մտքերի մեծ զգօնութիւն, որոնց միջոցով չարը սովորաբար ախտաւոր ցանկութիւններ է սերմանում մեր մէջ. «Ապա եթէ անխտիր ցանկութեան զմտաւ ածիցես, քո իսկ խորհրդովքն արմատս չարեաց ի քեզ տնկէ եւ, թակարթապատ արարեալ զքեզ, քոյին խորհրդովքն շաղեալ պատեալ, ի խորխորատն չարեաց կործանեսցէ զքեզ»[2]: Չարն ատելը ինքնանպատակ չէ, այլ բարին սիրելու սկիզբն է: Անհրաժեշտ է կամովի դարձ առ Աստուած, հրաժարում մեր մեղսահակ—մարմնահակ կամքից, եթէ պատրաստւում ենք դառնալ երկնքի արքայութեան ժառանգորդներ. «Եւ որք հրաժարին ի պատիր խաբէութենէ մարմնաւոր վարուցս՝ լուացեալ զմիտս շնորհօք ի խղճէ չարեաց ստոյգ զղջմամբ, ապաշխարութեամբ եւ արտասուօք, ատել զչարն եւ սիրել զբարին, խափան լինել մոլար խաբէութեան ուսման եւ ընծայաբեր լինել ճշմարիտ հաւատով Ամենասուրբ Երրորդութեանն, որք այսմ արժանի լինին, առնուն զանուն առաքելութեան աւետեաց Նորոց Կտակարանաց եւ ժառանգաւոր լինին արքայութեանն երկնից»[3]: Այսպիսով, հրաժարման համար պէտք է՝ ա) նախապատրաստութիւն, այսինքն՝ գործնական մեռելութիւն այս աշխարհի նկատմամբ եւ տեսական ճանաչողութիւն մեղքի ոլորտի, բ) ներանձնական կեանքի հաստատութիւն եւ որոշակի փորձառութիւն՝ զգուշանալու համար առաջիկայ փորձութիւններից, գ) վճռական պատրաստակամութիւն՝ Քրիստոսի փրկութեան առջեւ բացուելու եւ շնորհական ներհաստատման:

ՀԱԽԱՏՔԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Ապա դարձուցանէ յարեւելս՝ խոստովանելով զՄի Աստուածութիւն Սրբոյ Երրորդութեանն երիցս անգամ այսպէս.	*Ապա դարձնում է դէպի արեւելք՝ երեք անգամ այսպէս խոստովան[եցն]ելով Սուրբ Երրորդութեան Մի Աստուածութիւնը.*
«Հաւատամ յԱմենասուրբ Երրորդութիւնն՝ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ»:	**«Հաւատում ես Ամենասուրբ Երրորդութիւնը՝ Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն»:**

[Երախան երեք անգամ պատասխանում է՝ հաւատում եմ][4]:

1 *Այս աշխարհ* արտայայտութիւնը Նոր Կտակարանի եւ ա. հայրերի գրուածքների ամենակիրառական արտայայտութիւններից է, որով բնորոշւում է մեղքի ոլորտն ընդհանրապէս: *Այս աշխարհը* հաւաքական անուն է, որն իր մէջ է ներառնում բոլոր մեղքերն իրենց տարատեսակներով:

1 ա. Կիւրեղ Երուսաղէմացի, Ճառ Բ, «Կոչումն ընծայութեան», էջ 11
2 նոյն
3 «Սրբոյն Գրիգորի հայոց Լուսաւորչի վարդապետութեան ճառք յաճախապատումք եւ լուսաւորք», Ճառ Ե, Կ. Պոլիս, 1824, էջ 44
4 Դրեցինք ըստ տարընթերցումների (տե՛ս հ. Սահակ Ճեմճեմեան, «Մկրտութեան արարողութիւնը մաշտոցներու մէջ», 1972, հ. 2—3, էջ 192—193):

Հարցանէ քահանայն այսպէս.

«Հաւատաս ի Հայր, հաւատաս յՈրդին, հաւատաս ի Սուրբ Հոգին»:

Եւ ըստ միոյ միոյ ասասցէ երախայն.

«Հաւատամ, հաւատամ, հաւատամ»:

Եւ դարձեալ հարցանէ երիցս անգամ.

«Հաւատաս, հաւատաս, հաւատաս»:

Եւ առ միոյ միոյ ասասցէ երախայն.

«Հաւատամ»:

Եւ պաշտեսցեն զՀաւատամն Նիկիա ի բոլոր:

Քահանան հարցնում է այսպէս.

«Հաւատո՞ւմ ես Հօրը, հաւատո՞ւմ ես Որդուն, հաւատո՞ւմ ես Սուրբ Հոգուն»:

Եւ երախան մէկ առ մէկ պիտի ասի.

«Հաւատում եմ, հաւատում եմ, հաւատում եմ»:

Եւ դարձեալ երեք անգամ հարցնում է.

«Հաւատո՞ւմ ես, հաւատո՞ւմ ես, հաւատո՞ւմ ես»:

Եւ երախան մէկ առ մէկ պիտի ասի.

«Հաւատում եմ»:

Ապա ամբողջապէս երգում են Նիկիոյ «Հաւատամքը»:

Դէպի արեւելք դառնալը խորհրդանշում է մեր հոգու դարձը դէպի Քրիստոս, դէպի Լոյս: Արեւելքից ծագող զգալի արեգակի լոյսը խորհրդանշում է հոգեւոր արեւելքից ծագած իմանալի Արեգակի՝ Քրիստոսի փրկութեան լոյսը:

Նորից մենք տեսնում ենք, որ բնիկ հայկական ծէսում առկայ է հաւատքի խոստովանութեան անհատական ձեւ: Հարց ու պատասխանին յաջորդում է Նիկիական հանգանակի արտասանութիւնը: Բոլոր հին ձեռագրերում, ի տարբերութիւն յոգնակի «Հաւատամքի», արտասանւում էր «Հաւատում եմ Մի Աստուծոյ...»՝ դարձեալ ի տարբերութիւն յոգնակի, անհատական ձայնը խլացնող, անհատի կամովի դարձը չշեշտադրող կերպերի:

Հաւատքի խոստովանութիւնը նախապատրաստութեան կամ երախայութեան կարգի գլխաւոր եւ եզրափակիչ արարողութիւնն է. երկարատեւ նախապատրաստութիւնից յետոյ մարդը պատրաստ է սուրբ Դաւանութեան խոստովանութեան: Նա ուսանել է հաւատքի տեսական եւ գործնական սկզբունքները, սրտով հաստատուել—հաւատացել է Քրիստոսի Աւետարանին, սակայն փրկութեան ժառանգութիւն մուտք գործելու համար պէտք է բերանի խոստովանութիւն. «Զի սրտիւ հաւատայք յարդարութիւն եւ բերանով խոստովանիք ի փրկութիւն» [Հռոմ. Ժ 10]:

Եկեղեցու հայրերը դաւանական հաւատքը[1] կամ հաւատքի դաւանութիւնը (խոստովանութիւնը) դիտել են որպէս հաւատքի առաջին տեսակ կամ աստիճան. «Զի առաջին տեսակ ճանաչելոյ զԱստուած ուղիղ հաւատոցն խոստովանութիւնն է...»[2]: Հաւատքի խոստովանութիւնը Քրիստոսի Եկեղեցի մուտք գործելու խորհրդական դուռն է: Միայն նա կարող է մուտք գործել Քրիստոսի Եկեղեցի, ով ունի ճշմարիտ հաւատքի դաւանութիւնը. «...զի անուն քրիստոնէութեան զՔրիստոս ճշմարիտ խոստովանելն է, եւ քրիստոնեայ անուանի, որ զճշմարիտ խոստովանութիւնն ստացեալ ունի»[3]:

Ապա ասեն աղմոս ի թիւ ճԺէ՝ «Խոստովանե՛ն եղերուք Տեառն, զի բարի է», *մինչեւ ցայն վայրն՝* «Բացէ՛ք ինձ զդրունս»:

Ապա թիւ ասում են ճԺէ աղմոսաց՝ «Խոստովանեցէ՛ք Տիրոջը, որովհետեւ բարի է», *մինչեւ այն տեղը՝* «Բացէ՛ք ինձ դռները»:

* * *

Եւ, բացեալ զեկեղեցին, մտանեն ի ներքս՝ երթալով առաջի Սաղմանին, պատրաստ ունելով զիտն սուրբ:

Քարոզէ սարկաւագն.

«Եւ եւս վասն իջանելոյ ի յիւղս յայս շնորհք Ամենասուրբ Հոգւոյդ զՏէր աղաչեսցուք»:

Գ «Տէր, ողորմեա՛»:

Քահանայն ասէ զաղօթս զայս.

«Օրհնեալ ես, Տէր Աստուած մեր, որ ընտրեցեր Քեզ ժողովուրդ ի քահանայութիւն եւ ի թագաւորութիւն, յազգ սուրբ եւ ի ժողովուրդ սեպհական. ըստ որում եւ յառաջագոյն իսկ օծեր զքահանայս եւ զթագաւորս եւ զմարգարէս՝ այսպիսի ամենասուրբ իւղով: Եւ այժմ աղաչեմք զՔեզ, Տէր բարերար, առաքեա՛ զշնորհս Հոգւոյդ Սրբոյ ի յիւղս

Եւ, բացելով եկեղեցին, ներս են մտնում՝ գնալով Սաղմանի առաջ, պատրաստ ունենալով սուրբ իղը:

Սարկաւագը քարոզում է.

«Եւ դարձեալ այս իղի վրայ Ամենասուրբ Հոգու շնորհներն իջնելու համար աղաչենք Տիրոջը»:

Երեք «Տէր, ողորմեա՛»:

Քահանան ասում է այս աղօթքը.

«Օրհնեալ ես, Տէր Աստուած մեր, որ Քեզ ժողովուրդ ընտրեցիր՝ քահանայութեան եւ թագաւորութեան, սուրբ ազգ եւ սեփական ժողովուրդ [լինելու համար], ըստ որի էլ նախապէս իսկ օծեցիր քահանաներին, թագաւորներին, մարգարէներին այսպիսի ամենասուրբ իւղով: Եւ այժմ աղաչում ենք Քեզ, բարերա՛ր Տէր, այս իղի վրայ առաքի՛ր Սուրբ Հո-

1 Այս մասին աւելի մանրամասն տե՛ս Մեսրոպ քահանայ Արամեան, «Երեք Տիեզերական Ժողովների դաւանութիւնը», «Գանձասար», հ. Ա, 1992, էջ 110; «Հայ Եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրուագծեր (Դ—Ը դդ.)», հ. Բ, 1992, էջ 86:

2 ս. Աթանաս Աղեքսանդրացի, «Յամենասուրբ Երրորդութիւն», «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք», Վենետիկ, 1899, էջ 239

3 Նոյն, էջ 240

յայս, զի որ օծցի սովաւ, եղիցի նմա ի սրբութիւն հոգեւոր իմաստութեան, ի նահատակութիւն եւ յաղթութիւն հակառակամարտին, ի զօրութիւն պատուիրանապահութեան, առաքինի գործոց եւ յամենակատար հրահանգս եւ ի կրթութիւնս աստուածպաշտութեան: Որպէսզի լուսաւորեալ մտօք կեցցէ յայսմ աշխարհիս՝ ի փրկութիւն անձին իւրոյ, ի պատիւ եւ ի փառս Ամենասուրբ Երրորդութեանն, արժանաւորիլ եւ հասանել վիճակի ժառանգութեան սիրելեաց անուան Յիսուսի Քրիստոսի՝ Տեառն մերոյ, ընդ Որում Քեզ Հօր եւ Սուրբ Հոգւոյն վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

գուդ շնորհները, որպէսզի, ով օծուի սրանով, նրա համար լինի որպէս հոգեւոր իմաստութեան սրբութիւն, նահատակութիւն եւ յաղթութիւն հակառակամարտ [չարի] նկատմամբ, պատուիրանապահութեան եւ առաքինի գործերի զօրութիւն, ամենակատար հրահանգներ եւ աստուածպաշտութեան կրթութիւն: Որպէսզի լուսաւորուած մտքով ապրի այս աշխարհում՝ ի փրկութիւն իր անձի եւ ի պատիւ եւ ի փառս Ամենասուրբ Երրորդութեան՝ արժանաւոր լինելու եւ հասնելու մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուան սիրելիների ժառանգութեան վիճակին, Որի հետ Քեզ՝ Հօրը եւ Սուրբ Հոգուն, վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Եկեղեցի մտնելով՝ գնում են դէպի Աւազան: Ձեռագիր մաշտոցները միաբերան պատուիրում են՝ *պատրաստ ունենալով սուրբ իւղը*. որոշ հին ձեռագրերում սուրբ իւղի փոխարէն օծութեան իւղ է: Տպաւորութիւնն այնպիսին է, որ խօսքը Միւռոնի մասին է, սակայն թէ՛ սարկաւագի քարոզում եւ թէ՛ քահանայի աղօթքում խնդրւում է նրա վրայ առաքել Սուրբ Հոգու շնորհները, ինչն անիմաստ կլիներ օրհնուած սուրբ Միւռոնի դէպքում: Անկասկած, այս քարոզն ու աղօթքը երախաների օծութեան իւղի օրհնութեան հետքերն են: Այս մասին է որոշակիօրէն խօսում ս. Յովհաննէս Օձնեցու Ժ կանոնը. «Պարտ եւ արժան է զՄկրտութեան ձէթ քահանային օրհնել մի ըստ միոջէ ընդ մկրտելն, ըստ բաւականի ժամուն պիտոյից. եւ նոյնժամայն, առ մկրտեալսն մերձեցուցանելով, զօրհնեալն սպառել եւ մի՛ իշխել զմիանգամ օրհնեալն բազում անգամ օրհնել. եւ միայն օծանել նովաւ զերեխայսն եւ զմկրտեալսն ընդ մկրտելն յԱւազանին, եւ յայլ խորհուրդ օծման մի՛ իշխեսցէ մատուցանել զնա»[1]:

Այսուհանդերձ, երախաների օծումն անհետացել է Մկրտութեան արարողութիւնից. բացառութեամբ իւղի օրհնութեան քարոզի եւ աղօթքի՝ ոչ մի հետք կամ խորագիր չի պահպանուել: Տպագիր մաշտոցները երախաների օծութեան այս խնդիրը լուծել են՝ ձեւափոխելով քարոզի եւ աղօթքի

1 «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 26

իմաստը:

Ս. Գրիգոր Տաթեւացու հետեւեալ արտայայտութիւնից՝ «...զի մի՛ համարձակեսցին քահանայք եւ զձէթ օրհնէքն վերստին մուծցեն յեկեղեցի»[1], ակներեւ է, որ ձէթի օրհնութեան դէմ պայքար է եղել, եւ այն դուրս է մղուել մեր Եկեղեցու ծիսական—բարեպաշտական կիրառումից... Հիմնական պատճառն այն էր, որ օրհնուած ձէթի գործածումը հիւանդների եւ տկարների վրայ խափանում էր խոստովանութիւնը[2]: Սակայն թէ ինչո՞ւ է երախաների օծումն[3] անհետացել Մկրտութեան ծէսից, տակաւին մնում է անորոշ:

ՁՐԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Եւ ապա զջուրն Աւազանն արկանէ խաչանման:

Սաղմոս ԻԸ. «Ձայն Տեառն ի վերայ ջրոց»:

Ընթերցուած յԵզեկիէլէ մարգարէէ [Եզեկ. ԼԶ 25—28]:

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս [Գաղատ. Գ 24—29]:

Ալէլու: Սաղմոս ԻԲ. «Տէր հովուեսցէ զիս...»:

Աւետարան ըստ Յովհաննու [Յովհ. Գ 1—8]:

Քարոզութիւն ի վերայ Մկրտութեան ջրոյն.

«Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ Եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք:

Վասն ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան անձանց մերոց զՏէր աղաչեսցուք:

Վասն հայրապետին մերոյ կենաց եւ հաւատոյ զՏէր աղաչեսցուք:

Վասն զի Տէր ուղղեսցէ զգործս ձեռաց մերոյ:

Եւ ապա ջուրը խաչանման լցնում է Աւազանի մէջ:

Սաղմոս ԻԸ. «Աստուծոյ ձայնը ջրերի վրայ է»:

Ընթերցուած Եզեկիէլ մարգարէից [Եզեկ. ԼԶ 25—28]:

Պօղոս առաքեալի՝ Գաղատացիներին ուղղուած թղթից է ընթերցուածը [Գաղատ. Գ 24—29]:

Ալէլու. Սաղմոս ԻԲ. «Տէրը կհովուի ինձ...»:

Աւետարան ըստ Յովհաննու [Յովհ. Գ 1—8]:

Քարոզութիւն Մկրտութեան ջրի վրայ.

«Ողջ աշխարհի խաղաղութեան եւ սուրբ Եկեղեցու հաստատութեան համար աղաչենք Տիրոջը:

Ի վերուստ խաղաղութեան եւ մեր անձերի փրկութեան համար աղաչենք Տիրոջը:

Մեր հայրապետի կեանքի եւ հաւատքի համար աղաչենք Տիրոջը:

Որպէսզի Տէրն ուղղի այս քահանայի

1 ս. Գրիգոր Տաթեւացի, «Վասն է խորհրդոյ Եկեղեցւոյ», «Ամառան հատոր», էջ 148

2 Տե՛ս նոյն, էջ 148:

3 Իւղի, միւռոնի խորհրդաբանութեան եւ օծման հարցերի մասին աւելի մանրամասն ուսումնասիրութիւն կլինի յաջորդ հատորում՝ Դրոշմի արարողութեան մասին մեր ուսումնասիրութեան մէջ:

ռաց քահանայիս, որ առնէ զՄկրտութիւնս, զՏէր աղաչեսցուք:

Վասն սրբելոյ առաջիկայ ջրոյս եւ զալ գործակցութեանն Հոգւոյն Սրբոյ զՏէր աղաչեսցուք:

Վասն ընդունելոյ սմա զօրհնութիւնսն Յորդանանու զՏէր աղաչեսցուք:

Վասն լինելոյ սմա բժշկութիւն հոգւոց եւ մարմնոց զՏէր աղաչեսցուք:

Վասն վերածնելոց, որք ի սմա մկրտին, լինել որդիս Լուսոյ եւ ճշմարտութեան, զՏէր աղաչեսցուք:

Յիշելով զԱստուածածինն եւ զմիշտ Կոյսն Մարիամ եւ զՄկրտիչն Յովհաննէս եւ զամենայն սուրբս՝ եւ նոքօք զՏէր աղաչեսցուք:

Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք:

Ջանգիւն մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Ողորմեա՛ց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան Քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ»:

Եւ կացուցէ զնորընծայն մօտ յԱսպարեզն եւ ասէ զաղօթս զայս.

«Դո՛ւ, Տէր, զօրութեամբ Քով մեծաւ արարեր զծով եւ զցամաք եւ զամենայն, որ ի նոսա արարածք իցեն: Որոշեցեր եւ կացուցեր զջուրս ի վերայ քան զերկինս եւ ի բնակութիւնս լուսեղէն զօրաց, որք կան յանդադար փառաբանութեան Քում: Առաքեցեր զսուրբ առաքեալսն Քո՝ հրաման տալով քարոզել եւ մկրտել յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ զամենայն հեթանոսս: Այդ եւ սահմանեցեր անսուտ բանիւդ՝ ոչ

ձեռքի գործը, որ կատարում է Մկրտութիւնը, աղաչենք Տիրոջը:

Առաջիկայ ջուրը սրբելու եւ Սուրբ Հոգու գործակցութեան գալու համար աղաչենք Տիրոջը:

Որպէսզի սա ընդունի Յորդանանի օրհնութիւնները, աղաչենք Տիրոջը:

Որպէսզի սա հոգիների եւ մարմինների բժշկութիւն լինի, աղաչենք Տիրոջը:

Որպէսզի սրանով մկրտուող վերածնուածները լինեն Լոյսի եւ Ճշմարտութեան որդիներ, աղաչենք Տիրոջը:

Յիշելով Աստուածածնին եւ միշտ Կոյս Մարիամին եւ Յովհաննէս Մկրտչին եւ բոլոր սուրբերին՝ եւ նրանցով աղաչենք Տիրոջը:

Եւ դարձեալ մեր ճշմարիտ եւ սուրբ հաւատքի համար միաբան աղաչենք Տիրոջը:

Մեր անձերը եւ միմեանց ամենակալ Տէր Աստծուն յանձնենք:

Ողորմի՛ր մեզ, Տէր Աստուած մեր, ըստ Քո մեծ ողորմութեան. բոլորս միաբան ասենք»:

Եւ նորընծային կանգնեցնում է Սպարզեզի մօտ եւ ասում այս աղօթքը.

«Դու, Տէր, Քո մեծ զօրութեամբ արարեցիր ծովը, ցամաքը եւ նրանց միջի բոլոր արարածներին: Բաժանեցիր եւ հաստատեցիր ջրերը երկնքի վերեւում եւ լուսեղէն զօրքերի բնակավայրերում, որոնք անդադար փառաբանում են Քեզ: Առաքեցիր Քո սուրբ առաքեալներին՝ հրաման տալով քարոզել եւ մկրտել բոլոր հեթանոսներին Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունով: Այլեւ անսուտ խօսքովդ սահմանեցիր՝ ջրով եւ հոգով

ծնեցելոցն ջրով եւ Հոգւով ոչ մատնել յարքայութիւնն: Յորմէ բանէ զարհուրեալ ծառայս Քո, ցանկանալով մշտնջենաւոր կենացդ, եկն կամ ի Մկրտութիւն հոգեւոր ջրոյս այսորիկ: Աղաչեմք զՔեզ, Տէր, առաքի՛ր զՀոգին Սուրբ ի ջուրս յայս եւ սրբեա՛ զսա, որպէս սրբեցեր զՅորդանան՝ իջանելով ի նմա, Ամենասո՛ւրբդ ի մեղաց, Տէր մեր Յիսուս Քրիստոս, յօրինակ յայսմ Սպարզեզի Մկրտութեան, վերստին ծնընդեան ամենայն մարդկան: Եւ շնորհեա՛ սմա զջուրս զայս, յորում մկրտի այժմիկ, ի թողութիւն մեղաց, յընդունելութիւն Հոգւոյդ Սրբոյ, զորդեգրութիւնն Հօրդ երկնաւորի, ի ժառանգութիւն արքայութեանդ երկնից: Որպէսզի, սրբեալ ի մեղաց, ի հաճոյս կամաց Քոց կեցցէ ի յայսմ աշխարհիս եւ ի հանդերձեալսդ զանսպառ բարիսդ ընդ ամենայն սուրբս Քո ընկալցի եւ գոհութեամբ փառաւորեսցէ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Ապա ածէ ի սուրբ յիսդոյն յԱսպարզեն խաչանման՝ ասելով ալէլու:

չծնուածին չմատնել արքայութիւն: Այդ խօսքից զարհուրած Քո այս ծառան, ցանկանալով մշտնջենաւոր կեանքիդ [հաղորդակցութիւնը], կամովի եկաւ՝ այս հոգեւոր ջրով մկրտուելու: Աղաչում ենք Քեզ, Տէր, առաքի՛ր Սուրբ Հոգիդ այս ջրի վրայ եւ սրբի՛ր այն, ինչպէս սրբեցիր Յորդանանը՝ նրա մէջ իջնելով, Ամենասո՛ւրբդ մեղքերից, Տէր մեր Յիսուս Քրիստոս, որպէս օրինակ այս Աւազանի Մկրտութեան, բոլոր մարդկանց վերստին ծնընդեան [համար]: Եւ շնորհի՛ր սրան այս ջուրը, որով մկրտւում է, որպէս մեղքերի թողութիւն, Սուրբ Հոգուդ ընդունելութիւն, որդեգրութիւն[1] երկնաւոր Հօրդ, ժառանգութիւն երկնքի արքայութեանդ: Որպէսզի, սրբուելով մեղքերից, Քո կամքին հաճելի ապրի այս աշխարհում եւ քո հանդերձեալ [կեանքում] Քո բոլոր սուրբերի հետ սպասնայ անսպառ բարիքներդ եւ գոհութեամբ փառաւորի Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Ապա սուրբ խղից խաչանման թող լցնի Աւազանի մէջ՝ ասելով ալէլու:

Ջուրը[2], որպէս մաքրագործման եւ ազատութեան նիւթական նշանակ, բնաւորուած է մարդու ներաշխարհում... Հին Կտակարանում հանդիպում ենք ջրով լուացման արարողութիւնների, որոնք մարմնական մաքրա-

1 ըստ N 1001 (Երեւան) ձեռագրի
2 Այստեղ մենք չենք անդրադառնում ջրի բազմանշանակ խորհուրդներին, այլ միայն դիտարկում ենք Մկրտութեան ջրի աստուածաբանութիւնը:

գործման օրինակով յայտակերպում են Աստուծոյ զօրութեամբ հոգու ազատագրումը մեղքի աղտերից. «Եւ մատուցցես զԱհարոն եւ զորդիս նորա ի դուռն խորանին վկայութեան եւ լուացցես զնոսա ջրով» [Ելք Խ 12], «Եւ մատոյց Մովսէս զԱհարոն եւ զորդիս նորա եւ լուաց զնոսա ջրով» [Ղեւտ. Ը 6][1]: Ջրի հոգեւոր նշանակութիւնը, որպէս Աստուծոյ սրբարար ներգործութեան նիւթական միջոց, յատկապէս մեծ խորութեամբ է արտացոլուած Եզեկ. ԼԶ 25—28 տեղիքում[2], ուր մարդու վրայ սուրբ ջրի ցօղումը խորհրդանշում է մեղքերից ազատագրումը, հոգեւոր նորոգութիւնը, նոր սրտի հաստատումը: Սակայն պէտք չէ ջուրը դիտել որպէս սոսկ սրբազան նշան, որը գործում է անկախ մարդու կամքից, այլ ջրի սրբացնող զօրութիւնը գործում է միայն համապատասխան հոգեվիճակների առկայութեան դէպքում: Առհասարակ, սրբազան նշաններն իրենց մէջ յանգուցում են աստուածաբանական (ի վերուստ, շնորհական) եւ մարդաբանական (ի ներքուստ, գործնական) գործօններ: Այսինքն՝ սրբազան նշանն ունի իր սրբարար զօրութիւնը, որը կենդանագործում է միայն նախապատրաստուած հոգիներում: Եթէ աստուածային նշանը չարից ազատագրման համար է, ապա մարդը պէտք է կամովի հրաժարուի չարից խորը զղջումով եւ ապաշխարութեամբ, պէտք է դարձի գայ առ Աստուած:

Ներքին մարդուն ուղղուած հզօր կոչով նշանաւորուեց Յովհաննէս Մկրտչի ապաշխարութեան մկրտութիւնը, ուր ջրով մկրտուելը խորհրդանշում էր հրաժարումն այս աշխարհից, դարձն առ Աստուած, հոգու նախապատրաստութիւնը մօտեցող աստուածային Լոյսին: Յովհաննու մկրտութեան մէջ յատկապէս ընդգծուած է Աստուծոյ փրկութեան հինկտակարանեան սպասումը. «Ապաշխարեցէ՛ք, քանզի մերձեցել է երկնքի արքայութիւնը» [Մատթ. Գ 2]: Յովհաննէսն ինքը վկայում է, որ իր մկրտութիւնը (հետեւաբար նաեւ՝ հինկտակարանեան ջրի լուացումները) դեռեւս կատարեալ չէ: Ոչ մի նիւթական նշան դեռեւս կատարեալ չէ. աշխարհն առեւանգուած է չարի կողմից... Կատարեալ մկրտութիւնը լինելու է Քրիստոսով. «Նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին Սուրբ եւ ի հուր» [Մատթ. Գ 11]: Այսպիսով, Հին Կտակարանում ջրի խորհուրդը խարսխուած է երկու կարեւոր յանգոյցների վրայ՝ սրբագործում եւ ապաշխարութիւն:

Բանի մարդեղութեամբ ամբողջանում են բոլոր հինկտակարանեան կերպերը, եւ նիւթը ձեռք է բերում էապէս նոր հոգեւոր արժէքներ: Ջուրը դառնում է փրկութեան, վերստին ծննդեան, Աստուծոյ ժառանգութիւն մուտք գործելու սրբազան նշանակ: Ջուրն էապոխւում է նոր վիճակի, որն, ինչպէս

1 Տե՛ս նաեւ Ղեւտ. ԺԳ 6, ԺԴ 4—9, ԺԶ 4, 24:
2 Այս հատուածն ընթերցում է ջրի օրհնութեան սկզբում. «Եւ ցանեցից ի վերայ ձեր ջուր սուրբ, եւ սրբեսջիք յամենայն պղծութեանց ձերոց. եւ յամենայն կռոց ձերոց սրբեցից զձեզ: Եւ տաց ձեզ սիրտ նոր եւ ոգի նոր նորոգեցից ի ձեզ. եւ հանից զսիրտն քարեղէն ի մարմնոց ձերոց եւ տաց ձեզ սիրտ մարմնեղէն. եւ զՈգի Իմ տաց ձեզ: Եւ արարից, զի յարդարութիւնս Իմ գնասջիք եւ զիրաւունս Իմ պահիցէք եւ առնիցէք զնոսա. եւ բնակիցէք յերկրին, զոր ետու հարցն ձերոց. եւ եղիջիք Ինձ ի ժողովուրդ, եւ Ես եղէց ձեզ յԱստուած»

շուտով կտեսնենք. կայանում է Քրիստոսի մահով եւ յարութեամբ...

Սակայն մենք նորից վերադառնանք ծիսական իրականութեանը: Ջուրը *խաչանման*, այսինքն՝ Քրիստոսի փրկագործութեան կերպաւորումով, լցնում է Աւազանի մէջ. այսպիսի խորհրդական գործողութեամբ անմիջապէս ցոյց է տրւում քրիստոնէական Մկրտութեան ջրի նուիրական էութիւնը. այն այլեւս սոսկ Հին Կտակարանի մաքրագործման ջուրը չէ, այլ Քրիստոսի փրկութեանը տնկակցուելու սրբազան նշան է: Հինկտակարանեան ընթերցուածները ներածում են մեզ աւետարանական իրականութեան մէջ: Աւետարանի ընթերցուածի եւ աղօթքի մէջ սկզբունքային նշանակութիւն ունի տէրունական խօսքը. «Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոց եւ ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ» [Յովհ. Գ 3]: Ջրից եւ Հոգուց ծնուելը անխուսափելի է դառնում նրանց համար, ովքեր կամենում են ազատագրուել մեղքի բռնութիւններից եւ մտնել Աստուծոյ արքայութիւն, ովքեր կամենում են փրկուել:

Քրիստոնէական Մկրտութեան ջրին զուգակցուած է Սուրբ Հոգու զօրութիւնը, որը ջրի վրայ է հրաւիրւում քահանայի աղօթքով... Բան—Աստուծոյ մարմնաւորումով արարածն ի զօրու է դարձել կրելու Աստծուն, եւ Սուրբ Հոգին Իր անձնական գալստեամբ լցնում է Աստուծոյ արարչութիւնը, զօրացնում նիւթը եւ փրկութեան առիթ դարձնում: Քրիստոսի Մկրտութեան ժամանակ Սուրբ Հոգու աղաւնակերպ էջքը, Հայր Աստուծոյ ձայնը, այսինքն՝ Եռանձնեայ Աստուածութեան յայտնութիւնը եւ Նրա զօրութեան ընդխառնումը ջրերին, իրենց տնօրինական ամբողջութեանն են հասնում Հոգեգալուստով...

Ջրի օրհնութեան արարողութիւնն աւարտւում է ս. Միւռոնի *խաչանման* հեղումով Աւազանի մէջ (ս. Միւռոնն այստեղ խորհրդանշում է աննիւթական Աստուածութիւնը:): Խաչը մեր փրկութեան ճանապարհն է. միայն Քրիստոսի Խաչելութիւնից, Մահուանից եւ հրաշափառ Յարութիւնից յետոյ արարածը կարող է արժանանալ աստուածային իրականութեան ամբողջութեանը՝ Սուրբ Հոգու տնօրինական գալստեամբ: Սուրբ Հոգին հեղւում է ջրի մէջ, աստուածային անեղ լոյսն իջնում է եղական նիւթի մէջ, հոգեղինացնում եւ վերնիւթացնում այն՝ դարձնելով փրկութեան նշան եւ խորհուրդ: Այժմ ջուրը եւ Սուրբ Հոգին պիտի գործեն միեղէն զօրութեամբ...

Մկրտութեան ջրի աստուածաբանութիւնը խորապէս բացայայտուած է ս. Կիւրեղ Երուսաղէմացու «Ընծայութեան կոչման» երրորդ ճառում. «Մի՛ լոկ ի ջուր կամ ի դատարկ հայիցես յԱւազան անդր, այլ՝ ջրովն եւ շնորհօքն խառն ի Հոգին Սուրբ կենդանի»: «Արդ, յորժամ իջանիցես ի ջուր անդր, մի՛ իբրեւ ի թեթեւ ի դատարկ ջուր ինչ հայիցես, այլ ի զօրութենէ Ոգւոյ անտի փրկութեան սպասեսջիր»[1]:

Ըստ ս. Կիւրեղի՝ ջրով Մկրտութիւնն անհրաժեշտ է փրկութեան համար: Եւ միայն մարտիրոսները, որոնք մկրտւում էին սեփական արեամբ,

1 ս. Կիւրեղ Երուսաղէմացի. Ճառ Գ, «Կոչումն ընծայութեան», էջ 31, 32

կարող են փրկուել եւ ստանալ արքայութիւնը. «Եթէ ոք ոչ ընկալցի զՄկրտութիւն, փրկութիւն ո՛չ գոյ նորա, բայց միայն մարտիրոսաց, որք եւ առանց ջուրց առնուն զքաւութիւն»[1]: Տիրոջ խոցուած կողից հոսող արիւնը եւ ջուրը ս. Կիւրեղը դիտում է որպէս ջրի Մկրտութեան եւ մարտիրոսական Մկրտութեան խորհրդանիշներ[2]:

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Եւ հրամայէ մերկանալ զերախայական զգեստն եւ լինել կազմ ի լուացումն ադրդ:

Եւ քահանայն ասէ զաղօթս զայս ի վերայ.

«Որ կոչեցեր զծառայս Քո, Տէր, ի լուսաւորութիւն Մկրտութեան, աղաչեմք զՔեզ, Տէր, արա՛ զսա արժանի մեծի շնորհաց. մերկեա՛ ի սմանէ զհնութիւն մեղաց եւ նորոգեա՛ ի կեանս նորս եւ լցո՛ զօրութեամբ Հոգւոյդ Սրբոյ որդեգրութիւն կենաց Քրիստոսի Քո, Որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Եւ իջուցանէ յԱւազանն եւ խնդրեսցէ քահանայն զանունն:

Եւ արկեալ ի ադրդ ջրոյն ի վերայ զաղաթանն Գ անգամ՝ ասելով այսպէս.

«Այս անուն մկրտի յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ՝ գնեալ Արեամբն Քրիստոսի ի ծառայութենէ մեղաց, ընդունելով զազատութիւն որդեգրութեան Հօրդ երկնաւորի, լեալ ժառանգակից Քրիստոսի եւ տաճար Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Զայս Գ անգամ ասելով՝ Գ անգամ ընկղմեցուցանէ ջրովն, որ նշանակէ զերեքօրեայ թաղումն Քրիստոսի եւ կցորդութիւն: Եւ լուանալով զքաւանդակ մարմինն՝ ասելով այսպէս.

«Որք ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս զգեցեալ էք. ալէլուիա»:

Սաղմոս ԼԳ. «Բազում նեղութիւնք են արդարոց»:

«Որք ի Հայր լուսաւորեցարուք, Սուրբ Հոգին բերկրեսցի ձեօք. ալէլուիա»:

Տուն առ տուն սաղմոսեն սաղմոս նոյն եւ փառս տան նովին կցորդին: Եւ հանէ յԱւազանէն եւ տայ ցկնքահայրն: Եւ ընթեռնու Աւետարան ըստ Մատթէոսի [Մատթ. Գ 13—17]:

«Հայր մեր, որ յերկինս ես»:

մէջ, որ նշանակում է Քրիստոսի երեքօրեայ թաղումը եւ կցորդութիւնը [Նրա մահուանը]: Եւ լուանում է ողջ մարմինը՝ ասելով այսպէս.

«Ովքեր մկրտուեցիք Քրիստոսով, հագել էք Քրիստոս. ալէլուիա»:

Սաղմոս ԼԳ. «Բազում նեղութիւններ են արդարներին»:

«Ովքեր լուսաւորուեցիք Հայր [Աստուծով], թող Սուրբ Հոգին բերկրի ձեզանով. ալէլուիա»:

Տուն առ տուն սաղմոսում են նոյն սաղմոսը եւ փառք տալիս նոյն կցորդով: Եւ հանում է Աւազանից եւ տալիս կնքահօրը: Եւ ընթերցում է Աւետարան ըստ Մատթէոսի [Մատթ. Գ 13—17]:

«Հա՛յր մեր, որ երկնքում ես»:

Մենք մօտեցանք Մկրտութեան խորհուրդի կենտրոնական արարողութեանը, որն իրենից ներկայացնում է ջրով լուացում՝ որոշակի խօսքերի արտասանութեամբ [տե՛ս Եփես. Ե 26]: Սակայն մինչեւ բուն Մկրտութիւնը քահանան հրամայում է մերկանալ երախայական զգեստից ու պատրաստ լինել սուրբ լուացման եւ մկրտուողի վրայ ասում նախապատրաստող աղօթք: Այս փոքրիկ նախապատրաստութիւնն անմիջապէս Մկրտութիւնից առաջ ամփոփում է բոլոր նախորդ արարողութիւնները: Քիչ յետոյ ընծայեալը պէտք է արժանանայ Մկրտութեան լուսաւորութեանը՝ մեծ շնորհների, մեղքերից ազատագրման, նոր կեանքի: Նա իսկապէս պէտք է «ճշմարիտ սրտիւք, լրութեամբ հաւատոյ, լուացեալ զսիրտս ի խղճէ չարեաց» [տե՛ս Եբր. Ժ 22], մօտենայ սրբութեան ջրի Մկրտութեանը, որպէսզի արժանանայ շնորհական որդեգրութեանը եւ հոգու ազատագրութեանը...

Քահանան երեք անգամ ընկղմում է սուրբ ջրի մէջ, որն ուղեկցւում է աստուածային անունների արտասանութեամբ (epiclesis): Մկրտութեան բանաձեւին յաջորդող հակիրճ բացատրութիւնը՝ «որ նշանակում է Քրիստոսի երեքօրեայ թաղումը եւ կցորդութիւնը», ներածում է մեզ Մկրտութեան էութեան մէջ: Մկրտութիւնն իրական մուտք է Քրիստոսի մահուան մէջ եւ հետեւաբար՝ Նրա յարութեան: Մկրտութիւն նշանակում է մեռնել եւ յարութիւն առնել Քրիստոսի հետ. այն այլեւս սոսկ լուացում կամ մաքրագործում չէ, այլ մահ է, որին յաջորդում է սքանչելի յարութիւնը. «Թաղեալ է ընդ Նմին ի Մկրտութիւն, որով եւ ընդ Նմին յարեայք հաւատովք...» [Կող. Բ 12]: Սակայն ի՞նչ է նշանակում մեռնել եւ յարութիւն առնել Քրիստոսի հետ կամ, այլ կերպ ասած, տնկակից (հաղորդակից, կցորդ) լինել Նրա մա-

1 ս. Կիւրեղ Երուսաղէմացի. Ճառ Գ, «Կոչումն ընծայութեան», էջ 38
2 Տե՛ս նոյն, էջ 38:

հուանը եւ յարութեանը... «Մեղօքն հանդերձ մեռեալ իջանես դու ի ջուրն եւ ելանես անտի կենդանացեալ արդարութեամբ: Զի եթէ տնկակից եղեր դու նմանութեան մահու Փրկչին, եւ յարութեան Նորա արժանի լիցիս»[1]: Ուրեմն, պէտք է նախապէս մեռնել այս աշխարհի համար, կատարելապէս հրաժարում ունենալ մեղքից՝ ըստ գործերի (ճգնաւորական մահ). մկրտուողը պէտք է գործնականօրէն մեռած լինի այս աշխարհի համար, ապա մուտք գործի Քրիստոսի խորհրդական մահուան մէջ: Մկրտութիւնը մոգական նշան չէ, որ գործում է անկախ մկրտուողի կամքից, այլ խորհրդական ամբողջացումն է գործնական մահուան կամ շնորհական կնքումն է այս աշխարհի նկատմամբ ներանձնական մեռելութեան: Ահա այս է ճշմարիտ չափանիշը բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են մասն ունենալ այս աստուածային ոգեծնութեան շնորհների մէջ, Քրիստոսի յարութեան յաւիտենական ժառանգութեան մէջ. այս է ողջ նախապատրաստութեան իմաստը: Սա նշանակում է, որ Մկրտութեանը պէտք է մօտենալ՝ ծայրագոյն զգուշութեամբ քննելով սեփական անձն այս աշխարհի հրապոյրների եւ հաճոյքների նկատմամբ. արդեօ՞ք պատրաստ ենք վերցնել մեր խաչը, այսինքն՝ մեռնել մեղքերի համար եւ գնալ Քրիստոսի ետեւից, այսինքն՝ յարութիւն առնել Նրա հետ. արդեօ՞ք պատրաստ ենք մուտք գործել կատարելապէս նոր աշխարհ, որն օտար է, խորթ է, ծածուկ է այս աշխարհի նկատմամբ. «Արդ, զսրբազնաբար մկրտեալն նշանականն վարդապետութիւնն խորհրդագէտ առնէ երիւք ընկղմամբք եւ վերացմամբք ի ջուրն զաստուածպետականն երեք տիւ եւ գիշերն թաղումն կենսատուն Յիսուսի նմանել մահ, որպէս հպանելի է արանց յաստուածանմանութիւն, յորում, ըստ խորհրդականի եւ թաքուն աւանդութեան բանիս, ոչ ինչ եգիտ աշխարհիս իշխանն»[2]: Ուրեմն, Մկրտութեամբ մարդը վերջնականապէս մեռնում է հին—ընկած աշխարհի համար եւ ծնւում նոր—յարեալ կեանքի համար. Մկրտութիւնը վերստին ծնունդ է, ծնունդ, որն անտեսանելի է այս աշխարհի համար: Այն, ինչ մի անգամ կայացել է Քրիստոսի հետ տնօրինաբար՝ մեր փրկութեան համար, այժմ պատահում է մեզ հետ շնորհականօրէն՝ Սուրբ Հոգու գործակցութեամբ: Մկրտութիւնը շնորհական ծնունդ է, որով մենք **որդեգրւում ենք երկնաւոր Հօրը, դառնում Քրիստոսի ժառանգակից եւ Սուրբ Հոգու տաճար:**

Մկրտութեամբ, ճշմարտապէս տնկակցուելով Քրիստոսի յարութեանը՝ Նրա Առաջին Գալստեան տնօրինական առանցքին, մենք մուտք ենք գործում Քրիստոսի Երկրորդ Գալստեան մէջ. վախճանաբանական եզրափակումը՝ համընդհանուր յարութիւնը, ահեղ Դատաստանը, դժոխքը եւ արքայութիւնը, դառնում է քրիստոնէական կեանքի կենդանի գործօնը՝ բացառելով անպտուղ—արտաքին սպասումները: Քրիստոնեան՝ Քրիստոսի Յարութեամբ ծնուածը, ներքին իմացում ունի Երկրորդ Գալստեան մասին

1 ա. Փիւրեղ Երուսաղէմացի, Ճառ Գ, «Կոչումն ընծայութեան», էջ 39
2 ա. Դիոնեսիոս Արիսպագացի, «Յաղագս ի Մկրտութիւնն կատարմանց», Տեսութիւն, էջ 68—69

եւ արդէն իսկ նրա մէջ է: Ուրեմն, Մկրտութեամբ մենք մուտք ենք գործում մի նոր գոյավիճակի մէջ, որի նուիրական սպասումը վախճանաբանական եզրափակումն է, երբ պիտի գայ Քրիստոս Հօր փառքով...

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ Մկրտութիւնը հաւատքի խորհուրդ է (sacramentum fidei), որը հաստատուած եւ հիմնուած է Քրիստոսով. եւ մեր փրկագործութեան այս նուիրական գործը, որը բաղկացած է նիւթական տարրից (նիւթ) եւ սրբազան բառերից (տեսակ), ներկայացնում է մեր Մկրտութիւնը եռաստիճան կարգով. ա) Նրա նախապատճառը՝ Քրիստոսի Չարչարանքները, Մահը, Յարութիւնը (որը պատկանում է պատմական անցեալին, բայց կենդանի է այսօր), բ) նրա շնորհի գոյութիւնը (որը գոյութիւն ունի ներկայում, սակայն իր նախագոյութիւնն ունի Քրիստոսի մէջ), գ) նրա վախճանաբանական եզրափակումը (որը դեռ պիտի լինի եւ կատարելապէս համապատասխանեցնի մեզ Քրիստոսի կերպարին):

Մկրտութեան միւս կարեւոր նիստը սրբագործումն է. ինչպէս ջուրը մաքրում է մարմինը, այնպէս էլ Մկրտութիւնը մաքրում է հոգին չարի խղճմտանքից [տե՛ս Եբր. Դ 22]: Մասնակից լինելով Քրիստոսի մահուանը, սրբագործուելով Քրիստոսի կողից բխող սրբազան ջրերով՝ անձն ընկերակից է դառնում Քրիստոսի նոր կեանքին, դառնում նոր արարած, վերստին ծնւում՝ ժառանգակից դառնալով Նրա Յարութեան պտուղներին, որն իր կատարելութեանը պիտի հասնի վախճանաբանական ապագայում, երբ պիտի վերադառնայ Տէրը: Մկրտուողից պահանջւում է հոգեւոր վերափոխում: Մկրտութիւնը նրան տալիս է կատարելապէս նոր գոյավիճակ, եւ նա պէտք է իր կեանքը ներդաշնակի Քրիստոսի Յարութեանը: Հին Եկեղեցին շատ լուրջ էր վերաբերւում այս խորհուրդին, «քանզի անհնար է միանգամ մկրտելոցն, որ ճաշակեցին յերկնաւոր պարգեւացն եւ հաղորդք եղեն Հոգւոյն Սրբոյ եւ զգեղեցիկ բանին Աստուծոյ ճաշակսն ճաշակեցին եւ զզօրութիւնս հանդերձելոյ աշխարհին եւ կործանեսցին, միւսանգամ նորոգել յապաշխարութիւն...» [Եբր. Զ 4—6]:

Այսօր մեզ զարմացնում է սուրբերի այն համաստեղութիւնը, որ կար Հին Եկեղեցում. սրբութեան եւ հոգեւոր շնորհների առատութեան պատճառը նախ եւ առաջ նրանում էր, որ այն ժամանակ ամէն մէկը չէր կարող մօտենալ Մկրտութեան սրբութեանը: Միայն արժանաւորներին էին թոյլ տալիս մերձենալ **վերստին ծննդեան** խորհուրդին, որն, ըստ ս. Բարսեղ Կեսարացու, *գերելոց փրկանք է, պարտաւորութեանց թողութիւն, մահ մեղաց, դարձեալ ծնունդ ոգւոյ, զգեստ լուսաւոր, կնիք անձեռակերտելի, կառք առ ի յերկինս, թագաւորական գրաւական, որդեգրութեան շնորհ*[1]:

1 Տե՛ս ս. Բարսեղ Կեսարացի, «Խաչք յորդորականք ի Մկրտութիւն», «Գիրք Պահոց», ՄՄ, ձեռ. N 822, էջ 245բ:

Եւ այսպէս ասէ զաղօթս զայս.

«Որ լուսաւորեցեր զարարածս Քո, Քրիստոս Աստուած, ծագելով զլոյս Աստուածութեան Քո ի ծառայս Քո: Ազատեցեր զսա եւ սրբեցեր եւ արդարացուցեր եւ եռուր զորդեգրութիւն: Շնորհեա եւ զկենաց հաւատարութիւն, պարգեւեա՛ զհանապազորդ զանապականութիւն՝ խառնելով յարդարս Քո, ի թիւ սիրելեաց Քոց, ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ Որում Քեզ Հօր եւ Հոգւոյդ Սրբոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն: Աստուծոյ երկրպագեսցուք:

Աստուած, որ մեծդ ես եւ մշանջենաւոր եւ ամենայն գաղտնեաց գիտակ, որ սուրբ ես եւ ի սուրբս բնակեալ, փրկիչ ամենայն մարդկան. որ շնորհես զգիտութիւն Քո՝ հաւատացելոց Քոց եւ եռուր իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել ի ձեռն վերստին ծննդեանն ջրոյ եւ Հոգւոյ: Որով եւ *զայս անուն* նորացուցեր մաքրութեամբ Աւազանի Քո: Սուրբ արա զսա ճշմարտութեամբ Քո, լցո՛ շնորհօք Հոգւոյդ Սրբոյ, զի եղիցի տաճար բնակութեան անուանդ Քո սրբոյ եւ կարասցէ գնալ յամենայն ճանապարհս արդարութեան եւ կալ համարձակութեամբ եւ աչալրջութեամբ առաջի սահմանի Բեմի Միածնի Քո՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Որում վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Ապա ասում է այս աղօթքը.

«Որ լուսաւորեցիր Քո արարածներին, Քրիստոս Աստուած՝ Քո Աստուածութեան լոյսը ծագեցնելով Քո ծառայի վրայ, ազատեցիր սրան, սրբեցիր, արդարացրիր եւ շնորհեցիր որդեգրութիւնը, շնորհի՛ր նաեւ կեանքի հաստատութիւն, պարգեւի՛ր հանապազորդ անապականութիւնը՝ միատրելով Քո արդարներին [եւ] Քո սիրելիների շարքերին՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով, Որի հետ Քեզ՝ Հօրդ եւ Սուրբ Հոգուդ, վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութի՛ւն ամենքին: Երկրպագենք Աստծուն:

Աստուած, որ մեծ ես եւ մշանջենաւոր եւ բոլոր գաղտնիքներին գիտակ. որ սուրբ ես եւ բնակւում ես սուրբերի մէջ, փրկիչ բոլոր մարդկանց, որ Քո գիտութիւնը շնորհում ես Քո հաւատացեալներին եւ իշխանութիւն տուեցիր՝ Աստուծոյ որդիներ լինելու Հոգու եւ ջրի վերստին ծննդեան միջոցով, որով եւ *այս անունի*ն նորացրիր Քո Աւազանի մաքրութեամբ: Սուրբ արա սրան Քո ճշմարտութեամբ, լցրո՛ Սուրբ Հոգուդ շնորհներով, որպէսզի Քո սուրբ անուան բնակութեան տաճար լինի եւ կարողանայ գնալ արդարութեան բոլոր ճանապարհներով եւ համարձակութեամբ ու աչալրջութեամբ կանգնել Քո Միածնի՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Բեմի առաջ, Որին վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Մարդն ազատագրուած է, լուսաւորուած է Քրիստոսի լոյսով. նա արժանացել է երկնային որդեգրութեան: Փրկագործուելով մարմնաւորուած Բան—Աստուծոյ յարութեամբ՝ արարածը գոյեղէն—անբաժանելի մերձաւորութիւն է ձեռք բերել Աստուծոյ հետ: Մարդը դարձել է Աստուծոյ բնակութեան տաճար, նա պէտք է ամենայն զգուշութեամբ եւ սթափութեամբ վարի իր առաջիկայ կեանքը, որպէսզի կարողանայ ընթանալ արդարութեան շաւիղներով եւ համարձակութեամբ կանգնել Տիրոջ ահեղ Դատաստանի առջեւ... Սկսւում է էապէս նոր կեանք, մեծ պայքար՝ ընդդիմամարտ ուժերի դէմ, դժուարին վերընթաց՝ նեղ եւ անձուկ ճանապարհով: Այս ամենի համար մարդուն պէտք է աստուածային սպառազինութիւն, շնորհական հաստատութիւն, Սուրբ Հոգու կնիքներ, որոնք տրւում են անմիջապէս յաջորդող Դրոշմի արարողութեամբ:

(շարունակելի)

Աղբիւրներ

ա. Գրիգոր Տաթեւացի. «Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր: Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», Կ. Պոլիս, 1741

ա. Գրիգոր Տաթեւացի. «Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր: Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», Կ. Պոլիս, 1740

ա. Գրիգոր Տաթեւացի. «Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», Կ. Պոլիս, 1729

«Սրբոյն Գրիգորի հայոց Լուսաւորչի վարդապետութեան ճառք յաճախապատումք եւ լուսաւորք», Կ. Պոլիս, 1824

«Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմասացութիւնք», Վենետիկ, 1899

ա. Բարսեղ Կեսարացի. «Գիրք Պահոց», պատրաստում է տպագրութեան «Գանձասար» հանդէսի կողմից:

«Երանելւոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի կոչումն ընծայութեան», Վենետիկ, 1832, էջ 74—75

«Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք», Գիրք Պահոց, Վենետիկ, 1833

հ. Սահակ Ճեմճեմեան. «Մկրտութեան արարողութիւնը մաշտոցներու մէջ», Բազմավէպ, Վենետիկ, 1971, հ. 1—2, 1972, հ. 2—3

Մեսրոպ քահանայ Արամեան, «Երեք Տիեզերական Ժողովների դաւանութիւնը», «Գանձասար», հ. Ա, 1992; «Հայ Եկեղեցու քրիստոնեաբանական մտքի ուրուագծեր (Դ—Ը դդ.)», հ. Բ, 1992

Արշակ Տէր—Միքելեան, «Հայաստանեաց Սուրբ Եկեղեցու Քրիստոնէականը», Տփխիս, 1900

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, «Տեղիք Աստուածաբանութեան», Երուսաղէմ, 1981

«Գիրք՝ Մեծ Մաշտոց կոչեցեալ», Կ. Պոլիս, 1807

«Մաշտոց, յորում առանդին տրբազան արարողութիւնք ազգիս ըստ սահմանադրութեան սուրբ Եկեղեցւոյս Հայոց», Վաղարշապատ, 1905

Նոյն վերտառութեամբ, Երուսաղէմ, 1977

Նոյն վերտառութեամբ, Անթիլիաս, 1988

ս. Դիոնեսիոս Արիսպագացի, "The Armenian Version of the works attributed to Dionysius the Areopagite", edited by Robert W. Thomson, Lovanii, 1987

Gabriele Winkler, "The History of the Syriac Prebaptismal Anointing in the Light of the Earliest Armenian Sources", Orientalia Christiana Analecta 205, Symposium Syriacum 1976, Rome, 1978

J. G. Davies, "The Early Christian Church", Michigan, 1987

J. G. Davies, "The New Westminster Dictionary of Liturgy and Worship", Philadelphia, 1986

Sacramentum Mundi, "Encyclopedia of Theology", New York, 1968

T. M. Finn, "The Liturgy of Baptism in the Baptismal Instructions of St. John Chrysostom", Washington, 1967

Протопресвитер А. Шмеман, "Водою и Духом о Таинстве Крещения", издание Московской Патриархии, 1986

Г. В. Флоровский, "Восточные Отцы IV века", Париж, 1931

ԳԱՆՁԱՍԱՐ

Յակոբ Քեռսէեան

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ ԵՒ ՏԱՂԵՐՈՒՄ

ՄՈՒՏՔ

Հայագիտութեան մէջ այս կամ այն առիթով խօսուել է հոգեւոր բանաստեղծութիւններում (շարականներ, տաղեր) պատմական իրադարձութիւնների՝ տուեալ ժամանակաշրջանում արծարծուած գաղափարական տարընթաց հոսանքների վերհանման կարեւորութեան մասին, փորձ է արուել դրանց հիման վրայ պարզել ժամանակաշրջանի՝ մինչ այդ չուսումնասիրուած ինչ—ինչ դէպքեր, իրադարձութիւններ[1]: Սակայն ցարդ այդ խնդիրը յատուկ ուսումնասիրութեան չի ենթարկուել: Անդրադառնալով այդ խնդրին՝ Ասատուր Մնացականեանն ամենայն իրաւամբ գրում է. «Առհասարակ պիտի նկատել, որ այս կարեւոր հարցը մինչեւ օրս մասնագէտների կողմից լուրջ քննութեան առարկայ չի դարձել: Նրանցից իւրաքանչիւրն իրեն հետաքրքրող առանձին փաստերի կապակցութեամբ է միայն, այն էլ երբեմն, փորձել մօտենալ նրան, մինչդեռ մեր մատենագրութեան հարուստ ու բազմակողմանի նիւթերում նման վիճակում լուռ են մնում մեր անցեալի իրականութեան համապատասխան արձագանքները»[2]:

Այդ արձագանքների վերհանման տեսակէտից խիստ կարեւոր է Հ. Գաբրիէլ Աւետիքեանի նշանաւոր «Բացատրութիւն շարականաց» աշխատութիւնը[3]: Սակայն խնդրոյ առարկայ նիւթի պարզաբանումն այստեղ իրականացւում է բաւական միակողմանի: Աշխատութեան մէջ տրւում է շարականների բառիմաստային վերլուծումը միայն՝ նրանց բովանդակութեան բարոյաբանական վերապատումով:

Նիւթի հետազօտման հայեցակէտից շօշափելի ներդրում է կատարել Մ. Աբեղեանը: Իր «Հայոց հին գրականութեան պատմութեան» մէջ նա

1 Տե՛ս Մ. Աբեղեան, Երկեր, հտ. Գ, Երեւան, 1968, էջ 549—553: Ա. Մնացականեան, «Ստեփանոս Սիւնեցու նորայայտ տաղերը», «Բանբեր Մատենադարանի», N 11, Երեւան, 1973, էջ 284:

2 Ա. Մնացականեան, նշուած աշխ., էջ 284, ծանօթ. 24

3 հ. Գաբրիէլ Աւետիքեան, «Բացատրութիւն շարականաց, որք պաշտին ի հաստատեալս ժամանակագրութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ», Վենետիկ, 1814

ընդհանուր անդրադարձով խօսում է շարականների վրայ դաւանաբանութեան եւ մեկնաբանական գրականութեան ազդեցութեան մասին[1]: Սակայն հասկանալի պատճառներով այստեղ խօսք չկայ աստուածաբանական մտքի մասնաւոր դրսեւորումների մասին:

Շարականների վերաբերեալ յատուկ ուսումնասիրութիւն է գրել Գ. Յակոբեանը: Սակայն իր մենագրական ծաւալուն աշխատութեան մէջ թեղինակն ընդամէնը մէկ էջ է նուիրում այս խնդրին[2]: Այսպիսով, առկայ թերին գոնէ մասամբ վերացնելու անհրաժեշտութեամբ է պայմանաւորուած ներկայ հետազօտութիւնը: Սակայն մեր աշխատութեան նպատակը ոչ թէ բոլոր կարգի իրողութիւնների, այլ, մասնաւորաբար, աստուածաբանական մտքի վերհանումն է[3]: Այս տեսակէտից այն ունի իր որոշակի խնդիրները եւ սահմանները, որոնք կպարզուեն եւ կյստակուեն շարադրանքի ընթացքում:

* * *

Հայ միջնադարի հոգեւոր մշակոյթի մէջ առաւել մեծ դեր էր վերապահուած բանաստեղծութեանը (շարականներ, տաղեր, գանձեր): Այն իրականացնում էր եւ ցայսօր իրականացնում է պաշտամունքային գործառնութեան զգալի մասը, օժտուած է ոչ միայն հաղորդող, այլեւ՝ հաղորդակցումն ապահովող գործառնութեամբ: Առաջին պարագայում հոգեւոր բանաստեղծութիւնը ներկայանում է որպէս գրական—գեղարուեստական, իսկ երկրորդում՝ որպէս ծիսական միաւոր: Այս երկու գործառնութիւններում, անշուշտ, առաւել կարեւոր է ծիսականը: Եթէ գրական—գեղարուեստական ընկալումը բանաստեղծութեան ստորին, ապա ծիսականը վերին մակարդակն է մատնանիշ անում: Բանաստեղծութեան գրական—գեղարուեստական արժանիքների վերհանումը կատարում է գրականագիտութիւնը, իսկ նրա ծիսական կողմի քննութիւնը՝ աստուածաբանութիւնը: Վերջինիս է վերապահուած բանաստեղծութեան հոգեւոր բովանդակութեան վերլուծումը, քանզի հէնց դրա միջոցով է պարզաբանւում Աստուծոյ եւ մարդու հաղորդակցման վերբանական առանձնայատկութիւնը, որն իր էութեամբ յայտնութենական է: Աստուածաբանական վերլուծումը երեւան է հանում բառաշերտի խորքում անթեղուած իմաստային բովանդակութիւնը, որն ընդամէնը յայտնութեան շուքն է: Այսպիսով, մեր նպատակն է վերհանել այդ յայտնութենական շուքի ստուերագծերը, տեսական եւ գաղափարական քննութեան ենթարկել նրա բոլոր հիմնական մանրամասները:

Հոգեւոր բանաստեղծութեան աստուածաբանական քննութիւնն իրագործւում է բանաստեղծութեան մէջ գեղարուեստական զանազան հնարներով դրսեւորուող աստուածաբանական բոլոր գլխաւոր գիտակարգերի (Արարչաբանութիւն, Քրիստոսաբանութիւն, Երրորդաբանութիւն եւ այլն) տեսական մանրակրկիտ արձանագրումով եւ գնահատումով:

1 Տե՛ս Մ. Աբեղեան, նշուած աշխ., էջ 549—553:

2 Տե՛ս Գ. Ա. Յակոբեան, «Շարականների ժանրը հայ միջնադարեան գրականութեան մէջ (V—XV դդ.)», Երեւան, 1980, էջ 231—232:

3 Խնդրոյ առարկայ հարցին է նուիրուած Գ. վրդ. Սարգիսեանի (այժմ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) «Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը ըստ շարականներու» անտիպ աշխատութիւնը (Անթիլիաս, 1953—1955 թթ.), որը, ցաւօք, չենք տեսել (տեղեկութիւնն ըստ Թ. Տասնապետեանի. Գ. Նարեկացի, «Ներբող Աստուածածնին», «Հանդէս ամսօրեայ», 1989, էջ 118): Թ. Տասնապետեանը լուրջ աշխատանք է կատարել այս բնագաւառում. յիշատակուած հետազօտութեան մէջ («Հանդէս ամսօրեայ», 1988, էջ 60—80, 1989, էջ 109—145) հեղինակը մանրակրկիտ վերլուծութեամբ վեր է հանում ս. Գրիգոր Նարեկացու ներբողի աստուածաբանական բովանդակութիւնը:

Ա. ԱՍՏՈՒԱԾ, ԱՍՏՈՒԾՈՅ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Աստուծոյ՝ որպէս բացարձակ Ոգու ըմբռնումը մարդ արարածի մէջ սաղմնաւորուել, հաստատուել ու գոյատեւել է անյիշելի ժամանակներից: Անտարակոյս, այդ ըմբռնումը գոյացել է Ոգու հետ կենդանի հաղորդակցման հետեւանքով: Աստուած զանազան եղանակներով ու կերպերով հաղորդակցուել եւ հաղորդակցւում է մարդու հետ՝ դրսեւորելով արարածների համար մատչելի այս կամ այն յատկութիւնը: Սակայն յատկութիւնների դրսեւորումը տակաւին չի նշանակում Աստուծոյ էութեան դրսեւորում: Աստուծոյ էութիւնը սկզբունքօրէն անտեսանելի, անճանաչելի է: Այս մասին են վկայում Ե՛ւ Սուրբ Գիրքը, Ե՛ւ Եկեղեցու վարդապետները: Յովհաննէս եւ Պօղոս առաքեալները դրա վերաբերեալ պարզիպարզոյ արձանագրում են. «ԶԱստուած ոչ ոք ետես երբէք» [Յովհ. Ա 18], «ԶԱստուած ուրուք երբէք չիք տեսեալ» [Ա Յովհ. Դ 12], «Որ միայն ունի զանմահութիւն՝ բնակեալ ի լոյս անմատոյց. զոր ոչ ոք ետես ի մարդկանէ եւ ոչ տեսանել կարող է» [Ա Տիմոթ. Զ 16]: Այս խօսքերի հաստատումն են ս. Գրիգոր Լուսաւորչի, ս. Յովհան Ոսկեբերանի, ս. Դիոնեսիոս Արիսպագացու, ս. Եղիշէի եւ Սարգիս Շնորհալու հետեւեալ մտքերը. «Ո՛չ եթէ զանհաս բնութենէն կարիցէ ոք ճառել. եւ որպէս էն զայն կարիցէ ոք պատմել. զի անհաս եւ անբաւ եւ անբաւանդակ եւ անքնին, անմատոյց անիմաց է յամենայն արարածոց» [ս. Գրիգոր Լուսաւորիչ][1], «Բազումք գիտեմք զԱստուած, այլ զբնութիւն Նորա, թէ որպէս կամ զինչ իցէ, ոչ ոք գիտէ, բայց միայն՝ որ յէութենէ Նորա ծնեալ է» [ս. Յովհան Ոսկեբերան], «Նա չի կարող ընկալուել ո՛չ զգացումներով, ո՛չ երեւակայութեամբ, ո՛չ կարծիքով, ո՛չ մտքով, ո՛չ ճանաչողութեամբ» [ս. Դիոնեսիոս Արիսպագացի][2], «Գոյ Աստուած, հաւատարիմ է ինձ, զորպիսութիւն Նորա ոչ գիտեմ. ես որ երեւին՝ զայս եւեթ գիտեմ. զաներեւոյթսն Աստուծոյ՝ Աստուած միայն գիտէ» [ս. Եղիշէ][3], «Որքան ինչ միանգամ ոք ասէ զՆմանէ, զո՛չէն սահմանէ ի վերայ Նորա» [Սարգիս Շնորհալի][4]: Այսպիսով, Ս. Գրքից սկիզբ առնող Աստուծոյ անճանաչելիութեան գաղափարը վաւերացւում է ինչպէս բիւզանդական, այնպէս էլ Հայ Առաքելական Եկեղեցու աստուածաբանութեան մէջ: Այն սերտօրէն աղերսւում է արեւելաքրիստոնէական աստուածաբանութեանը յատուկ անճառելի (ապոֆատիկ) աստուածամտութեան հանրայայտ սկզբունքի հետ[1]: Ըստ անճառելի աստուածաբանութեան՝ Աստուածութեան հետ հաղորդակցման միակ բանական եւ ընդունելի չափանիշն Աստուծոյ անմատչելիութեան, անճանաչելիութեան, «անճառելի» լինելու գիտակցումն է: Աստծուն տրուած միւս բնորոշումները չեն կարող Աստուածութեան յատկորոշումը համարուել, առաւել եւս՝ եթէ դրանք ճառելի բովանդակութիւն ունեն: Աստուածաբանական այս կանխադրոյթի վրայ են խարսխուած շարականների եւ տաղերի շատ հատուածներ: Ահա՛ դրանցից մի քանիսը.

Որ անիմանալիդ ես յէութեան...[2]

Զանճառ էութիւն եւ զմի Աստուածութիւն
Բարեբանեմք...[3]

Զանիմանալին ի յէութեան երկրաւորքս
Ընդ երկնայինսն միաբանութեամբ
Բարձր արարէք...[4]

Անուն անեղին էին Աստուած է,
է միշտ յէութեան յանհասութեան նոյն...[5]

Գանձ անապական, ծածկեալ մեծութիւն,
Ահաւոր, անիմանալի խորհուրդ...[6]

Սակայն եթէ Աստուծոյ բացարձակ, ինքնակայ էութիւնն անմատչելի է ադամորդուն, ապա այդ էութեան բազմակերպ դրսեւորումներն այս կամ այն չափով մատչելի են: Աստուծոյ՝ ադամորդու նկատմամբ ունեցած անսահման ողորմածութեամբ են պայմանաւորուած այդ կենսաճառագ դրսեւորումները, որոնք աստուածաբանական (եւ ոչ միայն աստուածաբանական) գրականութեան մէջ իրենց կայուն եւ անփոփոխ անունն ունեն՝ արարչագործութիւն: Մարդն Աստուծոյ հետ հաղորդակցւում է Նրա արարչութեան, նիւթական իրականութեան միջոցով: Արարչութիւնն Աստուծոյ

---

1 Տե՛ս «Ագաթանգեղեայ պատմութիւն հայոց» (=Ագաթանգեղոս), աշխատ. Գ. Տէր—Մկրտչեան, Ստ. Կանտեանց, Տփխիս, 1909, էջ 131: «Հրահանգ Քրիստոնէական հաւատոյ ըստ ուղղափառ դաւանութեան Եկեղեցւոյ Հայաստանեայց, աշխատութեամբ Մսերայ վարժապետի Գրիգորեան Զմիւռնացւոյ» (=Հրահանգ), Մոսկուա, 1850, էջ 120—121

2 Տե՛ս Հրահանգ, էջ 121, В. Лосский, "Предание отцов и схоластика", "Богословские труды" (=БТ), сб. 18, М., 1978, с. 121.

3 «Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք», Վենետիկ, 1859, էջ 311

4 Տե՛ս Հրահանգ, էջ 121:

1 Անճառելիութեան համակողմանի քննութիւնը տե՛ս В. Лосский, "Апофаза и троическое богословие", БТ, сб. 14, М., 1975, с. 95-104:

2 Տե՛ս Հրահանգ, էջ 121 (այս եւ յետագայ ընդգծումները մերն են՝ Ֆ. Ք.):

3 [Կանոն Երկրորդ Փփրակէին Աղուհացից], «Շարական հոգեւոր երգոց տուրբ եւ ուղղափառ Եկեղեցւոյս Հայաստանեայց յօրինեալ ի սրբոց Թարգմանչացն մերոց...» (=Շարական), Ս. Էջմիածին, 1861, էջ 137

4 Շարական, էջ 119, հմմտ. [Կանոն Աշխարհամատրան Փփրակէին], էջ 341:

5 Գրիգոր Նարեկացի, «Տաղեր եւ գանձեր», աշխատ. Արմինէ Քեռշկերեանի, Երեւան, 1981, էջ 91, հմմտ. էջ 131:

6 [Կանոն Երկրորդ Փփրակէին Աղուհացից], Շարական, էջ 131

փառքի ստուերն է. այն ընդհանուր պատկերացում է տալիս Արարչի մասին՝ ուսուցանելով առ Աստուած տանող ուղիները: Այս մասին ունենք Սուրբ Գրքի հեղինակաւոր վկայութիւնները. «Ի մեծութենէ եւ ի գեղեցկութենէ արարածոցն՝ ըստ նմին համեմատութեան եւ Արարչագործն նոցա երեւի» [Իմաստ. ԺԳ 5], «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ, եւ զարարածս ձեռաց Նորա պատմէ հաստատութիւն» [Սաղմ. ԺԸ 2], «Աներեւոյթք Նորա ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանին, այսինքն՝ մշտնջենաւորութիւն եւ զօրութիւն եւ Աստուածութիւն Նորա» [Հռովմ. Ա 20]: Այս միտքն իր արձագանքն է գտնում արեւելաքրիստոնէական Եկեղեցու աստուածաբանութեան մէջ: Այսպէս, ս. Աթանաս Ալեքսանդրացին Բանի մարմնաւորման մասին իր աշխատութեան մէջ արարչագործութիւնը նկատում է որպէս «տիեզերքում յայտնուած աստուածաբանութեան սրբազան դպրոց»[1]: Ս. Գրիգոր Լուսաւորիչը «Յաճախապատումի» մէջ արձանագրում է. «Կարգեաց Աստուած զաշխարհս որպէս դպրոց, զի ուսցին արարածք զինամս Արարչին յառնել եւ ի կազմել»[2]: Համաձայն ս. Եփրեմ Ասորու՝ նոյնիսկ հեթանոսները (թէկուզեւ՝ սակաւաթիւ) կարողացան արարչութեան շնորհիւ ճանաչել Արարչին: Վարդան Արեւելցին իր Արարածոց խմբագիր մեկնութեան մէջ վկայաբերում է ս. Եփրեմի այդ միտքը. «Սակաւք ի հեթանոսաց լուսաւորեցան եւ ծանեան արարածովքս զԱրարիչն»[3]: Այս մասին, սակայն աւելի մանրամասն, խօսում է Ներսէս Լամբրոնացին: Իր՝ Սողոմոնի Իմաստութեան մեկնութեան մէջ նա համակողմանի բացատրութիւնն է տալիս այս իրողութեան. «Մե՛ծ է եւ ընդարձակ երկին. լա՛յն եւ անեզր է ծով, սփի՛ռ է երկիր, գեղեցի՛կ է արեգակն. ցանկալի՛ է մարդ. սիրահարո՛ւստ է տեսակ մարդոյ եւ ձգող... վայելո՛ւչ է ոսկի... Տե՛ս ի սոսա զԱրարիչն՝ համեմատեալ զԱնեղն ընդ եղականքս, զԱրարողն՝ ընդ արարեալքս, զԿառավարն՝ ընդ բերեալքս, զԱղբիւրն իմաստից՝ ընդ բանատրքս, զԲղխողն սիրոյ՝ ընդ սիրահարուստքս եւ արա՛ սոքօք առ Նորա գեղն եւ զօրութիւնն եւ քաղցրութիւնն՝ ճանապարհ, եւ լե՛ր երկնային՝ երկնային խոկմամբ»[4]: Այս գաղափարի գեղարուեստական անդրադարձն են շարականների եւ տաղերի հետեւեալ հատուածները.

Ամենայն զարթք Տեառն օրհնեն զՆա անդադար.

1 Migne, PG, t. 25, col. 117B. յոլոմն՝ ըստ С. С. Аверинцев, "Поэтика Раннебизантийской литературы", М., 1977, с. 161

2 «Սրբոյ հօրն մերոյ, երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք լուսաւորք», Ս. Էջմիածին, 1894, էջ 68

3 Տե՛ս Հրահանգ, էջ 119:

4 Նոյն տեղում

ԶԱնսկիզբն Աստուած, զանյաղթելի զթագաւորն օրհնեցէք...[1]

Երկինք՝ փառացն Աստուծոյ լինին պատմարան...[2]

Յարարածոցդս ծանուցաւ

Ստեղծող սոցուն, թէ է՛ անքաւ[3]:

Աստուած բացարձակ իրողութիւն է, որին չի կարելի որոշակի կարգոյթի մէջ զետեղել, քանզի Նա բոլոր կարգոյթների նախասկիզբն է եւ դրանք ներառնում է Իր մէջ: Այս է պատճառը, որ Մովսէս նախամարգարէին հաղորդուած Աստուծոյ միակ ճշմարիտ անունը է է [Ելք Գ 15], որն Աստուծոյ բացարձակ առհաւատչեան է: Այս բացարձակութեան գիտակցութիւնը կայ «Յաճախապատումի»՝ «Այլ որպէս էր եւ է եւ կայ յաւիտեան, Ինքն միայն գիտէ» բառերի մէջ: Եթէ այս բառերը ցոյց են տալիս աստուածճանաչողութեան անկարելիութիւնը (անճառելիութիւն), ապա դրանց հետեւող «սիրովն Իւրով յայտնեցաւ արարածոց եւ խնամովք ծանուցեալ եղեւ» բառերը յայտանշում են աստուածաբանական մէկ այլ սկզբունք, որ յայտնի է ճառելիութիւն (կատաֆատիզմ)[4] եզրով: Եթէ առաջին սկզբունքն իրականացուում է Աստուածութեանը տրուած անճառելի (ապոֆատիկ) («անեղծական, անստեղծական, անտարրական»), ապա երկրորդը՝ ճառելի (կատաֆատիկ) որակումներով[5]: Ճառելի աստուածաբանութեան համաձայն՝ Աստուծոյ արարչական զօրութեան դրսեւորումը հնարաւորութիւն է տալիս Նրան բնորոշել ամենաբազմազան որակումներով: Այդ որակումները ոչ այլ ինչ են, քան մարդուն մատչելի աստուածային դրսեւորումների յայտնութենական անուանումները: Դրանք Աստուծոյ այս կամ այն յատկութեան՝ բառային տարազով ներկայացող, պայմանական նշանակներն են, որոնք աստուածաբանութեան մէջ յայտնի են «Աստուծոյ ստորոգելիներ» անուանումով: Ի տարբերութիւն Աստուծոյ անդրանցական (տրանսցենդենտալ) էութիւնը մատնացուցող «անճառելի», «անճանաչելի» որակումների,

1 [Կանոն Եօթներորդի Աւուրն], Շարական, էջ 48

2 Տե՛ս Հրահանգ, էջ 135:

3 Նոյն տեղում, էջ 119

4 Տե՛ս В. Лосский, "Догматическое богословие", БТ, сб. 8, М., 1972, с. 133-134, сб. 18, М., 1978, с. 189:
Այս տեսակէտից ուշագրաւ է Դիդիմոս Կոյրի (313—393 թթ.) հետեւեալ միտքը. «Նոյնիսկ սերովբէների համար անտեսանելի, անմատչելի [Աստուածութիւնը — Տ. Ք.] չի կարող պարունակուել որեւէ մտքի մէջ, որեւէ տեղում... անշօշափելի, անտարանջատելի, որ չունի ո՛չ խորք, ո՛չ մեծութիւն, ո՛չ լայնութիւն, ո՛չ ձեւ, որ իր պայծառութեամբ գերազանցում է երկնային բոլոր լոյսերը... որն իր հոգեւոր բնութեան պատճառով գերազանցում է ամէն տեսակ միտք»: Տե՛ս В. Лосский, "Каппадокийцы", БТ, сб. 25, М., 1984, с. 161:

5 Տե՛ս Ա. Տէր—Միքելեան, «Հայաստանեայց սուրբ Եկեղեցու Քրիստոնէականը», Տփխիս, 1900, էջ 70:

այս որակումներն արձանագրում են արարչութեան նկատմամբ Աստուածութեան ներունակութիւնը (իմանենտութիւնը): Մերժելով Եւնոմիոսի բանաքննական բացարձակաբանութիւնը, ըստ որի Աստուծոյ միակ եւ ընդունելի անունը «անծին»—ն է[1] Բիւզանդական եւ Հայ Եկեղեցու հայրերը յստակօրէն զատորոշում են Աստուծոյ ինքնակայ էութիւնը Նրա ներգործութիւնից: Եթէ առաջինն անանուանելի է իր անդրանցականութեան հետեւանքով, ապա երկրորդն իր ներունակութեամբ կամ յայտնութենական բնոյթով ենթակայ է տարբեր անուանումների: Աստուածութեան յայտնութենական անուանումներից են հոգի, հուր, լոյս եւ այլ բառերը: Ահա այս պատճառով՝ «Անբաւ է մարդոյ տեսանել զԱստուած գոյիւ Իւրով... բայց իբրեւ ինքնակամ կամօք բարերարութեամբ Իւրով զԻնքն ցուցանէր... ումեմն՝ լոյս, ումեմն՝ հուր... Թէ ասիցեմք, եթէ հուր է, զոր ինչ տեսանեմքն ասեմք, թէ ասիցեմք լոյս է... նմանութիւնք ցուցանեմք Աներեւոյթին վասն մերոյ անհասութեան»[2]: Ներսէս Շնորհալին Համայք նահանգի քահանաներին յղած թղթում գրում է. «Հոգի անուն զանմարմին բնութիւն նշանակէ՝ ըստ Տեառն ասելոյ յաղագս յաւէտ անմարմնութեան, եթէ՝ Հոգի է Աստուած» [ս. Ներսէս Շնորհալի][3]: Այս միտքն աւելի յստակւում է Ներսէս Լամբրոնացու «Ատենաբանութեան» մէջ. «Սովորութիւն է զԱստուած վասն մաքրութեանն հուր անուանել եւ վասն պարզութեանն՝ լոյս. նաեւ բազումս առնումք ի վերայ Նորա այսպիսի անուանք. սակայն ո՛չ թէ մի ոք ի սոցանէ զէութիւն նորա ստուգէ, որ անհասն է, այլ միայն զներգործութիւն կամաց Նորա մեզ յայտնի ցուցանէ» [ս. Ներսէս Լամբրոնացի][4]: Այսուամենայնիւ, հայ եւ առհասարակ արեւելաքրիստոնէական աստուածաբանութեան մէջ անճառելիութիւնը (ապոֆատիզմը) եւ ճառելիութիւնը (կատաֆատիզմը), յստակօրէն զանազանուելով հանդերձ, գրեթէ միշտ հանդէս են գալիս փոխկապակցուած կերպով: Այս է պատճառը, որ Աստուած ե՛ւ անանուն է, ե՛ւ բազմանուն: «ՁՆորա զանունն ոչ ոք գիտաց, — ասում է ս. Գրիգոր Լուսաւորիչը, — զի չէր եւս անդր քան զՆա ոք, որ անտի եւ այսր անուանիցէ...»[5]: «Անիմանալի է Աստուած եւ անանուն»[6], — հաստատում է ս. Դիոնեսիոս Արիսպագացին: Առաւել պերճախօս են ս. Գրիգոր Նարեկացու Աղօթամատեանի հետեւեալ տողերը. «Ո՛չ անուամբ չափեալ եւ ո՛չ յորջորջմամբ նշանակեալ, ո՛չ որակութեամբ նմանեալ եւ ո՛չ քանակութեամբ

1 Տե՛ս В. Лосский,"Каппадокийцы", с. 162:
2 Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 179:
3 Տե՛ս Հրահանգ, էջ 122:
4 Նոյն տեղում
5 Ագաթանգեղոս, էջ 180
6 Տե՛ս Հրահանգ, էջ 126:

կշռեցեալ, ո՛չ օրինակաւ ձեւացեալ եւ ո՛չ որպիսութեամբ ծանուցեալ...»[1]: Բայց միաժամանակ՝ «Ի մեծութենէ զօրութեան յայտնի է անուն Տեառն» [Առակ. ԺԸ 10]: Ի մտի ունենալով այս իրողութիւնը՝ Սուրբ Գիրքը սահմանել է Աստուծոյ զանազան անունները՝ Արարիչ, Տէր, Տէր Աստուած, Տէր Ամենակալ, Տէր Զօրութեանց, Թագաւոր, Դատաւոր, Իշխան, Հայր: Այս կապակցութեամբ Արշակ Տէր—Միքելեանը նկատում է. «Իբրեւ արարիչ ու յափտենական պատճառ՝ Նա կոչւում է Աստուած (Էլոհիմ), եւ մենք ճանաչում ենք, որ Նա ամբողջ աշխարհի Աստուածն է, իսկ իբրեւ նախախնամող, կառավարող, դատող ու յայտնող կոչւում է Տէր (Եհովա կամ Եահուէ)...»[2]: «Զո արարածք Քեզ Արարչիդ արբանեկէք [Իմաստ. ԺԶ 24], «Որ արար զերկիրդ եւ ստեղծ զդա... զի անուն Քո Տէր է» [Երեմ. ԼԳ 3, նաեւ՝ Սաղմ. ՁԲ 19], «Ես Տէր Աստուած, այս է անուն Իմ» [Եսայի ԽԲ 8], «Տէր ամենակալ անուն է Նորա» [Երեմ. ԾԱ 57], «Թագաւոր յաղթող եմ Ես, — ասէ Տէր ամենակալ» [Մաղաք. Ա 14], «Տէր Հայր մեր, Տէր Դատաւոր մեր, Տէր Իշխան մեր» [Եսայի ԼԳ 22], «...Առաւել հնազանդեսցուք Հօրն հոգւոց եւ կեցցուք» [Եբր. ԺԲ 9], «Այլ եկեսցէ ժամանակ եւ այժմ իսկ է, յորժամ ճշմարիտքն երկրպագուք երկիր պագանիցեն Հօր հոգւով եւ ճշմարտութեամբ, քանզի եւ Հայր այնպիսի երկրպագուս Իւր խնդրէ» [Յովհ. Դ 23]:

Սուրբ Գրքի եւ աստուածաբանութեան վերոյիշեալ գաղափարներից են սնւում շարականների եւ տաղերի՝ Աստուածութիւնը բնութագրող հետեւեալ տողերը.

Ամէնիմաստ ամենից Հայր,
Բազմազեղ խնամող, ստեղծող
Եւ Տէր բոլորից,
Ամենի եւ էիցս էակ,
Զոր միշտ օրհնեն դասք անմարմնական
Ցաւէրժաբար հնչմամբ...[3]

Որ համագոյից ես հաստատիչ,
Հարցն մերոց Աստուած,
Ուստ՛ մեզ անդադար օրհնել
Ամուն Քո սուրբ...[4]

1 Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», աշխատ. Պ. Մ. Խաչատրեանի եւ Ա. Ա. Ղազինեանի, Երեւան, 1985, էջ 386 (Բան ԼԴ, Գ)
2 Ա. Տէր—Միքելեան, նշուած աշխ., էջ 73
3 [Կանոն Ծննդեանն Քրիստոսի Առաջնոյ Աւուր], Շարական, էջ 25
4 [Կանոն Բուն Բարեկենդանին], նոյն տեղում, էջ 119

Աստուա՛ծ բազումողորմ,
Խնայեա՛ յարարածս Քո, Հա՛յր ամենակալ,
Եւ ողորմեա...[1]

Աստուա՛ծ Հարցն մերոց,
Բարեբանեալ է անուն Քո յաւիտեան,
Վասն ուխտի Հարցն մերոց,
Տէ՛ր, մի՛ մատներ խսպառ
Վասն անուանդ Քում սրբոյ[2]*:*

Էն էապէս մեզ քարոզէ,
Զոր էնն, ուսեալ ի Մովսիսէ,
Թէ Աստուած է՛ր ի սկզբանէ,
Եւ ոչ եղեալ ի յումեքէ[3]*:*

Դատաւո՛ր արդար, որ Հաստատեցեր ի մեզ
Դատող բնութեան զմիտս մեր,
Շնորհեա՛ սմա դատել զանձինս իրաւամբք...[4]

Արքա՛յ երկնաւոր,
Տո՛ւր ինձ զարքայութիւն Քո,
Զոր խոստացար սիրելեաց Քոց[5]*:*

Արձագանքելով Աստուածաշնչի «Երկինք եւ երկնից երկինք չեն Քեզ բաւական» [Գ Թագ. Ը 27], ս. Կիւրեղ Երուսաղէմացու «Ո՛չ ընդ վայրօք փակեալ, այլ վայրացն Ինքն է արարիչ», Սեբերիանոս Գաբաղացու «Անսկիզբն է Աստուած, անձառ եւ անհասական, որ ոչ տեղեօք սահմանի եւ ոչ վայրօք բովանդակի», ս. Յովհան Ոսկեբերանի «Յամենայնի է եւ անտեղի է»[6] խօսքերին՝ Ներսէս Շնորհալին եւ Գրիգոր Նարեկացին գրում են.

Աստուած անեղ եւ անժամանակ,
Անսկիզբն, անեզր եւ անկատարած,

1 [Կանոն Բ՝ուն Բարեկենդանին], Շարական էջ 119
2 [Կանոն Երկրորդ Կիւրակէին Աղուանացից], նոյն տեղում, էջ 133—134
3 Տե՛ս Հրահանգ, էջ 129:
4 [Կանոն Հինգերորդ Կիւրակէին Աղուանացից], Շարական, էջ 185
5 ս. Ներսէս Շնորհալի, «Հաւատով խոստովանիմ»
6 Տե՛ս Հրահանգ, էջ 133—134:

Լոյս անմատոյց, գերարփի անուր, անուստ եւ տիպ անսահման.
Գերագոյն բնութիւն էութիւն, ի վեր, քան զմիտս եւ զբան[1]*:*

Զի է անկէտ եւ անսահման,
Աներբ, անուր եւ անվախճան[2]*:*

Տէր Աստուած ամենայնի, զօրաւոր յամենայնի,
Անպարագիր, անվայրափակ տեղի ամենեցուն,
Բոլոր իսկութեամբ հուպ յամենեսին,
Անուրեք վայրից, եւ չիք սահման առանց Քո,
Մ՛ոչ երեւեալ երբէք եւ մ՛ոչ տեսականութիւն առանց Քո
Ծագման լուսաւոր[3]*:*

Աստուծոյ կարեւորագոյն ստորոգելիներից է Նրան տրուած Արարիչ անուանումը, որը լաւագոյնս յատկորոշում է Նրա էութիւնը, այն է՝ արարչագործելու, ստեղծելու ներուժ կարողականութիւնը: Ուրիշ խօսքով՝ Աստուծոյ Արարիչ անուանումը բխում է Նրա նախասկզբնական զօրութեան բնոյթից, արարելու կարողութիւնից եւ այդ կարողութեան գործադրումից, որի արդիւնքը տիեզերքն է: Արարիչը ոչ միայն նիւթի ստեղծիչն է ոչնչից, այլեւ այն շնչաւորող, ձեւ տուող, կարգաւորող բացարձակ Ոգի է: «Հգոյր ինչ ժամանակակից Աստուծոյ. — ասում է Եզնիկ Կողբացին,— եւ ոչ նիւթ ինչ, ուստի առեալ զարարածս կազմիցէ, այլ Ինքն է ամենայն բնութեանց արարիչ. եւ ոչ միայն կերպարանաց կազմիչ եւ ոչ էութեան էականաց իրիք խառնիչ, այլ գոյանալոյ գոյացելոցն գոյարար»[4]: Դեռ աւելին, ըստ Խոսրով Անձեւացու՝ «Աստուած» անունը բխում է նրա «արարիչ» իմաստից. «Աստուած անունն արարչական է,— բացատրում է նա իր ժամակարգութեան մեկնութեան մէջ, — եւ առ մեզ ստուգաբանի, թէ՝ Աստ էած զմեզ»[5]: Իր մէկ այլ աշխատութեան մէջ նա նոյն ստուգաբանութիւնն է տալիս. «Տէրն անուն վասն սիրելոյն է, իսկ Աստուածն՝ վասն ստեղծանելոյն եւ յաստիս ածելոյ զեղեալքս»[6]:

Այսպիսով, Աստուծոյ գլխաւոր ստորոգելին Նրա Արարիչ լինելն է, որն Իր գոյաւորող զօրութեամբ, Իր կամքի գերբնական տնօրինումով եւ

1 Ներսէս Շնորհալի, «Տաղեր եւ գանձեր», աշխատ. Քեռշկերեանի, Երեւան, 1987, էջ 307
2 Տե՛ս Հրահանգ, էջ 133:
3 Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», էջ 331 (Բան ԻԳ, Ա)
4 Եզնիկ Կողբացի, «Եղծ աղանդոց», Վենետիկ, 1826, էջ 239
5 «Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի Մեկնութիւն ժամակարգութեան կարգադրեալ Մովսէսի գիտնական վարդապետի», Կ. Պոլիս, 1840, էջ 99
6 «Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի Մեկնութիւն աղօթից Պատարագին», Վենետիկ, 1869, էջ 16

միայն խօսքի արտաբերումով անգոյութիւնից կեանքի է կոչում յաւիտենականութիւնն ու բովանդակ իրականութիւնը: Սա նշանակում է, որ «աշխարհի՝ յառաջ, քան զլինելն իւր, գոյր ի նախագաղափար տեսութիւնն Աստուծոյ»[1]: Արարչաբանական այս գաղափարներն են ընկած շարականների եւ տաղերի ներքոբերեալ տողերի հիմքում.

Որ Արարիչդ ես յաւիտենից
Եւ ստեղծեր զարարածս ամենայն յոչնչէ,
ԶՔեզ օրհնեմք, Աստուա՛ծ հարցն մերոց...[2]

Արարչագործ Աստուած, որ յոչնչէ գոյացուցեր զերկինս եւ զերկիր,
Օրհնեմք զՔեզ, որ հանգուցիչդ ես ննջեցելոց,
Հա՛յր ամենակալ...[3]

Որ բանիւ հրամանի Քոյ հաստատեցեր զերկինս եւ զերկիր,
Արարիչդ ամենայն հրանութեանց,
Վասնզի լոյս են հրամանք Քո ի վերայ երկրի[4]*:*

Տէրն յետ ստեղծման արարածոց
Հանգեաւ յեօթն օրն ի գործոց,
Այն որ հանգիստ աշխատելոց
Եւ կամքն գործ է եղելոց,
Ուստի եւ մեզ յոյս հաստատուն
Հանգստեամբն շաբաթուն,
Թէ ասա գործել զգործս Աստուծոյ,
Անդէն հանգչիլ ընդ Աստուծոյ[5]*:*

Իսկապէս անսկիզբն եւ սկզբնացուցիչ յոչէից գոյիցս,
Ամենայնց աննիւթից եւ նիւթականաց կառուցիչ եւ Տէր,
Որոշող կայանից կենաց կացման՝ ըստ իրին,
Համագոյզ անտատրիցն[6] *եւ հոգեղինաց էութեանց՝*
Զաշխարհն վերին զասիւք զանազանեալ եւ փառօք որոշեալ...[7]

Առկայ են նաեւ անճառելի եւ ճառելի աստուածաբանութեան մեկտեղման առաւել պերճախօս օրինակներ, որոնք դարձեալ սնում են

1 Տե՛ս Ա. Տեր—Միքելեան, նշուած աշխ., էջ 88:
2 [Խանոն Մեծի Երկուշաբթին], Շարական, էջ 236
3 [Խանոն հանգչելոցն ի Քրիստոս], նոյն տեղում, էջ 669
4 [Խարզ Օրհնութեանց Տարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի], նոյն տեղում, էջ 739
5 [Երգ վասն յԵօթներորդի Աւուր Արարչութեան...], նոյն տեղում, էջ 593
6 անտատրիցն — անտատանելիների, անտատանելի, անտատան, անտրոտելի, անշարժ
7 Գրիգոր Նարեկացի, «Տաղեր եւ գանձեր», էջ 141

սուրբգրային եւ արեւելաքրիստոնեական աստուածաբանութեան ակունքներից. «Արքայութիւն Նորա ամենեցուն տիրէ... ընդ ամենայն տեղիս է տէրութիւն Նորա» [Սաղմ. ՃԲ 19, 22]:

«Աստուած մերձաւոր եմ ես, — ասէ Տէր, — եւ ոչ՝ Աստուած հեռաւոր» [Երեմ. ԻԳ 23—24]. այս միտքն իր աստուածաբանական կարճառօտ մեկնութիւնն է ստանում ս. Դիոնեսիոս Արիսպագացու «Յաղագս աստուածային անուանց» երկում. «Ինքն յամենեսին մե՛րձ է, բայց ո՛չ ամենայն մերձ ի Նա»[1]: Արձագանքելով աստուածաբանական այս աւանդոյթին՝ ս. Ներսէս Շնորհալին գրում է.

Հուպ ամենից եւ մերձաւոր
Եւ յումեքէ ոչ հեռաւոր[2]*:*

Սակայն անճառելի եւ ճառելի աստուածաբանութեան հակոտնեայ ծայրաբեւեռների պարադոքսալ մեկտեղման մի իսկական օրինակ պիտի համարել ս. Գրիգոր Նարեկացու Աղօթամատեանի եւ «Գանձ ի Սուրբ Խաչն աստուածընկալ» խորագրով գանձի հետեւեալ տողերը.

Զայն անքաւութեան, իսկութիւն անքննութեան,
Անմատչելի հեռաւոր եւ անընդմիջելի մերձաւոր,
Տեսող հեծութեան, նկարիչ թշուառութեան...[3]

Անճառ իսկութիւն՝ փակեալ ի զգալեացս, համագոյ
անթարգմանելի,

Անհասանելի հեռաւոր եւ անընդմիջելի մերձաւոր անմահ թագաւոր,
Ահա խնկեսցին մաղթանք մեր առաջի Քո, ամենակալ,
աղաչեմք[4]*:*

Բ. ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Ոգու եւ նիւթի, Աստուծոյ եւ աշխարհի յարաբերութիւնն իրականացւում է Սուրբ Երրորդութեան՝ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու միջոցով, որոնք, Ա. Տեր—Միքելեանի նկատումով, ոչ թէ սոսկ «Կատարելութիւններ» եւ «աստուածային գործունէութեան երեւոյթներ» են, այլեւ՝ Անձեր[5]: Մեկ բնութիւն ունեցող այդ Անձերից իւրաքանչիւրն ունի գործունէութեան Իր ոլորտը: Այդ ոլորտներում դրսեւորւում են Աստուածութեան երեք անձնա-

1 Տե՛ս Հրահանգ, էջ 134:
2 նոյն տեղում
3 Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», էջ 331 (Բան ԻԳ, Ա)
4 Գրիգոր Նարեկացի, «Տաղեր եւ գանձեր», էջ 212—213
5 Տե՛ս Ա. Տեր—Միքելեան, նշուած աշխ., էջ 77:

տր յատկութիւնները, որոնք կեանքի են կոչւում Նրա կամքով, մտքով եւ զգացումով: Եթէ մարդ արարածի համար դրանք կարողութիւն են, ապա Աստուծոյ համար՝ իրողութիւն, «վասն զի Աստուծոյ մէջ մտածողութիւնն ու գոյութիւնը մէկ է...», մինչդեռ մարդու սահմանաւոր, արարածական լինելու պատճառով դրանց միջեւ հակադրութիւն կայ[1]: Աստուածութեան կամքը Հայրն է, միտքը՝ Որդին, զգացումը՝ Սուրբ Հոգին: Սակայն այսօրինակ մեկնաբանումը (չասելու համար պարզունակացնում) զգալիօրէն պարզեցնում է խնդիրը: Արեւելաքրիստոնէական Եկեղեցու հայրերը, մտավախութիւն ունենալով սրանից, Սուրբ Երրորդութեան պարագային ջանում են իրենց զերծ պահել տրամաբանական կարգոյթներով մտակառուցումներ կատարելու գայթակղութիւնից: Այս է պատճառը, որ նրանք, Սուրբ Երրորդութեան մասին խորհրդածելիս, աշխատում են վեր կանգնել նիւթական իրականութեան թելադրած կաղապարային մտազննութեան յայտնի ձեւերից: Ինչո՞ւ, քանզի յայտնութենական բնաւորութեան հետեւանքով մերժելով քննական տրամաբանութեան հանրայայտ օրէնքները՝ Եկեղեցու հայրերն ամենայն իրաւամբ Սուրբ Երրորդութեան մէջ տեսնում են, թւում է, մէկմէկու բացառող անձնաւորական տարանջատութեան եւ բնաւորական միասնութեան համաժամանակեայ գոյակցութիւնը: Երեք Դէմքերի այսօրինակ յարաբերակցութիւնը Եկեղեցին որակել է *համագոյութիւն* եզրով: Ի տարբերութիւն պլոտինեան երրորդութեան, ուր դէմքերի (Միակ, Միտք, Համաշխարհային Հոգի) համագոյութեան մէջ էմանացիոն աստիճանակարգում կայ, Սուրբ Երրորդութեան Դէմքերի յարաբերութիւնն աչքի է ընկնում հակօրինական (անտինոմիկ) բնոյթով, ինչը դրսեւորւում է Անձերի փոխադարձ հայելացումով, այսինքն՝ հաւասար ուժով Մէկի մէջ Միւսի արտացոլումով: Եզրն աստուածաբանական ներկայ իմաստով կիրարկուել է այնպիսի նշանաւոր եկեղեցականների կողմից, որպիսիք են ս. Աթանաս Ալեքսանդրացին, ս. Գրիգոր Աստուածաբանը, ս. Կիւրեղ Ալեքսանդրացին, ս. Յովհան Ոսկեբերանը եւ արեւելաքրիստոնէական մտքի դարաւոր փորձն իր մէջ ամբարած Յովհան Դամասկացին[2]:

Սուրբ Երրորդութեան այս հակօրինական իրողութիւնն է արձանագրում ս. Գրիգոր Աստուածաբանը Մկրտութեան նուիրուած ճառում. «Աստուած Երեքեանն՝ ընդ իրարս միացեալ, այս է՝ յաղագս միհիշխանութեանն. ո՛չ ժամանեմ զՄինն իմանալ, Երեքումք շուրջ պայծառանամ. ո՛չ ժամանեմ զԵրիսն բաժանել եւ ի Մինն ի վեր բերեալ լինիմ: Յորժամ զՄի ոք յԵրիցն նկատեմ, զՆա իմանամ զամենայն եւ դիմօքն լցեալ լինիմ, եւ

1 Տե՛ս Ա. Տէր—Միքելեան, նշուած աշխ., էջ 81:

2 Տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբահօր հ. Գաբրիէլի Աւետիքեան, հ. Խարոյ Միւրմէլեան, հ. Մկրտչի Ազգերեան», հատ. Բ, Վենետիկ, 1837, էջ 12—13:

առաւելն փախչի. ո՛չ ունիմ մեծութեան Նորա հասու լինել... Եւ յորժամ զԵրեսեանն միանգամայն ընդունիմ տեսութիւն, զՄինն տեսանեմ ջահ. ո՛չ ունիմ որոշել կամ չափել զլոյսն միաւորեալ»[1]: Աւելի յստակելով այս միտքը՝ իր Յայտնութեան ճառում ս. Գրիգոր Աստուածաբանը նկատում է. «Եւ Աստուծոյ յորժամ ասեմ, Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն ասեմ. զի եւ ո՛չ քան զայս Աստուածութիւն է ցնդեալ, եւ մի բազմաստուածութիւն աստուածոց ի ներքս ածիցեմք, եւ ոչ ի ներքսագոյն, քան զայս սահմանեալ, զի մի աղքատութիւն Աստուածութեանն դատապարտիցիմք. յաղագս մի իշխանութեանն հրէաբար հրէիցեմք եւ կամ երկուցն՝ հեթանոսաբար. քանզի չարն յերկոսին նման է, թէպէտ եւ ի հակառակացն գտանիցին»[2]:

Ս. Գրիգոր Աստուածաբանը սրանով պարզորոշ ցոյց է տալիս, որ Սուրբ Երրորդութեան պարագային ամբողջի մէջ բազում եւ բազումի մէջ ամբողջ, մէկի մէջ երեք եւ երեքի մէջ մէկ յարաբերութեան պայմաններում առտնին թուաբանական կարգոյթները սկզբունքօրէն անկարող են ներկայացնել այդ անդրանցական իրողութիւնը:

Ուրիշ խօսքով՝ երրորդաբանական այս խնդիրը լուսաբանելիս միտքը պէտք է վերանայ Երրորդութեան թուի քանակային հասկացողութիւնից, քանզի անքակտելիօրէն շաղկապուած աստուածային Երեք Անձնատրութիւնների գումարը մարդկային բանականութեան համար անմատչելի ձեւով միշտ հաւասար է մէկի: Այսպիսով, Սուրբ Երրորդութեան երեքը թուային քանակ չէ, այլ՝ Աստուածութեան անճառելի կարգ[3]: Այս անճառելի կարգի աստուածաբանական խորախոր մեկնաբանութիւնն է տրուած Մամբրէ Վերծանողի ճառերից մէկի հետեւեալ տողերում. «Եւ արդ, ոչ մեծ եւ փոքր ի Սուրբ Երրորդութեանն երեւի. զի զմեծ եւ զփոքր, զծանր եւ զթեթեւ, զշատ եւ զսակաւ ժամք եւ ժամանակք բովանդակեն, իսկ ուր ոչ ժամք եւ ոչ ժամանակք, ոչ չափ եւ ոչ կշիռ մերձենայ յանբաւելի Բնութիւնն, անդ ոչ նկատի ո՛չ փոքր եւ ո՛չ մեծ»[4]: Այսպիսով, Սուրբ Երրորդութեան ապաժամանակեայ իրողութիւն լինելը բացառում է Նրա մասին քննական տրամաբանութեան հանրայայտ կարգոյթներով խորհելու նուազագոյն հնարաւորութիւնն իսկ: Սա նշանակում է, որ Սուրբ Երրորդութեան մասին ամէն բնորոշում անկարող է իրապէս յատկորոշել Նրան, քանզի Նա, լինելով անդրանցական իրողութիւն, վեր է հնարաւոր բոլոր ձեւակերպումներից: Այս միտքն է ընկած Շնորհալու Վիպասանութեան հե-

1 Տե՛ս «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ Եկեղեցւոյ յուղղափառ եւ ս. հոգեկիր հարցն մերոց դաւանութենց յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի» (=Կնիք հաւատոյ), հրատ. Կարապետ եպիսկոպոսի (Տէր—Մկրտչեան), Ս. Էջմիածին, 1914, էջ 35:

2 Նոյն տեղում, էջ 32

3 Նոյն տեղում: Տե՛ս նաեւ Մեսրոպ քհ. Արամեան, «Երեք Տիեզերական Ժողովների դաւանութիւնը (աստուածաբանական ակնարկ)», «Գանձասար», 1992, Ա, էջ 124:

4 Ա. Տէր—Միքելեան, նշուած աշխ., էջ 84

տեւեալ տողերի հիմքում.

Երրորդութիւն անձնաւորեալ,
ՑԱստուածութիւն մի հաւաքեալ,
Ըստ երեսաց տարորոշեալ,
Բնութեամբ անքակ յոյժ միացեալ,
Ոչ արարած գոյ ընդ թըւեալ
Եւ ոչ կրրսեր ոք ծառայեալ.
Ոչ բարձրութեամբ ոք մեծացեալ,
Ոչ ելեւէջ աստիճանեալ[1]:

Անձերի յարաբերութեան բնոյթը մեկնաբանելուց զատ երրորդաբանութեան մէջ կարեւոր տեղ է զբաղեցրել Նրանց յատկութիւնների կարգորոշումը: Անդրադառնալով այս իրողութեանը՝ ս. Գրիգոր Աստուածաբանը աստուածաբանութեան մասին իր նշանաւոր խօսքում գրում է. «Անծին, ծնուած, բխած լինելը հետեւեալ անուններն է յայտանշում. առաջինը՝ Հօր, երկրորդը՝ Որդու եւ երրորդը՝ Սուրբ Հոգու. այնպէս որ, երեք Անձերի ոչ միատարր լինելը դրսեւորւում է Աստուածութեան միակ բնութեան եւ արժանիքի մէջ: Որդին Հայր չէ, քանզի Հայրը միակ է, սակայն նոյնն է, ինչ Հայրը, Հոգին Որդի չէ, թեպետ Աստուածութիւնից է, քանզի Միածինը միակ է, սակայն նոյնն է, ինչ Որդին: Եւ Երեքը Մէկ է ըստ Աստուածութեան, եւ Մէկը Երեք է՝ ըստ անձնաւորական յատկութիւնների: Այնպէս որ, չկայ ո՛չ միակ՝ ըստ սաբէլեան իմաստի եւ ո՛չ էլ՝ երեք՝ ըստ ներկայիս չարամիտ բաժանման» (այսինքն՝ արիոսականութեան)[2]: Անդրադառնալով այս խնդրին՝ Եփրեմ Ասորին «Անհասութեան» մէջ նկատում է. «Լուար, թէ Աստուած աստուած է, ծանի՛ր զանձն քո իբր զմարդ. լուար, թէ Աստուած արարի՛չ է, ստեղծուա՞ծ. զիա՞րդ քննես զնա: Լուար, թէ Աստուած Հայր է, հայրութեամբ ծանի՛ր զԾնունդ Նորա. զի Որդին Իւր ծնաւ յԻնքենէ. զի մի Ծնունդ Նորա Միածին է, մի՛ բաժանեսցեն հարցուածք Քո... Լուար զՀօրէ եւ զՈրդւոյ եւ զՍուրբ Հոգւոյն, անուամբ ստացի՛ր զանձինսն. ո՛չ եթէ անուամբք լոկ են, ճշմարիտ երեք են...»[3]: Եռամիասնական Աստուածութեան տուեալ գաղափարը, ինչպէս երեւում է ս. Գրիգոր Աստուածաբանի բացորոշ ակնարկից, ուղղուած էր Արիոսի եւ Սաբէլի հերձուածողական տեսութիւնների դէմ: Ըստ արիոսականների՝ միայն Հայրն է Աստուած, իսկ Որդին եւ Սուրբ Հոգին արարածներ են: Վերջիններս Հայր Աստուծոյ նկատմամբ ստորադաս էութիւններ են, որոնք լոկ իրագործում են իր

1 Ներսէս Շնորհալի. «Վիպասանութիւն», աշխատ. Մ. Մկրտչեանի, Երեւան, 1981, էջ 36
2 В. Лосский, "Очерк мистического богословия Восточной церкви", БТ, сб. 8, М., 1972, с. 32
3 Տե՛ս Վանք հաւատոյ, էջ 5:

բնոյթով աշխարհի համար անմատչելի Հօր արարչական ծրագրերը: Արիոսական տեսութեան հակառակ բեւեռն է ներկայացնում սաբէլեան գաղափարաբանութիւնը, ըստ որի՝ Սուրբ Երրորդութեան Անձերը զուրկ են որեւէ ինքնակայ զօրութիւնից. Դրանք ոչ այլ ինչ են, քան նոյն Աստուածութեան տարբեր դրսեւորումները. Հայրը՝ Իր արարչական զօրութեամբ, Որդին՝ Իր փրկագործութեամբ, եւ Սուրբ Հոգին՝ Իր մխիթարական ներգործութեամբ: Երրորդաբանութեան մէջ լուրջ վտանգ է ներկայացրել նաեւ սուբորդինացիոն (աստիճանակարգային) տեսութիւնը: Նորպլատոնեան իմաստասիրութիւնից սերուած այդ տեսութեան համաձայն՝ Միակ–Հայր, Միտք–Բան–Որդի, համաշխարհային Հոգի–Սուրբ Հոգի. Հայրն առաւել է Որդուց, իսկ Որդին՝ Սուրբ Հոգուց, քանզի Հայրը համարւում է ամենայն ինչի առաջին Պատճառ, Իսկ Որդին՝ երկրորդ Պատճառ, Որը, ծնուած լինելով Հօրից, ենթակայ է Նրան: Այս յարաբերութեամբ Սուրբ Հոգին էլ ենթակայ է Որդուն[1]: Ինչպէս վերը տեսանք, Տիեզերական Եկեղեցին, ելնելով խնդրի յայտնութենական բնոյթից, արժանի պատասխան է տուել հերձուածողական այս տեսութիւններին:

Հայ Եկեղեցին եւս իր հեղինակաւոր, ծանրակշիռ մասնակցութիւնն է բերել այս պայքարին: Արդէն Շիրակաւանի եկեղեցաժողովի կանոններում մէկընդմիշտ հաստատագրւում է. «Երեք Անձինք են ի կենդանարար Երրորդութեան»: Այս գաղափարն է ընկած նաեւ ս. Ներսէս Շնորհալու՝ Մանուէլ կայսեր յղած թղթի հետեւեալ բառերի հիմքում. «Երիս դաւանեմք զԱնձինս եւ ո՛չ՝ առաւել կամ նուազ, քան զերիսն»[2]: Հետեւելով Տիեզերական Եկեղեցու աստուածաբանութեան սրբագործուած աւանդոյթին («Պարտ է զՄի Աստուածութիւնն պահել եւ զԵրիս Դէմս խոստովանել: Միաւորութիւն Երրորդութեամբն երկրպագեալ, եւ Երրորդութիւն ի միաւորութիւն գլխաւորեալ» [ս. Գրիգոր Աստուածաբան]: «Մի է Տէր, եւ մի Աստուած, եւ... ո՛չ տեարս՝ եւ ո՛չ Աստուածս դաւանեմք զՍուրբ զԵրրորդութիւն... Քանզի մի է տէրութիւն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ... Երիս՝ եւ Մի, Մի՝ եւ Երիս. քանզի մի էութիւն Սուրբ Երրորդութեանն դաւանեմք՝ յԵրիս կայս կատարեալ Անձանց» [Սեբերիանոս Գաբաղացի][3])՝ Հայ Եկեղեցու հայրերը, ս. Գրիգոր Լուսաւորչից սկսած, աշխատել են բիւրեղացնել նրա որդեգրած դաւանական տեսութիւնները. «Երեք Անձինք եւ Մի բնութիւն, Մի Աստուածութիւն, զՔեզ խոստովանիմք յաւէտ, Սո՛ւրբ Երրորդութիւն», — կարդում ենք Ժամագրքում: «Խոստովանիմք համագոյ եւ անեղ զԱմենասուրբ

1 Տե՛ս Г. Г. Майоров, "Формирование средневековой философии. Латинская патристика", М., 1979, с. 94-95:
2 Տե՛ս ս. Ներսէս Շնորհալի. «Սահմանք հաւատոյ ... առ Էմանուէլ կայսրն», «Թուղթ ընդհանրական», Ս. Էջմիածին, 1865, էջ 166:
3 Տե՛ս Հրահանգ, էջ 146–147:

զԵրրորդութիւնն՝ յԵրիս Անձնաւորութիւնս բաժանեալ եւ ի Մի բնութիւն եւ ի Մի Աստուածութիւն միաւորեալ»,— ասում է ս. Ներսէս Շնորհալին: Իսկ Գրիգոր Տղայ կաթողիկոսը հոռոմց Միքայէլ պատրիարքին յղած թղթում հաստատում է. «Հաւատամք եւ խոստովանիմք զպաշտելի եւ զերկրպագելի Սուրբ զԵրրորդութիւնն՝ Մի Աստուածութիւն յԵրիս Անձնաւորութիւնս բաժանեալ...»[1]: Սուրբ Երրորդութեան մէջ Դէմքերը զանազանւում են բացառապէս Իրենց անձնաւորական յատկութիւններով. Հայրը՝ անծին, Որդին՝ բոլոր ժամանակներից առաջ ծնուած Հօրից, եւ Սուրբ Հոգին՝ բխած Հօրից: Անձերի այսօրինակ զանազանումից եւ յատկորոշումից են ծագում երրորդաբանական հետեւեալ մեկնաբանութիւնները, որոնցում տրւում է Նրանցից իւրաքանչիւրի անշփոթ ինքնութեան բնութագիրը: Այսպէս, Խոսրով Անձեւացին Ժամակարգութեան մեկնութեան մէջ գրում է. «Թէպէտ մի են բնութեամբ Հայր եւ Որդի, սակայն անուամբ որի՛շ են եւ զանազան: Որդի միշտ Որդի՛ է եւ ո՛չ երբէք եղեալ Հայր. որպէս Հայր միշտ է՛ Հայր եւ ո՛չ երբէք Որդի լեալ... Որդի տիրապէս [ասի] Որդի՛, զի Հայր ո՛չ եղեւ երբէք. որպէս եւ Հայր տիրապէս ասի Հայր, զի Որդի երբէք ո՛չ է եղեալ. այլ միշտ է՛ Հայր, որպէս Որդի միշտ Որդի՛ է»[2]: Տիրոջ թաղմանը եւ յարութեանը նուիրուած նշանաւոր ճառում Եղիշէ վարդապետն ասում է. «Աստուած հոգի է: Հոգի՛ է Հայր, հոգի՛ Որդի, հոգի՛ եւ Սուրբ Հոգին: Եւ արդ, զի այս այսպէս է, ո՛չ եթէ Հայր՝ Որդի, եւ ո՛չ Որդին՝ Հայր, եւ ո՛չ Սուրբ Հոգին՝ Հայր եւ Որդի»[3]: Աւելի մանրամասնելով երրորդաբանական այս տեսութիւնը՝ Սարգիս Շնորհալին Կաթողիկէ թղթոց մեկնութեան մէջ գրում է. «Ամենայն ինչ, որ Հօրն է՝ Որդւոյ է, բաց ի հայրութենէն, եւ որ ինչ Որդւոյ է՝ Հոգւոյն է, բաց յորդիութենէն, եւ որ ինչ Հոգւոյն է՝ Հօր է եւ Որդւոյ, բաց ի Հոգւոյն անձնաւորութենէն, եւ որ ինչ Որդւոյ եւ Հոգւոյն՝ Հոգւոյն Հօր է: Բայց Հայր ոչ է ի պատճառէ իմեքէ, որպէս Որդի եւ Հոգի, այլ Ինքն է պատճառ Որդւոյ եւ Հոգւոյ. Միոյն՝ ծնողեամբ եւ Միւսոյն՝ ելողութեամբ»[4]: Սուրբ Երրորդութեան Անձերի յարաբերութեան մասին այս մեկնաբանութիւնները շատ շարականների եւ տաղերի տեսական ակունքն են: Այսպէս, ս. Յովհան Ոսկեբերանի հետեւեալ խօսքը. «*Լոյս է Հայր, վասնզի «Աստուած լոյս է»* [Ա Յովհ. Ա 5], *լոյս է եւ Որդին՝ «Ես եմ լոյս աշխարհի»* [Յովհ. Ը 12], *եթէ ոչ էր լոյս եւ Հոգին Սուրբ... ո՞չ արդեօք ասէր Պօղոս. «ՁՀոգին մի՛ շիջուցանէք»* [Ա Թեսաղ. Ե 19]» ինչպէս նաեւ՝ ս. Կիւրեղ Երուսաղէմացու եւ ս. Գրիգոր Լուսաւորչի խորհրդածութիւնները. «*Ոչ եթէ այլ ինչ էր յառաջ [Որդին] եւ այլ ինչ ծնաւ, այլ՝ Որդի ի սկզբանէ ծնեալ, Որդի Հօր՝ նման ծնողին Իւրոյ, Կեանք ի Կենաց ծնեալ եւ Լոյս ի Լուսոյ»*[1], «Որ առաքեցեր զՍիածին Որդիդ Քո յաշխարհս, Լոյս ի Լուսոյ, Կեանք ի Կենաց»[2], — կարծես իրենց արձագանքն են գտել Ներսէս Շնորհալու նշանաւոր քերթուածի հետեւեալ տողերում.

Լոյս, Արարիչ լուսոյ, առաջին Լոյս,
Բնակեալդ ի լոյս անմատոյց Հա՛յր երկնաւոր՝
Ի դասուց լուսեղինացն օրհնեալ.
Ի ծագել լուսոյ առաւօտուս
Ծագեա՛ ի հոգիս մեզ զլոյս Քո իմանալի:
Լոյս ի Լուսոյ ծագումն՝ Արեգակն արդար,
Անճա՛ռ ծնունդ Հօր՝ Որդի,
Յառաջ, քան զարեւ անուն Քո
Գովեալ ընդ Հօր ի ծագել լուսոյ:
Լոյս, ի Հօրէ բղխումն, Աղբիւր բարութեան,
Հոգի՛դ Սուրբ Աստուծոյ.
Մանկունք Եկեղեցւոյ ընդ Հրեշտակս
ՁՔեզ բարեբանեն ի ծագել լուսոյ:
Լոյս Երրեակ եւ Մի անբաժանելի
Սո՛ւրբ Երրորդութիւն,
ՁՔեզ ընդ երկնայնոցն երկրածինքս
Միշտ փառաւորեմք ի ծագել լուսոյ[3]:

Անճառ Ծնունդ գերագոյին,
Ծածկեալն ի ծոց Հօր իսկակից,
Անհերեւոյթ, անտեսական,
Լոյս ի Լուսոյ անմարմնական[4]:

«Թէպէտ անձնաւորութեամբ որոշեալ են Որդի եւ Հոգի ի Հօրէ», սակայն Աստուածութեամբ, բնութեամբ եւ էութեամբ Նրանք մէկ միասնութիւն են կազմում: Այս է պատճառը, որ «մի էութիւն, մի իշխանութիւն, մի կամք եւ մի արարչագործ զօրութիւն»[5] ունեցող Սուրբ Երրորդութեան Անձերը մէկմէկու նկատմամբ *համագոյ, էակից, հաւասարապատիւ*[6] են: Աստուածաբանական այս տեսութեան վրայ են հաստատուած հետեւեալ տեղիները, որոնցում յատուկ միտումով կիրարկուած են դասանաբանական

1 Տե՛ս Հրահանգ, էջ 146:
2 Տե՛ս Հրահանգ, էջ 156:
3 Նոյն տեղում
4 Սարգիս Շնորհալի. «Մեկնութիւն Կաթողիկեայ թղթոց», Կ. Պոլիս, 1826, էջ 47

1 Կիւրեղ Երուսաղէմացի. Կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832, էջ 50—51
2 Ագաթանգեղոս, էջ 56
3 [Երգ զկնի «Աստուած Աստուած իմ» սաղմոսին], Շարական, էջ 596—597
4 Տե՛ս Հրահանգ, էջ 164:
5 Ներսէս Շնորհալի. «Թուղթ ընդհանրական», Երուսաղէմ, 1871, էջ 88
6 Տե՛ս Հրահանգ, էջ 152—153:

մասնաւոր նշանակութիւն ու կարեւորութիւն ունեցող յիշեալ եզրերը.

Էդ Հայր անսկիզբն,
Էակից Որդի,
Է միշտ Սուրբ Հոգի[1]:

Էակից Հօր եւ Հոգւոյն՝ անսկիզբն Որդի:
Որ անքննիդ ես յէութեան համագոյ Երրորդութիւն.
Երեքսրբեան մի Տէրութիւն, միով բնութեամբ
Աստուածութիւն[2]:

Օրհնեմք զՔեզ, անսկի՛զբն Հայր,
Որ յամենայն ժամ օրհնիս ի դասուց քերովբէից,
Գովեմք զՔեզ, Միածին Որդի,
Որ անդադար փառաբանիս ի դասուց սերովբէից,
Անդադար բերանով, անհանգիստ բարբառով
Բարեբանեմք Սուրբ Հոգիդ,
Որ փառակից ես Հօր եւ Որդւոյ[3]:

Բանն, որ ընդ Հօր յէութեան
Եւ համագոյ Սուրբ Հոգւոյն,
Զպատուէրն իւրական խառնեալ
Ընդ Հողանիւթ բնութեանս...[4]

Գանձ անպատում եւ անճառելի,
Անպարագրելի միասնական Սուրբ Երրորդութիւն,
Անհաս խորհրդով Հա՛յր անսկիզբն եւ Արարի՛չ Աստուած,
Լոյս ի Լուսոյ, Էակից Որդի ի Հօրէ՝ ծնեալ յառաջ,
քան զամենայն,
Յաւիտեանս անբաժանելի եւ անորիշ ի Հայրական ծոցոյ,
Զուգահաւասար միակցութեամբ անշփոթ եւ անփոխարինելի
բնութիւն,
Համապատիւ ընդ Հօր եւ ընդ Որդւոյ փառակից Սուրբ Հոգիդ,
Որ ի Հօրէ երանես եւ լնուս զամենայն արարածս...[5]

Բարունեացքն Տէր եւ փառակից Հօր՝ Որդի՛դ միածին.

1 ա. Ներսէս Շնորհալի, «Աղաւօտ լուսոյ»
2 Տե՛ս Հրահանգ, էջ 152—153:
3 [Կանոն Վեցերորդ Կիւրակէին], Շարական, էջ 218
4 [Կանոն Բուն Բարեկենդանին], նոյն տեղում, էջ 114
5 Գրիգոր Նարեկացի, «Տաղեր եւ գանձեր», էջ 189—190

Գովեմք զքեզ, որ ես յէութեան ընդ Հօր,
Անիմանալի բնութիւն, Էակից Հօր եւ փառակից
Սուրբ Հոգւոյն...[1]

Պայծառակերպման պահին Տիրոջից ճառագած անեղական լոյսը յայտանշում է Սուրբ Երրորդութեան ներկայութիւնը[2]: Այդ մասին են խօսում ս. Ներսէս Շնորհալու Վարդավառի տաղի հետեւեալ տողերը.

Էական Բանին բնութիւն մարմնով պարածածկեալն,
Այսօր ի Թաբոր արտափայլեալ պայծառ ծագմամբ:

Էնն Աստուած եւ Հայր յերկնից ձայնիւ աղաղակէր.
—Դա՛ է Իմ Որդի, Դրմա՛ լուարուք, որդի՛ք մարդկան:
Սուրբ Հոգին ընդ Հօր հովանացեալ Իւր Էակցին,
Ի նրմանութիւն լուսոյ փայլեալ պայծառ ամպոյ:
Ի Թաբոր լերինն խորհուրդ յայտնեալ Երրորդութեան,
Զոր եւ Պետրոսի երիւք ազգէր տաղաւարօք[3]:

Այս մասին կարդում ենք շարականում նմանապէս.

Որ յայտնեցան այսօր ի Թաբոր լերինն
Զմիութիւն Սուրբ Երրորդութեանն,
ԶՏէ՛ր օրհնեցէք...[4]

Ինչպէս արդէն նկատուեց, Սուրբ Երրորդութեան Անձերի կամ Դէմքերի յարաբերութիւնը դրսեւորւում է Նրանց անուանումների մէջ: Այդ յարաբերութիւնը յատկորոշւում է երկու մակարդակով. յարաբերութիւն Անձերի միջեւ (տրանսցենդենտալ—անդրանցական մակարդակ) եւ յարաբերութիւն աշխարհի նկատմամբ (իմանենտ—յայտնութենական մակարդակ): Անձերի միջեւ յարաբերութիւնն իրականացւում է ինքնաբաւ փառքի մէջ Նրանց բնոյթի ընդհանրութեան ու ներկայ փոխկապակցութեան շնորհիւ (Հայրը՝ անծին, անսկիզբ, Որդին՝ ծնուած Հօրից, անսկզբնակից եւ էակից Նրան, Սուրբ Հոգին՝ բխած Հօրից, փառակից Հօրը եւ Որդուն): Այս միտքն իր յստակ ձեւակերպումն է ստացել Յովհան Օձնեցու եւ Ներսէս Շնորհալու երկերում: «Ընդդէմ երեւութականաց» ճառում Յովհան Օձնեցի հայրապետը գրում է. «Արտորոշեալ ճանաչի ի նոսա (յերիս անձինս) դէմն

1 Գրիգոր Նարեկացի, «Տաղեր եւ գանձեր», էջ 244
2 Տե՛ս В. Лосский, "Паламитский синтез", БТ, сб. 8, М., 1972, с. 201:
3 Ներսէս Շնորհալի, «Տաղեր եւ գանձեր», էջ 155—156
4 [Կանոն Վեցերորդ Կիւրակէին], Շարական, էջ 218, նաեւ՝ [Կանոն Երկրորդ Կիւրակէին], էջ 144, 146, 237

ձինս) դէմն այսուիկ, Հօր՝ ծնող գոլ, Որդւոյ՝ ծնունդ, իսկ Հոգւոյ՝ ելումն»[1]: Մանուէլ կայսերը յղած թղթում, անդրադառնալով դաւանական այս կարեւոր խնդրին, Ներսէս Շնորհալին ասում է. «Խոստովանիմք զՀօր յատկութիւն անձնաւորութեան անծին եւ անսկիզբն եւ զՈրդւոյ՝ ծնունդ անսկզբնականին Հօր անեղապէս եւ անժամանակ եւ զՀոգւոյ՝ բղխումն եւ ելումն եւ արտաքս առաքումն ի Հօրէ անճառաբար»[2]: Աշխարհի նկատմամբ Սուրբ Երրորդութեան յարաբերութիւնն իրականացւում է Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու գործունէութեամբ (արարչագործութիւն, փրկագործութիւն եւ շնորհաբաշխութիւն): Սակայն շարականներում եւ տաղերում (եւ ոչ միայն սրանց մէջ) այս երկու մակարդակներն, իբրեւ կանոն, հանդէս են գալիս փոխադարձուած ձեւով: Այդ մասին են խօսում հետեւեալ տողերը.

Օրհնեմք զՔեզ, անսկի՛զբն Հայր,
Որ յամենայն ժամ օրհնիս ի դասուց քերովբէից:
Գովեմք զՔեզ, միածին Որդի,
Որ անդադար փառաբանիս ի դասուց սերովբէից:
Անդադար բերանով, անհանգիստ բարբառով
Բարեբանեմք Սուրբ զՀոգին,
Որ փառակից ես Հօր եւ Որդւոյ...[3]

Օրհնեմք զՔեզ, Հա՛յր անսկիզբն,
Ստեղծիչ ամենայն եղելոց...
Գովեմք զՔեզ, անճառ ծնունդ Հօր՝
Անսկզբնակի՛ց Որդի,
Որ մահու խաչի համբերեցեր...
Բարեխնամ Սո՛ւրբ Հոգի,
Փառակից Հօր եւ Որդւոյ,
Հայցեմք ի Քէն՝ զննչեցեալսն
Ճշմարիտ հաւատով Սուրբ Երրորդութեանդ
Ի միւս անգամ նորոգմանն
Դասեա՛ ի դասս ընտրելոց Քոց...[4]

Երեք Դիմաց Միով բնութեամբ
Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն,
Որոյ աթոռք են քերովբէքն,
Գովեն սրովբէքըն վեցթեւեանք:

1 Տե՛ս Հրահանգ, էջ 158. «Յովհաննու Իմաստասիրի Օձնեցւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 64:
2 Ներսէս Շնորհալի. «Թուղթ ընդհանրական», էջ 121, հմմտ. էջ 88
3 [Կանոն Վեցերորդ Կիւրակէին], Շարական, էջ 218
4 [Կանոն համօրէն ննջեցելոց ի Քրիստոս], Շարական, էջ 666, նաեւ՝ էջ 669, 693

Տէր եւ Աստուած զՀայր քարոզեմք.
Ընդ Հօր զՈրդի Տէր դաւանեմք,
Վեհին Հոգւոյ բղխումն ասեմք,
Որ է անհաս՝ ի մէնջ պատուեմք:

Անբսկբզբան Հօր անեղի,
Ցորմէ Որդին է եւ Հոգի,
Նոյն եւ նման Երիցն ի Մի,
Ի մէնջ յաւէժ փառս տացի[1]*:*

Օրհնեմք զՔեզ, անսկիզբն Հա՛յր Որդւոյդ միածնի,
Զոր առաքեցեր ի դարձումն մոլորեալ ոչխարին...
Գովեմք զՔեզ, Բա՛ն եւ Լո՛յս,
Որ զտիրական Քո պատկեր
Լուսով ճրագի զըտեալ վերականգնեցեր...
Բարեբանեմք զփառակիցդ Հօր զՀոգիդ ճշմարիտ,
Որ նստեցեր զհնացեալքս մեղօք Հնոյն Ադամայ...[2]

Հա՛յր երկնաւոր, Աստուա՛ծ ճշմարիտ,
Որ առաքեցեր զՈրդիդ Քո սիրելի
Ի խնդիր մոլորեալ ոչխարին...

Որդի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ,
Որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ
Եւ առեր մարմին ի սրբոյ Կուսէն Մարիամայ՝
Վասն մերոյ փրկութեան...

Հոգի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ,
Որ իջեր ի Յորդանան եւ ի Վերնատունն
Եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ Աւազանին,
Մեղայ յերկինս եւ առաջի Քո...[3]

Թէպէտ Սուրբ Երրորդութեան վերոյիշեալ երկու մակարդակների մասին բանաստեղծական խորհրդածութիւններն ու խոկումները գլխաւորապէս հանդէս են գալիս փոխադարձուած կերպով, սակայն քիչ չեն նաեւ այնպիսի քերթուածներ, որոնցում գերակշռում է այդ մակարդակներից մէկը կամ միւսը: Այսպէս, Սուրբ Երրորդութեան բացառապէս յայտնութենական մակարդակն են մատնանիշ անում Նրա արարչական զօրութեան մա-

1 Ներսէս Շնորհալի. «Տաղեր եւ գանձեր», էջ 141—143
2 [Կանոն Երրորդ Կիւրակէին], Շարական, էջ 140—141
3 ա. Ներսէս Շնորհալի. «Հաւատով խոստովանիմ»

սին խօսող, Աստուածաշնչից ծնունդ առած («Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր. եւ Բանիւ Տեառն երկինք հաստատեցան, եւ Հոգւով բերանոյ Նորա ամենայն զօրութիւնք նոցա» [Սաղմ. ԼԲ 5—6]) հետեւեալ մտքերը. «Պաշտել զԱստուած [Հայր]՝ Արարիչ եւ զՈրդին՝ Հաստիչ եւ զՀոգին՝ Կազմիչ»[1], «Հասարակաց Երրորդութեան է արարչագործութիւնն» [Խոսրով Անձեւացի, Մեկնութիւն Պատարագի][2]: Աստուածաբանական այս մտքերի բանաստեղծական արձագանքներն են շարականի հետեւեալ տողերը.

Որ, ի վերայ ջուրցն գոլով, գոյացոյց զարարածս
Անանջրպետն ի Հօրէ եւ յՈրդւոյ իշխանակից Սուրբ Հոգին:
Ամենասուրբ Երրորդութեանդ երկրպագեն զօրք երկնայինք
Եւ ստեղծուածք անարատ ձեռացդ...

Այս գաղափարն է ընկած նաեւ ս. Ներսէս Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» երկի հետեւեալ տողերի հիմքում.

Միոյ բնութեան աստուածային
Մի Տէրութեանդ եւ միշտ էին,
Գերակատար Երիցդ Անձին
Կատարողի արարածին
Փառք եւ պատիւ եւ զօրութիւն:[3]

Ինչպէս աստուածաբանական գրականութեան, այնպէս էլ հոգեւոր բանաստեղծութեան մէջ խստօրէն դատապարտւում է Սաբէլի եւ Արիոսի երրորդաբանական հերձուածը: Սա առաւել բացորոշ արտայայտուած է յատկապէս ս. Ներսէս Շնորհալու քերթուածներում.

Արիոսի չեմք հաւանեալ,
Որ զմի բնութիւն յերիս հատեալ,
Եւ Սաբէլի չեմք հնազանդեալ,
Որ չարաչարն ժողովեալ...[4]

Եւ ո՛չ անձամբ խառն ասելով,
Երիցն ի մի ժողովելով,
Ըստ որում թուեցաւ այս Սաբէլի
Հրէականին հետեւողի:

Ո՛չ բաժանեալ յէութենէ
Բանն եւ Հոգին առ ի Հօրէ.

1 Ագաթանգեղոս, էջ 34
2 Տե՛ս Հրահանգ, էջ 171:
3 Տե՛ս Հրահանգ, էջ 171—172:
4 Ներսէս Շնորհալի, «Վիպասանութիւն», էջ 81, տող 687—690

Ո՛չ մին ստեղծիչ, մին արարած,
Եւ միւսն օտար պաշտօնատար,
Որպէս կարծիքն Արիոսի՝
Հեթանոսաց համախոհի,
Որ եկեալ աստիճանի՝
Բնութեանն եմոյծ հաւասարի[1]*:*

Գ. ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

Աստուծոյ արարչութեան պսակը մարդն է: Մարդու արարումով աւարտւում է արարչական գործընթացը: Նա արարչական գործերի հանրագումարն է: «Մարդու այս մեծ նշանակութիւնն առաւել եւս բարձրանում է, երբ նկատում ենք, որ նորա համար են ստեղծուած մինչեւ անգամ այն հոգեւոր արարածները, որոնք մարդու պէս բանաւոր են»[2]: Սրանք հրեշտակ անունն են կրում: Աստուածաշունչ մատեանն ակնարկում է, որ այս արարածները, իբրեւ լուսեղէն էակներ, ստեղծուել են առաջին օրը, լոյսի հետ միասին[3]: Աստուծոյ հրահանգով նրանք կոչուած են սպասաւորելու մարդուն: Հետեւաբար, նրանք սպասաւոր հոգիներ են, որոնք, երկնաբնակ լինելով, այսուամենայնիւ, ժամանակի եւ տարածքի իրենց մասնակցութիւնն են բերում երկրաւոր կեանքի ընթացքին, գործում են ժամանակի եւ տարածքի մէջ կենցաղավարող մարդու հետ, մարդու համար[4]: Ըստ իրենց այս կոչման՝ հրեշտակներն անուանւում են նաեւ Աստուծոյ պատգամաւորներ, «զուարթունք», որոնք իրականացնում են Տիրոջ կամքը: Սուրբ Գրոց վկայութեամբ նրանք բազմաքանակ են[5], յայտնի են իրենց զօրութեամբ, ուժով[6] եւ գործունէութեամբ[7]: Հրեշտակների գործունէութեան մէջ առկայ է երկու ոլորտ՝ անդրանցական եւ յայտնութենական: Յայտնութենականը հրեշտակների եւ մարդկանց յարաբերութեան ոլորտն է: Այս տարածքում գործում է իւրաքանչիւր բարեպաշտ, աստուածերկիւղ քրիստոնեայի հոգեւոր կցորդ պահապան հրեշտակը, որը նպատակամէտ շահագրգռութեամբ գործում է յօգուտ մարդու փրկութեան: Այսպիսով, հրեշտակները «կուզեն, որ մարդիկ հաղորդ ըլլան յափտեանս երկնից երանութիւններուն»[8]: Անդրանցական ոլորտում հրեշտակների միակ գործը Աստուածութեան փառա-

1 Տե՛ս Հրահանգ, էջ 168—170:
2 Ա. Տէր—Միքելեան, նշուած աշխ., էջ 95
3 նոյն տեղում
4 Տե՛ս Սաղմ. ՂԱ 11, ՃԳ 20, Եբր. Ա 14:
5 Տե՛ս Բ Օր. ԼԳ 2, Սաղմ. ԿԷ 18, Մատթ. ԻԶ 53, Ղուկ. Բ 13:
6 Տե՛ս Բ Պետ. Բ 11, Յայտ. Ե 2, ԺԸ 21, ԺԹ 17:
7 Տե՛ս Եսայի Զ 6—7, Գործք ԻԷ 23, Յայտ. ԺԲ 7:
8 «Բառարան Սուրբ Գրոց», Կ. Պոլիս, 1881, էջ 318—319

բանումն է: Լինելով բացառապես հոգեւոր էակներ՝ նրանք անմիջական մասնակցութիւն են ունենում «աստուածային փառաց լոյսին»: Ըստ իրենց փառաբանելու մակարդակի եւ եղանակի՝ նրանք ինը կարգի են դասդասուած. Աթոռներ, Քերովբէներ (Զօրաւորներ), Սերովբէներ (Գլխաւորներ), Տէրութիւններ, Զօրութիւններ, Իշխանութիւններ, Պետութիւններ, Հրեշտակապետեր եւ Հրեշտակներ[1]: Ինը կարգի իւրաքանչիւր եռեակ Աստուծոյ փառաբանութիւնն է կատարում իրեն յատկացուած ոգեղէն երկնքի անդրանցական տարածքում: Համապատասխանաբար, Աստուածութեան հրեղէն փառքի հետ անմիջաբար հաղորդակցւում են Առաջին երկնքում գտնուող Աթոռները, Քերովբէները եւ Սերովբէները, միջնորդաւորուած կերպով՝ Երկրորդ երկնքում գտնուող Տէրութիւնները, Զօրութիւնները եւ Իշխանութիւնները, իսկ յետոյ՝ Երրորդ երկնքում գտնուող Պետութիւնները, Հրեշտակապետերը եւ Հրեշտակները: Իւրաքանչիւր կարգ իրականացնում է նուիրապետական սանդղակում իրեն շնորհուած քահանայապետական պաշտօնը, որի էութիւնը փառաբանութիւնն ու բարեխօսութիւնն է[2]: Սուրբ Գրոց մէջ մասնաւոր ուշադրութեամբ է խօսւում քերովբէների եւ սերովբէների մասին: Այսպէս, սերովբէները [այրող] Աստուծոյ Աթոռի շուրջ խմբուած երկնային էակներ են[3], որոնք վեց թեւ ունեն: Որպէսզի չայրուեն աստուածային փառքի հրեղէն լոյսից, երկու թեւով նրանք ծածկում են իրենց երեսը, երկու թեւով՝ ոտքերը, իսկ երկու թեւով էլ թռչում են՝ օրհներգելով եւ փառաբանելով Աստծուն. «Սուրբ, Սուրբ, Սուրբ՝ Տէր զօրութեանց, լի է ամենայն երկիր փառօք Նորա»[4]: Փառաբանական նոյն այս դերն ունեն քերովբէները, որոնք զանազան կերպարանքներով են ներկայանում Աստուածաշունչ մատեանում. մե՛րթ որպէս պատկերներ վարագոյրների վրայ[5], մե՛րթ որպէս «միակերպարան, երկկերպարան կամ չորեքկերպեան»[6], կամ էլ որպէս երկթեւեան, չորեքթեւեան, վեցթեւեան էակներ»[7]: Սակայն «բոլոր այս նկարագրութեանց մէջ կատարեալն եւ թեւաւոր քերովբէն է մարդակերպարան, լի աչօք եւ չորեքգլխեան, այսինքն՝ մարդու,

1 Տե՛ս Ա. Տէր—Միքելեան, նշուած աշխ., էջ 95—97:
2 Երկնային քահանայապետութեան պատճէնը, նմանակն է եկեղեցական քահանայապետութիւնն իր նուիրապետական համակարգով. այս մասին մանրամասն տե՛ս ս. Դիոնեսիոս Արիսպագացու «Յաղագս երկնային քահանայապետութեան», «Յաղագս եկեղեցական քահանայապետութեան» աշխատութիւնները (Աշտոցի անա. Մատենադարան, ձեռ. N 110, թերթ 1բ—351ա: Քննական բնագիրը՝ Ռ. Թոմսոնի աշխատասիրութեամբ. "Corpus Scrip Christionorum Orientablum", V. 466, Scriptores Armeniaci, t. 17, Lovanit, 1987):
3 Տե՛ս Բ Օր. Դ 24, Եբր. ԺԲ 29:
4 Տե՛ս Եսայի Զ 2—3, «Բառարան Սուրբ Գրոց», էջ 496:
5 Տե՛ս Ելք ԼԶ 35, ԼԷ 7, Եզեկ. ԽԱ 25:
6 Տե՛ս Եզեկ. Ժ 14:
7 Տե՛ս Գ Թագ. Զ 27, Եզեկ. Ա 6, Յայտ. Դ 8:

առիւծու, եզան եւ արծուոյ գլխով ամէն կողմ դարձող անիւներով եւ արագ՝ իբր փայլակն երկրիս, պերճագոյն եւ հզօրագոյն արարածոց կերպարանօք»[1]:

Աստուածաշնչի այս նկարագրութիւնների վրայ է հիմնուած Արեւելաքրիստոնէական եւ Հայ Առաքելական Եկեղեցու հրեշտակաբանութիւնը: Այսպէս, իր նշանաւոր աշխատութիւններից մէկում, անդրադառնալով *Սերովբէ* եւ *Քերովբէ* անունների ստուգաբանութեանը, ս. Դիոնեսիոս Արիսպագացին գրում է. «Զսրբոցն սերովբէից անուանակոչութիւն ասեն, որք զեբրայեցւոյն գիտեն. թէ կա՛մ կիզիչս երեւեալ, կա՛մ ջեռուցիչ, իսկ զքերովբէիցն՝ կա՛մ բազմութիւն գիտութեան, կա՛մ հեղումն իմաստութեան»[2]: Մօտիկից հաղորդակցուելով Աստուծոյ հրկէզ լոյսին՝ նրանք համակւում են Աստուածութեան փառքի կրակով եւ դառնում այրող, կիզող: Սակայն, լինելով հրեղէն միտք եւ իմացութիւն, գտնուելով իսկ անդրանցական ոլորտում, չեն կարող ճանաչել Աստուծոյ էութիւնը: Հրեշտակների ծագման, բնոյթի, գործունէութեան եւ կարգավիճակի վերաբերեալ այս եւ նման մեկնաբանութիւնների անմիջական ազդեցութեամբ են ստեղծուել շարականների եւ տաղերի ներքոբերեալ հատուածները, որոնցում հանճարեղօրէն ներհիւսուած են նրանց գործունէութեան անդրանցական եւ յայտնութենական մակարդակների նկարագրութիւնները.

Նորաստեղծեալ Բանն յանէից,
Ի սկզբանէ զերկինս երկնից
Եւ զերկնային զօրս անմարմնոց
Իմանալեացն զուարթնոց
Եւ զգալի տարերց քառից,
Հակառակաց միաբանից,
Որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւնն անճառելի[3]*:*

Ահա «Սրբոց հրեշտակապետացն Միքայէլի եւ Գաբրիէլի ամենայն երկնային զօրացն» նուիրուած կանոնը.

Որ յանէից ստեղծեր զպաշտօնեայս Քո
Ի հուր կիզելոյ, Հո՛ւրդ անեզական,
Ընդ նոսին օրհնեմք զՔեզ եւ մեք՝ Հողեղէնքս:
Որ բանիւ գոյացուցեր զիննեակ դասս Հրեղինաց, Բանդ ի սկզբանէ,
Ընդ նոսին գովեմք զՔեզ եւ մեք՝ Հողեղէնքս:

1 «Բառարան Սուրբ Գրոց», էջ 577
2 «Բազմավէպ», 1875, էջ 121
3 [Երգ Առաջնոյ Աւուր Միաշաբաթին], Շարական, էջ 583

Որ արարեր յոգիս իմանալի զհրեշտակս Քո, Հոգի՛ Աստուծոյ,
Ընդ նոսին քարեբանեմք զՔեզ եւ մեք՝ հողեղէնքս:
Անդադար յերկինս օրհնաբանո՛ղք Հօր երկնաւորի՝
զո՛րք լուսեղինաց,
Բարեխո՛ս լերուք ընդ մեղաւորացս:
Քաղցրաձայն երգով զոհաբանո՛ղք Որդւո՛յն միածնի՝
Դա՛նք հրեշտակաց, բարեխո՛ս լերուք:
Անլռելի հնչմամբ բարեբանո՛ղք Հոգւո՛յն ճշմարտի՝
Հո՛յլք հոգեղինաց, բարեխո՛ս լերուք:
Երեքսրբեան ձայնիւ փառաբանո՛ղք Սուրբ Երրորդութեանն՝
Գո՛ունդք սերովբէից, բարեխո՛ս լերուք:
Անսկի՛զբն Հայր, ահագին Լո՛յս անճառելի,
Որ ի լուսոյ լոյս ներգործեալ զիմանալեաց գոյական,
ԶՔեզ օրհնեմք, Աստուա՛ծ հարցն մերոց:
Էակի՛ցդ Հօր, ի լուսոյ լո՛յս ծագումն Որդի,
Որ արարեր ի պաշտօն փառաց Քոց զհրեղինացն զօրս,
ԶՔեզ օրհնեմք...

Երկնային զուարթունք, հրեշտակք եւ հրեշտակապետք,
Վերին պետութիւնք, բա՛ր՛ր արարէք զՀայրն երկնաւոր:
Անմարմնոց բազմութի՛ւնք, իշխանութի՛ւնք, զօրութի՛ւնք,
Անմա՛հ տէրութիւնք, բա՛ր՛ր արարէք զՔրիստոս թագաւորն:
Վեցթեւեան սերովբէք, քառակերպեան քերովբէք,
Աթո՛ռք Անեղին, բա՛ր՛ր արարէք զՀոգին ճշմարիտ:
Որ ի հրեղէն զօրաց երկնից փառաբանիս, Աստուա՛ծ,
Որով զերկնային անապական աստուածային զշնորհս հեղեր
յորդիս Ադամայ,
Աղաչանօք սոցա ողորմեա՛ մեզ, Աստուա՛ծ:
Երեւելով հոգեղինացս անհիւթականքն ի ձեւ մարմնոյ,
Որք եւ ծանուցին մարգարէիցն զիսորհուրդ Քո զալստեանդ՝
Բազմապատիկ տեսլեամբք օրինակելով.
Աղաչանօք սոցա...

Անճառելի տնօրէնութեանդ Քո աւետաբերք
Առաքեցան Գաբրիէլ եւ Միքայէլ անմարմնական դասուքն
իւրեանց յերկրի սպասաւորելով...
Անմահ Արքային անարուեստ Աթո՛ռք,
Բազմաչեայ Քերովբէ՛ք, սրբասաց ձայնիւ Սերովբէ՛ք՝
Առաջին յերկինս քահանայապե՛տք,
Բարեխո՛ս լերուք առ Տէր վասն Եկեղեցւոյ...
Բարձրելոյն փառաց բարձող Տէրութիւնք,
Անյաղթելի Զօրութիւնք, վեհագոյն Իշխանութիւնք՝

Երկրորդին դասուք քահանայապետք...
Գերագոյն էին Պետութիւնք վերին,
Հրեշտակապետք երկնաւորք, հրեշտակաց զինուորութիւնք՝
Երրորդի յերկինս քահանայապետք...
Երկնաւոր հօտ ընտրեալ, զոր Հովիւն քաջ թողեալ յերկինս
Եւ եկեալ ի խնդիր մեզ՝ մոլորելոցս,
Որով լցեալ զթիւ հարիւրոցդ,
Արար ուրախութիւն ի յերկինս երկնաւորացդ.
Աղաչեմք զձեզ, բարեխո՛ս լերուք...
Տեսանողք Անտեսին խորհրդածուք խորոցն Աստուծոյ,
Որք իջեալք ընդ Միածնին սպասաւորել տնօրէնութեանն,
Ի ծննդեանն աւետաւորք հովուացն
Եւ կանանցն իւղաբերից կենաց քարոզք զկենդանւոյն,
Աղաչեմք զձեզ...
Պահապանք աշխարհի, բանա՛կք Տեառն՝
Շուրջ զերկիւղածովք, բարեկամք ազգի մարդկան,
Միջնորդք մահու եւ յարութեան Միքայէ՛լ եւ Գաբրիէ՛լ մեծք,
Որք կայք միշտ առաջի Ամենասուրբ Երրորդութեանն,
Աղաչեմք զձեզ...[1]

Բանաստեղծական մանրապատկերի մէջ ներկայացուած աստուածաբանական մի աշխատութիւն է յիշեցնում նաեւ ս. Ներսէս Շնորհալու «Քարոզ սրբոց հրեշտակապետացն» տաղը.

Աթոռք հանգստեան Անկարօտիդ բազմելոյ՝
Ցանծայր իմաստիցդ առեալ լցմամբ գիտութեան,
Բազմաչեայ գունդ Քերովբէից մերձ Աստուածութեանդ,
Սրբասաց Սերովբէք, յորմէ գոյացան հուպ եղեալք՝
Պակուցմամբ առ նոյնդ կայանիւ.
Տիրապէս Տէրութիւնք, Զօրութիւնք, Իշխանութիւնք
Ցիշխանաբար Իշխողէդ ստեղծան,
Միջինք երկնայնոցն Պետութիւնք, Հրեշտակապետք
եւ Հրեշտակք
Անհիւթիցդ ծայր եւ կնիք՝ ի Քէն գոյացան.
Իննեակ դասուցդ անմահիցդ
Կարգեցեր երկու քահանայապետութիւնս,
Կատարիչ, լուսաւորիչ, մաքրիչ առողս եւ բաշխողս,
Զգիտութիւն ծորեա միջոցաւ, զլոյս՝ նախնեօքն առ վերջինս.
Շնորհեցեր սահման յետնոցն յառաջինս դառնալ

1 [Երգ Առաջնոյ Աւուր Միաշաբաթին]. Շարական. էջ 536—539

Նմանիւ ըստ կարութեան.
Եւ զինոքն ի Քեզ սիրով միութեամբ Արքայիդ անմահի
Կարգեցեր հազարք հազարաց եւ բիւրք բիւրուց՝
Առ դուրս Հզօրիդ միշտ արթուն զինուորս ահաւորք.
Ընկալ, Մարդասէր, բարեբար կամօք զնուէր մաղթանաց
երկրածին մարդկան՝
Յօր յիշատակի երկնային անմարմին զուարթնոցն, աղաչեմք:
Մեծահրաշ բերկրանօք ի սէր յարապէս ցնծան
Արարչիդ հոյլք հոգեղինացն անլոյծ խնդութեամբ,
Վերակնեալք անտես տեսլեամբ տուփիւ բաղձանօք,
Իբր ի սկիզբն ի Քեզ, ի պատճառ մասանց բոլորից.
Ստեղծողիդ պարգեւաց սպասեալ հոսման իմաստից վտակաց,
Զնոսին արբուցող որպէս զբուրաստան գետոյ վայելուչ,
Յորմէ լցեալք անյագութեամբ եւ միշտ ի նոյն ծարաւեալք՝
Որպէս շուշան ի ցող գարնանոյ.
Զառացեալն ի Քէն ծորմամբ գիտութեան
Անխանտաբար բաշխեն յետնոցն առաջինքն ի Քէն
Բարեդրեալ հրամանաւ,
Ըստ հասման ինքնութեանց բերեալք զԱնհասիդ
Յինքեանս օրինակ անկերպ կերպարանեալ նմանիւ.
Ընկալ, Մարդասէր, բարեբար կամօք զնուէր մաղթանաց
երկրածին մարդկան
Յօր յիշատակի երկնային անմարմին զուարթնոցն, աղաչեմք[1]*:*

Հրեշտակների անդրանցական գործունեութեան այս նկարագրութեանը յաջորդում է Աստուածաշնչի բազում դրուագներով յայտնի նրանց յայտնութենական գործունեութեան տարփողական պատկերագրումը: Ահա՛ այդ դրուագներից մի քանիսը.

Սրովբէն հրանիւթ զկենացն տունկ պահէր,
Զի մի՛ պատրեալն Ադամ կերեալ մշտասցի մահուամբն
անյաջորդ...

Յակոբայ սանդղոյն ելողք
Եւ իջիչք յերկնից յաշխարհ առ մարդիկ...

Հրաշալի տեսլեամբ երեւեալք Մովսէսի՝
Ի վեր, քան զկարծիս ի մորենւոջն անկէզ բորբոքմամբ...[2]

Առաջնորդք Յեսուայ յերկիրն աւետեաց

1 Ներսէս Շնորհալի, «Տաղեր եւ գանձեր», էջ 309—310
2 Նոյն տեղում, էջ 310—311

Ի տիպն երկնից գաւառացդ,
Որոց Միքայէլ իշխան ըստ Մովսէսի բաժանմանցն,
Ըստ ազանցն թուելոց
Սպառնման արքային Դաւթի հրեղէն սուսերաւ,

Ի սաստ բարկութեան առաքեալ ի Քէն զուարթունն...

Կարք քառակերպեան Եզեկիէլի երեւեալք,
Յորոյ վերայ բազմեալ Աստուածդ աստուծոց.
Պատժողք արանց հեստելոց եւ դրիչք նշան ի ճակատ
արդարոցն
Հրանիւթ անուօք զՀեղիաս յաշխարհն ամբարձին կենդանեաց,
Եւ բիւրք բանակէին շուրջ զԵղիսէիւ.
Եսայեայ ունելեօք բերեալ սրովբէն կայծակն
Ի շրթունս մաքրիչ պղծութեանց համօրէն դասուց տեսողացն...

Ի սկզբան Անեղիդ եղելութեան մարմնով անճառ Հօր,
Ծննդեամբ Որդւոյդ եւ Բանիդ սոքա եղեն սպասաւորք.
Պետն հրեղինաց Գաբրիէլ բերեալ աւետիս Մարիամու՝
Ծնանիլ կուսութեամբ զՏէրդ եւ զԾնեալդ աներբ ի Հօրէ...[1]

Վերջում, խօսելով հրեշտակների պահպանական առաքելութեան մասին, Շնորհալին հետեւեալ տողերն է հիւսում.

Պահապան մեր լերուք ի յելս եւ ի մուտս, ի կալս եւ ի գնալս,
Ի գիշերի եւ ի տուընջեան, յարթնութեան եւ ի ննջման՝
Բանակել շուրջ զմեօք՝ զերկիւղածովքս Աստուծոյ,
Յօր մահու մեր զհոգիս քաղցրութեամբ աւանդողք,
Հեզաբար լերուք երեւեալք, որպէս հարք՝ առ որդիս.
Ընդ խաւարային զքնաւից
Զերծուցէք զհոգիս ընդ իշխանութիւն ի հոյլս արդարոց.
Զքանսարկուն, բարեկամք մեր, ատեցէք
Եւ զմեզ անվրէպ ի ծոցն ածէք Աստուծոյ...[2]

(շարունակելի)

1 Ներսէս Շնորհալի, «Տաղեր եւ գանձեր», էջ 312—313
2 Նոյն տեղում, էջ 320—321



ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

Ս. ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Ս. Յովհան Մանդակունին ծնուել է Արշամունեաց գաւառի Մախնոս գիւղում մօտ 420 թ. եւ, ինչպէս ցոյց է տալիս մականունը, սերում է յայտնի նախարարական ընտանիքից: Նախնական ուսումը ստացել է կաթողիկոսարանի դպրոցում եւ ապա ուսանել հաւանաբար Յունաստանում: Գիւտ կաթողիկոսի մահից անմիջապէս յետոյ բարձրացել է հայրապետական Աթոռին եւ 12 տարի (478—490 թթ.) վարել Հայ Եկեղեցու վերին տեսչութիւնը:

Մանդակունու հայրապետութեան առաջին շրջանը (478—485 թթ.) սերտօրէն առնչուած է Վահանեանց պատերազմի հետ. սուրբ հայրապետի ուղղակի ներկայութիւնը, աղօթքներն ու օրհնութիւնը ոգեշնչում եւ անընկճելի կորով էին հաղորդում հայ ռազմիկներին: Մէկ անգամ նա նոյնիսկ վիրաւորուել է մարտի ժամանակ, երբ, ձիու վրայ նստած, Վահանի գնդի մէջ էր... Այս պատերազմի յաղթական ուրախից յետոյ, որով հաստատուեց Վահան Մամիկոնեանի մարզպանութիւնը, Մանդակունին ձեռնամուխ է լինում աստուածպաշտական կարգերի հաստատման դժուարին գործին. ս. Թարգմանիչների ծիսական գործունէութիւնն անաւարտ էր մնացել տեւական պատերազմի պատճառով: Մանդակունին մեր ծիսական ժառանգութեան (Ժամագիրք, Մաշտոց, Պատարագամատոյց) առաջին ամբողջացնողն ու համակարգողն է. սրա լաւագոյն վկայութիւնն է Ժամագրքի վերատեսութիւնը, ուր նրա անունը դրուած է Սահակի, Մեսրոպի, Գիւտի անունների կողքին:

Մանդակունու անզուգական հայրենասիրական եւ եկեղեցաշունչ գործունէութեան աղբիւրն է նրա հոգու աստուածամերձ ընտանութիւնը, որի անմիջական արդիւնքն են նրա ներշնչական—խրատական ճառերը: Դրանք հոգեւոր կեանքի ազդու կոչեր են, ունեն խօսքի ներաթափանց զօրութիւն եւ զարմանալի այժմէական անդրադարձներ... Արեւելահայերէնով ներկայացնում ենք առաջին չորսը*՝ «Թուղթ յանցաւոր վարքի խոստովանութեան մասին», «Թուղթ ապաշխարութեան մասին», «Թուղթ պահքի պնդութեան մասին», «Ընդունելի եւ անընդունելի աղօթքի մասին»**:

Սուրբերի ժառանգութեան իւրաքանչիւր բացայայտում առնչութիւն է Յաղթական Եկեղեցու խորհրդական իրականութեան հետ, որի ներկայացուցիչն է այս իսկապէս զարմանալի եւ աստուածապարգեւ հայրապետը: Համոզուած ենք, որ սոյն ճառերի հրապարակումը կօգնի մեզ առաւել մերձաւորուել նրա սրբարար աւանդին եւ կենդանի բարեխօսութեանը:

ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆ

---

* Տե՛ս «Տեառն Յովհաննու Մանդակունւոյ հայոց հայրապետի ճառք», Վենետիկ, 1836, էջ 1—34:

** Ճառերի արեւելահայերէն թարգմանութեան ամբողջական հրատարակութիւնը շուտով լոյս կտեսնի «Գանձասար» մատենաշարով:

Ս. ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Ա

ԹՈՒՂԹ ՅԱՆՑԱՒՈՐ ՎԱՐՔԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ովքեր ունեն Սուրբ Հոգու ցանկութիւնը եւ աստուածային սիրոյ բաղձանքը, [նրանք] սպասում են Աստուծոյ Որդու գալստեանը եւ փափագում անմահ փառքը, միշտ խորհում վերինի մասին եւ հանապազ տենչում այնտեղի ուրախութիւնը, ուրանում, արհամարհում առօրէական ցաւերը եւ օրըստօրէ վեր բարձրանում ոչ միայն հաւատքի ճշմարտութեամբ, այլեւ՝ վարքի առաքինութիւններով, միշտ հսկում սրտի սրբութեամբ եւ հանապազ պատրաստ լինում հոգիների անարատութեան համար. նաեւ ընթանում եւ ապրում են աշխարհում՝ ոչ ըստ այս աշխարհի հաճոյքների, այլ ինչպէս այլ աշխարհի օտարականներ, թափառականներ եւ մանուկներ նեղւում ու մաշւում են բաղում կարիքներից. [բայց] զօրանում այն յոյսով, թէ՝ «Ուր Ես եմ, այնտեղ եւ Իմ պաշտօնեան կլինի» [Յովհ. ԺԲ 26]: Այսպիսին են հոգեւորների պատիւները եւ աստուածասէրների պարգեւները:

Իսկ ես չարի բաղում նետերից վիրաւորուեցի եւ յաղթուելով պարտաւորուեցի. խոստովանում եմ [իմ] պարտութիւնը եւ ծանուցում իմ ամբարշտութիւնը, պատմում եմ իմ անթիւ մեղքերը եւ ողբում իմ ահեղ անօրէնութիւնները: Քանզի վէրքերիս ցաւերը հարկադրում են ինձ պատմել եւ իմ աղէտների վարանումները ստիպում են ինձ պաղատել, վէրքերիս դեղ որոնել եւ հանապազ արտասուքի վտակներ խնդրել, որով մեղքերս լամ եւ վէրքերս բժշկեմ: Որը մեծ բաղձանքով հանապազ ցանկանում եմ եւ ըղձալի տենչանքով յարաժամ հայցում՝ ողբալու այն մարգարէական [խօսքերով], որպէսզի, նրա հետ ձայնակցելով, ողբայի եւ արտասուելով միշտ բարբառէի գորովի աղերսալի ձայնը՝ ասելով, թէ՝ «Մէկն իմ գլուխը բաղում ջրերի շտեմարաններ դարձնէր եւ աչքերս՝ արտասուքների յորդ աղբիւրներ» [Երեմ. Թ 1]. եւ միշտ օր ու գիշեր անդադար լաց լինէի՝ դառնապէս արտասուելով իմ ամբարշտութեան համար, վարանելով իմ չարիքների համար, լալով իմ անօրէնութիւնների բազմութեան համար, միշտ ողբալով իմ մեղքերի համար, հեծելով իմ անբաւելի յանցանքների համար, հառաչելով իմ անթիւ պղծութիւնների համար, կոծելով իմ ահեղ կործանման համար եւ դառնապէս ողբալով տանջանքների աղէտների համար: Քանզի յանցանքներիս խղճմտանքը հանապազ հեղձում է ինձ, եւ չարիքներս յարաժամ չարչարում են ինձ,

երը նայում եմ իմ անթիւ մեղքերի բազմութեանը եւ ահաւոր ախտերի անօրէնութեանը, որ միշտ մաշում է մարմինս, խարշատում[1] ոսկորներս, ճմլում սիրտս, գալարում որովայնս, եւ իմ անձը դողում է երկիւղով, եւ բոլոր անդամներս հանապազ հալւում են: Քանզի վարանում եմ իմ վէրքերի ցաւերի համար, եւ իմ միտքն ապշած յամառում է, քանի որ գիտեմ բարին եւ անում եմ չարը, իմանում եմ արդարութիւնը եւ գործում անօրէնութիւնը, խօսում եմ արդարութեան եւ խորհում անիրաւութեան մասին, սուրբ եմ երեւում եւ մերձենում աղտեղութիւնների, ճանաչում եմ ճշմարտութիւնը եւ մոլորութեան յարում, տեսնում եմ լոյսը եւ փափագում խաւարը:

Արդ, ո՞վ պիտի լաց լինի ինձ համար եւ ո՞վ պիտի ողբայ մեղքերով մեռածիս եւ անօրէնութեամբ կործանուածիս, ամբարշտութեամբ խաւարի խորքերի եւ անդունդների մէջ ընկածիս համար, քանզի չարիքներս չարչարում են ինձ, եւ պղծութիւններս՝ սպանում: Եւ արդ, ի՞նչ կերպով լաց լինեմ կամ ինչպէ՞ս ողբամ իմ անթիւ մեղքերի բազմութեան համար, որ հիւանդացել եմ այս յանցանքներից եւ իմ ծուլութեամբ ցաւահարուել: Քանզի ինձ անմահութիւն խոստացաւ, իսկ ես մնում եմ այս մահուան մէջ. հրաւիրեց դէպի վեր՝ երկինք, իսկ ես իջնում եմ դժոխքի անդունդները. պատրաստեց փափագելի դրախտը, իսկ ես ընտրեցի խոցոտիչ փուշը. նաեւ [պատրաստեց] մշտնջենաւոր կեանքը եւ փառքը, իսկ ես ինձ մեղքով սպանեցի: Եւ արդ, այս ամենի համար ի՞նչ սուգ բաւական կլինի կամ ողբալու ի՞նչ ողբեր, արտասուքների ինչպիսի՞ լալում կամ պաղատանքների ինչպիսի՞ հառաչանքներ. ինչպիսի՞ աշխատութիւններ կամ առաքինութեան ի՞նչ ջանքեր կբժշկեն իմ վէրքերը, քանզի անթիւ ու անհամար են: Եւ իմ անձը հեղգում է ծուլութեամբ, թուլանում՝ ահեղ մեղքերի բազմութիւնից լքուած եւ, գեհենի անշէջ հրից սարսելով, սարսափում, քանզի, յիշելով Ահեղ Դատաստանի մեծ Օրը եւ Բեմի սոսկալի արհաւիրքները, հոգիս դողում է երկիւղով, եւ միտքս ահով սարսափում, սիրտս ողբալ է պահանջում, եւ աչքերս արտասուքներ են բաղձում. ահեղ Ատեանի ահը շտապեցնում է ինձ ապաշխարել, իսկ չարի պատրանքները հանապազ ինձ ծուլացնում են: Եւ ահա նեղուած եմ երկու կողմից եւ ամբողջութեամբ տագնապած, քանզի օրերս միշտ մեղքերի մէջ անցկացրեցի եւ կեանքս անօրէնութեան մէջ ծախսեցի, մէկին չարարեցի բարին եւ երբէք չստացայ արդարութիւնը, այլ, ապականելով բոլոր անդամներս, կորստեան մատնեցի բազմադիմի յանցանքներում: Բերանս պղծեցի բամբասանքներով եւ լեզուս աղտոտեցի դատարկ խօսքերով. ունկս [տուեցի] ի լուր չարութեան, աչքս՝ նայելու աղտեղիների, սիրտս՝ զգալիր խորհուրդներով եւ իմ անձը հանապազ վարեցի անպարկեշտ ընթացքով, մարմինս ամենեւին առողջ չպահեցի,

1 խարշատել — չարաչար խաշել, այրել

սիրտս՝ ճշմարիտ, քանզի մեղքերով ցաւերի մէջ եմ եւ յանցանքներով հիւանդութիւնների: Ցանկանում եմ զղջալ, խոստովանել, իսկ թշնամին յապաղեցնում է. ցանկանում եմ մտնել ապաշխարութեան վարքի մէջ, իսկ թշնամին ծուլացնում է. ցանկանում եմ Աստուծոյ առաջ ընկնել, իսկ թշնամին հեռացնում է. ցանկանում եմ պաղատել, աղերսել, աղաչել, իսկ թշնամին կարծրացնում է. ցանկանում եմ ողբալ ու արտասուքներով լալ, իսկ թշնամին ցամաքեցնում է. ցանկանում եմ ողորմել աղքատին, իսկ թշնամին յիշեցնում է իմ աղքատութիւնը. ցանկանում եմ մաշել ինձ պահքով, իսկ թշնամին յիշեցնում է ինձ մարմնով տկարանալը. ցանկանում եմ խոնարհուել եւ հնազանդուել եղբօրը, իսկ սիրտս խստանում է ամբարհաւաճութեամբ. քանզի ինչով որ կարող եմ մեղքերս քաւել, նրա դէմ պատրաստուած եմ գտնում թշնամու չար որոգայթները:

Եւ արդ, բոլորովին նեղուած եմ, եւ հոգիս հանապազ հեծում է. յիշելով մեղքերիս բազմութիւնը՝ երկիւղով դողում եմ եւ վարանում խորհուրդներիս զազրութիւնից. անսրբութիւններս տեսնելով՝ ողբում եմ հանապազ եւ, [իմ] անօրէնութիւնները յիշելով, ինձ վրայ են հասնում տարակուսանքների արհաւիրքները, եւ վշտերի ցաւերն են ինձ զարկում: Քանզի միշտ տեսնում եմ ահեղ Ատեանի ահը եւ մեծ եւ ահաւոր Բեմի արհաւիրքները, փողի ահեղ հնչումը, հրեշտակապետի ահազդու բարբառումը, ծովածաւալ հրի բորբոքումը եւ ծաւալումը ողջ երկրով մէկ, արդարների վեր ելնելը եւ մեղաւորների մնալը, բոլոր մեղաւորների հաւաքուելը եւ գործերի ու խօսքերի հաշիւ տալը, Դատաւորի սոսկալի դէմքը, Դատաստանի աններելի Օրը, մեղաւորների չար ամօթը եւ դառն, անվախճան յաւիտենական տանջանքները: Եւ այս ամենի պատճառով հեծում ու դառնապէս լալիս եմ՝ անդադար ողբալով իմ մեղքերը, քանզի յոյժ ահեղ եմ տեսնում գեհենի արհաւիրքները եւ սոսկալի՝ աղէտների տեսչութիւնը, ուր չեն օգնում ո՛չ ունեցուածք, ո՛չ էլ՝ որեւէ աղաչանք, օգուտ չեն տալիս ո՛չ լաց, ո՛չ էլ՝ արտասուքներ, պէտք չեն ո՛չ հեծութիւններ, ո՛չ էլ՝ հառաչանքներ. ո՛չ արդարներն են աղերսում, ո՛չ էլ սուրբերը բարեխօսում մեղքով ընթացածների համար: Ծանօթներին անծանօթ ես, մերձաւորներից՝ հեռու, սիրելիների համար ատելի ես եւ բարեկամների համար՝ թշնամի, ամենեւին ամայի ես եւ օտար՝ բոլորին: Ոչ մէկի չես կարող աղաչել, ոչ մէկը քեզ չի ճանաչում. ողբում եւ ողորմագին լալիս ես, եւ ոչ մէկը քեզ վրայ չի խոնարհւում. ծարաւից չորացած՝ տապակւում ես, եւ մէկը քեզ չի ողորմում. հանապազ այրւում ես եւ ամենեւին հնար չես գտնում խորովումից [փրկուելու]. միգապատուած ես հնոցների կրակի մէջ եւ աղջամղջով պատուած՝ աննշմարելի գեհենի մէջ, գարշահոտ եւ որդեռաց խաւարային գուբերում եւ ներքին տարտարոսներում, ներքեւից՝ հրով բորբոքուած, իսկ վերեւից՝ ահեղ հրահոսանքներ, որ յորդալով իջնում են հրեղէնների յորդահոս գետերից, ուր շշաքփելի խաւարն է: Եւ ամենեւին չես կարող տեսնել որեւէ մէկին, քանզի

մթապատուած ես սեւաթոյր մէգով եւ գցուած՝ կայծակների մէջ. անդադար լալիս ու ողբում ես եւ միայն քո վարանումներն ես կոծում, քանզի ահեղ աղէտների ցաւերի պատճառով միայն քեզ ես համարում չարչարանքների տանջանքների մէջ: Հանապազ հեծում ես եւ դառնապէս լալիս՝ անհանգիստ ու անմխիթար. վշտեր, նեղութիւններ, մշտնջենաւոր տառապանքներ, անդադար տանջանք եւ աններելի տագնապում, անպատում ցաւեր եւ աննման կսկիծներ, ամէն ինչից վարանումներ եւ միայն տարակոյսներ: Քանզի այնտեղ միայն ճիչ ու վայ է լսւում, այնտեղ թախանձանքներ ու աղերսներ են, միայն լսում ես հեծեծանքներ ու հառաչանքներ. հեծել ու տագնապել, անդադար լալ ու ողբալ եւ ողորմութիւն չգտնել, այլ միշտ խաշւում ես վշտերի մէջ, հանապազ մաշւում կարօտութեան մէջ արտասուքներով ու պաղատանքներով հանդերձ, որոնք ոչ ոք չի լսում, եւ ոչ էլ պաղատանքներն են ընդունւում, քանզի ուշ է արդէն: Այլ այստեղ է [պէտք] լալ եւ ողբալ, այստեղ է [պէտք] հեծեծել ու հառաչել: Այստեղ է [պէտք] աղաչել, աղերսել ու թողութիւն խնդրել, քանզի այստեղ են արտասուքների շահը եւ աղօթքի օգուտը, ողորմութեան սերմերն ու ապաշխարութեան պտուղը, հառաչելու եւ ողորմութիւն խնդրելու ժամանակը:

Եւ արդ, այստեղ մարմնական սուղ նեղութիւնները փոխանակենք անապառ տանջանքների ցաւերի հետ, որպէսզի սակաւ պահքի, այս աշխարհի ջանքերի միջոցով փրկուենք գեհենի ահեղ կայծակներից եւ բորբոքուած բոցից. աղօթքի փոքր-ինչ տքնութիւնների միջոցով փրկուենք հրեղէնների յորդահոս գետերից, սուղ տրտմութեամբ փրկուենք ահեղ հեոցներից եւ կրծող չարաժանիք որդերից. այստեղ հեծեծելով ու հառաչելով այնտեղ փրկուենք դառը տանջանքներից եւ աննշոյլ խաւարից, այստեղ մի փոքր լալով եւ արտասուելով՝ այնտեղ փրկուենք միշտ լաց լինելուց եւ հանապազ ողբալուց եւ այստեղի մի ապաշխարութեան փոխարէն այնտեղ փրկուենք միգապատ խաւարից, դառը մահից եւ յաւիտենական ամօթից:

Եւ արդ, այս ամէնը խորհրդածելով, ո՛վ անձ իմ բազմամեղ, հեղգ մի՛ եղիր պահքից, մի՛ ծուլացիր աղօթքից, մի՛ դադարիր զղջալուց, մի՛ ուշացիր խոստովանութիւնից, մի՛ վհատուիր ապաշխարութիւնից, մի՛ յոգնիր ողորմութիւնից, մի՛ դադարիր լաց լինելուց, մի՛ հանգստացիր ողբալուց, մի՛ սպասիր վախճանին, մի՛ յուսայ ծերութեան վաստակի վրայ, մի՛ համարիր, թէ աշխարհում բազում տարիներ ես [անցկացնելու], մի՛ կարծիր, թէ յետոյ կապաշխարես, [քանզի] գող է թշնամին եւ խաբող. խաբում է քեզ եւ, այսպէս ուշացնելով, կործանում: Ասում ես՝ այժմ կգործեմ, ապա կապաշխարեմ. ասում ես՝ մանկութեանս տարիներին կհանգստանամ, իսկ ծերութեանս տարիներին կապաշխարեմ. ասում ես՝ այսօր կապրեմ, կվայելեմ, իսկ վաղը կպահեմ. ասում ես՝ այժմ կյղփանամ, ապա կպարկեշտանամ. ասում ես՝ այժմ կժողովեմ, ապա կսփռեմ աղքատներին. այսպիսին են թշնամու պատրանքները, որոնցով խաբում եւ կորստեան է մատնում մեզ՝ տարէցտարի բռնելով եւ ժամ առ ժամ ձգձգելով բարին գործելը:

Եւ արդ, չխաբուենք այսպիսի պատրանքներով. անյայտ է վախճանի օրը, անտեսանելի է ելքն այս աշխարհից: Վրայ է հասնում երկունքի պէս, եւ չես հասցնում զղջալ ու ապաշխարել. գիշերով վրայ է հասնում գողի պէս եւ չի թողնում կոծել ու ապաշխարել. թռչնորսների թակարդի պէս բռնում է արագ եւ չի տալիս լաց լինել, հեծել եւ ողորմութիւն գործել. առիւծի պէս յարձակւում է, մռնչում եւ յափշտակում, եւ բոլորովին չես հասցնում: Եւ արդ, անձ իմ, ի՞նչ պիտի անես կամ ի՞նչ պիտի գործես դո՛ւ, որ խորհում ես բարին եւ չես կատարում, կամենում ես ողորմել եւ յապաղում ես, ասում ես՝ [պէտք] է զղջալ, եւ Դաւթի նման արտասուքներով չես թրջում մահիճդ. [նա] նաեւ ասում է. «Մոխիրը որպէս հաց կերայ եւ իմ ըմպելիքն արտասուքով խառնեցի» [Սաղմ. ՃԱ 10]. եւ ողջ գիշերն անդադար դառնապէս հեծեծում ու լալիս էր: Ցօժար ես պահելու եւ նինուէացիների պէս խարազանի ու մոխրի մէջ չես մտնում. նաեւ [Գրքում] ասւում է, [որ] դարձան բոլոր չար ճանապարհներից եւ անօրէն գործերից, որ գործում էին [տե՛ս Յովն. Գ 5-8]: Ախորժում ես արտասուել ու լալ եւ պոռնիկի պէս խանդաղատագին չես ողբում [տե՛ս Ղուկ. է 37-50], կամենում ես ողորմել նեղեալներին եւ ո՛չ՝ այրի կնոջ պէս, որ ամէն ինչ զոհեց [Մարկ. ԺԲ 41-44]:

Արդ, այսպիսին է ապաշխարութեան ջերմութիւնը, որ ո՛չ ունեցուածք, ո՛չ էլ մարմնի ճիգեր է խնայում, այլ նեղում, մաշում ու տառապեցնում է եւ միայն փնտրում է մեղքերի թողութիւն եւ հոգիների ախտերի բժշկութիւն, որով մենք նոյնպէս քաւենք մեր մեղքերը եւ բժշկենք մեր հոգիների վէրքերը: Քանզի մեղքերը քաւել է լինում պահքով եւ ծոմաջան տքնութեամբ, մեղքերը քաւել է լինում աղօթքներով, խնդրուածքներով եւ գորովագին պաղատանքներով, մեղքերը քաւել է լինում խարազանով, մոխրով եւ գետնատարած անկողնով, մեղքերը քաւել է լինում լալով, ողբալով եւ տնանկներին գթալով, մեղքերը քաւել է լինում յոգոց հանելով, հառաչելով եւ անդադար հեծեծանքներով, մեղքերը քաւել է լինում հեզութեամբ, խոնարհութեամբ եւ հնազանդութեամբ, մեղքերը քաւել է լինում աղքատութեամբ, անընչութեամբ եւ մերկութեամբ, մեղքերը քաւել է լինում բարի գործերով եւ բոլորի հանդէպ բարերարութեամբ, մեղքերը քաւել է լինում եղբայրասիրութեամբ եւ Աստուծոյ երկիւղով, մեղքերը քաւել է լինում ուղիղ խրատով եւ վարդապետութեամբ՝ ըստ այնմ, թէ՝ «Ով դարձնում է [մէկին] չար ճանապարհից, փրկում է իր հոգին մահուանից եւ ծածկում իր մեղքերի բազմութիւնը» [Յակոբ Ե 20]: Նաեւ միայն ճշմարիտ դարձը եւ ուղիղ խոստո-

վանութիւնը բաւական են փրկուելու եւ արդարանալու համար՝ ըստ այնմ, թէ՝ «Նախ դու քո անօրէնութիւնները պատմիր, որպէսզի փրկուես» [Եսայի ԽԳ 26]:

Եւ արդ, դու ի՞նչ ունես ասելու, մնձ իմ բազմամեղ, եթէ այսքան գեղերով չես բժշկւում: Սակայն փութա՛, մի՛ յապաղիր, զարթնի՛ր դառնանի՛ր քնից, դարձի՛ր կորստական ճանապարհից, փարատի՛ր անգիտութեան խաւարը, սթափուի՛ր անզգայ մոլորութիւնից եւ ուշքի՛ եկ, թօթափի՛ր քեզանից մեղքերիդ սաստկութիւնը, թեթեւացրո՛ւ անօրէնութեան բեռներիդ ծանրութիւնը, քաւի՛ր յանցանքներիդ անթիւ բազմութիւնը, բժշկի՛ր չարաչար վէրքերիդ խոցուածքները եւ լուա՛ ամբարշտութեանդ տիղմի ժանտահոտութիւնը, որպէսզի սրբուած եւ մաքրուած հոգով, լուսազարդուած եւ մեծապայծառ մարմնով կարողանաս համարձակադէմ եւ զուարթերես անցնել տիեզերական ահեղ եւ անթիւ բանակների միջով, կանգնել Աստուծոյ ահաւոր ու մեծ Բեմի առաջ եւ լսել Նրանից երանութեան քաղցրալուր բարբառը եւ աշխարհատես հրապարակի [աւետիսը], թէ՝ «Եկէ՛ք, Իմ Հօր օրհնեալնե՛ր, եւ մտէ՛ք, ժառանգեցէ՛ք երկնքի բարութեան վայելչութիւնը Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու հետ» [Մատթ. ԻԵ 34]. Նրան փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Բ

ԹՈՒՂԹ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Բժշկական դեղաբոյսերի արմատներն առողջացնում են մարմնի ցաւերը, իսկ ապաշխարութեան արտասուքների հոսքը բժշկում է հոգու մեղքերի վէրքերը, մանաւանդ՝ [նրանց], ովքեր ապաշխարում են ողորմութեամբ եւ տնանկների հանդէպ գթասրտութեամբ: Քանզի հիւանդութիւնները դադարեցնող բազում արմատներ կան, որոնք խառնուած են բժիշկների դեղերի մէջ, բայց կայ [մէկը], որ առաւել եւս ազդու է ցաւերի փարատման համար: Նոյնպէս եւ հոգու ցաւերի դեղերի մէջ կան մեղքերը մաքրող ապաշխարութեան բազում ճգնութիւններ, բայց մեղքերը քաւելու եւ վէրքերը բժշկելու համար ողորմութիւնն է ամենից կարեւոր եւ ազդու առաքինութիւնը՝ ողբերով, հառաչանքներով եւ գթագին արտասուքներով ուղեկցուող, որից չյապաղենք եւ փութանակի արարենք մեղքերի ապաշխարութեան դարձը եւ ունեցուածքից ողորմութիւն տալը չթողնենք վաղուայ օրուան: Քանզի գող է այն օրը, յափշտակող է վախճանի օրը. անտեսանելի է այս աշխարհից ելքը, յանկարծահաս եւ ստիպող եւ չի թողնում աղաչել ու աղերսել, լալ ու ողբալ, ողորմել ու ապաշխարել: Բռնում է ինչպէս որոգայթ, յափշտակում ինչպէս առիւծ եւ, անողորմ վարելով, [տանում] ինչպէս գերեվարների գերի. արտասուելով հառաչում ես եւ ողբալով հեծում, սակայն օգուտ չես գտնում: Քանզի, ժամ առ ժամ յետաձգելով, բաց թողեցիր ապաշխարութեան ժամանակը, որով կարող էիր մեղքերիդ բեռները թեթեւացնել եւ անօրէնութիւնների տիղմը մաքրել, լինել արդարներին երամակից, երկնաւոր Հօր որդի եւ անանց բարիքների ժառանգորդ:

Եւ արդ, կա՛մ ըղձալի փափկութեան բաղձանքով, կա՛մ ահեղ տանջանքների սպառնալիքներով փութանք ապաշխարել եւ բեռը բեռի վրայ չկապենք եւ ցաւը ցաւի վրայ չաւելացնենք: Եւ թող չխաբի մեզ սատանան, թէ երկար է այս կեանքը, եւ թող չպատրի մեզ մանկութեամբ, թէ կապաշխարենք ծերութեան ժամանակ: Զսպասենք աններելի վախճանին եւ անողորմ պահանջողներին, անվաստակ չծուլանանք եւ անվարձ չգնանք: Այլ քաւենք յանցանքները, ապաշխարենք մեղքերը եւ նախանձաւոր լինենք քաջերի քաջութեանը եւ առաքինիների առաքինութեանը, որոնց սրտերը սրբուած են եւ մտքերը՝ լուսաւորուած, անմեղ են մեղքերից եւ անարատ՝ անօրէնութիւններից, որ միշտ վերինն են խորհում եւ հանապազ վերինների համար հոգում, ովքեր հողեղէն մարմին ունեն եւ հրեշտակակրօն են, ովքեր կարօտ չեն վարդապետութեան գրքերի եւ տարացոյց օրինակների, քանզի գրքերից առաւել են [նրանց] մտքի ուղղութիւնը եւ վարքի առաքինութիւնը: Իսկ մենք հեռու ենք ուղիղ ընթացքից եւ օտար՝ առաքինութեան վարքից, շեղուած ենք թշնամու որոգայթներով եւ շաղախուած՝ յանցանքների տիղմով, կարօտ ենք խրատների, վարդապետութեան եւ տարացոյց օրինակների. եւ, թերեւս, երկնչենք ահեղ հրի սաստերի ահից եւ իմանանք տարացոյց օրինակների աղէտներից: Մարմնականով ճանաչենք հոգեւորը եւ երեւելիով իմանանք աներեւոյթը. զղջանք ահեղ տանջանքների ահով եւ անանց բարիքների փափագմամբ: Հոգու վէրքերի ցաւերի վրայ ապաշխարելու համար պէտք է օրինակ վերցնել մարմնական ախտերի ցաւը, թէ ինչպէս է անձը միշտ ցաւագին ողբում մարմնական ցաւերի նեղութիւնների համար, հանապազ դառնապէս լալիս ժամանակաւոր ախտերի սաստկացման համար եւ ահաւոր աղէտների տարակուսանքից հառաչում, անդադար հեծում, եւ պաղատանքների ու վայերի ձայները շարժում են նոյնիսկ անողորմների գութը: Քանզի ցաւերի նեղութեան սաստկութիւնից ո՛չ սիրելիների սիրով է թերկրում, ո՛չ ատողների թշնամանքի վրայ զարմանում, ո՛չ կեանքի փափկութիւնը յիշում, ո՛չ էլ մտաբերում գեղեցկութեան վայելչութիւնը. եւ այս աշխարհի ողջ պատիւներն ու պայծառութիւնն արհամարհելով ուրանում է ցաւերի տարակուսանքների պատճառով: Այլ միշտ մնում է սուգով, արտասուքով եւ ողբագին խանդաղատանքներով. միայն վշտերի նեղութիւնների համար է վշտագին պաղատում, որի պատճառով մերձաւորներից շատերը ողորմելով արտասւում են եւ շտապում փնտրել բժիշկներ եւ գեղեր, որպէսզի միառժամանակ ցաւերը փարատեն եւ բժիշկներին խոստանում են նաեւ վարձ եւ գեղերի գներ՝ ցաւերի տագնապները

փարատելու համար:

Եւ այս բոլոր նեղութիւնները լինում են յանուն այս ապականացու մարմնի, որ թէպէտ եւ բժշկւում է, սակայն մեռնել ունի: Իսկ ի՞նչ անենք զեհենի ահեղ հրի մշտնջենաւոր ցաւերի համար, որ պատրաստ պահւում են մեր բազմավէրք հոգիների համար, որոնք միշտ ախտացել են մեղքերի մէջ եւ անբուժելի կերպով ընկած են յանցանքների մահճում. եւ մեղքերի անօրէնութիւնները հանապազ խոցոտում են եւ միշտ վիրաւորում, եւ ցաւերի աղէտների նեղութիւններն առաւել չարաչար են տանջում քեզ: Եւ չենք հառաչում, հեծում եւ հանապազ պաղատում Աստծուն, չենք ողբում մեղքերի ցաւերը եւ չենք լուանում մեր յանցանքների վէրքերը, անդադար լալով չենք արտասւում մեր անօրէնութիւնների եւ մշտնջենաւոր տանջանքների արհաւիրքների համար, այլ հանապազ մեղքեր ենք աւելացնում [նրանց] վրայ եւ ապաշխարութեան սպեղանիներով չենք դարմանում, բժիշկներ չենք փնտրում եւ դեղեր չենք որոնում, ունեցուածք չենք վաճառում եւ վարձ չենք խոստանում կարեւոր վէրքերի բժշկութեան ու անտանելի ախտերի անօրէնութեան դիմաց, որ ոչ միայն աղիքներով եւ որովայնով ենք ցաւերի մէջ, այլեւ մեր ողջ մարմնով մեղքերի վէրքերի մէջ: Քանզի մեր թափառող աչքերը վիրաւորուած են՝ արատներին նայելով, մեր լսելիքը ցաւահարուած է անվայել բաներ ախորժելու պատճառով, իսկ մեր լեզուները՝ բամբասանքներով եւ երդումներով, մեր սրտերը ցաւահարուած են չար ցանկութիւններով եւ պիղծ խորհուրդներով, մեր ձեռքերը՝ յափշտակութեամբ եւ զրկելով, իսկ մեր ոտքերը՝ թատերական խաղերով եւ անպարկեշտ ընթացքով. եւ մեր մարմիններն ամբողջովին ջրգողուած[1] են մեղքերով եւ այտուցուած՝ անօրէնութեամբ: Եւ այսպէս, բոլոր անդամներով մեղքերի ցաւերի եւ վշտերի մէջ ենք եւ չենք մերձենում հոգու բժիշկներին, ապաշխարութեան դեղ չենք փնտրում, [այլ] մեղքերի հիւանդութիւններով չարչարւում ենք եւ արտասուքների ապաշխարութեամբ չենք բժշկւում: Ո՛չ ողբերով ենք սրբում մեղքերի դառը թարախը, ո՛չ էլ արտասուքներով լուանում չար նեխածութեան ապականութիւնը, որը եթէ մէկն այստեղ չբժշկի աղօթքով, պահքով եւ ողորմածութեամբ, այնտեղ [նրան] սպասում է ահեղ հուրը եւ զեհենի բոցի անշէջ բորբոքումը, [այնտեղ] պատրաստ են եւ սպասում են հրեղէնների գետերի հրահոսանքները եւ խաւարով լի աղջամղջին տարտարոսները, դառը դահիճները եւ անողորմ չարչարանքները, աղէտների բազում վարանումները եւ անհերելի տանջանքների սարսափելի արհաւիրքները, որ մնում եւ պահւում են ահեղ Դատաստանի մեծ Օրուան:

Եւ արդ, այս ամէնն է սպասում [մեզ], իսկ մենք անհերկիւղ փայ-

1 ջրգողուել — մարմնի խոռոչները ջրով լցուել

փայլում, փափկանում եւ մեղանչում ենք եւ, ամբողջապէս երկրաւորների մէջ յորդելով, անհոգ գործում ենք ամէն ինչ՝ ուտում եւ ըմպում ենք, անհոգ քնում ենք, որպէս անմահներ եւ մշտնջենաւորներ մեծ ազահութեամբ մթերքներ հաւաքում: Ո՛չ երբեւէ մտաբերում ենք Օրը, ո՛չ Դատաստանի արհաւիրքները եւ յաւիտենական դառն ամօթը: Եւ ամենեւին իսկ չենք յիշում, թէ ինչ պիտի կրենք յետմահու եւ մեծ զգուշութեամբ եւ հանապազ երկիւղով չենք մտաբերում սատանայի ամենահնար պատերազմը, որը միշտ գաղտնի, անդադար մարտնչում է եւ յարաժամ աներեւոյթ վիրաւորում. եւ չենք սգում եւ չենք չգուշանում նրա չար նետերից ու խստավէր հարուածներից, այլ ամբողջովին ցանկութիւնների մէջ անհոգ վայելում ենք եւ անխոհեմ հանգստանում: Եւ այնպէս ծոյլ եւ անհոգ ենք ապրում, որպէս թէ տանջանքներ իսկ չկան, ո՛չ զեհեն, ո՛չ ահեղ Դատաւոր, ո՛չ անողորմ դատաստաններ, ո՛չ գործերի քննութիւն, ո՛չ խորհուրդների որոնում, ո՛չ վարքի հաշուետուութիւն, ո՛չ դատարկ խօսքերի պահանջ:

Եւ այս բոլոր ծուլութիւնները սատանայի չար հնարքներից են [լինում], որ ընթանում է մեր ողջ կենցաղավարութեան միջով եւ այնտեղ դնում մահուան որոգայթը, քանզի սատանան ոչ միայն չարիքով է չարչարում, այլեւ ուղիղ վարքը դէպի չարը դարձնում. եւ քարի շնորհների [դիմաց], որ մարդու մէջ տեսնում է, դնում է մահուան որոգայթը: Ինչ որ փոքր ես համարում եւ չես շտապում ապաշխարել, նրանով է կործանում, քանզի պահողին կործանում է կեղծաւորութեամբ եւ ի ցոյց ճգնելով, աղօթողին՝ արհամարհանքով Աստուծոյ առաջ կանգնելով եւ միտքը դրսում թափառեցնելով, ողորմածին՝ հիւանդների տեսութեան չգնալով: Նաեւ կործանում է վարդապետներին՝ կեղծաւորութեամբ ուսուցանելով, որպէսզի մեծ երկիւղով չուսուցանի Աստուծոյ կամքը: Սատանան կորստեան է մատնում նաեւ սաղմոսերգողին, եթէ չզգուշանայ անփառութեան չար ախտից, այլ լսողներին ցոյց տալու եւ նրանցից գովուելու համար ասի եւ ոչ թէ Աստուծոյ պատգամները պատմի եւ Նրա օրհնութիւնները երգի. այդպիսիներն, ինչպէս փառաւորիչները, չեն պատուում: Սատանան կորստեան է մատնում նաեւ լսողներին՝ Աստուծոյ պատգամները եւ վարդապետութեան խօսքերը ծուլութեամբ եւ արհամարհանքով լսելով: Սատանան կորստեան է մատնում նաեւ վաստակաւորների վաստակները՝ տրտնջալով, աւելի ծոյլերից [իրեն] մեծ ցոյց տալով, իր սպասաւորութեան գործի հաշիւ ու համար ներկայացնելով եւ բոլորին յայտնելով իր վաստակի ջանքը, ով ոչ թէ վաստակաւորների պէս հանգստանում է, այլ տրտնջացողների եւ դատապարտեալների պէս յանդիմանում: Սատանան կործանում է նաեւ ունեւորներին, որոնք ժրաջան են միայն հաւաքելու եւ ոչ թէ՝ տնանկներին բաշխելու մէջ, որ ունեցուածքի միջոցով էլ չեն կարողանայ փրկուել, այլ կդատապարտուեն ինչպէս անողորմներ եւ ագահներ: Սատանան կորստեան է մատնում նա-

եւ աղքատներին՝ հեծեծանքներով, տրտնջալով եւ չգոհանալով Աստծուց, որ կամենում է մշտնջենաւորների մէջ փառաւորել նրանց: Սատանան կործանում է նաեւ արուեստաւորներին, եթէ վարձն աւելի են վերցնում, քան գործը եւ կամ նախանձով ու չարակամութեամբ արուեստի տաղանդն արգելում են նրանցից, ովքեր խնդրում են ուսանել, որ կպարտաւորուեն ինչպէս տաղանդապարտները [տե՛ս Մատթ. ԻԵ]: Սատանան կործանում է նաեւ իշխաններին, որ ծանր իշխանութիւն վարեն, գազանացած սրտով ահաբեկեն ռամիկներին կամ շքեղ արտաքինի եւ կաշառքի համար արդարների իրաւունքը գողանան: Կործանում է նաեւ նրանց, որ իշխանութեան տակ են, եթէ չհնազանդուեն [իշխանին] որպէս Աստուծոյ սպասաւորին եւ երկիւղով չպատուեն: Կործանում է նաեւ հարկահաններին հարկապահանջներին, եթէ արքունական հրամանից աւելի պահանջեն եւ նեղեն նեղեալներին...[1] եւ գեհենի գուբերի մէջ վառուեն:

Եւ արդ, սատանան այսպէս բոլորի համար մահուան որոգայթներ է հնարում եւ Աստուծոյ ուղիղ կարգից եւ վարքից հանում: [Արդիւնքում] չար պտուղ եւ անօրէն վարձ, [եւ] որով կարծում են ստանալ արքայութիւնը, նոյնով պիտի ժառանգեն տանջանքները: Եւ սատանան այնպիսի յափշտակումով է յիմարացնում, որ նոյնիսկ աղօթքի, պահքի եւ ողորմութեան ժամանակ է գցում մեղքի մէջ: Եւ չենք ջանում մեզանից թօթափել սատանայի թմբիրը եւ պաղատանքներով, ապաշխարութեամբ Տիրոջը չենք հաշտեցնում, քանզի ապաշխարութիւնը կարող է սպիտակեցնել մեղքերով սեւացածներին եւ մաքրել գարշաթաթախներին, լուսաւորել մեղքերով խաւարեալներին եւ փարատել անօրէնութեան մթերումները: Եւ, այս իմանալով, սատանան մօտենում է նրան, ով կամենում է ապաշխարել, եւ ծանրացնում է նրա միտքը՝ չյօժարելու սկսել ապաշխարութիւնը: Զանզի գիտի՝ եթէ սկզբի մէջ հաստատուի, ապա նաեւ ապաշխարութեան վաստակով կքաղցրանայ, ուստի բոլոր հնարներով հեռացնում է ապաշխարութիւնը սկսելուց՝ օր-օրի ձգձգելով:

Եւ մենք, այս ամէնն իմանալով, փութալով փութանք սկսել ապաշխարութիւնը, քանզի միայն սկսելիս է թւում, թէ ծանր կլինի, սակայն սկսելուց յետոյ գործը հեշտանում է եւ քաղցր ու ցանկալի ընթանում: Ինչպէս նա, ով կամենում է ուսանել, անգամ չի համարձակւում գրով երկրորդել այբուբենի առաջին [տառերը] եւ ուսման [պարզ] բառերը, այլ, [նախ] կիսատ նշանախեցերով եւ բեկբեկելով եւ ապա տառը տառին կպցնելով, դիւրութեամբ կազմում է վանկը, այնպէս էլ ապաշխարութիւնն է. եթէ սկզբում միայն համբերում է, խոստովանութեամբ շնորհներ է ստանում, իսկ շնորհներով լուսաւորւում է [նրա] միտքը. ճանաչում է տանջանքների երկիւղը, իսկ երկիւղով արտասուք եւ սուգ է

1 Ընագրում մէկ տող անընթեռնելի է. որ միւսներում չկայ:

ստանում. սուգն ուսուցանում է պահք, իսկ պահքը բերում է աղօթք. աղօթքը յօժարեցնում է ողորմել. եւ կամաց-կամաց, աստիճան առ աստիճան բարձրանում է եւ հեշտութեամբ երկինք ելնում: Այլեւ կարող ես սրանցից միայն մէկով արդարանալ, եթէ ցանկանաս, քանզի շատերը միայն ճշմարիտ խոստովանութեամբ փրկուեցին, ոմանք փրկուեցին սգով եւ տրտմութեամբ, ոմանք խարազանով ու մոխրով միայն ապաշխարեցին, ոմանք լալով ու արտասուքներով հաշտեցրին Տիրոջը, ոմանք պահքով եւ աղօթքով ապաշխարեցին, ոմանք ողորմութեամբ Աստուծոյ ողորմութիւնը ստացան, ոմանք մարդասիրութեամբ եւ աւելի տկարներին ծառայելով ապաշխարութիւն գտան, ոմանք խոնարհութեամբ եւ հեզութեամբ ստացան մեղքերի թողութիւն: Ինչպէս բազմատեսակ են մեղքի ճանապարհները, նոյնպէս եւ զանազան են ապաշխարութեան դեղերը, որոնցով կարող ես բժշկել մեղքերի բոլոր հիւանդութիւնները, ոչ թէ տարիների թուով եւ շատ ժամանակով, այլ միայն ճշմարիտ դարձով եւ սրտով չարից հեռանալո՛վ կարող ես արդարանալ:

Արդ, այս ամէնն իմանալով, ապաշխարութեամբ քաւենք մեր մեղքերը, քանզի մեղքերի պղծութիւնները դատապարտում են ոչ միայն [Դատաստանի] ահեղ Օրը, այլեւ՝ այստեղից իսկ խղճմտանքով սաստիկ չարչարում. եւ, գաղտագողի շրջելով, [ապրում է] երկիւղով՝ մարդկանցից, կասկածանքով՝ ծանօթներից, ամօթով՝ սիրելիներից, նախատինքով՝ թշնամիներից, դատաւորների սպառնալիքներով, բանտի ու պատուհասների երկիւղով, Աստուծոյ պատուիրանների յանդիմանութեամբ եւ ահեղ տանջանքների ահով: Եւ, այնտեղ գնալով, ո՞վ կկարողանայ պատմել մշտնջենաւոր աններելի աղէտների նեղութիւնների մասին, ուր այրւում եւ մաշւում են ամօթով եւ նախատինքով: Իսկ ապաշխարութեան պտուղը ոչ միայն երկնքում ես վայելում, այլեւ այստեղ իսկ հարիւրապատիկ [աւելին] ես ստանում՝ խնդութեամբ, անհոգութեամբ, պատուիրանների գովութեամբ, անխղճմտանքի ուրախութեամբ: Անվեհեր ես մարդկանցից, անկասկած՝ ծանօթներից, անպարսաւ՝ թշնամիներից, առանց ամօթի՝ սիրելիների հանդէպ, համարձակ՝ հրապարակներում, աներկիւղ՝ դատաւորների առաջ, ազատ՝ պատուհասներից. խաղաղ կեանք, հեշտական մահ, մշտնջենաւոր եւ փափագելի փափկութիւնների ակնկալութիւն: Իսկ այնտեղի ուրախութիւնները, անքաւ բարիքների վայելչութիւնը ո՞ր բերանը բաւական կլինի պատմելու:

Արդ, ա՛յս է արդարութեան վարձը, ա՛յս է ապաշխարութեան պտուղը: Ուստի մեղքերի բազմութիւնից մի՛ երկնչիր ապաշխարութեան մէջ մտնելիս, միայն Աստուծոյ առա՛ջ ընկիր. [Նա] ոչ թէ դատաւոր է, այլ՝ բժիշկ, ոչ թէ սպանող դահիճ է, այլ՝ գորովագին Հայր: Զեզ ընդառաջ է ելնում, ինչպէս անառակ որդուն, քո պարանոցովն է ընկնում, որ դարձար դէպի ապաշխարութիւն, երկնաւոր Հայրը համբուրում է քեզ՝

բերանը [հպելով] աչքերիդ, հրամայում է քեզ հագցնել անմեղութեան առաջին պատմուճանը, ամրացնում է քեզ կօշիկներով՝ թշնամու յետագայ թոյների դէմ: Կերակրւում ես Որդու Մարմնի Պատարագով, քեզ հետ Պատարագից վայելում են ընտրեալ ծառաները, քո անառակութիւնից զառնալու առթիւ բոլոր սուրբերը երգում եւ պարում են, որից սարսափած՝ փոքր-ինչ նախանձում է առաջին թլփատուած ժողովուրդը՝ չմտնելով Աստուծոյ Որդու զենման ուրախութեան մէջ. որոնց մօտ ելաւ ու եկաւ էական Աստուած Մարմնով աղաչելու Հօրը հաւատացող հրեային, հաւատի կոչելու ապաշխարող հեթանոսին եւ ուրախ լինելու իր անառակ եղբօր դարձով, միասին վայելելու Աստուծոյ Որդու զենումից եւ ժառանգելու անանց բարիքների վայելչութիւնը Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու հետ. Նրան փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից:

Գ

ԹՈՒՂԹ ՊԱՀՔԻ ՊՆԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ազգու, օգտակար եւ կարեւոր է պահքի պնդութիւնը եւ ժուժկալութիւնը որկրամոլութիւնից եւ մանաւանդ՝ [նրանց համար], ովքեր խոհեմութեամբ են մերձենում նրան եւ ճշմարտապէս ճանաչում, թէ որքան շահաւոր է պահքի պնդութիւնը: Իսկ ովքեր այսպիսի զգուշութիւն չունեն, արդէն իսկ հետեւեալ տեսանելի [օրինակներով] պէտք է իմանան պարկեշտութեան մաքրութիւնը եւ որովայնի մնասակար լցումը: Ցայտնի է, որ ինչպէս երաշտահար տեղանքները պէս-պէս բուսականութիւն չեն բուսեցնում, այնպէս էլ ցամաքած որովայնները պղծութեան խորհուրդներ չեն ծնում: Եւ ինչպէս աղբուտ հողը խառնիխուռն բուսականութիւն է բուսեցնում եւ աճեցնում, նոյնպէս էլ կերակուրների աղբով փափկացած որովայնները հանապազ աղտեղի խորհուրդներ են վեր հանում, քանզի գէջ հողը պարարտացնում է որդերին, իսկ գիշացած որովայնը՝ պիղծ ախտերը. քանզի ովքեր փափկանում են համեղութեամբ, [նրանք] նաեւ ենթարկւում են տեսակ-տեսակ խորհուրդների, եւ ով փոքր-ինչ կերակրով բաւարարւում է, նա [սոսկ] յիշում է քաղցի տագնապը. քանզի թանձրացած որովայնները սուրբ խորհուրդներ չեն ծնում, այլ մարմնի զգայութիւններն ամուր պատում են [մեղքի] ծածկոյթով: Ովքեր որովայնին են ծառայում, հնարաւոր չէ, որ լինեն Աստուծոյ հաւատարիմ ծառայ, քանզի ովքեր պահքով նրբանում եւ սրբւում են, ոչ միայն անօրէնութիւնների պղծութիւնն են սրբում, այլեւ սուրբ Աստծուն իրենց մէջ են բնակեցնում:

Եւ արդ, այսպիսի մեծութիւն ունեն պահքի պնդութիւնը եւ պարկեշտութեան առաքինութիւնը, որ արգելելով կանգնեցնում են մարմնի

բոլոր անդամները անդէպ ցանկութիւններից ու աղտեղի խորհուրդներից եւ ստէպ-ստէպ հալածում մտքից դիւային խորհուրդների յարձակումը, որոնք ցանկանում են մաքրուածների սրտերը պղտորել եւ պղծել: Քանզի պահքի պնդութիւնը որպէս երկաթէ ջլերով ամուր պահում է վարքի բոլոր առաքինութիւնները եւ հաւատքի հաստատութիւնները, քանզի հզօր աշտարակ է ընդդէմ թշնամու եւ ամուր պարիսպ՝ սատանայի բոլոր նետերի դէմ: Քանզի յոյժ կարեւոր է պահքի պնդութիւնը մեր բնութեան համար, եւ շատ թերութիւններ շտկւում են պահքի խոնարհութեամբ: Արդէն իսկ մարդուն ստեղծելիս Աստուած պահքի պնդութեամբ պարապեց մեր բնութիւնը եւ առաջին մարդուն որպէս առաջին պատուիրան տուեց պահքի պնդութիւնը՝ չճաշակել չարի եւ բարու գիտութեան ծառից: Քանզի եթէ պահէր պահքի պատուիրանը, կժառանգէր անախտ, անմահ եւ անմեղ կեանքը եւ երկնքում երկնային բարիքները, քանզի շատերը, ովքեր պահեցին պահքի պնդութիւնը, փրկուեցին բազում վշտերից:

Այս պահքի պնդութեամբ նաեւ մեծն Դանիէլը փրկուեց առիւծների ժանիքներից, քանզի զազանական ընութիւնն էլ էր պատկառում մերձենալ պահողի սուրբ մարմնին, եւ քանի որ իրեն արգելել էր մօտենալ թագաւորի պիղծ զոհերով աղտեղուած սեղանին, զազաններին էլ արգելուեց մօտենալ պահողի սուրբ մարմնին [տե՛ս Դան. Ե]: Այս պահքի պնդութեամբ նաեւ երեք մանուկները փրկուեցին բորբոքուած բոցից, քանի որ այրեցին կերակուրների ցանկութեան մոլութիւնը եւ մի փոքր ոսպով գոհացան, հանգցրին հնոցի բարձրացրած ահեղ հուրը, քանզի այնտեղ՝ ներսում, [Հոգու] զովացուցիչ ցօղը մխիթարում էր պահողներին. եւ դրսում բոցը զեղխացածների կողմից սաստկանում էր եւ քառասունին կանգուն տարածութեան վրայ սպանում բոլորին, իսկ ներսում զովացուցիչ ցօղը մխիթարում էր պահողներին [տե՛ս Դան. Գ]: Այս պահքի պնդութեամբ նաեւ Նինուէացիների բազմամբոխ քաղաքը փրկուեց, քանզի դարձան իրենց բոլոր անօրէնութիւններից եւ չար ընթացքից, խարազանով եւ մոխրով դարձրին Աստուծոյ խստացած բարկութիւնը. եւ քանզի առանց խնայելու նեղեցին իրենց անձերը պահքով եւ պաղատանքներով, հեծեծագին լալով ու ողբալով, Աստուած խնայեց նրանց հոգիներն ու մարմինները [տե՛ս Յովն. Գ]: Այս պահքի պնդութեամբ նաեւ Մովսէսը ստացաւ աստուածադիր օրէնքը, քանզի քառասնօրեայ պահքի մաքրութեամբ արժանացաւ մերձենալ Մաքուրին. եւ անմիջականօրէն խօսում էր Նրա հետ, ինչպէս՝ բարեկամի [տե՛ս Ելք ԻԴ 12-18]: Այս պահքի պնդութեամբ Թեսբացի Եղիան իր բերանի խօսքով երկինքն էր բացում եւ փակում, հուր էր երկիր իջեցնում [տե՛ս Գ Թագ. ԺԸ]:

Պահքի պնդութեան մասին էլ ի՞նչ ասեմ աւելի, որը նաեւ պէտք եղաւ տէրունական Մարմնին՝ Անմեղին եւ Անարատին՝ մեզ օրինակ ցոյց

տալու համար, որով եւ մեր առաջին հայրերն առաքինացան եւ անմարմին հրեշտակների վարքը մարդկային մարմնի մէջ երեւեցրին, երկրի վրայ մեռցրին երկրային ցանկութիւնները եւ հոգիները կենդանացրին երկնքում, մերժեցին յանցաւոր հեշտութիւնները, որպէսզի ստանան անանց բարիքները. տներից եւ ունեցուածքներից հեռացած՝ չարչարուեցին բազում փորձանքներով եւ, իրենց անձերն ամենեւին նեղելով, մեռցրին քաղցով, ծարաւով եւ գծուծ հանդերձով: Քանզի նրանցից ոմանք միայն խոտաճարակութեամբ բաւականացան, իսկ ոմանք միայն մրգերի ճաշակմամբ կենցաղավարեցին: Ոմանք միայն ծառի [ճիւղերի] ծայրերն ու խոտերի արմատներն էին ուտում, ոմանք ժուժկալում էին փոքր-ինչ ընդեղէնով, ոմանք՝ օրական երեք նուկի[1] հացով, ոմանք [օրական ուտում էին] նկանակի[2] չորրորդ մասը, ուրիշներ էլ՝ վեցերորդ մասը. ոմանք որպէս կերակուր էին գործածում ցորենի թեփը, ոմանք միայն խոզաբուտ եղջիւրով[3] էին դադարեցնում քաղցի տագնապը: Ոմանք հոգեւոր Կերակուրի Հաղորդութիւն օրուայ մէջ բաւական էին համարում մարմնի կարիքների համար, եւ այլ կերակուրների փափկութիւնն ամենեւին մեռած էր նրանց համար: Քանզի ոմանք ճաշակում էին օրական մէկ անգամ, ոմանք՝ երկու օրը մէկ, ոմանք՝ երեք օրը մէկ, ոմանք՝ եօթ օրը մէկ, ոմանք էլ՝ աւելի: [Երբ] յիշում էին կերակրի կարիքը, այն ճաշակում էին կշռով եւ ջուրն ըմպում էին չափով, անդադար հեծութեամբ պարապում էին աղօթքի եւ պաշտօնի[4] մէջ, ողջ գիշերն անցկացնում արտասուքների եւ ողբերի մէջ եւ աղերսալի թախանձանքներով եւ հառաչանքներով հաշտեցնում Աստծուն: Ոմանք ննջում էին պարաններով կապուած[5], ոմանք՝ ոտքի վրայ տքնելով գիշերն անցկացնում, ոմանք՝ սակաւ ինչ նստելով, ոմանք՝ մինչեւ առաւօտ ձեռքերը վեր ամբարձած պահում, ոմանք, պարանոցները խոնարհած, մինչեւ առաւօտ համբերում, ոմանք՝ հարիւրաւոր աղօթքներ կատարում: Ոմանք լռում էին, ոմանք՝ միայն սաղմոսներ ասում, ոմանք չէին բարբառում, մինչեւ մէկը չհարցնէր նրանց, ոմանք խոհեմաբար խօսում էին միայն ընկերոջն օգուտ տալու համար եւ մշտաջան ճիգերով ու պաղատանքներով անցկացնում օրը, ինչ-որ հոգեւոր խրատի համար գնում էին օտար աշխարհներ, թշնամիներին սիրում ինչպէս բարեկամների, խոնարհութեամբ ընկերոջն իրենց անձից լաւը համարում, հնազանդութեան համար նոյնիսկ հրի մատնուում եւ գազանների առաջ գնում, իրենց անձերը ծառայեցնում ընկերոջը եւ իրենց արդար վաստակով կերակրում ընկածին,

1 Նուկի — 1/12 լիտր
2 Նկանակ — հացի բլիթ
3 Խոզաբուտ եղջիւր — եղջերենու պտուղ, որով սնում են խոզերը
4 Պաշտօն — սաղմոսերգութեան կանոն, գիշերային ժամերգութեան մաս
5 Հաւանաբար նկատի ունի ճգնութեան այն տեսակը, որի ժամանակ չքնելու նպատակով պարաններով իրենց կապում էին պատից կամ առաստաղից:

տնանկին եւ հիւանդին: Իրենց մարմինը չափով էին պահում եւ սանձահարում խորհուրդները եւ այնպէս զանազան եւ բազում նեղութիւններով պահքի պնդութիւններ յօրինում, քանզի այս ամէնն է նեղ դուռը եւ անձուկ ճանապարհը, որ տանում է դէպի յաւիտենական կեանք: Ծշմարիտ պահքի պնդութեամբ նաեւ կատարում էին բազում նշաններ եւ սքանչելիքներ՝ հանում էին դեւերին, բժշկում հիւանդներին, յարութիւն տալիս մեռեալներին, քայլում ջրերի վրայով եւ արեգակի ընթացքը դադարեցնում. եւ այսպիսի ու սրանից էլ աւելի մեծ զօրութիւններ էին գործում պահքի պնդութիւնները: Քանզի առաջին սուրբերը, երբ կամենում էին մերձենալ Աստծուն, նախ մաքրում էին պահքով, ապա մերձենում Մաքուրին եւ աստուածատեսներ լինում: Իսկ ովքեր հեռացան պահքից, հեռացան Աստուծոյ շնորհներից եւ բազում չարիքներով չարչարուեցին: Ահա Ադամը հեռացաւ պահքի պնդութիւնից եւ դուրս ելաւ դրախտից դէպի փշաբեր երկիրը: Նոյի ժամանակների ազգի որդիները հեռացան պահքի պնդութիւնից եւ համաջունջ ջրհեղեղով սատակուեցին եւ հեղձուեցին: Եբրայեցիների ժողովուրդը հեռացաւ պահքի պնդութիւնից, եւ ընտիրները սատակուեցին [տե՛ս Սաղմ. 2է 31]: Սոդոմի բնակիչները հեռացան պահքից, եւ կայծակների հրացայտ անձրեւ տեղաց նրանց վրայ: Եւ բոլորը, ովքեր արհամարհեցին պահքը, արհամարհուեցին Աստծուց եւ Նրա ողորմութիւնից հեռացան:

Բայց պահողները պէտք է [զինուած] լինեն խոհեմութեամբ, քանզի սատանան կործանում է պահեցողին եւ ժուժկալողին, եթէ բամբասի աւելի անպարկեշտների մասին կամ իրեն ուրիշներից բարձր ցոյց տայ կամ կերակուրները պիղծ համարի կամ, եթէ կեղծաւորութեամբ պահի, որպէս թէ ուրիշների աչքում պահքի պնդութիւնը ծածկի՝ սնապարծ եւ կեղծաւոր չերեւալու համար, սակայն ցանկանում է, որ ուրիշների կողմից հոչակուէր իր ժուժկալութիւնը. եւ եթէ ոչ ոք չիմանայ, ապա ինքը ցանկանում է խստացնել [ճգնութիւնները] պահքի պնդութեան պատրուակով, որպէսզի իմանան եւ զարմանան նրա համբերութեան վրայ: Այսպիսի պահքը ոչ թէ սրբում եւ արդարացնում է, այլ՝ պղծում եւ կործանում: Եւ եթէ նոյնիսկ կերակուրներով պարկեշտանայ, իսկ միւս անդամներով չպահի, զուր եւ ունայն է ջանում: Այս է, որ ասում եմ. եթէ լեզուն չպարկեշտացնի, աչքի, ունկի, խորհուրդների եւ մտքերի համար չզգուշանայ, ընկերոջ նկատմամբ ոխ պահի, եղբօր հանդէպ ատելութիւն ունենայ կամ մէկի նկատմամբ կեղծաւորութեամբ սէր ցոյց տայ կամ խոնարհութեամբ ընկերոջը չծառայի, պատիւ եւ իշխանութիւն ցանկանայ եւ կարծի, թէ իր անձը պահքի մէջ է, այնպիսին յոյժ մոլորուած կլինի սատանայական խորհուրդներից: Քանզի այն ոչ թէ խոնարհութեան պահք է, այլ՝ խաբէութեան եւ կեղծաւորութեան, զրաջան եւ անվաստակ է, որ այրւում է հրի մէջ եւ հանապազ ջուրը թափւում, որը ցեցն ապականեց, եւ գողերը կորեցին ու տարան, եւ ոչ մի

օգուտ չստացաւ այնպիսի պահքի մրցութիւնից, այլ յոյժ պատժի եւ պատուհասի [արժանացաւ]: Քանզի այստեղ պատժւում է կեղծաւոր պահքով, իսկ այնտեղ՝ արդար դատաստանից դատապարտուելով, հնոցների կրակի մէջ է չարչարւում եւ աւելի եւս պատժապարտ լինում, քան որկրամոլն ու արբեցողը, քանզի ամենագէտ Աստծուն անգէտ համարեց չարաչար խստակրօնութեան կեղծաւորութեամբ:

Կան նաեւ այնպիսիներ, ովքեր երբ ցանկանում են մտնել պահքի մէջ, շտապում են լուացուել եւ օծանուել, խճողում են փորն ու որովայնը, սաստիկ որկրամոլութեամբ եւ արբեցութեամբ շուայտանում, ապա մտնում պահքի պնդութեան մէջ: Եւ արդ, ի՞նչ կոչենք այնպիսիներին՝ պահողնե՞ր, թէ՞ արբեցողներ, պարկեշտնե՞ր, թէ՞ որկրամոլներ, ճգնաւորնե՞ր, թէ՞ զեղխացածներ, քանզի անհնար է պղծութեամբ սրբութիւն զտնել եւ մեղքով դէպի արդարութիւն բարձրանալ. եւ ոչ ոք պոռնկութեամբ կուսութիւն չի ստանում, ոչ էլ զեղխութեամբ եւ արբեցութեամբ՝ պահքի սրբութիւն: Քանզի անհնար է այսպէս լինել, թէ՝ նախ պոռնկանամ, ապա կուսանամ եւ կամ զեղխանամ ու շուայտանամ արբեցութեամբ, ապա մտնեմ պահքի սրբութեան մէջ, քանզի անհնար է պոռնիկին կուսանալ եւ արբեցութեամբ զեղխացածին՝ պահող եւ ճգնող դառնալ: Քանզի կոյսը կուսութեամբ է ստանում կուսութեան պսակը եւ ոչ թէ՝ պոռնկութեամբ, եւ պահողը ժուժկալութեամբ է ընդունում պահքի վարձը եւ ոչ թէ՝ արբեցութեամբ, զեղխութեամբ եւ որկրամոլութեան շուայտանքով:

Կան նաեւ այնպիսիներ, ովքեր քառասնորդական պահքն ապաղաս[1] են ասում. շաբաթների մի կէսը կարեւոր են անուանում եւ պնդում ու ճգնում են սրբութեամբ, իսկ մնացածն ապաղաս են անուանում եւ թուլացնում պահքի պնդութիւնը, անակնկալ կերպով փափուկ կերակուրներ ճաշակում եւ որկրամոլութեամբ լուծում սուրբ եւ անարատ քառասնորդական պահքը: Քանզի այս կարեւոր քառասնորդական պահքն Աստուծոյ Որդին պահեց՝ մեզ օրինակ ցոյց տալու համար եւ այնտեղ չէր անուանում ապաղաս: Նոյն քառասունքը նաեւ Մովսէսը պահեց լեռան վրայ եւ այնտեղ չէր անուանում ապաղաս: Նոյն քառասունքը Եղիան պահեց անապատում լեռան վրայ եւ այնտեղ չանուանեց ապաղաս: Նոյն քառասունքը նաեւ մենք մեր տկարութեամբ կատարում ենք օրըստօրէ պահքով, եւ վայել չէ մեզ քառասնորդական պահքն ասել ապաղաս եւ լուծարել սուրբ պահքի պնդութիւնը, քանզի պահքի սկզբից մինչեւ վերջ պահք է փափկութիւնից, եթէ ցանկանաս ճգնել եւ պահել. իսկ եթէ ցանկանաս որկրամոլութեամբ լուծարել, ոչ թէ թեթեւ ապաղասներ ես լուծարում, այլ՝ կարեւոր պահք: Քանզի ապաղաս է անուանում ծոյլերի եւ անկատարների կողմից եւ ոչ թէ՝ պարկեշտների եւ պահողների:

Այլեւ պահք է անուանում ոչ թէ միայն կերակուրներից [ժուժկալելը], այլեւ խուսափելն ամէն տեսակ մեղքերից, քանզի պահք է նաեւ բերանի լռութիւնը եւ ոչ առանց հարկի եւ մէկի հարցնելու խօսելը: Պահք է նաեւ անընչութիւնը, աղքատութիւնը եւ աւելորդութիւնները չհոգալը, այլ օրուայ կարիքները փնտրելը եւ նոյնն Աստծուց խնդրելը: Պահք է նաեւ խոնարհութեամբ տեղում նստելը եւ փուչ մէկի պէս ցոփութեամբ չշրջելը՝ թափառելով եւ դրամաշորթութեամբ: Պահք է նաեւ, առանց լուացուելու եւ օծանուելու, ողորմելի եւ գծուծ հագնուելը. պահք է նաեւ միայն խարազանագործ հանդերձներով մերկութեան եւ ցրտի կարիքները հոգալը: Պահք է նաեւ աչքերն՝ արատութիւնից, լսելիքը՝ անդէպ լսելուց եւ սիրտը՝ պիղծ խորհուրդներից զերծ պահելը: Պահք է նաեւ չընկերանալը պատուի եւ իշխանութեան համար, չբարկանալը, չաղաղակելը, չնախանձելը, վրէժխնդիր չլինելը եւ չջանալը սեփական անձն ընկերոջ մօտ արդարացնել: Պահք է ագահութիւն չանելը, չմարդահաճոյանալը եւ հանդերձով սնապարծ չլինելը: Պահք է նաեւ խոնարհութիւնը, հնազանդութիւնը եւ սուրբ սրտով բոլորին սիրելը: Պահք է նաեւ, երբ ընական քնի կարիքը միայն սպառի եւ ցանկութեան քուն չունենայ, այլ միայն առաջինով [գոհանայ] եւ ապա, վեր կենալով, գործի կամ աղօթի:

Եւ արդ, այս ամէնն է ճշմարիտ պահքը եւ առաւել է, քան կերակուրների կարճումը. այս եւ սրանց նման բաները պէտք է կարճել պահքի ժամանակ, եւ ապա ընդունելի կլինի նաեւ կերակուրների կարճումը: Նաեւ կերակուրների կարճումը միանման չէ, այլ՝ ըստ իւրաքանչիւրի կարողութեան. ոմանք՝ միօրեայ, ոմանք՝ երկօրեայ, ոմանք՝ երեքօրեայ եւ ոմանք եօթօրեայ [պահքով] պարկեշտութեամբ կատարում են՝ իւրաքանչիւրն ըստ իր անձի զօրութեան: Ոմանք՝ լոկ քանջարով, ոմանք էլ միայն ընդեղէնով բաւականացան. ոմանք՝ փոքր-ինչ հացով, ոմանք՝ աւելի շատով եւ անպաճոյճ թանիկը եւս յաւելեցին. եւ ոմանք եղան միայն գինեհատներ, ոմանք՝ թանահատներ, ոմանք՝ հացահատներ եւ փափուկ ու համեղ կերակուրները բացէիբաց հալածեցին եւ ուրացան, մի տեսակի կերակուրով եւ հոգեպահով միայն բաւականացան, որը միայն կենդանութիւնն է պահում եւ ոչ թէ մարմինն ու արիւնն աւելացնում, որոնք ախտերի ցանկութիւնն են զրգռում: Եւ այսպէս [ժուժկալեցին]՝ սակաւ ուտելով, սակաւ ըմպելով, սակաւ քնելով եւ անդադար աղօթելով: Նաեւ մանաւանդ պէտք է՝ պահքի օրերին ինչ արգելում ես որովայնիցդ, այն աղքատներին ընձեռել, քանզի դու պիտի քաղցես, եւ քաղցածը յագենայ, եւ քո մեղքը քաւուի: Այս է սուրբ եւ աստուածահաճ պահքը, եւ սրանով են ընդունելի լինում բոլոր վշտամբերութիւնների ճգնութիւնները, որ բժշկում են մեղքերով վիրաւորուածներին, սատանայից գերուածներին,

1 ապաղաս — թեթեւ լուծելի՛ պահք

կանգնեցնում անօրէնութեամբ կործանուածներին, յարութիւն տալիս ամբարշտութեամբ հիւանդացածներին, սրբում պղծութեամբ աղտեղուածներին, լուսաւորում մոլորութեամբ խաւարածներին, բոլոր յանցանքներից մաքրում ու արդարացնում պահողներին եւ մեծապայծառ լոյսով կանգնեցնում Աստուծոյ ահաւոր եւ լուսաւոր Բեմի առաջ. եւ [պահեցողները] Նրա հետ ժառանգում են անանց բարութեան վայելչութիւններն ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր: Նրան փառք յաւիտեանս:

Դ

ԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՒ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

Հաւաքելով մեր միտքը՝ ճանաչենք այս ճառի խօսքերը եւ այս երեւելիով ծանենք աներեւոյթը եւ գիտենանք, թէ ինչպիսի դողում եւ ահեղ արհաւիրքներ են [սպասում] յանցաւորներին, երբ մեղքերի ամօթով կանգնեն Դատաւորի առջեւ. ինչո՞ւ են այլայլւում եւ այլազունում նրանց դէմքերը, ինչո՞ւ են սոսկում եւ սարսափում, ինչո՞ւ են երկիւղով դողում Դատաւորի ահեղ դէմքից եւ գլխիկոր, հայեացքը խոնարհած եւ լեզուակապ, կանգնում [Նրա] առջեւ: Եւ եթէ յանդգնեն ինչ-որ բան աղաչել եւ աղերսել, ապա երկիւղած սրտով, անհամարձակ լեզուով հիւանդաձայն բարբառում են եւ բազում աղերսներով ցաւագին պաղատանքներ մատուցում: Արտասւում են, աղաչում, աղերսում, որպէսզի շարժեն Դատաւորին գթալու ու ողորմելու՝ յանցանքների պատուհասներից փրկուելու համար. նրանց միտքը չի զբօսնում ուրիշ տեղում, ոչ էլ նրանց աչքերը՝ այլուր, եւ լսելիքը՝ այլուր: Եւ երբ Դատաւորը բարբառում է նրանց հետ, չեն իշխում երեսները դարձնել կամ ծառայակիցներից մէկի հետ խօսել, այլ միայն Դատաւորին են նայում մեծ պատկառանքով աղաչելով ու հայցելով յանցանքների տանջանքների թողութիւն: Իսկ որչա՞փ առաւել եւս մեզ համար յոյժ կարեւոր է մեծ պատկառանքով կանգնել ահաւոր [եւ] մեծ Դատաւորի առջեւ, ահեղ ահով ու սոսկալի դողութեամբ մտնել եւ կանգնել Աստուծոյ հայեացքի դիմաց եւ ցաւագին ողբերով ու յորդահոս արտասուքներով թախանձել ու թողութիւն խնդրել: Պէտք չէ այլուր՝ միտքը եւ այլուր խորհուրդներն առաքել, այլուր՝ լսելիքը եւ այլուր տեսանելիքը թափառեցնել, երբ մէկը կամենում է իր մեղքերի յանցանքների համար աղաչել եւ աղերսել Աստծուց, որպէսզի հեծեծանքներով ու հառաչանքներով հաշտեցնենք Տիրոջը եւ պաղատանքներին գթալու խոնարհեցնենք, որ աղօթքի աղերսների եւ գթագին սրտի ջերմութեան միջոցով քաւի մեր մեղքերը, սրբի մեր անօրէնութիւնները, փրկի ահեղ աղէտների տանջանքներից եւ յաւիտենական ամօթից: Քանզի շատերը բազում բարիքներ ստացան աղօթքի միջոցով

եւ հաճելի եղան Աստծուն, որով մեղքերի թողութիւն եւ հոգիների փրկութիւն գտան. եւ մանաւանդ [նրանք], ովքեր արտասուքներով եւ տանկներին գթալով աղօթեցին, ոչ միայն մեղքերի թողութիւն են գտնում, այլեւ ստանում են մարմնի խնդրանքները եւ երկնքի բարիքները: Քանզի աղօթքը աղօթականի ձեռքերն են, եւ [նրանցով] բռնել է Աստուծոյ ոտքերից, եւ աղօթքն արագ խոնարհեցնում է՝ [նայելու] մաղթողի աղաչանքներին, քանզի Աստուած յոյժ կամենում եւ ախորժում է աղաչողի թախանձելը. «Խնդրեցէ՛ք, եւ կտրուի ձեզ, փնտրեցէ՛ք եւ կգտնէք» [Մատթ. է 7]:

Եւ արդ, բոլոր մեղքով ծանրացածներին, վշտերով նեղուածներին, թշնամուց վտանգուածներին եւ ցաւերով տառապածներին միշտ պէտք է ամէնօրեայ անդադար աղօթքներով եւ պաղատանքներով աղաչել, թախանձել եւ խնդրել, քանզի ովքեր միամիտ մտքով եւ աննենգ հաւատքով աղօթում են Աստծուն եւ խնդրում բարին, ստանում եմ բոլոր խնդրածները, ինչպէս ստացան մեր առաջին հայրերը: Իսկ եթէ մէկն ասի, թէ՝ խնդրեցի եւ չունեցայ, աղօթեցի եւ չստացայ, [ապա] դեռ թախանձագին չես խնդրել, ինչպէս այրի կինը՝ անիրաւ դատաւորից [տե՛ս Ղուկ. ԺԸ 1-6], եւ բարեկամը, որ գիշերով հայցում էր նկանակները [տե՛ս Ղուկ. ԺԱ 5], որ ոչ թէ բարեկամութեան, այլ թախանձանքի շնորհիւ ստացաւ: Նոյնպէս եւ Աննան ցաւագին հոգով, արտասուելով եւ աղօթքի թախանձով ստացաւ Սամուէլին [տե՛ս Ա Թագ. Ա]. նոյնպէս էլ ժողովուրդը տրտմութեան հովտում լալիս էր առ Աստուած, եւ ջերմագութ աղօթքների եւ պաղատանքների շնորհիւ Աստուած տուեց նրանց Գեդէոնին եւ փրկեց Իսրայէլը [տե՛ս Դատ. Բ, Զ]. եւ Եզեկիայի արտասուագին աղօթքների շնորհիւ տասնհինգ տարով աւելացրեց կեանքը [տե՛ս Դ Թագ. Ի]: Եւ եթէ դու այսպիսի արտասուքներով եւ ողջ սրտով աղօթես Աստծուն եւ չերկմտես, ընդունում է քո խնդրուածքները:

Աղօթականին պէտք չեն շատ խօսքերի հիւսուածքներ. մաքսաւորը մի բարբառ արձակեց, եւ նրա աղօթքն ընդունելի եղաւ, եւ մեղքերի բազմաքանքար բեռները թեթեւացրեց [տե՛ս Ղուկ. ԺԸ]. Մովսէսն իր անշշունջ բերանով իսկ աղաղակեց եւ ծովը մինչեւ յատակ բաժանեց [տե՛ս Ելք ԺԴ 21]: Եւ եթէ դու ամբողջ սրտով աղերսես, մեղքերի ծովը մենակ կցամաքեցնես եւ կդադարեցնես բարկութեան ալիքները: Քանզի Աստծուց չստանալու պատճառը ամբողջ սրտով չթախանձելն ու չաղաչելն է կամ եթէ աւելի մնասակար բան խնդրէք: Իսկ եթէ անդադար աղօթքներով հոգու համար օգտակարը խնդրէք, անհնար է Աստծուց չստանալ: Ահա Եղիայի աղօթքը երկինքը փակեց ու բացեց [տե՛ս Գ Թագ. ԺԸ], Դաւթի աղօթքը հրեշտակի սուրը կանգնեցրեց [տե՛ս Յովն. Բ]. Յովնանի աղօթքն իրեն կենդանի հանեց կէտի փորից [տե՛ս Յովն. Բ]. քանանացու աղօթքը հալածեց դեւին իր դստեր միջից [տե՛ս Մատթ.

ԺԵ]. աղօթքը սրբեց պոռնիկներին, բժշկեց հիւանդներին, մաքրեց բորոտներին, լուսաւորեց կոյրերին եւ արդարացրեց մեղաւորներին:

Եւ արդ, այս բոլորն ընդունելի աղօթքի օրինակներ են, որին եթէ կամենաս, կարող ես նմանուել, հանել քեզ մեղքերի բանտից եւ արձակուել սատանայական կապանքներից: Միայն արտասուալից պաղատանքներո՛վ աղօթիր Աստծուն եւ կթեթեւանաս ամբարշտութեան ախտերից, կառողջացնես անօրէնութեան ցաւերը եւ կբժշկես յանցանքների հիւանդութիւնները: Միայն ամբողջ սրտո՛վ աղօթիր Աստծուն եւ կազատուես սատանայի որոգայթներից, կփրկուես չարաժանիք վիշապից եւ ողջանդամ կազատուես թունաւոր թշնամուց: Միայն անդադար աղօթքո՛վ թախանձիր Աստծուն, եւ կլուսաւորի մոլորութեան խաւարը եւ կցամաքեցնի մեղքերի պղծութեան աղտեղութիւններն ու ցանկութեան տիղմը: Քանզի երբ անբիծ հաւատքով ամբողջ սրտով աղօթես Աստծուն, կստանաս մեղքերի թողութիւն եւ յանցանքների քաւութիւն, կստանաս երկնքի արքայութիւնը եւ անքաւ բարիքները, կունենաս մարմնի առողջութիւն եւ հոգու փրկութիւն, կունենաս բարի օրեր եւ խաղաղ կեանք՝ [ազատ] բոլոր դրպարտողներից: Նաեւ աղօթքը դադարեցնում է բռնաւորների բարկութեան ալիքները, դարձնում է Աստուծոյ բարկութեան ցասումը, աղօթքը հարստացնում է աղքատներին եւ զօրացնում տկարներին, աղօթքը բժշկում է հիւանդներին եւ հալածում մոլի ախտերը, աղօթքն ամուլին ծննդական է դարձնում եւ անզաւակներին՝ բազմազաւակ, փրկում է ծովի փոթորիկներից եւ ազատում գետի յորձանքներից, կերակրում է քաղցածներին եւ հագցնում մերկերին, արգելում է տարաժամ մահը եւ կատարում հաւատքով թախանձողների բոլոր խնդրուածքները:

Այս է ճշմարիտ աղօթքի զօրութիւնը նրան մերձենալ կամեցողների համար: Սա է անարիւն բանաւոր պատարագը, քանզի իւրաքանչիւր մէկի աղօթք Աստուծոյ պատարագ է. եւ եթէ սիրով չներես, չհաճես ընկերոջդ, քո աղօթքն ընդունելի պատարագ չի լինի, քանզի առ Աստուած չի բարձրանում: Որովհետեւ ով քէն ունենայ ընկերոջ նկատմամբ, անհնար է, որ նրա աղօթքները ելնեն առ Աստուած, իսկ եթէ նա սրտի սիրով աղօթի Նրան, մինչեւ աղաղակելը կասի, թէ՝ ահա հասել եմ: Քանզի անարատ աղօթքը՝ արտասուքներով եւ ողորմութեամբ ուղեկցուող, աղօթքի ժամին աղօթականի առաջ բացում է երկնքի դռները եւ ելնում դէպի Աստուծոյ լսելիքը, եթէ միայն առանց թերանալու կանչեն Նրան:

Սատանան, գիտենալով այս ամէնը, թէ աղօթքով մեծամեծ զօրութիւններ եւ անքաւ բարիքներ են կատարւում, գնում, մերձենում է նրան, ով աղօթել է ցանկանում: Եւ նախ եւ առաջ մահճի մէջ է պատերազմում նրա հետ՝ հեշտացնելով անկողինը, քաղցրացնելով քունը, ծանրացնելով մարմինը. այս ու այն կողմ է շուռ տալիս, յօրանջեցնում եւ քորել տալիս: Եւ յետոյ, հազիւ վեր կենալով, բեկբեկուելով գնում է Եկեղեցի եւ ներս մտնում ու կանգնում Աստուծոյ առաջ: Եւ սատանան այնտեղ էլ պատրուակում է միտքը՝ իր յանցանքների բազմութիւնը չյիշելու, եւ չի հասկանում, որ կանգնած է Աստուծոյ առաջ. ո՛չ օրհնութիւնն է լսում, ո՛չ փառաբանութիւնն է իմանում, ո՛չ էլ ընթերցուածների վարդապետութիւնն է նրա սիրտը մտնում: Ո՛չ հեծում է, ո՛չ էլ հառաչում մեղքերի անօրէնութիւնների համար, ո՛չ լալիս է, ո՛չ էլ ողբում հոգու վէրքերի համար, ո՛չ աղաչում է, ո՛չ էլ աղերսում Աստուծուց, ո՛չ էլ արտասուալից պաղատանքներով հաշտեցնում Տիրոջը՝ չխոստովանելով չարիքների բազմութիւնը եւ չյայտնելով անօրէնութեան ծածկուած մթերումները, որպէսզի փրկուի ահեղ տանջանքներից եւ անշոյլ խաւարից: Փոխանակ լալու եւ պաղատելու՝ մեծ աներկիւղութեամբ եւ արհամարհանքով կանգնած ենք Աստուծոյ առաջ՝ առանց պատկառանքի, ահ ու դողի, ինչպէս դատապարտեալները դատաւորի առաջ կամ ինչպէս մեղանչած ծառաները, ովքեր, իրենց տիրոջ ոտքերն [ընկած], աղերսում են եւ մեծ երկիւղով ու պաղատանքներով աղաչում ու պաղատում: Նաեւ հեծեծանքներով, հառաչանքներով եւ ողորմագին ողբերով չենք արտասուում մահապարտների պէս, որոնց քարշ տալով տանում են չարչարանքների տեղը, եւ չենք ընկնում Աստուծոյ առաջ խորգով, մոխրով եւ մեծ սուգով, որպէսզի փրկի մեզ բորբոքուած գեհենից եւ սաստիկ տանջանքներից, որդերի չարութիւնից եւ անշոյլ խաւարից:

Եւ արդ, ահով եւ խանդաղատագին աղերսներով չենք կանգնել Աստուծոյ առաջ՝ աղաչելու եւ աղերսելու [հոգու] վէրքերի բժշկութիւնը, այլ երբ պատրաստւում ենք աղօթքի, պաղատանքների եւ մեղքերի թողութիւն խնդրելու, լուացւում, օծանւում եւ պաճուճում ենք հանդերձները, որպէս թէ պատրաստւում ենք բոզանոց կամ թատերախաղի [գնալ]: Եւ սնափառ պերճանքներով եւ մոլեկան հպարտութեամբ կանգնում են Աստուծոյ առաջ կանայք՝ բոզերի կերպարանքով, իսկ տղամարդիկ՝ բոզահոմանիների[1]: Եւ ցոփոգի մեղկութեամբ իգանում են պիղծ ցանկութեամբ եւ ձանձրացած վաւաշում են նոխազների եւ իգամոլ ձիերի նման. եւ հէնց եկեղեցու մէջ եւ սրբութեան առաջ պղծութիւն ու պոռնկութիւն են գործում եւ շնութիւն կատարում, [որը] թէպէտ եւ մարմնով չեն գործում, սակայն մտքով են կատարում նոյնը՝ ակնարկելով, արտալի հայեացքներով եւ կնկաձայն բարբառով, ինչպէս եւ Ինքը Տէրն է ասում, թէ ով ցանկութեամբ նայի, կատարեալ շնացող է [տե՛ս Մատթ. Ե 28]: Այսպիսիներն արժանի են ի վերուստ իջնող փայլակների, կայծակների, հրէ շանթերի եւ այրուելու ու սատակուելու այնտեղ եւ որից յետոյ՝ յաւիտենական հրին, սարսափելի խաւարին եւ անանրելի տանջանքներին, քանզի աղօթքի ժամին պղծութիւնների ցանկութեամբ են սիրտը լցնում:

1 բոզահոմանի — բոզի հոմանի, սեղեխ

Զանգի, ո՛վ թշուառական, եկար՝ հեծելու եւ պաղատելու առ Աստուած, արտասուքներ հեղելու եւ աղերսագին ողբալու, հայցելու, հառաչելու եւ թողութիւն խնդրելու. եւ արդ, ա՞յդ է քո խնդրուածքների կերպարանքը՝ ի ցոյց նայողների պաճուճուելդ, օծանուելդ եւ լուացուելդ. ա՞յդ է մեղքերիդ թողութիւն խնդրելու եւ հայցելու կերպարանքը՝ արտանալդ, շողոքորթելդ եւ պիղծ ցանկութեամբ ակնարկելդ. ա՞յդ է Տիրոջը քո չարիքների վրայ հաշտեցնելու կերպարանքդ՝ կրքոտ ցանկութեամբ բոզահոմանիների գեղեցկութիւնդ եւ հասակդ զննելը: Ինքդ քեզ սատանայացնում ես եւ աղաչում ես սատանայից ազատուել, կամովին դիւահարւում ես եւ խնդրում ես փրկուել դեւերից: Ինչպէ՞ս կարող ես Աստուծոյ առջեւ հեծել այդպիսի կերպարանքով կամ ինչպէ՞ս հառաչել այդպիսի խորհուրդներով: Նաեւ համարձակուեցիր նոյնիսկ մտնել Աստուծոյ առաջ զազրելի մտքով եւ սատանայական կերպարանքով, Աստուծոյ եկեղեցին պոռնկանոց դարձնել եւ չես սոսկում ու դողում սուրբերի Սուրբից եւ Աստուծոյ ահեղ դէմքից: Զգիտե՞ս, որ Սրտագէտը քննում է քո խորհուրդները եւ գիտի ամէն ինչ. չե՞ս լսել, որ [Աստուած] դատելու է մտածութիւնների համար եւ հաշիւ է պահանջելու աչքերի արատաւոր [նայուածքների] համար:

Եւ արդ, սթափուի՛ր եւ դէն գցիր քեզանից մտքի պաճուճանքների կեղծաւոր խաբէութիւնը, ապա՛ մտիր Աստուծոյ առաջ եւ լսի՛ր: Երբ մահապարտները մտնում են թագաւորի առաջ, չեն դիմում պաճուճանքների, այլ՝ աղերսների եւ պաղատանքների. երբ վիրաւորը մտնում է հիւանդանոց, այլեւայլ խորհուրդների կարիք չունի, այլ՝ միայն դեղ որոնել վէրքին եւ բժշկել ցաւերը: Նոյնպէս էլ մեղքերով վիրաւորին եւ անօրէնութիւններով ցաւագնեալին պաճուճանքներ եւ պիղծ խորհուրդներ պէտք չեն, երբ եկեղեցի է մտնում, ոչ էլ՝ օծանուել եւ մազերը հիւսել՝ աղօթքի ժամին Աստուծոյ առաջ պաղատելու համար, այլ [պէտք է] մարմինը նեղել եւ խորհուրդը մաքրել. եւ գծուծ տեսքով, փշրուած սրտով, խոնարհ անձով մտնել, կանգնել Աստուծոյ առաջ եւ բազում պաղատանքներով ողբալ եւ դառնապէս լալ, անդադար հեծութեամբ աղաչել ու աղերսել, բախել կուրծքը, տարածել ձեռքերը, արտասուք հոսեցնել, նեղուած սրտով խոստովանել չարիքները, անհամարձակ լեզուով, ամօթալից երեսով, ողբալի ձայնով եւ խանդաղատալի բարբառով հաշտեցնել Աստծուն եւ մեղքերի թողութիւն ստանալ:

Այս է այն աղօթքների եւ խնդրուածքների կերպարանքը, որոնց վրայ Տէրը խոնարհւում է եւ լսում, որով յանցանքներին [թողութիւն] է շնորհում, քաւում անօրէնութիւնները, որով մաքրւում եւ սրբւում ենք պղծութիւնների չար ախտերից եւ սատանայական խորհուրդներից, որով ստանում ենք արքայութիւնը եւ անմահ կեանքի փափկութիւնը: Իսկ մենք, այս ամէնը յիշելով, մեծ արհամարհանքով մտնում ենք Աստուծոյ մօտ, սակայն սատանայի հետ լինում, որ շփոթեցնելով խառնակում է մեր միտքը պէս-պէս մտքերով եւ ցրելով հոսեցնում մեր խորհուրդներն աշխարհի հոգսերի եւ զբօսանքների մէջ: Եւ, գերուած աղօթքի շահաւոր օգնութիւնից, գրաււում ենք չարի չար խորհուրդներով. [եկեղեցու] ներսում ծունկի ենք եկել աղօթելու համար, իսկ մեր միտքը շրջում է՝ բազում ցնորքներով թափառելով դրսում: Զանգի աղօթելիս խորհում ենք տան եւ անդաստանների հոգսերի մասին. աղօթելիս հաշւում ենք դաշտերի արդիւնքը եւ այգիների պտուղները, թէ քանի ման կլինի իմ հացը կամ քանի սափոր՝ գինին. նաեւ աղօթելիս մտաքերում ենք հօտերն ու նախիրները, թէ քանի արջառ կամ քանի ոչխար կայ. այնտեղ նաեւ յիշում ենք վարձկանների գործն ու վարձը, թէ՝ ափսոս, որ այս [կամ այն] ելնում է իմ տանից: Այլեւ աղօթելիս յիշում ենք նոյնիսկ ընկերոջ դատաստանները եւ իսկոյն դատում Աստուծոյ առաջ. եւ մինչդեռ աղօթքի ենք կանգնած, տակաւին նաեւ ամբաստանութիւններ ենք խորհում եղբօր մասին եւ, եկեղեցուց դեռ չարձակուած, սկսում ենք ոտոխին ամբաստանել եւ որպէս լեղիով դառնացնում աղօթքի քաղցրութիւնը: Եւ այնպէս է սատանան մեր միտքը յափշտակում, որ աղօթելիս մինչեւ իսկ աղտեղի խորհուրդներն է յիշեցնում. աղօթելիս հաշւում ենք փողերի վաշխերը եւ տոկոսները, աղօթելիս յիշում ենք ընկերոջ նկատմամբ թշնամանքը եւ նախանձը: Եւ ոչ միայն դատապարտւում ենք այսպիսի չար խորհուրդներով, այլեւ վիրաւորւում ենք՝ աղօթելիս ունայնախօս լեզուով եւ շատախօսութեամբ մնասուելով. քանզի բազում հոգիների մնաս ենք հասցնում, որոնց մասին գերւում ենք մտքով եւ մերժուելով դուրս բերւում աղօթքից եւ փառատրութիւնից, [աղօթքը] վերածում ենք խաւարային խօսքի եւ կորստեան խորխորատներն իջեցնում [մեր հոգիները]: Այս ամէնն արժանի չէ՞ արդեօք [Աստուծոյ] ահեղ բարկութեանը եւ գեհենի բորբոքուած բոցին, բազում տանջանքների եւ անլոյս խաւարին, որովհետեւ այսչափ անօրէնութիւններ ենք գործում Աստուծոյ առաջ եւ, դատապարտութեամբ պատուհասուած, դուրս ելնում աղօթքից եւ ո՛չ թէ որպէս աղօթականներ պատւում, այլ որպէս հայհոյիչներ եւ արհամարհողներ՝ պարտաւորւում եւ պատժւում:

Իսկ եթէ աղօթքի եւ բարեգործութեան մէջ ենք մեղանչում, որչափ առաւել եւս պարտաւորւում ենք չար գործերի մէջ. եթէ [աղօթքի] նաւահանգստի ներսում ընկղմւում ենք չարի խորութիւնների մէջ, ի՞նչ պիտի անենք, երբ, դուրս ելնելով, մտնենք մեղքերի ծովի մէջ՝ հրապարակների, շուկաների, երդումների, հայհոյանքների, զրկանքների, սնափառութեան, բամբասանքների, նախանձի, բարկութեան, դրամաշորթութեան, արբեցողութեան, որկրամոլութեան, հպարտութեան [եւ առհասարակ] բոլոր ախտերի բազմութեան մէջ, որ, առաւել քան ծովածուփ ալեկոծութիւնները խեղդելով, ընկղմում է եւ խորասուզելով սատակեցնում քաղցրահոյլ յանցանքներով: Եւ արդ, ինչո՞վ կամ որո՞վ պիտի կարողանանք

փրկուել մեր անթիւ եւ չարաչար գործերից եւ սատանայի բազում հնարներից, որ ոչ միայն դառը չարիքներով չարչարում եւ սպանում է, այլեւ հնարներ է նիւթում՝ սուրբ աղօթքի քաղցրութիւնը վերածելու դժնդակ լեզու դառնութեան. եւ չենք կարող որեւէ ճանապարհով զերծ մնալ չար խժից եւ դառը քարքից, եթէ ոչ՝ հանապազ պատրաստ լինելով սատանայի մեքենայութիւններին եւ զգուշանալով նրա աներեւոյթ նետերից:

Եւ եթէ միշտ յիշենք մեր վախճանի օրը՝ երկիւղելով այն վտանգից, կարող ենք փրկուել, երբ հոգին աններելի տագնապով մարմնից դուրս գալ պահանջուի եւ բռնուելով տարուի մթապատ խաւարային մէգի միջով. եւ եթէ միշտ յիշենք մեծ Բեմի արհաւիրքները եւ Դատաստանի ահաւոր Օրը, եթէ յարաժամ հոգանք այն ամօթի համար, որ լինելու է տիեզերական հրապարակի առաջ, [եթէ յիշենք] տանջանքների բազմութիւնը, թունաւոր որդերի դառնութիւնը, աղջամուղջի շօշափելի խաւարը, ժանտահոտ տարտարոսների խորութիւնները, գեհենի հրի կայծակների բորբոքումը, հնոցների բարձրաձայն գոչումները, հրեղէնների յորդահոս գետերի արհաւիրքները, մեղաւորների մշտատեւ այրումն ու խորովումը, ցաւերի ու աղէտների անտանելի կսկիծները:

Եթէ այս ամէնը միշտ մտաբերես, կարող ես զերծ մնալ սատանայի որոգայթներից, կարող ես երկիւղով կանգնել Աստուծոյ դիմաց, կարող ես սուրբ աղօթք մատուցել, կարող ես սգալ, լալ եւ դառնապէս ողբալ, կարող ես Դատաւորի դէմքը քաղցրացնել, ողորմելու եւ գթալու խնդրհեցնել եւ արժանանալ մեղքերի թողութեանը եւ յանցանքների քաւութեանը, լուսեղէն խորանների ժառանգութեանը եւ փափագելի դրախտի փափկութեանը, յաւիտենական ուրախութիւնների հեշտութիւններին, անմահ կեանքի ցանկութիւններին եւ անքաւ բարիքների վայելչութիւններին Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու հետ. Նրան փառք, պատիւ եւ գոհութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

Սուրբ Եփրեմ Խուրի Ասորին Եկեղեցու տասներկու տիեզերական վարդապետներից[1] մէկն է: Նա ապրել եւ գործել է Դ դարում (306–373 թթ.): Մանուկ հասակից աշակերտել է ս. Յակոբ Մծբնայ հայրապետին: Վերջինս, տեսնելով Եփրեմի բացառիկ ընդունակութիւններն ու անաղարտ վարքը, կարգել է նրան Մծբինի նշանաւոր դպրանոցի վարիչ:

363–ին Մծբինը պարսիկների տիրապետութեան տակ է անցնում, եւ Եփրեմը քրիստոնեայ բնակչութեան մեծ մասի հետ գաղթում է Եդեսիա: Ըստ պահպանուած աւանդութեան՝ նա սկսում է խստակրօն կեանք վարել Եդեսիայի լեռներում եւ շուտով համբաւում հրաշագործութիւններով: 370–ին Եփրեմը գնում է Կապադովկիայի Կեսարիա քաղաքը, ուր ս. Բարսեղ Կեսարացու կողմից սարկաւագ է ձեռնադրւում, որից յետոյ, վերադառնալով Եդեսիա, քրիստոնէական քարոզչութեան գործունէութիւն է ծաւալում: Յայտնի է, որ կեանքի վերջին շրջանում նա դարձեալ անցնում է իր նախընտրած մենակեցութեանն ու ճգնութիւններին եւ վախճանւում խոր ծերութեան մէջ:

Դեռեւս իր կեանքի օրօք ս. Եփրեմը մեծ հռչակ է ունեցել ողջ քրիստոնեայ արեւելքում որպէս հոգեւոր քերթուածքների հեղինակ: Նա համարւում է Ասորական Եկեղեցու պարծանքն ու *ամենամեծ գիտնական ներկայացուցիչը:* Ս. Եփրեմի գրական ժառանգութիւնը կարեւոր տեղ է գրաւում նաեւ Հայոց Եկեղեցու վարդապետարանում: Նրա գրուածքների հայերէն թարգմանութիւնները ոսկեդարեան են համարւում եւ մեծ ազդեցութիւն են գործել մեր հայրերի հոգեւոր կեանքի եւ հայ կրօնական գրականութեան վրայ: Ս. Եփրեմը թողել է մեկնութիւններ, ճառեր, հոգեւոր բանաստեղծութիւններ ու աղօթքներ: Նրա մեկնութիւններից շատերը միջին դարերում զուգորդուել են ուրիշ հեղինակների (յատկապէս՝ ս. Ոսկեբերանի) մեկնութիւնների հետ: Ինչպէս վկայում են իր ժամանակակիցները, ս. Եփրեմն ունեցել է հոգեւոր խորհուրդների ի վերուստ բացայայտութեան բացառիկ պարգեւ եւ Սուրբ Գիրքը ոչ մարդկօրէն մեկնաբանելու կարողութիւն: Ս. Բարսեղ Կեսարացին իր «Արարածոց մեկնութեան» մէջ

---

1 Այս վարդապետները (Ոեթէոս, Դիոնեսիոս Արիսպագացի, Մեղբեստրոս, Աթանաս Աղեքսանդրացի, Կիւրեղ Երուսաղէմացի, Եփրեմ Ասորի, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նիւսացի, Գրիգոր Աստուածաբան, Եպիփան Կիպրացի, Յովհան Ոսկեբերան, Կիւրեղ Աղեքսանդրացի) ապրել են քրիստոնէութեան այսպէս կոչուած տիեզերական, մինչքաղկեդոնեան ժամանակաշրջանում, երբ դեռեւս Եկեղեցին բաժանուած չէր: Նրանց վարդապետութիւնն առ այսօր հանդիսանում է բոլոր Առաքելական Եկեղեցիների տեսական եւ բարոյական աստուածաբանութեան հիմքը:

մի հատուած մեկնելիս նշում է, որ տուեալ մեկնութիւնն իրենը չէ, այլ մի ասորու, «որ երեւէր անչափ օտարոտի ի մարդկեղէն իմաստութեան աշխարհիս, առաւել քան զսոյն մօտ եւ ընտանի էր վարժից ճշմարիտ վարդապետութեան»[1]: Ըստ պահպանուած տեղեկութիւնների՝ խօսքը ս. Եփրեմի մասին է[2]:

«Ճշմարիտ վարդապետութիւն» ասելով՝ Կեսարացին նկատի ունէր ոչ միայն ս. Եփրեմի իմացական կողմը, այլեւ՝ գործնական, աստուածպաշտական իմաստութիւնը: Խստակրօնութեան մէջ հասնելով հրեշտակային վարքի՝ նա արժանացել է Աստուածութեանը վերաբերող ճանաչողութիւնների՝ «ի շնորհաց Հոգւոյն սքանչելեօք հմուտ գտեալ խորոցն Աստուծոյ»[3]: Այս ամենի շնորհիւ նա ունակ է եղել գրելու նաեւ դաւանաբանական աշխատութիւններ, որոնք, ցաւօք, չեն պահպանուել:

Լինելով ճգնակեաց կրօնաւոր՝ ս. Եփրեմն ամբողջովին նուիրուած է եղել հոգեւոր նորոգութեան խնդրին եւ ամէն գնով պայքարել՝ չարին ու մեղքին ոչնչով չզիջելու համար: Սա նրան խիստ աչալուրջ է դարձրել չարի նրբին խաբէութիւնների նկատմամբ, որոնցով վերջինս Քրիստոսի նուիրեալներին ձգտում է շեղել ուղիղ աստուածպաշտութիւնից: Եւ ինչպէս բոլոր սուրբերի, այնպէս էլ Եփրեմի համար այդ խաբէութիւններին չմատնուելու ամենափորձ միջոց է հանդիսացել յարատեւ աղօթքը՝ սեփական անձի մեղաւորութեան մշտական գիտակցմամբ, որն իր վրայ է հրաւիրում քաւութեան եւ նորոգութեան աստուածային Շնորհը եւ ետ վանում ամէն տեսակ չարահնար յարձակում: Աղօթքի փրկարար պտուղը ճաշակելով՝ երանելի ս. հայրն իր գրաւոր խօսքի միջոցով ձգտել է սերունդներին փոխանցել իր նուիրական փորձառութիւնը՝ ստեղծելով բազմաթիւ աղօթքներ: Դրանցից է «Զօրաւոր» վերտառութեանն արժանացած նրա երկարաշունչ աղօթքը[4], որն, ինչպէս յայտնի է, մեծ տարածում է ունեցել Հայոց աշխարհում, եւ ս. Եփրեմի անունն այս իսկ աղօթքով է հռչակուած ու սիրելի եղել հայ ժողովրդի մէջ:

* * *

Իւրաքանչիւր աղօթական խօսք, որ տրւում է սուրբերի կողմից եւ «յանձնւում» Եկեղեցու տնօրինութեանը, ունի իր վերնային նախախնամութիւնը եւ հոգեւոր նպատակը: Ծանօթանալով ս. Եփրեմի «Զօրաւոր» աղօթքին՝ կարող ենք ասել, որ այն ինչ-որ առումով նախօրինակ է հանդիսացել մեր հայրերի համար թէ՛ ըստ պատշաճի աղօթելու եւ թէ՛ աղօթքներ ու աղօթական մատեաններ ստեղծելու խնդրում: Քանզի այս աղօթքում տրուած է ճշմարիտ քրիստոնեայի ամբողջական ներքին նկարագիրը՝ համակուած Աստուծոյ սուրբ երկիւղով եւ ամէն ինչում անբիծ ու անարատ լինելու սրբազան ուխտադրութեամբ: Այս աղօթքն արտացոլումն է սրբազգաց հոգու ամբողջական ինքնանուիրումի: Այն «Զօրաւոր» է անուանուել հաւանաբար իր ունեցած բժշկական ներգործութեան շնորհիւ: Նման ներգործութեան նախապատճառը թաքնուած է աղօթքի զղջաւոր, ապաշխարական բնոյթի մէջ, որը նպաստում է մեղքի գիտակցութեան արթնացմանն ու խորացմանը եւ ամենից առաջ մեղքերից ձերբազատուելու աստուածահաճ յօժարութիւն բորբոքում մարդու սրտում: Բացի այդ, աղօթքում հետեւողականօրէն արծարծուած են հոգեւոր ճանապարհորդին անհրաժեշտ հիմնական սկզբունքները, որոնց իրագործումն է անդադար հայցւում Փրկչից: Սրանում թաքնուած է աստուածպաշտութեան խորապէս ուղղափառ ըմբռնումը, որ կայանում է **երկնառաք Շնորհի հետ մշտապէս գործակցելու** (*συνεργία*) ճգնաւորական ներհմտութեան մէջ: Այս ունակութիւնը խիստ յատկանշական է եղել բոլոր սուրբերին, որոնք, մինչեւ վերջ լինելով ուղղափառ ընթացքում, կարողացել են զերծ մնալ երկու հերձուածողական ծայրայեղութիւններից, մի կողմից՝ **սեփական գործերի եւ առաքինութիւնների նշանակութեան չափազանցումից**, որ տանում է մոլեռանդ ինքնագործունէութեան, եւ միւս կողմից՝ **միայն Աստուածային Շնորհին ապաւինելու թերամիտ «փրկաբանութիւնից»**, որ տանում է կործանարար ծուլութեան: Արդ, ս. Եփրեմի աղօթքում պարունակուող «զօրաւոր» ներուժն ամենից առաջ այս **աստուածպաշտական ոսկէ միջինի** գիտակցութիւնը հաղորդելու մէջ է: Քանզի աղօթքը սկզբից մինչեւ վերջ յագեցած է աստուածպաշտական գործառնութիւններն իրականացնելու համար անդադար խնդրուածքներով ու պաղատանքներով, որով աղօթարար ընթերցողի մէջ ներհաստատւում է անձնական ճիգեր գործադրելու եւ այդ ամենի համար շնորհական օգնականութիւն հայցելու անհրաժեշտութեան գիտակցումը: Անձնական ճիգերի եւ Շնորհի մշտատեւ գործակցութեան մէջ է կայացել սքանչելագործ սուրբերի զօրութիւնը, որի առջեւ անզօր է ամէն մի չարահնար յարձակում, որի առաջ նահանջում են մարդկային բնութեան բոլոր ախտերն ու տկարութիւնները: Շնորհի եւ ջանքերի միասնականութիւնը բազմիցս արտայայտուած է այս իսկ աղօթքում, յատկապէս՝ **ԽԱ** գլխում.

> **Առաքի՛ր, Տէր, Քո լոյսը եւ լուսաւորի՛ր իմ միտքն ու իմ խորհուրդները Քո գիտութեան լոյսով, հալածի՛ր իմ մտքի խաւարը եւ իմ անձի տկարութիւնը կակղեցրո՛ւ իմ հոգու ջանքերով ու վաստակներով:**

Թէ ինչ *ջանքեր ու վաստակներ* են պէտք ուղղափառ աստուածա-

1 Տե՛ս ս. Բարսեղ Կեսարացի, «Յաղագս վեցաւրեայ արարչութեան», Երեւան, 1964, էջ 52-53:
2 Տե՛ս «Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց», Վենետիկ, 1810, էջ 1038:
3 Տե՛ս «Սրբոյն Եփրեմի մատենագրութիւնք», հատոր առաջին, Վենետիկ, 1836, էջ 5-6:
4 Տե՛ս «Գիրք աղօթից ասացեալ սրբոյն Եփրեմի Խուրին Ասորւոյ», Երուսաղէմ, 1846:

պաշտին, առատապէս նշուած եւ բազմապէս կրկնուած են այս աղօթքի հայցուածքներում: Այս առումով աղօթքն ընդարձակ խրատական «ձեռնարկ» է, եւ նրանում արծարծուած աստուածպաշտական սկզբունքների (յարատեւ զղջաւորութիւն եւ երկիւղածութիւն, Դատաստանի եւ Արքայութեան յիշողութիւն, մտաւոր եւ մարմնաւոր ճգնութիւններ, մշտարթուն աղօթական զգօնութիւն, համբերութիւն եւ այլն) իւրացումը խիստ անհրաժեշտ է մեզ այսօր՝ առաւել հաստատուելու համար ուղղափառութեան շաւղում: Այսու, ս. Եփրեմի «Ջօրաւոր» աղօթքին պէտք է մօտենալ ոչ թէ մոգական գիտակցութեամբ, նրա բժշկական ներգործութեան արհեստական եւ անխոկում ակնկալութեամբ, այլ՝ խորամուխ լինելով նրանում զետեղուած հոգեւոր խորհուրդների մէջ, որպէսզի նրանք խորապէս տպաւորուեն մեր սրտերում: Այդժամ աղօթքի հայցուածքները մեզ համար կդառնան Տիրոջ առջեւ արուող սրբազան ուխտադրութիւններ՝ այդ ամէնը կեանքում իրականացնելու ձգտմամբ, այն, ինչի համար իսկ աւանդել է այս աղօթքը երանելի ս. հայրը, ինչի համար նա բարեխօս է այժմ երկնքում:

Տիգրան Խաչատրեան

ՍՈՒՐԲ ՀԱՅՐ ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻ ԱՍՈՐՈՒ ՋՕՐԱՒՈՐ ԱՂՕԹՔԸ

Ա

Տէս, Տէր, իմ տառապանքները եւ իմ բազմամեղ հոգու ցաւերը, դարձիր, ներիր եւ դէպի Քեզ առաջնորդիր, ինչպէս որ ասացիր. «Դարձէք դէպի Ինձ, եւ ես կդառնամ դէպի ձեզ»*:

Բ

Ողորմիր ինձ՝ լքուածիս, օգնիր ինձ՝ եղկելիիս, ճառագայթիր ինձ՝ խաւարեալիս, առաջնորդիր ինձ՝ մոլորեալիս, որ լի եմ մեղքերով եւ անթիւ յանցանքներով եւ տարուբերուելով ծփում եմ անօրէնութեան յորձանքներում:

Գ

Ձեռք մեկնիր, ինչպէս Պետրոսին. մաքսաւորի պէս արդարանալ եմ աղերսում:

Դ

Շնորհիր, ինչպէս աւազակին. բաց ինձ կենաց ճանապարհի եւ մեծ արքունական առագաստի դուռը:

Ե

Ո՛վ Խորք մեծութեան եւ իմաստութեան, ընդունիր բանուածիս, որ մեղքերով ընկել եմ ծովի խորքը, պահպանիր եւ զօրացրու ինձ՝ գործելու Քո կամքը, օր ու գիշեր ագալու եւ լալու իմ ողջ անօրէնութիւնն ու հեղգութիւնները:

Զ

Աղիւրդ կենդանութեան, յազեցրու իմ ծարաւ հոգին Քո առատաբուխ վտակից, որ ցամաքած առչորւում եմ իմ բազում անօրէնութիւններից: Ծնցիր իմ քարացած սիրտը եւ ինձանից ապաշխարութեան արցունքներ քամիր:

Է

Գաղնձդ բոլոր բարիքների, շնորհիր ինձ դոյզն-ինչ Քո յոգնառատ բարիքներից, որ չարաչար աղքատացած ու մերկացած եմ, հագցրու եւ կերակրիր ինձ ապաշխարութեան արտասուքներով:

Ը

Լոյս ճշմարիտ Քրիստոս, որ լուսաւորում ես ամէն մարդու, լուսաւորիր մեղքերով խաւարեալիս, բաց իմ սրտի աչքերը եւ հաստատիր Քո պատուիրանների երկիւղով ու սիրով:

Թ

Մի՛ դատիր եւ մի՛ դատապարտիր ինձ, Տէր, ըստ իմ անբաւ զազիր

* Մաղաք. Գ 7

գործերի եւ մի՛ կարգիր ինձ ուրիշների հետ, որոնք զայրացրեցին Քեզ, այլ փառաւորիր փառաւորեալների հետ եւ պսակիր պսակեալների հետ եւ ուրախացրու բերկրեալների հետ:

Ժ

Շատ է ինձ, Տէր, բայց յոյս եմ դնում Քո ողորմութեան վրայ, քանզի շներն էլ կերակրւում են իրենց տիրոջ սեղանից ընկած կերակրի փշրանքներով: Շտապ կոչիր ինձ, Տէր, որպէսզի զամ Քո եռեւից:

Հովիւ բարի, փնտրիր ինձ՝ մոլորեալիս: Նաւապետ բարի Յիսո՛ւս, փրկիր ինձ իմ մեղքերի ծովի ալիքների բազմութիւնից եւ տուր ինձ խաղաղութեան նաւահանգիստը:

ԺԱ

Տուր ինձ, Տէր, սուգ եւ արտասուքներով զօրացրու իմ մարմինը, կակղեցրու իմ քարացած սիրտը եւ հաւաքիր մաքերս դէպի Քեզ: Ջնջիր իմ յանցանքների բազմութիւնը եւ շնորհիր ինձ իմ հոգու շահը:

Ընդունիր եւ մի՛ անտեսիր իմ սրտի խառչանքները:

ԺԲ

Տուր ինձ իմաստութիւն եւ հաստատիր, Տէր, իմ սրտում Քո ահն ու երկիւղը: Լուսաւորիր իմ խորհուրդները, կարող դարձրու իմ մարմինը՝ յարաժամ ժուժկալութեամբ մնալու Քո պատուիրանի մէջ:

ԺԳ

Բա՛ց, Տէր, իմ սրտի աչքերը եւ լուսաւորիր Սուրբ Հոգովդ:

Պարգեւիր ինձ առողջ խորհուրդներ եւ առաքինի վարք, հանապազ ողբալ, ահ ու դողով ամէն ժամ անգրաղ մնալ [Քո] առջեւ:

ԺԴ

Ո՛վ բարերար եւ մարդասէր Տէր, առանց չարչարանքների եւ ժուժկալութեան ինչպէ՞ն ազատւեմ իմ մեղքերի բազմութիւնից, քանզի մարմնովս տկար եմ եւ հոգով՝ խաւար. ողորմիր, Տէր, եւ, ինչպէս կամենում ես, օգնիր ինձ:

ԺԵ

Անոխակա՛լ Տէր, մի՛ անտեսիր ինձ իմ բազում չարիքների պատճառով, այլ դարձիր դէպի ինձ եւ իմ բոլոր ցանկութիւնները դարձրու դէպի Քեզ եւ ինձ ամրողջ սրտով միայն Քե՛զ սիրել տուր:

Ողջ պահիր իմ մարմինը նուազ եւ անպաճոյճ կերակուրներով:

ԺԶ

Պատկերիր, Տէր, Քո անխուսափելի Գալուստն իմ աչքերի առաջ եւ դողացրու իմ մարմինը՝ անդադար լալու եւ սգալու Քո Ահեղ Դատաստանի երկիւղից եւ մի՛ փակիր Քո արարչական սիրոյ զուրը Քո ստեղծուածիցս, որ մնառած եմ մեղքերով:

ԺԷ

Հատուցացրու ինձ, Տէր, բարին գործելու ամէն ժամ եւ խափանիր իմ չար մաքից բոլոր չարիքները, եւ պահիր ինձ պիղծ եւ անխրատ ընթացքից ու չար սովորութիւնից եւ հաստատիր Քո պատուիրանների երկիւղի ու սիրոյ մէջ:

ԺԸ

Արեգակդ արդարութեան՝ փրկիչ իմ եւ ազատիչ Յիսուս Քրիստոս, Քո լոյսին եմ ապաւինում, լուսաւորիր եւ ջերմացրու իմ սիրտը: Հրկիզիր իմ չար խորհուրդները եւ հալեցրու իմ մեղքերի սառնամանիքը: Գարուն շնորհիր, Տէր, իմ հոգուն՝ ծաղկեցնելու եւ պտղաբերելու արդարութեան պտուղը:

ԺԹ

Ազատիչդ Քրիստոս, ազատիր ինձ ձմեռային մեղքերի դառնաշունչ քամիներից, պայծառացրու եւ ջերմացրու խաւարած եւ սառած հոգիս եւ ցօղիր Քո շնորհի ջերմութեան ցօղն իմ սրտի խորհուրդների անդաստաններում:

Ի

Փչիր, Տէր, Սուրբ Հոգուդ շնչի հարաւային քաղցր զեփիւռն իմ խստացած եւ թանձրացած սրտի վրայ եւ Քո որոտընդոստ փայլատակմամբ զարթնեցրու իմ սառնացած եւ ցամաքած միտքը:

ԻԱ

Բա՛ց, Տէր, իմ սրտի փակուած դուռը եւ ծագեցրու ներսում Քո ճառագայթների լուսաւորութիւնը:

Սրբիր եւ իմ մեղքերի աղտը եւ բժշկիր իմ հոգու վէրքերը:

Ամրացրու Քո երկիւղով եւ զօրացրու՝ արդարութիւն գործելու ամէն ժամ:

ԻԲ

Իմ գլուխն արտասուքների բիժան աղբիւր դարձրու, Տէր, լուա՛ իմ հոգու թարախը, սրբիր իմ զգայարանները: Եւ չարութիւններ գործողիս դարձրու դէպի Քո ջերմ սիրոյ զոլումը՝ զգաստ մարմնով ապրելու ըստ Քո պատուիրանի:

ԻԳ

Մեկնիր, Տէր, Քո ձեռքը նաւաբեկեալիս, որ ընկղմուած եմ չարիքների խորքերում, փրկիր ինձ իմ մեղքերի ալիքների սաստիկ ծովածուփ բռնութիւնից: Սանձիր, Տէր, եւ դադարեցրու իմ անսանձ միտքը կենցաղի զբաղմունքներից եւ ունայնութիւններից:

ԻԴ

Ցագեցրու, Տէր, իմ հոգու ծարաւը Քո առատաբուխ շնորհով եւ մի՛ անտեսիր իմ սրտի առչորումը: Պապակում եմ իմ չարիքների առաջից. զովացրու եւ լուա՛ Քո ողորմութեան ջրով իմ ապականուած եւ հոտած շուրթերը:

ԻԵ

Ծագեցրու, Տէր, իմ սրտում, Քո շնորհների լուսաւորութիւնը ու խաղաղութիւնը: Հալածի՛ր իմ մտքից մեղքերի ցաւագին գիշերը եւ արի վա՛ռը շնորհիր իմ մարմնին՝ առաքինութեամբ ապրելու Քո կամքի համաձայն: Եւ հանի՛ր իմ սրտից մեղքերի փուշը, քանզի իմ հոգին չարաչար միրաւորւում է, եւ բարի սերմ սերմանիր իմ սրտում՝ աճեցնելու եւ պտղաբերելու արդարութեան պտուղը:

ԻԶ

Հալածի՛ր, Տէր, խաւարը իմ հոգուց եւ հագցրու Քո արդարութեան ճառագայթների լոյսը: Զարդարի՛ր իմ սիրտը երկիւղով, զղջմամբ եւ արտասուքով՝ երկնչելու Քո դատաստաններից եւ պահելու Քո բոլոր պատուիրանները:

ԻԷ

Արթնացրու ինձ, Տէր, իմ մեղքերի քնի տեսուր խորութիւնից եւ զգաստացրու իմ տարակուսեալ մարմինը բոլոր բարի գործերի մէջ, որ միշտ խորհեմ մեծ երկիւղով եւ Քո կամքը գործեմ ամէն ժամ:

ԻԸ

Ազատի՛ր ինձ, Տէր, մեղքերի ծառայութիւնից եւ դասի՛ր Քո ծառաների շարքում, ովքեր սիրեցին Քեզ եւ պահեցին Քո պատուիրանները: Տո՛ւր իմ սրտին նրանց երկիւղը եւ ուսուցանի՛ր ինձ գնալ նրանց ընթացքի շաւիղներով:

ԻԹ

Թեթեւացրու իմ մարմնի կարիքները եւ առատացրու իմ մէջ Սուրբ Հոգուդ շնորհները՝ լինելու Քո աստուածային կամքի տաճար եւ բնակարան, անյագ սիրով սիրելու Քեզ եւ ատելու ամենայն ցանկութիւն եւ այս աշխարհի սէրը, որով եղաւ հոգուս կորուստը եւ մահը:

Լ

Ողորմի՛ր, Տէր, այս անմարդարնակ անապատում, սրա միջոցով արժանաւորի՛ր ինձ միաւորուել առաջին սուրբ հայրերի հետ, արի եւ զգաստ ժուժկալութեամբ ժառանգելու խոստացուած պարգեւները:

ԼԱ

Առաջնորդի՛ր ինձ, Տէր, նեղ եւ նուրբ ճանապարհով, ինչպէս որ առաջնորդեցիր Քո սուրբերին եւ զօրացրու իմ տկարութիւնից՝ ժուժկալութեամբ, համբերութեամբ եւ ջերմեռանդ սրտով գնալու Քո ճանապարհով:

ԼԲ

Նայի՛ր, Տէր, իմ ճնշած եւ թարախած հոգուն եւ լուա՛ աստուածային ջրով: Հանեմի՛ր հոգեւոր աղովդ եւ օծի՛ր անուշահոտ սուրբ իւղովդ եւ ընձեռի՛ր կատարեալ առողջութիւն:

ԼԳ

Նուազեցրու, Տէր, իմ աչքերի քունը եւ թաթափի՛ր նիրհն իմ գլխից, քանզի, ծուլութեամբ ծանրացած, պաշարում է իմ մարմինը: Ինձ արթուն եւ պատրաստ դարձրու, Տէր, ամէն ժամ, որ զգաստութեամբ եւ արդարութեամբ վարեմ իմ կեանքը:

ԼԴ

Տե՛ս, Տէր, իմ որովայնի ընդվզումը, որ զօրացել է ինձ վրայ, հանապազ ցանկանում է կերակուր, ըմպելիք եւ խորտիկների համեղութիւն: Սակայն Դո՛ւ, Տէր ամենակարող, կարի՛ր մարմնիս տենչանքների ցանկութիւնը:

ԼԵ

Եւ քանզի իմ ցնդած, պղտորուած եւ ցնորուած միտքը շրջում է երկրաւոր կենցաղի հոսանքներում, Դո՛ւ, Տէր, լուսաւորի՛ր հոգուս աչքերը՝ անզգաղ եւ անտերկմիտ, արի եւ զգաստ ամենայորդոր փութով գալու Քո աստուածային սիրոյ եռեռից:

ԼԶ

Հալածի՛ր, Տէր, իմ մտքի խորհուրդներից բոլոր չար երկրաքարշ մտածումները, բարիքների արմատն ամուր անկի՛ր իմ սրտում եւ նկարի՛ր իմ հոգում շնորհների պտուղը:

ԼԷ

Ապաչում եմ, բարերար եւ ողորմած Տէր, արթուն եւ զգաստ պահի՛ր ինձ, ուսուցանի՛ր ինձ՝ գնալու Քո բարի ճանապարհով, որ արժանի լինեմ Քո մեծ փառքին:

ԼԸ

Եւ քանզի ճաշակման ցանկութիւնն ամրողջապէս զբաղեցնում է իմ միտքը, արդ, հալածի՛ր ինձանից որկրամոլութիւնը, որից միշտ խարուեցի, եւ կերակրի՛ր ինձ Քո սուրբ երկիւղով:

ԼԹ

Առաքի՛ր, Տէր, Քո սերովբէներից մէկին, որ, բերելով հրէ կայծակը, մերձեցնի իմ շուրթերին եւ դուրս հանի իմ անօրէնութիւնները, սրբի իմ մեղքերը, մաքրի իմ խորհուրդները, ջնջի իմ աղտեղութիւնները եւ լուսաւորի իմ միտքը՝ նրանով յաւիտենական կեանքը ժառանգելու:

Խ

Առաքի՛ր, Տէր, Սուրբ Հոգուդ ուրախարար բաժակը եղկելիիս, որ ծարաւում եմ Քեզ, յաղեցրու եւ զուարթացրու Քո սիրոյ եռանդով, լուծի՛ր եւ ոչնչացրու իմ յանցանքների դառնութեան մրուրը:

ԽԱ

Առաքի՛ր, Տէր, Քո լոյսը եւ լուսաւորի՛ր իմ միտքն ու իմ խորհուրդները Քո գիտութեան լոյսով, հալածի՛ր իմ մտքի խաւարը եւ իմ անձի տկարութիւնը կակղեցրու իմ հոգու ջանքերով եւ վաստակներով:

ԽԲ

Առաքի՛ր, Տէ՛ր, Քո խաղաղութեան հրեշտակին իմ անձին վերակացու եւ պահապան՝ որպէս իշխանութիւն՝ գնալու համար իմի եւ քարրի վրայով եւ ոտնակոխ անելու թշնամու ամենայն զօրութիւն: Եւ պահի՛ր ինձ, Տէ՛ր, որպէս աչքի բիբ Քո թեւերի հովանու տակ:

ԽԳ

Երբ ճանապարհ ընկնեմ, ինձ մի՛ թողնիր մենակ, այլ առաքի՛ր իմ եւեւից Քո օգնականութիւնը՝ օր ու գիշեր պահելով ինձ սատանայի բոլոր փորձութիւններից եւ իմ անկայուն ու թոյլ մտքին մի՛ թող մեղանչել, այլ՝ լալ ու կոծել իմ մեղքերի եւ անօրէնութիւնների համար:

ԽԴ

Պահի՛ր ինձ, Տէ՛ր, խօսքերից եւ գործերից, տեսումներից եւ գերիչ խորհուրդներից. եւ Քո Դատաստանի երկիւղը ապաւորի՛ր իմ սրտում՝ անզգաղ յօժարամտութեամբ փութալու եւ Քո պատուիրանները պահելու համար:

ԽԵ

Փակի՛ր, Տէ՛ր, դուռն իմ մեղքերի եւ բա՛ց ինձ լուսոյ եւ արդարութեան դուռը, որպէսզի երկիւղալից սիրով գամ ինձ Սեղծողիդ եւեւից, որ ասացիր. «Եկէ՛ք Ինձ մօտ բոլոր յոգնածներդ»*: Եւ դարձեալ, թէ՝ «Ով փնտրում է, սատնում է, ով հայցում է, գտնում է եւ ով բախում է, բացում է նրան»**:

ԽԶ

Նայի՛ր, Տէ՛ր, իմ անձի մերկութեանը, որ կողոպտեց թշնամին: Եւ այժմ խայտառակ եւ ամօթալից եմ Քո առջեւ: Մարդասիրի՛ր եւ հանդի՛ր հագցրու ինձ, մացրու եւ ուրախացրու Քո ընտրեալների պատուի մէջ:

ԽԷ

Հագցրու ինձ, Տէ՛ր, առաջին պատմուճանը, որից մերկացայ իմ մեղքերով, ցո՛յց տուր Քո անոխակալութիւնն իմ հանդէպ եւ Քո լուսափայլ ողորմութեամբ զարդարի՛ր իմ մերկութիւնը:

ԽԸ

Լսի՛ր, Տէ՛ր, անառակիս աղաղակը, որ ամօթով կանգնած եմ Քո առջեւ. հայրենի գանձը վատնած՝ կորչում եմ սովամահ: Անասուն խոզերին հաւասար կերակրուեցի եւ նմանուեցի նրանց:

ԽԹ

Մի՛ մերժի՛ր ինձ, Տէ՛ր, Քո հայրենի գութից, համարձակում եմ Քո սիրոյ խնամքին [ապաւինել]: Ծնողիցդ հեռացայ եւ իմ որդիութիւնն ուրացայ:

* Մատթ. ԺԱ 28
** Տե՛ս Մատթ. Է 7

Հա՛յր, մեղա՛յ Քո եւ երկնքի առաջ, արժանի չեմ Քո որդին կոչուելու, դարձրո՛ ինձ որպէս մէկը Քո վարձկաններից:

Ժ

Զարդարի՛ր ինձ, Տէ՛ր, Քո մեծ երկիւղով եւ դարձրո՛ անառակութիւնից դէպի արդարութիւն, աղտեղութիւնից՝ սրբութիւն, ծուլութիւնից՝ զգաստութիւն՝ ժուժկալութեամբ գնալու Քո ուղիղ ճանապարհներով:

ԺԱ

Դաղարեցրո՛ ինձ, Տէ՛ր, իմ չարաչար խորհուրդներից եւ իմ մտքի եւ մարմնի կամքը գործելուց, Քո Գալստեան աեեղ Օրը պատկերի՛ր իմ աչքերի առջեւ, Տէ՛ր, որ դողամ եւ սարսեմ Քո Դատաստանից:

ԺԲ

Պայծառացրո՛, Տէ՛ր, իմ հոգու լապտերն իմաստուն կոյսերի պէս եւ շնորհի՛ր արթնութեամբ պատրաստուել՝ դիմաւորելու երկնաւոր Փեսայիդ, որպէսզի դրսում չմնանք յիմար կոյսերի պէս:

ԺԳ

Ճանաչեցրո՛ ինձ, Տէ՛ր, Քո ճանապարհը եւ ուսուցանի՛ր ինձ Քո արդարութիւնը: Հնազանդո՛, Տէ՛ր, իմ մարմինը չար խորհուրդներից եւ հաստատի՛ր բարի երկիւղի մէջ, [որպէսզի] մշտապէս սուրբ եւ անարատ ապրեմ Քո առաջ:

ԺԴ

Ջնջի՛ր, Տէ՛ր, իմ անօրէնութիւնները, ամրացրո՛ միաքս բարի յոյսով եւ Քո երկիւղով՝ սիրով լցուած սպասելու եւ ակնկալելու Քո մեծ Գալուստը:

ԺԵ

Զօրացրո՛ ինձ, Տէ՛ր, երկիւղով հնազանդուելու Քո պատուիրաններին, դողալու եւ սարսելու Քո դատաստաններից, փնտրելու Քո երեսի արդարութիւնն ու իրաւունքը եւ սատանալու Քո շնորհների պարգեւները:

ԺԶ

Արձակի՛ր ինձ, Տէ՛ր, իմ մեղքերի կապանքներից, վերստին նորոգի՛ր մեղքով հնացածիս եւ լուսաւորի՛ր մարմնիս ցանկութիւնից խաւարեալիս՝ գնալով խաղաղութեան ճանապարհով, որպէսզի իմ աչքերը տեսնեն Քո փրկութիւնը, որ պատրաստեցիր Քո սուրբերի համար:

ԺԷ

Բժշկի՛ր, Տէ՛ր, իմ անբժշկելի հիւանդութիւնը, որ կարկամեալ դրուած եմ իմ մեղքերի մահճում եւ դեղերում եմ երկրորդ Սելոմի դռան առջեւ, որպէսզի սպասեմ եւ ակնկալեմ Քո մեծ Գալուստը:

ԺԸ

Հրամայի՛ր, Տէ՛ր, որ անդամալոյծի պէս առողջանամ, խորտակեմ իմ ցաւերի անկողինը, Քո կամարարների հետ շրջեմ Տիրոջ

տանը եւ Աստուծոյ գաւթում
ծաղկեմ ու չմեղանչեմ:
Խորտակի՛ր, Տէ՛ր, սատանայի
բռնութիւնը, կարի՛ր եւ դէ՛ն նեռի՛ր
նրա զօրութիւնը, արգելի՛ր նրա
յարձակումն ինձ վրայ, քանզի, իմ
մարմինն ընդունայն վարելով,
տանում է լայն ճանապարհով,
որը կորստեան եւ
ապականութեան է տանում:

ԾԹ

Ցիշեցրո՛ւ, Տէ՛ր, իմ զբաղուած եւ
մոռացկոտ մտքին Քո տեսուր եւ
սոսկալի Դատաստանը,
արդարների պատիւն ու փառքը եւ
մեղաւորների անհերեալի
տանջանքները եւ, նրանցով
զարհուրեցնելով, դողացրո՛ւ իմ
մարմինը, որ իմ աչքերի առջեւ
հանապազ տեսնեմ մահը:

Կ

Բեւեռի՛ր, Տէ՛ր, իմ մարմինը Քո
երկիւղով եւ Քո պատուիրանների
սիրով եւ [առաջնորդի՛ր]
երկիւղով լսելու նրանցում
հրամայուածները, կատարելու
առանց ձանձրութեան, մերկանալու
մեղքերից եւ այս կենցաղի
ցանկութիւններից եւ
պայծառանալու առաքինի վարքով:

ԿԱ

Փրկի՛ր ինձ, Տէ՛ր, սատանայի
գաղտանձիգ նեռներից, որ, բազում
մեքենայութիւններով պատելով,
պաշարում է ինձ: Յափշտակելով
իմ միտքը՝ տանում է մեղքերի
ցանկութեան գերութեան՝
թշնամական ծաղր ու ծանակի
ենթարկելով:

ԿԲ

Ամրացրո՛ւ ինձ, Տէ՛ր, Քո
երկիւղով, զօրացրո՛ւ Քո
զօրութեամբ, առողջացրո՛ւ իմ
հոգու հիւանդութիւնը, բժշկի՛ր
մարմնիս ցաւերը եւ հաստատի՛ր
իմ սրտում Քո սրտի ջերմութիւնը,
որ չարչարանքից լինեմ Քո
սուրբերին:

ԿԳ

Ե՛տ բեր սատանայից գերուածիս
եւ մեղքերով եգիպտական եւ
խիստ տանջանքների
վաճառուածիս, փրկի՛ր դեւերի
բռնակալ չար սպասաւորներից,
դո՛ւրս բեր փշոտ մեղքերից եւ
դի՛ր Աւետեաց Երկրում:

ԿԴ

Ընկղմի՛ր, Տէ՛ր, իմ թշնամուն
փարաւոնի զօրութեան պէս,
քանզի սպառնալով խրոխտանում
է ինձ վրայ՝ դարձնելով ինձ դէպի
առաջին յանցանքը՝ իր
իշխանութեան տակ մեղքերին եւ
անօրէնութիւններին ծառայելու:

ԿԵ

Պատսպարի՛ր ինձ, Տէ՛ր, լեռան
քարանձաւում կամ անապատ
վայրում, ուր եւ թո՛ղ առաջնորդի
ինձ Քո ողորմութիւնը, որ
հանդիպեմ Քո անուան մեծ
փառքին, սատանամ Սուրբ Հոգուդ
աղունակերպ թեւերը՝ թռչելու եւ
բարձրանալու, խառնուելու
արդարների երամին:

ԿԶ

Հասցրո՛ւ ինձ, Տէ՛ր, Քո
արդարների օթեւանը եւ
պարգեւի՛ր ինձ սուրբ հայրերի
ձգնութեան բնակավայրը,
անտեսի՛ր իմ յանցանքները եւ
պայծառացրո՛ւ՝ դասելով Քո
սուրբերի եւ Քո անուան
սիրելիների հետ:

ԿԷ

Հաստատի՛ր, Տէ՛ր, իմ հոգում
կենաց Լոյսի խաղաղութիւնն ու
պայծառութիւնը, որպէսզի
չխոտորուեմ աջ կամ ձախ եւ
չդատապարտուեմ Քո Գալստեան
Օրը՝ պահանջելով [ինձանից]
մինչեւ վերջին նաքարակիսը*:

ԿԸ

Մի՛ մերժի՛ր ինձ Քո բազմազուք
ողորմութիւններից, Քեզ
ապաւինածիս ամրացրո՛ւ՝ աներկիւղ
պահելով սատանայի բոլոր
որոգայթներից, որպէսզի
գերեվարելով չանցի իմ միտքը
զբաղմունքի եւ չար ծառայութեան:

ԿԹ

Ուսուցանի՛ր ինձ, Տէ՛ր,
արդարութիւն գործել,
ճշմարտութիւն խօսել, սրբութիւն
սիրել եւ ատել աղտեղութիւնը,
խոտորուել չարից եւ գնալ բարի
ճանապարհով:

Հ

Փրկի՛ր ինձ, Տէ՛ր, որսացողներից,
որոնք գալիս են ինձ վրայ՝
բռնելու մեղքով եւ
անծուծկալութեան ծուլութեամբ,
մոռացնելու իմ յանցանքները եւ
թոյլ չտալու յիշել հատուցման
Օրը եւ սարսեալի պատասխանը,
որ ասում է. «Հեռո՛ւ գնացէք
Ինձանից, անիծեալներ, դէպի
յաւիտենական հուրը»**:

ՀԱ

Կանգնեցրո՛ւ ինձ գլորումից, Տէ՛ր,
եւ բազմամեղ անդնդային
խորութիւնից Սուրբ Հոգուդ
թեւերով վե՛ր հանի՛ր եւ
բարձրացրո՛ւ վայելուչ աղօթքների,
մտքի նորոգութեան եւ
լուսաւորութեան, մեղքերի
բնաջնջման եւ Քո սուրբ
պատուիրանների կատարման:

ՀԲ

Փնտրի՛ր, Տէ՛ր, Քո եղծեալ ու
կորուսեալ պատկերիս, որ
մեղքերի աղբի եւ սիղմի մէջ եմ
ծածկուել, դո՛ւրս բեր Քո շնորհի
աւելով եւ դի՛ր նախկին
գանձանակի մէջ, որից ընկայ:

ՀԳ

Եկ, Տէ՛ր, տեսութեան իմ
հիւանդացած հոգուն, դի՛ր Քո
ձեռքն ինձ վրայ, բժշկի՛ր՝ ասելով.
«Զօրացի՛ր, վերցրո՛ւ քո մահիճը
եւ գնա՛ արդարութեան ասունը»***:

---

* Տե՛ս Մատթ. Ե 26:
** Մատթ. ԻԵ 41
*** Տե՛ս Դուկ. Ե 24, Յովհ. Ե 12;

ՀԴ

Եկ, Տէր, փնտրելու մոլորուածիս, որ դեգերելով շրջում եմ Քո պատուիրանների հօտից դուրս, գազանաբեկ եղած եւ մեղքերով քարկոծուած՝ վիրաւորում դեւերից. բռնի՛ր եւ տա՛ր հայրենի փարախը եւ խառնի՛ր Քո հօտի գառներին:

ՀԵ

Հետեւի՛ր, Տէր, Քեզանից ճողոպրողիս հետքին, արագապէս փութա՛, հասի՛ր եւ բռնի՛ր Քո կանչի ձայնից ապստամբածիս եւ դի՛ր Քո սիրոյ անխզելի կապանքների բանտը:

ՀԶ

Մի՛ թող ինձ, Տէր, հեռանալ Քո պատուիրանների սիրուց եւ առաքինութիւնների վարքից, այլ յորդորի՛ր առաւելանալ արդարութեան բոլոր գործերում, առանց մեղքերի եւ առանց որեւէ խափանման Քեզ ծառայել՝ իմ կեանքի բոլոր օրերը սրբութեամբ եւ արդարութեամբ [անցկացնելով] Քո առջեւ:

ՀԷ

Մի՛ մատնի՛ր ինձ, Տէր, մեղքերի ցանկութեանը, աչքերի քնին եւ մարքի ցանկութեանը, այլ պարսպի՛ր երկիւղով եւ փրկի՛ր ամենահնար չար դեւերից եւ աշխարհական զբօսանքներից:

ՀԸ

Մի՛ յապաղիր տալ ինձ հոգու փրկութիւն եւ սիրոյ ջերմութիւն, կերակրի պարկեշտութիւն եւ մարմնի ժուժկալութիւն, արտասուքների բխում, անդադար աղօթք, հնազանդութիւն եւ լոյսի համբերութիւն:

ՀԹ

Ցաղթի՛ր, Տէր, իմ հակառակամարտին եւ զօրացրո՛ ընդդիմակայելու ինձ հետ պատերազմողին, հագցրո՛ ինձ հաւատքի զրահը, որ պահքով եւ աղօթքով սրբեմ ցանկութեան աղտերը եւ մարմնական խորհուրդները եւ ստանամ փրկական շնորհները:

Զ

Տո՛ւր ինձ, Տէր, ապաշխարութեան վայր, ճգնութեան օթեւան, խաղաղութեան հոգի եւ արդարութեան ճանապարհ, ամրութեան սպառազինութիւն, հաստատութեան յոյս եւ առկունութեան երկիւղ:

ԶԱ

Դա՛ր բեր ինձ, Տէր, խորաթափիչ ծովահեղձ ցանկական կենցաղի մեղքերի անվերջ արկածներից եւ շնորհի՛ր ինձ աչքերի լոյս եւ մարքի տեսութիւն, կեանքի հանդարտութիւն, շնորհների մերձեցում, արդարութեան ճանապարհների շաւիղներ:

ԶԲ

Շնորհի՛ր ինձ, Տէր, աչքերի լաց, արցունքների հոսում, մեղքերի սուգ, սրտի երկիւղ, ոսկորներիս սարսափ ու դող՝ տանջանքների տեսից, կենաց ճանապարհ եւ անդադար պաղատանքներ:

ԶԳ

Արիացրո՛ ինձ, Տէր, պատուիրանների պահպանութեան, որով յայտնի է լինում ժուժկալութիւնը պատերազմի մարտերում, յաղթութիւնը բանսարկուի հանդէպ, մարմնի մէջ մնանելը [մեղքի համար] եւ ճգնութեան մէջ պայծառանալը:

ԶԴ

Ապրեցրո՛ ինձ, Տէր, երկիւղով եւ զղջմամբ, արտասուքներով եւ հառաչանքներով, սիրով եւ սրբութեամբ, շնորհներով եւ ճշմարտութեամբ, գիտութեամբ եւ բոլոր առաքինութիւններով:

ԶԵ

Ջնջի՛ր, Տէր, իմ մեղքերի բազմութիւնը եւ թօթափի՛ր իմ յանցանքների դառը մրուրը, պարարի՛ր իմ սիրտը Սուրբ Հոգուդ արբմամբ եւ իմ փշաքեր մարմինը լցրո՛ շնորհներով, զարգացրո՛ եւ պաղարեի՛ր դարձրու:

ԶԶ

Ծո՛յց տուր, Տէր, Քո շնորհները՝ Քո գութն ու ողորմութիւնը Քո ծառային եւ տաճարացրո՛ ինձ՝ Ամենասուրբ Հոգուդ բնակարան լինելու, այլեւս մի՛ [թող], որ ծառայեմ մեղքի եւ ապականութեան:

ԶԷ

Բժշկի՛ր ինձ, Տէր, հպարտութիւնից եւ ամբարտաւանութիւնից, սնափառութիւնից, մարդահաճութիւնից եւ ոխակալութիւնից, նախանձից եւ տեսութիւնից եւ բոլոր չարիքներից:

ԶԸ

Փրկի՛ր ինձ, Տէր, մարդկային գովեստից, փառքից ու մեծարումներից, [քանզի], լոյս կարծելով խաւարիս, բարին են համբաւում իմ՝ եղկելիիս եւ ողորմելիիս մասին: Ինձ առաքինի են համբաւում, մինչդեռ ես ողբալի եմ եւ անթիւ մեղքերով լի: Ծածկի՛ր ինձ, Տէր, սուտ գովեստների եւ երանիների լոյսից, քանզի չգիտեն իմ մեղքերը: Ինձ սուրբ եմ ցոյց տալիս եւ լի եմ աղտեղութեամբ, կերպարանւում եմ առաքինութեամբ եւ անառակութեամբ ապրում, փայլում եմ երկիւղածութեամբ եւ ընթանում մարդահաճութեամբ, ճանաչում եմ ճշմարտութիւնը եւ սուտ խօսում, գիտեմ արդարութիւնը եւ անօրէնութիւն եմ գործում:

ԶԹ

Քաւի՛ր ինձ, Տէր, մեղքերից եւ բամբասանքներից եւ ների՛ր իմ անժուժկալութեան եւ ծուլութեան, որկրամոլութեան եւ դատարկաբանութեան համար, մաքրի՛ր աղտեղութեան ցանկութիւնը, հայհոյութիւնը եւ բոլոր չար բծերը:

Ղ

Կանգնեցրո՛ ինձ, Տէր,

հաստատուն եւ անշարժ՝
պատերազմի փորձութիւնների մէջ
առանց երկիւղի, քաջ եւ ամուր
հաւատքով եւ յորդորական սիրով
զօրանալու ինձ վրայ եկող դիւերի
դէմ: Զինի՛ր ինձ Քո ամրակուռ
զէնքով՝ պատերազմելու եւ
յաղթելու հակառակամարտ
թշնամուն, որ կամենում է ինձ
որսալ իսպառ:

ՂԱ

Մեղքերի խորքերն ընկղմուածիս
հան եւ բե՛ր դէպի Քո
պատուիրանների լոյսը, Քեզ մօտ
կանչիր Քեզանից հեռացածիս եւ
ների՛ր իմ անառակ գործերը, Քեզ
ապաւինածիս մխիթարի՛ր, Քո
պատուիրանների կապից
արձակուածիս բանի՛ր Քո սիրոյ
լծով:

ՂԲ

Քո սիրոյ զուրը, Տէ՛ր, միաւորի՛ր
ինձ հետ եւ արձակի՛ր բանտի
կապանքներով արգելուածիս,
խզի՛ր իմ մեղքերի կապանքները,
առաջնորդի՛ր ինձ [փրկութեան]
ճանապարհով, [ինձ] օթեւանե՛ր
պատրաստիր եւ պսակի՛ր Քո
սուրբերի հետ:

ՂԳ

Հաղո՛ր դարձրու ինձ, Տէ՛ր, Քո
աստուածային սիրուն՝ սիրելու Քո
պատուիրանները եւ գնալու Քո
ճանապարհով, չարչարուելու մինչ
ի մահ Քո անուան համար,
մտնելու փառքի մէջ, դասուելու
Քո սուրբերի շարքը եւ միշտ
ուրախանալու Քո կամարարների
հետ:

ՂԴ

Գթա՛, Տէ՛ր, մեղանչած եւ եղկելի
անձիս, խափանի՛ր իմ անառակ
ցանկութիւնները, սրբի՛ր մեղքերի
աղտեղութիւնները եւ քաւի՛ր իմ
անօրէնութիւնները, բժշկի՛ր
վիրաւորուած հոգիս եւ
առողջացրո՛ւ իմ հիւանդացած
մարմինը, ցրի՛ր ինձանից չարը,
ժողովի՛ր բարին եւ լցրո՛ւ իմ
պակասութիւնները:

ՂԵ

Քո առաջ եմ ընկնում եւ
թողութիւն հայցում իմ մեղքերին.
ընդունի՛ր իմ պաղատանքները եւ
քաւի՛չ եղիր յանցանքներիս,
պայծառացրո՛ւ եւ լուսաւորի՛ր իմ
խորհուրդներն ու միտքը, կարո՛ղ
դարձրու իմ մարմինը՝ անդադար
Քո սուրբ անուան
փառաբանութեան մէջ մնալու:

ՂԶ

Մեղքով ընկածիս կանգնեցրո՛ւ,
Տէ՛ր, եւ թշնամուց խոցուածիս
դարմանի՛ր, վերցրո՛ւ մեղքերիս
ցաւը եւ վերացրո՛ւ յանցանքներիս
կսկիծը, յափշտակի՛ր դառը
մահից եւ ազատի՛ր անողորմ
տանջանքներից, հեռացրո՛ւ
մարմնական յոփութիւններից եւ
կարգի՛ր ճգնաւորների դասում:

ՂԷ

Վերակացու եւ պահապան եղի՛ր
իմ անձին, ով Տէ՛ր իմ Յիսուս,
պահի՛ր ինձ դիւերից եւ փրկի՛ր
ինձ մարդկային փորձանքներից:

Յաղթի՛ր հակառակուողներին եւ
հաստատի՛ր ինձ՝
պատերազմողների մէջ քաջ եւ
ընտիր լինելու, գործակցի՛ր ինձ՝
մեղքերի քաւարան լինելու եւ
համբերելու վշտերի, առաքինաջան
գործերով մերձենալու Քո
աստուածային շնորհներին:

ՂԸ

Վա՛յ ինձ, Տէ՛ր, վա՛յ ինձ, քանզի
կործանուեցի մեղքերով եւ իմ
մտքերով աղտեղացայ, ուռայնացայ
բարիքներից եւ ցամաքեցի սիրուց,
խաւարեցի լալուց եւ դադարեցի
[առաջ] գնալուց: Աչք չունեմ
լալու՝ եւ արտասուելու, ծփում եմ
տարակուսած, քանզի չունեմ
բարու յոյս եւ ակնկալութիւն:

ՂԹ

Հաստատի՛ր, Տէ՛ր, իմ սասանուած
անձը, որ լի եմ մեղքերով եւ
անթիւ յանցանքներով եւ այրուած
ու արոհուած բոլոր անդամներովս՝
ոտքից մինչեւ գլուխ
ապականուած, եւ չկայ
բժշկութեան հնար Քեզանից բացի,
Տէ՛ր իմ Յիսուս, խոնարհուի՛ր
դէպի կախարդութեամբ
վիրաւորուածս եւ մի՛ զարշի՛ր
չարահոտ ախտացածիցս:

Ճ

Հեռացրո՛ւ, Տէ՛ր, իմ բերանը
բամբասելուց եւ իմ լեզուն՝ չար
խօսելուց, իմ ականջները՝ չար
լուր լսելուց, ձեռքերս՝
յափշտակելուց եւ ոտքերս՝
անառակ ճանապարհով գնալուց
եւ բոլոր անդամներս
զգաստացրո՛ւ՝ միշտ կատարելու
Քո կամքը:

ՃԱ

Մեղա՛յ Քեզ, Տէ՛ր, մեղա՛յ, քանզի
խախտեցի Քո պատուիրանները,
եկայ կենաց լոյսից եւ մտայ
մեղքերի խաւարը՝
աղտեղութիւններ ցանկանալով:

Քո սիրուց հեռացայ, բռնուեցի
չարից եւ կորստեան որդի եղայ.
ողորմի՛ր ինձ՝ բազմամեղիս,
Բարերա՛ր, քանզի միայն Դո՛ւ ես
մարդասէր:

ՃԲ

Քե՛զ եմ ապաւինում, Տէ՛ր, որ
քաւարան ես մեղաւորների եւ
դարան՝ հալածուածիս.
փախստական դարձրու իմ
թշնամուն: Չունեմ այլ օգնական,
այլ միայն Քեզ՝ ունեմ պահապան
իմ անձին. փրկի՛ր վտանգից,
ազատի՛ր որոգայթներից եւ
արժանացրո՛ւ ինձ լինել յաւերժի
որդի:

ՃԳ

Ողորմի՛ր ինձ, Տէ՛ր կենաց եւ
Քաւի՛չ մեղքերի, Կատարի՛չ
խնդրուածքների եւ Արձակի՛չ
կապուածների, Բաշխո՛ղ
պարգեւների եւ Տուի՛չ բոլոր
շնորհների:

ՃԴ

Լսի՛ր, Տէ՛ր, իմ աղաչանքները եւ
ընդունի՛ր իմ պաղատանքները,
քաւի՛ր իմ յանցանքները եւ
կատարի՛ր իմ խնդրուածքները,
արձակի՛ր իմ կապանքները եւ

բժշկի՛ր իմ հոգին, առողջացրո՛ւ
իմ մարմինը եւ ուղղի՛ր իմ
ընթացքը, արագացրո՛ւ ինձ
ժամանել Քո սուրբերի օթեւանը:

ՃԵ

Հալածի՛ր, Տէ՛ր, իմ բազում
չխաժտաւութիւնները, մարմնիս
ցաւերը եւ հոգուս աղաները, գլխիս
քունը եւ որկորիս յագեցումը:

Պահի՛ր խորհուրդներս անգրաղ,
սիրաս՝ սուրբ եւ միաքս՝ լուսաւոր,
ցանկութիւնս՝ դէպի Քեզ եւ
յօժարութիւնս՝ աղօթքի մէջ օր ու
գիշեր:

ՃԶ

Բխեցրո՛ւ, Տէ՛ր, իմ գլխում
վտակների աղբիւր եւ ողողի՛ր իմ
մաքրի անդաստանը, լուա՛ իմ
յանցանքների աղտերը եւ սրբի՛ր
իմ վէրքերի թարախը, հանի՛ր իմ
մեղքերի փուշը եւ անկի՛ր կենաց
բոյսը: Աճեցրո՛ւ, Տէ՛ր,
արդարութիւնը եւ նուաստացրո՛ւ
անօրէնութիւնը, մեռցրո՛ւ մարմնի
ցանկութիւնը եւ նորոգի՛ր հոգուս
կենդանութիւնը:

ՃԷ

Կանչի՛ր, Տէ՛ր, իմ մեղանչած անձը
Քեզ մօտ, քանզի չեմ
համարձակւում մերձենալ Քեզ,
պատկառում եմ ամօթից եւ
զարհուրում եմ իմ գործերից,
չունեմ համարձակութիւն Քո
առջեւ, քանզի ես ինքս եմ ինձ
կորստեան [մատնել]: Հեռացայ
Քո սուրբ պատուիրաններից եւ
մերկացայ Քո փառքից, բայց Դո՛ւ,
Տէ՛ր, զբա՛ ինձ եւ ողորմի՛ր,
քանզի Քո անարատ ձեռքերի
ստեղծուածն եմ:

ՃԸ

Չեմ կարող, Տէ՛ր, անյոյս լինել,
քանզի ողորմած ես [եւ] գթած եւ
անճառ փառք խոստացար դարձի
եկած մեղաւորներին, սակայն ես
զարհուրում ու դողում եմ եւ
երկնչում իմ բազում եւ անթիւ
մեղքերից, քանզի պատրուակով
խաբուեցի որսողից. եւ արդ, ինչ
կլինեմ եղկելիս, որ տարակուսած
եմ կեանքից:

ՃԹ

Դարձրո՛ւ ինձ, Տէ՛ր, իմ մեղքերի
համար սգացող եւ արտասուող,
քանզի ծանրացած եմ
անօրէնութեան բեռով եւ յագեցած՝
աղտեղի խորհրդով, շատ ներեցիր
ինձ, քանզի չպատժեցիր մարմնի
մէջ. արդ, սարսելով դողում եմ,
թէ ինձ համար [անհերելի] չեն
մնայ այսպիսի չարիքները:

Աղաչում եմ, բարերա՛ր Տէր, մի՛
կանչիր ինձ Ասեան եւ մի՛
մատնիր ինձ տանջանքների, այլ
փրկի՛ր զեհենի հրից, ազատի՛ր
վտանգներից եւ ողորմի՛ր ինձ,
քանզի միայն Դո՛ւ ես մարդասէր:

ՃԺ

Վա՜յ ինձ, Տէ՛ր, քանզի
տարակուսանքների ծփանքն է ինձ
պատում եւ ալեկոծում իմ սիրտը:
Չգիտեմ, թէ ինչ աղօթեմ.
սաղմոսում եմ եւ չեմ հասկանում,
շուրթերս բարբառում են, իսկ
միտքս ճողոպրելով այս ու այն
կողմ է թափառում եւ չունի

դադար, կամենում եմ, որ այնտեղ
լինի, սակայն կանգ չի առնում, չի
տեսնում արդարու ու չի ըմբռնում,
զուր եմ աշխատում ու չեմ
շահում ոչինչ, պղնձի եւ ծնծղայի
ձայնի պէս թափուր եւ ունայն եմ
համարւում եւ անպատուղ գտնւում
բոլոր բարիքներից:

ՃԺԱ

Ընդունի՛ր, Տէ՛ր, մոլորուածիս, որ
փախել եմ լեռները մեղքերի
պատճառով տիրոջից հալածուած
չար ծառայի պէս: Եւ հրաժարուած
եմ սուրբ եղբայրներից, հեռացած՝
սուրբ ծառայութիւնից, քանզի
սիրող էի մեղքերի եւ նախատինք
էի կրօնաւորների համար, անյազ՝
մեղքերից եւ զրկանքներից:
Անգութ էի աղքատների եւ
հակառակուող՝ սպասաւորների
հանդէպ, անողորմ էի հիւանդների
եւ անմխիթար՝ նեղուածների
հանդէպ, արժանի իսկ չէի
ճգնաւորների մէջ դասուելու:

ՃԺԲ

Իջեցրո՛ւ, Տէ՛ր, Սուրբ Հոգուդ
շնորհներն ինձ վրայ, որ մենակ
եմ պատերազմի մէջ՝ առանց
օգնականի: Սրբի՛ր, Տէ՛ր, իմ հոգու
տաճարը եւ ինձ հե՛տ եղիր
երեկոները: Բա՛ց իմ հոգու
աչքերը եւ լուսաւորի՛ր իմ միտքն
ու խորհուրդները: Զօրութի՛ւն
տուր ինձ, Տէ՛ր իմ Յիսուս, եւ
ընդունի՛ր իմ բերանի
օրհնաբանութիւնը: Արթնացրո՛ւ
ինձ գիշերուայ խոր քնից՝
գոհանալու եւ օրհնելու Քեզ, որով
քաւեմ իմ մեղքերը: Շնորհի՛ր ինձ
սուգ եւ արտասուք՝ լալու, սգալու
եւ անդադար Քո առջեւ աղօթելու:

ՃԺԳ

Դասի՛ր, Տէ՛ր, ինձ
դատապարտողին, որ յանդգնում է
զօրաժողով լինել ինձ վրայ՝
մարտնչելով ինձ հետ
ցանկութեամբ եւ
անժուժկալութեամբ, ծուլութեամբ
եւ որկրամոլութեամբ,
փառասիրութեամբ եւ
մարդահաճութեամբ, բարկութեամբ
եւ զայրոյթով, ատելութեամբ եւ
չարաչար հայհոյութեամբ,
սնափառութեամբ եւ
սնապարծութեամբ, հպարտութեամբ
եւ ամբարտաւանութեամբ,
խօսքերով, գործերով եւ
խորհուրդներով. եւ ընկղմում է
ինձ չարիքների խորը:

ՃԺԴ

Սփոփի՛ր, Տէ՛ր, Քո շնորհներն իմ
անդամների վրայ, լցրո՛ւ իմ
մարմինն արիութեամբ ու
ժուժկալութեամբ եւ հոգիս՝
երկիւղով ու դողութեամբ, սիրտս՝
սիրով ու արդարութեամբ եւ
միտքս՝ Քո լոյսով ու
իմաստութեամբ, խորհուրդներս՝
Քո գիտութեան հանճարով.
[զօրացրո՛ւ] ոտքերս՝
արդարութեան շաւղով գնալու,
բերանս՝ անդադար Քեզ
սաղմոսելու գոհութեամբ եւ
օրհնութեամբ եւ աչքերս՝
յորդարուխ արտասուելու,
հուսալիքս՝ հուսալու կեանքի
գիտութեան բոյրը եւ լսելիքս՝
լսելու աւետեաց ձայնը, որ ասում

է. «Թաղնուած լինեն քեզ քո բոլոր մեղքերը»*:

ՃԺԵ

Մինչեւ երբ ես, Տէր, հանդուրժելու չարագործին, որ չի յագենում իմ կորստեամբ, այլ հանապազ չարիքներ է յարուցում եւ օտարացնելով խափանում ինձ բարուց եւ առաքինութիւններից, հեռացնում ինձ սրբութիւնից եւ դուրս հանում յաւիտենական կեանքից: Խաւարեցնում է իմ աչքերի լուսաւորութիւնը եւ ապականելով զերում իմ միտքը, մղում ինձ յանցանքների չար ծառայութեան եւ մատնում ինձ անօրէն դահիճների ձեռքը, տանում չարչարանքների վայր եւ նետում մահուան կապանքների բանտ, դնում խաւարասէր սպասաւորների մէջ եւ կապում մեղքերի պարանոցներով. եւ արդ, ի՞նչ կլինեմ ես՝ եղկելիս, եթէ Դո՛ւ, Տէր, չօգնես ինձ:

ՃԺԶ

Տե՛ս, Տէր, ողորմելիս եւ ողբալիս, պաղատելիս եւ եղկելիս, ողորմի՛ր ինձ՝ անօրինացածիս, եւ շնորհի՛ր ինձ զիշերը յորդ արտասուք եւ առաւօտեան՝ շնորհներիդ շողը:

Բա՛ց իմ սրտի խաւարած աչքը եւ բժշկի՛ր իմ հիւանդացած հոգին, ընդունի՛ր մեղաւորիս դարձը եւ մի՛ բարկացիր բազմամեղիս վրայ, Տէ՛ր իմ Յիսուս: Եւ քանզի անթիւ չարիքներ ունեմ, ջնջի՛ր ինձանից եւ տա՛ր ինձ բարի շնորհները:

ՃԺԷ

Համարձակւում եմ, Տէ՛ր, աղօթել Քեզ, խնդրում եմ եւ չեմ իմանում օգտակարը հոգուս համար, յայտնի՛ր ինձ, ողորմած Տէր, բարի կամքը եւ ուսուցանի՛ր ինձ Քո պատուիրանները:

Տա՛ր ինձ, Տէ՛ր, բարին, որ չեմ խնդրում ու չգիտեմ եւ եթէ չեմ գործում բարիք, բարի՛ք արա ինձ, Տէ՛ր, եւ եթէ չեմ խնդրում ողորմութիւն, ողորմութի՛ւն շնորհի՛ր ինձ, Տէ՛ր, եւ կանչի՛ր Քեզ մօտ հեռացածիս, եւ եթէ չեմ կամենում, բռնաւորի՛ր եւ տա՛ր Քեզ մօտ, եւ եթէ չեմ կամենում, ե՛տ դարձրու ինձ, եւ եթէ բռնւում եմ մէկի կողմից, ազատի՛ր ինձ, եթէ զբաղւում եմ երկրաւոր [բաներով], հոգեւոր խորհուրդներո՛վ զբաղեցրու ինձ, եթէ ցրւում եմ՝ այս ու այն կողմ գնալով, մի՛ թող ինձ, մինչեւ բռնելով տանես Քո փառքի օթեւանը:

ՃԺԸ

Մի՛ նայիր, Տէ՛ր իմ, եղկելի սրտիս եւ զգրաստէր մարմնիս, քանզի հող եմ եւ մոխիր, սիրում եմ երկրաւորները եւ չեմ փափագում նայել երկնայիններին, այլ միշտ հեշտանում եմ չարիքների մէջ ու չեմ տեսնում անվախճան փառքը: Եւ չեմ յիշում առաջին երանելի սուրբ հայրերին, այլ թաւալւում եմ այս աշխարհի տիղմում եւ մաքրուելով չեմ բարձրանում դասուելու առաքինիների կողքին:

Եւ քանզի մոռանում եմ Դատաստանի երկիւղը եւ չեմ դողում ահեղ, սոսկալի, դառը տանջանքներից, որ պահուած են մեղաւորների համար, եւ ծուլանում եմ անհոգ լինելով կեանքի փրկութեան հանդէպ. շնորհի՛ր ինձ, Տէ՛ր, անհանգիստ սուգ ու կոծ եւ ապաշխարութեան արցունքներ:

ՃԺԹ

Մի՛ յանդիմանիր ինձ, Տէ՛ր, մեծ Օրը ահեղ եւ մի՛ կանգնեցրու հրապարակի ամօթալի Ատեանում եւ մի՛ խայտառակիր ինձ, մի՛ կշտամբիր Դատաստանի Ատեանում եւ մի՛ թող ինձ լսել «չեմ ճանաչում»-ը եւ ահաւոր բարբառն ահաբեկ, որ ասում է. «Գնացէ՛ք Ի՛նձանից զեհենի հուրը»*:

Եւ մի՛ վատթիր ինձ ծոյլ եւ չար ծառայի հետ ու մի՛ մատնիր ինձ անօրէն կապողի ձեռքը, մի՛ դարձրու կերակուր թռչաւոր որդերին բնորոքուած բոցի մէջ եւ մի՛ նետիր ինձ տարտարոսի սառնամանիք խաւարը: Այլ փրկի՛ր ինձ հրի սաստիկ կայծակներից, բոցեղէն գետերի արշաւանքներից, սաստիկ լալագին ու խիստ տանջանքներից եւ տարակուսական ողբերից, ատամների կափկափումից ու սարսռելի կսկիծներից, խաւարային բոցի տոչորումից եւ խորովուելուց դժնդակ, դառն աղէտներից, բոցածաւալ ու պարուրող հրից. եւ կողկողաձայն եւ անդադար վայից փրկի՛ր եւ ազատի՛ր ինձ, Տէ՛ր:

ՃԻ

Բազմացաւ, Տէ՛ր, անօրէնութիւնն ինձ վրայ ադի կամ կապարի բեռի պէս, իմ հոգում բազում է ախտը, անզգոյշ եմ մարմնի մեղքերում եւ լցուած եմ զանազան չարիքներով:

Բայց մի այլ՝ առաւել վատթար բան եմ կրում՝ մարմնի անզգոյշութիւնը, որ աւելի դառն է, քան բոլոր չարիքները: Եւ քանզի աղօթելիս ձանձրանում եմ եւ սաղմոսելիս չեմ հասկանում, երանութիւնը խնդրելիս ծուլանում եմ եւ շնորհների երկիւղից՝ դատարկւում, սկարանում եմ մարմնով, եւ սիրտս աղի արձան է լինում, չի ծագում իմ ներսում անշէջ լոյսը, եւ սարսելով չեմ դողում չար Օրուանից:

ՃԻԱ

Շնորհի՛ր ինձ, Տէ՛ր, սրբութեան եւ սուգի երկիւղ եւ յորդորի՛ր իմ մէջ արտասուքների աղբիւրներ, թեթեւացրո՛ւ իմ բեռների ծանրութիւնը եւ ածեցրո՛ւ իմ մէջ սուրբ աղօթքը: Շտապի՛ր, Տէ՛ր, եւ

* Դուկ. է 48—49

* Տե՛ս Մատթ. ԻԵ 41:

եկ փնտրելու մոլորեալիս, որ մերձեցել եմ կորստեան վախճանին, քանզի խաւարեցի լոյսից եւ խափանուեցի Քո պատուիրանների սիրուց, յաղթուեցի չար թշնամուց եւ նուաստացի Քո երկիւղից:

Տապալուեցի չարի չար խորհուրդներից եւ ցամաքեցի Քո սիրոյ արտասուքների շնորհից, խաբուեցի ունայն խօսքերից եւ մոլորուեցի մաքի լուսաւորութիւնից, աղտեղացայ մեղքերով եւ մոռացայ վախճանի օրը:

ՃԻԲ

Տարակուսում եմ՝ անյոյս լինելով, որ չկայ հնար ապաշխարութեան, քանզի տկարացայ մարմնովս՝ պակասելով զօրութիւնից եւ ծերանալով նուաղեցի: Սակայն Քեզ եմ ապաւինում, Տէր Յիսուս, օգնութեան հասիր ծանրաբեռնեալ ընկղմուածիս եւ ազատիր ինձ չարիքներից, Դո՛ւ, որ ազատիչ ես յանցանքներից:

ՃԻԳ

Ընդունիր, Տէր, իմ ունայնախօս սակաւ աղօթքները, որ կանգնած եմ Քո առաջ դատապարտուած, նաեւ ծոյլ՝ զգաստութիւնից, մոլորուած՝ մաքներից եւ ունայնացած՝ երկիւղից:

Բերանս անկապ բաներ է բարբաջում, աչքս՝ ապուշ կտրած նայում, եւ միաքս՝ թափառում: Չեմ աղօթում անգրօս եւ չեմ խնդրում, չեմ կանչում Քեզ հաւատքով եւ չեմ աղօթում երկիւղով, չեմ հայցում արցունքներով եւ չեմ դողում ու սարսում պատասխանատուութեան Օրուայ համար:

Եւ այժմ, Տէր, մի՛ սպասիր, այլ փութապէս նեսի՛ր ապաշխարութեան եւ մաքրողական հրի բովը՝ սրբելով եւ ազատելով մեղքերից: Մեծ ջերմով եռացրո՛ եւ [ատուր] յորդ արտասուել, պաղատել ու խնդրել եւ պատկերիր իմ մէջ նախկին լուսաւոր կերպարանքը:

ՃԻԴ

Ողորմի՛ր, Տէր, մեղաւորիս՝ անթիւ բազմութեամբ յանցաւորիս, եւ ապաշխարութեան դարձի՛ բեր վատրանդի գերուս եւ մացրո՛ ինձ արքունական փառքի մէջ: Առաջնորդի՛ր ինձ Քեզ մօտ զալ վերին ճանապարհով, քանզի եթէ Դու չառաջնորդես ինձ, ես չեմ կարողանայ զալ: Որովհետեւ Դո՛ւ խսկ հրամայեցիր, թէ՝ «Ոչ ոք չի կարող զալ Ինձ մօտ, եթէ Հայրս չձգի նրան»*:

Եւ արդ, Տէր իմ զթած, մի՛ յիշիր իմ բազում պիղծ մեղքերը եւ մի՛ անտեսիր Քո ծառային, մի՛ թող ինձ մնալ նոյն չարիքի մէջ եւ դեզերել աշխարհիկ կեանքում, այլ, ինչպէս փախած ծառայի

* Յովհ. Զ 44

նեւեւից ընթանալով, այնպէս ինձ եա՛ բեր եւ թողութիւն տուր իմ յանցանքներին ու հաղորդ դարձրու Քո սուրբ կամարարներին:

ՃԻԵ

Դարձրո՛ ինձանից, Տէր, Քո բարկութեան ցասումը, որ իմ բազում մեղքերով Քեզ տրամեցրի: Ողորմի՛ր Քո դէմ ապստամբածիս եւ ցրի՛ր իմ մեղքերի սաստիկ դիզուած կոյտերը, բնեռի՛ր իմ միաքը Քեզ ծառայելու քաղցր լծին:

ՃԻԶ

Պարգեւի՛ր ինձ, Տէր, Դաւթի լացը եւ Երեմիայի ողբը, Պետրոսի հառաչումը եւ պոռնիկ կնոջ արտասուքների յորդառատ վտակը, որպէսզի նստած անդադար լամ օր ու գիշեր, որ արժանանամ սրբուելու ախտից եւ թարախից, ազատուելու որդնած վէրքերից, թեթեւանալու բազմաբեռ չարիքներից եւ դասուելու Քո սուրբերի հետ:

ՃԻԷ

Մի՛ յապաղիր ողորմել ինձ, Տէր, քանզի առանց Քո ներգործութեան իմ մէջ երբէք չի գործում բարին, եւ չի բուսնում սերմանուածը իմ հոգու անդաստանում, քանզի Քո խօսքի սերմը, որ սերմանուեց իմ մէջ, քաղուեց չար թշնամու կողմից, եւ բուսածը չորացաւ ապտից, իսկ միւսը, փշերի մէջ ընկնելով, խեղդուելով չորացաւ:

* Եսայի Ը 18

Մշակելով իմ մէջ, Տէր, որպէս եզների՝ լծի՛ր իմ երկու աչքերը՝ արտասուագոյ ձայնով յարաժամ պաղատելու Քեզ, որ արժանի լինեմ Քո ողորմութեանը:

ՃԻԸ

Խաղաղութիւն շնորհիր, Տէր, Քո սուրբ Եկեղեցուն. եւ բոլոր հաւատացեալներին՝ թագաւորներին եւ իշխաններին, զօրքերին եւ զօրաւորներին պատերազմների ճակատում՝ յաղթել անօրէն բռնաւորներին:

ՃԻԹ

Ողորմի՛ր, Տէր, Եկեղեցու առաջնորդներին, հայրապետներին եւ վարդապետներին, երէցներին, սարկաւագներին, դպիրներին եւ Եկեղեցու ուխտի բոլոր մանուկներին՝ ամէն ժամ կատարելու իրաւունքը եւ արդարութիւնը, հովուելու Քո ժողովուրդը, աքնելու նրանց հոգիների համար՝ ասելով. «Ահաւասիկ ես եւ իմ մանուկները, որ տուեցիր ինձ»*:

ՃԼ

Ողորմի՛ր, Տէր Յիսուս Քրիստոս, կարօտեալներին եւ տարակուսեալներին, որբերին եւ այրիներին, անանկներին եւ հաւատացեալ ընտանիքներին, կենդանիներին, ննջեցեալներին եւ Եկեղեցուն ընծայարերութիւն անողներին: Աղքատներին,

կերակրողներին, ողորմածներին, երկիւղածներին եւ հիւանդներին, նաւորդներին եւ ճանապարհորդներին, խոստովանողներին, ապաշխարողներին եւ անդարձ մեղաւորներին ողորմիր, Տէր, եւ ապաշխարութեան բեր նրանց:

ՃԼԱ

Ողորմիր, Տէր, մեր կրօնաւոր եղբայրներին եւ միանձնեայ ճգնաւորներին եւ ովքեր յանձնարարեցին իրենց յիշել մեր աղօթքներում՝ ողորմիր, Բարերար, եւ [տուր] ըստ իւրաքանչիւրի կարիքի: Առատապէս բաշխիր Սուրբ Հոգուդ շնորհները բոլոր սրանց վրայ եւ զարդարիր ու միացրու Քո Աստուածութեան սիրոյ մէջ:

ՃԼԲ

Աղաչում եմ, Տէր Յիսուս, եւ ընկնում եմ Քո սուրբ Խաչի առաջ. սրա բարեխօսութեամբ ընդունիր աղաչանքներս, կատարիր խնդրուածքներս եւ սրա զօրութեամբ զօրացրու ինձ կոչմանս մէջ, որի համար կանչուեցի, եւ Քո պատուիրաններում, որոնք սովորեցի: Տուր ինձ, Տէր, սա որպէս զօրութիւն եւ ժուժկալութիւն, որպէս զգաստութիւն եւ առողջութիւն՝ պահապան լինելու իմ անձին օր ու գիշեր եւ բոլոր ժամերին՝ ննջելիս եւ վեր կենալիս, գնալիս եւ կանգ առնելիս, գործերում եւ վաստակներում, աղօթքում եւ պահքում եւ [տուր] Քո կամքի համար հաճելին կատարել: Սա թող ամուր բերդ լինի ինձ եւ հզօր աշտարակ՝ թշնամու առաջ, զարդարիր ինձ սրանով՝ հոգեղէնների զարդով եւ անիմանալի լոյսով: Եւ Գաբրիէլի տեղ բարբառի Օրը՝ սուրբ Խաչիդ երեւալիս, լուսաւորիր խաւարած հոգիս՝ լոյսով բարձրանալու անմահ Փեսայիդ ընդառաջ, խառնուելու հայրապետների երամներին, մարտիրոսների դասերին եւ հրեշտակների գնդերին:

ՃԼԳ

Սրբուհի Աստուածածնիդ՝ միշտ սուրբ Կոյսիդ եւ Յովհաննէս Կարապետի, առաջին մարտիրոս Ստեփանոսի, սուրբ Գրիգոր Լուսաւորչի եւ Քո բոլոր սուրբ վկաների բարեխօսութեամբ լսիր ինձ՝ եղկելիիս: Եւ ձեռք մեկնիր գլորուածիս, առաջնորդիր մոլորուածիս, հանիր ինձ խաւարից դէպի լոյս եւ ազատութիւն շնորհիր իմ հոգուն:

Հաստատիր Քո սիրոյ մէջ եւ բեւեռիր Քո երկիւղին: Մաքրիր իմ հոգու տաճարը եւ օթեւանիր ինձ մօտ:

Փակիր իմ մեղքերի դուռը եւ շուրջբոլորս պարսպապատիր իմ ոսոխից, չար ու անիրաւ մարդուց փրկիր ինձ, առաքինութեամբ ազատիր եւ պարգեւիր ինձ Քո անճառ երանութիւնը: Ողորմիր մեզ՝ ողջերիս, եւ պայծառացնելով լուսաւորիր մեր ննջեցեալների հոգիները:

ՃԼԴ

Քեզ մօտ բարեխօս ունենք առաքեալներին, մարգարէներին, բոլոր սուրբ մարտիրոսներին, հայրապետներին եւ վարդապետներին: Լսիր նրանց աղաչանքները եւ ազատիր ինձ իմ մեղքերից, անկիր իմ մէջ շնորհների հոգին եւ յորդորիր ինձ գործել բարին: Բռնադատիր ինձ ծուլանալիս, խափանիր չար գործերից եւ սերմանիր իմ մէջ բարիքների պտուղը:

Քաջալերիր ինձ իմ ճեղուքեան մէջ, մխիթարիր վշտի մէջ, արժանի՛ դարձրու ինձ, Տէր իմ եւ Աստուած իմ, Յիսուս Քրիստոս, խաչակից լինել Քեզ մինչ ի մահ, որպէսզի այս աշխարհի հեշտութիւններից հրաժարուեմ եւ դասակից լինեմ երանելիներին, հաղորդ լինեմ աւազակին եւ դրախտում անմահ կեանքը վայելեմ:

ՃԼԵ

Վախճանիս օրը բարի հրեշտակ առաքիր ինձ եւ [տուր] քաղցրութեամբ աւանդել իմ հոգին, առաջնորդիր ուղիղ ճանապարհով եւ կործանիր դարանակալ գազանին, անխռով անցկացրու խաւարային օդի միջով եւ ազատիր գազանի չար ժանիքներից, փրկիր, աներկիւղ պահիր եւ բնակեցրու սուրբերի կայանում սպասելու եւ ակնկալելու Քո Գալստեանը:

հոգիները:

ՃԼԶ

Երբ գաս երկնքից տեղ փառքով եւ հրեշտակների անթիւ դասերով, զարհուրելով կդողան ողջ տարերքը, երկնայինները եւ երկրայիններս, նայելով Քո զօրութեանը՝ կսարսեն անմահ Թագաւորիդ, անճառ Դատաստանիդ եւ աննկարելի պատուհասիդ տեղ փառքից:

ՃԼԷ

Այն Օրը եւ ինձ ընդունիր, Տէր, Քո արդարների եւ կատարեալների հետ, կարգիր աջակողմեան դասում, պսակիր Քո սուրբերի հետ, շնորհիր ինձ յաւիտենական կեանքը եւ պարգեւիր ինձ Քո անճառ բարիքները: Եւ փա՜ռք Քեզ՝ Արարողիդ եւ ինձ բարիքներ Պարգեւողիդ:

ՃԼԸ

Յիշիր, Տէր, մեր ննջեցեալների հոգիները Քո Գալստեան մեծ Օրը, երբ գաս երկնքից անճառ փառքով, տեղ եւ սոսկալի զօրքերով, հրանիւթ եւ հոգեղէն զուարթութիւններով: Ահաւոր հուրն ընթանալով՝ տարածուում է Քո առջեւ, կիզում է լեռները, հալեցնում բլուրները եւ առհասարակ տապալում բոլոր արարածներին: Ողորմիր ինձ, Մարդասէր, այն տեղ Օրը, քանզի զինն եմ Քո սուրբ Արեան: Երբ ցամաքեցնես աղբիւրները եւ դադարեցնես գետերի ընթացքը, ծովի ջրի անբաւութիւնը սպառես, լուսատուները խաւարեցնես, երբ

սիաւոր փողը հնչի ողջ սիեզերքով եւ զարթնեցնի բոլոր մեռեալներին ու տատանի ողջ աշխարհը, եւ բոլոր արարածները, յարութիւն առնելով, կանգնեն Քո Աստուածութեան առջեւ, այնժամ կդնես Քո դատողական Աթոռը եւ կրազմեցնես Քեզ հետ տասներկու առաքեալներին: Կդատես անաչառ դատաստանով եւ ամենքից արդարութիւն կպահանջես, կպատուես Քո կամարարներին եւ կպատժես Քո կանչի ձայնից ապստամբածներին, կփառաւորես արդարներին եւ կպսակես մարտիրոսներին ու սուրբ վկաներին, կզարդարես իմաստուն սուրբ կոյսերին եւ յիմար կոյսերի առաջ առագաստի դուռը կփակես եւ կեալածես փառքից ու երանութիւններից: Կընարես Քո ոչխարներին եւ Քեզնից դուրս կքշես այծերին ու կառաքես գեհեն, ուր աչքերի լաց է, տեղ տանջանքների դառնագոյն կսկիծ եւ տատամների կրճատում՝ չար հրեղէններից ու թունաւոր, կատաղ որդերից:

ՃԼԹ

Արդ, ինձ էլ զքա այնժամ, մարդասէր Տէր եւ բարերար Փրկիչդ իմ, Յիսուս Քրիստոս, եւ Քո ողորմութեամբ զքա՛ մեր ննջեցեալների հոգիներին, ովքեր հաւատքով ի Քեզ ննջեցին, որոնց, յարութիւն տալով, կանգնեցրու Քո սիաւոր մեծ Դատաստանի առջեւ՝ այն տեղ սիեզերական հրապարակում:

Երբ Աստեանում յայտնի դառնան անքաքչելի բարի եւ չար գործերը, այն տեղ Օրը թողութիւն շնորհիր Քեզ յուսացողներին, ովքեր Քո սուրբ անուան համար ննջեցին երկրում, որոնց գնեցիր Քո պատուական Արեամբ:

Ջնջի՛ր Քո [անուամբ] բոլոր մկրտուածների [մեղքերի] ձեռագիրը եւ թո՛ղ բոլոր հաւատացեալների յանցանքների կամաւոր եւ ակամայ պարտքերը, դասի՛ր Քո աջ կողմում եւ աւետարանի՛ր բոլոր հաւատացեալների ականջներին երանելի ձայնը՝ ասելով. «Եկէ՛ք, Իմ Հո՛ր օրհնեալներդ, ժառանգեցէ՛ք յաւիտենական բարիքները»*:

ՃԽ

Արդ, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ Յիսուս Քրիստոս՝ բարերար, ողորմած եւ մարդասէր, անոխակալ եւ անյիշաչար, ընդունի՛ր իմ աղօթքներն ու խնդրուածքները, ինչպէս որ պաղատում եւ հայցում եմ Քեզանից ինձ եւ բոլոր հաւատացեալների համար, եթե մի՛ թեքիր աղերսողիցս, այլ խոնարհուի՛ր դէպ իմ աղաչանքները եւ լսի՛ր ինձ, Մարդասէր, ցա՛յց տուր իմ հանդէպ Քո ընտանի մարդասիրութեան ողորմութիւնը եւ խնայի՛ր Քո մեղանչած ծառայիս: Եւ կարգի՛ր Քո աջակողմեան դասում ու մի՛ դասիր ձախակողմեանում՝ ուլերի հետ, որոնք զայրացրին Քեզ, եւ մի՛ պահանջիր ինձանից իմ յանցանքների անհամար պարտքերը: Եւ այնժամ մի՛ դատապարտիր մեղաւորիս, եւ թող յայտնի չդառնան անաչառ Աստեանում իմ յանցանքների ամբարշտութեան ծածուկ գործերը՝ տեսնող հրեշտակներին ու հրեշտակապետերին եւ Քեզ սիրող բոլոր սուրբերին, այլ, յաղթուելով Քո մարդասիրութեամբ, այցելութի՛ւն արա Քո մեղանչած ծառայիս եւ մի՛ հատուցիր ինձ ըստ իմ չար գործերի: Եւ մի՛ հրամայիր կապուած ոտքերով ու ձեռքերով հանել արտաքին խաւարը, ուր աչքերի լաց է եւ տատամների կրճատում, այլ, ըստ Քո գթութեան, բարերարութեան եւ անյիշաչարութեան, ողորմի՛ր ինձ՝ բազմամեղիս: Այն Օրն ազատի՛ր յաւիտենական ամօթից եւ փրկի՛ր ինձ անվախճան տանջանքներից եւ աննեղելի պատուհասից, բա՛ց ինձ Քո ողորմութեան դուռը եւ մի՛ փակիր Քո Արքայութեան դուռը, Տէ՛ր իմ, Տէ՛ր, Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ Յիսուս Քրիստոս:

Այն Օրն արժանացրո՛ւ ինձ՝ անարժանիս, երանութիւնների եւ անապական պարգեւների լոյսին, անսպառ յաւիտենական ուրախութիւններին, սուրբերի եւ արդարների բարիքների հատուցմանը եւ երանելիների փառքը միշտ վայելելուն: Որպէսզի արժանապէս մատեմ անմահ Փեսայիդ առագաստը եւ Քո բոլոր սուրբերի հետ ժառանգեմ անսպառ բարիքները՝ մաքուր եւ յստակ եւ սուրբ սրտով, համարձակ երեսով: Միշտ տեսնեմ Քեզ հրեշտակների հետ եւ, [Քեզ] սիրող սուրբերի հետ զոհանալով, վայելեմ Երրորդութեանդ անհաս, անճառելի եւ անեզր լոյսը: Եւ զուգահաւասար դարձրու Քո սուրբերին՝ միշտ արժանավայել օրհնաբանելու, հանապազ պայծառացրո՛ւ Քո աստուածային անստուեր լոյսով: Եւ անդադար երգով կփառաւորեմ Ամենասուրբ Երրորդութիւնդ այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

* Սաղմ. ԻԵ 34

ԱՆԱՆԻԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԱՅՈՑ ԲԱՆ ՀԱԿԱՃԱՌՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ԵՐԿԱԲՆԱԿԱՑ, ՁՈՐ ԳՐԵԱՑ ՀՐԱՄԱՆԱՒ ՏԵԱՌՆ ՊԵՏՐՈՍԻ ՀԱՅՈՑ ՎԵՐԱԴԻՏՈՂԻ

(շարունակութիւն)

ԱՌ ՆԵՐՔԻՆԱՑԵԱԼՍՆ[372]

Եւ արդ, հարցից սուտ ինչ բան ի ձէնջ պահանջելով՝ ուստի՞ ուսայք զխոտեալս եւ զարտամերժեալսն, ոչ միայն յԵկեղեցւոյ, այլեւ ի բնութենէ արանց եւ կանանց, ըստ սրբոյ հայրապետաց կանոնի զարտասահմանեալ կրտացն ասեմք, զորս ամենայն Աստուածաշունչ Գիրք տարագրեալ արտորոշեն ի սուրբ հաւատոյ եւ ընդ մանիքեցիսն դասեն: Եւ ձեր ընդդէմ ճշմարտութեան խորհեցեալ ոչ միայն ի կարգ չեզոքացն ընդունիք որպէս օրէն հրամանի է, այլեւ ի գլուխ գահերէցութեան կարգէք եւ զայն ոչ ածէք զմտաւ, զի որ ի գլուխ առաջնորդութեան Եկեղեցւոյ վերակոչի[373], արդ, նախ պարտ է գաղափարին նմանել եւ լինել պատկեր վերին փառացն եւ նոյն օրինակ բարեաց ժողովրդականաց, զի նոյնատիպ եւ նոքա զինքեանս յարդարիցեն, որ պատկեր երկուցն է տեսանել, զի ի վարդապետն, հայելով բազմութիւն աշակերտելոցն, եւ զնոյն ճշգրտաքանդակ պատկերն պայծառակշիռ յիւրանց տախտակսն նկարագրեն՝ զմիեւնոյն ունելով ամենիցն զնմանութիւն զսկզբնատիպն բերելով յինքեանս: Որպէս ասէ սուրբն Բարսեղ յառաջնորդաց ընտրութեան ճառին. «Իսկ առաջնորդն ձեր զիա՞րդ կարէ նմանող լինել վերին փառացն, որ եւ ոչ զնմանութիւն մարդոյ ունի, զի եւ ոչ ըստ բնութեան արանց ունի եւ ոչ զկանանց, զի ո՛չ սերմանել կարէ ըստ բնութեան հաստատելոյն յԱրարչէն, թէպէտ եւ կամի, եւ ո՛չ ընդունել ըստ սահմանի կանանց: Եւ զիա՞րդ շփոթեալ բնութիւն եւ արտաքսել յառաջին ստեղծուածէն, որ ի ձեռանէ Աստուծոյ յարդարեցաւ, ի

հնարից մարդկան եղծեալն կարէ լինել պատկեր սկզբնատիպին, որ ոչ եւ մարդ ըստ փոխադրութեան: Եւ արդ, եթէ հրաման է ի Գրոց Սրբոց՝ առաջնորդին օրինակ լինել ժողովրդականացն եւ նոցա ի նոյն նմանութիւն յարդարել զինքեանս, որպէս առաքեալ ասէ. «Նմանողք ինձ եղերուք, որպէս եւ ես՝ Քրիստոսի[ա]»: Եւ արդ, պարտ է ձեզ, եթէ բարի ոք թուի յաչս ձեր, եւ գիտէք ստուգիւ, եթէ հաճոյ է այն Աստուծոյ եւ ամենեցուն զնոյն առաքինութիւն ստանալ եւ հաճոյ լինել Աստուծոյ այնուիկ: Եւ զայն ոչ գիտէք, ո՞վ յիմարք, եթէ առաքինութիւն անտէր է եւ անծառայական եւ ազատաբար ունի ի յոյս թեւակոխել ըստ իշխանականին ազատութեան, ըստ որում եւ պատկեր սկզբնատիպն անուանի: Եւ զիա՞րդ զազատն ի ստեղծուած արկանէք ի հնարիւք ընդ ստրուկ ծառայութեամբ: Եւ ոչ լուայք ասողին առ Մովսէսին, թէ՝ գործին արկեր զնովաւ եւ պղծեալ է: Եւ արդ, տե՛ս զհրամանն. զի եթէ ի քարանց շինել սեղան գործ ձեռին մերձենայր, պիղծ էր եւ անմատչելի զոհիցն, որչափ եւս[374] առաւել, որք զբնութիւն եղծեն, պիղծ եւ անընդունելի է Աստուծոյ: Որպէս Փիլոն մեկնէ, թէ որք ի բնութիւն ձեռնարկեն յաւելուլ կամ պակասեցուցանել, զանպիղծն պղծեն եւ զսուրբն ապականեն: Եւ զիա՞րդ զայսպիսի խոտեալն յԱստուծոյ եւ ի Գրոց Սրբոց ի գլուխ Եկեղեցւոյ կարգել, որ եւ ոչ ի բնութիւն մարդոյ է համարելի, զի եթէ ակամայ առաքինութիւն հաճոյ էր Աստուծոյ, բազում գոն յանասնոց զայդ ստացեալ բնաբար՝ ի բարսն ունելով. զանմեղութիւն՝ գառինք եւ զողջախոհութիւն՝ տատրակք եւ զխոհեմութիւն՝ ուղտք եւ զարդարութիւն տառեղն, որ զծերացեալ[375] ծնողն կերակրեն՝ պահապան գլխոյ թագաւորաց, զի չէ հնար կրտի թագաւորել, զի խոտեալ է յամենեցունց եւ որոշեալ է ի թագաւորական աստիճանէ: Եւ յայսմ ամենայնէ, զի զմնացեալսն ի զարմ թագաւորաց թագաւորելքն կրտեն վասն ոչ թագաւորելոյ նոցա: Եւ արդ, եթէ ի մարդկանէ խոտեալ ոչ կարէ թագաւորել զառ ի յԱստուծոյն խոտեալն եւ զտարամերժեալն ի բնութենէ, զիա՞րդ մարթի ի գլուխ գահերիցութեան Եկեղեցւոյ նստել, զի որչափ առաւել է հոգի, քան՝ զմարմին, այնչափ վերագոյն է իշխանութիւն հոգւոյն, քան՝ զմարմնոյն: Եւ արդ, զոր խոտան համարիք իշխան մարմնոյ կացուցանել, զիա՞րդ զնոյն իշխան հոգւոյ կարգէք, որ ոչ յարանց կարգի եւ ոչ ի կանանց է բնաւորեալ, այլ ի չար հնարից է ստեղծագործեալ: Որպէս գիշակէսս[376] հնարեցան մարդիկ արտաքոյ բնութեան ստեղծուածս տեւողական եւ բեռնակար ժուժկալ գոլ, եւ զայս հնար հարկի պիտոյից իմացաւ: Նոյնպէս եւ զնոցայն հնար հարկ պիտոյիցն հնարեցաւ եղծանել զբնութիւն: Եւ զայն ոչ կարէք ցուցանել, եթէ յառաքելոցն հրամայեցաւ այս կամ ի սուրբ հայրապետաց սահմանեցաւ գրով եւ կամ անգիր եւ ոչ այլ ոք յոտղաւփառացն ընդունի մինչեւ ցայժմ զդատ: Եւ արդ, յոր ինչ պէտս ստեղծագործե-

ա Ա Կորնթ. ԺԱ 1

ալ կարգեցան[377], ի նմին կացցեն եւ մի՛ զառանցեալ ի գերագոյնն ամբարձցին իշխանութիւն, որ ոչ է անգ նոցա, եւ ոչ ընդունի հոգին զայնպիսիսն[378] ձեռնադրել յաստիճան առաջնորդութեան, զի եւ ոչ զոք ծանեաք յայսպիսեացս ի Հոգւոյն ազդմանէ կոչեցեալ յաստիճան հայրապետութեան, զի անգեալն յաստիճանէ մարդկան զիա՞րդ մարթ է յաստիճան երկնայնոցն ամբառնալ. գուցէ ընդ ամբարձելոյն ի վեր. քան զիւր կարգն, անկցի[379] վրիպեալ ի փառաց վեհին, եւ ստորանկեալ յիւրն անկցի արժանաւորն դասեալ տեղին:

Եւ արդ, եթէ աւելորդ համարիք զմեր բանս ընդդէմ ձեր հակաճառեալ, մեք ոչ յանձնէ ասեմք զայս, այլ՝ ի գրոց սրբոց վկայութեանց, առաւել եւս՝ ի Յոհաննու Ոսկեբերանէ շարագրելոց: Եւ արդ, լուր զինչ գրէ ի գաղատացւոց թղթին մեկնութեան յայն բանի, որ ասէ առաքեալ. «Երանի՞ թէ մօտակտուր իսկ[380] լինէին, որ զձեզն խռովեցուցանէին[381]»: Եւ արդ, ուր իցեն, որ յանդգնեցան անձամբ զանձանց հատանել զծննդական զսերմունսն եւ զայսպիսի անէծս ընդունել եւ զԱստուծոյ արարչութիւն խոտեցին եւ մանիքեցւոց գործակից լինին, զի նոքա զմարմինն վնասակար եւ նենգիչս ասեն եւ ի հիւղղէ իմն չարէ, այսինքն՝ ի նիւթոյ: Եւ սոքա արդեամբք այսպէս դժնդակ կրօնից տան պատճառս, զի իբրեւ զթշնամի եւ զնենգիչ խափանեն զմարմնական զօրութիւնս, զոր Աստուած ի բնութիւնս հաստատեաց. թէ այդպէս իցէ, ապա պարտ է զակն եւ զականջ եւ լեզու եւ զունչս հատանել, որ է կատարեալ ամբարշտութիւն, զի ոչ թէ սոքա են պատճառք[382] չարի, այլ՝ կամք չարք եւ յօժարութիւն մտաց[68*]: Եւ դարձեալ, յԱւետարանին մեկնութեան յայն բանի, որ ասէ, թէ՝ են ներքինիք, որ ի մարդկանէ են[ա] կամ ի բնութենէն[383], վարձս ոչ ունին, իսկ որք վասն Աստուծոյ ճգնին, վարձք եւ պսակք պահեալ են, իսկ որք ի մարդկանէ եղեն ներքինիք, առանց պսակաց եւ վարձուց են ծանրագաղտուկ, զի յոյս ինչ ոչ ունին: Իսկ որք կամաւ ճգնին, յոյսն թեթեւ գործէ խնդութեամբ[384] յուսոյն, զի ոչ կարեն ալիք ցանկութեան լլկել զմիտս նորա, որ գամ մի հաստատեալ են ի յոյս պսակացն, զի ոչ այնպէս անդամոցն հատումն կտրեն զախտսն, որպէս ցանցք մտացն ցածուցանեն զալիս ցանկութեան եւ յապահովս առնեն զոգին, մանաւանդ թէ խորհուրդքն միայն կարեն զայն գործել, զի յորժամ ասէ, թէ՝ զանձինս ներքինիս արարին[բ], ոչ եթէ զանդամոց ինչ հատանելն ասիցէ. քաւ լիցի, այլ՝ խորհուրդս չարս բառնալ ի մտացն, զի որ զանդամսն հատանեն եւ դատապարտս եւս գտանիցին եւ կարի եւս յիրաւի, զի սպանողի գործ է այնպիսին, զի այդպիսի յանդգնութիւն զԱստուծոյ արարչութիւն խոտելոյ տան պատճառս[385] եւ զմանիքեցւոց բերանս բանան եւ ի կռապաշտիցն ծայրակտրութեանսն յանդգնին, զի

ա Մատթ. ԺԹ 12
բ Համա. Եսայի ԼԹ 7:

զանդամս հատանել դիւաց գործ է եւ սատանայի նենգութեան ի սկզբանէ, զի զԱստուծոյ գործն խոտեաց այնպիսին, եւ զայնպիսին զկենդանի անդամսն ապականեսցէ եւ ոչ՝ կամացն, այլ բնութեան համարեսցին զամենայն վնասն: Եւ այսպէս աներկիւղ մեղանչեն ի վնասակարսն եւ կրկին մեղանչեն զկենդանի անդամսն խափանելով եւ զկամաց ցանկութեան բարեացն արգելուն: Զայնպիսի օրէնս սատանայ եղ, եւ ամենայն ուստէք զտուեալն յԱստուծոյ զազատութիւն ապականէ սատանայ եւ հաւանեցուցանէ, թէ բնական են չարիքն, եւ բազում աստի սերմանէ չարիք կրօնից ոչ յայտնի ինչ, քանզի այս այսպիսի են նենգութիւնք սատանայի: Վասն որոյ աղաչեմ փախչել յայնմ անօրէնութենէ, զի ցանկութիւն չլինի ինչ այնու մեղմագոյն, այլ՝ կարի սաստիկ, քանզի այլուստ ունի զաղբիւր սերմանն ի մեզ, եւ այլուստ յառնեն ալիք ցանկութեան. ոմանք յուղղոյն ասեն եւ այլք[386] ի միջոյն ասեն բուսանիլ ցանկութեան: Իսկ ես ոչ ուստէք ասեմ, բայց միայն՝ ի լկտի կամացն եւ ի լոյծ եւ ի մեղկ խորհրդոցն, եւ եթէ նա ցածնուցու ի բնական շարժմանցն եւ ոչ վնաս ինչ կարէ լինել, զի որ ի մարդկանէ են ներքինացեալ, ընդ վայր է, եթէ ոչ միտքն ցածնուցուն[69*]: Եւ արդ, եթէ Յոհան ասէ, թէ փախիցուք յայնպիսի չար ախտէ, դուք զիա՞րդ յառաջնորդական կարգի կացուցանէք զչարաչար ախտացեալսն եւ զկիսայրսն: Ուրեմն, վկայէք անձանց, թէ ազատութեամբ ոչ կարէք պահել սրբութիւն, զբնութիւն հատանէք, զի կապեալ բնութեան ի հարկէ կրից է զանընդունելի անխառնութիւն մարմնոյն, հոգւովն միշտ պոռնկեսցի, զի առաքեալ ասէ, զի եղիցի կոյսն Սուրբ Հոգւով նախ եւ ապա՝ մարմնով, զի ոգի ախտացեալ զմարմինն ոչ կարէ սրբել, զի Տէրն զցանկացողն չարի ի սրտին ասաց շնալ եւ ո՛չ մարմնով, զի մարմնով շնալն ոչ դիւրին է, զի ի բազում պատճառաց լինի խափանումն, իսկ մտօք միշտ անխափան պոռնկի ի տուէ եւ ի գիշերի. զի թէ մարմինն գործի ոգւոյն է, յորժամ ոգին սուրբ իցէ, ի հարկէ եւ մարմինն լինի սուրբ, զի ոչ կարէ ի վերայ իշխանի մաքուր մտացն յայտնել: Իսկ որոյ միտք եւ խորհուրդք պիղծ են, նորուն գործ ոչ կարէ սուրբ լինել, զի ոչ եթէ մերձենալն առ կին պղծէ զմարդն, ապա թէ ոչ եւ ամուսնացեալքն պիղծ են, այլ՝ չար կամքն, որ արտաքոյ օրինացն ի շնութեան մտաբերեն: Ապա ուրեմն, որք զրկեալ են ի շնորհացն Աստուծոյ եւ ոչ կարեն ազատութեամբ պահել զսրբութիւն, ի հարկէ կապեն զբնութիւն եւ բնութեամբ ակամայ կրեն զանօգուտսն, որք ոչ վարձուց, այլ դատապարտութեան են արժանի[387] ըստ անպիղծ կրօնից իւրեանց, զի կամաւորն պահանջի ի մենք սրբութիւն ըստ ազատութեան մտացն, որ վասն Աստուծոյ կրէ, եւ ոչ՝ ի հարկէ բռնադատեալ: Եւ արդ զո՞ր ասացից կամ զո՞ր թողից զմտահաճն ձեր բազմադիմի օրէնս արտաքոյ օրինացն Քրիստոսի, զի որպէս փոխեցէք զբնութիւն արանց ի կարգ կանանց, թէպէտ եւ ոչ ճշմարտութեամբ, զի հանէք յայսմանէ եւ ոչ կարացիք հատանել այնմ, սոյնպէս փոխեցէք եւ զձեւ կանանց յարս՝ զարդարելով զգլուխ արանց գիսակօք, զօրէն կնատ կանանց զարդու, զորս աղար-

տեալ[388] ի բաց հանէ յԵկեղեցւոյ սուրբ առաքեալն՝ ասելով. «Այր եթէ գիսավոր է, անարգանք են նմա, բայց կին եթէ գիսատր է, փառք են նմա, զի գէսք փոխանակ զգեստու տուեալ են նմա[ա]»: Եւ արդ, եթէ փոխիցէք զզարդ գլխոյ կանանց ի գլուխ արանց, պարտ էր զնոցայն զերծուլ, եւ եթէ ոչ գիտէք զպատճառ գիսոյ կանանց, ուսիք զառաքելոյ[389], զի գէսք սգոյ նշանակիչք են: Առաքեալ[390] ասէ. «Ադամ ոչ մեղաւ, այլ՝ Եւայ, ապա ուրեմն՝ նմա պատշաճի կերպարանք սգոյ եւ ոչ՝ առն, որ ոչն մեղաւ: Եւ արդ, եթէ փոխեցէք զկերպարանս սգոյ յարս, դարձեալ ասէ առաքեալ, թէ այր, որ ծածկեալ ունի զգլուխ իւր[391] գիսօք, յամօթ առնէ զգլուխն իւր, զի պատկեր եւ փառք Աստուծոյ է: Եւ զիա՞րդ մարթի զպատկեր Աստուծոյ, որ փառօք զարդարեալ է, սգով եւ կանացի գիսօք ծածկել: Դարձեալ առ այնպիսիսն, որք հակառակութեամբ ոչ կամեցան զհին սովորութեան իւրեանց թողուլ[392], եթէ ոք կամիցի հակառակել եւ ոչ թողուլ զհեթանոսական հին սովորութիւն, մեք չունիմք այսպիսի սովորութիւն, եւ ոչ՝ Եկեղեցիք Աստուծոյ: Ապա ուրեմն՝ օտար է Եկեղեցւոյ այդպիսի կրօնք, այլ հեթանոսաց է այդպիսի սովորութիւն եւ շնականաց կրօնք, որք ի ժամ վարդապետութեան շնականք իմաստասէրք ծածկէին զգլուխս[393] իւրեանց[70*]:

ՎԱՍՆ ՊԱՏԿԵՐԱՊԱՇՏԻՆ[394]

Դարձեալ ասացից սուղ ինչ բան յաղագս պատկերապաշտաման պատկերաց, թէ ուստի ընկալեալ զայդպիսի պաշտօն. ոչ ահա սկիզբն կռապաշտութեան. դոյն իսկ եղեւ, զի առաջինն ոչ վասն պաշտաման ստեղծին, այլ՝ վասն յիշատակի տարաժամ մանկանց մեռելոց. զորս ի պոռնկութենէն ծնան: Եւ տարակարծեալ կեանք յաղագս անօրէն ծննդեանն եւ ծնողացն առ գութ մանկանն[395] զնմանութիւն տրուպ հասակին եւ կերպարանացն նկարագրեցին՝ առաջի աչաց միշտ նկատելով զմանուկն: Եւ սուտակասպասուց մեծարելով յաղագս ծնողացն ախորժակի եւ առ սակաւ սակաւ ընդ երկարեալ յետոյ ի տգիտացն ի պաշտօն առաւ, զոր բազում ջանիւք Աստուած խափանեաց պատժիւք[396] օրինացն եւ պատուէր տալով, թէ՝ մի՛ արասցես նմանութիւն զինչ եւ իցէ պատկերի[բ], եւ Եսայիւ[397] մարգարէիւ ասէ Աստուած. «Ո՞ւմ նմանեցուցէք զԻս, մի՞թէ ի հիւսանց ճարտարաց պատկերի նմանեցայց[գ]»: Եւ ահա ոչ ունիմք[398] վկայութիւն մարգարէիցն՝ պատկերի երկիրպագանել եւ ոչ յառաքելոցն, բայց միայն՝ Խաչին, ապա թէ ոչ, ցուցէք մարգարէիցն վկայութիւն, թէ ով հրամայեաց երկրպագել պատկերի, որպէս Խաչին ունիմք վկայութիւն բազում յօրինաց եւ ի մարգարէից, բայց վասն պատկերի երկրպագութեան՝ ոչ ուստեք կարէք

ա Ա Կորնթ. ԺԱ 15
բ Եկ Ի 4
գ Եսայի ԽԶ 5

գտանել վկայութիւն: Եւ զիա՞րդ զպատճառս գայթագղութեան, զոր Աստուած հրաժարեցոյց երկրպագել: Դարձեալ ի պաշտօն առէք, ապա եթէ ասիցես, թէ՝ ոչ պաշտեմ, այլ՝ պատուեմ, այդ գիտութիւն ոչ ամենեցուն է, այլ՝ սակաւուց, իսկ ախմարք[399] եւ տգէտք՝ ի պատուելն քո պաշտելի եւ երկրպագելի համարին: Եւ այսպիսոյ մտօք երկրպագելն ոչ ահա կռապաշտութիւն համարեալ է, ո՞չ ուսար յառաքելոյ, որ յանդիմանէ զուսողսն գիտութիւն եւ բազմեալ ի մեհեանս: Ահաւասիկ, թէպէտ եւ ինքեանք ոչ վնասէին, այլ զտկարս գայթագղեցուցանէին եւ այնպէս ի Քրիստոս մեղանչէին: Եւ դու պատուելովդ պատճառս տաս տգիտաց ի կռապաշտութիւն անկանել, զի պաշտելի եւ երկրպագելի յարարածս միայն Խաչն է վկայութեամբ մարգարէիցն: Զի թէ պատկերն երկրպագելի էր, ընդէ՞ր ոչ մի ի մարգարէիցն վկայեաց ոք, քանզի մեք զԱստուած պաշտելի ի մարգարէիցն ծանեաք եւ զՔրիստոս Աստուած եւ Որդի Աստուծոյ ի վկայութենէ մարգարէիցն ծանեաք[400] եւ զԽաչն պաշտելի ի նոցունց ուսաք: Եւ եթէ պատկերքդ եւս պաշտելի էր, ընդէ՞ր ոչ ծանուցին մեզ մարգարէքն, որ զամենայն ինչ ծանուցին մեզ ի յայտնութենէ Հոգւոյն, այլ մեք զԱստուած, որ ի մարգարէիցն ոչ վկայեցաւ, ոչ պաշտեմք, թող թէ զպատկերս: Իսկ արդ, եթէ ասիցես, եթէ Քրիստոսի պատկերին երկիր ոչ պագանեմ, ասացից առ այդ՝ ես զՔրիստոս կենդանի պատկեր միշտ ի Խաչին խոստովանիմ, որպէս եւ ուսայ ի մարգարէիցն, Որում երկիր պագանեմ: Եւ զիարդ մարթի զկենդանի պատկերն ի Խաչին բեւեռեալ թողուլ եւ նմանութեան լոկոյ, որ ի ճարտարաց նկարեցաւ, այնմ երկիր պագանել: Եւ արդ, ո՞վ ոք, զթագաւոր կենդանի տեսեալ յաթոռ փառաց նստեալ, թողուլ զայն եւ մեռեալ պատկերի, որ ի մարդկանէ նմանագրեալ, այնմ երկիր պագանիցէ:

Այլ մեք նկարագրեմք զպատկեր Քրիստոսի եւ զառաքելոց եւ զմարգարէից եւ հայեցեալ տեսանեմք եւ պատուեմք, այլ ոչ հրամայեմք տխմարաց եւ տգիտաց ժողովրդոց առաւել, քան զչափն, պատիւ եւ պաշտօն մատուցանել, զի մի տգիտութեամբ գայթագղեալ ի կռապաշտութիւն անկանիցին[401]: Այլ եթէ զայս պատճառես, եթէ տօնել յիշատակ մարտիրոսի եւ պատուել զպատկեր նորա բարեխօս ունիմք առ Աստուած, այդ իսկ են յետին տգիտութիւն, զի մեք գիտեմք զմարտիրոսքն կենդանիք եւ անմահացեալք եւ մեր առ Աստուած, որ եւ բարեխօս են մեր: Որպէս եւ աստուածաբան ասէ, թէ՝ հաւատամք զոգիսն արձակել ի կապարանէ մարմնոյս, եւ առաւել ի սգաստութեան են մերձ առ Աստուած, որ եւ բարեխօս իսկ են վասն մեր: Արդ, զկենդանի պատկերսն, որ մերձ առ Աստուած են, թողեալ[402]՝ զանբարբառ պատկերս ունիք բարեխօս: Գիտեմ ես զժողովրդականսդ մանաւանդ, թէ զգլխաւորս իսկ, որ առաւել, քան զԽաչ եւ զԵկեղեցի, պատուեն եւ պաշտեն զպատկերս եւ շրջեցուցանեն առաւել պատուով, քան զԽաչն եւ գայթագղին յայնմիկ: Եւ դուք ոչ զգուշացուցանէք, այլ առաւել յորդորէք պատկերապաշտ լինել, եւ համարձակութիւնդ ձեր յայտ գայթագղութիւն լինի տկարաց: Եւ այս առաւել, քան զչափսն[403] պատուելով,

զմիտս տկարացն զկծեցուցեալ ի Քրիստոս մեղանչէք եւ գայթագղեցուցանէք զտգէտս, վասն որոյ Քրիստոս մեռաւ: Եւ արդ, բաւական լիցի այս՝ առ ի յանդիմանութիւն տգիտաց եւ խրատ իմաստնոց:

ՎԱՍՆ ԺՈՂՈՎՈՅՆ ՔԱՂԿԵԴՈՆԻ[404]

Այլեւ են ոմանք, որք տգիտաբար հակառակիք եւ ասէք, թէ հայք միայն ոչ ընկալան զժողովն Քաղկեդոնի[405] վասն նախանձու հակառակութեան, վասն ոչ զոք կոչելոյ ի նոցանէ ի ժողովն Քաղկեդոնի, եւ զայս ոչ գիտեն, եթէ հաւատսն[406], զոր հաստատեցին, ոչ կամաւ հաւանութեամբ, որպէս օրէն էր ժողովոց սիրով եւ միաբանութեամբ ատենից հաստատել զճշմարտութիւն հաւատոյն, եթէ ուղիղ հանդիպի, այլ բռնութեամբ հարկ արարին, զի որ ոչ հաւանեսցի չար ժողովոյն, ի բաց կացցէ յիշխանութենէն, որպէս հրեայքն հարկ եղեալ, եթէ ոք հաւատասցէ Քրիստոսի, ի բաց կացցէ ի ժողովրդենէն: Եւ արդ, եթէ զճշմարիտն հաստատեցին հաւատ, զի՞նչ պիտոյ էր բռնութեամբ թագաւորին Մարկիանոսի հաստատել զդաւանութիւն հաւատոյն այն, որ անդէն վաղվաղակի սատակումն ընկալաւ ի հրեշտակէն աներեւոյթ, որով հատեալ ի ներքոյ զպարանոցն[407] վասն չարաչար բռնութեան: Եւ այլ թագաւորք, որ զկնի բռնութեամբ հաստատեցին այնոցիկ միայն, որ ըստ իւրեանց իշխանութեամբն էին եւ ոչ՝ այլ ազգս եւ մինչ ի Յուստիանոսի ժամանակս Երուսաղէմ ոչ ընկալաւ զնոցայն հաւատս: Իսկ Յուստիանոս բազում բռնութիւն հասուցեալ եւ ոչ կարացեալ դարձուցանել զնոսայն յուղիղ հաւատոյն: Ահա քաջայայտ[408] է, զի յայլ ազգս, որ ոչ ընդ նոյն իշխանութեամբ են, ոչ ընկալան զհաւատն Քաղկեդոնի, զորս յայտ ցուցից, թէ որչափ գաւառք են, որ ընդ մեզ են եւ ոչ ընդունին զնոցայն հաւատ մինչեւ ցայսօր: Նաեւ որ ընդ նոցա իշխանութեամբ են, ո՞չ ահա բազում այն են, որ ոչ զնոցայն, այլ մերս ունին հաւատ, եւ տե՛ս, որչափ եպիսկոպոսունք կան ի Մէջերկրեայսդ, յԱսիայ եւ ի Գամիրս եւ ի Բութանիա[409] եւ ի Գաղատիա եւ ի յառանձնակ Ասիա եւ ի Լիւստրիայ ի Կիլիկիա եւ ի Տարսուս եւ ի Միջագետս եւ ի Փռիւքիայ եւ բոլոր յամենայն Ասորիք ընդ մերով իշխանութեամբ ի Գամիրս եւ ի Գանգրա եւ ի մերձ ի Պոնդոս եւ յայնկոյս՝ ի Թարսիս ի Մակեդովնիա եւ որք միանգամ ընդ ձերով իշխանութեամբ են, ո՞չ ահա բազում եպիսկոպոսունք, ի հայոց ձեռնադրեալ, հաստատուն կան ի ճշմարտութեան հաւատս՝ ոչ թիւրեալ յերից սուրբ ժողովոյն՝ ի Նիկիայն, ի Կոստանդնուպօլսին եւ յԵփեսոսին եւ ի սրբոյն Գրիգորի սահմանեալ հաւատսն: Եւ զայդ ամենայն գաւառաց եպիսկոպոսունք ունիմք հնազանդութիւն աթոռ սրբոյն Գրիգորի: Եւ ի վերայ այսր ունիմք եւ զայլ ազգս բազումս ի հաւատս երից սուրբ ժողովոյն, որպէս մեք, եւ նզովեն զժողովն Քաղկեդոնի ընդ մեզ:

Եւ արդ յայտ ցուցից[71*], թէ ոյք են, որք ոչ ընդունին զհաւատն Քաղկեդոնի, նախ Հռովմ[410] թագաւորանիստ քաղաքն, որք նզովեն զժողովն Մարկիոնի եւ որ զջուր եւ զխմոր ի սուրբ խորհուրդն խառնեն, եւ

բոլոր ամենայն յԻտալիա եւ Գաղատիա եւ Սարդովնիկէ մեծ կղզին եւ Սիկիլիա եւ Սպանիա ի մուտս արեւու եւ մեծ Աւրիպիէ եւ Գերմանիա եւ Աստիկէ եւ Ելլադա եւ այլք բազումք, որք ի մտից կան Մակեդովնիա: Իսկ ի կողմն[411] հարաւոյ, յայնկոյս Յունաց ծովուն, նախ՝ Եգիպտոս, յորում են գաւառք ԽԱ (41), եւ Աղեքսանդրիա ընկալեալ երից սուրբ ժողովոյն զուղիղ դաւանութիւն հաւատոյն[412] ընդ մեզ եւ ի նոյն կան հաստատուն՝ ոչ ընկալեալ զժողովն Քաղկեդոնի եւ Ափրիկեա, որ ունի գաւառս ԽԲ (42), յորում է մայրաքաղաքն Կարկեդոն: Եւ սոքին նոյն հաստատեալ հաւատս ոչ ընկալեալ զժողովն Քաղկեդոնի: Եւ Մաւրիտանիա մինչեւ ի մուտս արեւու հանդերձ բազում գաւառօք, որ ունի զմայրաքաղաքն Տինգանիա, եւ սոքին ի նոյն հաստատեալ հաւատս ոչ միաբանին ընդ ձեզ: Եւ Վերին Թէբաիթ մինչեւ ցլեառն Լուսնի եւ ներքին Թէբաիթ բազում գաւառօք զնոյնս ունին հաւատ: Եւ Եթոպիա մեծ եւ փոքր մինչեւ ցծովն Հնդկաց ի նոյն հաստատեալ հաւատս: Եւ Երջանիկ Արաբիա, որ կայ ի մէջ երկաթեղ կարմիր ծովուն, եւ Ապառաժն Արաբիա: Եւ այսոքիկ ամենեքեանք՝ զմի եւ զնոյն ունելով հաւատս ընդ մեզ՝ հաստատեալ յերից սուրբ ժողովոյն: Եւ այսքան ամենայն, որոշեալք ի ձէնջ, ոչ ընդունին զհաւատս ձեր, բայց միայն որք ընդ իշխանութեամբ ձեր են, զորս ընդ հարկի բռնութեամբ որոշեցիք յառաջին հաւատոյն եւ ի Քաղկեդոնի յերկաբնակ հաւատսն հաստատեցիք: Եւ արդ, զայս ամենայն գաւառսն, զորս գրեցաք եւ այլս բազումս որոշեալ ի ձէնջ ոչ կարէք ցուցանել, եթէ գրով ընկալան ի ձէնջ զերկաբնակ դաւանութիւն, եւ ոչ յեպիսկոպոսաց գաւառացս յայսցանէ ցուցանել կարէք գալ ի ժողովն Քաղկեդոնի[72*]:

ՎԱՍՆ ԲԱԺԱՆՄԱՆՆ ՎՐԱԾ[413]

Իսկ զինչ ասացից վասն վրաց որոշելոյն ի մերոյ հաւատոյս եւ ի ձէնջ ոչ ընկալեալ Ճ (100) ամ ընդ մեզ նզովեցին զժողովն Քաղկեդոնի, եւ մինչեւ ժողովեցան հայք ի Դուին եւ ի Մանազկերտ եւ որոշեցին զհաւատն Քաղկեդոնի եւ հաստատեցին զնոյն հաւատ, զոր ընկալան ի սրբոյն Գրիգորիոսէ եւ յերից սուրբ ժողովոյն, ընդ մեզ էր եւ եպիսկոպոսապետն Մցխիթայի Գաբրիէլ Խաղաղացի[414]:

Եւ այսչափ ընդ մեզ միաբանեալ՝ յետոյ որոշեցան ի մէնջ, մինչ վախճանեցաւ Գաբրիէլ Խաղաղացին: Եւ կացուցին ի տեղի նորա զԿիւրիոն ոմն, որ ունէր զսերմն Քաղկեդոնական[415] հերձուածոցն ի գաղտնի եւ վասն գահերիցութեան ախտացեալ եւ զչարչարեալ վասն վեհագոյն դնելոյ, քան զնոյն[416] զԱղուանիցն եւ զՍիւնացն[417] աթոռակալութիւն որոշեցաւ ի մէնջ յաւուրս Աբրահամու հայոց կաթողիկոսի եւ կոչեցեալ միանգամ եւ երկիցս ոչ հնազանդեցաւ: Եւ ապա առաքեաց զդրան եպիսկոպոսն Պետրոս, զի թէ ոչ հասանեսցի հնազանդեալ, լուծցի ի կարգէն, եւ նորա եկեալ ոչ կարացեալ հաւանեցուցանել, կամեցաւ լուծանել ի կարգէն: Իսկ նա, իւրով կամաւ մերկացեալ ի շնորհացն, տայր ցնա զգեստ հայրապետութեան

եւ ընդդէմ մեր փոխարկեալ զձեւ կարգին յետս ընդդէմ դարձուցեալ զամենայն զկերպս եւ օտարաձեւ[418] զգեցեալ: Եւ Պետրոսի առեալ տանէր առ հայրապետն Աբրահամ, իսկ Կիւրիոն աւազակս առաքեալ զկնի նորա սպանին զնա եւ հասեալ ի Կանգուարս, քարկոծ[419] արարին զՊետրոս: Եւ այսպէս արիւնապարտ եղեալ դարձաւ ի հաւատն Քաղկեդոնի, զորս հարիւր ամ ընդ մեզ հոմնեալ նզովեցին: Եւ դարձեալ ի նոյն փսխած վերստին դարձան: Այս են պատճառք վրաց որոշելոյն ի մէնք:

Ի ՅԱՂՈՒԱՆԻԾ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ[420] 73*

Քառասներորդ ամ էր թուականութեան[421] հոռոմոց, յորժամ լուսաւորեցան հայք ի հաւատս եւ աղուանից լուսաւորութեան Մ եւ Հ (270) ամ յառաջ յետ Ճ եւ Հ (170) ամին ելոյ հաւատալոյն հայոց յաղագս տիեզերակործան ժողովոյն Քաղկեդոնի, եղեւ հանդէս ժողովոյ ի ժամանակս Բաբգէնի հայոց կաթողիկոսի: Յոյնք եւ ամենայն Իտալիա, հայք եւ աղուանք եւ վիրք միաբանեալ նզովեցին զչարափառ ժողովն Քաղկեդոնի եւ զտումարն Լեւոնի հրամանաւ բարեպաշտ թագաւորացն հոռոմոց՝ Զենոնի եւ Անաստասայ: Եւ յետ Զէ (87) ամի անցելոյ ի ժամանակս Աբրահամու հայոց կաթողիկոսի բաժանեցան վիրք ի հայոց միաբանութենէ ի ձեռն անիծելոյն Կիրիոնի, այլեւ՝ յոյնք եւ Իտալիա ընդ սոսա: Եւ աղուանք ոչ քակտեցան յՈւղղափառութենէ եւ ի միաբանութենէ հայոց, զորոյ ի շրջաբերական թղթին վասն Կիրիոնի դիմադարձութեան[422] Աբրահամ զամբաստանականսն վասն նորա գրէ յաղագս ամենայն ի բաց կտրել[423] սրով Հոգւոյն: Եւ նաեւ յԱղուանս գրեաց եւ նզովել արտաքսեցաւ Կիւրիոն:

ՊԱՏՃԱՌ ԲԱԺԱՆՄԱՆՆ ՎՐԱԾ[74*]

Ասացին յոյնք ընդ հայս, թէ կարգաւորեաց Աստուած զԵկեղեցի Թ (9) դաս ընդ երկնայնոցն[424] նմանութեան: Պատրիարգ, որ է հայրապետն[425] եւ արքեպիսկոպոսն, որ եպիսկոպոսապետ կոչի, եւ մետրապօլիտ եւ եպիսկոպոսք եւ քահանայք, սարկաւագունք կէսսարկաւագ[426], ընթերցողք եւ փսաղտ: Այս ամենայն միաբանեալ ապա կարեն ձեռնադրել զհայրապետն, եւ հայրապետն՝ զամենեսեան: Արդ, եթէ ողջամտութեան հաւատոյն էք, խոստովան եղերուք, թէ ով է պատրիարգն ձեր, զի չորք միայն կացին ի վերայ երկրի. Աղեքսանդրին՝ Մարկոսի աթոռն, Անտիոքայն՝ Մատթէոսին, Հռոմայն՝ Ղուկասուն, Եփեսոսին՝ յԱսիա, Յոհաննուն՝ ըստ չորեքկերպեան կենդանեացն, ըստ չորեքանկեան տիեզերացս, ըստ քառավտակ գետոցն Ադենայ[427], ըստ չորից Աւետարանացն, ըստ չորից մովսիսական օրինացն, զի երկրորդումն օրինացն որիշ համարի եւ մեք ամենեցուն հնազանդ եմք, հնազանդեցարուք միում ի նոցանէ կամ ամենեցուն, որ միահաւատ լինինք, քանզի ձեր ի Կեսարիա եպիսկոպոսապետն միայն ձեռնադրեցաւ սուրբն Գրիգոր եւ որք յետ նորա մինչեւ ցայսօր: Ապա թէ այլ ոք Եկեղեցի ուղղափառ էք զատ ի յայսցանէ ցուցէք եւ զպատրիարգն[428] ձեր, ընդ որով դասի արքեպիսկոպոսապետն, որ մինչեւ ցայսօր ընդ մեզք է, ապա թէ պատրիարգ ոչ ունիք եւ բաւանդակ զայլ կղերս Եկեղեցւոյ յայտնի ասեն՝ խոտորեալ հերձուածող էք ընդ Արիոսս եւ ընդ Խուժաստանս եւ ընդ այլ չարափառս: Այլ թէպէտ յամենայն պատասխանիս զօրաւոր էին ընդդէմ յարակիրթ ճարտարացն յունաց, որ վստահանային ի սուր լեզուս հելլենական յորդաբանութեամբն, այլ այնուհիկ անպատասխանիք եւ պարտեալ լինէին հայք, զի այդպիսի դպրութեամբ վարէր Եկեղեցի: Իսկ թագաւորեալ Յուստիանոս փոխեաց զնշխարս Յոհաննու ի Կոստանդնուպօլիս եւ հաստատեաց անդ աթոռ հայրապետական, եւ բուն աթոռն մնայ յԵփեսոս: Նոյնպէս զՄատթէոսին փոխեաց յԱնտիոքայ յԵրուսաղէմ, ասէ, վասնզի քաղաք մեծի արքային է, եւ բունն մնայ յԱնտիոք: Յանժամ շարժեցան ամենայն մեծամիտք եւ, ուր առաքեալ էր վախճանեալ, զամենեցուն աթոռ պատրիարգի խոստովանեցին: Սնտանօր ապա մերոյս բերաւ բան ի բերան յետ զկարգ նոցա դնելոյն եւ զհայք, պարսիկք եւ յոյնք բաժանեալ էին եւ տէր Մովսէս էր յաթոռ սրբոյն Գրիգորի ի Դուին եւ ի կողմն յունաց հակառակ նմա նստուցին յաթոռ զՅոհան ոմն մերձ առ նա: Իսկ զյերկուանալն հայրապետութեան խորհեցին տեարքն Սիւնեաց եւ ոչ հաւանեցան ընդ միօք յերկուցն հրամանաւ եպիսկոպոսին իւրեանց առաքինոյն Պետրոսի, որ հասեալ ի վախճան պատուէր ետ վիճակին իւրում առնուլ զձեռնադրութիւն յԱղուանս, եւ զմիոռնն օրհնութեան մինչեւ միասցի աթոռ սրբոյն Գրիգորի, վասն այնորիկ ձեռնադրեցաւ Վրթանէս եպիսկոպոսութիւն Սիւնեաց ի Զաքարիայ սուրբ հայրապետէն Աղուանից ընդ նմին եւ զիւղն[429] օծութեան առնուին ամ յամէ յԱղուանից, մինչեւ բարձաւ հակառակութիւն եւ միապետեաց Աբրահամ զհայրապետական աթոռն: Եւ սակս Թ (9) դասակարգութեան զլխաւորք եկեղեցական անձնահաճ կամօք ըստ նպերտ բարուց Հայաստանեայցն կարգէն զԱբրահամ պատրիարգ եւ զԱղուանիցն արքեպիսկոպոս[430] եւ զվրացն մետրապոլիտ խեռեցաւ վրացն, որում Կիւրիոն[431] կոչէին, եւ զհակառակութեան բերէր վճիռ: Իսկ հայրապետն Աբրահամ ասէր լինել յառաջահաւատ[432], քան զՎիրս, զԱղուանս, եւ նոցա անկ է եպիսկոպոսապետութիւն: Յայս մաքառմանէ եւ ի խնդիր ուղղափառութեան հաւատոյ, դարձան վիրք եւ եղեն քաղկեդոնիկ: Իսկ ի յունական զօրավարացն գրգռել զնա խնդրել զգահերիցութիւն ի վերայ Աղուանից, որում ոչ հաւանել Աղուանից զայլ ոմն երեւեցուցին կանխաւ առաքեալ եկեալ ի յաշխարհն Աղուանից Եղիշա անուն յաշակերտացն Տեառն, քարոզել անդ եւ Եկեղեցիս շինել նախկին, քան ի հայս առաջին մայր Եկեղեցեացն արեւելեացն Գիսու Եկեղեցին: Նորին հիմնադրեալ դարձան ի Հայոց առ ինքեանս չլինել ընդ ումեք իշխանութեամբ: Ահա հայք վասն մեծաբանութեան յունաց, որ փոքր կացուցանել ջանային զկայս հանգստեան Թադէոսի առաքելոյն չունել եպիսկոպոսապետ եւ մետրապոլիտ, խորհեցան առնել մետրապոլիտ զմարդապետականն եպիսկոպոս տալ նմա Խաչ ի պատիւ մերոյն եւ ոչ առնել ձեռնադրութիւն Խաչի,

եւ նորա խնդրել եպիսկոպոս երկուս կամ երիս լինել ընդ իւր, որում ոչ հաւանեալ գլխաւորացն երկուցեալ՝ թէ միգուցէ արդեօք այլ իմն գունակ բաժանումն լինիցի միապետել Աթոռոյն: Ապա տեսանելով միշտ աստուածերկիւղս[433] եւ հլուս եւ հաւանս զտեարսն Սիւնեաց եւ զկղերս Եկեղեցեացն քաջ ուսմունս եւ ուղղափառս յամենայնի նոցա ետուն զպատիւ լինել մետրապոլիտ Հայոց խաչանիշ մեծարանօք եւ ոչ ժտել յիրս ինչ, եւ ոչ քարոզել եպիսկոպոսապետ զհայրապետն եւ զայլ աշխարհի զառաջին սովորութիւն իւրեանց թողին, զի մի՛ ամբոխ ինչ լինիցի: Վասն այնորիկ չքարոզեն եպիսկոպոսապետ Սիւնիք եւ ոչ գրոյն պատասխան արկին Հայոց, զի եթէ քարոզելի էր եւ գրելի էր, բայց ոչ քարոզելն մեծութիւն է, որպէս զոչ գրելն, եւ զԽաչ առաջի ունել ի փառս տէրունեան է, եւ անուն լոկ Խաչիւն եւ քարոզովն է բնաւորեալ յիշատակ ոչ ուրուք ընդ նովաւ եղելոյ: Այսպէս զԵկեղեցին զինն դասս եւ տէրունիք ի Սիւնիք հոգեւոր տէր գրէին եւ նոքա ի ծառայէ: Ապա տեառն Եղիայի խակագործութիւն յԻրիցու վանս, յորժամ ի յԱղուանս երթայր, սակս այնր ոչ գրեցին ի ծառայէ, արգելին եւ նոքա զհոգեւորն: Այդպէս ստուգութիւն իրացդ:

ՎԱՍՆ ՉՈՐԻՑ ԱԹՈՌՈՑՆ

Այլ վասն այնր, զի ասեն յոյնք, եթէ հայք ոչ են ի չորից աթոռոցն, արդար են, զի առաջին աթոռն Մատթէոսի՝ յԵրուսաղէմ, իսկ երկրորդն՝ Մարկոսի՝ յԱղեքսանդր, իսկ երրորդն՝ Ղուկայ՝ յԱնտիոք, իսկ չորրորդն՝ Յոհաննու՝ յԵփեսոս, զոր այժմ ունի Կոնստանդինուպօլիս, ուր հարիւր եւ յիսունքն ժողովեցան յաղագս հոգեմարտին յաւուրս Թեոդոսի Մեծի, որպէս պատմէ Սոկրատէս[434] 75*: Բայց տեսցուք, թէ իցէ այլ հայրապետութիւն ի ներքոյ երկնից, բայց ի չորից, թէ չիցեն: Ահաւանիկ Հռովմ ոչ է ի չորիցն, բայց վասն Պօղոսի եւ Պետրոսի անդ լինելոյ լինի հայրապետութիւն ի Հռովմ: Եւ հնդիկք ոչ են ի չորից, բայց վասն Թովմայի անդր լինելոյ ունին եւ նոքա հայրապետութիւն առանձին: Ասի եւ Ճենաստան աշխարհին, թէ ունին հայրապետութիւն առանձինն վասն միոյ առաքելոյ անդր լինելոյ, թէ Շմաւոն Նախանձայոյզ[435], թէ այլ ոք, բայց կարծեմ, թէ եւ Յակոբոս Ալփեան քարոզ լեալ Սպանիա մեծի եւ բիւրսատացւոցն[436], ունին եւ նոքա հայրապետութիւն առանձին: Այսպէս եւ մեք՝ Հայաստանեայքս, ընդ Հռովմայ եւ ընդ արեւելայ հնդկաց եւ ընդ այլսդ, որ ոչ են ի չորիցն, ունիմք մեծ հայրապետութիւն վասն երկուց գլխաւորաց առաքելոց աստ կատարելոյ զընթացս իւրեանց: Նախ՝ Թադէոս, որ էր ընկեր Պետրոսի եւ որդւոցն Զեբեդեայ[437] եւ զանուանն փոփոխումն ընդ նոսին ընկալաւ ի Քրիստոսէ: Զէբէոս, որ է Թադէոս[ա] եղեւ. եւ, որպէս պատմէ Աւետարանն Մատթէոսի. եւ Մարկոսի. եւ զկնի նորա Բարդուղիմէոս, որ եւ նա մի էր

ա Մատթ. Ժ 3

յերկոտասանիցն: Եւ յաշխարհիս Հայաստանեայց կատարեցին զընթացս առաքինութեան մանաւանդ, զի նախքան զամենայն աշխարհս ընտրեցաւ արքայն հայոց ամենայն հաւատովք ի Քրիստոս, մինչդեռ յաշխարհի էր յառաջ, քան զամենայն հեթանոսս խոստացաւ Քրիստոս արքային մերոյ առաքել զմի յաշակերտաց Իւրոց առ նա, եւ միոյ փոխանակ երկուսս առաքեաց:

Արդ, թէ որ արտաքոյ չորիցն են, խոտելիք են, եղիցի խոտելի եւ մերս ընդ Հռովմայ, ընդ հնդկաց եւ ընդ այլոցն[438], որք ոչ են ի թուոյ չորիցն: Իսկ եթէ ամբարշտութիւն է արհամարհել զհայրապետութիւն Հռովմայ եւ հնդկաց, զի առաքելական անուն ունին, ապա առաւել ամբարշտութիւն է արհամարհել եւ զմեր հայրապետութիւնս, զի յառաջ, քան զամենայն յաշխարհս երկու առաքեալ զարդարեալ ի Հոգւոյն Սրբոյ: Բայց, աղէ, տեսցուք, թէ որ ազգ այնպիսի աստուածային սքանչելիք եղեն, որպէս առ մեզ: Զի ահա յերկնից եղեւ կոչումն մեծին Տրդատայ եւ ամենայն Հայաստանեայցս, որպէս եւ՝ մեծին Պօղոսին; Եւ երկնային ահաւոր տեսլեամբ կոչեցաւ յաթոռ առաքելութեան մեծին Թադէոսի եւ Բարդուղիմէոսի, սքանչելին Գրիգորիոս Լուսաւորիչն մեր եւ երկնային շնորհօքն դարձեալ տուաւ մեզ գիր ի ձեռն սրբոյն Մեսրովբայ եւ մեծին Սահակայ առանց մարդկային իմաստութեան որպէս որդւոյն Խորհրդի ի ձեռն Մովսէսի: Եւ դարձեալ Խաչն կենարար փայլեաց յերկրի մերում եւ յԵրուսաղէմ փայլեաց, եւ այժմ հանգուցեալ է ի լեառն Վարագ՝ պահելով զմեզ միշտ զօրութեամբ Իւրով յամենայն արկածից բանսարկուին: Արդ, զընտրեալ յԱստուծոյ զՀայաստանեացս ո՞վ իշխէ արհամարհել. ո՞չ ապաքէն հակառակ գտանի այնպիսին Հոգւոյն Սրբոյ, որ ընտրեաց զմեզ ողորմութեամբն Իւրով եւ շնորհիւ:

ՎԱՍՆ ՄԵՌՈՆԻՆ

Դարձեալ վասն մեռոնին[439], ասէք, թէ ձիթն ձիթենւոյ ոչ է: Արդ, միթէ՞ շնորհք Հոգւոյն ի ձէթն ձիթենւոյ զօրէն. ո՞չ ապաքէն ամենակալ է Հոգին Սուրբ եւ ամենեցուն տիրէ, եւ ամենայն նորապէս արարածք[440] են: Նոյնպէս եւ՝ ձիթենի, եւ՝ ընկուզի, եւ՝ բեւեկնի, եւ՝ շուշմայի, զոր մեք կնջիթ ասեմք, եւ յամենայն անխափան գայ շնորհք Հոգւոյն Սրբոյ եւ ի ջուրսն[441] Յորդանանու: Նոյնպէս եւ յամենայն ջուրսն կատարի մկրտութիւն սուրբ Աւազանին, որպէս եւ ի ձիթենեաց ձէթ[442] գայ շնորհք Հոգւոյն Սրբոյ, նոյնպէս եւ յամենայն ձէթ գայ շնորհք, զի ոչ եթէ ձիթենոյ զօրութիւն, այլ Հոգւոյն Սրբոյ է զօրութիւն: Ապա եթէ զպատուականութիւն յուզեմք՝ Մովսէս զիւղ կովուց ասաց պատուական, քան՝ զամենայն իւղ: Արդ, առեալ լինիցի յունողաց իւղն կովուց վասն պատուականութեան: Իսկ եթէ յիմարութիւն է զայս ասել, ուրեմն թէ որչափ նուազ լինին ի նիւթ երկրաւոր[443], այնչափ մեծ երեւի զօրութիւն Աստուծոյ ի նմա: Ապա թէ ոչ. ընդէ՞ր ոչ զԽաչն ոսկեղէն կամ յականց պատուականաց կանգնեաց, այլ՝

փայտեղէն. զի Աստուծոյ զօրութիւն երեւեսցի եւ ոչ պատուականութիւն նիւթոյն: Ընդէ՞ր եւ յանարգ յայրի եւ ի մսուր բազմեցաւ եւ ոչ յոսկեձեղուն տաճարի եւ յականակապ գահոյս. այլ զի յամենայնի զօրութիւն Աստուծոյ մեծասցի եւ ոչ՝ նիւթոյն առաւելութիւն, եւ Աստուծոյ փառքն հռչակեսցին ի ձեռն տրուպ եւ նուազ իրացն երկրաւորացս, որպէս զառաքեալն տխմարս եւ տգէտս ընտրեաց եւ նոքօք զԻր զօրութիւն երեւեցոյց յաշխարհի: Այսպէս եւ յամենայն ձէթէ, զոր եւ դնեն յանդիման սուրբ Սեղանոյն եւ սուրբ Նշանին Քրիստոսի փրկական Խաչիւն հայրապետական ձեռն[444] հանդերձ քահանայական դասակցութեամբն աղօթելով օրհնէ, իջանէ Հոգին Սուրբ եւ լնու զձէթն զայն Իւր աստուածային շնորհօքն առ յօծումն կատարելութեան մկրտելոց Աւազանին, որպէս եւ Ինքն խոստացաւ, թէ՝ ուր ժողովեալ են յանուն Իմ երկուս կամ երիս, անդ եմ Ես, ի մէջ նոցա[ա]: Եւ դարձեալ ասէ, թէ՝ զամենայն ինչ, զոր խնդրիցէք հաւատով յանուն Իմ, առնուցուք[բ]: Ապա ուրեմն, ուղիղ հաւատոյ պետք են եւ ստոյգ աղօթից, եւ կատարի ամենայն խնդրուածքն յԱստուծոյ եւ ոչ վասն այս ձէթոյ կամ այն, այլ՝ միայն վասն հաճոյ լինելոյ Աստուծոյ այնոցիկ, որ խնդրեն ի Նմանէ, օրինի եւ սրբի անխտիր ամենայն ձէթ առ ի կատարել զմկրտութիւն սուրբ, զոր օրինակ եւ ամենայն ջուրք կատարեն զմկրտութիւն Աւազանին ըստ նմանութեան Յորդանանու: Իսկ ոք յամառիցի ասել, թէ հրամայեցին օրէնքն առնուլ ձէթ ի ձիթենւոյ, նախ՝ զայս ասասցուք, թէ ի Հրէաստանի յոլով գտանէր ձէթ ի ձիթենւոյ, վասն այնորիկ զդիւրագիւտն հրամայեաց առնուլ եւ ոչ վասն այլ ինչ պատճառի: Դարձեալ եւ զայս ասասցուք, թէ զմի յօրինացն ի հարկէ առնես, պարտիս եւ զամենայն օրէնսն առնել, որպէս ասաց Պօղոս առ գաղատացիսն. «Ապա եթէ զամենայն չէ հարկ առնել եւ ոչ՝ զմիսն, բայց յաւելուածովք զհոգեւորն կատարեմք, որպէս հրաման առաք յԱւետարանէ անտի[գ]»:

ՎԱՍՆ ԲԱՂԱՐՋԻՆ[445]

Դարձեալ եւ զայս ասասցուք, թէ ընդէ՞ր զայդ առնուք վկայ օրինացն, զոր չէ ինչ հարկ առնուլ եւ զայն, որ հարկն առնուլ վկայ, զայն ոչ առնուք, զի ահա օրէնքն ասեն, թէ՝ ամենայն խմորեալ մի՛ մտցէ ի տուն Տեառն, եւ զհացն զԱռաջաւորութեան բաղարջ հրամայեաց դնել առաջի Տեառն, որ էր օրինակ Մարմնոյն Տեառն մերոյ՝ ստուգութեամբ զանապականութիւն նշանակելով: Որպէս վկայէ սուրբն Եփրեմ ի մեկնութիւն Թագաւորութեան, թէ՝ հացն Առաջաւորութեան խորհուրդ էր անապական Մարմնոյն Տեառն մերոյ, զոր առեալ Դաւիթ եկեր, եւ որք ընդ նմայն էին,

ա Մատթ. ԺԸ 20
բ Յովհ. ԺՋ 24
գ Հմմտ Գաղատ. Ե 3—4:

զի յայտ լիցի, թէ ամենեքեան ճաշակելոց էին զանապական Մարմինն Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի[76*]:

Իսկ դուք զայսու պատուիրանաւ զանց արարեալ միայն զձէթ ձիթենւոյ բերէք ի մէջ, զոր յիշելն ոչ ինչ մեծ է, եւ թողուլն ոչ ինչ վնաս առնէ, քանզի ամենայն ձէթ Աստուծոյ է, զոր եւ օրինեմք սուրբ Խաչիւն Քրիստոսի, զոր յիշել զմահ Տեառն զկենարար, եւ, աղօթելով, տեառնագրէ եւ կնքէ, ընդունի զշնորհս Հոգւոյն Սրբոյ եւ կատարէ զմկրտեալքն սուրբ օծութեամբն[446]: Բայց հրաման բաղարջին, զոր ասեն օրէնքն վասն Մարմնոյն Տեառն մերոյ, թէ ոք ոչ առնէ վկայութեամբն այնոքիկ բաղարջ հացիւ զսուրբ պատարագն մատուցանել, ոչ կարէ գտանել զսրբութիւն մեղաց խմորուն հացիւ, քանզի չարութեամբն զանգեալ է, եւ ապականութիւն խառնեալ է ընդ խմորուն հացն, եւ ոչ կարէ Մարմին Քրիստոսի լինել, զի Մարմինն Քրիստոսի օտար է ի չարութենէ եւ յապականութենէ, զի Աստուած էր ճշմարիտ, որպէս ասաց Եսայի մարգարէ, թէ՝ յառաջ, քան ճանաչել զչարն, ընտրեսցէ զբարին, որպէս Աստուած բարի եւ ճշմարիտ էր[ա]: Վասն այսորիկ բաղարջ հաց նմանէ անչար եւ անապական Մարմնոյ Տեառն մերոյ, եւ փոխանակ խմորոյն, որ չարութեան եւ ապականութեան է ցուցումն, Ինքն Աստուածութիւն խառնի բաղարջ հացն կա, աստուածացուցանէ զնա: Իսկ ուր խմոր խառնեալ, անդ Աստուածութիւն ոչ խառնի. որպէս մարմին, որ եւ մեղօք է խառնեալ, ոչ բնակէ Հոգին Սուրբ. վասն որոյ զխմորուն հաց պիղծ ասէ Գիրք թագաւորութեանն[բ]: Եւ ահա, պիղծն ոչ կարէ Մարմին Քրիստոսի լինել, զի անմեղ ոչ էր իբրեւ զԱստուած: Իսկ զբաղարջն հացն սուրբ ասէ ի նոյն գիրս: Եւ ահա սուրբ հացն լինի Մարմին Քրիստոսի, զի ամենայն մեղուցելոց սրբութիւն ամենասուրբ Մարմինն Քրիստոսի է: Իսկ յոյնք, զայս ահաւոր պատուիրանս թողեալ, զձէթ ձիթենւոյ յիշեն, զորս ոչ այլ ոք յիշեաց, քանզի Դիոնեսիոս Արիսպագացի միայն զանուն իւղոյն յիշեաց ի կատարումն միւռոնին օրհնութեամբ քահանայապետին, կատարի առաջի սրբոյ Սեղանոյն Աստուծոյ, այլ ոչ յիշեաց, թէ այս անուն կամ այն: Նոյնպէս եւ Յակովբոս եղբայր Տեառն ասէ, թէ՝ օծեն իւղով յանուն Տեառն[գ] եւ փրկական Խաչն, որ օրհնէ զեղն, որ եւ եղ դիպի: Այն ոչ թէ ինքն եղն զօրութիւն ունի առանց անուան Տեառն. քաւ լիցի. այլ անուն Տեառն զօրացուցանէ զեղն: Որպէս եւ Պօղոս ասէ, թէ ամենայն ինչ սրբի բանիւքն[447] Աստուծոյ եւ աղօթիւքն[դ]: Եւ ահա ոչ ասաց՝ այս ինչ կամ այն ինչ, այլ ամենայն ինչ[448]: Իսկ դուք զձէթ ձիթենւոյն[449] յիշէք, որպէս թէ Աստուած նմա միայն տայ իշխանութիւն եւ այլոց՝ ոչ. ո՞վ յիմարու-

ա Եսայի է 15
բ Հմմտ. Ելք ԺԳ 3, 7. Ղեւտ. Բ 11. Բ Օր. ԺՋ 3:
գ Յովհ. Ե 14
դ Ա Տիմոթ. Դ 5

թեան, որք ոչ իմանան զճշմարտութիւն: Բայց մեք գրեմք, թէ Աստուծոյ զօրութեան ամենայն ձէթ մի է, եւ որպէս ընկալեալ եմք ի սուրբ Լուսաւորչէն մերմէ եւ ի սրբոյ[450] Սահակայ զօրհնութիւն մեռոնին, նոյնպէս եւ ունիմք մինչեւ ցայժմ, եւ կալցուք միշտ[451]: Ամենայն տարւոյ, յորժամ օրհնեմք զմիւռոնն, զհին մեռոնն ի նորն խառնեմք եւ այնպէս օրհնեմք, սկսեալ ի սրբոյն Գրիգորէ եւ ի սրբոյն[452] Սահակայ մինչեւ ցայսօր նոյն միւռոնն կատարի եւ գայ մինչեւ[453] ցայժմ, ընդունելով միշտ զշնորհս Հոգւոյն Սրբոյ՝ կատարէ հանապազ սուրբ օծութեամբ զմկրտեալ Աւազանին յանուն Հօր եւ յանուն Որդւոյ եւ ի կամաւոր եւ ի կենդանարար մահ Որդւոյ եւ ի Հոգին Սուրբ, վասն զի սա հաւատովք կատարիր Մկրտութիւն սուրբ եւ միաւորութիւն մեզ ի միասնական Սուրբ Երրորդութիւն, Որում փառք եւ զօրութիւն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից[454]:

ՎԱՍՆ ՏՕՆԻ ԾՆՆԴԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ[455]

Բազում աշխատութիւն գործառնութեանս մերոյ վասն սրբոյ տօնիս յԱստուծոյ էր, զոր հասաքս եւ զոր առ արժանաւորք եղեաք[456]: Նախ՝ զտօն սրբոյ Ծննդեան Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ, որ է սկիզբն տօնից մերոյ եւ տարեկանաց եւ գլուխ կարգաց եւ ամենայնց ի Քրիստոս յիշատակաց: Տօն սրբոյ Ծննդեանն Քրիստոսի երկոտասան աւուրքք յառաջ, քան զտօն Մկրտութեան, ոչ կարգեցաւ ի սրբոց առաքելոցն[456ա], քանզի գրեալ է ի վեցերորդ կանովնին այսպէս. «Եթէ կարգեցին առաքեալքն եւ եդին հաստատութեամբ, եղիցի[456բ] տօն Ծննդեան[456գ] եւ Յայտնութեան Տեառն եւ Փրկչին մերոյ, որ է գլուխ ամենայն տօնից Եկեղեցւոյ, որ օր ԻԱ (21) տբէթ[457] ամսոց, որ է Զ (6) յունուարի՝ ըստ հռոմայեցւոց կանովնին: Իսկ յետ բազում ամաց նոցա կանոնադրութեան գտաւ տօնս այս, որպէս ասեն ոմանք յաշակերտաց հերձուածոցն Կերնթոսի եւ յունաց, ընկալեալ եղեւ որպէս արդարեւ ի տօնասիրաց եւ ի ջերմագունից բարեպաշտութեան եւ ի նոցանէն յաշխարհս ամենայն սփռեալ տարածեցաւ: Իսկ յաւուրս սրբոյն Կոստանդիանոսի ի սուրբ ժողովոյն Նիկիա[458] ոչ եղեւ ընկալեալ տօնս այս ի սրբոց հարցն, այլ ըստ նոյն կանոնի սրբոց առաքելոցն սահմանադրեցին տօնել: Եւ յայտ ի թղթոյն[459] երանելւոյն Մակարայ՝ հայրապետին Երուսաղէմի, զոր ի Հայաստանեայցս[460] գրեաց յաշխարհ յաղագս խրատու սրբոյ Մկրտութեան, քանզի նա մի էր ի սրբոց հարցն յԺԸ (318)—ից, որ ի Նիկիա, եւ գրեալ է այսպէս ի Զ (6)-երորդ գլխի հրամանի խրատուութեան[461]:

Բայց կարգաւորութիւն Մկրտութեան սուրբ Աւազանին եւ փոյթ յօժարութեան երից տօնիցն Մկրտութեան, յորում առաւել եւս փափագին մերս դաւանել ի Մկրտութիւն զընծայեալսն Աստուծոյ եւ կատարեալ զօրինակ մեծի փրկական խորհրդոյն, յոր ի սուրբ եւ յերեւելի աւուրս կատարեցաւ: Եւ այժմ մեծաւ փափագանօք փութան կատարել ի սուրբ տեղիս[462] Քրիստոսի, զոր պարտ է եւ ամենայն քրիստոնէից երկիւղածացս Քրիստոսի կատարել ի նոսա զկոչումն Մկրտութեան, սուրբ Յայտնութեան եւ Ծննդեանն Տեառն եւ փրկական Զատկի, կենարար չարչարանացն Քրիստոսի եւ ի շնորհալից Պենտակոստէին, յորում էջք աստուածային Հոգւոյն ի մեզ ծաւալեցան, զոր պարտ է զիւրաքանչիւր սրբոց տօնից պատճառ Մկրտութեան ծանուցանել, զի եւ դուք ի նոյն փութացեալք կատարեցէք, քանզի լուսաւոր օր Ծննդեանն Քրիստոսի եւ մեր մեղսաքաւիչ ծնունդ սուրբ Աւազանին ի նմին փրկական աւուրն կատարեցի, այլ ի նմին աւուրն առ ի յանձն մկրտել յաղագս առ մեզն զիջանելոյ, զի ոչ եթէ Ինքն կարօտէր սրբութեան, այլ զի[463] զմեզ կամեցաւ սրբել ի մեղաց պղծութենէ, որ մեծաձայն գոչմամբ աղաղակէ՝ ասելով. «Եթէ[464] ոք ոչ ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ, ոչ մտանել կարէ յարքայութիւն Աստուծոյ[ա]» մերոյ Քրիստոսի, ըստ նմին օրինակի ծնեալք ընդ Նմա եւ մկրտեալք ընդ Նմին եղիցուք ի սուրբ աւուրն Ծննդեանն Քրիստոսի: Իսկ ի կենսաբեր Յարութեան Զատկին ի ձեռն մեռուցանելոյ զմեղս մեր ի ջուրս Աւազանին զերեքօրեայ զթաղումն Տեառն մերոյ նշանակեմք յանձինս մկրտելոցն, զոր եւ աստուածային առաքեալ յայտնապէս ցուցանէ ասելով, թէ՝ թաղեալք ընդ Նմին մկրտութեամբն ի մահ, նմանողք եղիցուք նմանութեան մահու Նորա, զի եւ նորոգութեամբ յարութեան հաղորդք լինիցիմք Նմա ի կեանսն յաւիտենականս[բ]: Իսկ յաւուրն շնորհապարգեւ սրբարար Պենտակոստէին զլուսապայծառ ազդումն Հոգւոյն Սրբոյ կենդանարարի, որ ի տեսակս հրեղէն լեզուաց իջեալ յառաքեալսն երեւեցաւ, պարգեւելով նոցա ձեռս ի վերայ մկրտելոցն դնելով, պարգեւս ընդունելով ի շնորհաց Հոգւոյն, ըստ նմին օրինակի եւ մեք ի նմին աւուր, ձեռս ի վերայ մկրտելոցն դնելով, նոյն հոգի պարգեւի, զորոյ զօրինակն զգուշութեամբ անխափան կատարեմք, զի կատարեալք լիցուք: Զայս Մակարիոս: Իսկ զկնի սորա զԱթոռ հայրապետութեան Երուսաղէմի յաջորդէ սուրբն[465] Կիւրեղիոս, եւ զթագաւորութիւն ի սրբոյն Կոստանդիանոսէ պայազատէ Կոստանդիոս նորին որդին հանդերձ եղբարբք: Զսա ասեն հաւանեալ հանդերձուածոյն Արիոսի, բայց ոչ հակառակ ճշմարտութեան մաքառէր, այլ ի կամս թողեալ զերկոսեան կողմանսն, որ ոք, զինչ եւ հաճոյ էր, ուներ՝ թէ զուղղափառութիւն, եթէ զչարափառութիւն: Ի յաւուրս սորա ընկալեալ եղեւ տօնս այս ի դրանս[466] արքունի եւ յամենայն տեղիս, որ ոք եւ կամէր տօնել համարձակ տօնէին, եւ ոչ ոք իշխէր խափանել, բայց ի քաղաքացն չորից հայրապետացն, որք[467] ունէին զաթոռ սրբոց աւետարանչացն, քանզի առ սովաւ դեռ չէր յափշտակել զաթոռ սրբոյն Յոհաննու Կոստանդնուպօլսի: Եւ յայտ է ի կանովնադրութենէ[468] ընթերցուածոց սրբոյն Կիւրղի, քանզի գրեալ է այսպէս, թէ՝ ի ԻԵ (25) դեկտեմբերի ամսոյ է ի[469] տօն Դաւթի եւ Յակովբու, զոր յայլ քա-

ա Յովհ. Գ 5
բ Կողոս. Բ 12

դաքս Ծնունդ Քրիստոսի առնեն: Ասեն վասն այսր յոյնք այսպէս, եթէ վասն զի հայրապետն ամենայն ուխտիւն եւ բազմութեամբն ժողովրդականօքն ի Բեթղեհէմ գոլով տօնէ: Եւ սակաւք ի քահանայիցն, որք[470] ի քաղաքին մնան, զտօն Դաւթի եւ Յակոբայ կատարեն, իբր թէ լոկ քաղաքին իցեն ընթերցուածքն, եւ վասն այնր ասեն գրեաց, թէ յայլ քաղաքս, որպէս թէ զԲեթղեհէմ ակնարկելով, եւ զայս ոչ ոք էր երբէք ի լաւ իմացսն[471] յանձն առնու: Զի թէ այդպէս ունիմք, հի՞մ զկանոն Ծննդեանն ի Զ (6) յունուարի կարգեաց նոյն ինքն Կիւրեղ, քանզի գրեալ է ի յիսկզբան[472] կանոնին այսպէս, եթէ սրբոյ Յայտնութեան տօն կատարի յունուարի ամսեան, որ օր Ե (5) է ամսոյն, ժողովին ի հովանոցն եւ զայս ինչ կատարեն կանոն եւ ապա՝ ի Բեթղեհէմ եւ յայրին: Ահա յայտնապէս ցուցանէ ի միում աւուր տօնել զերկոսեանն: Եւ ի՞ւ ժպրհիցի ասել պարսաւանս ինչ երանելւոյն Կիւրղի կամ ի նմանէ կարգելոյն: Զի որպէս առ Քրիստոսի[473] եւ առ որում այնպէս երեւեալ նշան եւ այնչափ բիւրք լուսաւորեալք, կարծեմ թէ եւ ոչ ի սրբոյն Պօղոսէ, քանզի յաւուր երեւման լուսեղէն խաչին անթիւ բիւրք բիւրուց[474] մկրտեցան ի հրէից եւ ի հեթանոսաց, քանզի մինչեւ ցԿոստանդիոս[475] որդի Կոստանդիանոսի արգելեալ էին հրեայք ելանել յԵրուսաղէմ: Այլ եւ որք ի վերուստ եւ յայլ քաղաքս հրեայք էին ի տօն անդր էին ժողովեալ, այլ եւ բազումք ի հեթանոսաց վասն ամբոխոյ ժողովրդեանն առ ի վաճառ դիմեալ էին: Որոյ տեսեալ զաստուածային երեւումն, հաւատացեալ ի Քրիստոս, ամենեքեան դիմեցին ի մկրտիլ, որ այլ ոչ բաւէին աւազանք եւ ոչ ջրամբարք ի կիստեռեանցն[476] մինչեւ հիանալ երանելւոյն Կիւրղի զբաղանիս մեծ սրբեալ, զոր Դիմոսին կոչեն, եւ անդ եւս առնել զփրկական Մկրտութիւն: Այս երրորդ նշան լեալ յԵրուսաղէմ յաւուրս սրբոյ Պենտակոստէին: Բայց ես զսա կարծեմ վեհագոյն առաջինն, որպէս ամենեցունց յայտնի է էջք Հոգւոյն Սրբոյ յառաքելսն ի մէջ բազմութեան ժողովրդեանն հրէից եւ հեթանոսաց եւ այլոց բազմաց, որք ի Գործս առաքելոցն յանուանէ պատմէին[477]: Եւ յայնժամ առաքելոցն միայն իսկ ի յայսմ բազմութեան ի սեռն սրբոց Մկրտութեան: Բայց քան զերկրորդն եւս առաւել բարձրագոյն այս Յովել[478] պատմէ, թէ յաւուրս Պենտակոստէին դղրդոյն եւ սարսափոյն նախ զքահանայիցն պատէր եւ ապա զբազմութեամբ ժողովելոցն, ապա եւ բարբառ յանկարծակի ընդոստ ի ներքին տաճարէն լսելի լինէր զայս օրինակ բանից, եթէ՝ գնամք, աստի գնամքա: Իսկ ի յայսմ ոչ գնան զօրութիւնք Տեառն ի ստորնայնոցս, այլ ի վերնոցն այսր գալ յայտնապէս ցուցաւ եւ ծածկաբար պարգեւեցաւ մինչեւ ցԿոստանդիոս թագաւոր: Երանելին Կիւրեղ յԺարեաց գրել թուղթ աղերսանաց եւ կոչել զնա բարեպաշտ եւ տեղեակ աստուածայնոցն, իբր եթէ ողոքանօք զնորայն կարծեաց շահել զփրկութիւն՝ առաջի դնելով զաստուա-

ա Տե՛ս Գործք Բ 1-5:

ծային եղեալ նշանին եւ զբազմութիւն դարձելոցն, եթէ զմէ եւ ոչ դու ընդ նոսա:

Արդ, եթէ զսա յունաց հաճոյ թուիցի քամահել վասն ոչ ընդունելոյ զտօն Ծննդեան, ժամ է նոցա եւ զԱւետարանն անպատուել, զի եւ նա ի միում աւուր ցուցանէ եւ զՄկրտութիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Քանզի գրեալ է ի Ղուկասու Աւետարանին ի խոցիրդեան Մկրտութեան այսպէս, եթէ Ինքն Յիսուս ամաց երեսնից էր սկսեալա: Ահա յայտնապէս ցուցանէ, թեւ ի նոյն աւուր Ծննդեանն մկրտեցաւ եւ սկիզբն արար երեսնեմոյն կատարեալ հասակի եւ վարդապետութեան: Ասեն եւ զայս յոյնք, եթէ յերկոտասան օրն սկիզբն լինել մարթի տարոյն եւ ոչ ի մէջ եւ կամ կատար: Եթէ այսպէս իմանամք, եւ զեօթանասուն ատուրս մարթի ասել, թէ ոչ մէջ եւ կատար: Իսկ վասն առաքելական կանոնին[479] այսպէս ասացին յոյնք, եթէ ոչ էր նոցա պարապումն ստուգիւ քննել զաւուրս տօնից, քանզի գործ նոցա աւետարանեալ էր եւ ի հեթանոսականացն զատուցանել տօնից: Արդեօք հաճոյ թուիցի այսպիսի բան ի վերայ առաքելոց լսել, թէ արդարեւ այնչափ[480] անփոյթ արարին զկարգաւորութենէ տօնիցն, ընդէ՞ր ապա ընդ արեւելս ուսուցին մեզ երկրպագել, հի՞մ եւ զկիւրակէ տօնախմբել եւ դատարկանալ եւ զչորեքշաբթի եւ զուրբաթ պահել, զի թեթեւագոյնք են այսոքիկ, քան, զտօն Ծննդեան եւ Մկրտութեան: Բայց տայաք եւ յայսմ եւս նոցա, թոյլ միայն թէ եւ այլօքն գային ի հաւանութիւն, քանզի ասեն վասն սրբոյ հարցն, որ ի Նիկիա, թէ ծածկեաց ի նոցանէ Աստուած զայն, զի ոչ զամենայն շնորհս միում ումեք տայցէ, եթէ ոչ ճառեալ է առ նոքօք այս, այդ գիտացին եւ եպերելով ասէին, թէ զոր յայլ քաղաքս ծնունդ կարծեն առնել: Բայց ես հաւանիմ, որով յոյնք պարծին երանելեաց ասեմ Բարսղի եւ Գրիգորի Անձիանձու. գիտեմ զնոսա սուրբս ճշմարիտս եւ հետեւողս առաքելոցն, եւ եթէ էր նոցա հրաման ինչ յաղագս այսր, ընդունէի, զի եւ Պօղոս հրամայէ, թէ երկրորդին յայտնեսցի, առաջինն լռեսցէ:

Բայց ես ոչ ինչ տեսանեմ զնոցա հրաման ինչ յաղագս այսր տօնի, բայց որ զերկուցունսն եղեալ սրբոյն Բարսղի զընթերցուածն եւ զՍաղմոսն ոչ իմանամ զայն յերկուս բաժանել, այլ թէ ի միում աւուր զերկուցունս խորհրդոցն լիով ունել զկարգ եւ պայծառացուցանել զտօնն: Իսկ սրբոյն Գրիգորի բանիւ զատուցանել զտօնն կարծեն, ոչ ինչ հրաման զնորուն կարեն ցուցանել վասն այնր, այլ վկայութիւն իմն առնուն ի նորա ասացուածէն[481] եւ ըստ իւրեանց կամացն ձեւացուցանեն՝ ասեն, թէ ի ճառի Ծննդեանն այսպէս ասէ. «Արդ, փոքր ինչ յետոյ տեսցես զՅիսուս սրբեալ Յորդանանաւ[482]»: Եւ ասեն, թէ յաւուր Ծննդեանն ասաց զայս ճառ: Եւ փոքր ինչ յետոյ զերկոտասան օր ակնարկէ յառաջ, քան՝ զմկրտութիւն:

ա Տե՛ս Ղուկ. Գ 23:

Ասացուք առ այս պատասխանի. «Եւ այսպէս իմանամ, թէ անդէն յաղագս նոյն խօսիցն ասաց՝ փոքր ինչ յետոյ տեսցես զՅիսուս սրբեալ Յորդանանաւ[483] իւրով մկրտութեամբն եւ ոչ նուաստացուցեալ, այլ ճոխացուցեալ զմարմինն ցելեալ զերկինս եւ աստուածավայելչաբար ի Հօրէ եւ ի Հոգւոյն վկայեալ: Ապա թէ այդպէս իմանաս, իմա եւ զհետ Յարութեան ելեալ ի Մկրտութիւն, զի առաջինն այն բան զչարչարանացն եւ զՅարութենէ ճառեալ ասէ եւ զնովիմբ ածեալ ի նոյն յարեալ ասէ: Արդ, փոքր ինչ յետոյ, բայց եթէ մաքրեսցես զմիտս, դիւրին է իմանալ ի նոյն իսկ ճառէ, եթէ ի միում աւուր զերկոսինն սահմանեաց, քանզի ասէ ի միւսումն տեղի ի նմին իսկ ճառի այսպէս. «Բայց այժմ Աստուծոյ յայտնութեանս տօն է, քանզի երեւեցաւ Աստուած մարդ ծնունդեամբ»: Ահա զուգեաց զերկոսեանն, ասեն եւ զայս յոյնք, եթէ երկուցունց տօնիցն կոչի Յայտնութեան եւ Ծնունդեան եւ Մկրտութեան: Արդ, այս ամենեցունց յայտնի է, եթէ ի Զ (6)—ն յունուարի կոչի յայտնութիւն եւ ոչ թէ՝ ի ԻԵ (25)—ն դեկտեմբերի ոչ ի յունաց եւ յայլ ազգաց եւ լսել երբէք երկուս յայտնութիւնս, այլ՝ մի: Ապա եթէ յայտնութիւն ասէ եւ զԾնունդենէն ճառէ, յայտ է, եթէ ի միում աւուր ցուցանէ: Դարձեալ եւ ի ճառի Մկրտութեան առնուն յոյնք իւրեանց ի վկայութիւն զբանս զայս. «Արդ, զԾնունդեանս վայելչականս տօնեսցուք, եւ զնովիմբ[484] ածեալ ասէ, իսկ այժմ գործն, այլ Քրիստոսի եւ այլ խորհուրդ»: Այսպէս հաւանիմ՝ այլ է գործս եւ այլ՝ խորհուրդս: Բայց ոչ յայլում աւուր, զի առաջին բանն ինձ վկայէ՝ զԾնունդեանս վայելչականս տօնեցաք ասէ եւ ոչ՝ զԾնունդեանն, զի թէ երկոտասան աւուր վերջոյ[485], ապա զԾնունդեանն պարտ էր ասել եւ ոչ՝ զԾնունդեանս: Դարձեալ. եթէ ոչ է ի միում աւուր, ընդէ՞ր եւ ոչ յիշէր զօր Ծնունդեանն եւ ոչ լոկ զխորհուրդն ասէ, որպէս եւ զայլ տնտեսութիւն եւ զչարչարանացն, բայց դու զնուաստացուցիչսն ասես, եւ բարձրացուցանողօքն զանց առնես, որպէս եւ նոյն իսկ ասէ Գրիգոր:

Արդ, աղէ, դիտեա ինձ եւ զայն բան, որ ի ճառի Մկրտութեան ասէ այսպէս. «Երիս ծնունդս մեզ գիտէ բանս, որ ի մարմնոյն է եւ ի մկրտութենէ եւ ի յարութենէ, եւ զնովիմբ ածեալ ասէ զայսոսիկ զծնունդս զամենեսեան ինքեամբ պաշտեալ իմ Քրիստոս երեւի զմինն փչմամբ առաջնովն եւ կենդանականաւ եւ զմիւսն՝ մարմնանալովն եւ մկրտութեամբն, որով Ինքն մկրտեցաւ, որպէս եղեւ անդրանիկ ի բազում եղբայրս[486], նոյնպէս եւ անդրանիկ ի մեռելոց լինել արժանաւոր արար: Արդ, յաղագս երկուց ծնունդոց առաջնոյն ասեմ եւ վերջնոյն իմաստասիրել ոչ է մերձ ժամանակս, բայց վասն միջնոյս եւ որ այժմ մեզ է հարկաւորապէս եւ անուանակից լուսաւորութեան օրս: Ահա զուգեաց զերկոսեանն. տեսցեն, որք միտս ունին, մին ծնունդ ասաց զմարմնանալն եւ զմկրտելն ի միում աւուր, որ եւ անուանի իսկ ասէ օրս:

Բայց տեսցուք, որ եւ Զաքարիայի պապանձմամբն համարին յոյնք զվեցամսեայ աւուրս յղութեան Եղիսաբեթի[487], որով մարթեմք իմանալ

զօր աւետաւորութեան Գաբրիէլի, քանզի այսպէս ասեն յոյնք, եթէ ի նոյն աւուր, յորում պապանձեցաւն, ի նմին աւուր մերձեցաւ ի կինն իւր եւ յղացեալ ի նմին իսկ աւուր: Ուստի թուեն իսկ աւուրս ՅՁ (380), որ դիպեցուցանէ ի ԻԵ (25) մարտի զօր աւետաւորութեան Գաբրիէլի եւ անտի[488] թուելն աւուրս ՄՀՁ (276) զաւուրք յղութեան սուրբ Աստուածածնին ըստ՝ Ժ (10) ամսեայ յաւուրց անդրանկածնութեան, որ դիպեցուցանէ զծնունդն ի ԻԵ(25) դեկտեմբերի: Աղաչեմ, քաջ միտ դիք[489] եւ քննեսցուք զայս նախ զբնագիրն եւ ապա՝ զԱւետարանն, քանզի ասէ բնագիրն այսպէս, եթէ՝ տօնք իմ նուիրեալք սուրբ կոչեսցին ձեզ[ա]: Երիս ժամանակս ի տարւոջն տօնեսջիք[բ]: Ամենայն արու ձեր յանդիման լիցի ինձ, եւ մատուսջիք պատարագս Տեառն: Եւ յառաջ մատուցեալ ասէ՝ «Եւ յամսեանն եօթներորդի, որ օր մի է կոչեցեալ սուրբ ձեզ, զամենայն գործ մի՛ գործիցէք ի նմա, եւ որ օր է նորին ամսոյ եօթներորդի, նուիրեալ սուրբ լինիցի ձեզ, խոնարհեցուսջիք զանձինս ձեր եօթներորդէ օրէ ամսոյն յերեկորեայ, եւ ամենայն ոք, որ ոչ խոնարհիցի, սատակեսցի անձն այն ի ժողովրդենէն իւրմէ, եւ օր տասներորդ նուիրեալ սուրբ կոչեսցի, զի օր քաւութեան է նա ձեզ: Զամենայն գործ մի՛ գործիցես, շաբաթ շաբաթուց է հանգիստ, մատուսջիք պատարագս Տեառն քաւելով՝ վասն ձեր[490], եւ որ օր ԺԵ (15) նորին եօթներորդի ամսոյ տօնին Տաղաւարահարաց կոչեցեալ սուրբ լիցի ձեզ զամենայն գործ սպասաւորութեան մի՛ գործիցէք ի նմա, ի խորանս բնակեսջիք, շաբաթ սուրբ հանգիստ մատուցէք պատարագս Տեառն զէ (7) օր, եւ օրն եօթներորդ սուրբ կոչեսցի, շաբաթ հանգիստ զամենայն գործ ապասատրութեան մի՛ գործիցէք ի նմա[գ]»: Զայս՝ բնագիրն:

Արդ, պապանձումն Զաքարիայի ճշմարիտ ի տասն թշրին ամսոյն[491] է, զի նա է ամիս եօթներորդ եւ նա է օր քաւութեան, յորում մտանէր քահանայապետն ի Սրբութիւն Սրբութեանցն մի անգամ ի տարւոջն, զոր Պողոս ասէ[դ]: Բայց ի նմին աւուր մերձենալ Զաքարիայի առ կինն անմարթ էր. զի նա էր քահանայապետ տարոյն եւ մեծ այն Տաղաւարահարացն առաջի կայր: Եւ ամենայն Իսրայէլ անդ էր ժողովեալ զէ (7) օր տօնելոց էին զտօն Տաղաւարահարացն, եւ անմարթ էր քահանային թողուլ զժողովուրդն եւ երթալ ի տուն իւր, զի ի բացեայ եւ ո՛չ յԵրուսաղէմ ունէր զբնակութիւն իւր: Եւ վկայէ ինձ սուրբ Աւետարանն, քանզի գրեալ է այսպէս. «Եւ ժողովուրդն ակն ունէր Զաքարիայի եւ զարմանային ընդ յամել նորա ի տաճարին, եւ իբրեւ ել, ոչ կարէր խօսել ընդ նոսա: Եւ իմացան,

ա Ելք ԺԲ 16
բ Ելք ԻԳ 14
գ Տե՛ս Ղեւտ. ԻԳ 24—36:
դ Եբր. Թ 25

եթէ տեսիլ ետես ի տաճարին: Եւ նա նշանացի խօսէր ընդ նոսա եւ կայր պապանձեալ: Եւ իբրեւ լցան աւուրք պաշտման նորա, գնաց ի տուն իւր եւ յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Եղիսաբէթ՝ կին նորա[ա]»: Ահա յայտնապէս ցուցանէ, թէ յետ կատարման աւուրց տօնականացն եղեւ մերձենալ Զաքարիայի առ կինն իւր: Եւ վասն առաւել հաստատութեան բանիս կրկնէ երկիցս, եթէ՝ կատարեաց զաւուրս պաշտամանն, եւ դարձեալ թէ՝ յետ աւուրցն այնոցիկ:

Եւ ով ոք ոչ գիտէ զայս, որք միտս ունին, թէ մինչ ժողովրդեանն սրբել եւ պատուել ոչ միայն զտօնն, այլ՝ յաղագաս տօնին եւ զամսամուտն եւ զառաջիկայ աւուրն զերեկոյն: Ապա զի՞նչ դիտ ի մէջ երկուց գլխաւորաց տօնիցն քահանայապետն թողոյր զժողովուրդն ի տունն, երթեալ մերձենայր ի կինն եւ կամ ի նոյն աւուր տօնին: Եւ արդ, մի՛ լիցի մեզ հակառակել եւ վիճաբանել ի ճշմարտութիւն արուեստիցն պանծալով[492], այլ ճշմարտութեան հաւանեսցուք եւ Աստուածայնոց Գրոց, որպէս իսկ եղեւ յայտ ի Ժ (10) թշրին ամսոյն՝ քաւութիւն եւ ի ԻԲ (22)—ն՝ մերձաւորութիւն Զաքարիայի եւ յղութիւն Եղիսաբէթի, եւ թուեալ զաւուրս Ջ (6) ամսոյն ՃՋ (180) օր ցուցանէ մինչեւ ի ԺՋ (16)—ն նիսան ամսոյ, որ լինի Ջ (6) ապրիլի՝ ըստ հռովմայեցւոցն, ուր եղեւն աւետիք սրբոյ Կուսին: Եւ թուեալ Ժ (10) ամսեայ աւուր յղութեան անդրանկածնի կատարի ՄՀՋ (276) օր ԻԱ (21) աբեթ ամսոյ, որ է Ջ (6) յունուարի՝ ըստ հռոմայեցւոց: Յայս հաստատուն կացէք անխախտելի, եւ քաւ եւ մի՛ լիցի մեզ յերկուս բաժանել, այլ ի միում աւուր արասցուք զԾնունդն եւ զՄկրտութիւն եւ զերկոցունցն ողջ պահեսցուք՝ զկարգն՝ հետեւելով սրբոց առաքելոցն եւ երանելի հարցն, որք ի Նիկիա եւ ի մերոյ վարդապետաց, քանզի ոչ եթէ չէ հաս ի նոսա, եւ վասն այնր չընկալան, այլ յառաջ, քան զբազում ժամանակս եւ ի մերս եկն յաշխարհս եւ ընկալեալ եղեւ՝ որպէս անգէտ եղելոյ ճշմարտութեան եւ հարուստ ամս ձգեալ մինչեւ ցերանելի Յոհան կաթողիկոս, որ ազգաւ Մանդակունին էր: Եւ ապա նորա ի խնդիր երեւալ ճշմարտութեան եւ քննեալ եւ հասու լեալ, թողուլ հրամայէ, յետ որս եւ մեք հետեւեսցուք եւ յունաց զայս արասցուք պատասխանի, եթէ մեք աշակերտեմք սրբոց հարցն, որ ի Նիկիա, եւ զոր առաքն, հաստատուն ունիմք եւ ոչ թիւրեցաք. դուք, եթէ ոչ, զձերոց հարցն գնացէք ճանապարհ: Եւ առ ձեզ եթէ հրէիցն կրեսցի իրք[493], որպէս նոքայն զճշմարտացիքն, զոր ուսուցին պահել, եւ շամուրտացիքն, զոր ուսանն պահեցին եւ հրեայքն, զոր ուսուցինն, յայնմ ոչ կացին, եւ դուք նոցա նմանիք, եւ մեր ոչ ինչ է վնաս, բայց մեք հաստատագոյն, քան զշամարտացիսն եւ առաւել բարձրագոյնք եւ աստուածայինք, եւ այլ ոչ ինչ ունիմք պատասխանիս առ ձեզ, զի ոչ հրամայէք գործ ճշմարտութեան[494], այլ՝ իշխանութեան բռնութեան: Գիտեմ զսակաւս ի յունաց, որք զայդ տօնէին մինչեւ ցՅուստիանոս թագաւոր, եւ, ի նմանէ հարկաւորեալք, ամենեքեան ընկալան՝ Երուսաղէմ, Հռոմ եւ ամենայն աշխարհ: Բայց մեզ մի լիցի ի մարդկայնոցս երկնչել յահէ առաւել, քան՝ յԱստուածայնոյ, եւ եթէ հաճոյ թուիցի ձեզ, որոցն բարբառեցայց: Եւ եթէ մոլորեալ ինչ իցեմ, արարէք զիս խելամուտ, բայց նա ուրեմն խոտան են բանք ճշմարտի, սակայն ոչ թիւրեսցուք ի ճանապարհէ[495] հարցն[77*]:

Ահաւասիկ եւ Անդրէաս եղբայր Մանգնոսի եպիսկոպոսի սա հրաման առեալ ի ժողովոյն Նիկիա՝ դնել տումար եւ կարգել լրումն Զատկաց, որ եւ Մ[496] (200) ամաց բոլոր հաստատեաց, ասէ, ի Չորրորդ կանոնի բոլորին, եթէ եօթնտասաներորդն մարտի, որ է օր արարչութեան, եւ եօթներորդն ապրիլի, որ է օր աւետեաց Կուսին, եւ ի վեցերորդն յունուարի, որ է օր Ծննդեան եւ Յայտնութեան Փրկչին մերոյ ի միում աւուր հանդիպին յամենայն տարւոջ[78*]: Եւ ահա Անդրէաս ոչ թէ հայոց վարդապետ էր, այլ՝ հռոմոց, եւ ահա նա զաւետաւորութիւն կուսին ի է (7)—երորդն ապրիլին ասէ եւ զԾնունդն Փրկչին՝ ի Ջ (6)—երորդն յունուարի, յորում աւուր եւ Յայտնութիւն ի Յորդանան՝ ըստ վկայութեան աւետարանչին Ղուկայ: Եւ արդ, մեք՝ Հայաստանեայքս[497], ոչ եթէ ի մերոց մտաց խորհեալ առնեմք զԾնունդն Քրիստոսի ի Ջ (6)—ն յունուարի եւ ի նմին աւուր զՄկրտութիւն Նորա ի Յորդանան ի միասին տօնախմբելով զտօնսն զերկոսինն՝ զԾննդեան եւ զՄկրտութեան, այլ ի տուչութենէ Հոգւոյն Սրբոյ եւ յառաքելոցն ունիմք զաւանդութիւն ճշմարիտ տօնախմբութեանս, որպէս եւ յառաքելական կանովնին գրեալ է, թէ ի վեցերորդն յունուարի տօն Ծննդեան եւ Յայտնութեան Փրկչին մերոյ կատարեսցի: Եւ Յակովբոսէ՝ յեղբօրէն Տեառն, որ ի սկզբանէ զընթերցուածս Եկեղեցւոյ կարգեաց եւ զսկիզբն ընթերցուածին զտօն Ծննդեանն Քրիստոսի ի վեցերորդն յունուարի հրամայեաց տօնել: Յետ այսորիկ ի սուրբն ժողովն Նիկիա նոյն առաքելական կանոն հաստատեցաւ յԵկեղեցի ի հրամանէ ՅԺԸ (318)—իցն, եթէ ի վեցերորդն յունուարի եղիցի տօն Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որպէս եւ վկայէ Անդրէաս վարդապետ հռովմայեցւոցն: Եւ յետ այսորիկ ի սրբոյն Կիւրղի Երուսաղէմացւոյ, որ զթերութիւն ընթերցուածին ելից, զոր հիմնադրեալ էր Յակովբայ[498]՝ եղբօրն Տեառն, եւ նա աւարտեաց՝ զնորս ընդ հինն խառնելով եւ միաւորելով: Եւ զնոյն կանոնադրութիւն սրբոյն Յակովբայ առաւել հաստատեաց սուրբն Կիւրեղ եւ յունուարի ի Ջ (6)—ն սահմանեաց զտօն Ծննդեան եւ Յայտնութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ առնել: Իսկ ի դեկտեմբերի ի ԻԵ (25) զտօն Դաւթի եւ Յակոբայ[499] հրամայեաց առնել, զոր յայլ քաղաքս ասի Ծնունդ առնեն եւ ոյք էին, այլ քաղաքքն, որք ընկալեալ էին զաւանդութիւն Կերնթոսի[500] հերձուածողի ի տեղիս տեղիս, որ երկոտասան աւուրքք յառաջ տօնէին զտօն Ծննդեան քան զտօն զվեցերորդն յունուարի եւ համարէին յանուն Քրիստոսի լինել զտօնն զայն: Բայց նա ոչ լինէր յանուն Քրիստոսի, այլ լինէր տօնն այն յանուն արեգականն, զոր եւ հեթանոսք տօնէին ի դեկտեմբերի ի ԻԵ

ա Ղուկ. Ա 21—24

(25)—ն զտօն արեգականն: Զնոյն առաքեալքն Կերնթոսի մուծին ի մէջ հաւատացելոց եւ չար աղանդով խմորեցին զԵկեղեցի Աստուծոյ: Վասն որոյ սուրբն Կիւրեղ զգուշացուցանէր զհաւատացեալսն Քրիստոսի՝ մի՛ խմորիլ[501] չար աղանդովն եւ մի՛ տօնել զտօն Ծննդեանն յայնմ աւուր, որ ոչ իցէ ծնեալ Քրիստոս, եւ մի՛ լուծանել զկանոնադրութիւն սրբոց առաքելոցն եւ զայլ սրբոց հարցն, որք զկնի նոցա զնոյն սահման աւանդեցին Եկեղեցւոյ[502] սրբոյ: Վասն որոյ եւ մեք հաստատեալ տօնեմք պինդ զճշմարիտ աւանդութիւն հարցն սրբոց եւ սրբոյն Կիւրղի եւ երանելի յառաքելոցն եւ տօնեմք զտօն Ծննդեանն յունուարի ի Զ (6)—ն, յորում աւուր ծնաւ Քրիստոս, եւ ի նմին աւուր՝ զՅայտնութիւն Նորա ի Յորդանան, քանզի յորում աւուր ծնաւ Քրիստոս, յետ երեսուն ամի ի նոյն աւուր մկրտեցաւ: Վասն այնորիկ եւ մեք ի միում աւուր տօնախմբեմք՝ ըստ աւանդութեան սուրբ հարցն եւ պահեմք զաւանդութիւնս զայս մինչեւ ցայժմ եւ մինչեւ յաւիտեանս: Իսկ յոյնք, թէ վասն բռնաւոր հրամանցն Յուստիանոսի կայսեր թողին զաւանդութիւն սուրբ հարցն եւ զերանելի առաքելոցն եւ թիւրեցան ի ճշմարտութենէն, մեզ չէ փոյթ. ինքեանք տայցեն պատասխանի յաւուրն դատաստանին:

ՊԱՏՃԱՌ ԵՐԻԹ ՍՐԲԱՍԱՑՈՒԹԵԱՆ, ՈՐ[503] ՀԱՅՔ Ի ԴԷՄՍ ՈՐԴՈՅ ԱՍԵՆ[504]

Թէ վասն է՞ր երիցս սրբասացութիւնն վերաբերի հասարակ Աստուածութեանն, եւ մի երրեակ խաչեցարն՝ կցորդ ի վերայ յատուկ յանուն Միածնի Որդւոյն Աստուծոյ, եւ թէ յորո՞ւմ ժամանակի եւ թէ յորո՞ց յոմանց նախ կարգեցաւ: Բայց նախ զյառաջագրեալ[505] զխորհուրդ Խաչին տեսջիր սկզբնաւորեալ ի կենաց տնկոցն, որ ի դրախտին, զի անդուստ ի վերուստ իսկ արկեալ էր մեք Երեքսրբեան Տէրութեան զխորհուրդ փրկագործ խաչելութեան Աստուածն Բանի, զոր յայլում տեղւոջ քաղեալ եմ եւ եդեալ եւ ապա զայս, զոր յԱնանիա[506] վարդապետին գրոցն համառօտիւ ժողովեցի:

Ըստ տեսլեան Եսայեայ՝ զՏէր[507] նստեալ յաթոռ բարձրութեան[ա], սրովբէքն, որ շուրջ կային, զմինն տեսանէին յաթոռ, եւ երիս սուրբն զԵրրորդութիւն նշանակէր, եւ զի Որդին Միածին էր յաթոռ փառացն նստեալ, եւ Նա էր յայտնելոց յապա ժամանակի զծածկեալ խորհուրդ Երրորդութեան, որ երեւեցաւ ի Մկրտութիւն Իւր ի Յորդանան՝ Հոգին՝ իջմամբ կերպի աղաւնոյ եւ Հայր՝ ձայնիւ, եւ փակեալ դուռն առաջնոյն Ադամաւ, բացաւ երկրորդ Ադամաւ եւ պարզեցաւ վարագոյր ծածկոյթի խորհրդոյ Սուրբ Երրորդութեան եւ յաղաղակելն Հօր՝ Դա է Որդի իմ սիրելի[բ]: Յովհաննէս

ա Եսայի Զ 1
բ Մատթ. Գ 17

մատամբն ցուցանէր: Գառն բարձող մեղաց աշխարհի[գ]: Աթոռն խորհուրդ Խաչին, զի աթոռ եւ սեղան Խաչն անուանեցաւ, յորմէ սերովբէն ունելեաց կարօտանայր առ ի բառնալ զկայծակն աստուածային հրոյն, որ սրբեալ մաքրէր զամենեսեան ի ձեռն իւրոյ զղջական խոստովանութեան: Որպէս ի նախնումն առ Մովսէսիւ, զի հուրն բորբոքեալ փայլէր եւ ոչ բոցակիզէր զմորենին, նոյն խորհուրդս[508] Երրորդութեան եւ անդ գուշակեալ լինէր՝ իբր ընդ աղօտ ինչ պատրուակաւ անուամբ նահապետացն. իջանելն[509] ի մորենին Բանին Աստուծոյ՝ առ Կոյսն, եւ փրկութիւն ժողովրդեանն եւ ազատութիւն տիեզերաց եւ այլն: Եւ նոյն մարգարէ Եսայի կարգաւ պատմէ զկիրս փրկագործ չարչարանացն Քրիստոսի Խաչին. Տէր տա ինձ լեզու խրատու[510], Տէ՛ր, ո՞ հաւատաց լրոյ մերումբ: Հանգոյն Եսայեայ տեսանէ եւ Եզեկիէլ մարգարէ զհրաշակերտ տեսիլ սրբոց քերովբէիցն: Անդ Եսայի ետես ի վերայ աթոռոց եւ աստ անիւ՝ ի վերայ անուոյգ, որ է խաչանման եւ նստեալ ի վերայ ամենազօր Որդւոյն Աստուծոյ: Ասա զամենայն տեսիլն: Իսկ զխորհուրդ մեկնութեան մարգարէիցս ի վերայ Որդւոյ ուսանիմք յաստուածաբան հարցն մեկնութենէ: Նախկին իսկ սրբոյն Դիոնեսիոսի Արիյպագացւոյ[511] աթենական փիլիսոփայի եւ գերակատար ճարտասանի եւ սրբոյն Երինիոսի[512] հետեւողի առաքելոցն եւ Աթանասի Ալեքսանդրացւոյ, սրբոյն Եփրեմի եւ Յովհաննու Ոսկեբերանի եւ Կիւրղի Երուսաղեմացւոյ եւ յայլոց սրբոց: Եւ վկայէ Դիոնեսիոս ի ճառին, որ յաղագս մեռոնին այսպիսի բանիւ. իսկ գերագունիցն ասէ քան զմեզ սրբութեանց քանակ գերակայութեան սերովբէիցն կարգ թուցն տասամբք եւ երկուքն նշանակաւ շուրջ զՅիսուսիւ կացեալ եւ հաստատեալ երանականօքն Նորա[513] տեսութեամբք, որպէս արժան է նոցա վայելել, եւ իմացականօքն նոցա բաշխմամբք սրբազնաբար ամենասուրբ ընդունելութեամբք եւ բազմօրինեանն[514] աստուածաբանութիւն ըստ զգալեաց ասել եւ անլռելեօք բերանովք գոչել, քանզք սրբազան գիտութիւն իմանալեացն անձանձրանալի է եւ անսուազաբար ունի զտռփումն եւ յամենայն չարութենէ համանգամայն[515] եւ մոռացմանէ ազատ[79*]: Ըստ սորա ասացուածիս եւ Կիւրեղ Երուսաղէմացի վկայէ ի Յարութեան ճառին. «Եւ զայս աթոռ,- ասէ,- որ յառաջ քան զՓրկչին գալուստն էր, Եսայի ետես»: Զհայր ոչ ոք կարէ տեսանել, որ երեւեցաւ մարգարէին, Որդի էր[80*]: Զսոյն՝ Ալեքսանդրացին Աթանաս ասէ՝ մեծ ախոյեանն ուղղափառաց ի ճառին առաջին, որոյ այս է սկիզբն. «Որք չարարուեստաբարն իմանալ ախորժեն զԳիրս եւ զոր ասեն այսպէս՝ քանզի Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգին մի Տէր Սաբաւովթ[516] է, զի մի Աստուա-

գ Տե՛ս Յովհ. Ա 29:
բ Եսայի ԾԳ 1
գ Տե՛ս Եզեկ. Ա 16:

ծութիւն է եւ մի Աստուած, եւ վասն այսորիկ, զոր Հայր առ Եսայի ասէ, Յոհաննէս ասէ, թէ՝ Որդի ասաց, եւ ի Գործս առաքելոցն Պօղոս ասէ, թէ՝ Հոգին Սուրբ ասաց: Եւ սակաւ ինչ յառաջ մատուցեալ Աթանաս ասէ. «Իսկ աւետարանիչն Յոհաննէս ասէ, վասն այսորիկ ոչ կարէին հրեայքն հաւատալ ի Յիսուս, զի ասաց Եսայի. խաւարեցոյց զաչս նոցա[ա]», եւ այլն: Զայս ասաց Եսայի, յորժամ ետես զփառս Նորա, այսինքն՝ զՈրդւոյ, որպէսզի Տէր Սաբաւովթ է Յիսուս, որ է Տէր զօրութեանց, եւ Տէր զօրութեանց, սա ինքն է՝ Թագաւոր փառաց՝ ըստ Դաւթայ[բ], եւ Տէր փառաց է Խաչեցեալն Քրիստոս[գ]՝ ըստ Պօղոսի, եւ Դաւիթ. Տէր հովուեսցէ[դ] [517], եւ Որ Հովուեսդ[518] Իսրայէլի, նայեաց[ե], եւ Տէրն՝ Ես եմ Հովիւ[զ]: Ինքն է, որ նստի ի քերովբէս Որդի, որ հովուեն զԻսրայէլ[81*]: Զսոյն եւ Յոհան Ոսկիբերան[519] ասացն ասէ ի բանին, որ ասէ՝ զՏէր նստեալ յաթոռ վերացելոյ եւ բարձրացելոյ: Եւ ընդէ՞ր ոչ ասաց սուրբ եւ լռեցին, սուրբ եւ լռեցին, եւ կամ երկիցս, եւ դադարեցին, այլ՝ երիցս: Ո՞չ ապաքէն յայտ է, թէ Երրորդութեան մատուցանէին զփառաբանութիւն, վասն այնորիկ երիցս եւ այլ ոչ եւս: Եւ յաջորդն յայտնէ. լի գոլ երկիր փառօք Նորա[82*], որ եղեւ ի գալ Նորա: Եւ ոչ եթէ Յոհան ընդդիմանայ այլոց սրբոցն, այլ զի զՈրդի տեսանելով յաթոռն եւ Երրորդութեան երգէին հոչակմամբ, զի Որդւով ծանուցաւ Երրորդութիւն: Վասն այնորիկ առ Որդի զՍուրբն ասելով զՀայր եւ զՀոգի գուշակէին եռակի ասիւքն: Բայց զոր ասեն, թէ մարգարէն զՀօրէ եւ Յոհաննէս՝ զՈրդւոյ եւ Պօղոս՝ զՀոգւոյն ասէ[520]: Եւ զայս եւս գիտեսցուք, զի Աթանաս ասէ եւ Յոհան, եւ զպատճառն ոչ յայտնեն, մեք սակաւ ինչ ասասցուք: Որ ասեն, թէ մարգարէն զՀօրէ ասէ, այս են միտք բանին, վասն զի առ հնովն եւ մարգարէիւքն Հօր անունն միայն յայտնէ[521], եւ մի Աստուած ամենակալ միայն ճանաչէին եւ Տէր Հայր եւ Աստուած զՆա անուանէին, ըստ այնմ եթէ ոչ սա Ինքն է Հայր քո, ստացաւն զքեզ: Եւ այլուր՝ Տէր Հայր մեր[է], եւ այլն: Իսկ Դաւվայ ասելն ի բանն Պօղոսի, որ ի Հռոմ ընդ հրեայսն հակառակութեան, յորժամ անլուրք վարդապետութեան, ապա շարժեալ ի Սուրբն Հոգւոյն ազդմանէ, ասաց զայս իբր սպառնականս ինչ եկեցուցանելով Սրբոյ Հոգւոյն զօրութեամբն, քանզի կարի յոյժ ծանօթք էին Սուրբ Հոգւոյն յայտնութեան, եւ զփորձ առեալ սաստկութեամբ զօրութեան ուժոյ Նորա, ըստ այնմ, եթէ Հոգւով զօրութեան Քո բաժանեցան ջուրք եւ այլ բազումս, որ յայտնի մարգարէիցն է ներգործութեան Հոգւոյն,

ա Տե՛ս Հռովմ. ԺԱ 10:
բ Տե՛ս Սաղմ. ԻԳ 7—10:
գ Տե՛ս Ա Կորնթ. Բ 8:
դ Սաղմ. ԻԲ 2
ե Սաղմ. ՀԹ 2
զ Յովհ. Ժ 14
է Եսայի ԼԳ 22

զորս գիտէին հրեայքն[522] ասաց Պօղոս Հոգւոյն զասացեալս ի մարգարէէն, իսկ Որդւոյ՝ բնաւ ամենեսին իսկ ոչ հաւատային եւ ոչ զանունն անգամ լսել ախորժէին: Վասն այսորիկ առաքեալ, ըստ իւրում բնական գիտութեան, Սուրբ Հոգւոյն յիշմամբ երկեցուցանելով ածէր հաւատալ տիեզերակեցոյց վարդապետութեան: Իսկ ասելն Յոհաննու վասն Որդւոյ ոչ առակատր բանիւք, այլ ստուգութիւն իսկապէս յայտնեաց զՈրդին Աստուծոյ լեալ զնստեալ յաթոռն: Եւ զի անկանելն զլանջօքն արար զնա ծածուկ խորհրդոցն շտեմարանապետ, զի յորմէ սերովբէքն սարսեալ եւ դողալի ձեռօք[523] առեալ ի Սեղանոյն ունելեօք զկայծակն աստուածային հրոյն մաքրութեան, նա անակնածելի համարձակ եւ առանց միջնորդի մերձենայր յանհպելի ունկն Աստուածն Բանի եւ, իբրեւ սպունկաւ հիւք յինքն հաւաքեալ, ժողովէր զիւրս կենսակայլակ ցօղոյ աստուածային գիտութեան: Սակս այսորիկ Սուրբ Հոգւոյն գիտութեամբն եւ Հօր յայտնութեամբն պարզապէս զնոյն Ինքն ասաց զՈրդին Աստուծոյ՝ զնստեալն յաթոռ բարձրութեան եւ վերացելոյ՝ ըստ Յոհաննու եւ Աթանասի հայրապետաց: Այլեւ ի պատմութեան Սոկրատայ եկեղեցական շարածի զնոյն միտս ցուցանէ: Վասն զի, ի դիւական ազդմանէ շարժեալ, արիոսական աղանդոյն պաշտօնէիցն կարգէին երգս փառաբանութեան ընդդէմ ուղղափառացն՝ ըստ իւրեանց հերձուածողական հայհոյութեանցն եւ զայս սկսանէին ձայնիւ յերգ արկեալ ի լսելիս բազմաց: Եւ այս լինէր յաւուրս Յոհաննու Ոսկեբերանի: Յայնժամ երկուցեալ[83*] Յոհաննու, զի մի ոք, յայսպիսի պատրող օրինութեանց խաբեալ, արտաքս քարշեսցի յԵկեղեցւոյն ի պարզամտացն կամ ի դիւրահաւանիցն, ընդդէմ նոցա կարգեալ զօրինաբանիչս Ամենասուրբ Երրորդութեան եւ միոյ Աստուածութեան, որպէսզի եւ նոքա օրինեսցեն ի գիշերային օրինութիւնս[524] զԱստուած՝ յարդարեալք խաչիւք եւ անուշահոտ խնկօք, մոմեղինօք եւ ջահիւք շրջելով ի քաղաքն օրինէին զԱստուած եւ զլսողացն միտս շարժէին եւ փառաբանութիւն Ամենասուրբ Երրորդութեան եւ ընդ առաւօտն զսրբասացութիւն Երրորդութեան Որդւոյ առանձինն ընծայեցուցանէին քաղցրաձայն երգով. Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ, ընդ որ մախացեալ արիանոսքն շարժեցին մարտս ի գիշերի եւ պատերազմեալ զոմանս քարկոծեցին, եւ բազումք յերկոցունց կողմանցն[525] մեռանէին, զոր լուեալ թագաւորն արգել զարիանոսսն[526] եւ հրամայեաց ամենեցուն զգիշերային օրինութիւնսն ոչ առնել արտաքոյ, այլ՝ ի տուն աղօթիցն ամենեցուն օրինել զԱստուած: Ասէ եւ զայս նոյն պատմութիւն, եթէ ասացից եւ զպատճառս սրբասացութեանդ, որ ի վերայ Որդւոյ ասի Երրորդութեան սրբասացութիւն: Քանզի Իգնատիոս՝ Անտիոքայ եպիսկոպոս, երրորդ յառաքելոյն Պետրոսէ, որ եւ աշակերտել իսկ նոցա Յոհաննու աւետարանչի եւ Պետրոսի Վիմի, որ եւ յեօթանասնից ասի լինել սուրբն[527]: Սա տեսանէ երկնատր զօրս հրեշտակաց, որք օրինէին զԱմենասուրբ Երրորդութիւն երեքկին սրբասացութեամբ եւ միոյ Աստուածութեան զփառս ընծայէին: Զնոյն դար-

ձեալ եւ ի վերայ Որդւոյ անճառելի ձայնիւ երեքկին սրբասացութեամբ տային զփառս, որ ի միտսն տպաւորեալ եղեւ սրբասացութիւն օրհնութեանցն, որ ի Քրիստոս զխորհրդածութիւնսն առնեն: Եւ զայս յԱնտիոքայ Եկեղեցիսն աւանդէր յերեկոյան եւ ի վաղորդեան աւուրն սուրբն Իգնատիոս: Ուստի եւ յամենայն Եկեղեցիս ուղղափառաց տուեալ պահի եւ զամենայն կարգս Եկեղեցւոյ յԻգնատիոսէ[528] հաստատեալ[84*]:

Եւ Կիւրղի Աղեքսանդրացւոյ գրեալ է այսպէս, «Եղեւ,- ասէ,- ի տարւոջն, յորում մեռաւ Ոգիա, զորդի տեսանէր ոչ ոք երկուասցի»: Եւ յայտ է, զի ի ժամանակս երիցս երանեալ Թեոդոսի թագաւորի Փոքու, յորժամ յուզեցաւ պատերազմ յաղագս հաւատոյ ի մէջ Կիւրղի եւ Նեստորի[529], հարկ լինէր Կիւրղի զգացուցանել թագաւորին, եւ լինէր ժողով սուրբ հարցն յԵփեսոս եւ գալ Կիւրղի յԱլեքսանդր քաղաքէ նաւաչու ուղղեւորութեամբ ի ժողով սուրբ հարցն: Եւ զի գլուխ հայհոյութեան Նեստորի էր ասել զամենասուրբ Կոյսն մարդածին, այլ ոչ Աստուածածին խոստովանէր եւ բաժանէր զՔրիստոս յերկուս հատածս՝ զբնութիւն Բանին եւ մարմնոյն եւ այլ բազում հայհոյութիւնս: Եւ դիմեալ ուղղափառացն ի սուրբ Եկեղեցին, որ յանուն Աստուածածնին, զոր ասեն շինել ի Յոհաննու աւետարանչէն ի քաղաքն Եփեսոս, եւ աղաչէին զսուրբ Կոյսն լինել բարեխօս եւ աղաչող զՈրդի իւր Միածին, զի լիցի խորտակիչ այնմ վիշապացեալ գազանի: Եւ յայնմ սուրբ Եկեղեցւոջ ասեն սկզբնաւորել[530] զպարտուածս փառաբանութեան Երիցդ Սրբասացութեան մեծի սուրբ ժողովոյն, քանզի զծնեալն ի սուրբ Կուսէն Աստուած խոստովանեցին առանց բաժանման եւ զծնօղն՝ Աստուածածին առանց կարծեաց երկուութեան[531]: Սակս այնորիկ եւ ըստ սրովբէիցն սրբասացութեան, զոր ի վերայ Որդւոյ բարբառէին, եւ զայս զարարածս շարահիւսեալ համաբանեցին սուրբ հարքն[532]՝ Աստուած եւ հզօր եւ անմահ զմի Տէր մեր Յիսուս կարդալով եւ զնոյն Ինքն չարչարեալ եւ խաչեալ եւ ճշմարիտ մահուամբն[533], որ վասն տիեզերաց փրկութեան, ըստ Գրոց, զմահու զօրութիւն լուծեալ եւ թաղեալ գերեզմանի եւ եռօրեայ յարուցեալ եւ համբարձեալ, եւ գալոց է փառօք Հօր դատել զկենդանիս եւ զմեռեալսա: Եւ պատշաճէր այս արարուած սրբասացութեան ընդդէմ մարդադաւան խոստովանութեան Նորա, եւ է ասացելոցս միտք այսպիսի, թէ՝ Աստուած ես հզօր եւ անմահ, վասն մեր խաչեցար, ողորմեա մեզ: Եւ մարդապաշտ հայհոյութեան ընդդիմակայ սպառուած բանին փառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ Կոյս եւ այլն:

Իսկ զկնի արտասահմանելոյն Նեստորի ի խոյժս բարբարոսաց ի Թեոդոսէ[534] Փոքու լինի հաւատոյ քննութիւն ի Կոստանդինուպօլիս զկնի ԵԺ (15) ամի առաջին ժողովոյն, ԻԵ (25) ամի թագաւորութեան Թեոդոսի յաղագս հակաճառութեան Փլաբիանոսի Պաղատան եպիսկոպոսի եւ Եւտիքի դիւաբերանի, զի Փլաբիանիոս զՆեստորին շաղակրատէր, եւ Եւտիքէս մի բնութիւն շաղփաղփեալ[535] խելացնորէր ըստ Սոփրոնի եւ ըստ պանդուրացւոյն աղճատանաց: Ուստի եւ թագաւորն Թեոդոս հրամայէ ժողով լինել ի նոյն յԵփեսոս ծովահայացն: Եւ զի մեծն Կիւրեղ առ Քրիստոս վերափոխեալ էր, եւ կացեալ փոխանորդ նորա երիցս երանելին Դեոսկորոս, որում գլխաւորութիւն ժողովոյն հաւատացաւ նմա ի Թեոդոսէ: Եւ ժողովեցան եպիսկոպոսապետք Լ (30): Յայսմ ժողովի ընդ այլ բազում կրօնս հաւատոյ յօրինեցին ելլադական յեղանակօք զնուագս եւ զերգս փառք ի բարձանցդ հրեշտակական փառատրութեանցդ յաճախելով եւ այլ եւս բարբառ բանից յոլովս ի բանս հովուացն: Նոյն ժողով աղեքսանդրացի հռետորական եղանակօքն զեղգեղեալ գեղազարդէին զԽաչեարնդ կցորդ՝ ի դէմս Քրիստոսի Աստուծոյ վերաձայնելով, որում առաջնորդ եւ ուսուցիչ էր հրամանաւ սուրբ Հոգւոյն Պետրոս՝ անտիոքացւոց կացեալ եպիսկոպոս: Ուստի զվաղնջուցն անցեալ ամացն հաստատուն գիտէր եւ ստոյգ զեղեալն յԻգնատիոսէ եւ յառաքելական սուրբ հարցն առաջին, զոր եւ հաստատեաց յԵկեղեցիս ուղղափառաց:

Այլեւ յայտ ի սինհոդոսական պատմութեանց է, որ ասէ Յովնաղ յԵրուսաղէմի եպիսկոպոսն ի Քաղկեդոնի էր, որ զնախկին իդեալն ի սրբոց հայրապետաց եւ ի սրբոց հարցն զԽաչեցարն կցորդ կորզեալ հանին յերից սրբասացութեանցն նուագէ, որ ի վերայ Որդւոյ էր սկզբնաւորեալ: Եւ զայս խոստովանութիւն առեալ տանէ յԵրուսաղէմ՝ Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, ողորմեաց մեզ: Եւ այս բան պատմութեանս վկայէ, թէ յառաջագոյն էր եդեալ Խաչեցարիս խորհուրդ[85*], քան զոր ի Քաղկեդոնին ասացին: Եւ վասն զի գլխաւորք ժողովոյն աշակերտք Նեստորի էին եւ կողմնածուք նորին աղանդոյ, որք ոչ ախորժէին Աստուծոյ հզօրի եւ անմահի խաչիլ եւ չարչարիլ վասն փրկութեան մարդկան, այլ մարդկային բնութեան առանձինն ասեն զչարչարանսն եւ զմահն, զոր կալմամբ եւ յարակցութեամբ ասեն ընդ Աստուածն Բանի հաղորդակից լեալ միայն եւ պատուակից եւ մարդոյ լոկոյ ասեն չարչարեալ ի Խաչին, եւ որպէս զմիաւորութեան փոխել բան զհաստատեալն յալեքսանդրացեացն հոգեշնորհ փիլիսոփայից: Նոյնպէս զԽաչեցարդ կցորդ ի սրբասաց փառատրութեանց փոխեցին պատճառ կալեալ ինքեանց կեղծաւոր կարծեաց զեռակի ասացուած սերովբէիցն, եթէ զԵրրորդութիւն փառատրէին եւ ոչ ածեն զմտաւ, թէ այլ միտք այնր են, եւ այլ՝ այսր արարուածի, որ ի սրբոց հայրապետացն կարգեցաւ եւ եդաւ դիմակս չարին Նեստորի: Եւ ունի այսպէս բանիցս մերոց սեռն, զի որպէս ժողովեալքն ի Նիկիա զԱրիոսի եւ զՍաբէլի զաղանդն խլեցին, եւ ընդդէմ եդին պատառման նոցա զբարձրաբերձ աշտարակդ հաւատաբան արարուածիդ, զոր միաբարբառ փառատրեն բազմութիւնք հաւատացելոց: Նոյնպէս եւ[536] որք յաղագս հոգեմարտին Մակեդովնի ժողովեցան Յ եւ Ծ (350) սուրբ հայրապետքն հրամանաւ մեծին

ա Բ Տիմոթ. Դ 1

Թեոդոսի ի Կոստանդիանուպոլիս եւ զյաղագս Սուրբ Հոգւոյն յօրինեցին զարարուածս եւ ի նոյն յարդարեցին հաւատաբանութիւն եւ զՄակեդոնին խլեցին փուշ: Նոյն օրինակ եւ յԵփեսոս չԽաչեցարդ ի դէմս Որդւոյ արարին ասել միաբան ընդդէմ Նեստորի այսպէս ցանկեալ եւ մեզ ուսուցին հաստատուն պահել, թէ ո՞ւր եղեւ կարգեալ սրբասացութիւնդ ի վերայ Երրորդութեան, եւ կամ ո՞յք ոմանք եւ սակս որո՞յ հերձուածոյ եդին զնա, եւ կամ յորո՞ւմ ժողովի մեք ոչ երբէք գիտացաք: Նաեւ ոչ զմիօք յաղանդապետաց հերձուածողացն գիտեմք, թէ զուգահաւասար զԵրրորդութիւն հայհոյեաց ոք եւ ի վերայ նորա շարժեցան ժողովք ուղղափառաց: Զի թէպէտ ամբարշտեալ ապարասանեաց Սաբէլ Լիբէացի եւ զԵրրորդութիւն շփոթեալ խառնակեաց մի դէմս, եւ անուամբ լոկ զանազանեալ, այլ առ ետեղ իսկ Արիոս Ալեքսանդրացի ընդդիմացաւ նմա: Ուստի առաւել, քան զչափն յարձակեցաւ ի վերայ նորա մինչ զի միւս կողմ բաժանեաց զմիասնական Սուրբ Երրորդութիւն՝ խառնելով ի Նոսա յաւելուածս օտարացեղութիւն արարածական բնութեան: Եւ գտան երկոքինն հակառակողքն[537] ամբարշտեալք: Վասն որոյ կանխաւ ժամանեալ սուրբ ժողովն Նիկիայ զերկոցունսն խլեցին[538] զորոմնաբեր զբոյսն դառնագոյն արմատոյն: Իսկ այլ ոչ ուստեք կարեն ցուցանել ի Գրոց զպատճառս իւրեանց արարուածին եւ թէ զսերովբէիցն ասացեալսն պատճառն, զայն փառաբանէ մերս Եկեղեցի ի յոլով տեղիս ի կարգաւորութիւն Եկեղեցւոյ պաշտաման: Քանզի սրովբէքն չեն ասացեալ ըստ նոցա ասացուածին. Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, ողորմեա մեզ: Այլ միայն զիւրեանց, զի կարգեալն եւ սկսեալն անհատական ձայնիւ աղաղակեն մինչ ի միւսանգամ գալուստն Քրիստոսի Աստուծոյ Որդւոյն Աստուծոյ:

Է եւ այլ պատճառ, զոր գիտացաք ի նոցունց մատենիցն, որ մեզ ոչ է գիտելի եւ ոչ ընդունելի: Եթէ յետ երանելոյն մեծին Յոհաննու Ոսկեբերանի յաթոռոյն իւրմէ ի հակառակութենէ թագուհւոյն Եւդոքսիա՝ կնոջ Արկադեայ, զոր հանեալ ի քաղաքէն տանէին ի սահմանս Կուկիսոնի հայոց ի տեղին, որ կոչի Դազիմոն, ուր եւ զկեանս իւր կատարեալ խաղաղութեամբ փոխեցաւ առ Քրիստոս: Եւ ապա ի հրամանէ Տեառն սաստիկ հարուածս եւ արհաւիրս, հրընկեցութիւնս եւ շարժմունս լինի ի վերայ քաղաքին, յորմէ յոլով տանց եւ ապարանից եղեւ կործանումն: Յայնմանէ սարսեալ առ հասարակ քաղաքին արտաքս ի տանց ելեալ[539] ի լայնատարած դաշտ մի, զոր Կամբոնն անուանեն, եւ ոմանք այլ պատճառ ասեն զելանել քաղաքին ի դաշտն[86*]: Քանզի երկուցեալ քաղաքին բազմութիւն յաղագս հակառակութեան, որ վասն սրբասացութեան, զի կէսք յՈրդւոյ վերայ ասէին՝ ըստ Խաչեցարիդ սահմանադրութեան, որք ըստ Եփեսոսի[540] ժողովոյ էին հետեւեալք, եւ այլք Երրորդութեան վերաձայնէին, որք զՔաղկեդոնին ունէին զերկախումբ իւրեանց դաւանութիւն, որք յաղագս այնր պատճառի ասեն լինել զարհաւիրս շարժմանն[541]: Եւ ապա յայսմ խռան[541ա] ասեն վերանալ երիտասարդի միոջ յօդն եւ լսելի հրեշտակաց, զի ասէին՝ Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, ողորմեա մեզ: Եւ ըստ այսմ տեսլեան՝ ասեն սահմանեալ զսրբասացութիւնդ, զոր ի վեր Երրորդութեան ձայնէն մինչեւ ցայսօր, բայց քանզի մեզ յոյժ անծանօթ է եւ խրթնի մանաւանդ, զի առասպելական բաջաղանս թողուլ զլուսաւորութիւն գիտութեան Աստուածաշունչ Գրոց եւ զհետ ընթանալ սնոտի[542] պատմութեանց եւ ստուերական տեսլեան, վասն զի հաւատոյ հաստատութիւն՝ոչ ի նշանաց, այլ ի գիտութենէ եղեւ սահմանեալ Գրոց ըստ Տեառն, թէ՝ քննեցէք զԳիրս[ա], եւ Դաւիթ ասէ ընդձական. «Երանի, որ քննեն զվկայութիւն Նորա բոլորով[543] սրտիւ»[բ], եւ այլ բազումս: Ըստ այնմ՝ եւ սուրբ հարքն յիւրաքանչիւր ժամանակս ոչ զնշանս ի կիր առնուին, թէպէտ եւ կարող էին, այլ զքննութիւնս Գրոց եւ նոցունց վկայութեամբ հաստատէին ամրապահակ ձեղամբ[544] զհոգեւոր շինուածս: Իսկ որ ի մեր ազնեացս աստի էին, քանզի երամակիցք եւ ուսումնակիցք էին ալեքսանդրացւոցն եւ կցորդ եգիպտական ճգնաւորացն քաջամարտիկ[545] արանցն ծանօթք եւ լծակիցք յառաքինութեան հոգեքան հանդէսն զերանելեացն մերոց ասեմ զթարգմանչացն, որք ազդեցութեամբ Սուրբ Հոգւոյն եւ ինքնայօժար ջերմեռանդն ուսումնասիրութեամբ արշաւանս եղեալ ընթանային ընդ հետս առաքելական շաւղացն առ ի վերծանել զմատեանս լուսաւորչացն, որք եւ, յերեսին ժողովսն հանդիպեալք, մակագրէին զսահմանեալ կարգս հայրապետացն[546]: Բայց եւս առաւել բարեպատեհ դիպեցան ի ժողովն Եփեսոսի, որ են ամենից քննութեան հաղորդեալք, գրեցին եւ մերոցս աւանդեցին մանկանց Եկեղեցւոյ: Եւ վկայ հաւատարիմ մերոցս բանից ըղձալի պատճառանք[547] թղթոցն, որ գրեցան ի Կիւրղէ եւ ի Պրոկղէ առ մեծն Սահակ եւ մեծասքանչ հոետորն[548] Մեսրովբ: Գրեալ յաղագս զգուշանալոյ յաղանդոյն նեստորականացն[87*], որք յետ աքսորականացն եկեալ դադարեցին յաշխարհս մեր, եւ զգործս չարութեան նոցա ուսցիս ի պատմութեան Կորեան՝ աշակերտին Մաշտոցի[549], ի սպառածին[550] 88*: Եւ զնոյն ուսցին ի թղթոյն Ակակայ Մելիտինոյ եպիսկոպոսի[89*] եւ ի շրջանամակ[551] Հաւատանամակ թղթոյն Ներսէսի Երկրորդ հայոց հայրապետի[90*] եւ Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի[91*] եւ Մովսէսի[92*] եւ Աբրահամու հայոց կաթողիկոսաց[93*] եւ այլոց, որք պատուիրեցին զգուշանալ ի նեստորականացն, որք արարին կայանս յաշխարհս մեր եւ աշխատեցին զհարսն մեր:

Այլեւ ի թագաւորելն Զենոնի կայսեր փոխեաց զխոտորնակ կանոնս եւ զկարգս Քաղկեդոնի ժողովոյն, նոյն եւ յառաջին ամին թագաւորութեան Զենոնի, արարեալ ժողով տեառն Բաբգէնի ի քաղաքաղաշտի[553] ի Վաղարշապատ քաղաքի, նզովեցին զբանական նեստորական ազգին եւ զժողովն Քաղկեդոնի եւ զսրբասացութիւնդ, հանդերձ Խաչեցարիւդ վերստին նորո-

ա Յովհ. Ե 39
բ Սաղմ. ՃՋԸ 2

գեցին[94*]:

Այլեւ ասի բան ի տօնական գիտնոցն, թէ ի ժամանակս Ջենոնի եւ Անաստասայ թագաւորացն հոռոմոց ուղղափառաց կարգեալ եղեւ Սրբասացութիւնդ հանդերձ Խաչեցարիդ ի թագաւորական քաղաքն: Եւ այսպիսի կարգօք վարեցան մինչեւ ի ժամանակս Յուստիանոսի կայսեր, որ եւ յեղաշրջեաց զառաջնոցն սրբոց զսահմանեալ կանոնս ուղղափառութեան եւ հաստատեաց վերստին զՔաղկեդոնին: Իսկ զկնի ԼԸ (38) ամացն անցելոյ յետ ժողովոյն տեառն Բաբգէնի դարձեալ բորբոքեալ սկսաւ աղանդն նեստորականաց ազգին յաշխարհս մեր: Եւ այս լինէր յաւուրս Ներսէսի Երկրորդի հայոց կաթողիկոսի: Սա ժողով արարեալ ի Դուին քաղաքի ի ԻԵ (25) ամին Խոսրովու պարսից արքայի եւ ի գալն Աբդիշայ Ասորոյ, յորժամ ժողովի էր եւ Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս, որ զհակառակն Նեստորի զհաւատոյ բանն գրեաց եւ ներբողական ճառս սրբոյ Կուսին[95*]: Եւ նզովեցին զժողովս նեստորականացն եւ զսրբասացութիւնդ Խաչեցարիդ նորոգեցին մինչեւ ի ժամանակս Հերակլի կայսեր հոռոմոց եւ Եզրի կաթողիկոսի հայոց, որ խաբեալ ի Հերակլէ[554] ի գնալն ի հայք եւ ընկալան զՔաղկեդոնին մինչ ի ժամանակս բռնակալութեան իսմայէլական ազգին, որ մերժեցին զյունականսն ի սահմանաց մերոց[96*]: Եւ մինչ ի ժամանակս Յոհաննիսի Իմաստասիրի հայոց կաթողիկոսի, որ ժողով արարեալ ի սահմանագլուխս Հարքայ գաւառի ի գեղաքաղաքին Մանազկերտի եւ մաքրեաց ի հայոց զանկարգութիւն երկաբնակացն եւ զխառնումն խմորոյն եւ ջրոյ եւ վերստին նորոգեաց զսրբասացութիւնդ Խաչեցարին եւ այլ բազում կարգաց Եկեղեցւոյ մեկնութիւնս արարեալ: Երիցս կարգեալ յաւուրն զսրբասացութիւն ասել անուամբ Որդւոյ՝ սակս զերախտիս երեքանձեայ[555] Աստուածութեան յուշ առնելոյ հաւատացեալ ժողովրդոց, վասն զի Քրիստոս ծանեան զերից Անձնաւորութեան գիտութիւն: Եւ զի կամօք եւ ներգործութեամբ Ամենասուրբ Երրորդութեան առ տուեալ բաշխեցան մեզ պարգեւք փրկութեան ի ձեռն խաչելութեան Քրիստոսի, զոր սուրբ Աւազանաւն ստանամք զանապականութիւն, զոր առաքեալն Պօղոս մեկնէ զխորհուրդ Մկրտութեան ի մահ Որդւոյն Աստուծոյ եւ ընդ Նմին թաղեալ, զի ի մէջ Երրորդութեան Քրիստոս ճանաչի եւ խաչին չարչարանքն ընդ Նմա եւ մահն եւ թաղումն եւ Յարութիւն, որով կեանք տայ տիեզերաց[ա]: Այսպիսի կարգօք լուսաւորեաց Իմաստասէրն Յոհաննէս զմերս Եկեղեցի[97*]: Իսկ երիցս ասելն՝ զերեք Անձնաւորութիւն Երրորդութեան, վասն զի կամօք եւ զօրութեամբ անբաժանելի գործակցութեամբ ի Խաչն ասի խորհուրդ՝ ոչ իբր շղթայս ինչ ընդ իրեարս կապեալ՝ ըստ անծանօթ իմաստիցն իմացմանց, այլ՝ զատ եւ որիշ անձնաւորութեամբ եւ համաբնութիւն զօրութեամբ եւ աստուածութեամբ: Իսկ եռակի երիւքն ասելով, որ լինի Թ (9)՝

ա Հմմտ. Հռովմ. Զ 3—4, Կողոս. Բ 12:

ըստ Թ (9) դասապետութեան հոգեղինացն, որ նոյնաթիւ դաս պաշտի յԵկեղեցւոջ Աստուծոյ՝ ըստ Դիոնեսիոսի: Բայց արդ, տեսցուք զյունականացն զանհաշտ թշնամութիւն ընդ մեզ, թէ զիա՞րդ անձնապանծ իմաստութեամբ ինքնախաչք լեալ զմեր զրպարտեալ աղարտեն զիմաստս՝ աստուածաչարչարս կոչելով, եւ աստուածասպանս զանմահ հոգին ասեն ընդ մահուամբ արկանէք: Մեղմականս ասասցուք պատասխանատուութիւնս զասացեալսն մարգարէից եւ առաքելոց եւ սրբոց վարդապետաց ի վերայ Քրիստոսի պահեմք պնդագոյն: Եւ զի ինքեանք կէտ եղեալ եւ սահման յիւրեանց սրբասացութեանց զԱստուածութիւն՝ Հօր եւ զիզօրութիւն՝ Որդւոյ, իսկ զանմահութիւն՝ Սուրբ Հոգւոյն: Եւ այս յոյժ թուի ինձ անտեղագոյն եւ յաւէտ մեղադրանաց արժանաւոր: Երից իսկական Անձանցն առնել պակասութիւն՝ զՀայր ի հզօրութիւն արտաքսել եւ զՈրդի՝ յԱստուածութենէն եւ զՍուրբ Հոգին՝ յԱստուածութենէն եւ ի զօրութենէն: Եւ արդ, ահա այնպիսի անհաւասար սահմանադրութեան հաստիչք թշնամի իւրեանց: Զայս այսպէս ատողացն արարին զԱնձինս Ամենասուրբ Երրորդութեան, վասնզի յԵրիս Անձինսն արարին զպակասումն, բայց եւս առաւել ի Հոգին Սուրբ, զի ի չափս հրեշտակի զՆորայն կարգեցին զպատիւ միայն զանմահութիւն շնորհել Նմա, զի հրեշտակք չեն մահկանացուք:

Արդ, փոխանակ զի զմեզ թշնամանօք աղարտեն եւ զանմահ Հոգին Սուրբ ասեն մեզ ընդ մահուամբ արկանել, ինքեանք գտան նուազեցուցիչ Սուրբ Երրորդութեան եւ հակառակ Հոգւոյն Սրբոյ: Բայց եթէ ի կարգի եւ առանց նուազութեան զՍուրբ Երրորդութիւն կամին փառաբանել: Այսպէս, ապա պարտ էր նոցա նուազել յիւրեանցն փառաբանութեան յանուանս երեք անձնական զօրութեան զերիս զբայս սրբասացն բանից յիւրաքանչիւր յԱնձինս յատկական առանձնապէս սահմանել՝ ասել այսպէս. «Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ Հայր», եւ, ըստ այսմ կարգի, յարմարապէս զՈրդի եւ զՀոգի ասել: Բայց այս կարգ փառաբանութեան թէպէտ եւ ի խորհրդական թուին արտաքսողին[556], սակայն հաւասարութիւն միասնական, եւ մի կարգ զօրութեամբ ողջ պահի, քանզի այս կարգ փառաբանութեան ոչ ըստ սերովբէիցն ասացուածի ունի զիմաստս, այլ յայլ իմն բաժանի տեսակ խորհրդոյ, քանզի սերովբէքն[557] զմի Անձն տեսանէին զՈրդւոյ եւ զերիս զսուրբս ասէին եւ մի զՏէրն, որ լինի հաւասարութիւն: Նոքա ըստ սերովբէիցն ասեն լինել զիւրեանց[558] փառաբանութիւն: Բայց կարգ անհաւասարութեան բանիցն ոչ թողացուցանէ այսպէս իմանալ: Եւ արդ, ի բաց թողցուք[559] զհակաճառութիւն բանիցս, որ առ նեստորականսն եւ երկաբնական, եւ զմեր ասացուածիս տեսցուք զիմաստս, զոր ի վերայ Քրիստոսի Աստուածն Բանի առնուլ ասեմք, որ եւ զաստուածութիւն եւ զիզօրութիւն եւ զանմահութիւն միոյ երեսաց Որդւոյն Աստուծոյ տամք,

որ ի մարգարէիցն եւ յառաքելոցն եւ յաստուածաբան վարդապետացն ստորոգեալ հաստատեմք: Քանզի ասէ Որդին Որոտման. «Եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն»[ա]: Եւ դարձեալ ասէ, զի զՆա Հայր կնքեաց Աստուածն[բ], իսկ զիզօրութիւն Դաւիթ ասէ՝ Տէր կարող եւ հզօր[գ]: Եւ Եսայի ասէ՝ Աստուած հզօր[դ]: Եւ զանմահութիւն ասէ Մովսէս. «Երդուայ աջով Իմով եւ ասացի, թէ կենդանի եմ յաւիտեան[ե]»: Եւ Դաւիթ ասէ. «Ծարաւեաց անձն իմ առ Քեզ, Աստուած հզօր եւ կենդանի[զ]»: Իսկ Պօղոս առ Տիմոթէոս ասէ. «Զոր յԻւրում ժամանակսն ցուցցէ երանելին եւ միայն հզօրն՝ թագաւորն թագաւորաց եւ Տէրն տէրանց, որ միայն ունի զանմահութիւն բնակեալ ի լոյս անմատոյց[է]»: Եւ ըստ այսմ ի վերայ Քրիստոսի սուրբ հարքն մեր ասացին. «Եւ զդպարտեն յասելն զանմահ Հոգին ընդ մահուամբ արկանել, զի, ըստ մեր ասացուածի, Հայր եւ Հոգին ընդ չարչարանօք ոչ անկանի, որպէս եւ ոչ՝ ի մարմնաւորութեան, բայց կամակցութեամբ միայն, որով գործեցաւ փրկութիւն աշխարհի: Իսկ եթէ ի խորհուրդս տարակուսեսցի ոք, թէ զիա՞րդ մարթի ասել՝ Աստուած հզօր եւ անմահ, եւ ապա՝ խաչեալ, եւ որ ըստ այսմ իմասցի այնպիսին, թէ Ինքն Աստուած անգիտելի էր մարդկան գիտութեանց, եւ ոչ միայն ի մարդկայնոց, այլեւ՝ յերկնայնոց: Նոյն օրինակաւ եւ գործքն Իւր անդր են, քան զիմաստս տարրական եւ եղական արարածոց, մանաւանդ՝ սրբազան կրօնք հաւատոց մերոց եւ անճառ գործք տնօրէնութեան Քրիստոսի, զոր հաւատովք պարտ է իմանալ զգործս Արարչին, ըստ առաքելոյ՝ հաւատովք իմանալ զՆա եւ զզօրութիւն Յարութեան Նորա[ը]: Բայց որքան հնար է իմանալ մարդկային մտաց օրինակաւ այսու ասասցուք զչարչարանացն եւ զմահուանն Քրիստոսի: Վասն զի Ինքն՝ էնն Աստուած, սաղմնաբար սեղմեաց միացոյց Իւր Մարմին ի սրբոյ Կուսէն եւ եղեւ մարդ՝ իբրեւ զմի ի մէնք, եւ զոր օրինակ մարդն հոգւով միացեալ է՛ւ մարմնով, է՛ւ մտօք մի մարդ կոչի եւ մի դէմ եւ մի անձն եւ մի գոյացութիւն եւ մի բնութիւն, եւ մի անուն իւր կոչի ոմն մարդ թէպէտ եւ ի բազում խառնուածոց եւ յայլ տեսակաց եւ յանման սեռից ունի զգոյացութիւն իւր, սակայն մի մարդ կոչի եւ մի անուն, եւ յոր ինչ եւ գործ յառաջանայ: Նոյն մի մարդ եւ մի անուն կոչի, եթէ մեծութիւն եւ աղքատութիւն եւ որ ըստ այսմ եւ ոչ ոք որոշէ, եթէ[560] այս ինչ մարմնոյն է

ա Յովհ. Ա 1
բ Յովհ. Ե 18
գ Սաղմ. ԻԳ 8, ԽԱ 3, 2Է 9
դ Եսայի Թ 6
ե Բ Օրէնք ԼԲ 40
զ Սաղմ. ԽԱ 3
է Բ Տիմոթ. Զ 15
ը Փիլիպ. Գ 10

եւ այս ինչ՝ հոգւոյն. թէպէտ եւ գիտեմք, եթէ անմահ է հոգին եւ անչարչարելի, եւ միտքն զանկանի ընդ ըմբռնմամբ եւ շօշափմամբ, սակայն զհոգեկանսն եւ զմարմնական միոյ մարդոյ եւ միոյ անուան համարիմք: Ըստ այսմ օրինակէ համարեսցուք եւ զՔրիստոս Աստուած ճշմարիտ եւ Որդի Աստուծոյ, թէպէտ եւ յոքանանուն անուանի, այլ ըստ գործոցն կոչի որպիսի դուտն: Բայց տիրական անուն մի կոչի որպէս առաքեալն անուանէ. «Մի Տէր Յիսուս Քրիստոս, Որով ամենայնքն»[ա]: Արդ, ըստ այսմ իմաստից կոչի Քրիստոս եւ ասի Աստուած հզօր եւ անմահ եւ մեռեալ, զի Ինքն է նոյն Աստուած եւ նոյն մարդ, նոյն Ինքն՝ Որդի Աստուծոյ, եւ նոյն Ինքն՝ Որդի մարդոյ՝ է՛ւ յերկնից, է՛ւ յերկրէ, անչարչարելի եւ չարչարեալ, մեռեալ եւ անմահ եւ ետ Ինքեան բարձրագոյնքն ըստ աստուածութեան եւ նուաստագոյնքն ըստ Իւր կամաւ յանձնառութեան: Եւ ոչ է արժան բաժանել զԱստուածայինսն եւ զմարդկայինսն, վասն զի միոյ Քրիստոսի[561] Որդւոյն Աստուծոյ կոչին կիրքն եւ ներգործութիւնք: Վասն զի Ինքն Աստուած կամեցաւ եւ արար եւ ոչ՝ ի հարկէ. նաեւ կարող էր բանիւ վճարել զփրկութիւն առանց արեան եւ ոչ արար: Այլ եղեւ ամենայնիւ մարդ[562] բաց ի մեղաց, եւ ամենայն Իւր Ինքնեան են աստուածայինքն եւ մարդկայինքն եւ ոչ բաժանի, եւ որպէս յօրինակ ի մարդոց ցուցաւ՝ թէպէտ եւ մինն՝ անմահ եւ միւսն՝ մահկանացու, մի կոչի մարդ. բայց զգլխաւորութիւն հոգին ունի, զի անմահ է եւ կենդանի եւ շարժող մարմնոյն, եւ գործքն հոգւոյն կոչին մարմնականքն եւ հոգեւորքն: Վասն զի[563] հոգին իբրեւ զգործի ունի զմարմինն ի ձեռին: Ըստ այսմ օրինակի եւ զՔրիստոսին իմասցիս, վասն զի Ինքն Աստուած Բանն է՝ գլուխ եւ գործող ամենայն սքանչելագործութեանցն եւ խոնարհութեանցն, եւ Իւր Ինքն Աստուածն Բանի կոչի չարչարութիւն եւ անչարչարութիւն, մեռելութիւն եւ անմահութիւն, զի Նորա ասին չարչարանքն եւ մահն, որոյ մարմինն է, թէպէտ եւ էութիւն Աստուածութեան առանց չարչարանաց մնաց եւ առանց մահուան, զոր օրինակ եւ՝ հոգի մարդոյն: Եւ գրէ Աթանաս ի ճառին, որ ընդդէմ Պօղոսի Սամոստացւոյ, քանզի զՔրիստոս ասէ՝ քարոզեցին առաքեալքն համաձայնաբար զՈրդին Աստուծոյ զնոյն ծնեալ ի Բեթղէհեմ ի զաւակէ Դաւթի՝ ըստ մարմնոյ եւ զխաչեցաւն վասն մարդկան ի Պոնդացւոյ Պիղատոսէ: Զնա ասացին Աստուած, զնոյնն մարդ, զնոյնն՝ յերկնից, զնոյն՝ յերկրէ, ոչ զայլ ոք եւ զայլ, ոչ երկադէմս եւ ոչ երկրպագութիւնս երկուս, զինչ պետք է բանակռիւ լինել. հաւատալ արժան է եւ պաշտել եւ երկրպագել լռապէս: Գիտեմ զՆա Աստուած ճշմարիտ ի յերկնից անչարչարելի, գիտեմ զՆա Որդի մարդոյ ի զաւակէ Դաւթի՝ ըստ մարմնոյ չարչարելի եւ ոչ խնդրեմ, թէ զիա՞րդ նոյն Ինքն անչարչարելի եւ չարչարելի. միգուցէ, զզիարդն խնդրելով, անկայց ի փրկութենէն, որ առաջի կայ մեզ: Հաւատալ պարտ է նախ եւ փառաւորել,

ա Ա Կորնթ. Ը 6

իսկ երկրորդ՝ ի վերուստ հայցել զհաստատումն այսոցիկ եւ ոչ՝ ի ներքուստ առնուլ զայս ի մարմնոյ եւ յարենէ, այլ՝ ի յայտնութենէ Աստուածայնոյ եւ երկրայնոյ[99*]: Եւ Աստուածաբան ասէ ի Մկրտութեան ճառին ի Սպառուած Բանին «Հաւատա,— ասէ,— յՈրդին Աստուծոյ՝ նախքան զյաւիտեանս Բանն ի Հօրէ ծնեալ անժամանակ եւ անմարմնապէս, նոյն ի վախճան աւուրց յեալ: Վասն քո եւ Որդի մարդոյ ի Կուսէն յառաջ եկեալ ի Մարիամայ անճառաբար եւ առանց աղտոյ, վասն զի ոչինչ է աղտ, ուր Աստուած է եւ Որով փրկութիւն. բովանդակ մարդ նոյն եւ Աստուած յաղագս մեր բովանդակի ախտացելոյն, զի բոլորում քեզ փրկութիւն շնորհիցէ: Զբոլոր դատապարտութիւն քակտեաց զմեղացն անչարչարելի աստուածութեամբն եւ չարչարելի մարմնովն»[100*]: Ասէ եւ Բերանն ոսկէ ընդդեմ Սամոստացւոյն. «Յորժամ զՔրիստոս լուիցես, մի՛ զԱստուած միայն կարծիցես եւ մի՛ լոկ միայն զմարմնական տեսչութիւն, ա[յլ] զերկոսին միաբան ի միում Անձին, քանզի գիտեմ զՔրիստոս քաղցեալ, եւ գիտեմ զՔրիստոս յերկուց ձկանց եւ ի հինգ նկանակաց կերակրեալ զհինգ հազարս արանց, կանանց եւ մանկտոյ: Գիտեմ զՔրիստոս ծարաւի եւ գիտեմ զջուրն ի գինի դարձուցեալ, գիտեմ զՔրիստոս ի նաւին ննջեալ եւ ի վերայ ջուրցն գնացեալ եւ այլն, որ ըստ աստուածութեան եւ ըստ մարդկութեան, վասն որոյ եւ Քրիստոս ասի»[101*]: Եւ Եփրեմ ասէ յԵրրորդութեան ճառին. «Կոյսն, ի սկզբանն մարմին ծնանելով, զԱստուած ծնաւ եւ է Աստուածածին, եւ հրեայքն, զմարմինն խաչելով, զԱստուած խաչեցին: Վասն զի ոչ մի ինչ է բաժանումն Բանին եւ Մարմնոյ Նորա յԱստուածային Գիրս, այլեւ՝ մի բնութիւն եւ մի զօրութիւն՝ բոլորն Աստուած եւ բոլորն մարդ, նոյն ինքն բնութիւն Նորա՝ ըստ անտեսանելւոյ աստուածութեան եւ ըստ տեսանելի մարդկութեան, ոչ բաժանեմք եւ որոշեմք յԱստուածային Երրորդութենէն զմարմնաւորութիւն Քրիստոսի, զի ընդ Երրորդութեան թուեալ ասէ Մկրտութեան զՈրդի: Եւ զայս ասելով[564՝] ոչ բաժանեմք զմարմինն, զի ի մահ Նորա մկրտութիւն եւ թողութիւն մեղաց եւ մարմնոյ յարութիւն առեալ լինի, որ է Աստուածութեան գործ եւս զարարածոց բնութեան, քանզի մի եւ նոյն մարմինն եւ Աստուած, որոց մարմինն է»[102*]: Եւ մերն ասէ Լուսաւորիչ, եթէ՝ հաւատք ճշմարիտ այս են. խոնարհեցաւ եւ խառնեաց զաստուածութիւն ընդ մարդկութեանս եւ զանմեռն՝ ընդ մեռուս, զի զամենայն մարդկութիւնս անքակ արասցէ յանմահ Աստուածութենէն Իւրմէ, եւ որ զկնի»[103*]: Եւ Մովսէս քերթողահայրն ասէ ի ճառին, որ վասն մարմնաւորութեան Բանին Աստուծոյ. «Քանզի մեռաւ Աստուած եւ մահուամբն զմահ մեռոյց. վասնզի մեռաւ անմահականն[565՝] տակաւին անմահ ի մեռելութիան մնալով»[104*]: Եւ Դաւիթ փիլիսոփայի նորին աշակերտի բանն, որ վասն սուրբ Խաչին. «Եւ զինչ այլ այս, եթէ ոչ զմշտնջենաւորութիւն եւ զյարակայութիւն այս սուրբ զենմանս ի հաւատացեալս հաւատարմասցի բան, վասն զի անմահ եւ զենումն հաւաստի, եւ նոյն միշտ անմահ եւ կենդանի եւ ստուգապէս մեռեալ, եւ նոյն միշտ կենդանի եւ որ զկնի»[105*]:

Իսկ Երից սրբասացութիւնդ ասիլ առ Որդի թուի ինձ վարձ ընդ վաստակոց հատուցանել Նմա ի Հօրէ մշտամատոյց փառաբանութիւն յարակայիլ Նմա՝ հանդերձ խաչակիր երախտագործ չարչարանացն յիշատակաւ: Եւ այս յիրաւի այսպէս պատշաճեցաւ, զի մի մոռացօնք լեալ յապուշ մնասցի երախտագործ պարգեւքն Հօր, որ յԻւր սիրելի Որդին ոչ խնայեաց առ ի զենումն հրաշազարդ եւ ուրախարար Պատարագին, որ տիեզերակոչ հրաւիրակօքն դասու սուրբ առաքելոցն յորդորեաց գալ ի կենսաճաշակ հարսանիս Միածնի Որդւոյ Իւրոյ:

Աստանօր այլ օրինակ ի ճաի նմանեցուցից զԵկեղեցի մերազնեացս Հայաստանեաց նահանգի, որք յաւէտ պնդութեամբ եւ քաջահաւատ յուսով, քան զամենայն ազգս, բուռն հարեալ զսրովբէասացիկ զերգոյս՝ հանդերձ Խաչեցարիւդ, զմահն Քրիստոսի հանապազ պատմելով՝ ըստ իւրական բանին, մինչեւ գայցէ Ինքն, որ ինքնաբար որոշեալք յամենայն ազգաց թերութենէ: Եւ այս թուի ինձ բերելով զօրինակ վայելչածաղիկ եղեմական դրախտին վայրիցն գեղեցկութեան մերս Եկեղեցի, որ յաւէտ որոշմամբ եւ անջրպետ միջոցաւ զատեալ եկաց ի մի կողմն կոյս յայսմ հասարակաբնակ եւ երկրակենց[աղ] աշխարհէս: Այլեւ յոյժ ամրածածուկ զօրութեամբ պարսպեցաւ Տեառն ոչ կոփածոյ վիմօք եւ պղնձանիգ դրամ[ք] աղխեալ, այլ սրովբէափակ սրովն շրջապատեալ շուրջանակի պահել զճանապարհս ամենազուարճ դրախտին կենաց, որք փառատրութեամբ նուագեն զսրբասացութեան երգ քաղցրաձայն աղաղակաւ մինչեւ ցկրկին գալուստ Որդւոյն Աստուծոյ: Ուստի ոչ[566] կարացին հասանել ի ցանկալի վայրս կենսածաղիկ դրախտին կենաց աշխարհակորոյս եւ զընդհանուրասփիւռ ծովածաւալ ջուր ջրհեղեղին կորստեան, այլ եկաց մնաց առանց ապականութեան եւ փոփոխման յիւրումն քաջածաղիկ եւ քաջավայելուչ պտղաւէտութեան, զորօրինակ եւ՝ մերս Եկեղեցի ի սահմանադրութեան եւ ի հաստատութեան կարգաց եւ կրօնից սրբոյն Գրիգորի: Քանզի ահա եւ սոյն իսկ այս երգ սրբասացութեանս սրովբէասացիկ պաշտի ի մերումս Եկեղեցւոջն, նոյն երկնագումար դասիւ պարունակաթուեալք կան յաներեւոյթս ակամբ[567] առեալ ահիւ պակուցմամբն շուրջ զկենսակիր Սեղանովն կենարար Մարմնոյ եւ Արեանն Քրիստոսի: Եւ զի ի սմանէ կախեալ կան կեանք մեր ըստ հաւատոյ մասին, որպէս ասացաք:

Եւ դարձեալ զնոյն ասեմ մի՛ վասն այսր աստուածազարդ եւ հոգեանուագ արարուածիս այլ ազգ ինչ իմանալ եթէ առաջին[568] հին արանցն եւ յառաքելոցն եւ կամ ի սրբոյն Գրիգորէ ոչ կարգեցաւ երգս այս ի վերայ Որդւոյ հանդերձ Խաչեցարիւդ: Վասն զի ոչ էր առաքելովքն եւ սրբոյն Գրիգորիւ մեծի Լուսաւորչին մերոյ երեւեալ բաժանող աղանդն երկաբնակացն[569] եւ ոչ չար իմացութիւն նեստորական մտածութեան պատառումն զանորիշ տնօրէութեան Քրիստոսի պատմուձան, այլ մի Տէր Յիսուս Քրիստոս ճշմարիտ Աստուած եւ կեանք յաւիտենական գիտէին զՄիածինն Աս-

տուծոյ: Եւ առաքեալքն ընդ կռապաշտական խուժադուժ ամբոխիցն գումար եղեալ կռուէին եւ կորզէին ի հեթանոսական չար ըղձիցն կորստեան եւ յաւելուին ի կարգս եւ ի կրօնս քրիստոսազարդ առաքելադաւան խոստովանութեան, որք, ըստ ժամանակին պիտոյից, հոգ ածէին, բայց զի բազում ինչ կարգ յետոյ եղեն ուղղեալք յուղղափառ հարց սրբոց:

Արդ, մի՛ ոք իշխեսցէ փոփոխումն առնել այսմ հոգեշնորհ կարգադրութեանս, զոր կնքեսցին[570] հարքն առաջինք ըստ խրատու իմաստնոյն Սողովմոնի[571]: «Մի՛ փոխեսցես,— ասէ,— զսահմանս[572], զոր եդին հարք քո»[ա], եւ դարձեալ՝ որ քակէ զցանկ, հարցէ զնա օձ[բ], եւ որ գլէ վէմ, ի վերայ նորա անկցի[գ]: Զսա եդին հիմն, եւ ի փոփոխել սորա ամենայն լուծանի կարգ, եւ այս բաւականացի[573]:

Բայց արդ, առեալ զաղքատ իմոց՝ մտաց՝ ընկալցիս զպտուղ, ո՞վ գերազարդ եւ ամենիմաստ հանճարով առլցեալ տէր Խաչիկ Վերադիտող հայոց մեծաց, փոխանորդ մեծի Լուսաւորչին պետ, թէեւ ոչ զյաւէտ կատարեալն, սակայն, ըստ կարի մերում, զյօժարութիւն լիապէս ցուցեալ: Յաղագս որոյ աղաչեմ ըստ աղքատատուր տրոյ տառապելապետ այրոյն այնորիկ համարեսցին զվարձս շնորհին ո՛չ ըստ իերացն, այլ միայն հարուստ յօժարութեան ընդ քաջահաւատն[574] գովեցաւ ամենեցուն Տեառնէն: Ըստ այնմ եւ զմեր ընկալցիս զսակաւ տուրս երկուց լոմայիդ: Եւ եթէ սխալանք ինչ իցեն ի բանիդ՝ ըստ տկար եւ հոսանուտ բնութեանս մերոյ, ուղղեսջիք սիրով հոգւոյն, եւ կորովահանճար իմաստիւք լցցի պակասն, եւ սխալանքն ծածկեսցի ըստ Գրոյն, եթէ՝ սէր ծածկէ զբազմութիւն յանցանացդ[դ], եւ այնպէս բոլորեցուն Արարչին հաճոյացուք եւ կամ հանդիպեսցուք ի Քրիստոս Յիսուս, Որում փառք յաւիտեանս:

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

372 CD ներքինացեալսն: Գլ. Ե. 373 D վերակոչի: 374 D եւ *փխ* եւս: 375 A զծերածեալ: 376 D զիշակէս: 377 A կարգեցաւ: 378 CD զայնպիսին: 379 A անգցի: 380 C *չիք* իսկ: 381 C խռովեցուցանեն: 382 AC պատճառ: 383 CD բնութենէ: 384 A դիւրութեամբ յոյսոյն: 385 A պատճառ: 386 D այլ: 387 D արժանիք: 388 D այդարտեալ: 389 D առաքելոց: 390 CD եւ առաքեալ: 391 D Քրիստոս *փխ* իւր: 392 C չիք եթէ ոք կամիցի... թողուլ: 393 A զգլուխ: 394 CD պատկերապաշտութեան: Գլ. Զ: 395 A մանգանն: 396 AC պատժիւ:

ա Բ Օրէնք ԺԹ 14
բ Ժող. Ժ 8
գ Առակ. ԻԶ 27
դ Յակ. Ե 20

397 D Եսայի: 398 C ունիք: 399 C տխմարք: 400 C ուսաք *փխ* ծանեաք: 401 AC անգանիցին: 402 C թողուլ: 403 A զչափս: 404 C Քաղկեդոնի: Գլ. Է: 405 C Քաղկեդովնի: 406 C հաւատն: 407 D զպարանոցն ի ներքոյ: 408 C քաջայայտ: 409 D Բիւթանիա: 410 D Հռոմն: 411 C կողմ: 412 C հաւատոյն: 413 CD վրաց: Գլ. Ը: 414 C Խաղաղացին Գաբրիէլ [յետոյ 1, 2 նիշերով ուղղուած]: 415 A քաղկեդոնիական: D քաղկեդովնական: 416 D զնոսայն: 417 C զՍիւնեացն: 418 C օտարացեալ: 419 A քարկոծ: 420 C պատմութենէ: 421 C թուականին: 422 D Կիրոնի: 423 C կրտրել: 424 D երկնայնոյն: 425 D հայրապետն: 426 D կէսասարկաւ: 427 D Աթենայ: 428 A պատրիարքն: 429 C զեղն: 430 A արքեպիսկոպոս... ներտտպոլիտ: C պետրապոլիտ: 431 C Կիրիոն: 432 A առաջահաւատ: 433 A աստուածերկեղ: 434 D Սուկրատէս: 435 D նախանձայոյն: 436 A բիւրատացուցն: D բիւրատացուցն: 437 CD Զերեթիա: 438 D այլոց: 439 C մեռոնին: Գլ. Թ: 440 AC արարած: 441 C ջուրս: 442 C ձէթն: 443 C երրկրատր: 444 C ձեռնն: 445 CD բաղարջին: Գլ. Ժ: 446 AC յօծութեամբ: 447 D բանիւն: 448 C *չիք* ինչ: 449 C ձիթենոյ: 450 D սրբոյն: 450ա D Սահակայ մինչեւ ցայսօր ունիմք զօրհնութիւն մեռոնին *փխ* Սահակայ... ցայժմ: 451 C ունիմք միշտ *[միշտ—ը յետոյ ջնջուած]*: 452 A սրբոյ: 453 A *չիք* մինչեւ: 454 D յաւիտենից. ամէն: 455 CD Քրիստոսի: Գլ. Ժ եւ Ա: 456 D եղեալք: 456ա D առաքելոց: 456բ A յեղիցի: 456գ D ծննդի: 457 A արեաք: 458 AC ժողովուն: 459 D թխտոյն: 460 D հայաստանեացս: 461 D խրատատութեամբն: 462 C տեղիս: 463 D *չիք* զի: 464 D եթէ ոչ ոք: 465 D սուրբ: 466 C դրան: 467 C որ: 468 D կանոնադրութիւնէ: D ընթերձուածոց: 469 AC *չիք* ի: 470 AC որ: 471 AD լաւ իմացան: 472 C յիսկիզբն: 473 A մի Քրիստոսի: C ի Քրիստոսի: 474 D բիւրոց: 475 CD ցԿոստանդոս: 476 C կիստեռանցն: 477 AC պատմին: 478 AC յաւել *փխ* Յովել: 479 D կանոնին: 480 D անչափ *փխ* սոյնչափ: 481 A ասածուածէն: 482 D Յորդանանու: 483 D Յորդանանու: 484 D զնովիմք: 485 D վերջնոյ: 486 C եղբարս: 487 D Եղիսաբերթի: 488 AC անդի *[C կլոր փակագծում, իսկ լուսանցքում ճշտուած՝ մարտի]*: 489 D դիր: 490 D ձեզ: 491 AC ամսոյ: 492 A պանձալով: 493 C կիրք *փխ* իրք: 494 D ճշմարտութեամբ, իշխանութեամբ, բռնութեամբ: 495 A ճանապարհէ: D հարց: 496 D ԿՄ: 497 D հայաստանեացս: 498 CD Յակոբու: 499 D Յակոբու: 500 D Կէքընթոսի: 501 D խմորել: 502 A եկեղեցւոյ յարբք: 503 D զոր: 504 D ասեն: Գլ. ԺԲ: 505 D զյաւաջադրեալ: 506 D յԱնանի: 507 D զՏէրն: 508 D խորհուրդ: 509 D իջանելն: 510 D խոսելու *(տողամիջում) փխ* խրատու: 511 CD Արիսպագացոյ: 512 C Երինոսի: 513 D չիք նորա: 514 C բազմօրհնեայն: 515 AC համայնգամայն: 516 D Սարաւոթ: 517 AC հովեսցէ: 518 AC հովուեսց: 519 D Ոսկիբերան: 520 AC ասեն: 521 C միայն էր յայտնի: 522 C հրէաքն: 523 C ձեռօքն: 524 D օրհնութիւնն: 525 D կողմանց: 526 D զարիանոսն: 527 D սրբոյն: 528 D յԻգնատիոսի: 529 A Նեստորին: 530 D սկզբնատրեալ: 531 CD երկմտութեան *փխ* երկուութեան: 532 D հարցն: 533 A մահուամբ: 534 C Դեռոսէ: 535 CD շաղփաղփել: 536

C *չիք* եւ: 537 D հակառակօքն: 538 D եղիցին *[յետոյ լուսանցքում ուղղուած՝* խլեցին*]*: 539 D լեալ: 540 D Եփեսոսին: 541 D շարման *փխ* շարժման: 541ա D եռան: 542 D սնոտ: 543 D զի բոլորով: 544 A ձեղմամբ: 545 C քաջամարտիկ: 546 D հայրապետաց: 547 D պատճանք: 548 A հեռեռորն: 549 D Մաշտոցի: 550 C սպառուածն: 551 AC շրջանակ: 552 AD զհայրսն: 553 C քաղաքու դաշտի: 554 D Հերակլի: 555 D երեքնաձնեայ: 556 C արտաքստոլին: 557 C սրովրէքն: 558 D զիւրեանցն: 559 D թուղցուք: 560 C թէ: 561 D *չիք* միոյ Քրիստոսի... Վասնզի: 562 A բայց: 563 D զի վասն *[յետոյ 2, 1 համարակալումով ուղղուած]*: 564 D ասելով փխ զայս ասելով: 565 D յանմահական: 566 D *չիք* ոչ: 567 D ակամբ: 568 C յառաջին: 569 C երկաբնակաց: 570 C կարգեցին *[յետոյ ուղղուած՝* կնքեսցին*]*: 571 D Սաղամոն: 572 D *չիք* զսահմանս... հարցէ: 573 D բաւականասի: 574 D քաջահաւասն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

68* Վկայութիւնը (Migne, PG, t. 61. col. 668) բացակայում է Գաղատացւոց թղթի՝ Ոսկեբերանի մեկնութեան հայերէն թարգմանութեամբ առանձին հատակտորներով միայն յայտնի տպագիր փշրանքներում (Ոսկեբերան, Մեկն. թղթ. Պօղոսի, Բ, էջ 431—433):

69* Քաղուած է՝ Ոսկեբերան, Մեկն. Մատթ. Գիրք Գ, էջ 33—34:

70* Անտիկ իմաստասէրների այս սովորոյթի մասին է ակնարկում Լուկրեցիոսը (ն. Ք. 96—55թթ.) «Իրերի բնութեան մասին» երկում («Ո՛չ, բարեպաշտութիւնն այն չէ, որ բոլորի առջեւ գլխարկով դու գնում ես դէպ կուռքերը եւ խոնարհվում բոլոր զոհասեղանների առջեւ...». V, 1198—1209): Պետք է ենթադրել, որ հակաճառութեան այս տողերը պատասխան հերքումն են Յունական Եկեղեցու կողմից հայերին ուղղուած այն արտառոց մեղադրանքի, թէ նրանք եկեղեցում, պաշտամունքի պահին գլխարկով են:

71*—72* Այս ընդարձակ հատուածում առկայ աշխարհագրական տուեալները քաղուած են է դարում կազմուած Անանուն ժամանակագրութիւնից. տե՛ս «Անանուն ժամանակագրութիւն խմբագիր յօրինեալ յէ դարում» (հրատ. Բ. Սարգիսեան), Վենետիկ, 1904, էջ 5—10:

73*—74* Այս երկու գլուխները բանաքաղուած են Մովսէս Կաղանկատուացու Աղուանից պատմութիւնից («Մովսէսի Կաղանկատուացւոյ պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 306, 309—313): Կաղանկատուացու պատմութեան եւ հակաճառութեան այս գլուխների բնագրական, աղբիւրագիտական քննութիւնն իրականացրել է Լ. Մելիք-սեթ—Բեկը՝ զուգադրելով միմեանց հետ համերաշխուող հատուածները. տե՛ս Յ. Յ. Քեռսէեան, Անանիա Սանահնեցու «Հակաճառութիւնը», «Պատմա—բանասիրական հանդէս», 1982, N2, էջ 123:

75* Ակնարկւում են Սոկրատ Սքոլաստիկոսի եկեղեցական պատ-

մութեան է—Ը գլուխները, ուր խօսւում է Մեծն Թեոդոս կայսեր ջանքերով «հոգեմարտ» Մակեդոնի դեմ 381թ. Կ. Պոլսի յայտնի տիեզերաժողովի հրաւիրման հանգամանքների մասին (Պատմութիւն, էջ 412—415):

76* Տե՛ս Եփրեմ, Ա, էջ 379—380:

77* Գլխի սկզբից մինչեւ այս բառերն ընկած հատուածը քաղուած է Անանիա Շիրակացու «Ի Յայտնութիւն Տեառն եւ Փրկչին» ճառից. տե՛ս Աշ. Աբրահամեան, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, Երեւան, 1944, էջ 283—290, ըստ Հ. Ս. Անասեան, Հայկական մատենագրութիւն, հտ. Ա, Երեւան, 1959, էջ 780:

78* Վկայութիւնն իմաստով մօտենում է Անդրեաս Բիւզանդացու (Դ դ.) տոմարական աշխատութեան՝ «Երկուհարիւրեակի» Գ կանոնից բերուած «Խաւսք Անդրէասի Իմաստասիրի վասն Զատկաց» խորագրով գրութեանը հետեւող հատուածին. «Եւ վեցերորդ յունուարի, յորում լինի աւրն Յայտնութեան Տեառն մերոյ ի Ժ—երորդում ամսեանն ի մի աւր դիպին» (ՄՄ, ձեռ. N1999, 19բ—20ա): Համեմատութիւնը ցույց է տալիս, որ հակաճառութեան վկայութիւնը ոչ այլ ինչ է, քան Անդրեաս Բիւզանդացու երկի համապատասխան հատուածի համառօտումը: Համառօտելիս անուշադրութեամբ դուրս են թողնուել բնագրի «մարտի», «ապրիլի» եւ «վեցերորդն» բառերը, ինչպես նաեւ «Գ» կանոնը թիւրիմացաբար նշուել է «Դ» (տե՛ս Յ. Յ. Քեռսէեան, Անանիա Սանահնեցու «Հակաճառութիւնը», էջ 122):

79* Տե՛ս ՄՄ, ձեռ. N49, թերթ 119ա:

80* Խմբագրումն է ս. Կիւրեղ Երուսաղէմացու «Կոչումն ընծայութեան» երկի համապատասխան մասի (էջ 297, տող 20—25), տե՛ս Քեռսէեան, 1982, էջ 57:

81* Տե՛ս Աթանաս, էջ 27—28:

82* Համառօտում—խմբագրումն է Ոսկեբերանի՝ Եսայու մեկնութեան համապատասխան հատուածի («Երանելւոյն Յովհաննու Ոսկեբերանի մեկնութիւն Եսայեաց մարգարէի», Վենետիկ, 1880, էջ 66, տող 12—20), տե՛ս Յ. Յ. Քեռսէեան, 1982, էջ 57:

83*—84* «Յայնժամ երկուցեալ... յԻգնատիոսէ հաստատեալ» հատուածը քաղուած է՝ «Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն», էջ 524—527: Ի դէպ, այս հատուածը վկայակոչւում է Սարգիս Շնորհալու «Յաղագս Խաչի» երկում. տե՛ս ՄՄ, ձեռ. N 5618, թ.218բ—220ա:

85* «Խաչեցարի» վերաբերեալ դաւանաբանական երկերի մատենագիտութիւնը տե՛ս Յ. Ս. Անասեան, Հայկական մատենագիտութիւն, հտ. Բ, էջ 270—271 (§150—154):

86* Դազիմոնը բերդ—ամրոց է, որ գտնւում է Սեբաստիայի շրջանում, իսկ Կամբոնը, ինչպես երեւում է, նոյն Կեսարիոն դաշտն է:

87* Տե՛ս ԳԹ, էջ 87-90:

88* Տե՛ս Կորիւն, Վարք Մաշտոցի, բնագիրը ձեռագրական այլընթերցումներով, թարգմանութեամբ, առաջաբանով եւ ծանօթութիւններով՝ ի ձեռն պրոֆ. դ—ր Մանուկ Աբեղեանի, Երեւան, 1941, էջ 86:

89* Ակնարկում է Ակակիոս Մելիտինացու (մահ. 437 թ.) Սահակ Պարթեւին եւ հայոց նախարարներին յղած թղթերը. ԳԹ, էջ 14—15, 16—18, 19—21:

90*—91* Ակնարկւում է Ներսէս Բ Բագրեւանդացի կաթողիկոսի (548—557 թթ.) եւ Մերշապուհ Մամիկոնէից եպիսկոպոսի թղթերը. ԳԹ, էջ 55—58, 70—71, 72—75, մասնաւորապէս՝ էջ 76—77:

92*—93* Ակնարկւում են Մովսէս Բ Եղիվարդեցի կաթողիկոսի (574—604 թթ.) եւ Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսի (607—615 թթ.) թղթակցութիւնները (Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871 (հատուած երկրորդ), էջ 8—12, ԳԹ, էջ 146—148, 149—150, 151—152, 153—160, 161—162, 163, մասնաւորաբար՝ էջ 164—165, 176—177, 180—184, 185—195): Այս մասին մանրամասն տե՛ս Մ. արք. Օրմանեան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 567—568:

94* Հաւանաբար նկատի ունի Զենոն կայսեր օրօք 482 թ. հրապարակուած Հենոտիկոնը, որ յայտնի է նաեւ «Միատրութեան գիր, որ տուաւ բերել ի ձեռն երանելոյն Պերգմիոս Ագստեղիոսի ի բարերար արքայէ Զենոնէ եւ յԱկակայ, գլուխ եպիսկոպոսաց, որ են ի Կոստանդնոպոլիս առ երանելին Պետրոս, գլուխ եպիսկոպոսաց եւ հայրապետ հաւատարիմ քաղաքին Աղեքսանդրացւոց» ընդարձակ խորագրով: Սրանով փորձ էր արւում հաշտեցնել Քրիստոսի բնութեան վերաբերեալ միաբնակ եւ երկաբնակ տեսութիւնները: Սակայն, ինչպէս երեւում է, «Յակաճառութեան» այս տեղեկութեան մէջ շփոթ չկայ: Զենոն կայսեր գահակալութեան առաջին տարին 474—ն է: Մինչդեռ յայտնի է, որ Բաբկէն Ոթմսեցի կաթողիկոսն աթոռակալել է 490—ից եւ նեստորականութեան դէմ եկեղեցական ժողով է գումարել ոչ թէ Վաղարշապատում 474 թ., այլ՝ Դուինում 506—ին, երբ արդեն չկար Զենոնը. այս մասին տե՛ս Մ. արք. Օրմանեան, Ազգապատում, էջ 502 (§339):

95* Ակնարկում է Ներսէս Բ Բագրեւանդացի կաթողիկոսի օրօք (548—557 թթ.) Դուինում 554թ. նեստորականների դէմ գումարուած եկեղեցաժողովը, որին իր գործուն մասնակցութիւնը բերեց Պետրոս Սիւնեցին (մահ. 557թ.): Նրա՝ յիշատակուած երկերը տե՛ս Գալուստ Տէր—Մկրտչեան, Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս, Վաղարշապատ, 1902, էջ 39—41, 11—21:

96* Ակնարկում է յունաց Հերակլ կայսեր ժամանակ (610—641 թթ.) բացայայտօրէն յունական կողմնորոշում ցուցաբերած Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսի (630—641 թթ.) անփառունակ գործունէութիւնը:

97* Ակնարկում է Յովհան Օձնեցի կաթողիկոսի (717—728 թթ.) ջանքերով Մանազկերտում 726 թ. գումարուած եկեղեցաժողովը, որը նզովեց քաղկեդոնական վարդապետութիւնը: Օձնեցին յայտնի է նաեւ դաւանաբանական աշխատութիւններով («Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833): Նրան է վերագրւում Կանոնագրքի խմբագրումը: Օձնեցին իր մասնակցութիւնն է բերել «Գիրք թղթոցի» կազմումի եւ խմբագրման աշխատանքներին:

98* Նկատի ունի ս. Դիոնեսիոս Արիսպագացու «Յաղագս եկեղեցական քահանայապետութեան» եւ «Յաղագս երկնային քահանայապետութեան» երկերը. տե՛ս ՄՄ, ձեռ. N 49, թերթ 3բ—74բ, 74բ—158ա:

99* Տե՛ս Աթանաս, էջ 59:

100* Տե՛ս ՄՄ, ձեռ. N 946, թերթ 92 աբ:

101* Քաղուած է Ոսկեբերանի «Ի Խաչն Աստուածընկալ» կամ «Ի Խաչն Քրիստոսի» ճառից (Migne, PG, t. 50, col. 818, հմմտ. ՄՄ, ձեռ. N 1525, թերթ 457աբ. Ոսկեբերան, Մեկն. թղթ. Պօղոսի, հտ. Բ, էջ 765): Վկայութեան մէջ բաց է թողնուած բնագրի «Ի վերայ ջուրց գնացեալ... նոր ըստ աստուածութեան» հատուածը:

102* Եփրեմի անունով բերուած այս վկայութիւնը ոչ այլ ինչ է, քան Ապողինար Լաւոդիկեցու «Յաղագս հաւատոյ եւ մարմնաւորութեան» թղթի մէկ հատուածը, «որը յունարէնում, լատիներէնում եւ ասորերէնում աւանդուել է Յուլիոս Հռոմայեցու անուամբ». Բ. Ուտիե, Ապողինարի մի բնագրի հայերէն թարգմանութիւնը Եփրեմի անուան տակ, «Բանբեր Մատենադարանի», 1977, N 12, էջ 163, քաղուածքը տե՛ս անդ, էջ 165—166:

103* Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 192, տող 5—7: Հմմտ. Պօղոս Տարոնեցի, «Ընդդէմ Թէոփիստեայ», էջ 153:

104* Վկայութիւնը բացակայում է Մովսէս Քերթողահօր անունով յայտնի համանուն ճառում. տե՛ս «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», աշխատ. Ա. Տէր—Միքելեանի, Վաղարշապատ, 1883, էջ 255—261, նաեւ՝ ԳԹ, էջ 22—28:

105* Վկայութիւնը բացակայում է Դաւիթ Անյաղթին աւանդաբար վերագրուած «Ներբողեան ի Սուրբ Խաչն Աստուածընկալ» խորագրով երկում: Այն, ըստ երեւոյթին, «Օրհնեալ ես, փա՛յտ սուրբ, իմանալի բուրուառ...» սկսուածքով հատուածի նման է («Կորիւն վարդապետի, Մամբրէի Վերծանողի եւ Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 117: Հմմտ. ՄՄ, ձեռ. N1525, թերթ 466բ—474ա):

106* Խօսքն ուղղուած է Խաչիկ Արշարունի կաթողիկոսին (1058—1065թթ.):



ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱՍՆ ԴԱՒԹԻ ԵՒ ՍԱՒՈՒՂԱՅ...»

Հայագիտութեան երախտաւոր Կարապետ եպս. Տէր-Մկրտչեանն իր հրատարակած «Կնիք հաւատոյ» դաւանաբանական երկասիրութեան ներածութեան մէջ ծանուցում է, թէ ինքը հրապարակելու պատրաստ ունի N 3795 ձեռագրից «արտագրած «Մեկնութիւն թագաւորութեանն, որ վասն Դաւթի եւ Սաւուղայ եւ կործանելոյն Գողիաթի՝ Յովհաննու Ոսկեբերանի եւ Եփրեմի եւ Հիպոլիտեայ ասացեալ» մի բոլորովին անծանօթ հատուած»[ա]: Սակայն վերահաս մահուան պատճառով գիտնականին այնպէս էլ չվիճակուեց այն լոյս աշխարհ հանել: Խմբագիր այդ մեկնութիւնը յիշատակուած ձեռագրի հիման վրայ աղբիւրագիտական հմուտ ուսումնասիրութեամբ հրատարակեց G. Garitte-ը[բ]: Ըստ այդ ուսումնասիրութեան՝ խմբագիր մեկնութեան Թ, Ժ, ԺԲ, ԺԴ, ԼԱ, ԼԲ, ՀԱ, ՀԵ, ՂԷ, ՂԸ, ՂԹ, ՃԳ, ՃԴ, ՃԵ, ՃԶ, ՃԷ հատուածները քաղուած են ս. Եփրեմ Ասորու Թագաւորութեան մեկնութիւնից[գ], մնացեալ պարբերութիւնները, բացի ս. Հովհան Ոսկեբերանի անուամբ զետեղուած երեք պարբերութիւններից (ԺԶ, ԺԹ, ԻԵ), քաղուած են յունարէն բնագրով անյայտ Հիպոլիտոս Բոստրացու Թագաւորութեանց մեկնութիւնից: Այն, որ մեկնութեան առկայ հայերէն հատուածներն իրապէս Հիպոլիտոսինն են, հաստատւում է ոչ միայն տուեալ երկի վրացերէն թարգմանութեան փաստով[դ], այլեւ այդ հատուածների վրացերէն թարգմանութեան հետ նրանց համապատասխանութեամբ[ե]: Ինչ վերաբերում է ոսկեբերանեան հատուածներին, ապա, ինչպէս նկատում է Garitte-ը, դրանք ԾԸ պարբերութեան հետ միասին բացակայում են ոչ միայն Ոսկեբերանի՝ Դաւթին եւ Սաւուղին նուիրուած երեք ճառերում[զ], այլեւ՝ նիւթի հետ առնչուող նրա միւս երկերում[է]: Դրանք բացակայում են Եփրեմի եւ Հիպոլիտոսի երկերում նմանապէս[ը]:

Մեկնութեան քննական բնագիրը կազմուած է Մաշտոցի անուան Մատենադարանի NN 1007, 2039, 2040, 3795 ձեռագրերի հիման վրայ: Ստորեւ ներկայացնում ենք այդ ձեռագրերի ամփոփ նկարագրութիւնը[զ]:

N 1007-A

Տօնապատճառ: Ժամանակ՝ ԺԳ դ.: Վայր՝ Հռոմայ: Գրիչ՝ Առաքեալ: Ստացող՝ Յովհաննէս քհյ.: Թերթ՝ 467: Պրակ՝ Ա-ԾԱx10: Նիւթ՝ թուղթ: Մեծութիւն՝ 34,5x24: Գրութիւն՝ երկսիւն: Գիր՝ արեւելեան բոլորգիր: Տող՝ 25: Կազմ՝ բաց շագանակագոյն կաշի: Բովանդակութիւն՝ ճառք, Մեկնութիւնք (Անանիա վրդ., Յովհան Ոսկեբերան, Զաքարիա Զագեցի, Ստեփանոս Սիւնեցի, Յովհան Օձնեցի, Յովհաննէս Տարօնացի եւ այլք: Պատճառք ընթեցուածոց եւ տօնից: Անուանք ԺԲ առաքելոց):

N 3795-B

Տօնապատճառ: Ժամանակ՝ 1190թ.: Վայր՝ Այրիվանք: Գրիչ՝ Փիլիպպոս: Կազմող՝ Աղբայրիկ, Գորգիոս (գրչի որդիները): Ստացող՝ Ծողիկ: Թերթ՝ 293: Նիւթ՝ թուղթ: Մեծութիւն՝ 39,5x28: Գրութիւն՝ երկսիւն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 36: Կազմ՝ կաշեպատ տախտակ, դրոշմազարդ: Բովանդակութիւն՝ ճառք, Մեկնութիւն (հմմտ. N 1007):

N 2039-C

Տօնապատճառ: Ժամանակ՝ 1357թ.: Վայր՝ Կաֆայ: Գրիչ՝ Անտոն քհյ.: Կազմող՝ Մելքէսեդ դպր.: Ստացող՝ Անտոն քհյ.: Թերթ՝ 323: Պրակ՝ Ա-ԻԸx12:

ա Տե՛ս «Կնիք հաւատոյ ընդհանուր տուրք Եկեղեցւոյ...», Ս. Էջմիածին, էջ XXXVI-XXXVII:

բ G. Garitte, Fragments Arméniens du traité d'Hippolyte sur David et Goliathe, «Le Muséon> Revue d' Etudes Orientales», Louvain, 1963, t, 76, N 3—4, p. 277— 318 (բնագիր՝ p. 284—318< տողատակ՝ ֆրանս. թրգմ.)

գ «Ս. Եփրեմի մատենագրութիւնք», հտ. Ա. Վենետիկ 1836, էջ 374—377

դ Վրացերէն թարգմանութեան ուսումնասիրութիւնն իրականացրել է C. N. Bonwetsch-ը. Drei georgisch erhaltene Schriften von Hippolytus. Der Segen Jakobs, der Segen Moses, die Erzahlung von David und Goliath (Texte und Untersuchungen, 26, 1a), Leipzig, 1904, p. 79—93, յղուն ըստ G. Garitte, նշ. աշխ., p. 278

ե G. Garitte, նշ. աշխ., p. 282

զ Migne, PG, t. 54, col. 675—708

է Migne, PG, t. 63, col. 677, t. 64, col. 501—502, t. 48, col. 1013—1014

ը G.Garitte, նշ. աշխ., p. 281

զ Նկարագրութիւնը կատարուած է ըստ «Ծուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Ա, կազմեցին Օ. Եգանեան, Ա. Ջելթունցեան, Փ. Անթաբեան. Երեւան, 1965, էջ 457, 1086, 706: «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Դ, կազմեցին Ա. Ջեռշկերեան, Կ. Սուքիասեան, Տ. Ջեռսէեան (անտիպ): «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց...», հտ. Զ, կազմեցին Է. Տարութիւնեան, Տ. Հայրապետեան, Օ. Եգանեան, Տ. Ջեռսէեան (անտիպ):

Նիւթ՝ թուղթ, լուսագծերով ու լուսաղրոշմով: Մեծութիւն՝ 28,5x22: Գրութիւն՝ երկսիւն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 39—43: Կազմ՝ շագանակագոյն, դրոշմազարդ կաշի, միջուկը՝ տախտակ դռնակով: Բովանդակութիւն՝ ճառք, Մեկնութիւնք (նկարագրութիւնը տե՛ս Փ.Անթաբեան, «Տօնապատճառ» ժողովածուն, «Բանբեր Մատենադարանի», N 10, էջ 110—113):

N 2040–D

Տօնապատճառ: Ժամանակ՝ 1359թ.: Վայր՝ Ղրիմ: Գրիչ՝ Մարկոս, Գրիգոր սրկ., Նատեր: Ստացող՝ Մարգարէ աբղ: Թերթ՝ 460: Պրակ՝ 3+Ա—ԼԸx12+3: Նիւթ՝ թուղթ արեւելեան, լուսագծերով: Մեծութիւն՝ 26,5x17,5: Գրութիւն՝ երկսիւն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 33: Կազմ՝ շագանակագոյն, դրոշմազարդ կաշի, միջուկը՝ տախտակ: Բովանդակութիւն՝ ճառք, Մեկնութիւնք (հմմտ. N 2039):

AB եւ CD ձեռագրերը տարբեր խմբեր են ներկայացնում: Դատելով H. Mapp—ի թարգմանութիւնից, որ համապատասխանում է հայերէն թարգմանութեան ճԸ հատուածին՝ վրացերէնի հետ համերաշխ է AB ձեռագրախումբը: Հակառակ AB ձեռագրախմբի մէջ մտած ձեռագրերի հին լինելուն՝ դժուար է յստակօրէն հաստատել, թէ ձեռագրախմբերից որն է առաւել նախնականը: Այս պատճառով աշխատել ենք երկու խմբերն էլ, իբրեւ մեկնաբանական աւանդոյթը կրող միաւորներ, արտացոլել քննական բնագրում: Խմբերի մէջ առկայ տարբերութիւնները յատկանշական են ոչ միայն իմաստային եւ քերականական ակնյայտ զանազանութեամբ, այլեւ՝ բովանդակութեամբ: Այսպէս. ճԲա, ճԴա, ճԹա, ճԹբ, ճԻԳա հատուածները բացակայում են AB ձեռագրախմբում: Ընդ որում, ճԹբ հատուածը բերուած է ս. Եփրեմ Ասորու Համաբարբառ Աւետարանի մեկնութիւնից[ա]:

Ի տարբերութիւն ABC ձեռագրերի, D ձեռագրի լուսանցքներում բացակայում են հեղինականիշ անունները («Հիպ», «Յոհ»):

Յակոբ Քեռսէեան

ա «Ս. Եփրեմի մատենագրութիւնք», հտ. Գ, Վենետիկ, 1836, էջ 238

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱՍՆ ԴԱՒԹԻ ԵՒ ՍԱՒՈՒՂԱՅ Ի ՍՊԱՆԵԼՈՅՆ ԳԱՒՂԻԱԹԻ՝ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԵՒ ԵՓՐԵՄԻ ԵՒ ՅԻՊՈՂԻՏԵԱՅ ԱՍԱՑԵԱԼ[1]

Ա. «Եւ զղջացաւ Տէր, զի թագաւորեցոյց զՍաւուղ»[ա], ո՛չ իբրեւ զմարդ, որ յիսկզբանն[2] ոչ գիտէ զկատարածն. իսկ Աստուած ի սկիզբն իրին[3] զկատարած իրին տեսանէ, որպէս Մովսէս վկայէ, թէ՝ «Զղջացաւ Տէր, զի արար զմարդն ի վերայ երկրի»[բ]: Ո՛չ վասն առնելոյն, այլ թէ՝ յոր բարձրութենէ յորքան նուաստութիւն էջ:

Բ. «Զի թագաւորեցոյց զՍաւուղ»: Զի Յակոբ Յուդայի ետ զթագաւորութիւն հրամանաւ Տեառն. վասն է՞ր Սաւուղ թագաւորեաց ամս քառասուն փոխանակ Յուդայի, որ ոչ էր նմա անկ[4]:

Գ. Վասնզի յելանելն յԵգիպտոսէ եւ անցանելն ընդ ծովն Կարմիր, զի մինչ Մովսէս խաչանիշ գաւազանաւն հերձեաց զծովն Կարմիր, եւ ջուրն բաժանեցաւ[5] յաջմէ եւ յահեկէ նոցա, քանզի ահագին էր տեսիլն եւ արհատոքն, եւ յերկոտասան ցեղիցն ոչ ոք իշխեաց[6] մտանել զյետ Մովս[ես]ին [ի] ծովն, բայց՝ միայն ցեղն Բենիամենի: Եւ այս թուի, թէ երկնատր պարգեւ ետ նոցա զթագաւորութիւն՝ ըստ Պաւղոսի, թէ՝ «Ծնողին առաւել պատիւ ետ Աստուածն»[գ]:

Դ. Եւ երկրորդն՝ վասն Աքարայ մեղացն. յորժամ եկն[7] յԵրիքով, Աքար Յուդաեան գող գտաւ նզովից անտի[դ]: Եւ Յեսու՝ որդի Նաւեայ, բաժանեաց զիւրաքանչիւր վիճակս նոցա՝ ըստ ազգաց իւրեանց:

Ե. Երրորդ՝ վասնզի յաղթահարեաց Յուդաեան ցեղն, եւ չորս քաղաքս յափշտակեցին յորդոյն Բենիամենի:

Զ. Չորրորդ պատճառն՝ վասնզի Յուդաեան ցեղն խնդրեցին ի Սամուէլէ թագաւոր՝ որպէս թագաւորքն հեթանոսաց եւ զԱստուծոյ արհամարհեցին, որ ի ձեռն Սամուէլի թագաւորէր ի վերայ նոցա: Վասն որոյ ասէր Տէրն ցՍամուէլ. «Ոչ զքեզ արհամարհեցին, այլ՝ զԻս չթագաւորել ի վերայ նոցա»[ե]: Եւ լուաւ Տէր եւ ետ նոցա կոփիչ զՍաւուղ եւ ոչ թագաւոր:

Է. Եւ չորեքտասան նետեաց Աստուած վասն չորից պատճառանացն եւ ապա ետ զթագաւորութիւն Յուդաեան տոհմին՝ ըստ Յակոբայ ալրհնու-

ա Ա Թագ. ԺԵ 35
բ Ծնունդ Զ 6
գ Ա Կորնթ. ԺԲ 24
դ Տե՛ս Յեսու Է 1—26, Ա Մնաց. Բ 7:
ե Ա Թագ. Ը 7

թեան: Երկիր պագցեն քեզ որդիք հաւր քոյ, եւ ձեռն քո ի վերայ թիկանց թշնամեաց քոց[8]:

Ը. Եւ ասէ Տէր ցՍամուէլ. «Մինչեւ յե՞րբ սուգ առնուս[9] ի վերայ Սաւուղայ. եւ Ես անարգեցի զնա չթագաւորել ի վերայ Իսրայէլի. լի՛ց զեղջիւր քո իւղով եւ եկ՝ առաքեցից զքեզ առ Յեսսէ մինչեւ ի Բեթղեհէմ[10], զի տեսցես յորդոցն նորա թագաւորել ինձ»[ա]:

Թ. Ծածկեաց զանունն զԴաւթի. զի եղջիւրն իւղոյն[11] յայտնեսցէ զնա եւ ապրեցուսցէ զնա ի նախանձուէ եղբարց իւրոց. զի մի՛ կրեսցէ զայն, զոր կրեաց Յովսէփ[12] յեղբարցն իւրոց՝ վաճառեալ[13] վասն թագաւորելոյն:

Ժ. Նոյն երկիւղ էր եւ ասէ ի Սաւուղայ[14], զի եթէ հարցցի ի Սաւուղէ[15], երդնուցու[16] Սամուէլ[17], թէ՝ ոչ գիտեմ զայրն, որ հանդերձեալն է աւծանել թագաւոր[18]:

ԺԱ. «Եւ ասէ Սամուէլ. «Զիա՞րդ երթայց. լուիցէ Սաւուղ եւ սպանցէ զիս»: Եւ ասէ Տէր. «Ա՛ռ դու երինջ մի յարջառոց եւ ասասցես՝ զոհել Տեառն եկի: Եւ կոչեսցես զՅեսսէ ի զոհն, եւ Ես ցուցից քեզ՝ զինչ առնիցես եւ աւծցես, զոր ես ասացից[19] քեզ»: Եւ արար Սամուէլ, որպէս խաւսեցաւ ընդ նմա Տէր»[բ]:

ԺԲ. Եւ երկեաւ Սամուէլ երթալ, թէ գուցէ գիտասցէ Սաւուղ եւ սպանցէ զնա, նաեւ[20]՝ զԴաւիթ եւ զամենայն տուն հաւր նորա: Եւ Տէր[21] ետ նմա պատճառս, զի զնա[22] ի սպանութենէն արգելցէ[22ա] եւ զԴաւիթ ի Բեթղեհէմ[23] եւ զտունն յՅեսսէ ի մահուանէ ապրեցուսցէ:

ԺԳ. «Եւ եկն Սամուէլ ի Բեթղեհէմ[24], եւ զարհուրեցան ծերքն քաղաքին ի պատահելն նմա եւ ասէ. «Խաղաղութիւն է, զի զոհեալ Տեառն եկի, արբեցարուք եւ ուրախ լերուք ընդ իս այսաւր», եւ սրբեաց զՅեսսէ եւ զորդիս նորա եւ կոչեաց զնոսա ի զոհն»[գ]:

ԺԴ. Իսկ իբրեւ տեսին ծերքն[26] զսայլն, զոր տարաւ ընդ իւր ծերակոյտն Բեթղեհէմի գեղջն, զահի հարան երկիւղիւ[27], եւ թուեցաւ նոցա[28], եթէ սպանութիւն ինչ[29] գտաւ ի սահմանս[30] նոցա[31], եւ աւծեալ է, զի[32] տեսանիցէ[33], զի ձեռն սայլին գիտասցէ[33ա], թէ ի տահմանս որոյ գեղջ գտաւ սպանումն[34], ասաց զճշմարիտ զրոյցն ընդ ծերակոյտն[35], որ հարցին զնա[36], եւ աջ զնոսա ի պատարագն: Եւ զի երկմտեցան ի բանէն նորա[37], եցոյց նոցա արդեամբք զգործն եւ արտաքոյ[38], քան զարտնսն, հրամանաւ Տեառն մատոյց զպատարագն[39] ի տեղի, ուր չէր համարձակ[40], եւ արձակեաց զծերակոյտն:

ԺԵ. «Եւ եղեւ ի մտանելն նոցա[40ա] ետես զԵղիաբ եւ անց առաջի Տեառն: Եւ ասէ Տէր ցՍամուէլ. «Մի՛ ընդ տեսիլ նորա[41] եւ մի՛ ընդ մեծութիւն հասակին դորա հայեսցիս, զի անարգեցի զդա, զի ո՛չ որպէս տեսանէ մարդիկ[42], տեսանէ Աստուած. զի մարդ յերեսս[43] հայի, իսկ Աստուած՝ ի սիրտն»: Եւ կոչեաց Յեսսէ զԱմինադաբ եւ անց առաջի Սամուէլի եւ ասէ[44]. «Եւ ոչ զդա ընտրեաց Տէր[45]»: Եւ անցոյց Յեսսէ զԵլեթենեսին՝ զորդիսն իւր: Եւ ասէ Սամուէլ. Եւ ոչ ի դոցանէ ընտրեաց Տէր»[ա]:

ԺԶ. Եւ եկն Սամուէլ եղջերբն իւղովն առ Յեսսէ եւ ասէ. «Առաքեաց զիս Աստուած աւծանել[46] թագաւոր զմի յորդոց քոց»: Եւ Յեսսէ կարծեաց պատեհագոյն զառաջինն[47], եւ ասէ Սամուէլ. «Եւ ոչ հաճեցաւ ընդ նմա Տէր». եւ զերկրորդն եւ զերրորդն եւ զչորրորդն եւ զհինգերորդն, եւ խնդրելին ոչ գտանէր: Ասէ Սամուէլ ցՅեսսէ՝ ունի՞ս այլ:

ԺԷ. Ասաց Աստուած ցՍամուէլ, թէ աւծ զմիոյ յորդոցն Յեսսէ, բայց ոչ ասաց, թէ՝ զո՞վ աւծցես, այլ ասաց՝ յորոյ վերայ տեսանիցես նշան, նա է բարին: Արդ, ունէր զեղջեր իւղոյ սրուակին ի ձեռին իւրում Սամուէլ: Եւ իբրեւ սկսան որդիքն Յեսսէ անցանել առաջի նորա, եւ ոչինչ ետես նշան:

ԺԸ. «Ասէ Սամուէլ ցՅեսսէ՝ այդչա՞փ են մանկտիդ: Եւ ասէ Յեսսէ՝ կայ միւս եւս փոքրիկ եւ արածէ խաշինս: Եւ ասէ Սամուէլ՝ առաքեա՛ եւ կոչեա՛ զնա, զի ոչ բազմացուք, մինչ եկեսցէ նա[48]: Եւ առաքեաց Յեսսէ եւ կոչեաց զնա»[բ]:

ԺԹ. Մի՛ ոք զմանուկ փոքր պախարակեսցէ եւ մի՛ զծերն գովեսցէ: Յոլովք ի մանկութեան իմաստութիւն ցուցին եւ ի ծերութեան ընկճեցան, զի երեք մանկունքն զհուրն որպէս զկաւ կոխեցին, եւ Դանիէլ երկոտասանամեայ զառիւծսն որպէս զոչխար արար եւ զգազանութիւն[49] նոցա հաւատով սանձեաց եւ ընդ ժողովս եբրայեցւոցն վիճէր, եւ Պատրոս ի մանկութեան զԵկեղեցիսն հալածէր[51] եւ ի ծերութեան զԵկեղեցիս հաւատացեալոցն հաստատէր հաւատով Երրորդութեան: Եթէ իցես փոյթ յառաքինութիւն, ոչ վնասեսցէ զքեզ տարաժամ հասակն, ապա թէ՝ պղերգ, ոչ աւգնեսցեն քեզ սպիտակ հերքն:

Ի. «Եւ առաքեաց Յեսսէ եւ կոչեաց զԴաւիթ: Եւ նա էր կարմիր եւ աչաւք գեղեցիկ եւ բարւոք տեսանելեաւ[52] Տեառն»[գ]: Դաւիթ բազում ինչ իրաւք ատրինակ[53] էր Քրիստոսի: Բայց դու[54] ընդ այն զարմացիր, թէ զիա՞րդ ծառայք տիպք ատրինակի Տեառն ցուցան, եւ կամ որպէս յանձն առ եւ կատարեաց զխորհուրդս եւ զնմանութիւն արդարոցն Տէրն բոլորից: Որպէս ասէ ի Դաւիթ տեսանեմք, որ ոչ բանիւք միայն մարգարէացաւ, այլեւ՝ անձամբ զնմանութիւն Տեառն բերելով[55]: Խարտեաշ, այսինքն՝ կարմիր եւ սպիտակ. կարմրութեամբն Աստուածութեան նման եւ սպիտակութեամբն՝

ա անդ. ԺԶ 1
բ անդ. ԺԶ 2—3
գ անդ. ԺԶ 4—5

ա անդ. ԺԶ 6—10
բ անդ. ԺԶ 11
գ անդ. ԺԶ 12

մարդկութեան[56], զոր միացոյց ընդ Իւրում Աստուածութեանն՝ ըստ առակողին[56ա]. «Եղբաւր որդին իմ կարմիր է եւ սպիտակ, ընտրեալ ի բիւրուց»[ա]: Ըստ Տեառն բանին՝

ԻԱ. «Գտի զԴաւիթ՝ որդի Յեսսէայ, այր ըստ սրտի Իմոյ, որ արասցէ զամենայն կամս Իմ»[բ], այսինքն՝ որպէս Ես ծնայ ի սրտէ Իմմէ եւ յեւթենէ՝ զՈրդին միածին՝ ըստ Դաւթայ երգոյն, թէ՝ «Բղխեսցէ սիրտ իմ զպատգամս», եւ կամ՝ զբան զբարի, զի «բղխումն» եւ «պատգամ» կոչի Որդի[57]: Նոյնպէս եւ Դաւիթ՝ ըստ սրտի Իմում կատարիչ կամաց Իմոց, շնորհաւք որդիացեալ:

ԻԲ. Արդ[57ա], զո՞րս արդեաւք[58] զսորայս գովեցից յառաջագոյն զգործոցն առաքինութիւն[59], որ բանիւք մարգարէացաւ զհանդերձեալսն եւ գործովք նմանեաց Քրիստոսի:

ԻԳ. Արդ, ո՞վ[60] ոչ երանեսցէ զարդար հայրապետսն, [որք], ըստ Աւետարանին Քրիստոսի, չարչարեալ կատարեցան[61], որ նախ քան զաւրէնսն աւրինաւորք եւ յառաջ, քան զԱւետարանս, աւետարանեալք[62]:

ԻԴ. Իմացարո՛ւք յառաջագոյն, որ Դաւիթ երանելին աւրինակ Քրիստոսի եղեւ եւ յետոյ առ Փրկիչն կատարեցաւ[63] եւ շնորհաւք առաքելոցն Եկեղեցւոյ սրբոյ տուաւ: Դաւիթ, խարտեաշ գոլով, նշանակ արեան Քրիստոսի, որով վիրաւորեցաւ սառնաբա[64] Բելիարն:

ԻԵ. «Եւ ասէ Տէր ցՍամուէլ՝ արի՝, աւծ զԴաւիթ, զի դա է բարի»[գ]: Այս Դաւիթ մանուկ էր փոքր[64ա] յաննշան հաւրէ եւ յերկիր հայէր եւ ի հովուականս[65] ի քաղաքաց փախչէր եւ յամբոխից եւ յանապատի զիմաստութիւն ցուցանէր եւ ոչ ինչ հաղորդութիւն ընդ կենցաղոյս ունէր[66], այլ յառաջին հասակէն[67] դաստիարակէր առաքինութեամբն եւ զհեզութիւն ընտանեցուցանէր[68] ինքեան: Իբր ի[68ա] նաւահանգստի նստէր յանապատին խաղաղութեան՝ գառանցն խնամելով, ի թագաւորութիւն մարդկան վարժեցաւ՝ մանուկ՝ հասակաւ, ալեւոր՝ մտաւք, եւ տղայութիւնն ոչ խափանեաց զառաքինութիւնն, յաղթէր ոչ բնութեամբ մարմնոյն, այլ՝ հաւատոցն ուժով[69]:

ԻԶ. «Եւ առ Սամուէլ զեւղն աւծութեան եղջիւրովն եւ աւծ զԴաւիթ ի մէջ եղբարցն իւրոց: Եւ խաղաց Հոգին Տեառն ի վերայ Դաւթի յաւրէն յայնմանէ եւ առ յապա»[դ]:

ԻԷ. Իսկ[70] իբրեւ եմուտ Դաւիթ, եռաց եղջիւր իւղոյն ի վեր կոյս, եւ խաղաց Հոգին եւ իւղն ի միասին ի վերայ Դաւթի: Եկն Դաւիթ գտեալ զիւղն, աւծաւ հրամանաւ Տեառն. մարդոյ[71] սպասաւորութիւն ետ զիւրն ի

ա Երգ Ե 10
բ Գործք ԺԳ 22
գ Ա Թագ. ԺԶ 12
դ անդ. ԺԶ 13

վերայ նորա[72], փոխանակ թագի եւ ծիրանեաց: Եւ զնաց Դաւիթ՝ ունելով զթագաւորութիւն. ո՛չ զրահս եւ ո՛չ տերս, ո՛չ վահան[73], ո՛չ զենս մարմնականս ունելով, այլ՝ զկամս Աստուծոյ՝ զաւրաւոր, քան զամենայն զինուորութիւնս:

ԻԸ. Երկու աւծմունք եղեն յերանելւոյն Սամուէլի[74]. մի՝ ի վերայ Սաւուղայ, երկրորդ՝ ի վերայ Դաւթի: Սաւուղ աւծաւ յայտնապէս եւ ոչ արժանի Աստուծոյ, այլ՝ իբրեւ մարդկան յանցաւորաց աւրինացն Աստուծոյ, որք թագաւոր խնդրեցին իբրեւ զհեթանոսս, զի պաշտեսցեն կուռս: Եւ բարկացաւ Տէր եւ ետ նոցա կոփիչս եւ ոչ՝ թագաւոր, որպէս Հերովդէս՝ յանցաւոր Աստուծոյ աւրինացն[75], մարդկան[76] յանցաւորաց[77] թագաւորեաց[78]:

ԻԹ. Եւ[79] Դաւիթ գաւլտ[80] աւծաւ ի Բեթղեհէմ, զի Աստուած աւծեալն հաւր, որ հանդերձեալ էր ծոցածինն Հաւր[81], ծնանիլ ի Դաւթայ զաւակէ ի Բեթղեհէմ եւ ոչ յայտնի երեւեցաւ[82], որպէս ասաց Դաւիթ. «Վասն այսորիկ աւծ զքեզ Աստուածդ իմ եւ Աստուած քո ի ձէթ ուրախութեան[83] առաւել, քան զամենայն աւծեալսն»[ա]:

Լ. Սաւուղ խեցեղէն եղջերք աւծաւ, զի դիւրեաւ փշրելոց էր, զի փոքր մի ժամանակ էր թագաւորութիւն նորա, իսկ Դաւիթ հզաւր եղջերք աւծաւ, որպէս ինքն ասէ. «Ծագեցից եղջիւր ի Դաւիթ»[բ], եւ Մովսէս. «անդրանիկ ցլու եղջիւր նորա եւ եղջերք մի եղջերուի ի վերայ նորա»[գ]: Եւ Յովք ասէ. «Կամեցաւ մի եղջիւրոյն ծառայել»[դ], որ է Քրիստոս:

ԼԱ. Զի ի գալն Դաւթի յայտնութիւն եղեւ առ Սամուէլ, թէ սա է Աւծեալն: Եռաց եղջիւր իւղոյն[84] իբրեւ աւծակէր Դաւիթ:

ԼԲ. «Յարեաւ Սամուէլ եւ գնաց ի Յարեմաթեմ: Եւ Հոգի Տեառն վերացաւ ի Սաւուղայ, եւ խեղդէր զնա այսն չար ի Տեառնէ»[ե]:

ԼԳ. Հեռացաւ Հոգին Տեառն ի Սաւուղայ վասն անլաւութեան նորա, եւ ունէր զնա ոգին չար ի Տեառնէ:

ԼԴ. Եւ այս յիրաւի, քանզի պարտ էր զյանցաւորն աւրինացն Տեառն հրեշտակի յանցաւորի մատնել եւ զԱստուծոյ ընտրեալն՝ զԴաւիթ՝ երկնատր շնորհաւքն զարդարել: Վասն այսորիկ վկայեաց[85] իսկ հոգին, որ վերացաւ ի Սաւուղայ, այս է՝ Հոգին Սուրբ, որ զնաց ի հրէիցն, եւ այսն չար, որ, մտեալ ի Սաւուղ, խեղդէր զնա, նոյնպէս եւ այսքն չարագոյնքն, որ մտեալ ի յոգիս ազգացն Սաւուղայ, չարաչար խեղդեն զնոսա:

«Ասեն ծառայքն Սաւուղայ. «Այս չար ի Տեառնէ խեղդէ զքեզ,

ա Սաղմ. ԽԴ 8, Եբր. Ա 9
բ Հմմտ. Եզեկ. ԻԹ 21:
գ Բ Աւրին., ԼԳ 17
դ Յովք ԼԹ 9
ե Ա Թագ. ԺԶ 14

խնդրեսցուք այր մի, որ երգեսցէ քնարաւ եւ լինիցի դիւրութիւն քեզ»: Եւ ասէ Սաւուղ. «Տեսէ՛ք ինձ այր մի, որ բարւոք երեւեսցէ, եւ ածէք առ իս»: Պատասխանի ետ մի ոմն ի մանկանցն նորա եւ ասէ. «Տեսի զորդի Յեսսեայ բեթղեհէմացւոյ, եւ գիտէ սաղմոս եւ այր իմաստուն եւ հանճարեղ եւ բարիոք տեսանելեաւ[86], եւ Տէր ընդ նմա»[ա]: Վասն այսորիկ վկայեաց Գիրն եւ արքն, թէ՝ «էր Դաւիթ իմաստուն, եւ Տէր ընդ նմա»:

«Եւ առաքեաց Սաւուղ հրեշտակս առ Յեսսէ եւ ասէ. «Առաքեա՛ առ իս զԴաւիթ՝ զորդին քո, որ ի հաւտին քո է»: Եւ առ Յեսսէ արդու մի փոխնդոյ հացի, որ է կապիճ մի եւ տիկ մի գինւոյ եւ ուլ մի յայծեաց, եւ առաքեաց ի ձեռն Դաւթի Սաւուղայ: Եւ եմուտ Դաւիթ առ Սաւուղ եւ կայր ի սպասու առաջի նորա եւ սիրեաց զնա յոյժ եւ եղեւ նմա կապարճակիր: Եւ լինէր, յորժամ հասանէր այսն չար ի վերայ Սաւուղայ, առնոյր Դաւիթ զքնարն եւ նուագէր ձեռաւքն իւրովք եւ հանգուցանէր զՍաւուղ, եւ մեկնէր ի նմանէ այսն չար»[բ]:

ԼԵ. Սա, պատանեակ գոլով, արածէր զխաշինս հաւր իւրոյ, որպէս Քրիստոս մանուկ, ի հաւրէ մանկանալով, ի սուրբսն հանապազ հովիւ ճշմարիտ քաջ յայտնեցաւ:

ԼԶ. Դաւիթ[86ա] բարեկարգ զսաղմոսն[86բ] կազմէր ի քաղցր քնարաւն, զաւրհնութիւնս Աստուծոյ յերկինս առաքէր, եւ ի յերգելն Դաւթի դիւրանայր Սաւուղ: Այս շնորհք Հոգւոյն Սրբոյ է մարգարէութեան, որ ի մէջ մարդկան մնաց անպակաս, մինչեւ ի Բանին Աստուծոյ գալուստն: Եկաց Դաւիթ առ Սաւուղ, հարկանէր զքնարն եւ երգէր զսաղմոսն, եւ փարատէր արքայ: Մերձեցաւ Տէր մեր Յիսուս Քրիստոս յայսահարսն եւ յախտաժետս նոցա եւ առժամայն բժշկեաց զնոսա: Դաւիթ զհոգին չար ի Սաւուղայ հալածէր եւ

Լէ. զժողովուրդն ի ծառայութենէ ազատէր յայլազգեացն[87], եւ Որդին Դաւթայ ըստ մարմնոյ զայսն պիղծ ի հաւատացելոց սրբոց հալածեաց եւ զմարդիկ ի կռապաշտութենէ փրկեաց: Դաւիթ յանհաւատիցն վրէժ առնոյր, եւ Որդին Դաւթի զդեւսն տանջէր[87ա]:

ԼԸ. Քանզի յորում աւուր բնակեաց Հոգին Սուրբ ի Դաւիթ, ի նմին աւուր գնաց ի Սաւուղայ: «Եւ այսն չարչարէր զնա», զի ի ձեռն քաղցր քնարի նորա եղիցի անդորրութիւն Սաւուղայ: Վասն այսորիկ խնդրեցին ծառայքն նորա զԴաւիթ[88]: Եւ դարձաւ Դաւիթ առաջնորդութեամբ Աստուծոյ ի տուն փաւր իւրոյ:

ԼԹ. «Եւ ժողովեցան յայլազգիքն ի պատերազմ եւ բանակեցան ի Սոքովթ Հրէաստանի: Եւ Իսրայէլ ժողովեցան ի հովիտսն, եւ այլազգիքն

ա անդ. ԺՁ 15—18
բ անդ. ԺՁ 19—23

կային յայնմ կողմանէ, եւ Իսրայէլ՝ յայսմ կողմանէ ի լերինն եւ հովիտսն տափարակ ի մէջ նոցա»[գ]: Իսկ դառնալն Դաւթի առ հայր իւր ցուցանէ զՏեառն մերոյ՝ կատարելով զտնաւրինակսն ամենայն, եւ դարձեալ վերացաւ առ Հայր Իւր ամպով եւ լուսափայլ հրով[88ա]:

Խ. Երկու լերինքն նշանակեն զերկու Կտակարանսն՝ զՀին եւ զՆոր:

ԽԱ. Եւ տափարակն ի մէջ երկուց լերանցն զհեշտութիւն աշխարհիս գուշակէ՝ ցուցանելով զխաբէութիւն եւ զցանկութիւն աշխարհիս, որում փափկացեալ՝ մարդիկ կորնչին:

ԽԲ. «Ելանէր այր զաւրինաւոր ի ճակատէ այլազգեացն Գողիադ անուն»[բ]: Իսկ իջանելն Գողիադու զանկումն սատանայի նշանակէ, որ բնակէ ի դիւրասէր միտս մարդկան եւ մարտնչելի ընդ ընտրեալսն՝ արհամարհելով զսուրբսն Աստուծոյ[88բ]:

ԽԳ. «Բարձրութիւն նորա՝ չորս (վեց) կանգուն»[գ]: Քանզի սատանայ ի չորս ծագս աշխարհիս եւ ի չորս բնութիւնս մարդկան զիւր խաբէութիւն ելից: Զվեցհազարեան դարուց իշխանութիւն ցուցանէ, որ միապետեալ ունէր ի վերայ մարդկան բռնաւորն սատանայ՝ Գողիադն աներեւոյթ[88գ]:

ԽԴ. «Եւ թզաւ»[դ]: Զի բարձրացաւ ընդդէմ Աստուծոյ հպարտութեամբ եւ ի Տեառնէ սատակեցաւ[89] որդի սատանայի երեւելն, որ յայնժամ զնմանութիւն Գողիադու ցուցանէր:

ԽԵ. «Զրահս վերտս զգեցաւ»[ե]: Իսկ սորա զրահս շղթայաձեւս զգեցեալ երեւեցոյց զաւձին կերպ, որ սողոսկեալ եմուտ ի բնութիւնս մարդկան:

«Հինգ հազար սկեղ պղնձոյ եւ երկաթոյ»[զ], որ նշանակէր, որ ի հինգ հազար դարոյն եկն Քրիստոս յաշխարհս եւ դիմամարտեաւ ընդ սատանայի, յորում միաչափ սատանայ զիւր մարտն ի պատերազմ յարուցանէր: Եցոյց զաւձին զրահն ծակ, որ է սատանայի բազմամեքենայ խորհուրդ, զի որպէս ի Դաւթայ Գողիադ սատակէր, նոյնպէս[90] եւ ի Քրիստոսէ գլուխ աւձին հատցի[91]:

ԽԶ. «Սաղաւարտ պղնձի ի գլուխ նորա»[է]: Իսկ սաղաւարտովն զգլուխն ծածկեալ՝ այսու իմանամք զգայութիւն մարդկան փակեալ բանսարկուին: Զաչս տեսանելով զգործս Աստուծոյ՝ զականջս ոչ լսել աւրինացն Աստուծոյ եւ բերանոյ ոչ բանալ ի գովեստ Աստուծոյ: Բոլորովին

ա անդ. ԺԷ 1, 3
բ անդ. ԺԷ 4
գ անդ
դ անդ. ԺԷ 5
ե անդ
զ անդ
է անդ

զգայութիւն մարդկան դարձոյց ի ծառայութիւն ինքեան բանսարկուն:

«Առնապանք պղնձիք ի վերայ կարթից նորա»[ա]. զահագին յանդգնութիւն չարին նշանակէ. զյանդգնութիւն եւ զահաւորութիւն՝ ցուցանելով աւտարմարդ ձեւով եւ ո՛չ որպէս ի սկզբանն ստեղծաւ: Երեւեցաւ առ սմա եւ դանակ՝ բանիցն հայհոյութիւն[92]:

ԽԷ. «Վահան պղնձի ի վերայ թիկանց նորա»[բ]: Այս զբոլոր բնութիւնս երեւեցուցանէ միապետեալ եւ առ ինքն յանկուցեալ, որ եւ զբոլոր աշխարհս ժողովեաց սատանայ կռապաշտութեամբ, որպէս Յովհաննէս ասէ. «Աշխարհ ամենայն ի չարի կայ»[գ]:

ԽԸ. «Բուն գեղարդեան նորա իբրեւ ստոր ի ոստայնանկաց»[դ]: Այս չարին խաբէութիւն է: Որպէս մարգարէն Եսայի ասէ. «Զձուս քարբից ծակեցին»[ե]: Այնոքիկ են, որ ի ստորինս խորհին եւ սատանայի հաւատան: Որպէս Եսայի ասէ, «ոստայն նոցա ոչ եղիցի հանդերձ, քանզի[93] յոստենս սարդից անկանին եւ ոչ զգեցցին զգործս ձեռաց իւրեանց, զի անաւրէնութիւն[94] է»[զ]:

ԽԹ. «Եւ զինակիր նորա առաջի նորա երթայր»[է]: Զայնեաց ի ճակատն Իսրայէլի եւ ասէ. «Ընդէ՞ր ելանէք ճակատել ընդդէմ մեր ի պատերազմ. ո՞չ ապաքէն ես այլազգի եմ, եւ դուք՝ իսրայէլացիք: Ընտրեցէք դուք այր մի, եւ ելցէ առ իս: Եթէ յարկանիցէ զիս, եղիցուք մեք ձեզ ի ծառայութիւն, ապա թէ ես յաղթեցից, եղիջիք դուք մեզ ի ծառայութիւն. տո՛ւք այր մի, եւ մենամարտեսցուք երկոքեանս»[ը]: Եւ ասէ այլազգին. «Ես նախատեցի զճակատդ Իսրայէլի այսաւր»: Արդ, սա, հպարտացեալ ի զէնն իւր[94ա],

Ծ. որ նշանակէ զսատանայ, այլազգաւքն կատարել զկամս իւր[95], զգեցեալ զնոսա իբրեւ զզէն պատերազմի ընդ սուրբս, որպէս եւ նա ասէր՝ ես եմ այլազգի, եւ դուք եբրաեցիք[96]: Արհամարհեալ[97] են հաւատք եւ աստուածապաշտութիւն առաջի սատանայի:

ԾԱ. Եցոյց, որ այժմ[98] լինին տեսիլք յաշխարհի[99] ազդեցութեամբ սատանայի[99ա], որ ազդեաց Կայինի՝ զեղբայրն սպանանել եւ աշխարհի սպանումն եւ նախանձ եւ ագահութիւն ուսոյց[100]: Այս յայտնէ զբանսարկուին թագաւորելն եւ արհամարհել զմարդիկ:

ԾԲ. «Եւ[101] մատուցեալ այլազգւոյն՝ կանխեալ արձանանայր աւտրս

ա անդ. ԺԷ 6
բ Անդ:
գ Ա Յովհ. Ե 19
դ Ա Թագ. ԺԷ 7
ե Եսայի Ծ 5
զ անդ, Ծ 5—6
է Ա Թագ ԺԷ 7
ը անդ. ԺԷ 8—11

քառասունս ախոյեան՝ խնդրելով յԻսրայէլէ»[ա]: Նշանակէր Գողիադ սատանայի եւ Դաւիթ՝ Քրիստոսի, որ եւ Տէր մեր, աւտրս քառասունս փորձեալ ի սատանայէ, յաղթեաց փորձողին եւ զգետնեաց զնա:

ԾԳ. «Եւ[102] իբրեւ լուաւ[103] Սաւուղ եւ Իսրայէլ զբանս այլազգւոյն, զահի հարան եւ երկեան յայժ»[բ]: Եւ[104] զի խռովեցան այլազգիքն՝ տեսեալ զԴաւիթ եւ յարուցին պատերազմ ի վերայ նորա: Նշանակէր զայն, որ ի Դաւթայ գալոց էր Փրկիչ աշխարհի: Եւ զարմացեալ վասն անուան նորա ազգաց անհաւատիցն[105]: Իսկ ահաբեկեալ Սաւուղայ՝ վասն փառաւորելոյ մեծին Դաւթի էր: Եւ երկոքեան որդիքն մեծամեծք Յեսսեայ երթեալ էին զհետ Սաւուղայ ի պատերազմն, եւ Դաւիթ յառաջագոյն գնացեալ էր ի Սաւուղայ, արածէր զխաշինս հաւր իւրոյ ի Բեթղեհեմ:

ԾԴ. «Եւ ասէ Յեսսէ ցԴաւիթ. «Առ դու զարդոյս փոխնդոյս եւ[106] զտասն նկանակդ տար եղբարց քոց[107] գ»: Իսկ փոխինդն նշանակէր զթեթեւութիւն աւրինացն, որ ոչ լինէր բաւական փրկել զմարդիկ:

«Եւ տասն մաճառակ կաթին բերեալ հազարապետին»[դ]: Իմանալի է այսու զերանելի առաքեալսն. զհաւատարիմն Պաւղոս հանդերձ երկոտասանեաւքն: Իսկ ուլն արձակ նշանակէ զընդարձակութիւն մարդկան ի մեղս: Իսկ տասն նկանակն՝ զտասն պատգամս աւրինացն, զոր ետ Աստուած ի ձեռն Մովսիսի որդոցն Իսրայէլի[108], զոր փոխանակ այն ետ մեզ Քրիստոս զտասն մաճառակս արդար պատուիրանացն Իւրոց, որ է Հայր մեր, որ յերկինս:

«Եւ կանխեալ Դաւիթ ընդ առաւաւտն գնաց եւ[109] ի բանակն»[ե]: Իսկ առաքելն Յեսսեի զԴաւիթ ի տես եղբարցն՝ աւրինակ Քրիստոսի, որ ի Հաւրէ առաքեցաւ տեսչութիւն առնել բնութեանս մարդկան, զոր էառ Քրիստոս՝ խոնարհեալ ի մեզ զհոգի, զմարմին եւ զմիտս, որ միացոյց ընդ Իւրում Աստուածութեան եւ հաւասարեալ նմանեաց մեզ բաց ի մեղաց:

«Եւ զաւրն ելանէր ի ճակատն. եւ աղաղակեցին իսրայէլացիքն հանդէպ միմեանց: Եթող Դաւիթ զկարասին ի ձեռն Վանապանին եւ գնաց ի ճակատն, եհարց զողջունէ զեղբարցն: Եւ ահա Գողիադ ելանէր ի Գեղայ՝ ի կողմանէ այլազգեացն եւ խաւսեցաւ ըստ առաջին բանիցն: Եւ լուաւ Դաւիթ եւ Իսրայէլ զբան այլազգւոյն: Եւ զարհուրեցաւ Սաւուղ եւ ամենայն Իսրայէլ: Եւ ասէ Սաւուղ. «Եթէ իցէ այր, որ սպանանիցէ զնա, մեծացուցէ նա արքայ, եւ զդուստր տացէ նմա եւ զտուն հաւր իւրոյ արասցէ ազատ ի մէջ Իսրայէլի»[զ]:

ա անդ. ԺԷ 16
բ Հմմտ. անդ ԺԷ 24—25:
գ անդ, ԺԷ 17
դ անդ, ԺԷ 20
ե անդ, ԺԷ 20
զ անդ, ԺԷ 22—25

ԾԵ. Եւ Դաւիթ երթայր տեսանել փայլատակումն սուսերաց պատերազմին եւ յոլովք դիաթաւալք՝ անկեալք ի սրոյ: Հովիւն ի պատերազմի եւ պատերազմողքն յուլացեալք[110] եւ ոչ զձայնն անգամ լսել կարէին զպատերազմողացն: Հովիւն, որ ի լերինս եւ յաղբերակունս[111] շրջէր, խաւսեցաւ[111ա] ըստ առաջին բանիցն: «Եւ լուաւ Սաւուղ եւ Իսրայէլ զբանս այլազգոյն, եւ զարհուրեցաւ Սաւուղ եւ ամենայն իսրայէլացիքն[111բ]»: Յիրաւի երկնչէր[112] Սաւուղ եւ ամենայն հրեայքն, զի Դաւիթ փառաւորեսցի, եւ պատերազմ յարդարեսցի[113]:

ԾԶ. «Եւ Դաւիթ խաւսեցաւ ընդ յարսն որ շուրջ կային, եւ ասէ՝ զի՞նչ առնիցէ առն, որ սպանանիցէ[114] զնա[115]»[ա]: Եւ Դաւիթ ոչ հայէր ի մեծութիւն նորա, որ ամայի էր յԱստուծոյ. մեծ էր[115ա] նաւն, այլ նաւ ուղղիչ ոչ ունէր: Ոչ երկնչէր Դաւիթ ի նմանէ, զի թշնամի էր Աստուծոյ[115բ]: Թէպէտ մարմնով զաւրաւոր էր, այլ ի վերուստ հրամանէն Աստուծոյ տկար[116] էր: Փոքր էր Դաւիթ եւ տկար, այլ մեծ էր Տէր, տրուպ էր զինուորն[117], այլ, որ առաքեացն, զաւրաւոր էր:

«Իբրեւ[118] լուաւ երէց եղբայր նորա, բարկացաւ ի վերայ նորա, թէ ընդէ՞ր բնաւ իջէր այսր եւ յոյր ձեռն թողէր զսակաւ ոչխարսն: Գիտեմ զհպարտութիւն քո, զի վասն տեսանելոյ զպատերազմս իջեր[118ա]»[բ]:

ԾԷ. Ոչ էր հպարտութիւն, այլ՝ հաւատք, ոչ՝ ամբարհաւաճութիւն, այլ՝ երկիւղածութիւն[119], վասն որոյ ոչ զբանս զգենոյր, այլ՝ հաւատս[120]:

ԾԸ. Ո՛վ նախանձ, հուր անշէջ. զոր աւրինակ՝ յասրէն ծնանի զորդն[121], որ ուտէ զնա, նոյնպէս եւ նախանձն զնախանձոտն մաշէ: Եւ ընդ որում նախանձին, զնա պայծառագոյնս պատրաստիցէ[122]: Այսպէս եւ Յովսէփ, ատեցեալ յեղբարցն, վաճառեցաւ, եւ նոքա եկեալ երկրպագէին եւ ծառայէին նմա[123]: Եւ Յովսէփ թագաւորեաց. եւ Դաւիթ նշանակէր: Երէց եղբայր գոլով հրեայքն, վասն միայն ճանաչելոյն զԱստուած, եւ բարկանալն՝ այս նախանձոտ բարքն հրէիցն ընդ Փրկչին: Ըստ մարգարէին՝ նոքա կամէին, թէ հրոյ ճարակ լինեալ էին, քանզի ծնեալն Յիսուս ի Բեթղեհեմ Հրէաստանի:

ԾԹ. «Եւ Դաւիթ ասէ՝ զի՞նչ արարի, ո՞չ ապաքէն բանք են»[գ]: Եւ զինչ հեզն Դաւիթ՝ իմաստուն այրն Աստուծոյ ասէր, թէ տեսանելոյ աղագաւ զպատերազմս եկի: Զի՞ նախանձ[124] իմն[125] բան տեսեր[126] եւ ոչ՝ բարութեան[127], եւ ոչ համբերես:

Կ. «Եւ Դարձաւ Դաւիթ ի նմանէ ի միւս կողմն, զնոյն բանս խաւսեցաւ, եւ նմա պատասխանի ժողովուրդն[128], ըստ առաջին բանիցն: Եւ լուր

ա անդ. ԾԷ 26
բ անդ. ԾԹ 27—28
գ անդ. ԾԹ 29

եղեն բանքն Դաւթի առ Սաւուղ»[ա]: Եւ պատասխանեալ բանակին, թէ տացէ Սաւուղ զՄերովբ դուստր իւր Դաւթի ի կնութիւն, որ ունի աւրինակ զազգին հրէից առաջին ժողովրդոցն Աստուծոյ, եւ ապա յետոյ տալն զնա, որ ցուցանէ զելանելն հրէից ի ծառայութենէն: Իսկ փոխանակ նորա լինել կրտսերն՝ այս աւրինակ հեթանոսաց, որ եղեն հարսն Սուրբ Փեսային Քրիստոսի՝ մեծի Արքային:

«Եւ ասէ Դաւիթ ընդ Սաւուղ՝ մի՛ անկցի սիրտ Տեառն իմոյ ի վերայ իւր, ծառայ քո երթիցէ եւ մարտիցէ ընդ այլազգւոյնն»[բ]: Իսկ[128] ասելն Դաւթի՝ ծառայ զինքն՝ աւրինակ Քրիստոսի, որ մտադիւրն ծառայեաց բազմութեան մարդկան[129]:

ԿԱ. Թագաւորն պակուցեալ ընդ երկիր հայէր, եւ ասէ Դաւիթ. «Ընդէ՞ր տխրեցան դէմք տեառն իմոյ, ո՞վ է նա, որ ոչ երթայց եւ առից զգլուխ նորա»:

ԿԲ. «Եւ ասէ Սաւուղ՝ դու մահակ ես, եւ նա՝ այր պատերազմող ի մանկութենէ»[գ]: Ասէ Դաւիթ. «Մի՛ հայիր յերեւելի հասակս, այլ՝ յիմանալին, մի՛ տեսանէր, զի փոքր եմ, այլ մեծ են իմաստութիւն Աստուծոյ, որ յիս են»:

ԿԳ. Սաւուղ ըստ մարդկան խորհէր[129ա] եւ ըստ բանին Աստուծոյ ոչ իմանայր:

ԿԴ. Դաւիթ տղայ էր խարտեաշ եւ գեղեցիկ աչաւք[130], փոքր մարմնով եւ մեծ հոգւով: «Նա[131] այր պատերազմող ի մանկութենէ»,

ԿԵ. որ թիւնաւքն զնախաստեղծն յաստուածային փառացն մերկացոյց եւ Կայէնի ուտոյց սպանութիւն եւ զհսկայսն բորբոքեաց ցանկութեամբ կանանց եւ զՔամ յորդորեաց ծիծաղել զհարբն եւ Եսաւաւ[132] հալածեաց զՅակովբ եւ զՅովսէփ ետ վաճառել եղբարցն եւ փարատնիւ զժողովուրդն չարչարեաց, եւ յանապատին ետ պաշտել զորթն եւ զայլսն բազումս եւ զԳողիադ պատերազմող յառաջ էած, զոր, տեսեալ[133] Դաւիթ, ոչ երկեաւ ի սիրտ իւր:

ԿԶ. «Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. «Արածէր ծառայ քո զխաշինս հաւր իւրոյ, եւ յորժամ գայր առիւծ կամ արջ եւ առնոյր ոչխարս, ես ելանէի զհետ նորա եւ հարկանէի զնա եւ կորզէի ի բերանոյ նորա, եւ եթէ յառնէր ի վերայ իմ, ունէի զփողից նորա եւ սպանանէի զնա: Եւ զառիւծն եւ զարջն սատակէր ծառայ քո[133ա]»[դ]:

ԿԷ. Ո աստուածային երանելի ձայնին, որ ելանէր ի բերանոյ Դաւթի[134]: Ո Դաւիթ, ասա՛ ինձ, ո՞ր գիրք վկայեն քեզ՝

ա անդ. ԾԷ 30—31
բ անդ. ԾԷ 32
գ անդ. ԾԷ 33
դ անդ. ԾԷ 34—36

ԿԸ. վասն այսոցիկ եղելոյ ի քէն: Գիտեմ, զի մարգարէանաս վասն Քրիստոսի եւ ոչ ստես.

ԿԹ. զի եկն ճշմարիտն Դաւիթ, որ ի քո զաւակէ ի սրբոյ Կուսէն ծնաւ, որ հովուէ զոչխարս Հաւր Իւրոյ եւ զմահ իբրեւ զառիւծ մեռոյց եւ զարջն, որ են մեղք աշխարհիս, ջնջեաց եւ զգայլն մոլար հալածեաց, եւ խաչիւն զգլուխ աւձին փշրեաց, եւ զբանաւոր ոչխարս ի բերանոյ դժոխոցն եհան:

Հ. Այս են ասացեալքս ի քէն, զի մեք ծանիցուք զարդար հովիւն քաջ զՔրիստոս եւ փառաւորեսցուք զՆա[134ա]:

ՀԱ. Ոչ հաւատայր թագաւորն. հարկ էր Դաւթի ասել զուղղութիւն իւր: Հար Դաւիթ զձեռն յանձն իւր սպանանել զԳողիադ, քանզի գիտէր զինքն Դաւիթ, զի ոչ մեռանիցի, մինչեւ թագաւորեսցէ զաւրութեամբ Հոգւոյն, զոր ընկալաւ:

ՀԲ. «Եւ ասէ Սաւուղ՝ Երթ, եւ Տէր ընդ քեզ: Եւ զգեցոյց Դաւթի զվարապանակս իւր եւ զրահն եւ զսաղաւարտն եւ զամենայն կազմուածն: Եւ գթեաց Դաւիթ մի անգամ եւ երկիցս:

ՀԳ. Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ՝ ոչ կարեմ երթալ սոքաւք, զի չեմ հմուտ, եւ հանին զայն ի նմանէ»[ա]:

ՀԴ. Եւ ետ նմա զէն, եւ ոչ կամեցաւ առնուլ, վասնզի ներէր այնմ[135] Աստուած, այլ զի մերկ մարմնով յաղթեսցէ[136], զի մի՛ ասիցէ[137] թագաւորն, թէ՝ զէնքն իմ յաղթեսցին[138]: Ընկենոյր զմարմնաւոր զէնն եւ առնոյր զհաւատն: Եւ ելանէր մերկ եւ վառեալ[139] հաւատով, ելանէր հովիւն զինուոր[140]:

ՀԵ. Ոչ իջանէր[141] զինու Սաւուղայ ի պատերազմ ընդդէմ Գողիադու, զի ոչ էր փորձեալ, եթէ նովաւ հաճեսցի Տէր աւգնել նմա:

ՀԶ. Սաւուղ[142] երկրաւոր զէն զգեցուցանէր նմա, որում չէր սովոր: Վասն այնորիկ ի բաց ընկեցէր զմարդկային գիւտ: Եւ առէր, զոր Աստուած քեզ պարգեւեաց[143]. ո՛չ սաղաւարտ ի գլուխ եդեալ, այլ ունիս[144] պսակ անթառամ[145], պատրաստեալ յերկնից եւ զրահս հաւատոյ ունելով զաւրութիւն[146] Աստուծոյ՝ բնակեալ ի քեզ, վահան՝ զՀոգւոյն Սրբոյ զաւրութիւն, որով զնետս հրեղէնս[147] չարին շիջուցանես:

ՀԷ. «Եւ առ զցուպն[148] ի ձեռին եւ գնաց Դաւիթ ցպովն եւ պարսիւն ընդդէմ հսկայիւն»[բ]: Եւ Տէր մեր Խաչին խորհրդով, իբր գաւազանի, գնաց ընդդէմ սատանայի, քանզի ցուպն բերէր ճշմարիտ զաւրինակ Խաչին Քրիստոսի, որ առ զքահանայութիւն եւ զթագաւորութիւն յաշխարհի[149]:

ՀԸ. «Եւ ընտրեաց իւր հինգ[150] քարինս ողորկս ի հեղեղատէ»[գ]:

ա անդ. ժէ 37—42
բ անդ. ժէ 40
գ անդ. ժէ 40

Հինգ բնութիւնս յայտնէ, որ ասացին իմաստասէրքն՝ ողորկս նշանակելով[151] զհինգ[152] գիրս աւրինացն, զորս եդ յԵկեղեցւոջ եւ ի նոր աւրէնս յանկացեալ, որ վկայեն վասն Քրիստոսի մարդեղութեան: Եւ զհինգ[153] զգայութիւնք մեր, զոր միացոյց ընդ Իւրում Աստուածութեան եւ մերով մարմնովս մարտեաւ ընդ սատանայի եւ յաղթեաց[154]: «Ողորկս»[155], այս ծանուցանէ զՄարմին Փրկչին՝ ազատ գոլով ի մեղաց, որպէս ասէ մարգարէն, թէ՝ «Մեղս ոչ արար, եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան Նորա»[դ]:

ՀԹ. Իսկ ի[155ա] «հեղեղատէն քարինքն»՝ զի զմեղանչական եւ զհեղեղեալ չարեաւք բնութեանս առ մարմին եւ հարեալ կործանեաց զաներեւոյթն Գողիադ, կամ աւրինակ էր մերոյ բնութեանս, որ հեղեղեալ էաք մեղաւք՝ ոչ բերելով զպտուղ առաքինութեան[156]:

Զ. «Եդ զնոսա ի հովուական մախաղն[157]»[բ]: Զքաղցր կաթն սաղմոսերգութեան, որով կերակրին մանկունք Եկեղեցւոյ, եւ Դաւիթ ընդ նոսա երգակցէ, եւ նշանակէ զՄարմինն Քրիստոսի, զոր առ ի մերմէ բնութենէս եւ միացոյց ընդ Իւրում Աստուածութեան, զոր եւ ասէ Աստուածաբանն, թէ «մաշկեղէնն զգենու պատմուճան»[գ]:

ՁԱ. «Եւ զպարան ի ձեռին իւրում»՝ զպատուիրան աւրինացն. «Եթէ սիրեսցես զՏէր Աստուած քո»[դ], կամ[158] պարսն՝ աւրինակ Խաչին Քրիստոսի, եւ երկու ճիւղն՝ լինելն Աստուածութեան եւ Մարդկութեան[159] աւրինակ եւ աւրինացն[160] եւ մարգարէից եւ Հին ու Նոր տակարանացն[161]: Իսկ Դաւթի ընթանալն ընդդէմ Գողիադու նշանակէր մեղութիւն[162] Քրիստոսի: Դաւիթ պատերազմեցաւ ընդ Գողիադու՝ նախատչին Իսրայէլի, եւ Որդին Դաւթի՝ ընդ աներեւոյթն Գողիադու[163]:

ՁԲ. «Իբրեւ հայեցաւ այլազգին եւ ետես զԳաւիթ առ ինքն»[ե]: Բարտք պատերազմիս, ո՞վ երանելիդ Դաւիթ, մեծագոյն, քան զԳողիադ, զաւրաւոր, քան զերկաթ եւ զպղինձ. ուստ մեզ զհոգեւոր պատերազմդ, զի երկրաւոր զենս տկար է, եւ երկնաւորն՝ զաւրեղ, ապականելի է երկրաւորս, եւ անապական՝ երկնաւորն: Մարդկան գիւտ[164] է սա, այլ այն յԱստուծոյ պարգեւեալ է քեզ[165]:

ՁԳ. Վասն այնորիկ անհաւատին Գողիադու մերկ երեւէիր, այլ Աստուծոյ զաւրութեամբն՝ յամենայն կողմանց փակեալ հաւատով եւ երկիւղիւն Աստուծոյ[167]:

ՁԴ. «Եւ ասէ այլազգին ցԴաւիթ՝ մի՞թէ շուն իցեմ, զի ցպով[168] եւ քարիւ գաս ի վերայ իմ: Ասէ Դաւիթ՝ նա եւս վատթար, քան զշուն»[զ]:

ա Եսայի ԾԳ 9, Ա Պետ. Բ 22
բ Ա Թագ. ժէ 40
գ Տայտ. Ա 13
դ Մատթ. ԻԲ 37, Մարկ. ԺԲ 30
ե Ա Թագ. ժէ 42
զ անդ. ժէ 43

ՁԵ. Տեսանե՞ս, զի Գողիադ[169] յայտնապէս խոստովանեցաւ[170] բանիւք՝ շուն պիղծ զինքն անուանելով[171], յորմէ Դաւիթ ոչ երկեաւ ի սպառնալեաց նորա՝ ո՛չ ի շողել զինուցն[172] եւ ոչ ի մեծութենէ հասակին:

ՁԶ. «Եւ ասէ Դաւիթ ցայլազգին[173]. «Դու գաս ի վերայ իմ սրով եւ գեղարդեամբ, եւ ես գամ ի վերայ քո անուամբ Տեառն զաւրութեանց ճակատուս Իսրայէլի[174], եւ փակեսցէ զքեզ Տէր ի ձեռս իմ, եւ սպանից զքեզ եւ առից[175] զգլուխ քո ի քէն[176]»»[ա]:

ՁԷ. Զայս լուեալ Գողիադու՝ իբրեւ զառիւծ[177] մռնչէր[178], որոտայր[179], յիւր զաւրութեան վստահացեալ[180] եւ զԴաւիթ որպէս մանուկ արհամարհէր[181], եւ զԱստուծոյ[182] նորա արհամարհէր[183]:

«Եւ այլազգին մերձեցաւ ընդդէմ Դաւթի»[բ] եւ, բարկութեամբ լցեալ նորա[184], դիմեաց ի վերայ Դաւթի[185], գոչէր որպէս զառիւծ եւ որպէս զերկաթի պարիսպ պատառել կամի[186], ի ոչ ընդ մարդոյ պատերազմել: Վերացոյց[187] եւ ընդդիմեանս եհար՝ զզէնն կոչելով զԴաւիթ:

ՁԸ. Նոր իմն էր տեսիլն, եւ զի՞նչ եւս[187ա] լինելոց էր. ոչ գիտէին Սաւուղ եւ զաւրքն իւր[187բ], ոչ փոքր էր ահն, զի տղայ տեսանէին՝ առանց զինու ընդ յայնպիսի այր պատերազմելով:

ՁԹ. Եւ[188] Դաւիթ ի սրտի իւրում աղաչէր զԱստուած՝ գիտելով, թէ[189] ո՛չ սրով եւ աղեղամբ կեցուցանէ Աստուած զյուսացեալս Իւր: «Մերձեցաւ Դաւիթ եւ ընթացաւ ընդդէմ այլազգւոյն ի ճակատն եւ ձգեաց Դաւիթ զձեռն իւր ի մախաղն եւ առ անդի[190] քար մի եւ պարսաքարեաց ընդդէմ այլազգւոյն[191] եւ եհար[192] զճակատն այլազգւոյն, եւ մուտ քարն ընդ սաղաւարտն ի ճակատն, եւ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր»[գ]:

Ղ. Ո՞վ սիրելիք, զարմանալիք իմն եղեն. պարտ էր Գողիադու վիրաւորելովն յերկիր անկանել ի շառաչմանէ քարին, եւ Գողիադ, յերեսս անկեալ, երկիր պագանէր Բանին Աստուծոյ, որ էր ընդ Դաւթի[193], զի Աստուծոյ զաւրութիւն անյաղթելի[194] այսու երեւեսցի: Արդ, յարկանելն Գողիադու զկործանումն սատանայի ցուցանէ:

ՂԱ. «Եւ զաւրացեալ Դաւիթ, քան զայլազգին, պարսիւն եւ քարիւն, եւ սուր ոչ էր ի ձեռին նորա[195]:

ՂԲ. Ընթացաւ Դաւիթ ի վերայ նորա եւ առ զսուր նորա եւ սպան զնա եւ եհատ զգլուխ նորա»[դ]. երեւեցոյց զիւր յաղթութիւն[196]:

ՂԲԱ. Դաւիթ ճակատեցաւ ընդ այլազգւոյն եւ զաւրացաւ ի վերայ նորա: Եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս ճակատեցաւ ընդդէմ սատանայի եւ

ա անդ. ԺԷ 45-46
բ անդ. ԺԷ 48
գ անդ. ԺԷ 48—49
դ անդ. ԺԷ 50—51

յաղթեաց նմա եւ մահուամբ Իւրով յաղթեաց մահու եւ դժոխոց: Իմանալի է այս, զի Տէր մեր զամենայն գործիս սատանայի զուգեաց առ ի կործանումն նմա, որպէս Դաւիթ ասէ. «Թշնամւոյն զէն պակասեաց ի սպառ, զի սուր նորա դարձաւ ի սիրտ նորա»[ա].

ՂԳ. զի սատանայ, զկերակուրն զէնն՝ առեալ[198], եհան զԱդամ ի դրախտէն: Եւ Քրիստոս պահեաց աւուրս քառասունս եւ քաղցիւն յաղթեաց սատանայի՝ ասելով, թէ՝ «Ո՛չ միայն հացիւ[199] կեցցէ մարդ, այլեւ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ»[բ]: Եւ մահուամբ յաղթեաց մահու եւ զկեանս ի մարդիկ աղբերացոյց եւ Խաչիւն ջախջախեաց զգլուխ վիշապին:

ՂԴ. «Իբրեւ տեսին այլազգիքն, թէ մեռաւ զաւրավար նոցա, փախեան»[գ]: Իսկ[200] վերանալ պատերազմին՝ զյաղթահարիլն սատանայի եւ զդիւացն գուշակէ[201]: Իսկ Դաւիթ եւ որդիքն Իսրայէլի կոխեցին[202] զբանակս նոցա, որպէս եւ ասաց Քրիստոս[203]. «Ետու ձեզ իշխանութիւն կոխել զսատանայ եւ զամենայն զաւրութիւն նորա»[դ]:

ՂԵ. «Դաւիթ եբէր զգլուխն Գողիադու ի բանակն Իսրայէլի»[ե]:

ՂԶ. Յայնժամ, ի բարձունս համբարձեալ, ասէ. «Այս բերան էր[204], որ խաւսէր զհայհոյութիւն ընդդէմ Աստուծոյ, այժմ պակասեալ ի ձայնէ այս լեզու, որ նախատէր զձեզ, այժմ կապեալ է լռութեամբ, այս աչք, որ չարութեամբ նայէր ի ձեզ, այժմ կուրացեալ է եւ ի լուսոյ խափան»:

ՂԷ. «Եւ իբրեւ ետես Սաւուղ զԴաւիթ, ասէ ցԱբեներ՝ իշխան զաւրուն՝ ո՞յր որդի է պատանեակդ: Ասէ Աբեներ՝ ոչ գիտեմ[205]: Ասէ արքայ՝ հա՛րց, ո՞յր է պատանեակդ[206]»[զ], զի նա յառաջ, քան զպատերազմն, կապարձակիր էր Սաւուղայ եւ խաւսեցաւ ընդ նմա վասն արքուն եւ առիւծուն[207]:

ՂԸ. Բայց ասեն ոմանք, թէ իբրեւ առաքեաց զնա հայր իւր զառաջինն առ Սաւուղ[208], ի զգեստս պայծառ թագաւորութեան մեծաշուք եղեւ ի մտանելն իւրում[209] առ Սաւուղ, գեղեցկացաւ եւ զուարթացաւ կրկնապատիկ, որպէս եւ էրն: Եւ իբրեւ դարձաւ ի նմանէ[210] ի տուն հայր իւրոյ, մերկացաւ զգեստն եւ զգեցաւ զբաճկոնն եւ զձորձս հովուութեան, եւ ցրտացան երեսք նորա յեղեմնախառն ցրտոյն, եւ արեւակէզ եղեւ[211] ի տապոյ արեգականն. վասն այնորիկ ոչ ծանեաւ[212] զնա Սաւուղ:

ՂԹ. «Եւ իբրեւ[213] դարձաւ Դաւիթ ի հարկանելոյ զայլազգին, Աբեներ ած զնա առ Սաւուղ եւ գլուխ այլազգւոյն ի ձեռին Դաւթի[214], ասէ

ա Սաղմ. ԼԶ 15
բ Մատթ. Դ 4, Ղուկ. Դ 4
գ Ա Թագ. ԺԼ 51
դ Ղուկ. Ժ 19
ե Ա Թագ. ԺԷ 54
զ անդ. ԺԷ 55

յնա[215] Սաւուղ. «Ո՞յր որդիս ես[216], մանո՛ւկ դու»[ա]. գիտէին Սաւուղ եւ Աբեներ, թէ թագաւորելոց էր Դաւիթ[217], կամեցաւ ուսանել, թէ յորմէ ազգէ է՝ յուդայեա՞ն[218] իցէ նա[219] արդեաւք[220], զի ի ժամանակացն[221] Յակովբա[222] խոստացեալ էր զթագաւորութիւն Յուդայի ազգին[223], ի Ջարեհէ իցէ[224], թէ ի Փարեսէ[225]: Ասէ Աբեներ. «Ոչ[226] եմ ես ինչ այդմ տեղեակ»: Եւ վասն[227] զի մեծ փութով կամէր գիտել զայս Սաւուղ, ասէ ցնա[228]. «Աղէ, հա՛րց դու յառաջագոյն, թէ ո՞յր որդի է»: Որպէս[229] հրեայքն բազում սքանչելիս տեսեալ էին ի Քրիստոսէ եւ ասէին լրբութեամբ. «Զի՞նչ նշան ցուցանես, զի ծանիցուք, թէ Դու ես Քրիստոսն՝ Որդին Աստուծոյ, որ գալոց էիր յաշխարհս»: Իսկ ասելն Աբեների՝ «կենդանի է Տէր, թէ գիտեմ», այս մարդասիրութիւն էր՝ ի վերայ Դաւթի ունելով զնշանակութիւն[230]:

«Ասէ Դաւիթ՝ որդի Յեսսեայ Բեղղեհէմացւոյ[231] եմ ես»[բ]: Իբրեւ հարցին, ասաց զանուն[232] հաւր իւրոյ, բայց զանուն ազգին իւրոյ[233] ոչ յայտնեաց, զի միգուցէ սպանանիցեն[234] զնա[235]:

Ճ. «Եւ ոգին Յովնաթանու կապեցաւ ընդ Դաւթի, եւ սիրեաց զնա սրտիւ իւրով: Հանեալ զպատմուճան եւ զգաւտին եւ զզրահն եւ զսուսերն եւ զաղեղն եւ ետ Դաւթի»[գ]:

ՃԱ. Եւ այն յիրաւի, զի արժան էր ժողովրդեանն, որ զաւրէնսն գիտէին տալ այնմ, որ ի Դաւթայն ծնանելոց էր Քրիստոս, որ վասն մեր յաղթեաց[236] պատերազմողին սատանայի եւ խափանեաց զմահ: Վասն այնորիկ[237], հանեալ զամենայն փառսն իւրեանց, ետուն Քրիստոսի, որ ազատեաց զԵկեղեցի, որ պարելով երգէ աւրհնութիւն Աստուծոյ[238]:

ՃԲ. «Եւ առ զնա[239] Սաւուղ առ իւր յաւուր յայնմիկ[240] եւ ոչ ետ նմա դառնալ ի տուն հաւր իւրոյ եւ կացոյց զնա ի վերայ արանց պատերազմողաց, եւ հաճոյ եղեւ առաջի աչաց[241] ամենայն ժողովրդեանն»

ՃԳ. եւ ուր երթայր, յաղթէր, որպէս

ՃԴ. եւ ասէ Գիրն. «Ելին պարաւորքն ընդ առաջ Դաւթի եւ ասէին. Եհար Դաւիթ զբեւրս, եւ Սաւուղ՝ զհազարս»[դ]: Եւ չար թուեցաւ Սաւուղայ, զի մեծացուցին[242] զԴաւիթ, քան զնա:

ՃԵ. Ասէ Սաւուղ.

ՃԶ. «Ետուն[243] նմա[244] բիւրս եւ ինձ՝ հազարս, եւ դարձեալ նորա է թագաւորութիւն, այսինքն՝ յայսմ հետէ թագաւորութիւն նորա է:

ՃԵ. Արդ, զայն[245], զոր ի Սամուէլէ կամեցայ[246] գիտել, եւ ոչ յայտնեաց նա, արդ, ի ձեռն կանանց երգոցս գիտացի[247], որ երգէին[248] իբրեւ թագաւորի, որ մեծ է[249], քան զընկեր իւր»:

ա անդ. ԺԷ 57—58
բ անդ
գ անդ. ԺԸ 1—4
դ անդ. ԺԸ 2, 5—7

ՃԵԱ. Ետուն[250] յաներկիւղ յանխիղճ բիւրս Դաւթայ եւ հազարս՝ Սաւուղի: Եւ յորմէ աւրէ հետէ գովեցաւ Դաւիթ, ի նոյն աւրին սկսաւ լինել բամբասելի Դաւիթ յաչս Սաւուղի[251]:

ՃԶ. Եւ յայնմ աւրէ սկսաւ ատել զնա Սաւուղ[252]: Եւ յետ աւուրց վառեցաւ, այսինքն՝ եմուտ[253] այս չար ի Սաւուղ եւ մարգարէանայր[254], եթէ Դաւիթ թագաւորելոց է: «Եւ ուստի՞ ունիցի հոգի չար զմարգարէութիւն, որ ոչ գիտէ զառաջակայն»,— լսելով լուաւ ի սուրբ մարգարէիցն[255]:

ՃԷ. Կամեցաւ ձգել զգեղարդն Դաւթի: Շրջեցաւ[256] Դաւիթ բազում անգամ յաջ եւ յահեակ[257] եւ ապրեցաւ: Արդ, թէպէտ եւ յայսմ աւուր ոչ ձգեաց ի նմա զգեղարդն, արար զնա իւր փեսայ, զի արկցէ ի ձեռս այլազգեացն:

ՃԸ. Ո՞վ Սաւուղ, զի՞նչ վնաս արար քեզ Դաւիթ, ո՞չ զթշնամին քո սպան. զի՞ նախանձիս ընդ յարդարոյն, որ յԱստուծոյ պատուեցաւ: Եւ որ ի նմա յայնժամ կրէր, այժմ մարմնացեալ փառաւորի յերկինս ընդ Հաւր[258]: Իսկ կանայքն աւրինակ էին պարուց մարգարէիցն, որք ասէին. «Մովսէս[259] նշանաւքն հաւանեցոյց զհազարաւոր հրեայսն ի ծառայութիւն Աստուծոյ, իսկ ճշմարիտ Դաւիթն՝ զբիւրս, որ է Յիսուս Քրիստոս»: Եհար զբիւրս, այսինքն՝ աւետարանական վարդապետութեամբ զամենայն տիեզերս հաւանեցոյց յերկրպագութիւն Սուրբ Երրորդութեան: Իսկ նախանձիլն Սաւուղայ յայտնէ[260] զչարիլն քահանայիցն եւ քահանայապետիցն եւ նախանձու վառուել ի վերայ մեծամեծ աստուածագործ նշանացն, զոր առնէր Տէրն[261]: Թագաւոր ես դու հազարաց միայն, իսկ Քրիստոս՝ Թագաւոր ամենայն աշխարհի: Թագաւոր ես դու յերկրի մի ազգի միայն, իսկ Քրիստոս՝ երկնայնոց եւ երկրայնոցս: Դու թագաւոր՝ մարդ ժամանակաւոր, իսկ Քրիստոս՝ Թագաւոր յաւիտեանս յաւիտենից,

ՃԹ. որ էքն ի դժոխս եւ զամուրս նորա գերեաց[262]: Եւ որպէս Դաւիթ առաջի նորա զԳողիադ արար, նոյնպէս եւ Քրիստոս, որպէս զառիւծ պատրաստեալ յորս[263], որսաց զսատանայ վիշապն մեծ, զոր եւ Յովբ ասէր, թէ «զՅորդանանու վտակն յակնակապիճս իւր ընդուներ»[ա] եւ քրահեղձոյց առնէր զմանկունսն[264]: Քրիստոս ջախջեաց զգլուխ նորա եւ սպան սուրբ[265] Մկրտութեամբն եւ ետ կոխան առաքելոյն, եւ մանկունք Եկեղեցւոյ խաղան նովաւ, որպէս ձագուք:

ՃԹԱ. Հալածեցաւ Դաւիթ ի Սաւուղայ, եւ որդին Դաւթի Քրիստոս՝ ըստ մարմնոյ յորդւոցն հրէից: Սաւուղ փոխանակ պատուելոյ զԴաւիթ, խորհեցաւ սպանանել զնա: Եւ ժողովուրդն անաւրէն, փոխանակ շնորհ ունելոյ երախտեացն Քրիստոսի, ասեն.. «Եկայք արկցուք փայտի հաց Նորա եւ ջնջեսցուք զՆա յերկրէ, եւ անուն Նորա մի՛ եւս յիշեսցի[266]»:

ա Յովբ Խ 19

«Զգեաց Սաւուղ զգեղարդն եւ հար զորմն, եւ ապրեցաւ Դաւիթ»[ա]: Հարին գեղարդեամբ զՄարմին Տեառն մերոյ, եւ ոչ վնասեցաւ Աստուածութիւն Նորա միութեան, որմս, զոր եհար Սաւուղ, վկայեաց մահուանն Դաւթի, եւ Մարմին Տեառն, որ չարչարեցաւ ի հրէիցն, վկայեաց, եթէ զչարչարանս Մարմնոյն Աստուածութեան Իւրոյ համարեցաւ:

ՃԹԲ. «Պաշարեցաւ[267] Դաւիթ ի ներքնումն այրին»[բ], եւ Որդին Դաւթի՝ ի դժոխս ներքինս. եւ Դաւիթ յայրէ անտի եւ ոչ ըմբռնեցաւ ի Սաւուղայ, եւ Տէր մեր ի դժոխոց, եւ ոչ կարաց ըմբռնել զՆա դժոխք իշխանութեամբն իւրով:

«Դաւիթ եւ յայրէ անտի, եկաց ի բարձր տեղւոջ, աղաղակեաց առ Սաւուղ՝ ո՞ւր է գեղարդն քո, արքա՛յ»[գ]: Եւ Տէր մեր, ելեալ ի դժոխոցն, համբարձաւ յերկինս, աղաղակեաց առ մահ եւ ասէ. «Ո՞ւր է, մա՛հ, յաղթութիւն քո», որ յաղթեցեր նախահաւրն մերում, «ո՞ւր է, դժոխք, խայթոց քո»[դ], որ վիրաւորեցեր զգարշապարս ամենայն ծնունդս նորա:

Դաւիթ պատերազմեցաւ ընդ Անդրազարու, որ էր անճոռնի եւ յաղթանդամ, եւ Տէր մեր պատերազմեցաւ ընդ սատանայի, որ կարծէր զինքն անպարտելի, որ ասէր. «Իմ է թագաւորութիւն աշխարհիս, եւ ում կամիմ, տամ զսա»[ե]: «Դաւիթ յաղթեաց Անդրիազարի եւ սպան զնա եւ քակեաց զկառս նորա եւ առ զթագն ի գլխոյ նորա եւ եդ ի գլուխ իւր»[զ]: Եւ Տէր մեր յաղթեաց մահու եւ սպան զնա եւ քակեաց զկառս նորա, քանզի գերեաց զդժոխս եւ առ տաւր զգերեալսն, որ ի նմա, եւ տարեալ եհան զնոսա յարքայութիւն Հաւր Իւրոյ: Այսոքիկ սակաւ ի բազմաց ասացաւ վասն Դաւթի, որ, ըստ բարի աւրինաց, նմանեցաւ Տեառն մերոյ[268]:

ՃԺ. «Ասաց Դաւիթ առ Աստուած՝ ի ձեռն Գադայ շինել Նմա տուն», եւ ոչ հրամայեաց նմա Տէր, զի պատերազմ բազում էր յաւուրս նորա[269]: Եւ[270] խնայեաց Տէր ի Դաւիթ, եւ ոչ՝ որպէս ասեն ոմանք, թէ ոչ համարեցաւ արժանի զԴաւիթ:

ՃԺԱ. «Ասէ Տէր ցԴաւիթ. «Ո՛չ բնակեմ Ես ի տան յաւրէ, յորմէ ելի Ես Իսրայէլ յԵգիպտոսէ»»[է], այսինքն թէ՝ յայնժամ իբրեւ ի տան միում եւ յանկեանս ուրեք համարէին զԱստուած: Իսկ այժմ, հերձանելով զծովն եւ այլովք սքանչելեաւք, ծանեան, թէ ո՛չ է Նա Աստուած միոյ կողման ուրեք կամ «տաճարի միոյ, զոր խորհիք շինել Ինձ», որպէս եւ հեթանոսք, զի անդ միայն իցէ աստուած նոցա եւ ոչ՝ այլուր[271]: Բայց Նա յամենայն տեղիս է[272]:

ՃԺԲ. «Կաքաւէր Դաւիթ առաջի տապանակին»[ա] յաւրինակ Յովհաննու, որ խայտար յորովայնին՝ Քրիստոսի երկրպագելով, քանզի տապանակն աւրինակ Քրիստոսի էր, եւ հինգ գիրք կայր[273] ի նմա: Իսկ Յովհաննէս առաջի այնմ երթայր, որ զհինգ զգայութիւնս[274] մեր միացոյց ընդ Իւրում Աստուածութեան եւ զարդարեաց զսա[275]:

ՃԺԳ. «Ուրիա քետացի» էր եւ կռապարիշտ, եւ Բերսաբէ՝ կին նորա: Բայց վասն Բերիայ ոչ տային թոյլ քահանայքն մտանել ի տաճար անդր Ուրիա Քետացոյ[276]: Արդ, խորհեցաւ կինն այն եւ կամեցաւ հաղորդել ընդ Դաւթի[277], զի ի պատճառս Դաւթի մտցէ նա ի մէջ ժողովրդեանն հրէից սրբոց:

ՃԺԴ. Արդ, իբրեւ ետես զԴաւիթ, զի գնայր նա ի վերայ տանեացն, մերկեաց զինքն ի պատճառս լուացման իմիք[278], իբր այն, թէ ոչ գիտէ Բերսաբէէ զԴաւիթ եւ ոչ տեսեալ իսկ է նորա զնա:

ՃԺԵ. Եւ այսպէս, իբրեւ կոչեցին զկինն զայն առ Դաւիթ, վաղվաղակի չոգաւ առ նա, զի աղաւթք իսկ կնոջն այն էր, զի կոչեցաւ նա ի Դաւթէ:

ՃԺԶ. Արդ, տե՛ս դու զդատաստանն Աստուծոյ, զի թէպէտ եւ ի շնութիւն կարծեցաւ, այլ կինն վասն հաղորդելոյ սրբութեան եարկ զանձն իւր ի գործն յայն:

ՃԺԼ. Եւ ահա տե՛ս զվարձս[279] նորա եւ զփոխարէնն նորա[280] յԱստուծոյ. զի բազում կանայք էին Դաւթի, եւ մի ոք ի նոցանէ ոչ որդի[281] թագաւորեաց, բայց միայն՝ Սողովմոն՝ որդի Բերսաբէի: Զի որ քնէ զսիրտս մարդկան, գիտաց զսիրտս[282] կնոջն. եւ զայս հատոյց նմա:

ՃԺԸ. Զի առաջին ծնունդն Բերսաբէի որդի Դաւթի էր, ոչ լուաւ Աստուած Դաւթի եւ ոչ ապրեցոյց. ընդէ՞ր[283], զի որդի պոռնկի էր եւ շնութեան, եւ ոչ էր մարթ պոռնկորդոյն թագաւորել կամ մտանել ի տաճարն կամ նստել ի մէջ ժողովրդոց[բ] [284], զի մի՛ ժողովուրդն, տեսեալ զայն, շրջեսցին ի պոռնկութիւն ի յաւրինակէ անտի: Թագաւոր շնացեալ եւ ծնունդն այն թագաւորեալ, վասն այնորիկ սպան զնա:

ՃԺԹ. Իսկ յորժամ աւրինաւք էառ[285] կին զնա, ապրացոյց, զի որդի աւրինութեամբ աւրինաց եւ քահանայից էր:

ՃԻ. Արդ, տե՛ս դու զգործսն Բերսաբէի՝ լի սքանչելեաւք[287], զի յառաջ ամուլ էր առ Ուրիայի Քետացւոյ՝ առն իւրում, եւ վարձանք խորհրդոց իւրոց տուան նմա յղութիւն:

ՃԻԱ. Ահա եւ զայս Թամար արար, զի ցանկացեալ էր զսուրբ զաւա-

ա Ա Թագ. ԺԸ 12, ԺԹ 10
բ անդ. ԻԴ, 4, 9
գ անդ. ԻԴ, 4, 9
դ Ա Կորնթ. ԺԵ 55
ե Հմմտ. Մատթ. Դ 8—9:
զ Ա Մնաց. ԺԸ 3—4
է Բ Թագ. է 5—6

ա Հմմտ. Ա Մնաց. ԺԵ 29:
բ Տե՛ս Բ Աւրին. ԻԳ 2:

կին Աբրահամու եւ, ի կերպս մեղաւոր[288] կնոջ եղեալ, եդ զանձն ի մահ եւ փոխանակ միոյ երկու առ վարձս իւր:

ՃԻԲ. Այսպէս եւ զկինն, զոր բամբասէր այր իւր եւ ածէր առ քահանայս տալ նմա չար նզովից, զի սատակեսցի: Արդ, եթէ ոչ լինէր յանցեալ[289] կինն, փոխանակ զրպարտութեան նորա յղանայր, թէպէտ եւ ամուլ էր եւ ծնանէր:

ՃԻԳ. «Եւ արքայ Դաւիթ ծերացեալ էր եւ անցեալ զաւուրքք, եւ ծածկէին զնա հանդերձիւք, եւ ոչ ջեռնոյր[290]»[ա]:

ՃԻԳա. Արդ, հանդերձն, յորում ոչ ջեռնոյր Դաւիթ, զտկարութիւն աւրինացն նշանակէր, զի ի ցրտացեալսն ի հաւատսն ոչ կարէին ջեռուցանել եւ կեցուցանել, որպէս եւ յայնժամ հանդերձքն՝ զծերացեալ մարմին Դաւթի:

ՃԻԳբ. Եւ պիտոյ եղեւ նմա[291] աղջիկ մի կոյս եւ արիւնաշատ, զի ջեռուցէ զնա:

ՃԻԴ. Եւ զի ոչ ինչ էր պիտոյ սակս շնութեան կամ[292] ամուսնութեան, վասն է՞ր գեղեցիկ խնդրեցին զնա, այլ իմաստունք ի բժշկած զայս խորհեցան, զի խնդրեցին զնա գեղեցիկ, զի սպաս կալցի Դաւթի, եւ նա, ի տեսիլ գեղոյ նորա, տռփասցի եւ ցանկասցի[293], եւ ցրտութիւն ցաւոց նորա ջերմասցի ի տեսիլ երեսաց նորա:

ՃԻԵ. Այլ «Դաւիթ ոչ գիտաց զնա», որպէս ոչ Յովսէփ՝ զՄարիամ, զի պաշտպան եւ սպասաւոր էր նմա Յովսէփ եւ ոչ՝ այր:

ՃԻԶ. Եւ ոչ ջեռնոյր[294]:

ՃԻԷ. Այլ թէ զինչ նշանակէր[295] կուսին գեղեցկութեամբն ջեռուցանելն[296] զարքայն. Աբիսագ[297] Սոմնացի աւրինակ էր Կուսին սրբուհւոյ Աստուածածնին, որ նորա ծննդեամբն ցրտութիւն անհաւատութեան հալածական եղեւ[298], եւ ճշմարիտ հաւատով եւ ջերմ սիրով եռացուցէ զամենեսեան ի սէրն Աստուծոյ՝ ըստ այնմ, թէ՝ «Հուր եկի արկանել յերկիր»[բ]:

ՃԻԸ. «Ադովնիա որդի Դաւթի, ասէ՝ ես թագաւորեցից»[գ]: Ազդ եղեւ Բերսաբէի[300՝] մաւրն Սողովմոնի, եւ խրատէր զնա Նաթան[299] մարգարէ, եւ անկանի[300ա] առաջի արքայի պաղատանաւք եւ ասէ[301]. «Տէ՛ր արքայ, ո՞չ դու երդուար աղախնոյ քում եւ ասացէր, թէ Սողվմոն թագաւորեսցէ յետ իմ, եւ այն զի՞ է, զի Ադովնիա թագաւորեալ է[302]»[դ]:

ՃԻԹ. Արդ, Բերսաբէ աւրինակ է[303] Եկեղեցւոյ, եւ Նաթան բերէ զդէմս[304] նախամարգարէիցն եւ աւրինացն[305]:

ա Գ Թագ. Ա 1
բ Ղուկ. ԺԲ 49
գ Գ Թագ. Ա 5
դ անդ. Ա 13

ՃԼ. Եւ որպէս Նաթան խրատէր զԲերսաբէէ վասն թագաւորելոյն Սողովմոնի, այսպէս եւ ամենայն մարգարէքն խրատէին զԵկեղեցի, զի աղաչեսցեն զՀայր վասն Քրիստոսի[306—7] թագաւորելոյն, որ արար խաղաղութիւն յերկինս եւ յերկրի:

ՃԼԱ. Եւ որպէս Նաթան ընդ Բերսաբէի աղաչէր զարքայ, այսպէս եւ մարգարէքն ընդ Եկեղեցւոյ աղաչէին զՀայր[307]: Եւ որպէս լուաւ արքայ աղաչանացն Բերսաբէի եւ Նաթանայ եւ հրաման տուեալ[308] թագաւորեցուցանել զՍողովմոն[ա], այսպէս Հայրն երկնաւոր լուաւ աղաչանացն սուրբ մարգարէից եւ թագաւորեցոյց զՔրիստոս Փրկիչ աշխարհի:

ՃԼԲ. Եւ Ադովնիա թագաւորեաց սակաւ ինչ[309] աւուրս, որպէս հրեայքն[310] նուազ աւուրս փայլեցին. նշանակէ զսատանայ, որ առ ժամանակ մի իշխեաց աշխարհի:

ՃԼԳ. Եւ հեծուցին զՍողովմոն ի ջորոջն արքայի եւ իջուցին[311] ի Քեբրոն (Գեհոն)՝ աւծանել թագաւոր ի վերայ Իսրայէլի[բ]: Եթէ վասն էր ի ջորոջն հեծուցին զնա, վասնզի[312] ջորի եւ յերկուց բնութեանց է միաւորեալ[313]: Այսպէս եւ Քրիստոս նստաւ ի վերայ երկուց ժողովրդոց՝ հրէից եւ հեթանոսաց եւ ուղղեաց զերասանակս ի վերին Երուսաղէմ[314]:

ՃԼԴ. Եւ Գեհոն[315] քաղաք փոքրիկ նշանակէ զաշխարհս: Իսկ առաքելն զՍողովմոն յԵրուսաղեմէ[316] ի Գեհոն[317] զՔրիստոսի առաքելն[318] ի ծոցոյ Հաւր՝ ի վերին Երուսաղէմէ գալ յաշխարհս նշանակէ:

ՃԼԵ. Եւ զԱդովնիայի[319] բառնալ զթագաւորութիւն[320], որպէս Քրիստոս՝ զսատանայի:

ՃԼԶ. Եւ որպէս ընդ Սողովմոնի՝ Քերեթին եւ Ոփելեթին, այսպէս եւ ընդ Քրիստոսի՝ առաքեալք եւ մարգարէքն:

ՃԼԷ. Եւ որպէս յայնժամ հնչեաց երկիրն զբարբառն, այսպէս եւ ի մտանելն Յիսուսի յԵրուսաղէմ դղրդեցաւ քաղաքն ամենայն:

ՃԼԸ. Եւ որպէս Սողովմոն ի Գեհոն[321] ընկալաւ զթագաւորութիւն, այսպէս եւ Քրիստոս յերկրի[322], զքահանայութիւն, զմարգարէութիւն եւ զթագաւորութիւն: Եւ Նմա փառք[323] յաւիտեանս. ամէն:

ա Հմմտ. Բ Թագ. Ա 30:
բ Տե՛ս Գ Թագ. Ա 33:

Խորագիր 1 B եւ կործանելոյն *փխ* ի սպանելոյն: AD *յիք*:

Բնագիր 1ա A *յիք* «Եւ զոչացաւ...»: 2 B յիսկիսրէն: 3 BCE *յիք* իրին: 4 B ակն *փխ* անկ: 5 ABC բարժանեցաւ: 6 B իշխաց: 7 ABC եկին: 8 ABC *յիք* ըստ... քոց: 9 B ունիցիս: 10 ABC Բեղթահեմ: D ցԲեթղեհէմ: 11 B *յիք* իւղոյն: 12 D Յովսէփ կրեաց: 13 D վիճել *փխ* վաճառեալ: B *յիք* եւ ասա ի Սաւուղայ: 15 D Սաւուղայ: 16 AB երդուիցէ: 17 AB *յիք* Սամուէլ: 18 AB *յիք* թագաւոր: 19 D ցուցից: 20 AB *յիք* նաեւ: 21 AB յիք Եւ Տէր: 22 C զՍամուէլ *փխ* զնա: 22ա CD ապրեսցուսցէ: 23—24 ABC Բեթղահեմ: 25 AB *յիք* Սամուէլ: 26 *Եփր յիք* ծերքն: 27 *Եփր* եւ երկեան *փխ* երկիւղիս: 28 B *յիք* նոցա: 29 D *յիք* ինչ: 30 B սահմանակից: 31 *Եփր* սահմանակից գեաւղն իւրեանց: 32 B *յիք* է, զի: 33 *Եփր* եկեալ է տեսանել: 33ա C ծանիցէ *փխ* գիտասցէ: 34 *Եփր յիք* սպանումն: 35 *Եփր* ծերակոյտին: 36 D ընդ նա: 37 ABC *յիք* նորա: 38 *Եփր* իսկ իբրեւ արտաքս *փխ* արտաքոյ: 39 D *յիք* եւ զի երկմտեցուն... զպատարագն: 40 D ոչ էր հրաման *փխ* չէր համարձակ, *Եփր* ոչ էր *փխ* ուր չէր: 40ա CD որդւոցն է Յեսսէ *փխ* նոցա: 41 D դորա: 42 B այդ *փխ* մարդիկ: 43 D տեսանէ *փխ* յերեսս: 44 D ասէ Տէր: 45 D ընտրեցի *փխ* ընտրեաց Տէր: 46 B առնել *փխ* ուծանել: 47 CD եւ դու կարծեցեր պատեհագոյն զանդրանիկն: 48 B ի գալ նորա այսր *փխ* եկեսցէ նա: 49 B զսգոնութիւն: 50 D *յիք* հաւատով: 51 ABC կողոպտէր *փխ* հալածէր: 52 CD տեսանելով: 53 CD նման *փխ* աւրինակ: 54—55 B *յիք* Բայց դու... Տեառն բերելով: 56 D սպիտակութեամբն աստուածութեան նման եւ կարմրութեամբն՝ մարդկութեան. *լուսանցքում եւ առդամիջում (թերթ 9ա) % նշանով ցոյց է տրուում հաւատուածի շարադասական ետեւաւոյթիւնը:* 56ա AB որպէս Սողոմոն *փխ* ըստ առակողին: 57 B *յիք* եւ կամ... Որդի: 57ա B *յիք* Արդ.: 58 CD *յիք* արդեաւք: 59 CD *յիք* զգործոցն առաքինութիւն: 60—61 ACD *յիք* Արդ, ոՀ կատարեցան: 62 AB աւետարաներ: 63 ACD *յիք* Իմացարուք... կատարեցաւ: 64 Գուցէ՝ «առնարեր. ՆԲՀ, Բ, էջ 695: 64ա CD փոքր տղայ *փխ* մանուկ էր փոքր: 65 CD *յիք* եւ յերկիր... հովուականս: 66 CD ունելով: 67 D հաստակին: 68 CD ընդանեցուցանէր: 68ա B *յիք* ի: 69 CD *յիք* ուժով: 70 CD *յիք* իսկ: 71 D *յիք* մարդոյ: 72 D *յիք* նորա: 73 CD *յիք* ոչ զրահս... ոչ վահան: 74 D Սամուելէ: 75 D աւրինացն Աստուծոյ: 76 AB մարդոց: 77 AB մեղաւորաց: 78 CD թագաւորէր: 79 CD *յիք* Եւ: 80 D զաղտ Դաւիթ: 81 B Քրիստոս *փխ* ծոցածինն Հաւր: 82 CD *յիք* եւ ոչ... երեւեցաւ: 83 CD *յիք* ի ձէթ ուրախութեան: 83ա B *յիք* Զի: 84 CD Եռալով եղն ի վեր: 85 CD *յիք* Վասն... վկայեաց: 86 CD ի տեսանել: 86ա B Սա: 86բ B զսաղմոսարանն: 87 CD *յիք* յայլազգեացն: 87ա B *յիք* եւ որդին... տանջէր: 88 CD *յիք* «Եւ այսն... զԴաւիթ: 88ա B *յիք* Իսկ դառնալն ... հրով: 88բ B *յիք* Իսկ իջանելն... Աստուծոյ: 88գ B Քանզի Սատանայ ի չորս ծագս աշխարհի զիւր խաբէութիւնսն ելից *փխ* Քանզի... աներեւոյթ: 89 CD սատակեսցի: 90 CD այսպէս եւ: 91 CD բռնաւորն կործանեսցի *փխ* գլուխ ... հատցի: 92 CD *յիք* Երեւեցաւ... հայհոյութիւն: 93 CD *յիք* Որպէս... քանզի: 94 CD անաւրէնութիւն է: Երեւեցաւ սմա եւ դանակ՝ զբանիցն հայհոյութիւն: 94ա B *յիք* եւ ասէ... զենն իւր: 95 CD նկատել *փխ*

կատարել... իւր: 96 CD *յիք* որպէս... երրաեցիք: 97 CD զի արհամարհեալ: 98 B այժմ որ: 99 A աշխարհի: 99ա CD *յիք* եցոյց... սատանայի: 100 CD ուսոյց: եցոյց որ այժմ... սատանայի (99): 101—102 C *յիք* Եւ: 103 D լաւ: 104—105 CD *յիք* Եւ... անհաւատիցն: 106—107 CD *յիք* եւ... քոց: 108 C Իսրաիլի: 109 CD *յիք* կանխեալ... զնաց եւ: 110 CD վատասրտեալք *փխ* յուլացեալք: 111 AB ի հովս յաղրիւրս *փխ* յաղբերակունս: 111ա—111բ AB *յիք* խաւսեցաւ իսրայէլացիքն: 112 D երկնչի: 113 CD *յիք* եւ պատերազմ յարդարեսցի: 114 AB պանցէ: 115 AB *ձեռագրերում* «սպանանիցէ զնա» *բառերին հետեւում է* «Իբրեւ լուաւ երեց... այլ՝ հաւատս» *հաւուաածը* (118—120): 115ա—115բ A *յիք* մեծ էր... թշնամի էր Աստուծոյ: Ի16 CD անկար: 117 A նաեւ *փխ* զինուորն: 118ա AB իջէր այսր: 119 CD քաջալերութիւն *փխ* երկիւղածութիւն: 121 AB ասրն զորդն ծնանի: CD որդն: 122 CD պատրաստագոյն կազմէ: 123 AB ծառայութեան ածեալ եղեն նմա: 124 A նախանձիս: 125 CD իմն իմն: 126 CD լուար *փխ* տեսէր: 127 A բարատրութիւն *փխ* բարութեան: 128—129 A *յիք* իսկ... մարդկան: 129ա B խորհէր Սաւուղ: 130 CD *յիք* խարտեաշ... աչաւք: 131 AB Եւ Սաւուղ ասէր ցԴաւիթ. «Մանուկ ես դու եւ նա...»: 132 AB Յեսսաւ: 133 AB լեալ *փխ* տեսեալ: 133ա CD *յիք* Եւ առիւծն... ծառայ քո: 134 CD Ո՛ երանելի Դաւիթ, եւ աստուածային ձայնին զործարան եւ բերան նորա *փխ* Ո աստուածային... Դաւթի: 134ա B *յիք* զնա: 135 CD Աստուած այնմ: 136 CD յաղթիցէ: 137 CD ասասցէ: 138 AB յաղթեսցին: 139 C վատեալ: 140 AB զինաւոր: 141 A էջ: 142—143 CD Սաւուղ... պարգեւեաց: 144 CD ունէր: 145 D անթառամելի: 146 CD զքեզ զԲանն, *փխ* զաւրութիւն: 147 CD *յիք* հրեղէնս: 148—149 AB Եւ ունիս զգուպն ի ձեռին քո, որ է Խաչն Քրիստոսի, որ եւ զթագաւորութիւն եւ զքահանայութիւն նշանակէր *փխ* Եւ առ զգուպն... աշխարհի: 150 A Ե: 151—154 CD ողորկս, այլեւ զհինգ գիրս աւրինացն ի մէջ եկեղեցւոյ եւ ի նոր աւրէնս յանկագոյն, որ վկայեն վասն Քրիստոսի մարդեղութեան եւ զհինգ զգայութիւնս մեր, զոր միացոյց ընդ Իւրում Աստուածութեան եւ մերով մարմնովս մարտեալ ընդ սատանայի եւ յաղթեաց *փխ* ողորկս նշանակելով... յաղթեաց: 152—153 AB Ե: 155—156 AB Եւ հեղեղատն աւրինակ էր մերոյ բնութեանս, որ հեղեղեալ էաք մեղաւք՝ ոչ բերելով զպտուղ առաքինութեան *փխ* «Ողորկս». այս ծանուցանէ... առաքինութեան: 155ա ABC *յիք* ի: 157 D մաղխաղն: 159 C *յիք* եւ մարդկութեան: 160 C աւրինաց: 161 C Կտակարանաց: 162 D մարդեղութեան: 159—163 AB *յիք* կամ... Գողիադու: 164 D զիւ: 165 A քեզ պարգեւեցաւ: 166 D երեւիս: 167 D *յիք* Աստուծոյ: 168 AB ցպաւ: 169 AB *յիք* Գողիադ: 170 AB խոստովանեցաւ Գողիադ: 171 CD *յիք* զինքն անուանելով: 172 CD *յիք* ոչ ի շողել զինացն: 173 CD *յիք* ցայլազգին: 174 CD *յիք* զաւրութեանց... Իսրայէլի: 175 CD բարձից *փխ* առից: 176 CD *յիք* ի քէն: 177 CD զգազան: 178 CD մանչեաց: 179 CD որոտալով: 180 CD պանծալով *փխ* վստահացեալ: 181 CD արհամարհելով: 182 CD զԱստուած: 183 CD *յիք* արհամարհէր: 184 CD *յիք* նորա: 185 CD նորա *փխ* Դաւթի: 186 CD կամէր հատանել: 187 C Եւ վերացոյց: 187ա B *յիք* եւս: 187բ B *յիք* իւր: 188—189 CD *յիք* Եւ... թէ: 190 CD *յիք* անդի: 191 CD *յիք* ընդդէմ այլազգոյն: 192 C եհար: 193 AB Դաւթա: 194 ABCD անյաղթելի է 195 CD իւրում: 196 CD *յիք* եւ եհատ... զիւր յաղթութիւն: 196—197 AB *յիք* Դաւիթ ճա-

կատեցաւ... սիրտ նորա: 198 CD զէն առ զկերակուրն եւ: 193 CD հացիւ միայն: 200—201 AB *յիք* իսկ... գուշակէ: 202 CD կոխէին: 203 CD Տէրն ասաց: 204 AB *յիք* էր: 205 CD Ոչ գիտեմ. զի մեծ փութով կամէր գիտել զայս Սատուդ: 206 CD *յիք* ոյր է պատանեակդ: 207 CD *յիք* եւ խաւսեցաւ... առիւծուն: 208 AB Սատուդ զառաջինն: 209 CD *յիք* իւրում: 210 CD Նա *փխ* ի նմանէ: 211 C եղեալ: 212 AB գիտաց *փխ* ծանեաւ: 213 CD *յիք* իրրեւ: 214 AB իւրում *փխ* Դաւթի: 215 CD *յիք* ցնա: 216 CD դու մանուկ: 217 *Եփր* Բայց կարծելով կարծէր, զի ինքն Դաւիթ թագաւորէ *փխ* թագաւորելոց էր Դաւիթ: 218 CD Յուդային: 219 ABC *յիք* նա: 220 *Եփր* *յիք* արդեաւք: 221 CD յիք ժամանակացն: 222 *Եփր* Յակովբա: 223 CD ազգին խոստացաւ: 224 *Եփր* իցէ ասէ: 225 C Փարեայ: 226—227 CD Ոչ գիտեմ փխ Ոչ... վասն: 228 ABC *յիք* ասէ ցնա... որդի է: 229—230 AB *Եփր* *յիք* Որպէս հրեայքն... զնշանակութիւն: 231 *Եփր* Ի Բեթղէեմ գեղջէ: 232 C զտուն *փխ* զանուն: 233 C *յիք* բայց... իւրոյ: 234 BC սպանցէ *փխ* սպանանիցէն: 235 *Եփր* *յիք* զնա: 236 B յաղթեաց սատանայի: 237 CD եւ *փխ* Վասն այնորիկ: 238 CD Քրիստոսի *փխ* արհնութիւն Աստուծոյ: 239 CD զնա առ: 240 CD յաւրէ յայնմանէ *փխ* յաւուր յայնմիկ: 241 CD *յիք* աչաց: 242 *Եփր* լաւացուցին *փխ* մեծացուցին: 243—245 ABCD *յիք* ետուն... Արդ, զայն: 244 *Եփր* նմա, ասէ: 246 *Եփր* կամէի: 247 *Եփր* յայտ եղեւ ինձ *փխ* գիտացի: 248 CD նուազէին: 249 *Եփր* իցէ *փխ* է: 250—251 ABCD *յիք* ետուն... Սատուդի: 251—252 *Եփր* *յիք* եւ յայնմ... Սատուդ: 253 *Եփր* մուտ: 254—255 *Եփր* եւ մարգաէացաւ: Եւ արդ, ուստի՞ ունիցի այսն պիղծ զմարգարէութիւն, եւ զինչ ինչ արդեաւք իցէ մարգարէութիւն: Մարգարէութիւն նորա այս էր, ասէ՝ Դաւիթ թագաւորէ: Արդ, զսոյն, զայս ասելով լուաւ այն, որ խաւսէրն ի նմա, եւ ոչ եթէ մարգարէանալով մարգարէացաւ *փխ* եւ մարգարէանայր... մարգարէիցն: 256—257 *Եփր* Դաւիթ ծպտեցաւ ձմեցաւ կրկին անգամ յաջ եւ յահեակ: 255—258 CD *յիք* Կամեցաւ ձգել... ընդ Հաւր: 259 Ձեռագրերում՝ Միւսեայ: 260 D յիք յայտնէ: 258—261 CD *յիք* Իսկ կանայքն... առնէր Տէրն: 261—262 CD Թագաւոր ես դու հազարաց միայն, իսկ Քրիստոս՝ բիւրուց երկնայնոց եւ երկրայնոց: Թագաւոր ես դու երկրի միայն ազգի, իսկ Քրիստոս՝ ամենայն աշխարհի *փխ* Թագաւոր ես դու... գերեաց: 263 CD *յիք* որպէս զառիւծ... յորս: 264 CD *յիք* եւ ջրահեղձոյց... մանկունսն: 265 CD *յիք* սուրբ: 266 CD յիշեցի: Սատուդ կամեցաւ ձգել զգեղարդն... այլ իբրեւ (ABC *յիք* այլ իբրեւ) արար զնա իւր փեսայ յերկուս դստերսն իւր (ABC *յիք* յերկու... իւր), զի արկցէ զնա ի ձեռս այլազգեացն... այժմ մարմնացեալ ի կուսէն յազգէ Դաւթի (ABC *յիք* ի կուսէն... Դաւթի) փառաւորի...: 267—268 AB *յիք* Պաշարեցաւ... Տեառն մերոյ: 269 AB Դաւթի *փխ* նորա: 270 CD *յիք* Եւ: 271—272 CD յայլ ուրեք տեղիս *փխ* այլուր... տեղիս է: 273 *յիք* կայր: 274—275 CD զգայութեամբ զարդարեալ էր *փխ* զգայութիւնս... զսա: 276 CD *յիք* Ուրիա Քեթացոյ: 277 Դաւթա: 278 CD իրիք: 279 C զվարձանս: 280 C որ: 281 B *յիք* որդի: 282 C զմիտս *փխ* զսիրտս: 283 C *յիք* ընդէի: 284 C ժողովրդեանն: 285 C *յիք* էառ: 286 C կին առ: 287 CD որ սքանչելեաւք լի էր *փխ* լի սքանչելեաւք: 288 CD կերպարանս մեղաւորի: 289 BC յանցուցեալ: 290 AB ջնանոյր: Ունէր ցուրտ ցաւ զԴաւիթ եւ պիտոյ եղեւ նմա... (տե՛ս): 291 ՆԲՀ, Ա, էջ 360 *յիք* նմա: 292 CD *յիք* շնութեան կամ: 293 *յիք* եւ ցանկասցի: 294 CD *յիք* եւ ոչ ջնանոյր: 295 AB արիւնակ էր *փխ* նշանակէր: 296 CD ջնաուցանեն գեղեցկութեամբն: 297 C Աբիսաք: 298 C հալեսցի *փխ* հալածական եղեւ: 299 C Նաթանայեւ: 300 CD Բերսաբէէ: "300ա CD անկանէին: 301 CD ասէին: 302 CD թագաւորեաց: 303 CD էր: 304 CD *յիք* Նաթան... զդէմս: 305 B արիւնցն եւ մարգարէիցն. եւ որպէս Նաթան ընդ Բերսաբէի... աղաչէին զՀայր (տե՛ս ՃԼԱ), որը կրկնում է. G. Garitte, p. 317, annot. 1, 306—7 C Յիսուսի *փխ* Քրիստոսի: 308 C առին *փխ* տուեալ: 309 CD *յիք* ինչ: 310 CD հայրքն *փխ* հրեայքն: 311—312 CD *յիք* եւ իջուցին... վասնզի: 313 CD գոյանայ բնութեանց *փխ* բնութեանց է միաւորեալ: 314—315 CD Երուսաղէմ: Եւ իջուցին... ի վերայ Իսրաէլի (տե՛ս 311): 315—317 AB Քերրոն *փխ* ...Գեհոն: 316 AB յԵրուսաղէմա: 318 CD առաքումն: 319 AB Ադովնիայի: 320 AB զթագաւորութիւն բաանալ: 321 A Քերրոն *փխ* Գեհոն: 322 B *յիք* յերկրի: 323 B Որում փառք Քրիստոսի *փխ* եւ նմա փառք:

ԵՂԻՇԷԻ «ՀԱՅՐ ՄԵՐԻ» ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

Եղիշէ վարդապետը Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի կրտսեր աշակերտներից է համարւում եւ, ըստ աւանդութեան, նրանցից մի քանիսի հետ մեկնել է Ալեքսանդրիա՝ ուսանելու: Վերադառնալուց յետոյ եղել է Վարդան Մամիկոնեան զօրավարի գնդում որպէս զինուոր եւ դպիր: Մասնակցել է Վարդանանց պատերազմին եւ անմահացրել այդ պատմութիւնն իր նշանաւոր «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» երկով: Եղիշէի գրչին են պատկանում խրատական կանոնադրութիւններ, Արարածոց մեկնութիւնը, «Հայր մերի» սոյն մեկնութիւնը, միանձանց խրատը, ճառեր ողորմութեան, Քրիստոսի չարչարանքների, թաղման եւ յարութեան մասին:

Կեանքի վերջում, թողնելով աշխարհը, հեռացել է Ռշտունեաց ծովեզերքի լեռները եւ այնտեղ ճգնել խստակրօն վարքով: Պատմութիւնն աւանդում է, որ նա վախճանուել է լեռների մէջ, եւ նրա մարմինը գտնուել է բազում տարիներ յետոյ՝ անապական վիճակում:

Քրիստոնէական Եկեղեցու շատ հայրեր են անդրադարձել տէրունական աղօթքին, նրանում ամփոփուած թէ՛ դաւանաբանական իմաստներին, թէ՛ ներանձնական ու ընդհանրական խնդրուածքներին: Աղօթքի այս կողմերը եւ թաքուն խորհուրդներն ըստ արժանւոյն վերլուծուած են տարբեր մեկնիչների կողմից:

Եղիշէ վարդապետի սոյն փոքրիկ աշխատութիւնն ուրոյն կերպով է մատուցում տէրունական աղօթքի վայելչութիւնը: Իր գեղեցիկ ներածութեան մէջ ընթերցողի ուշադրութիւնն, ասես կտրելով երկրից, անմիջապէս հրաւիրում է այն վեհ զգացողութեանը, որով լցւում է հաւատացեալն այս աղօթքն ասելիս: Սակայն Եղիշէի քննութեան նիւթը գերազանցապէս Աստուծոյ սէրն է, որով շնչում է տէրունական աղօթքը, սէրը, որով Յիսուս մեզ արտօնեց Աստծուն Հայր անուանել, որով մեղաւոր մարդկանց Իրեն աղօթել եւ փառաբանել պատուիրեց, որով երկնաւոր հացը՝ Իր Մարմինը, մեզ որպէս հանապազօրեայ կերակուր տուեց, որով մեր ամենօրեայ մեղքերն աղօթքով, ապաշխարութեամբ եւ ողորմութեամբ սրբելու հնարաւորութիւն տուեց:

Աստուծոյ մեծամեծ պարգեւները մէկ—մէկ թուելով՝ Եղիշէն ամէն առիթով յորդորում է հաւատացեալին՝ Լուսոյ որդի կոչմանն արժանի վարքով ընթանալ թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով, նահատակների օրինակով խրախուսուել, հաւատքի խօսքը մինչեւ վերջ պահել եւ ողջամիտ չափաւորութեամբ կենցաղավարել, քանզի այս բաները կարող են մեզ Աստուծոյ արքայութեանը ժառանգորդ դարձնել:

Եղիշէ վարդապետի այս գործն արժէքաւոր է նաեւ նրանով, որ ընդգծում է տէրունական աղօթքի մէջ արտացոլուած գործնական աստուածպաշտութիւնը եւ նրա աղբիւրը՝ Աստուծոյ անսահման սիրուն պատասխանելու մարդու ձգտումը:

Աշխարհաբար թարգմանութիւնը կատարուած է ըստ «Մրբոյ հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք» (Վենետիկ, 1859, էջ 199—206) հրատարակութեան:

Խաչիկ Գրիգորեան

Ս. ԵՂԻԵԷ ՎԱՐԴԱՊԵՏ

«ՀԱՅՐ ՄԵՐ» ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

[Այս աղօթքը] բնոյթով պարզ է եւ խօսքի առաւել վեհութիւն ունի. զէպի վեր Հայել տուեց եւ Աստծուն Հայր [անուանել] սովորեցրեց բոլորին. որդիներին անձկալի գութի համար ստիպում է դիմել Հօրը, եւ կարօտութեան կամքը Հօրը մղում է ողորմութեան գութի: Որդիներն էլ Հօր կամքի համաձայն պէտք է լինեն, ապա եւ Հայրը որդիների կամքի համաձայն նրանց կարիքները կհոգայ եւ Իր ողջ հարստութեանը ժառանգորդ կդարձնի նրանց: Հայր անունը մէկ է թէ հոգեւորների եւ թէ մարմնաւորների համար, [սակայն] տարբերւում են միմեանցից [նրա] գործածութիւնները՝ բաժանուելով [հոգեւոր եւ մարմնաւոր] մասերի: Երկրաւոր հայրերին մարմնի ցանկութեան ախտերը դրդեցին որդեծնութեան՝ ըստ ախտաւոր յղութեան ախտաւոր որդիներ ծնելուն: Փոփոխական է [մարմնաւոր] հայրութիւնը. երբեմնի որդին դարձաւ հայր. նա հեռացաւ այս աշխարհի կեանքից, եւ նրանից վերցուեց հայրութիւնը, նրա տեղը եկաւ որդին եւ հայր դարձաւ եւ նոյն ճանապարհով գնաց: Այսպէս, փոխանորդութեամբ, աշխարհն իր վախճանին է հասնելու:

Մի է ճշմարիտ Հայրը եւ Արարիչը ողջ աշխարհի, որ առանց ախտերի՛ յղացաւ եւ առանց ցաւերի՛ ծնեց բոլոր երեւելիները եւ աներեւոյթները: [Եւ] Նա, Ով ծնեց, գալով սովորեցնում է որդիներին՝ դիմել երկնաւոր Հօրը, որպէսզի աշխարհը մշտապէս խանձարուրների եւ օրրոցների մէջ չմնայ՝ կաթնածուծների եւ ջամբակերների պէս՝ թաթախուած ու թաղուած գարշելի ախտերի մէջ, որոնցից ձանձրացան մայրերն ու ստնտուները, եւ դէմքերը շրջեցին դայեակներն ու սնուցիչները: Եւ սրանք օրէնքը եւ մարգարէներն են. ծովում լուացին եւ չկարողացան սրբել, գետերով անցկացրին եւ չողողուեցին, օճառ գործածեցին, լուացուեցին բորակով եւ չսրբուեցին, իրենց վրայ վերցրին, սակայն գցեցին ու հեռացան:*

Գթաց երկնաւոր Հայրը, խոնարհուեց երկնքից երկիր, տեսաւ բոլորին արնաշաղախ, կապաշտութեան մեռելոտի զոհաբերութեան մէջ: Վերցրեց, լուաց, հագցրեց երկնաւոր հանդերձը եւ վերստին մօտեցրեց նոյն որդեգրութեանը: Սովորեցրեց հայրենի վարդապետութիւնը, որպէսզի դիմեն սիրելի երկնաւոր Հօրը: «Երբ,- ասում է,- աղօթքի կանգնէք, տղայաբար շատախօս չլինէք» [տե՛ս Մատթ. Զ 7], [քանզի] Աստուած սրտի խորհուրդները լսող է եւ քարի գործերի փոխարէն՝ քարին հատուցող: Բերանով այսքան վկայելը բաւական է. «Հա՛յր մեր, որ երկնքում ես, թող սուրբ լինի Քո անունը»:

Մեծ է այս պարգեւը մարդկանց տրուած բոլոր պարգեւներից առաւել՝ Աստուծոյ՝ Հայր լինելը մարդկանց: Այս ասելու իշխանութիւնը չունեն հրեշտակները. թէպէտեւ հզօր են եւ հոգեւոր, [սակայն] սպասաւորներ են եւ ոչ՝ որդիներ: Ո՞վ մարդ, զգուշացէ՛ք քո անձի համար, [տե՛ս, թէ] ինչպիսի պատուով մեծարուեցիք՝ մինչեւ իսկ Աստուն քեզ Հայր անուանելու իշխանութիւն ստացար. ուստի այս բանը եւս խորհիր, որ Հօր պատուի համաձայն նաեւ քեզ պահես, որպէսզի իմանան վերինները եւ ստորինները, թէ, արդարեւ, Աստուծոյ որդի ես դու: Աստուած խօսքով է ծնում մարդուն. թէպէտեւ խօսքով չես կարող, մարմնիդ կամքով մի՛ թաւալուիր երկրի վրայ. կտրի՛ր եւ հեռացրո՛ւ քեզանից աւելորդ ցանկութիւնները: Շատ եւ բաւական համարիր քեզ անհրաժեշտ կերակուրները, չափը մի՛ անցիր եւ մի՛ շուայտացիր: Գիրութիւնից ճարպակալում է մարդը, եւ առատ ճարպից անօրէնութիւններ են ելնում, ինչպէս արբեցողութիւնից՝ պիղծ գիճութիւններ. այդպիսին Աստծուն Հայր անուանել չի կարող: Ահա ինքդ չվկայեցի՞ր՝ ասելով. «Սո՛ւրբ թող լինի Քո անունը»: Աստծուն ո՞վ կարող է անուն դնել. սուրբ ասել՝ ա՛յս է Աստուծոյ ճշմարիտ անունը: Սուտ աստուածների անունները սուրբ չեն. մէկը՝ գող, մէկը՝ մարդասպան, մէկը՝ շուն, եւ բոլորը՝ իրենց յատուկ չարչարելի ախտերով. մանաւանդ՝ գոյութիւն իսկ չունեն, ոչ էլ պիտի գոյութիւն ունենան: Մարդիկ, որ նրանց աստուած անուանեցին, նրանք Աստուծոյ ճշմարիտ որդիները չեն: Ում սովորեցնում է Աստծուն դիմել եւ հրամայում է աղօթքի կանգնել Հօր առաջ, նրանցով է բացում դուռը բոլորի համար, որպէսզի ամէնքը դէպի այդ դուռը դիմեն՝ մտնելու, նոյն աղօթքը սովորեն՝ աղաչելու Աստծուն եւ ասելու. «Հա՛յր մեր, որ երկնքում ես, սո՛ւրբ թող լինի Քո անունը»: Երբ սովորեն աղօթելիս ճշմարտախօս լինել, աշխարհում էլ ճշմարտագործ կլինեն եւ այնժամ կարող են լքել ու թողնել սուտ աստուածներին: Ովքեր քարին ու փայտին հայր եւ մայր էին անուանում եւ հեռացան նրանցից ու հրաժարուեցին իրենց անառակ գործերից, նրանց միտքը սրբուեց իմաստութեան գիտութեամբ, եւ նրանց բերանները բացուեցին՝ համարձակ բարբառելու եւ ասելու. «Թող գա՛յ Քո արքայութիւնը, թող Քո կամքը լինի ինչպէս երկնքում, այնպէս էլ՝ երկրի վրայ»:

Երբ Աստուած թագաւորեց ամէն բանի վրայ, Նրա արքայութիւնը [հաստատուեց] Իր կամարարների վրայ: «Միայն,- ասում է,- թող գա՛յ Քո արքայութիւնը»: Սա նման է այն խօսքին, թէ՝ «Կծագի Յակոբի աստղը, եւ մի այր կելնի Իսրայէլից եւ կգայ ու կկործանի Ամաղեկի զօրութիւնը» [տե՛ս Թիւք ԻԴ 17]: Աստղը ծագեց, եւ այրը ելաւ, հարուածեց եւ կործանեց սատանային, որը հեթանոսների զօրութիւնն էր:

* ջամբակեր — մանկիկ, որ կերակրւում է ձեռքով

Սա՛ էր Աստուծոյ կամքն ի սկզբանէ, եւ այն կատարուեց մեր Տէր Յիսուս Քրիստոսի Գալստեամբ: Այս աղօթքը պարտաւոր ենք խօսքով սովորել եւ հաւատքով յուսալ Նրա երկրորդ Գալստեանը, երբ մեր աղօթքի համաձայն նաեւ մեր գործերը կերեւան ստուգութեամբ:

«Թող գա՛յ Քո արքայութիւնը»: Ինքը՝ Արքայութիւնը, սովորեցնում է Իր մասին խօսել. «Աշխարհի մէջ էր, եւ աշխարհը Նրանով եղաւ եւ աշխարհը Նրան չճանաչեց» [Յով. Ա 10]: Սովորեցնում է ասել Հայր, որպէսզի միայն Նրան ճանաչես [որպէս] Արարիչ աշխարհի, Արարիչ ամենայնի, որ որդեգրութիւն շնորհեց միայն մարդուն: Նա, որ արարեց, նոյն Ինքը եւ Արքայ է, եւ [Նրա հետ] եկաւ նաեւ Իր արքայութիւնը: Նա, որ բնութեամբ մեր Աստուածն է, նոյն Ինքը մեր Հայրն է՝ Իր Աստուածութեան շնորհներով: Եթէ Աստուած ամենքի Հայրն է, ապա Քրիստոս Եղբայրն է բոլոր նրանց, ովքեր գործում են Նրա կամքը: Արքայ էր եւ եղաւ քո Եղբայրը: Սրանք աւելի մեծ են, քան առաջին արարչութեան պարգեւները. այնժամ ըստ Աստուծոյ պատկերի ասուեց՝ թող լինի մարդը [տե՛ս Ծնունդ Ա 26], որպէս թէ ըստ օրինակի կերպաւորեց՝ հոգեղէնը կամենալով այս հողեղէնի համար տիպ դարձնել, որպէսզի սա էլ սովորի առաքինութեամբ Նրան նմանուել: Երբ չկարողացաւ միաբանուել Նրա հետ, Ինքն իսկ առաւ նրա տիպը, ինչպէս որ Ինքը գիտէ. Ինքը ձեւաւորեց անխախտելի եւ անքակտելի որպիսութիւնը՝ անհասանելի եւ անասելի, միայն հաւատալի եւ յուսալի, եւ Ինքը միայն՝ արժանի սիրոյ, որ մեր [բնութեամբ] խօսում է մեզ հետ եւ սովորեցնում. խօսում է [մարդկային] ազգակցութեամբ եւ աներեւոյթ Աստուածութիւնն ուսուցանում է երեւելիներով, որպէսզի աներեւոյթ Աստուածութիւնը երեւելիներով ճանաչես: Որով եկաւ*, նոյնով եւ երկրորդ անգամ պիտի գայ: Այժմ վարդապետութիւնն աշակերտներին որդիներ անուանեց, ծառաներին տէր դարձրեց եւ մահկանացուներին անմահութեան է հրաւիրում ասելով. «Թող գա՛յ Քո արքայութիւնն» [այժմ]՝ զգուշութեամբ պատրաստուելու, իսկ յետոյ՝ իւրաքանչիւր գործի համաչափ համար: Որչափ որ կարողանաս եւ հաղորդ լինել արքայութեանը, այդչափ ըղձական է աղօթքդ եւ մեր բնութիւնից վեր պարգեւներ է խոստանում:

«Թող,– ասում է,– Քո կամքը լինի»: Աստուծոյ կամքը մարդու արքութիւնն է, քանզի բաժնեկից դարձրեց Իր արքայութեանը, որպէսզի ոչ թէ անկարող լիներք այդ բաժինը ձեռք բերել, այլ որպէսզի մեր յոյսի համար դիւրութեամբ համբերութիւն ստանանք նրանց նման, որոնց** սովորեցրեց [այս] աղօթքը. եթէ նրանք հասան ըստ իրենց աղօթքների, ուրեմն մենք էլ կարող ենք. միայն հաւատա՛, յուսա՛ եւ սիրի՛ր եւ շուտով

* այսինքն՝ տեսանելի, իրական մարմնով
** Ի նկատի ունի առաքեալներին:

կհասնես խնդութեամբ: Եւ եթէ տրտմութեամբ չարչարակից լինես Քրիստոսին, Ինքն Աստուած կզօրացնի համբերութեամբ, եւ եթէ [նման] կարողութիւն չլինէր, Աստուած այդպիսի աղօթք մեզ չէր սովորեցնի: Առաջիններին նայեցէք եւ քաջալերուեցէք, որ միայն չարչարանքները բաւական չհամարեցին իրենց հաւատքի համար, այլեւ մեռնելը [նախընտրեցին] ապրելուց: Նահատակադիրին* նայեցին եւ նահատակուեցին: Խօսքով նրանց գովաբանող լինենք եւ գործով մեր անձերը նոյն նահատակութեամբ աւարտենք: Աստուած Հայր է հաւասարապէս բոլորին, [ուստի] պարտաւոր ենք բոլորս հաւասար որդիներ լինել, քանի որ մի է այն ժառանգութիւնը, որ բաշխեց բոլորին:

«Թող Քո կամքը լինի ինչպէս երկնքում, այնպէս էլ՝ երկրի վրայ»: Թէեւ Աստուած կարող է բոլոր մարդկանց երկնաւորներ դարձնել, մեր կամքին է յանձնում աղօթելը, որպէսզի մենք՝ երկրաւորներս, ինքներս կարողանանք երկնաւոր դառնալ: Վերին զօրքերն ամբողջապէս Նրա կամքին են սիրով հնազանդւում եւ, միաբանութեամբ լծուած, փառաւորում են Աստծուն եւ Նրա ահաւոր փառքից ծածկում են ոտքերն ու դէմքերը, որպէսզի իրենց ներսում սիրեն Աստծուն: Աչքով տեսնելու փոխարէն իրենց ներսում բաւական են համարում սէրը, եւ, նրանց սիրուց [դրդուած], Աստուած էլ նրանց հանդէպ սիրով կատարեց Իր կամքը: Զշտապենք մարմնաւոր աչքով տեսնել Աստծուն, որպէսզի ժամանակից շուտ չկործանուենք: Մեզանից թող սէրը պատգամաւոր լինի Նրա առաջ, եւ Նրա սիրով Իր կամքը թող կատարուի մեր մէջ: Ինչ որ սովորեցրին մեզ մարգարէները, դրանով ջանանք ընթանալ, քանզի նրանք խօսքով ասացին եւ գործով կատարեցին: Նրանց վարդապետը ոչ այլ ոք էր, եթէ ոչ՝ Նա, Ով քեզ սովորեցրեց աղօթքը: Դու էլ խօսքով սովորի՛ր աղօթքը եւ գործով շտապի՛ր կատարել: Հեռու չես հրեշտակներից, այլ նրանց հետ ես աղօթքով, որպէսզի նրանց հետ փառաւորես Աստծուն: Ինչպէս որ դու նրանց միաբանուես, նոյնպէս էլ նրանք քեզ հետ երգակից կլինեն աղօթելիս եւ օրհնելիս: Համարձակ բաց ես անում բերանդ եւ ասում. «Թող Քո կամքը լինի ինչպէս երկնքում, այնպէս էլ՝ երկրի վրայ»: Այս [ասելու] իշխանութիւնն աւելի մեծ է, քան առաջին օրհնութիւնները. այնտեղ միայն երկրին տիրել [արտօնուեց] իշխանութեամբ [Ծնունդ. Ա 28], այստեղ ասում է՝ երկնքում եւ երկրի վրայ:

«Մեր հանապազօրեայ հացը տուր մեզ այսօր»: Երկրաբոյս հացն Աստուած առանց աղաչելու հաւասարապէս շնորհում է բոլորին: «Մարդկանց եւ կենդանիներին Դու ես ապրեցնում, Տէ՛ր» [տե՛ս Սաղմ. ԼԵ 7]: Եւ ինչպէ՞ս կարելի է ասել, [չէ՞ որ] նոյնիսկ սա հանապազօրեայ չէ. մանկութիւնն արգելում է, հիւանդութիւնը՝ քչացնում, կարօտութիւնը

* այսինքն՝ Քրիստոսին

խափանում է, մահը՝ բաժանում եւ հեռացնում: «Ձեր հայրերն անապատում կերան մանանան եւ մեռան: Այս է ճշմարիտ Հացը, որ երկնքից է իջնում. ով որ այս Հացից ուտի, յաւիտեան չի մեռնի» [տե՛ս Յովհ. Զ 49–50]: Լսում էին Նրանից այս խօսքը եւ չէին կարողանում անմիջապէս հասկանալ, ուստի կրկնում եւ երեքկնում է նոյն խօսքը, որպէսզի հեշտութեամբ լսեն եւ հաւատով ընկալեն այդ խօսքի զօրութիւնը. «Ես եմ,- ասում է,- կենդանի Հացը, որ երկնքից է իջել. ով որ ուտի այս Հացը, մահ չի ճաշակելու» [տե՛ս Յովհ. Զ 51–52]: Այս Հացի մասին է աղօթքի մէջ սովորեցնում հանապազ խնդրել Աստծուց: Եթէ լաւ խորհես, [կհամոզուես, որ] նա, ով այս Հացը սրբութեամբ է ուտում եւ սրան արժանի կերպով է պատրաստում իր անձը, նա անկարօտ է այս երկրաւոր արքայութեանը: Մահկանացու ձեռքին անմահ Հացը դնելով՝ դրանից ձեռքն անմիջապէս անմահացաւ եւ, այս ուտելով, մարդն ամբողջովին՝ շնչով, հոգով եւ մարմնով, հոգիացաւ ու բաժնեկից դարձաւ Քրիստոսին. միայն թէ զօրութեան սկիզբը մինչեւ վախճանն անարատ պահի: Զկան երկրաւոր շարչարանքներ, որ նրան յաղթեն, նրա առաջ արհամարհուած է արծաթը, եւ ոսկին ատելի է նրա աչքին, ցաւ է համարւում այս աշխարհի հարստութիւնը, քանի որ իր խորհուրդները սրբուեցին երկնաւոր ազատութեամբ՝ անմահ Հացով յագենալով: Նա ամէն բանի եղաւ բաւարար. եթէ երեխայ է, կատարելահասակ երեւաց, եթէ տկարացաւ ցաւերից, Աստուծոյ զօրութիւնը ընակուեց նրա մէջ, եթէ այս աշխարհի կեանքից հեռացաւ, անմահ կեանքն իր հետ տարաւ առ Աստուած: Այս էր սովորեցնում մեր Տէրը՝ աղօթքի մէջ աղաչել Իրեն. մեր Հացն օրըստօրէ տո՛ւր մեզ ո՛չ երկրից, այլ՝ Տիրոջից. եւ յայտնի է՝ ոչ էլ երկնքից, այլ [նկատի ունի] ամենքի Տիրոջը, [քանզի] ասում է. «Ա՛յս է Իմ Մարմինը եւ ա՛յս է Իմ Արիւնը»: [Մարկ. ԺԴ 22]: Թէպէտ եւ անփշրելի էր, քո սիրոյ համար փշրուեց եւ քեզ, որ քո կամքով փշրուեցիր, անփշրելի Աստուածութեամբ դէպի Ինքը բարձրացրեց. «Իմ անձը չես թողնի դժոխքի մէջ եւ Քո սուրբին չես տայ տեսնել ապականութիւն» [տե՛ս Սաղմ. ԺԵ 10]: Ուրբաթ օրը խաչուեց՝ մահը փշրելու համար եւ միաշաբաթի օրը հաւաքեց Աղամի փշրուած ոսկորները եւ յարութիւն տուեց անմահութեամբ. եւ [Իրեն] ցոյց տուեց շատերին՝ ճշմարտութեամբ եւ ոչ՝ առ աչօք: Մի օր հացացաւ Վերնատանը եւ հանապազ հացանում է Եկեղեցում՝ սուրբ Սեղանի վրայ: Նախ Ինքն Իրեն ճաշակեց եւ ապա մեզ ճաշակակից դարձրեց Իր չարչարանքներին: Նա այսուհետեւ չարչարանքների մէջ չէ, այլ հայրենի փառքի մէջ փառաւորւում է հրեշտակներից եւ մարդկանցից եւ մեր բոլորի չարչարանքները վերացրեց Իր անչարչարելի Աստուածութեամբ: Մեր հաւատքի այս յոյսը որպէս հաստատուն խարիսխ պահենք մեր հոգիների եւ մարմինների մէջ. ինչպէս որ սիւնը շէնքի կայունութիւնն է, հաւատքն էլ մարդու անքակտելիութիւնն է Աստուծոյ հետ, որով եւ համարձակութեամբ կարող է բարբառել եւ ասել. «Նեբիր մեր մեղքերը, ինչպէս որ մենք ենք ներում մեր պարտապաններին»:

Այս է ճշմարիտ, բանական եւ գործնական աղօթքը. երբ դու պարտքդ չես պահանջում ընկերոջից, այնժամ Աստուած էլ քո բոլոր պարտքերը քեզ է շնորհում, որ անմեղ լինես: Ականջ դիր Պետրոսին, թէ ինչպէս սովորեց Տիրոջից. նա եօթ անգամ կամեցաւ ներել եղբօր յանցանքը, իսկ մեր Տէրը եօթանասուն անգամ եօթ ասաց [տե՛ս Մատթ. ԺԸ 23]: Պետրոսն իբրեւ մարդ սահման դրեց, իսկ մեր Տէրը սահման չդրեց Իր Աստուածութեան մարդասէր բարերարութեանը: Հանապազ մեղանչում ենք մեր խօսքերով ու գործերով, եւ Աստուած տեսնում է ու զանց առնում, որպէսզի Իր համբերութեամբ մեզ ապաշխարութեան յորդորի: Զմեղանչելն իսկ մարդու համար կատարեալ արդարութիւն է, իսկ եթէ իբրեւ մարդ յանցանք գործեց, թող շտապի զղջալ՝ ապաշխարելու: Բաց են Նրա ողորմութեան դռները, եւ չի փակում ապաշխարողների առաջ: Մանաւանդ՝ ովքեր գիտեն հաւատքով աղաչել, նրանք նաեւ առաքինութեամբ կարող են ճգնել հոգեւոր վաստակների համար. նրանք ոչ միայն ներում են իրենց ընկերների պարտքերը, այլեւ՝ իրենց ունեցուածքը բաշխում կարօտեալներին: Աստուծոյ զօրութիւնն է, որ նրանց ձգում է դէպի առաքինութիւն, ինչպէս եւ առաջիններն էին անում. «Ովքեր,- ասում է,- գիւղերի, ագարակների եւ ստացուածքի տէր էին, վաճառում էին ողջ ունեցուածքը եւ բերում-դնում առաքեալների ոտքի տակ» [տե՛ս Գործք Դ 34–35]: Մեր Տէրը նրանց առաքեց [Աստուծոյ] խօսքի քարոզութեան համար: Նրանք խօսքի քարոզիչներ էին եւ պէտքերի մատակարարողներ: Խօսքի ձայնն ականջին է հասնում, իսկ Վերնայինի սէրն առանց խօսքի էր առատաձեռնութիւն սովորեցնում. ո՛չ՝ որովհետեւ ուզում էին աղքատանալ, այլ՝ որպէսզի այլ հարստութեան հասնեն՝ երկնաւորին: Բայց դու, երբ ներում ես քո ընկերոջ պարտքը, նրա համար չէր, որ դու ատում էիր քո իրերը, այլ՝ որպէսզի քո արած փոքր ողորմութեամբ Աստուած ների քո ունեցած բազմապատիկ պարտքերը: Այս խօսքին հետեւիր [եւ կտեսնես, որ] երբ ներում ես քո ընկերոջը, դու եւս արժանանում ես ներման:

Համարձակութեամբ բաց ես անում բերանդ եւ ասում. «Մի՛ տար ինձ փորձութեան, այլ փրկի՛ր չարից»: Աստուած չի կամենում մարդուն փորձութեան տանել, այլ՝ ազատել փորձութիւնից եւ փրկել մահուանից: Քանզի Նա, Ով Իր Որդուն չխնայեց, այլ մեր բոլորի համար մահուան մատնեց, Նրանով շնորհում է ամէն տեսակ բարիքներ բոլոր նրանց, ովքեր խնդրում են Իրենից: Թէպէտ մենք ի վիճակի չենք փոխհատուցել Աստծուն, չծուլանանք, որչափ որ մեր կարողութիւնն է. մեր սակաւապատութիւնը որպէս պահք է դիտում, չափաւոր ըմպելը՝ գինեհատութիւն, միջին հանդերձը՝ համեստութիւն եւ անհրաժեշտ ստացուածքը՝ աղքատութիւն: Երանութեան համար հեզախօս լինենք եւ [դրանով] ընկերոջը

խոնարհութիւն սովորեցնենք: Եթէ անքուն մնալ չենք կարող, [գոնէ] ողջ գիշերը քնելուն չնուիրենք, որպէսզի ամբողջովին չմոռանանք սաղմոսները եւ օրհնութիւնները: Եթէ աղքատների կարօտութիւնն [ամբողջովին] բաւարարել չենք կարող, մի պատառի եւ բաժակի կարօտ չթողնենք նրանց: Մեր ստացուածքների մէջ որքերից եւ այրիներից յափշտակուած որեւէ բան թող չգտնուի: Ինչ որ ունենք, Աստծուն նուիրուած թող լինի: Այնժամ մեր անձերն էլ Նրան հաճելի եւ ընդունելի պատարագ կլինեն: Բոլորին վայել է փութաջան լինել Աստուծոյ պատուիրանները պահելու եւ գործելու մէջ՝ տղամարդկանց եւ կանանց, ծառաներին եւ ազատներին, քանի որ մեր Տէրը բոլորի թողութեան համար եկաւ, եւ Նրա մարդասիրութեանը վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:



ՎԱՐՔ ՍՐԲՈՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ՝
ԷԴՈՒԱՐԴ ՍԱՖԱՐԵԱՆԻ,
ՄԱՐԹԱ ԱՐԱԲԵԱՆԻ ԵՒ
ՋՆԱՐԻԿ ՂԱՋԱՐԵԱՆԻ

ՍՈՒՐԲ ՏՐԴԱՏ ԹԱԳԱՒՈՐԻ ՎԱՐՔԸ

Մեծն Տրդատը՝ թագաւորների մէջ քաջագօրն ու բարեյաղթը, սրով եւ խաչով թագադրուած Հայաստանի լուսաւորեալ լուսաւորիչը, Հայոց Խոսրով արքայի որդին էր, Պարթեւ Արշակունի տնից: Նա թիկնեղ եւ հաստաբազուկ, զօրաւոր, ահեղ եւ փառահեղ հսկայ էր, որպէս դիւցազուն՝ դիւցազունների մէջ: Երբ Անակ Պարթեւը դաւով սպանեց Տրդատի Հօրը՝ Խոսրովին, եւ Արտաշիր Սասանեան պարսիկը համարձակօրէն մտաւ Հայոց աշխարհ՝ վերացնելու թագաւորութիւնը եւ տիրելու ամբողջ Հայաստանին, կոտորածից փրկուեցին արքայորդի մանուկ Տրդատը եւ նրա Խոսրովիդուխտ քոյրը: Տրդատին փրկեց Հայոց նախարարներից մէկը՝ Արտաւազդ Մանդակունին՝ փախցնելով նրան Կապադովկիայի Կեսարիա քաղաքը, որ կայսեր տէրութեան մէջ էր, իսկ Խոսրովիդուխտին ազատեց Օտա Ամատունին եւ, տանելով Անի ամրոցը, որ Կամախում էր գտնւում, այնտեղ գաղտնի սնուցեց եւ զգուշութեամբ թաքցրեց նրան:

Տրդատի՝ միաժամանակ Կեսարիայում մնալուց յետոյ Արտաւազդը նրան տարաւ արեւմուտք՝ Հռոմ քաղաք, որտեղ արքունքի հասած պատանին Լիկիանոսի միջոցով (որ կայսեր աւագ իշխաններից էր եւ որոշ ժամանակ անց դարձաւ կայսր) մնաց արքունիքում: Եւ քանզի Տրդատը հզօր էր զօրութեամբ եւ անպարտելի՝ ուժով, զէնքի մէջ՝ յաջողակ եւ ամէն ինչում՝ առաջադէմ, իր քաջութեան բազմաթիւ գործերով զարմացրեց Հռովմէացիներին՝ ինչպէս մի նոր Հերկուլէս կամ Աքիլլէս: Քանզի պատահում էր, որ թշնամու գունդ էր միայնակ ետ մղում եւ շատերին սրով միայնակ կոտորում: Պատահում էր, որ, գաղանների հետ մարտի բռնուելով, մի ձեռքով եմեհի ցուլերի եղջիւրներ էր պոկում եւ արագավազ քառաձի կառքերի ընթացքը կանգնեցնում: Այսպիսի քաջագործութիւններով հռչակուեց մինչեւ Դիոկղետիանոս Դաղմատացու կայսրութեան ժամանակները: Վերջինս, չկարողանալով մենամարտել գոթացի բռնցքամարտիկ Հռչէի հետ եւ Լիկիանոսից լսելով Տրդատի մեծամեծ գործերի մասին, իր կայսերական հանդերձները հագցնում է նրան եւ դուրս բերում մենամարտի: Եւ երբ քաջ Տրդատը յաղթում է Հռչէին, ինքնակալը մեծամեծ պարգեւներով եւ փառքով պատուում է նրան եւ օծում իր բնիկ երկրի թագաւոր: Տրդատը, կայսերական գնդով Հայաստան գալով, քաջութեամբ վանում է պարսիկներին եւ բոլոր միւս թշնամիներին եւ, իրաւամբ բազմելով հայրենի թագաւորութեան աթոռին, տիրում է ամբողջ Հայաստան աշխարհին: Շուտով նա ամուսնանում է ալանների արքայադստեր՝ Աշխէնի հետ: Փառաւորում է եւ իր քոյր Խոսրովիդուխտ մեծ օրիորդին, որն ամուսնանալ չկամեցաւ եւ սիրեց կուսութիւնն իր ողջ կեանքում:

Հայոց սէգ արքայ Տրդատը, մոլորուած լինելով հայրենի հեթանոս «աստուածների» պաշտամունքով, կարծում էր, թէ այդ «աստուածներից» է իր թագաւորութեան յաջողութիւնը, եւ բազում չարչարանքների ենթարկեց իր վաստակաշատ եւ սիրելի ծառային՝ Քրիստոսի կանելի նահատակ Գրիգորին, որն առանց ճանաչուած լինելու ծառայում էր նրան: Իսկ բազում չարչարանքների ենթարկելուց յետոյ, երբ իմացաւ, որ Անակ Պարթեւի որդին է, հրամայեց տանել եւ նետել նրան մահապարտների խոր վիրապը, որն Արտաշատում էր: Ինքն էլ մի հրովարտակ գրեց, որպէսզի «աստուածների» պաշտամունքն անխափան լինի, եւ ոչ մի քրիստոնեայ չլինի իր ամբողջ տէրութեան մէջ, ինչպէս իր հայրը՝ Խոսրովն էր փորձել ոչնչացնել հաւատացեալներին, որոնք մնացել էին սուրբ առաքեալների՝ Թադեւոսի ու Բարդուղիմէոսի օրերից:

Անցաւ տասնչորս տարի, երբ Հռիփսիմեանց սուրբ կոյսերը հռոմէացւոց աշխարհից եկան Հայաստան եւ Հայոց արքայի կողմից նահատակութեան ենթարկուեցին Վաղարշապատ քաղաքի սահմանների մօտ: Նրանց նահատակութիւնից երեք օր անց, երբ Հայոց թագաւորը որսի ելաւ քաղաքից դուրս, Տիրոջ կողմից նորանշան պատուհասի ենթարկուեց. կառքից ընկնելով՝ սկսեց մոլեգնել այսահարի պէս եւ, Նաբուգոդոնոսոր Բաբելացի բռնաւորի նման մարդկային կերպարից օտարանալով, վայրենացաւ եւ վայրի խոզի կերպարանք ստացաւ: Եւ, դեւերի կողմից հալածուելով, մերկ ու խայտառակ, եղեգնուտներում էր վայրաքնակ լինում վարազի պէս: Եւ ոչ ոք չէր կարողանում սանձել նրան ու բերել քաղաք: Նրա հետ եւ նրա բազում ծառաները, իշխանները եւ զինուորները, աստուածասաստ բարկութիւնից դիւահարուելով, մոլեգնեցին, մինչեւ իսկ ատամներով իրենց մարմինն էին ուտում: Եւ, առհասարակ, Հայոց աշխարհի բոլոր բնակիչները երկիւղով էին պաշարուած:

Արդ, այն ժամանակ, վերջին աղէտներից յետոյ Տիրոջ ողորմութիւնն այցելեց ի վերուստ՝ նորոգելու Հայաստան աշխարհը, քանզի թագաւորի քոյրը՝ առաքինի կոյս Խոսրովիդուխտը, արժանացաւ երկնաւոր տեսիլքի եւ այն պատմեց մարդկանց՝ ասելով. «Այս գիշեր տեսիլք երեւաց ինձ. լոյսի կերպարանքով մի մարդ եկաւ եւ ասաց ինձ. «Ձեզ վրայ եկած հարուածներից չէք բժշկուի, եթէ մարդ չուղարկէք Արտաշատ՝ բերելու կապեալ Գրիգորին: Նա կգայ եւ կուսուցանի ձեզ ձեր ցաւերից բժշկուելու դեղը»»: Այս լսելով՝ մարդիկ սկսեցին ծիծաղել եւ ասացին նրան. «Դու եւս դիւահարուեցիր: Զէ՞ որ տասնհինգ տարի է անցել, ինչ նրան գցել են խոր գիրապը, իսկ դու ասում ես՝ կենդանի է: Ո՞վ գիտէ՝ որտե՞ղ են նրա ոսկորները, քանզի նոյն օրն իսկ օձերի տեսքից մահացած կլինի»: Իսկ Աստուծոյ հրեշտակը դարձեալ նոյն տեսիլքը կրկնեց օրիորդին մեծ սպառնալիքներով, որ եթէ չպատմի ստէպ-ստէպ, մեծամեծ տանջանքների կենթարկուի, իսկ մարդկանց եւ թագաւորի վրայ հարուածներն առաւել կասաստկանան եւ մահացու կլինեն: Եւ Խոսրովիդուխ-

տը, մտնելով Աշխէն տիկնոջ եւ աւագանու մօտ, մեծ երկիւղածութեամբ եւ զգուշութեամբ պատմեց Հրեշտակի խօսքերը: Իսկ նրանք շտապ Արտաշատ ուղարկեցին Օտա նախարարին, որի սանն էր Խոսրովիդուխտը: Նա գնաց եւ սուրբ Գրիգորին կենդանի գտաւ խոր վիրապում եւ հանելով ուրախութեամբ բերեց Վաղարշապատ:

Այնժամ ողջ աւագանին, խոզակերպուած թագաւորը եւ նրա հետ բոլոր դիւահար մարդիկ ընկան Գրիգորի ոտքը: Իսկ նա խնդրեց Աստծուց զգաստութիւն տալ նրանց մտքերին, որպէսզի հասու լինեն Փրկչի կենարար վարդապետութեանը՝ ի բժշկութիւն հոգիների եւ մարմինների: Ապա, օթեւանելով սուրբ կոյսերի հնձանատեղի մօտ (ուր հաւաքեց նրանց մարմինները), վաթսունվեց օր շարունակ պահքով եւ աղօթքներով հանդերձ քարոզեց ամբողջ ժողովրդին: Իսկ Տրդատը, որ դեռ կրում էր իր պատիժը եւ քստմնելի կերպարանքով էր, բայց մտքով զգաստացել էր, քուրձեր հագած՝ անդադար հեծեծանքներով ընկնում էր Գրիգորի ոտքերը, սրտի ցաւն արտասուքով յայտնում եւ սուրբին ստիպում ցաւակցել իրեն: Երբ պահքի օրերը վերջացան, սուրբ Գրիգորը բժշկեց թագաւորի ոտքերն ու ձեռքերը, որպէսզի կարող լինի աշխատելու, ինչպէս փափագում էր՝ շինելու համար սուրբ կոյսերի շիրիմներն ու վկայարանները՝ ըստ երանելի Գրիգորի տեսած տեսիլքի:

Ապա թագաւորն Աշխէն թագուհու եւ իր Խոսրովիդուխտ քրոջ հետ միասին պատրաստում էր սուրբ կոյսերի տեղը: Ինքը՝ Տրդատը, բահով եւ բրիչով փորում էր, իսկ նրանք, հանդերձների մէջ լցնելով, հողը դուրս էին տանում: Եւ մարդկանց մեծ բազմութիւն վկայարանների շինութիւնները կառուցելու համար խնդալից փութով եւ մեծ երկիւղով նիւթ էր բերում եւ հաւաքում հրամայուած տեղում. մէկը՝ քար, մէկն՝ ավազ, մէկը՝ մայրի փայտ: Եւ ինքը՝ սուրբ Գրիգորը, շինողների ճարտարութեան լարն իր ձեռքը վերցնելով, վկայարանների ճարտարապետը եղաւ: Եւ ամէն ոք, գործը ձեռնարկելով, կառուցում էր շինուածքը, մինչեւ անգամ կանայք էին սատարում՝ ըստ իրենց կանացի տկար ուժի: Իսկ Տրդատն անձամբ Մասիս լեռից մեծամեծ քարեր էր բերում վկայարանների հիմքերի համար՝ կամենալով հատուցել անմիտ մարտի փոխարէն, որ մղեց սուրբ Հռիփսիմէի հետ, որն Աստուծոյ զօրութեամբ յաղթեց հսկայ արքային՝ եւ այսչափ զարմանքի առիթ դարձաւ: Սրա համար իր ձեռքի վաստակն էր մատուցում՝ իբրեւ կոյսի յաղթութեան պսակ: Աշխէն տիկինը, Խոսրովիդուխտ արքայաքոյրը եւ թագաւորազուն այլ օրիորդներ, մեծամեծների կանայք եւ դուստրեր բերեցին ծիրանի, ոսկեհուռ երկնագոյն դիպակ եւ այլ տեսակ-տեսակ ազնիւ զգեստներ՝ հանդերձելու եւ պատանքելու սուրբ կոյսերի մարմինները, իսկ թագաւորը, արքայազունները եւ ազատները բերեցին անուշահոտ իւղեր, ազնիւ խունկեր եւ պատանքների համար գոյնզգոյն նարօտներ, մետաքսահիւս ոսկեթել կերպասներ ոսկով եւ արծաթով հանդերձ եւ հաւաքեցին հնձանի դուռն

մօտ: Արդ, երբ սուրբ Գրիգորը ելնելով տեսաւ այս ամէնը, ասաց. «Չէ՞ որ նախապէս ասել եմ, թէ պատշաճ չէ ձեր որեւէ բերածը նրանց մատուցել, քանի դեռ մկրտութեամբ չէք մաքրուել, սակայն ձեր յօժարութիւնը բարի է ձեր փրկութեան համար: Այս ամէնը արքայական գանձի մէջ պահուած թող մնայ, որպէսզի երբ Տէրը ձեզ տայ քահանայապետ, հովիւներ եւ առաջնորդներ՝ եկեղեցական կարգի լուսաւորութեան համար, այդ ամէնը լինի Աստուծոյ փառաւորքնկալ Սեղանի սպասաւորութեան եւ պաշտամունքի համար: Իսկ այժմ եկէք սուրբերին իրենց հանգիստը մատուցենք, որպէսզի եւ նրանք իրենց բարեխօսութեամբ հանգիստ տան ձեր հոգու եւ մարմնի տառապանքներին»:

Եւ երբ ամփոփեցին սուրբ կոյսերի մարմինները՝ իւրաքանչիւրինն իր վկայարանում, պարսպապատեցին նաեւ Միածնի իջման տեղը՝ այնտեղ, ըստ տեսիլքի, Եկեղեցի շինելու համար: Սուրբ Գրիգորը, այնտեղ կանգնեցնելով Խաչի նշանը, բոլորին հրամայեց ծունր դնել, երկրպագել եւ աղօթել առ Աստուած, որպէսզի նրանց բժշկի մնացած հարուածներից: Այնժամ, երբ սուրբ Գրիգորն աղօթում էր թագաւորի եւ բոլոր վտանգուածների կատարեալ բժշկութեան համար, յանկարծ Տրդատի անձից թօթափուեցին օտար կերպարանքների հետքերը, եւ դարձաւ իր նախկին կերպարանքին՝ առաւել պայծառ եւ վայելուչ: Նմանապէս եւ բոլոր ախտացեալները ողջացան, եւ բոլորը միասին փառք տուեցին ճշմարիտ Աստծուն, Ով միայն կարող է այսպէս պատժել եւ բժշկել: Առաւելապէս Տրդատ արքան՝ նորոգուած հոգով եւ մարմնով, անչափ գոհութեամբ փառաբանում էր Տիրոջը Նրա աքանչելի այցելութեան համար, որով խրատեց եւ կենդանացրեց իրեն: Նրա հետ եւ Աշխէն տիկինն ու Խոսրովիդուխտ արքայաքոյրը, անպատում ուրախութեամբ լցուած, հաստատւում էին Տիրոջ երկիւղի եւ Քրիստոսի պաշտամունքի մէջ: Եւ Հայոց աշխարհում երանելի Լուսաւորչի ձեռքով սկսեց աստուածպաշտութեան լոյսը յորդել՝ սկսած Արարատից, ուր շնորհների աղբիւր բխեց թագաւորական օթեւաններում:

Այնուհետեւ աստուածասէր Տրդատ արքան եռում էր հոգով իր տէրութեան բոլոր տեղերում քրիստոնէութիւն տարածելու համար եւ փութում էր աւագանու հետ անձամբ գնալ եւ բոլոր քաղաքներից եւ գիւղերից ջնջել կռապաշտութեան հետքերը: Նա ինքնիշխան հրամանով սուրբ Գրիգորի ձեռքը յանձնեց Հայոց աշխարհից բոլոր գայթակղութիւնները վերացնելու գործը, այնուհետեւ նախնիների անուանած «աստուածներին» չաստուած անուանել եւ բոլոր արձաններն ու կուռքերը, որքան էլ թանկարժէք եւ ճարտարագործ հնութիւններ լինեն, անյիշատակ դարձնել:

Եւ երբ այս ամէնը կատարւում էր բազմադիմի սքանչելիքներով, Տրդատ արքան մեծ ժողով գումարեց Աշխէն տիկնոջ, Խոսրովիդուխտի, Հայոց աշխարհի բոլոր աւագների եւ իշխանների միաբանութեամբ:

Նրանք իրենց հովիւ, առաջնորդ եւ քահանայապետ ընտրեցին մեծն Գրիգորին, որպէսզի մկրտի իրենց եւ հաստատի Եկեղեցին: Բայց երբ Գրիգորը յանձն չառաւ, Աստուծոյ հրեշտակը յայտնեց Տրդատին, թէ Գրիգորը պէտք է անյապաղ քահանայապետ դառնայ, հրեշտակը հաւանեցրեց նաեւ Գրիգորին՝ ասելով, թէ՝ Քրիստոսից է այդ հրամայուել քեզ: Այնժամ թագաւորը մեծ երկիւղածութեամբ եւ խնդութեամբ ուղարկեց Գրիգորին նախարարների եւ զօրքերի բազմութեան հետ Կապադովկիայի Կեսարիա քաղաքը, որտեղ սուրբ Լուսաւորիչը սուրբ Ղեւոնդ պատրիարքի ձեռքով ձեռնադրուեց եպիսկոպոսապետ եւ պաշտօնեաների բազմութեամբ փառքով վերադարձաւ Հայաստան՝ ճանապարհին մկրտելով իրեն ուղեկցող նախարարներին եւ նրանց զօրքերին: Երբ մօտեցաւ Մեծ Հայքին, նրան ընդառաջ ելաւ թագաւորը Բագաւանում, Եփրատ գետի ափին, Աշխէն տիկնոջ, Խոսրովիդուխտի եւ ողջ արքունի բանակի հետ:

Եւ Աստուծոյ քահանայապետին տեսնելուց յետոյ անչափ ուրախութեամբ պատրաստուեցին սուրբ Մկրտութեան՝ ջերմեռանդ հաւատքով, պահքով եւ աղօթքներով: Ապա սուրբ հայրապետը, վերցնելով Տրդատին, Աշխէն տիկնոջը եւ մեծ օրիորդ Խոսրովիդուխտին, աշխարհաժողով բազմութեան հետ իջաւ Եփրատի ափ եւ այնտեղ մկրտեց նրանց Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու անուամբ: Եւ ինչպէս ասում է «Յայտնութիւնքի» մէջ, սուրբ Լուսաւորիչը մկրտութեան ժամանակ Տրդատի անունը փոխեց եւ նրան անուանեց Յովհաննէս՝ սուրբ Յովհաննէս Կարապետի՝ Աստուծոյ Որդուն մկրտողի անուամբ, որի նշխարներն իր հետ բերել էր Կեսարիայից: Եւ թագաւորի ու նրա հետ եղողների՝ գետը մտնելու ժամանակ վերեւից լուսեղէն սեան նմանութեամբ սաստիկ-լոյս երեւաց եւ իջաւ ջրի վրայ, իսկ սեան վրայ՝ տէրունական Խաչի նշանն ուրիշ հաւաւոր նշանների հետ: Յաջորդ օրը սուրբ Լուսաւորիչը, Պատարագ մատուցելով Բագաւանում, հաղորդեց թագաւորին եւ նրա հետ գտնուողներին պատուական խորհրդին:

Այնուհետեւ օրէցօր տասնեակ հազարաւոր մարդիկ էին գալիս սուրբ Մկրտութեամբ լուսաւորուելու, եւ աստուածասէր թագաւորը խօսքով եւ օրինակով ծաղկեցնում էր բարեպաշտութեան հաւատքն ամբողջ Հայոց աշխարհում: Նա արքունական ծախսով երկրի բոլոր տեղերում եկեղեցիներ շինելու հնարաւորութիւն տուեց սուրբ Գրիգորին եւ եպիսկոպոսներ, քահանաներ եւ պաշտօնեաներ կարգելու՝ իւրաքանչիւր տեղի կալուածքի հասոյթով հանդերձ: Եւ դարձեալ սուրբ Գրիգորի խորհրդով թագաւորը հրաման է տալիս բոլոր գաւառներից մատաղահաս մանուկներ հաւաքել եւ, նրանց երկու դասի բաժանելով, ոմանց կարգում-է աստրի, ոմանց՝ հելլէնական դպրութեան, նոյնպէս եւ քրմերի որդիներին հաւատարիմ վարժապետների հետ տալիս է մարզելու Սուրբ Գրոց ուսման մէջ: Եւ այսպէս, կարճ ժամանակում ծաղկում էր Հայաստան աշխարհն ինչպէս Աստուծոյ դրախտ՝ Սուրբ Հոգու բոլոր շնորհներով:

Այս ամենից յետոյ սուրբ Լուսաւորիչը կամեցաւ առանձնանալ անապատում: Աստուածասէր թագաւորը բազում թախանձանքներով աղաչում էր նրան, որ միշտ իր մօտ մնայ, բայց նա չհամաձայնեց: Այդժամ արքան տեղեկացաւ, որ սուրբ Գրիգորը երկու որդի ունի Կեսարիայում. Վրթանէսը՝ աշխարհական կարգի մէջ, իսկ Արիստակէսը՝ միայնակեաց: Պատուիրակներ ուղարկեց եւ բերել տուեց նրանց իր մօտ եւ նրանց հետ գնաց՝ փնտրելու սուրբ Գրիգորին: Նրան գտաւ Դարանաղեաց գաւառում, Սեպուհ լեռան վրայ, Մանեայ այրի մէջ եւ, իջեցնելով նրան լեռից, իր փոխարէն Արիստակէսին ամենայն հայոց կաթողիկոս ձեռնադրել տուեց: Եւ Արիստակէսի հետ Տրդատն ու Գրիգորը գնացին Հռոմ տեսնելու Կոստանդիանոսին եւ Սեղբեստրոսին, ինչպէս գրուած է Լուսաւորչի վարքում, իսկ տարիներ անց Արիստակէսին իրենց կողմից ուղարկեցին Նիկիայի սուրբ ժողովին: Այսուհետեւ սուրբ Լուսաւորիչն խպառ առանձնացաւ միայնութեան մէջ: Իսկ Տրդատ-Յովհաննէս աստուածասէր թագաւորը, օրեցօր աճելով աստուածպաշտութեան կարգի մէջ, իր անձը բոլորանուէր իր փրկչի՝ Քրիստոսի պաշտամունքին նուիրեց՝ անձանձրոյթ աղօթքով, պահեցողութեամբ եւ յունարէն սուրբ Կտակարանների ընթերցմամբ, քանզի քաջատեղեակ էր հելլէնական դպրութեանը, որով, քաղցրանալով Աստուծոյ օրէնքի մէջ, իր անձը դրեց Աստուծոյ առաջ եւ անդադար արտասուքով ուրախութեամբ գոհանում էր Արարչի մարդասիրութիւնից եւ արթնութեամբ հսկում իր անձին ու աշխարհին, որպէսզի ամէնքն անարատ ընթանան Տիրոջ պատուիրաններով եւ իրաւունքներով: Եւ թէեւ ինքն աշխարհում էր, բայց աւելին էր, քան անապատականը՝ արքունի ծիրանու ներքոյ սրտով կրօնաւորելով, որի պանծալի գովքն այսպէս է անում նրա ատենադպիր մեծն Ագաթանգեղոսը. «Աստուածասէր Տրդատ թագաւորը, բարեպաշտութեամբ ծառայելով քրիստոնեայ հետնորդի հաւատքով, դարձաւ երկիւղած եւ, տեղեկանալով ու վարժուելով աստուածային հրամաններին, օրինապահ լինելով, ամբողջ երկրի համար ցանկալի եւ բարի օրինակ դարձաւ: Նա փութով ունկնդրում էր աստուածային գրերի ընթերցուածները, քանզի նախապէս տեղեակ էր յունական դպրութեանը, երկրաւոր իմաստութեանը՝ առաւել եւ հմուտ լինելով փիլիսոփայական մտքի հանճարագիտութեան մէջ: Եւ այժմ, ընդունելով նաեւ երկնային պարգեւների շնորհները, շուտով լուսաւորուեց եւ թեւամուխ եղաւ աստուածատուր հրամանների իմացութեան մէջ: Եւ, իր անձը բոլոր պատրաստութիւններով զարդարելով ըստ աւետարանական կանոնների, դարձաւ մարդասէր Աստուծոյ ծառայութեանը: Այնուհետեւ, մերկանալով հեթանոսական ցանկութիւններից, իր վրայ վերցնելով Խաչի փառքի նշանը եւ գնալով ամենակեցոյց Խաչեալի հետեւից, հաւան եղաւ Նրա պատուիրաններին եւ հետեւեց Քրիստոսին աշակերտածների խաչակիր գնդին: Եւ իր անձի համար սահմանեց պահք եւ տքնութեամբ մշտնջենամուն աղօթքներ, բազկատարած պաղա-

տանքներ առ Աստուած եւ հանապազաքուխ արտասուքներ իր աշխարհի համար, ինչպէս եւ՝ իր համար, որպէսզի չյիշուեն այն մեղքերը, որ գործել էր նախկինում տգիտութիւնից: Եւ ամբողջ ուժերով նպաստեց Աւետարանի քարոզութեան գործին եւ հնազանդութեամբ հպատակութիւն ցոյց տուեց եւ ծառայեց Աւետարանին վայել ձեւով: Եւ այսպէս, կրօնաւորական վարքով խրատելով եւ զգաստացնելով ամէն ուղղութեամբ բոլոր բարի գործերի մէջ, առաւել եւս պայծառօրէն օժանդակում էր քարոզչական գործին, այսինքն՝ աջակից եւ գործակից էր լինում բոլորին՝ ինչպէս սուրբ Լուսաւորչին, նոյնպէս եւ նրանից յետոյ՝ սուրբ Արիստակէսին, ապա՝ սուրբ Վրթանէսին, որ յաջորդեց իր եղբօրը»:

Բայց երանելի Թագաւորը, սուրբ Լուսաւորչից բաժանուելուց յետոյ հանապազ յիշում էր նրան եւ մեծ կարօտով ողբում, փղձկում էր յոյժ կարօտից եւ անձկում ընթանալ նրա ճանապարհով՝ ճգնաւորական վարքով, որովհետեւ ձանձրացել էր աշխարհի հոգսերից, տաղտկացել էր որոշ ըմբոստ իշխաններից եւ անհնազանդ նախարարներից, քանզի որքան էլ խրատում էր նրանց արժանի լինել քրիստոնէութեան սուրբ հաւատքի կոչմանը, գտնում էր նրանց թաթախուած նախկին հեթանոսական սովորութիւնների մէջ՝ խառնակեցիկ վարքով, մինչեւ որ աստուածասէր Թագաւորը, այլեւս չկարողանալով հանդուրժել, նետեց արքունական Թագը եւ գնաց Սեպուհ լեռ՝ սուրբ Գրիգորի մենարանը: Եւ, իր անձը տալով խիստ ճգնութիւնների եւ աստուածային խոկման, նոյն ժուժկալութեամբ էր անցկացնում բազում օրեր:

Իսկ թէ ինչպէս եղաւ սուրբ Թագաւորի վախճանը, արժան է լսել Խորենացու գրածը. «Սուրբ, մեծ եւ երկրորդ նահատակի եւ մեր լուսաւորութեան հոգեւոր վերակացուի մասին ճառելով պէտք էր հրաշափառ խօսքով գրել՝ որպէս մեր լուսաւորութեան նախաշաւղին եւ նահապետին հաւասար ճգնողի եւ նրա գործակցի մասին: Ինչպէս Սուրբ Հոգուն հաճոյ թուաց աւագութիւն տալ Լուսաւորչին՝ միայն որպէս վկայի, ինչպէս նաեւ՝ առաքելութեան կոչմամբ, իսկ սրանից գուրս՝ նրանք երկուսը հաւասար են ճ՛ւ խօսքով, ճ՛ւ գործով: Բայց այստեղ ես նշում եմ Թագաւորի առաւելութիւնը, քանզի Աստուծոյ մասին խորհելու եւ ճգնողութեան մէջ նրանք երկուսը հաւասար էին, իսկ համոզիչ կամ ստիպողական խօսքերով նուաճելու մէջ Թագաւորի շնորհն աւելի էր, որովհետեւ նրա հաւատքից գործը ետ չէր մնում: Այս է պատճառը, որ ես նրան կոչում եմ նախաշաւիղ ճանապարհ (Լուսաւորչից յետոյ) եւ մեր լուսաւորութեան երկրորդ հայր...

Սա, Քրիստոսին հաւատալուց յետոյ բոլոր առաքինութիւններով փայլելով, աւելի ու աւելի էր ջանքեր անում խօսքով ու գործով՝ Քրիստոսի հաւատքի համար սաստելով եւ համոզելով մեծամեծ նախարարներին, այլեւ՝ ռամիկ մարդկանց բազմութեանը՝ իրապէս Քրիստոսի հաւատացեալ լինելու, որպէսզի նրանց գործերը համապատասխանեն իրենց

հաւատքին: Բայց այստեղ կամենում եմ ասել մեր ազգի խստասրտութեան եւ ամբարհաւաճութեան մասին՝ սկզբից մինչեւ այժմ. որ նրանք, անտարբեր լինելով դէպի բարին եւ խորթ՝ ճշմարտութեանը, կամ թէ բնութեամբ մեծամիտ եւ կամակոր լինելով, ընդդիմանում են Թագաւորի կամքին քրիստոնէական կրօնի վերաբերմամբ՝ հետեւելով իրենց կանանց եւ հարճերի կամքին: Այս ներել չկարողանալով Թագաւորը, զցելով երկբաւոր պսակը, ընթանում է երկնաւորի ետեւից՝ արագ հասնելով այն տեղը, ուր Քրիստոսի ճգնաւոր զինուորը լեռան քարայրների բնակիչ էր դարձել: Ամփոփում եմ ասել այստեղ ճշմարտութիւնը, մանաւանդ՝ մեր ազգի ամբարշտութիւնն ու անօրինութիւնը, սրանց՝ մեծ ողբի եւ արտասուքների արժանի գործերը, քանի որ նրա ետեւից մարդ են ուղարկում, կանչում են սուրբին, որ գայ, Թագաւորութիւնը շարունակի՝ խոստանալով նրա կամքով վարուել: Իսկ երբ սուրբը չի համաձայնում*, նրան թունաւոր ըմպելիք են տալիս, ինչպէս որ հնում աթէնացիները Սոկրատին մոլախինդ տուեցին կամ, մերն ասելով, կատաղած երրայեցիները մեր Աստծուն լեղի խառնած ըմպելիք տուեցին: Այսպէս անելով նրանք իրենց վրայից հանգցրեցին աստուածպաշտութեան բազմափայլ ճառագայթը»: Ուստի ողբում է քերթողահայրը եւ դարձեալ հաստատում նրա այսօրինակ վախճանը. «Սուրբ Տրդատի մասին պատմութիւնը,– ասում է,– ճշմարիտ է, քանզի, նրան մահուան դեղ խմեցնելով, զրկուեցին նրա շնորհի ճառագայթների լոյսից, որ Թագաւորեց յիսունվեց տարի»:

Արդ, ինչ որ Խորենացին հարեւանցիօրէն է պատմում Տրդատի մահուան մասին, եւ ուրիշ պատմագիրներ՝ նոյնը հանգամանքների փոքր–ինչ տարբերութեամբ, գտնում ենք մի հին Ծաղընտիրի մէջ՝ մանրապատում աւանդուած նախնիներից մէկի կողմից. «Իսկ Տրդատ Թագաւորը Քրիստոսին հաւատալուց յետոյ փայլում էր ամբողջ առաքինութեամբ մինչեւ առաքինի ծերութեան վախճանը: Բայց այստեղ պէտք է խօսել մեր ազգի խստասրտութեան կամ ամբարտաւանութեան մասին, որ ի սկզբանէ նրա բոլոր անկումների պատճառն է եղել: Քանզի Շապուհի հրամանով ոմանք խորհեցին սպանել Տրդատին եւ կրկին կռապաշտութիւն հաստատել Հայոց աշխարհում: Այդ խորհուրդը խորհում էր նաեւ Տրդատի սենեկապանը՝ մատնիչ Ցուդայի օրինակով: Բայց Թագաւորը չգիտէր, թէ քանի՞սն են կամ ովքե՞ր են: Այդ պատճառով էլ կանչում է այն սենեկապանին եւ հարցնում, թէ արդարո՞ւ կայ այսպիսի խորհուրդ: Երբ նա լսում է, վախենում եւ ուրանում է, թէ այդպիսի բան ինքը երբէք չի լսել: Եւ, գնալով իր ընկերների մօտ, զարհուրած վերացնում է անօրինութեան խորհուրդը: Բայց ինքը՝ Թագաւորը, հանգիստ չունենալով, հեռանում է արեւմուտք, մինչեւ Եկեղեաց գաւառը՝ տեղի

* Ըստ այլ օրինակի՝ «Երբ համաձայնում է»:

տալով այն լուրերին:

Եւ քանզի շատերն էին չարը խորհում, ոմանք նրա ետեւից գնացին, մանաւանդ՝ Սիւնիքի կողմերի աւագները, որոնք առաւել Շապուհի հրամանակատարներն էին լինում, որպէսզի իրենց աշխարհը խաղաղ մնար, որոնք եւ, երէների որսի ժամանակ Թագաւորին մօտ գտնուելով, [նետով] խոցում են նրան, իբրեւ թէ նետը պատահաբար դիպաւ: Եւ Թագաւորը, արքունիք գալով, սակաւ ինչ վիրաւորուած, մահիճն է դրւում, իսկ այն սենեկապանը, նրա վէրքը կապելու համար մտնելով եւ տեսնելով, որ նա վէրքից չի մեռնի, մահուան դեղ է խմեցնում եւ սպանում, որը յետոյ յայտնի դարձաւ նրա խորհրդակիցներին:

Եւ նրան արծաթապատ եւ գոյնզգոյն հանդերձներով զարդարուած դագաղով, որը լծուած էր ոսկեանձ ջորիների, տարան Թորդան՝ շրջապատած զինավառ զօրքերով, եւ դագաղի առջեւ՝ աստուածօրհնութեան ձայներ եւ խունկի բուրմունք: Իսկ բարեկամներն ու սիրելիները, ընտանիքն ու նրա որդիները ետեւից էին գնում: Եւ դագաղի ետեւից փոդով եւ տաւղով ողբում էին ողբասաց կոյսերը, էլ չեմ ասում՝ ռամիկ բազմութիւնը, որ գնում էր նրանց ետեւից: Եւ այսպէս, տեղ հասնելով Թագաւորի համար մարմարեայ տապան սարքեցին, վրան ապակի դրեցին, որի մէջ դնելով պատուական գանձին, անուշահոտ պատարագին եւ մեծ վաստակաւորին՝ տարան, թաղեցին մեծ Գրիգորի զբօսավայրում եւ կանոնեցին ամէն տարի տօնել նրա վախճանի օրը, որը յանձնարարելով զիւղի եպիսկոպոսին՝ վերադարձան»: Եւ այս եղաւ սուրբ Վրթանէսի կաթողիկոսութեան երկրորդ տարում, Տիրոջ 341 թուականին: Իսկ այն մասին՝ Թորդանում է թաղուած սուրբ Տրդատը, թէ՝ Անիի Կամախ ամրոցում, աւանդւում է մի գրքում, թէ ոմանք գողացան նրա պատուական նշխարների մի մասը եւ տարան Աստուածածնի վանք:

Իսկ ի՞նչ պէտք է ասել Հայոց առաքինազարդ Թագուհու՝ Աշխէն տիկնոջ մասին, որը վաղուց ի վեր հրաժարուել էր կեանքի վայելչութիւններից եւ առանձնանալով բնակւում էր Գառնի քաղաքում, որի ամրոցը շինեց Տրդատն ընտիր կոփածոյ քարերով: Այստեղ աստուածասէր Թագուհին մնաց ճգնելու՝ մինչեւ այս աշխարհից երկինք փոխուելը: Նոյն օրինակով եւ Թագաւորի սքանչելի քոյրը, մեծ օրիորդը եւ սուրբ կոյս Խոսրովիդուխտը, որ ճանաչւում է իբրեւ ողջ Հայաստանի կոյսերի մայր, սրբութեան մաքրափայլ վարքով առանձնանալով Գառնիում, այն տանը, որ նրա համար շինել էր նրա եղբայրը, իր օրերը բարեգործութեամբ անցկացրեց մինչեւ իր անձկալի Քրիստոսի մօտ փոխադրուելը:

ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ ՁՕՐԱՎԱՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Քրիստոնէութեան պարծանքը՝ Քրիստոսի տիեզերահռչակ մեծ վկայ եւ քաջ նահատակ Գեւորգը*, կապադովկացի էր, ազատ տնից, բարեպաշտ ծնողների զաւակ: Հայրը՝ ոմանցից Գերոնտիոն կոչուած, անուանի զօրավար էր եւ արեամբ նահատակուեց, իսկ մայրը սրբութեամբ վախճանուեց Պաղեստինում, որտեղ բազում կալուածքներ ունէր:

Մանկութիւնից Գեւորգը զինուորութիւն էր սովորում եւ զինուորագրուած էր Անիկիտոն, այսինքն՝ «Անյաղթների» կոչուած ականաւոր գնդին: Վայելչահասակ ու գեղեցկատես պատանին յոյժ առաջադիմում էր՝ արքունի զօրավարներից գովեստներ ստանալով: Երիտասարդ հասակում կայսեր զօրագլուխների եւ աւագանու դասերում պաշտիւ էր վայելում իբրեւ հազարապետ եւ ժողովրդապետ: Ապա, դեռ երեսունը չբոլորած, իր բացառիկ քաջութեան եւ հաւատարմութեան շնորհիւ Հռոմի ինքնակալներ Դիոկղետիանոսից եւ Մաքսիմիանոսից կոմսութեան տիտղոս ստացաւ, ինչը կայսեր բարձրաստիճան մարդկանց, մերձաւոր պաշտօնեաների եւ փառաւոր ասպետների համար մեծ պատիւ էր:

Սակայն քաջ Գեւորգն այս արտաքին մեծ շուքից աւելի սքանչելի գտնուեց աստուածպաշտութեան եւ աստուածային առաքինութեան մէջ, որոնցով փայլեց Եկեղեցու հալածանքի օրերին եւ անհաւատներին ախոյեան դարձաւ՝ արեամբ նահատակուելով:

Հռոմի կայսր Դիոկղետիանոսը, որը յայտնի էր իր դաժանութեամբ, սնոտի կուռքերի խաբէութեամբ մոլորուած՝ խիստ գազանաբարոյ գտնուեց քրիստոնէական հաւատի նկատմամբ: Նա մտերիմ էր անաստուածութեան մէջ իրեն համախոհ ոմն Մաքսենտիոսի հետ, որն իր հեղինակութեամբ թագաւորութեան երկրորդ մարդն էր: Նա մոլեգնում էր՝ դիւային ամբարշտութեամբ քրիստոնեաների դէմ զայրանալով: Այս երկուսը ժպիրհութեամբ խորհրդակցում էին, թէ ինչպէս քրիստոնէական կրօնն ամենեւին վերացնեն եւ բոլորին բռնադատեն՝ կուռքեր եւ մանաւանդ պիղծ Ապոլոնի պատկերները պաշտելու: Ըստ այս անօրէն խորհրդի էլ գրուեց Թագաւորի առաջին հրովարտակը.

«Միշտ մեծարուած Դիոկղետիանոս Սեւաստոս յաւիտենական ինքնակալից՝ բոլոր իշխանութիւններին եւ հռոմէացիների աշխարհին, զօրավարներին, դատաւորներին, իշխաններին եւ իշխանութիւնների բոլոր պետերին, որ մեր ձեռքի տակ են՝ ողջո՛յն:

* Գեւորգ — յունարէն՝ մշակ, հողագործ

Մեր աստուածեղէն ականջներին լուր հասաւ ու շատ խռովեցրեց, որ զօրանում է քրիստոնէական ամբարիշտ հերձուածը: Մարիամ անունով ոմն հրէուհուց ծնուած Յիսուս կոչուածին իբրեւ Աստուծոյ են երկրպագում, իսկ մեծ աստուածներ Ապոլոնին, Երմիսին, Դիոնիսոսին, Հերակլեսին եւ Դիոսին, որոնք մեր աշխարհին խաղաղութիւն են պարգեւում, անարգում են թշնամաբար ու հայհոյում, մինչդեռ Քրիստոս կոչուածին, Ում հրեաները որպէս մահապարտի եւ մոգի խաչեցին, պաշտում են իբրեւ Աստուծոյ: Այս պատճառով հրամայում ենք. քաղաքներում ու գաւառներում դաժան խոշտանգումների ենթարկել բոլոր քրիստոնեաներին՝ տղամարդկանց, թէ կանանց, ուր որ գտնուեն, որպէսզի մեր աստուածներին զոհեր մատուցեն եւ ուրանան այդ մոլորութիւնը, իսկ նրանց, ովքեր անսան, թողութեան արժանացնել: Ապա թէ ոչ՝ հրի եւ սրի դժնդակ մահուան մատնել նրանց, որ իմանան, թէ մեր հրամաններն անփոփոխելի են, եւ եթէ մէկը մեր աստուածային այս հրամաններն անտեսի, նոյն վճիռը կընդունի»:

Երբ հայհոյութեամբ լի այս հրամանագիրը հասաւ ամէնուրեք եւ տարածուեց, Քրիստոսի հօտի հանդէպ մեծ հալածանք սկսուեց: Նշանաւոր մարդկանցից շատերը, սաստիկ տանջանքներից վհատուելով, ուրացան հաւատը, բայց եւ առաքինիների անթիւ բազմութիւններ զօրանալով համբերեցին՝ մահն ու վտարանդի կեանքը գերադասելով անօրէն հրամանի կատարումից: Այնժամ, առաւել եւս մոլեգնելով, Դիոկղետիանոսը խորհեց սաստկացնել իր հրամանը բոլոր ատենակալների եւ մեծամեծների հաւանութեամբ: Այս առթիւ հրամայեց իր մօտ կանչել ողջ ծերակոյտը՝ զօրապետներով եւ աւագանու մնացած մասով հանդերձ ու նրանց յայտնեց բոլոր քրիստոնեաներին կոտորելու իր մտադրութիւնը: Անօրէնը հրապարակախօսելով ասում էր.

—Ինձ այսպէս է թւում, իմ սիրելիներ, թէ աստուածներին պաշտելուց առաւել պատուական բան չկայ, քանի որ նրանք են մեզ թագաւորութիւն եւ բոլոր մարդկանց փրկութիւն պարգեւում: Այդ պատճառով իրաւացի եմ համարում, որ ոչ միայն մենք, այլեւ երկրի երեսի բոլոր մահկանացուները աստուածներին հանապազորդ զոհեր մատուցեն: Իսկ եթէ մեր աստուածների դէմ ապստամբած քրիստոնեաներ գտնուեն, բոլոր հնարներով տանջահարել, մինչեւ նրանց դժնդակ կրօնը վերանայ, եւ նրանց յիշատակը կորչի իրենց մահուամբ:

Այդժամ ներկաները թագաւորին միաբան պատասխանեցին.

—Մենք յօժարութեամբ զովելի ենք համարում Ձերդ մեծ թագաւորութեան աստուածանման հրամաններն ու հոգատարութիւնը եւ կամենում պատուել անմահ աստուածներին, ինչպէս եւ՝ ձեր զօրութիւնը: Արդ, եթէ այսուհետեւ գտնուի մէկը, որն իր մտքում իսկ Քրիստոսի անունը յիշի, մահուան թող մատնուի:

Այսպէս, թագաւորը, ատեանով հանդերձ այս խորհուրդը երկնելով, օրըստօրէ հաստատւում էր անօրէն առաջարկութեան նոյն մտքում եւ պէս-պէս որոգայթներ լարում քրիստոնեաների դէմ:

Այնժամ Քրիստոսի պատուական մարգարիտը՝ Նրա քաջ զօրական Գեւորգը, ասպետների մէջ երեւելին, լուսաւոր եւ մեծապայծառ աստղի նման ծագեց գիշերուայ խաւարում՝ փարատելու բազմաստուածութեան մէգն ու մառախուղը: Զանգի, լսելով անօրէն խորհրդի մասին, արհամարհեց պիղծ Դիոկղետիանոսի սպառնալիքները, իշխանների ու զօրավարների մոլեգնութիւնը եւ չսարսափեց առաջիկայ տանջանքներից՝ նկատի առնելով առաւել ահաւորները հանդերձեալում: Այսպէս աստուածսիրութեամբ խորհելով առաջիկայ իրաղրութեան մասին՝ խօսում էր ինքն իրեն՝ ասելով. «Գեւո՛րգ, ինչո՞ւ ես անգործ, ահա՛ Տէրը հրաւիրում է Իր հարսանիքին մասնակցելու. առագաստը բաց է, ընթրիքը՝ պատրաստ: Ինչո՞ւ ես յապաղում, մտի՛ր դուրը փակուելուց առաջ, քանզի մօտ է մեզ Քրիստոս, Որը մեզ համար համբերեց Խաչի չարչարանքներին: Նա աղաղակում եւ ասում էր. «Մի՛ երկնչէք նրանցից, ովքեր սպանում են մարմինը, իսկ հոգին սպանել չեն կարող» [տե՛ս Ղուկ. ԺԲ 4]: Յիշի՛ր, Գեւո՛րգ, աւետարանական վարդապետութիւնը եւ տէրունական ճշմարիտ աւետիսը. «Եթէ մէկը խոստովանի Ինձ մարդկանց առաջ, Ես նրան կխոստովանեմ Իմ Հօր առաջ, որ երկնքում է» [տե՛ս Մատթ. Ժ 32]: Գեւո՛րգ, լաւ բան մի՛ համարիր ժամանակաւոր եւ անցաւոր այս աշխարհը, որը երկնային կեանքի ստուերն է, նաեւ մեծ բան մի՛ համարիր այս աշխարհի ընդունայն փառքը երկնային յոյսի համեմատութեամբ, քանզի «մարդու ողջ փառքը խոտի նման է» [տե՛ս Եսայ. Խ 6]: Փոքր-ինչ համբերի՛ր եւ յաւիտենական կեանքում հրեշտակների հետ նոյն դասում կկարգուես»: Այսպէս ցածրաձայն ինքն իր հետ խօսում էր երանելին, երբ նրա ձայնը լսեցին մօտակայքից: Այս տէրունական խրատով իր միտքը հաստատելով եւ առաջիկայ չարչարանքները ծաղրելով՝ Գեւորգն օրինակ դարձաւ հաւատացեալների համար՝ ճշմարտութեան համար նահատակուելու քարոզն առաւել գործով, քան խօսքով իրականացնելով: Զանգի իր ունեցուածքն ու ժառանգութիւնն արագ բաշխեց աղքատներին ու անտուններին, ինչպէս որ արի ըմբիշն է մերկանում մենամարտից առաջ: Այնուհետեւ թագաւորական խորհրդի վերջին օրը, հրապարակում դրուած արքունի հրովարտակը պատռելով, յօժարութեամբ մտաւ արքունի խորհրդարան եւ, ատեանի անօրէն որոշման երկրորդումը լսելով, կանգնեց թագաւորի, այնտեղ նստած ամբողջ աւագանու եւ այլ իշխանների ու զօրավարների առջեւ, մեծաձայն աղաղակեց ու ասաց.

—Ահաւասի՛կ ես: Ո՛վ թագաւո՛ր, ես քրիստոնեայ եմ, որ, ապաւինելով ճշմարիտ ու երկնաւոր Աստծուն եւ մեր թագաւոր Յիսուս Քրիստոսին, չվախեցայ կանգնել այս ատեանի առջեւ: Ձեր մէջ լինելով զարմա-

նում եմ Քրիստոսի ծառաների դէմ ձեր ունեցած չար դիտաւորութիւնների վրայ: Ի՞նչ յանցանք գտաք նրանց մէջ՝ այդ արդարներին կործանելու համար, ո՞րն է նրանց յանցանքը, որ պաշտում են կենդանի Աստծուն եւ Նրա հրամանով հաւատարիմ ծառայում մարմնաւոր տէրերին: Ես ապշում եմ, որ դուք այդչափ մոլորւում էք կուռքերով եւ չէք ճանաչում Միակ կենդանի Աստծուն ու բոլոր արարածների Արարչին, Ով այդ թագաւորութիւնը տուել է ձեզ: Արդ, ո՛վ թագաւոր եւ բոլոր աթոռակիցներդ, մի՛ մոլորուէք դեւերի պատրանքներից, քանզի աստուածները, որոնք երկինքն ու երկիրը չեն արարել, կկործանուեն: Իսկ մենք՝ քրիստոնեաներս, երկրպագում ենք Միակ Հայր Աստծուն եւ Մի Տիրոջ՝ Յիսուս Քրիստոս Աստծուն, Որով ամէն ինչ ստեղծուեց, եւ խոստովանում ենք Մի Սուրբ Հոգի Աստծուն՝ կատարեալ Երրորդութեանը՝ Մի Աստուածութեան եւ թագաւորութեան մէջ, Որով այստեղ ապրում ենք բարեպաշտութեամբ եւ վախճանուելուց յետոյ յաւիտենական կեանքի ակնկալութիւն ունենք: Բայց հեթանոսների պաշտամունքներն իսկապէս ծաղրի են արժանի, քանի որ միաստուածութիւնն առասպելներով բազմաստուածութեան են վերածում, քանզի նրանց բոլոր աւանդութիւններն էլ իրենց հաստուածների բարքաջանքներն են: Դրանցում ոչ մի ճշմարտութիւն չկայ, որովհետեւ ամենայն չարիք սադրող սատանայի գործն է: Դրանք իրենց երկրպագողներին սատակման եւ կորստեան են մատնում:

Այնժամ նրան նայեց թագաւորի սիրելին՝ Մագնենտիոսը, եւ դիմեց սուրբին՝ իբրեւ անծանօթի.

—Քո անունն ի՞նչ է, եւ ո՞վ ես դու, որ այդչափ յանդգնութիւն ունես:

Քաջ նահատակը պատասխանեց.

—Նախ եւ առաջ իմ անունը քրիստոնեայ է, բայց մարդկանցից Գեւորգ եմ կոչւում: Իմ Աստծուն այսպէս է հաճելի , որ ես բարեպաշտութեան բազում պտուղներ պտղաբերեմ Նրա այգում:

Իսկ Դիոկղետիանոս թագաւորը, որ լաւ էր ճանաչում առաքինի զօրավարին, անդնդային վիշապի պէս նայելով նրան, ասաց.

—Գեւո՛րգ, մենք գիտենք քո մասին, որ իմաստութեան ու քաջութեան մէջ միշտ ընտիր ես եւ արժանացել ես մեր արքունական խնամքի պատուին: Ուստի զոհեր մատուցիր մեր աստուածներին, որ չարաչար չկործանուես, այլ, մանաւանդ, մեր խնամակալութեան ներքոյ վայելես մեր սէրը՝ պատուով եւ առաւել մեծ հարստութեամբ: Իսկ այդ ընդունայն համարձակութիւնդ օգուտ չէ քեզ:

Գեւորգն ասաց.

—Թագաւո՛ր, երանի՜ դու լսէիր ինձ եւ ճանաչէիր Միակ ճշմարիտ Աստծուն, որպէսզի եւ երկնային թագաւորութեանն արժանի լինէիր: Բայց, արդ, քո իշխանութիւնն առժամանակեայ է, եւ այդ խոստումներդ

ու յորդորդ անզօր են ինձ սասանել իմ Աստուծոյ բարեպաշտութիւնից: Ձե՛զ թող քո պատիւն ու խոստումները, որոնք քեզ հրապուրում են: Իսկ ես ունեմ երկնաւոր թագաւոր Քրիստոսին, Որը տալիս է փառք եւ յաղթութիւն՝ հակառակորդի ու նրա սպասաւորների հանդէպ:

Թագաւորը սրտմտելով հրամայեց ատեանի հրապարակ հանել նրան, կախել փայտից ու գեղարդով ծեծել եւ դուրս թափել աղիքները: Եւ երբ այդ արին, սուրբի մարմնից արիւն ցայտեց, բայց գեղարդը ծռուեց անագի կամ կապարի պէս: Այնժամ սուրբ Գեւորգն ասաց. «Գոհանո՛ւմ եմ Քեզանից, Քրիստո՛ս, որ սատանայի պաշտօնեաների սուրը եւս դարձրիր եւ կոտրեցիր այս բռնաւորի ցասումը»: Եւ Դիոկղետիանոսը, բարկութեամբ լցուելով, հրամայեց նրան փայտից իջեցնել, բանտ տանել, ոտքերն ամուր սեղմել կոճղի մէջ եւ կրծքին դնել մի մեծ քար, որը չորս մարդ հազիւ բարձրացրեցին: Ու երբ քարը դրեցին, սուրբ Գեւորգը մեծաձայն աղաղակեց եւ ասաց. «Գոհանո՛ւմ եմ Քեզանից, բարձրեա՛լ Աստուած, որ արժանացայ այս ծանր բեռներն ընդունել իմ սրտի վրայ, որը հաստատում է ի Քեզ անկոտրելի խոստովանութիւնս»: Իսկ Տիրոջ հրեշտակն իջաւ այնտեղ եւ բժշկեց նրա վէրքերը:

Յաջորդ օրը սատանան մտաւ Դիոկղետիանոսի եւ նրա աթոռակիցների սիրտը, եւ նրանց հրամանով մի մեծ անիւ սարքեցին՝ հիւսնի մամլիչի պէս բոլոր կողմերից սրով պատուած: Բռնաւորը հրամայեց սուրբին անուի մօտ բերել: Ու երբ նրան քարշ տալով բերին այնտեղ, նայելով սատանայի հմտութեամբ պատրաստուած դժնդակ մեքենային՝ ասաց. «Տէ՛ր Յիսուս Քրիստոս, գոհանում եմ Քեզանից, որ այս կոչմանն ինձ արժանացրիր: Արդ, Դո՛ւ, որ խաչուեցիր երկու աւազակների հետ եւ մահ ճաշակեցիր, որ մարդուն փրկես մահից, տո՛ւր ինձ այս ժամին անվնաս խոստովանութիւն եւ պահպանի՛ր իմ հոգին բանսարկուի հնարներից»: Այս ասելուց յետոյ անուի մէջ գցուեց, եւ նրա մարմինը ջարդրտուեց չարաչար տանջանքներով:

Թագաւորը, Մագնենտիոսի հետ այս տեսնելով, ձայնը բարձրացրեց ու ասաց.

—Ամէնքդ իմացէք, որ Ապոլոնից, Պոսիդոնից, Հերակլէսից, Դիոնիսոսից եւ մեծն Արտեմիսից բացի ուրիշ աստուած չկայ: Արդ, ո՞ւր է Գեւորգի Աստուածը, ինչո՞ւ չեկաւ ու իմ ձեռքից չփրկեց նրան,– եւ հրամայեց թողնել նրան անուի տանջարանում, իսկ ինքը գնաց ճաշելու:

Եւ տասներորդ ժամին ահաւոր որոտման պէս երկնքից մեծ հնչիւն ու ձայն լսուեց, որն ասում էր. «Քաջալերուի՛ր, Գեւո՛րգ, եւ աներկի՛ւղ եղիր, քանզի շատերը քեզանով հաւատալու են Ինձ»: Նրան պահպանող դահիճները երկիւղեցին եւ, ձայնից զարհուրելով, փախան՝ ասելով. «Մե՛ծ է քրիստոնեաների Աստուածը»: Իսկ Տիրոջ հրեշտակն իջաւ ու նրան տանջարանից հանեց եւ, նրա մարմինը ողջանդամ դարձնե-

լով, ողջունեց ու ասաց. «Ուրախ եղիր, Գեւորգ, ու հաւատա՛ քեզ Զօրաց-նողին եւ ընթացքդ աւարտին հասցրու, քանզի ահաւասիկ մենք սպասում ենք, որ ստանաս կատարեալ վկայութեան պսակը»:

Եւ յարութիւն առաւ սուրբ Գեւորգն ուրախութեամբ՝ գոհանալով Տիրոջից եւ սաղմոսելով շրջում էր. «Օրհնում եւ փառաւորում եմ Քեզ, Աստուա՛ծ իմ եւ Թագաւո՛ր իմ, եւ օրհնում Քո անունը յաւիտեան: Իմ ճանապարհն ուղի՛ղ դարձրու, Տէ՛ր, եւ թող ինձ չտիրեն բոլոր անօրէնութիւնները»: Եւ, գնալով մի տեղ, ուր Ապոլոնի պատկերը կար, տեսաւ Թագաւորին, նրա բոլոր բարեկամներին եւ Մազենտիոսին, որոնք զոհեր էին մատուցում եւ երկրպագում կուռքերին: Մօտենալով Գեւորգն աղաղակեց.

—Ծանաչի՛ր ինձ, Թագաւո՛ր, եւ իմ անձով իմ աւետարանած Աստծուն, Որը փրկեց ինձ քո ձեռքից եւ մահաբեր տանջանքներից, որ պատճառեցիր ինձ՝ կարծելով, թէ կորստեան կմատնես: Արդ, հասկացի՛ր, որ մոլորուած ես՝ այդ կուռքերին զոհեր մատուցելով:

Իսկ Թագաւորը, նայելով նրան, հարցրեց.

—Մ՞ով ես դու:

Սուրբն ասաց.

—Ես Գեւորգն եմ, որ քո հրամանով անուին կապուեցի, որին թողեցիր այնտեղ՝ մեռած համարելով: Այժմ եկայ քեզ յայտնելու, թէ իմ Աստուածը, Որին դու հայհոյում էիր, կարող է ինձ փրկել մահից:

Այնժամ Թագաւորը հրամայեց բռնել նրան եւ մօտիկից շարունակ զննում էր, թէ արդեօք նո՞ւ է, եւ ասում էր.

—Թւում է, թէ մեռած չարագործի ուրուականն է, որը խաբում է մեզ:

Իսկ Մազենտիոսն ասաց.

—Նման է նրան:

Սուրբն ասաց.

—Ես Գեւորգն եմ՝ Քրիստոսի ծառան, մի՛ մոլորուէք այդ կուռքերով, այլ իմացէ՛ք, որ Քրիստոս Իրեն յուսացողներին կարող է կենդանացնել մեռելներից եւ փրկել ձեր ձեռքից:

Երբ Անատոլիոս եւ Պրոտոլէոն զօրավարները ողջ տեսան նահատակին եւ նրանից լսեցին այս ամէնը, իրենց ընտանիքներով հաւատացին Աստծուն: Նրանք աղաղակում եւ ասում էին. «Մե՛ծ է քրիստոնեաների Աստուածը: Նա՛ է միայն Աստուած, եւ չկայ ուրիշ Աստուած, այլ Նա՛ է միայն յաւիտեան օրհնեալ Աստուած»:

Թագաւորն, այս լսելով, հրամայեց քաղաքից դուրս, մի ամայի տեղ տանել նրանց բոլորին եւ սրով կոտորել: Նահատակութեան գնալիս

նրանք միաբերան աղաղակում էին՝ ասելով. «Տէ՛ր Յիսուս Քրիստոս, հաւատքի մեր փոքր խոստովանութեան շնորհիւ մեզ արդարացնելով եւ մեղքերի թողութիւն շնորհելով խաղաղութեամբ ընդունի՛ր մեր հոգիները եւ բնակեցրո՛ւ Քո անփոփոխելի եւ անանց Արքայութեան մէջ»: Այնժամ Աղեքսանդրէ Թագուհին, լսելով սուրբ Գեւորգի մասին, ինքն էլ հաւատաց Տիրոջը եւ, Թագաւորի մօտ գալով, համարձակութեամբ խոստովանեց՝ ասելով.

—Ես քրիստոնեայ եմ՝ Գեւորգի Աստուծոյ աղախին:

Թագաւորը լռեց սաստիկ վրդովմունքից, իսկ Մազենտիոսը հարցրեց նրան.

—Ասա՛ մեզ, Աղեքսանդրէ՛ Թագուհի, ինչո՞ւ Քրիստոսին գովեցիր, իսկ աստուածներին արհամարհեցիր:

Իսկ նա պատասխանեց.

—Մեծագոյնին փափագելով նուազն արհամարհեցի,- այնուհետեւ ապարանք դարձաւ՝ իր սրտում կրելով Աստուծոյ երկիւղն ու անսասան հաւատքը:

Իսկ Թագաւորը, հնար չգտնելով, խորհում էր վրէժի քէնը չարաչար տանջանքներով հատուցել Գեւորգին: Այդ պատճառով հրամայեց սուրբին թաղել անշէջ կրով լցուած գուբի մէջ, ապա պահակներ կարգեց եւ խստիւ պատուիրեց, որպէսզի երեք օր ու գիշեր ոչ ոք չխորհի նրան այնտեղից հանել, մինչեւ որ խապառ այրուի, եւ միայն ոսկորները մնան: Երեք օրից Թագաւորն ասաց. «Թող զօրականները գնան եւ սպանուածի ոսկորները հանեն ու զգուշութեամբ անհետացնեն, որպէսզի ոչ ոք նրա մասին չիմանայ»: Զօրականների հետ շատերը գնացին գուբի մօտ: Եւ երբ մաքրեցին կիրը, սուրբ վկային ողջանդամ գտան՝ առանց որեւէ մարմնական արատի, քանզի Տիրոջ հրեշտակը Քրիստոսի հրամանով պահպանում էր նրան:

Տեսնելով Գեւորգին՝ բոլորն աղաղակում էին՝ ասելով. «Մե՛ծ է քրիստոնեաների Աստուածը»: Եւ Աղեքսանդրէ Թագուհին, այս լսելով, ինքն էլ եկաւ այնտեղ ու բարձրաձայն ասաց. «Մե՛ծ է Աստուած, որ քրիստոնեաների մէջ է, եւ Նրանից բացի ուրիշը չկայ»: Հաւատացին եւ զօրականները, որոնք նրան կրից կենդանի հանեցին: Թագաւորն, այս մասին լսելով, զօրականների բազմութեանը հրամայեց գնալ, բռնել սուրբին եւ իր մօտ բերել, այնուհետեւ, իր մեծամեծների հետ ատեանում նստելով, ասաց նրան.

—Ասա՛ մեզ, ո՞վ քեզ կենդանացրեց:

Սուրբ վկան պատասխանեց.

—Եթէ լսէք, դարձեալ չէք հաւատայ: Բայց իմացի՛ր, Թագաւո՛ր, որ Յիսուս Քրիստոս՝ Աստուծոյ Որդին է ինձ պահպանում քո պատճա-

ռած տանջանքներից եւ փրկում սատանայի որոգայթներից բոլոր նրանց, ովքեր օգնութիւն են հայցում Իրենից:

Այնժամ թագաւորը հրամայեց ուղղաձիգ, սուր գամեր ունեցող երկաթէ կօշիկներ բերել եւ շիկացնել, ունելիներով հագցնել սուրբի ոտքերին ու նրան քայլեցնել: Իսկ սուրբ վկան, չկարողանալով ընթանալ, արտասուելով աղօթում էր եւ ասում. «Ընթացէ՛ր, Գեւո՛րգ: Տէ՛ր իմ Աստուած, նեղուածների՛ փրկիչ, Քո անուան համար չարչարուողների եւ հալածուածների՛ ապաւէն, մի՛ լքիր ինձ, այլ մինչեւ վերջ համբերութիւն շնորհիր: Իմ թշնամին թող չասի, թէ՝ յաղթեցի նրան»: Այդ ժամանակ երկնքից ձայն լսուեց, որ ասում էր. «Քաջալերուի՛ր, Գեւո՛րգ, որովհետեւ Ես քեզ հետ եմ»: Նոյնժամ նրա մարմինը բժշկուեց: Այդ օրը թագաւորը հրամայեց Գեւորգին նորից բանտ տանել, իսկ յաջորդ օրը նրան կանչեց ու ասաց.

—Մինչեւ ե՞րբ, յանդգնութեամբ սրտապնդուելով, պիտի համբերես այդ տանջանքներին՝ յուսալով, թէ կախարդութեանդ մոգութեամբ եւ դեւերի օգնութեամբ կխաբես մեզ: Այսուհետեւ անսա՛ ինձ եւ զոհէ՛ր մատուցիր աստուածներին:

Իսկ սուրբը թագաւորին եւ նրա մերձաւորներին ասաց.

—Ես, իմ Աստուծոյ օգնութիւնն ընդունելով, բոլոր չարչարանքներն անձամբ կրեցի եւ ահա՛ ձեր առջեւ ողջացած կանգնած եմ՝ վկայելով Միակ Աստուծոյ զօրութիւնը: Ես պատրաստ եմ դարձեալ կրել ձեր բոլոր խոշտանգումները՝ Քրիստոսի հաւատքի աներկբայ յոյսով: Իսկ դո՞ւք ինչ յոյս ունէք, որ անշունչ, պիղծ ու անոտի կուռքերին իզուր պաշտամունք էք մատուցում... Արդ, որպէսզի նրանց կորստեանը հաղորդակից չդառնաք եւ համայն աշխարհի առաջ ամօթահար չլինէք, ամաչեցէք այսուհետեւ աստուած անուանել նրանց, որոնք շնութեամբ, արբեցութեամբ, պատերազմներով եւ սպանութեամբ առժամանակ կան այս աշխարհում եւ յաւիտեան տանջուելու են անշէջ հրում:

Թագաւորն, այս լսելով, հրամայեց հարուածել սուրբի բերանին, որ դաս առնի այսուհետեւ չանարգելու չաստուածներին եւ ինքնակալներին: Ապա արջառի ջլերով անխնայ խարազանել տուեց նրա մարմինը: Բազում ժամեր նրան ծեծելուց յետոյ թագաւորն ասաց.

—Թշուառական, մինչեւ ե՞րբ չես ընդունելու եւ զոհեր չես մատուցելու մեծ աստուածներին, որ պատուի արժանանաս եւ ապրես:

Իսկ սուրբն ասաց.

—Ես կենդանի Աստծուն օրհնութեան պատարագ եմ մատուցում հանապազ, որ ինձ փրկի ձեր ձեռքից եւ արժանացնի երկնաւոր փառքի ու պատուի: Երանի՜ դուք անսայիք ինձ եւ Միակ ճշմարիտ Աստծուն երկրպագէիք:

* * *

Մազենտիոսի խորհրդով Դիոկղետիանոսը կանչել տուեց երեւելի կախարդ Աթանասիոսին: Նա պատրաստեց երկու ըմպելիք, որպէսզի եթէ Գեւորգն առաջինը խմի, մտափոխուի ու հնազանդուի արքայի կամքին, իսկ եթէ երկրորդը՝ իսկոյն մեռնի: Սուրբը, Տիրոջ անունը կանչելով եւ խաչակնքելով, երկուսն էլ ըմպեց, սակայն ամենեւին չմտափոխուեց ու չվնասուեց: Կախարդն, ապշելով այս հրաշքից, յանձն առաւ քրիստոնեայ դառնալ, եթէ Գեւորգը կենդանացնի վաղուց մահացած մէկին: Նոյնն էր պնդում եւ Մազենտիոսը. «Թո՛ղ այդպիսի հրաշք գործի, եւ կհաւատանք նրա Աստծուն»: Այնժամ, ասում են, Գեւորգը Տիրոջ խօսքով եւ աղօթքով մերձակայ մի շիրմից կենդանացրեց նախնիներից մէկին: Այս տեսնողներից շատերը հաւատացին Քրիստոսին: Իսկ թագաւորը, բարկանալով, տապարով սպանել տուեց Աթանասիոսին եւ յարութիւն առածին, որովհետեւ նրանք համարձակ քարոզում էին Քրիստոս Աստծուն, ապա հրամայեց Գեւորգին վերստին բանտ նետել, իսկ ինքը գնաց արքունիք:

Երբ սուրբը բանտում էր, բոլոր նորահաւատները գիշերը, բանտապետին կաշառելով, գալիս էին նրա մօտ եւ ուսանում քրիստոնէական հաւատքը: Եւ բազում հիւանդներ Գեւորգի մօտ էին ընթանում, բերում էին նաեւ կոյրերին, եւ նա աղօթքով բժշկում էր բոլորին:

Ոմն գեղջուկ՝ Գղերիկոս անունով, որի երկու լծակից արջառներից մէկն, արօրի տակ ընկնելով, սատկել էր, լսելով Գեւորգի կատարած բժշկութիւնների մասին, եկաւ ընկաւ նրա ոտքերն ու աղաչեց, որ կենդանացնի անասունին: Սուրբը հարցրեց.

—Հաւատո՞ւմ ես Քրիստոսին:

—Հաւատում եմ, որ բացի Նրանից չկայ այլ Աստուած,— պատասխանեց գեղջուկը:

—Թող լինի՛ ըստ քո հաւատքի,— ասաց Գեւորգը,— գնա՛ եւ կենդանի կգտնես քո արջառը:

Գղերիկոսը գնաց եւ վերադարձաւ՝ աղաղակելով.

—Մե՛ծ է քրիստոնեաների Աստուածը, հաւատո՛ւմ եմ Գեւորգի Աստծուն:

Այս լսելով դահիճներն ու զօրականներն իսկոյն բռնեցին գիւղացուն եւ տարան թագաւորի մօտ: Վերջինս, խռովուելով, այն մարդու անունն անգամ չկամեցաւ իմանալ, այլ հրամայեց անդամ-անդամ նրան կոտրատել: Իսկ նա, նահատակուելով Քրիստոսի խոստովանութեամբ, աղաղակեց. «Ծշմարի՛տ Աստուած, որ արարել ես ամէն ինչ, ինձ՝ անպիտան անօթիս, մի՛ անտեսիր, քանզի հաւատացի Քեզ՝ Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, եւ երկնչում եմ, որ մկրտուած չեմ: Ես կամեցայ մկրտուել, բայց չհասցրի: Արդ, եթէ կամենաս, Տէ՛ր, կփրկուեմ: Դրա համար, աղա-

չում եմ Ձեզ, Տէր Յիսուս, իմ վկայութեան արիւնն ինձ մկրտութիւն համարիր, որովհետեւ սրտագէտ Աստուած ես եւ քննում ես խորհուրդներն ու սրտի յօժարութիւնները»: Եւ երկնքից ձայն լսուեց. «Գոերիկոս, ճակ ուրախութեամբ Ինձ մօտ, քանզի Ինձ համար ես նահատակւում»: Եւ այսպէս սուրբը վախճանուեց:

Այս դէպքից յետոյ դարձեալ տեղեկացրին Դիոկղետիանոսին, որ շատերը, բանտ գնալով, ուսանում են Գեւորգից, որն ամենքին դէպի իրեն է ձգում՝ բժշկելով բազում հիւանդների: Այնժամ թագաւորը հրամայեց իր մօտ բերել սուրբ վկային՝ կամենալով նրա վերաբերեալ առաւել խիստ հրաման տալ: Իսկ Մազնենտիոսն ասաց. «Թագաւո՛ր, քրիստոնեաները զժուարամահ են եւ հակաճառող, այդ պատճառով խիստ մի՛ վարուիր, այլ, մանաւանդ, պատուական յորդորներով ողոքի՛ր այդ մարդուն եւ պատուասիրութեամբ կբերկրեցնես նրան, որպէսզի, թերեւս, քեզ անսալով, զոհեր մատուցի աստուածներին»:

Իսկ սուրբ Գեւորգն արքունիք գալիս սաղմոսում ու ասում էր. «Աստուա՛ծ, նայի՛ր ինձ օգնելու եւ փութա՛ ինձ ընկերակցել» [Սաղմ. կԹ 2]: Երբ ատեանի առաջ կանգնեց, թագաւորը սկսեց նրան համոզել՝ երդուելով արեգակով ու բոլոր աստուածներով, որ եթէ իրեն լսի եւ անմահներին զոհեր մատուցի, նրան բազում գանձեր կշնորհուեն, եւ թագաւորութեան մէջ երկրորդը կկոչուի, քանզի ներում եւ գթում է իրեն՝ կամենալով, որ ապրի եւ ո՛չ թէ անհնազանդութեան պատճառով չարաչար մահանայ: Իսկ սուրբ վկան հեգնելով ասաց.

—Այժմ բարւոք ես խօսում. ինչո՞ւ այդպէս չասացիր սկզբում: Այսքան չարչարանքներից յետոյ ինչո՞վ կարող ես հատուցել իմ տառապանքների ու լկանքների դիմաց:

Թագաւորն ասաց.

—Ների՛ր այս յանցանքներն ինձ՝ քո հօրը, զոհե՛ր մատուցիր աստուածներին ու ինձ հետ կմեծարուես արքունիքում:

Սուրբ Գեւորգը խաքելով ասաց.

—Քանի որ զղջացիր, թագաւո՛ր, այժմ ես կհաշտուեմ քեզ հետ: Ո՞ւր են քո աստուածները, գնանք նրանց մօտ:

Թագաւորը, յիմար մանկան պէս սուրբի ծածուկ խօսքից խաբուելով, շատ ուրախացաւ եւ հրամայեց բոլոր պետերին ու զօրքերին ողջ աւազանիով հանդերձ գալ կուռքերի տաճարը: Նա ազդարարեց. «Ահա՛ գալիլեացիների* զորձակից Գեւորգը յանձն առաւ մեծն Ապոլոնին զոհեր մատուցել»: Եւ բոլոր հեթանոսները հրճուելով աղաղակեցին. «Ապոլոնը յաղթե՛ց, Դիոկղետիանո՛ս թագաւոր, յաւիտեա՛ն թագաւորիր, մե՛ծ են

* քրիստոնեաների

թագաւորի աստուածները»:

Եւ երբ բոլորը մտան կուռքերի տաճար ու թագաւորի հրամանով լռեցին, սուրբ Գեւորգը կանգնեց մէջտեղում եւ, նայելով Ապոլոնի պատկերին, ասաց.

—Ասա՛ ինձ, աստուա՞ծ ես դու, Ե՞ւ պէ՞տք է, որ մարդիկ պաշտեն քեզ:

Իսկ պատկերի միջի պիղծ ոգին գոչեց՝ ասելով.

—Ես աստուած չեմ, եւ ոչ էլ՝ նրանք, որոնք ինձ հետ են, այլ մի է ճշմարիտ Աստուածը, Ով արարել է ամէն ինչ, եւ նրա Որդին՝ Յիսուս Քրիստոս եւ Սուրբ Հոգին: Իսկ մենք՝ Նրա դէմ ապստամբած հրեշտակներս, Նրանից դեւեր ենք անուանւում:

Սուրբ Գեւորգն ասաց.

—Եթէ աստուածներ չէք, ինչո՞ւ էք մոլորեցնում մարդկանց ձեր պաշտամունքով: Եւ այժմ ինչպէ՞ս էք համարձակւում լինել այստեղ՝ իմ Աստուծոյ ծառայի ներկայութեամբ, որ կրում եմ Նրա ճշմարիտ Որդու՝ Քրիստոսի անունը:

Այս խօսքերով Գեւորգը տեառնագրեց*: Եւ նոյն պահին մեծ խռովութիւն եղաւ, դեւերի ողբալի գոչիւն լսուեց, եւ տաճարի բոլոր կուռքերն ընկնելով փշրուեցին: Հեթանոս քրմերը, տեսնելով կատարուածը, յարձակուեցին եւ բռնեցին սուրբին՝ աղաղակելով.

—Վերացրո՛ւ այս կախարդին, թագաւո՛ր, որովհետեւ բոլորին մոլորեցրեց մոգութեամբ եւ կործանեց աստուածներին:

Իսկ թագաւորը, սրտմտելով դեւերի մոլեգնութիւնից եւ քրմերի ցասումից, ասաց սուրբին.

—Ամենայն կախարդութեամբ եւ մոլորութեամբ լի՛ չարագործ, չէ՞ որ խոստացար Ապոլոնին զոհեր մատուցել: Ինչո՞ւ այդպէս արեցիր:

Սուրբ վկան ասաց.

—Անմի՛տ եւ անամո՛թ, ես իմ պատարագը մատուցեցի Քրիստոսին՝ իմ ճշմարիտ Աստծուն, որով եւ ձեր բոլոր չաստուածներն աւերուեցին: Գոնէ ա՛յժմ իմացիր, թագաւո՛ր, որ քո կուռքերը չեն կարող օգնել ո՛չ իրենց, ո՛չ էլ որեւէ մէկին, քանզի անբան կուռքեր են, անմիտ մարդկանց մոլորեցնող դեւեր, իսկ այժմ Քրիստոսի ծառայից կործանուեցին:

Երբ Աղեքսանդրէ թագուհին լսեց կատարուածի մասին, գնաց թագաւորի մօտ եւ, առ Աստուած աղաղակելով, ասաց. «Քո անմահ զօրականի՝ Գեւորգի՛ Աստուած, քաւի՛ր ինձ՝ մեղաւորիս, եւ մի՛ յիշիր անգթութեան ու անզգամութեան գործերս, այլ յիշի՛ր իմ փոփոխումն ու

* խաչակնքել, դրոշմել Տիրոջ նշանը

դարձն առ Քեզ եւ ինձ էլ քրիստոնեաների եւ քո ծառայ Գեւորգի հետ մաս ու բաժին տուր»: Նոյն ժամին շատ ուրիշներ եւս հաւատացին Տիրոջը:

Այնժամ թագաւորը, դառնանալով, անյապաղ վճիռ կայացրեց սուրբ Գեւորգի եւ Աղեքսանդրէի վերաբերեալ՝ ասելով. «Ամենաչա՛ր Գեւորգ, ահա՛ եւ թագուհուն մոլորեցրիր եւ մահուան մատնեցիր: Արդ, գնա՛ դու նրա հետ եւ աստուածներին հայհոյելու համար արժանի դատաստան ընդունիր»: Այնուհետեւ կարդալ տուեց հետեւեալ դատավճիռը. «Ապոլոնին չերկրպագելով մեր ինքնակալութեան հրամանն արհամարհելու, այլեւ՝ աստուածներին հայհոյելով թագուհուն եւս մոլորեցնելու համար գալիլիացիների գործակից Գեւորգի եւ նրանից մոլորուած Աղեքսանդրէի գլուխները կտրե՛լ»: Եւ անմիջապէս զինուորները նրանց բռնեցին ու քաղաքից դուրս տարան: Թագուհին, որ յօժարութեամբ սուրբ վկայի հետ նահատակութեան էր գնում, ճանապարհին նստեց մի տեղ եւ աղօթելով խաղաղութեամբ աւանդեց հոգին: Իսկ սուրբ Գեւորգին տարան կառափնարան, որտեղ նա, դիմելով զօրականներին, ասաց. «Եղբայրնե՛ր, փոքր-ինչ սպասեցէ՛ք, որ աղօթեմ»: Եւ, հայեացքը երկնքին յառելով, ձեռքերը տարածեց, հառաչեց ու ասաց. «Տէ՛ր իմ Աստուած, որ բոլոր յաւիտեաններից առաջ ես, Ում ես ապաւինեցի մանկութիւնից ի վեր՝ ծառաներիդ տուած անսուտ խոստման ճշմարիտ ակնկալութեամբ: Անանց զանձ, որ նախքան խնդրելը Քեզանից հայցողներիս ձրի պարգեւներ ես շնորհում, լսի՛ր ինձ, Տէ՛ր, որ վկայութեան խոստովանութիւն տուեցիր ինձ եւ օգնեցիր մինչեւ վերջ համբերել. այժմ էլ ընդունի՛ր իմ հոգին, փրկի՛ր օդային պիղծ ոգուց եւ բնակեցրո՛ւ Քո սիրելիների ու սուրբերի հետ: Թողութի՛ւն շնորհիր այս հեթանոսներին, որոնք չարչարեցին ինձ եւ քո ծառաներին, նրանց լուսաւորի՛ր ճշմարտութեան գիտութեամբ, քանզի կամենում ես, որ բոլորը փրկուեն: Քո օգնութիւնն առաքի՛ր նրանց, ովքեր Քո անունն են կանչում: Տո՛ւր նրանց երկիւղ եւ սուրբերի հանդէպ սիրոյ ջերմութիւն, որ, նրանց յիշատակելով, նոյն հաւատքը ստանան՝ նրանց հետ արժանանալով երկնաւոր կեանքի եւ յաւիտենական արքայութեան, քանզի Քոնն է արքայութիւնը եւ փառքը՝ Հօրը եւ Որդունը եւ Սուրբ Հոգունը, յաւիտեանս. ամէն»:

Աղօթքից յետոյ նա խոնարհեց ծունկը եւ, մեկնելով պարանոցն, ասաց. «Կատարեցէ՛ք թագաւորի հրամանը»:

Քրիստոսի սուրբ վկայ Գեւորգը, սրով գլխատուելով, Ճանապարհեց ի Տէր 303 թուականին, Ջատկին յաջորդող ուրբաթ օրը:

ԵՐԱՆԵԼԻ ԱԲԲԱՅ ՄԱՐԿՈՍԻ ՎԱՐՔԸ

Նրա մասին մեզ պատմեց երանելի Սրապիոնը՝ այն սուրբ ծերի վախճանից յետոյ:

Երբ աբբայ Յովհաննէս մեծն ծերունու մօտ էի, մի երազ տեսայ. մենակեացի կերպարանքով երկու եղբայր եկան Յովհաննէս ծերունու տուն եւ հարցրեցին նրան իմ մասին, թէ՝ ո՞վ է սա, որ ննջել է այստեղ: Ծերունին պատասխանեց, թէ՝ աբբայ Սրապիոնն է: Եւ ասացին միմեանց. «Եկ սրանից ձեռնադրութիւն ստանանք»: Իսկ Յովհաննէս ծերունին ասաց. «Մի փոքր համբերէ՛ք, որ քնի, քանի որ նոր է եկել ճանապարհից եւ յոգնած է»: Եւ ասացին նրան. «Որտե՞ղ է շրջել նա եւ ինչո՞ւ չի գնում Թարմակիա լեռան բնակիչ աբբայ Մարկոս ծերունու մօտ, քանզի այս ժամանակներում մենակեացների բանակից ոչ ոք նրա պէս հաւատքի սրբութիւն չունի: Իսկ հիմա նա ծերացել եւ հասել է հարիւր երեսունի, եւ արդէն իննսունհինգ տարի է, ինչ եղբայրներից եւ ոչ մէկը չի այցելել նրան: Արդ, քառասուն օր անց անմահների երկրից* նրա մօտ են գալու, որպէսզի նրան տանեն իրենց հետ»: Եւ երբ այս ասացին, արթնացայ, նայեցի շուրջս եւ ոչ ոքի չտեսայ ծերունուց բացի: Այնժամ նրան պատմեցի երազը: Եւ նա ասաց.

—Այդ երազդ ճշմարտապէս Աստծուց է, բայց ես չեմ լսել Թարմակիա լեռան մասին:

Եւ ես ասացի ծերունուն.

—Հա՛յր սուրբ, աղօթի՛ր ինձ համար:

Նա աղօթեց եւ, օրհնելով ինձ, ճանապարհ դրեց:

Եւ ճանապարհ ընկայ դէպի Ալեքսանդրիա քաղաք, որն այնտեղից 10 օրուայ ճանապարհի հեռաւորութիւն ունէր: Եւ, երազներում Սուրբ Հոգուց առաջնորդութիւն ստանալով, մեծ տառապանքով, ցերեկը՝ արեգակնակէզ եւ գիշերը՝ անհանգիստ, հինգ օրում հասայ Ալեքսանդրիա եւ վաճառականներին հարցրեցի լեռան մասին: Հեռու գնացող վաճառականներից ոմանք ասացին, որ Թարմակիա լեռը գտնւում է բարբարոսների կողմերում եւ Ալեքսանդրիայից մինչեւ այնտեղ քսանհինգ օրուայ ճանապարհ է: Ես նրանց հարցրեցի, թէ ինչպէս կարելի է հասնել այնտեղ, եւ ասացին, որ եթէ ծովով գնամ՝ դիւրին է, քանի որ այդպէս ճանապարհը կարճ է, իսկ եթէ ցամաքով գնամ՝ ծարաւից շատ կտառապեմ, որովհետեւ ճանապարհը երկար է: Այնժամ ինքս ինձ խորհեցի եւ առաւել

* Ի նկատի ունի երկինքը՝ հրեշտակներին ու սուրբերին:

ճիշտ համարեցի երանելու մօտ դժուարին ճանապարհով գնալ, երբ Աստուած է օգնական լինում, քան՝ նաւում հանգիստ նստած, երբ հեռու է Նրա օգնականութիւնը: Այնժամ առայ ամանով ջուր եւ արմաւ եւ, ինձ յանձնելով Աստծուն, ճանապարհ ընկայ: Տասն օր գնացի եւ որեւէ շնչաւոր չտեսայ, իսկ այն վայրերում երբէք անձրեւ չէր տեղացել: Իմ ունեցած ջուրն ու արմաւը սպառուեցին, խիստ յոգնեցի, տկարացայ եւ վհատուած ընկայ: Անկարող էի մի քայլ իսկ անել: Սակայն վախեցայ ետ դառնալ եւ, իմ յոյսը դնելով Քրիստոսի վրայ, Աստծուց նուաղած ձայնով օգնութիւն խնդրեցի: Նոյն պահին վեր նայեցի ու տեսայ այն երկու եղբայրներին, որոնց տեսել էի երազում: Նրանք ինձ ողջունեցին եւ ասացին.

—Ինչո՞ւ չսպասեցիր մեզ, չէ՞ որ եկել-հասել էինք քեզ: Արդ, Տիրոջ զօրութեամբ վեր կաց:

Եւ երբ վեր կացայ, նայեցին, տեսան ինձ ու ասացին.

—Ծարա՞ւ ես:

—Այո՛, տեա՛րք իմ,- ասացի ես:

Այնժամ ինձ տուեցին անապատում աճող արմատի խէժ եւ ասացին.

—Կե՛ր եւ Աստուծոյ զօրութեամբ գնա՛:

Եւ, այն ուտելով, իսկոյն կենդանացայ եւ խիստ ուրախացայ: Գնում էի ցնծութեամբ, առանց յոգնելու: Եւ, ճանապարհն ինձ ցոյց տալով, ասացին.

—Շտապի՛ր, որ չուշանաս:

Եւ, այս ասելով, անհետացան եղան:

Այդ ահռելի անապատում ընթացայ եօթ օր եւ հասայ լեռանը: Բարձրացայ լեռան գլուխ, ուր ոչինչ, անգամ դալար խոտ չտեսայ եւ զարմացայ լեռան անմատչելի բարձրութիւնից. թւում էր, թէ երկինք եմ ելել: Եւ լեռան ստորոտում մի մեծ ծով երեւաց: Լեռան գլխին շրջեցի եւս եօթ օր եւ ամենեւին ոչինչ չտեսայ: Երբ ութերորդ օրն էր լուսանում, տեսայ, որ Աստուծոյ հրեշտակները երկնքից իջնում էին մի քարայրի վրայ եւ ասում սուրբին. «Երանի՜ քեզ եւ երանի՜ քո սրբուած հոգուն, աբբա՛յ Մարկոս: Ահա՛ քեզ մօտ բերեցինք աբբայ Սրապիոնին, ում փափագում էր տեսնել քո հոգին, քանզի նրանից բացի ոչ ոքի չէիր կարօտում: Այժմ տե՛ս նրան եւ ցնծա՛ հոգով ու մարմնով»:

Երբ այս լսեցի, մեծ երկիւղ ապրեցի եւ, գնալով ձայնի կողմը, հասայ սուրբ աբբայ Մարկոսի քարայրը եւ միայն հրեշտակների՝ երկինք վերանալուց յետոյ մօտեցայ ու լսեցի նրա զարհուրած սրտի խօսքերը: Նա խօսում էր Սուրբ Գրքից՝ Դաւթի խօսքերով. «Ինչո՞ւ ես տրտում, ան՛ձ իմ, յիշեցի Աստծուն եւ ուրախ եմ*»: Այդպէս եւ նա էր մխիթարում իրեն եւ ասում. «Հազար տարին Տիրոջ աչքին երէկուայ պէս է, որ անցաւ: Երանի՜ քեզ, հոգի՛ իմ, որ այս անցաւոր աշխարհիս երկրաւոր պղծութեամբ չշաղախուեցիր: Երանի՜ քեզ, ան՛ձ իմ, որ երբէք չտեսար ազտեղի կանանց կերպարանքը, եւ քո մէջ չի ծնուել սնոտի ցանկութիւն, որ մայրն է չարիքի: Երանի՜ ձեզ, աչքե՛ր իմ, որ սատանան չկարողացաւ ձեզ կուրացնել տեսարաններով եւ սուտ պաճուճանքներով, որոնցով շատերը խաւարեցին անգիտութեամբ, որոնցով սատանան որսում է Ադամի որդիներին՝ Եւա նախամօր գործած յանցանքների պաճուճանքով: Երանի՜ ձեզ, ականջնե՛ր իմ, որ երբէք չլսեցիք պարող կանանց եւ կատակերգուների ձայնը եւ չընդունեցիք խաբէութեան խռովարար խօսքերն՝ ի վնաս մենակեացների: Երանի՜ ձեզ, ձեռքե՛ր իմ, որ երբէք վաճառքի չտուեցիք ու չառաք սատանայական ուսմունքները, եւ ոչ էլ հոտոտելիքս պղծուեց զանազան անուշ իւղերով, որ կորուստ են հոգու համար: Երանի՜ ձեզ, ոտքե՛ր իմ, որ երբէք չգնացիք ամբարիշտների ճանապարհներով, եւ ոչ էլ միտքս ընթացաւ չար եւ սնոտի ընթացողների հետեւից՝ զբաղեցուելով չար կարծիքներով: Այլ պահպանիչ Սուրբ Հոգին միշտ նախանձեցնում էր մեզ՝ գնալու այն առաջինների մօտ, ովքեր հրեշտակակերպ պայծառութիւն են ստացել: Գոհութի՛ւն Ամենասուրբ Երրորդութեանը, որ ճշմարիտ մխիթարութեան արժանացրեց աչքերս, ականջներս եւ հոտոտելիքս՝ տեսնելով անիմանալիները, լսելով հրեշտակային քնարների ձայնը եւ հոտոտելով աստուածային անուշահոտութիւնները, զօրացրեց իմ ոտքերը՝ անձանձիր աղօթելու յոտնկայս եւ ծնրադիր, մաքրեց իմ միտքը՝ ամէն օր յիշելու պատուիրանները, որ լի են շնորհներով: Տիրո՛ջն օրհնի՛ր, ան՛ձ իմ, քանզի Նա է քաւում քո մեղքերը: Ինչո՞ւ ես տրտում, հոգի՛ իմ, չէ՞ որ չկարողացան քեզ խաբել մեղաւորների յանցանքները, որ սատանայի պատրանքներն ու գուշակներն են, քանզի քեզանում չգտան նրա պղծութիւնները: Մի՛ վհատուիր, հոգի՛ իմ, քանզի նրանք քեզ չեն տիրում, որովհետեւ երբէք քո մէջ չգտան նրա կամքի չարութիւնները: Ուրախացի՛ր, իմ խռովեալ հոգի, որովհետեւ երբ ելնես այս երկրից, աստուածային հրեշտակների գնդերը, քեզ առաջնորդելով, կընդունեն լուսազէն յարկերում: Մվ իմ տրտմած հոգի, լսի՛ր, թէ ինչ է ասում մարգարէն. «Հրեշտակների բանակները Տիրոջ շուրջն են երկիւղածութեամբ: Եւ երանի՜ այն ծառաներին, որոնք կատարում են իրենց Տիրոջ կամքը**»»:

Եւ երբ աւարտեց Սուրբ Գրքից վերցուած պաղատանքի խօսքերը, որ պահւում էին նրա սրբանեալ հոգում, սկսեց երկիւղով դողալ, քանզի նրա հոգին երկնչում էր Տէր Աստուծոյ փառքից, թէ որքան մեծ եւ

---

* Սաղմոս ԽԱ Զ 12, ԽԲ Ե

** Սաղմոս ԼԳ 8

ահաւոր Թագաւորի առջեւ է կանգնած, Ում անպատում երախտիքների հանդէպ ապերախտ ենք, իսկ անքաւ սիրոյ առջեւ՝ ամօթալից: Եւ դարձեալ յիշում էր ապերասանութիւնը նենգաւոր ոգիների, որոնք օդային ճանապարհի վրայ են՝ որպէս քննիչ բոլոր մեղքերի, չար ոգիների, որ ժպիրհ են ու ատելի, որոնք գիտեն յանդգնութեամբ եւ անամօթաբար յարձակուել սուրբերի եւ անբիծների վրայ, ընդդէմ որոնց, մխիթարելով իրեն, ասում էր. «Մի՛ երկնչիր, հոգի՛ իմ, քանզի իրենցից ոչինչ չեն գոնի քո մէջ»: Քանզի սուրբերի հոգիները խիստ խոնարհ են՝ իրենց անձը միշտ բոլորից յետինը համարելով, եւ ճշմարտապէս երկիւղում են Աստծուց ու դողում Նրա խօսքերից: Եւ երբ աւարտեց իր խօսքերը, արագ դուրս գալով քարայրից՝ դռան մօտ սկսեց դառնապէս լալ իր աշխարհից հեռանալը որպէս մէկը, որ իր կեանքում չլրացրեց Աստծուն ծառայելու չափը, պարտքն ու պատշաճ պատիւը, եւ ահա, Նա փոխադրում է քեզ անպատում բարիքների մէջ եւ՝ ո՛չ ըստ քո արժանիքների, այլ՝ ըստ Իր բարերարութեան: Որի համար էլ պատկառելով լալիս էր այն խոնարհ հոգին եւ երկիւղալից դողում, որով Տէր Աստուծոյ ուրախութիւնն էր շարժում եւ արժանաւորւում Նրանից փառաւորուելու երկրի վրայ: Եւ ես՝ Սրապիոն, քարայրից դուրս գտնուելով, լսում էի, մինչեւ որ աւարտեց: Եւ ներքուստ ահաբեկուած ու հիացած էի՝ լսելով Նրա սքանչելի խօսքերը, թէ ինչպէս, իրեն անարժան համարելով, երկիւղից դողում է Քրիստոսի այս սուրբն ու նահատակը: Ապա, առաջ գնալով, տեսայ նրան եւ երկրպագեցի Տիրոջ ողջոյնով: Իսկ նա կանչեց ինձ եւ ասաց. «Քրիստոսի խաղաղութեամբ եկար, եղբա՛յր Սրապիոն, Տէրը քեզ շնո՛րհ տայ ըստ քո ոտքերի չարչարանքների: Ո՛վ եղբայր, մօտեցի՛ր ինձ եւ համբուրի՛ր քո հօրը, որովհետեւ վաղուց էի ցանկանում քեզ տեսնել»: Եւ երբ մօտեցայ, բազկատարած ընկաւ գիրկս: Համբուրելով լալիս էր եւ ասում. «Ահա՛ իմ որդի Սրապիոնից խունկի անուշ հոտ է բուրում, որ առնում եմ Աստուծոյ հրեշտակներից»: Այնժամ իսկապէս ինձանից խունկի անուշահոտութիւն սկսեց բուրել: Եւ ասաց ինձ. «Ո՛վ զաւակ իմ, որքա՛ն ես չարչարուել այստեղ գալու եւ ալեհեր ծերունուս տեսնելու համար: Ճշմարի՛տ եմ ասում քեզ. արդէն իննսուն եւ հինգ տարի է, ինչ իմ աչքերը չեն տեսել Ադամի որդիներից եւ ոչ ոքի»:

Այնուհետեւ նա տարաւ ինձ սուրբ քարայրը եւ ասաց.

—Որդեա՛կ, այն օրուանից, ինչ այս քարայրը մտայ, իմ աչքը չի տեսել երկրի ոչ մի հօտ կամ անասուն, չեմ կերել մարդու կերակուր եւ չեմ հագել անցաւոր զգեստ: Երեսուն տարի ապրեցի այս լեռան վրայ մեծ ճգնութեամբ ու զրկանքներով: Սովով, ծարաւով ու մերկութեամբ մարտնչում էի պիղծ ոգիների դէմ: Քաղցելիս հող էի ուտում, ծարաւելիս խմում ծովի աղի ջուրը եւ երեսուն տարի շրջում էի այդպէս՝ վշտերով եւ փորձութիւններով, քանզի գեւերը պատերազմում էին խորհուրդներիս հետ: Այսպէս, անպատմելի նեղութեամբ շատ անգամներ կամեցան ինձ ծովը նետել՝ այս լեռան գլխից ինձ քարշ տալով լեռան ստորոտը, մինչեւ որ ոսկորներիս վրայ կաշի եւ միս չմնաց: Աղաղակում էին ու ասում. «Գնա՛ այստեղից եւ այս սահմանից, որովհետեւ մարդկանցից ոչ ոք այստեղ չի եկել»: Եւ Աստուած փրկեց ինձ նրանց չարութիւնից, քանզի բարեխնամ Աստուծոյ հանդէպ ունեցած հաստատուն յոյսով պատերազմում էի նրանց դէմ՝ ոչինչ համարելով նրանցից ստացած վէրքերս: Եւ, երեսուն տարի քաղցին, ծարաւին եւ մերկութեանը համբերելով, սատանայի հետ մարտնչելուց յետոյ Աստուած ինձ ողորմութիւն առաքեց եւ հրամայեց, որ մարմինս խիստ մազով ծածկուի: Եւ այնուհետեւ ժամանակ առ ժամանակ ինձ կերակուր պարգեւեց: Բազմիցս տեսայ հրեշտակների իջնելն ինձ մօտ, որոնք ինձ ցոյց տուեցին սուրբերի թագաւորութիւնն ու արքայութիւնը, տեսայ նաեւ ուրախութեան խոստումը, որ պատրաստուած է արդարների համար: Տեսայ Աստուծոյ դրախտը եւ այն ծառը, որից կերան Ադամն ու Եւան, տեսայ Ենովքին եւ Եղիային անմահների երկրում, քանզի աղաչելով խնդրեցի Աստուծուն ցոյց տալ ինձ այս ամէնը:

Իսկ դա՝ Սրապիոնս, մեծ հիացմունքով լսելով այս ամէնը, հարցրեցի նրան.

—Ո՛վ հայր սուրբ, աղաչում եմ քեզ, ասա՛ ինձ, թէ ե՞րբ եւ ինչպէ՞ս այստեղ եկար:

Եւ նա ասաց.

—Որդեա՛կ իմ, ես Աթէնք քաղաքում էի եւ փիլիսոփայութիւն էի ուսանում, եւ երբ վախճանուեցին ծնողներս, իմ սրտում խորհեցի, որ ես էլ եմ վախճանուելու եւ եթէ այս անցաւոր կեանքը չթողնեմ Քրիստոսի համար, յետոյ ակամայ թողնել կտան, ինչպէս որ յատուկ է մարդու տեսակին մահով հեռանալ աշխարհից: Այսպէս խորհելով հանեցի շորերս եւ ինձ նետեցի ծով՝ մի տախտակի վրայ, Աստուծոյ յոյսով, որ Նա ինձ առաջնորդի Իր կամքի համաձայն: Եւ տախտակով հասայ այս լեռանը: Արդէն տասը տարի է, ինչ Աստուծոյ հրեշտակը յայտնել է ինձ քո անունը, եւ օրըստօրէ ցանկանում էի քեզ տեսնել: Եւ ահա՛, տեսայ, ու ցնծաց իմ հոգին: Օրհնեա՛լ է քո Առաքիչը, եւ բարին գործեցիր, որ եկար:

Մինչդեռ խօսում էր, սկսեց լուսանալ եւ ես տեսայ նրան, որից ինձ երկիւղ ու դող պատեց, քանզի նրա մարմինն ամբողջապէս թաւ մազով էր ծածկուած, նման էր բրդածածկ կենդանու, եւ միայն խօսքերն էին մարդկային: Իսկ նա, տեսնելով իմ երկիւղը, ասաց.

—Որդեա՛կ Սրապիոն, իմ մարմնի տեսքից մի՛ զարհուրիր, որ այսպէս աղտեղուած է եւ այլակերպուած: Իմացի՛ր, որ չի՛ մնայ այս աղտեղութիւնն Արքայորդու գալստեանը, որ նորոգում է բոլոր աղտեղուած ու հնացած պատկերները, որոնք այժմ Իր իսկ հրամանով են արհամարհուելով աղտեղանում:

Այնուհետեւ հարցրեց ինձ.

—Ով զաւակ իմ, պատմիր ինձ աշխարհից:

Ես ասացի.

—Ով հայր իմ, աշխարհը շարունակ յանցաւորութեան ու խաբէութեան մէջ է:

—Թագաւորները կռապա՞շտ են,— հարցրեց նա,— եւ իշխանները հալածո՞ւմ են քրիստոնեաներին ու Քրիստոսի Եկեղեցին:

—Անցան այն ժամանակները,— պատասխանեցի ես,— եւ կռապաշտութիւնը մերժուեց շնորհիւ Յիսուս Քրիստոսի եւ քո աղօթքների: Ոչ մի տեղ կռապաշտ չի երեւում, եւ երկրի թագաւորն ու իր զօրքերն առհասարակ քրիստոնեաներ են:

Երբ այս լսեց սուրբը ծերը, ցնծութեամբ լցուեց, օրհնեց Աստծուն եւ ասաց ինձ.

—Կա՞ն աշխարհում սուրբ եւ աքանչելագործ մարդիկ՝ մեռելներին կենդանացնող եւ հիւանդներին բժշկող, ինչպէս ասաց մեր Փրկիչ Յիսուս Քրիստոս Աւետարանում. «Եթէ մանանեխի հատիկի չափ հաւատ ունենաք եւ ասէք լեռանը՝ գնա՛ այստեղից՝ կգնայ» [տես Ղուկ. ԺԷ 6, Մարկ. Դ 31]:

Եւ երբ այս ասաց, լեռը, տեղից պոկուելով, բարձրացաւ յիսուն կանգուն եւ կամենում էր ծովն ընկնել, բայց նոյնժամ ծերը, բարձրացնելով ձեռքերը, ասաց լեռանը. «Դե՛ղ չասացի՝ գնա, այլ եղբօրս հետ եմ խօսում: Կա՛ց քո հաստատութեան մէջ»: Եւ այնուհետեւ լեռը հաստատուեց իր տեղում, իսկ ես ահից ընկայ երեսիս վրայ: Նա, ինձ հանգստացնելով, ասաց.

—Կարծում եմ, եղբա՛յր, որ այսպիսի աքանչելի բան երբեւէ չես տեսել:

—Ո՛չ, տէ՛ր,— ասացի:

—Վա՜յ այս աշխարհին,— յոգոց հանելով ասաց ծերը,— որ թէպէտ քրիստոնեաներ են, բայց անունով եւ ո՛չ գործերով: Օրհնեա՛լ է Իսրայէլի Աստուած, որ ինձ առաջնորդեց դէպի այս լեռը, օտարացրեց աշխարհից, եւ մեղքով շաղախուած չմեռայ իմ տոհմի ու ծնողների շիրիմում: Քանզի վայրաքարշ է եւ խաբող այս աշխարհը, եւ ով մեռում է նրա մէջ, զժուարութեամբ է զերծանում նրանից:

Իսկ իրիկնամուտին նա ասաց ինձ. «Եղբա՛յր, ժամանակը չէ՞ արդեօք ճաշակելու»: Ես ոչինչ չասացի, իսկ նա, ձեռքերը երկինք տարածելով, ասաց «Տէրը կհովուի ինձ» սաղմոսը [տես Սաղմ. ԻԲ 2]: Ապա, իմ աջ կողմը ցոյց տալով, ասաց. «Եղբա՛յր, մօտեցի՛ր սեղանին, կերակուր ճաշակենք, որ մեզ համար պատրաստեց Աստուած»: Եւ ես խիստ զարմացայ, որովհետեւ այնտեղ ոչ ոքի չտեսայ, եւ բնաւ ոչինչ չկար քարայրում: Եւ, ներս մտնելով, տեսայ վայելուչ սեղան, երկու աթոռ, երկու խիստ մաքուր ու տաք հաց, զարմանալի մրգեղէն, երկու խորոված ձուկ, պատուական խաւարտ*, գեղեցիկ ձիթապտուղ, արմաւ, աղ եւ մի ոսկեղէն բաժակ՝ լի քաղցր ու համեղ, բոլորին անյայտ, աքանչելի հոտ ունեցող ըմպելիքով: Եւ երբ նստեցինք, ծերն ասաց. «Օրհնի՛ր, եղբա՛յր»: Իսկ ես ասացի. «Ինձ համար թողութիւն խնդրիր Տիրոջից»: Ես տեսայ նրա պարզած աջը, որ խաչանիշ կրակի պէս փայլատակեց սեղանի եւ կերակրի վրայ, եւ ասաց. «Տէ՛ր, Քո բարերարութեամբ օրհնի՛ր կերակուրը, որ Քո բարի կամքով պատրաստեցիր մեզ համար»:

Եւ երբ ճաշակեցինք եւ գոհութեամբ փառաւորեցինք Աստծուն, ասաց. «Հաւաքի՛ր սեղանը»: Սեղանը հաւաքելով մեծ զարմանքի մէջ էի, որովհետեւ ինձ բնաւ ծանօթ չէին կերակուրներն ու ըմպելիքները՝ ո՛չ համով եւ ո՛չ էլ հոտով: Կարծում եմ, աշխարհի թագաւորներն էլ բնաւ չեն արժանացել այսպիսի համերի եւ անուշահոտութիւնների:

Եւ ասաց ծերը.

—Եղբա՛յր, տեսա՞ր բարերար Աստուծոյ ողորմածութիւնն Իր երկիւղածների հանդէպ, որովհետեւ ամէն անգամ ինձ մէկ մաս էր շնորհում, իսկ այսօր երկուսը շնորհեց: Այսպէս ամէն օր, եղբա՛յր Սրապիոն, Աստուած Իր հրեշտակների միջոցով ինձ կերակուր եւ ըմպելիք է տալիս՝ դեւերի հետ պատերազմելիս կրած նեղութիւնների, քաղցի, ծարաւի եւ մերկութեան փոխարէն: Քանզի այն երեսուն տարիների տանջանքների դիմաց թթրերարն Աստուած շնորհեց ինձ մարմնի հանգիստ եւ հոգու անչափ ուրախութիւն: Իմ կերած աւազի եւ հողի փոխարէն այս կերակուրն է Նա տալիս, որ տեսար, խմածս ծովի աղի ջրի փոխարէն՝ այս անպատմելի քաղցրահամ ըմպելիքը, տօթի եւ ցրտի վշտերի փոխարէն՝ այս մազածածկը. եւ այլեւս չգիտեմ, թէ ինչ է շոգը կամ ցուրտը: Եւ դեւերի յարձակումների փոխարէն, որ համբերութեամբ տարայ, այժմ Աստուծոյ հրեշտակները մխիթարիչ եւ փառաբանակից են ինձ: Այսպէս իմացի՛ր, ո՛վ զաւակ իմ, Աստուծոյ անեզրական գթութիւնն Իրենից երկիւղածների հանդէպ. քանզի Նրա յոյսով համբերող անձը հանգստանում է Նրա գթութեան մէջ, որովհետեւ չի կարելի արհամարհել Աստուծոյ ներողամտութիւնը եւ կամ յուսահատուել Նրա մարդասիրութիւնից: Եւ իմ օրինակով թող ամէն ոք ճանաչի Աստուծոյ անմոռանալի գթութիւնը, քանզի այն երեսուն տարիների ընթացքում իմ մէջ որեւէ կարծիք չծնուեց, թէ մոռացել է ինձ Տէրը, եւ ոչ էլ իմ մտքում որեւէ մեղադրական խօսք

* ընդեղէն, բանջարեղէն

ընդդէմ Աստուծոյ՝ իբր անտեսում են իմ կրած բոլոր նեղութիւնները: Այլ ուրախութեամբ համբերում էի եւ բոլոր փորձութիւններին ինձ արժանի համարում՝ իմ սխալներից մաքրուելու համար: Այս պատճառով հասաւ ինձ Աստուծոյ բարերարութիւնը, ով զաւակ իմ, քանզի չյուսահատուեցի Նրա երկայնամտութիւնից: Արդ, եղբա՛յր իմ Սրապիոն, ինչ որ տեսար ու լսեցիր, կքարոզե՛ս երկիւղած եղբայրներին իրենց օգտի համար, որպէսզի Աստուծոյ սուրբի վարքը պատմուի որպէս անուշահոտութիւն աշխարհի համար: Արդ, լրացել են իմ կեանքի տարիները, դրայ համար Աստուած քեզ առաքեց, որ քո սուրբ ձեռքով թաղես իմ թշուառացած մարմինը: Իսկ այժմ թողութի՛ւն տուր ինձ, եղբա՛յր Սրապիոն, որովհետեւ այս գիշեր մի փոքր չարչարելու եմ քեզ արթնութեամբ եւ սաղմոսերգութեամբ:

Եւ մայրամուտից մինչեւ գիշերուայ երեքը կատարեցինք բոլոր սաղմոսները: Այնուհետեւ նա ասաց.

—Նստի՛ր, եղբա՛յր:

Եւ երբ նստեցինք՝ ասաց.

—Տե՛ս, եղբա՛յր, մարմինս շատ ամուր կծածկես եւ խաղաղութեամբ անյապաղ կգնաս այստեղից եւ այլեւս չվերադառնաս:

Եւ ես սաստիկ արտասուքով ողբացի՝ ասելով.

—Հա՛յր սուրբ, ինձ համար աղո՛թք արա եւ Աստծուն աղաչի՛ր, որ քեզ հետ ես էլ վախճանուեմ, քանզի հոգիս խռովուել է այս անշափ եւ անջուր, ահռելի անապատում:

Իսկ նա ասաց.

—Հիմա այդ քննելու ժամը չէ. դադարեցրո՛ւ ողբդ եւ մի՛ երկնչիր, քանզի Աստուած, որ քեզ առաջնորդեց այստեղ, կառաջնորդի, որ գնաս առանց տառապելու եւ ո՛չ այնպէս տաժանակիր, ինչպէս եկար: Արդ, ո՛վ եղբայր Սրապիոն, այս օրն ինձ համար առաւել մեծ է, քան իմ կեանքի բոլոր օրերը, քանզի այսօր հոգիս տեսնում է Տիրոջ պատրաստած արքայութիւնը եւ մտնելու է յաւիտենական կեանք՝ կատարեալ արդարների հոգիների մօտ: Այսօր հանգչելու է ծերութեան վշտերից տկարացած մարմինս, եւ հոգիս արժանանալու է անվախճան կեանքին:

Երբ այս ասաց, քարայրը լցուեց արեգակից էլ պայծառ լոյսով, փայլում էին լեռները, եւ անպատմելի անուշահոտութիւն էր բուրում: Ես ընկայ երեսիս վրայ, իսկ նա, բռնելով իմ ձեռքից, բարձրացրեց ինձ եւ ասաց. «Զօրացի՛ր, որդեա՛կ իմ, մի՛ վհատուիր, այլ քաջալերուի՛ր Սուրբ Հոգու զօրութեամբ»: Եւ ինքը, լցուելով Սուրբ Հոգով, ասաց. «Խաղաղութեա՛մբ եկաք, Աստուծոյ ծառաներ Գաբրիէ՛լ եւ Միքայէ՛լ»: Ապա ինձ դուրս տարաւ քարայրից եւ, քարայրի դիմաց խաչ հանելով, ասաց. «Թող Աստուծոյ ողորմութիւնը պահպանի՛ քեզ, ո՛վ քարայր, քանզի իմ

կենդանութեան վայելուչ տաճարը եղար, եւ քո մէջ էր իմ պանդխտութեան հանգստարանն ու թշուառացեալ մարմնիս ծածկութեան յարկը: Այժմ քեզ եմ յանձնում իմ ծերացած մարմինը. ծածկի՛ր, մինչեւ գայ մեռածներին յարութիւն Տուողը: Եւ դու, ցաւերի տուն եւ վէրքերի բնակարան մարմին իմ, խաղաղութեամբ ամփոփուի՛ր նրանում մինչեւ Փրկչի գալուստը, քանզի համբերել ես բազում ճգնութիւնների, եւ դրայ փոխարէն քեզ նորոգելու է Քրիստոս Իր գալստեան ժամանակ, քանզի հեռուոր պանդխտութեան մէջ քեզ հետ ճգնող ոչ մի ընկեր չունէիր Աստծուց բացի: Աչքե՛ր իմ, այսուհետեւ ննջեցէ՛ք աստուածային խաղաղութեամբ, քանզի ձեր հսկումները* երկարեցին մինչեւ այսօր: Հանգստացէ՛ք, իմ ձանձրացա՛ծ ոտքեր, որ յոգնած էք մշտապէս ծնրադրութեամբ կատարուող աղօթքներից: Խաղաղութեա՛մբ հանգչէք, իմ չարչարուա՛ծ ձեռքեր, որ եռանդուն մշակում էիք մեր Քրիստոս Աստուծոյ այգին:

Եւ երբ նա խօսում էր այսպէս, դառնապէս արտասուում էի, եւ իմ հոգին խռովուում էր նրա հրաժեշտից: Այնժամ, դարձեալ գրկելով, համբուրեց ինձ եւ ասաց.

—Քրիստոսի խաղաղութիւնը քեզ հետ լինի, եղբա՛յր Սրապիոն, եւ թող Աստուած բարի հատուցում տայ քեզ ըստ քո սրտի, որ չարչարուեցիր ինձ համար, եւ երանելի ես դու, եղբա՛յր: Աստուծոյ խաղաղութիւնը թող լինի անապատի, լեռների ու ողջ երկրի բնակիչների վրայ, եւ թող Տէր Յիսուս Քրիստոս սուրբ խաղաղութեամբ յաւիտեան հաստատի Իր սուրբ Եկեղեցին: Արդ, պատուիրում եմ քեզ, եղբա՛յր, որ քեզ հետ ոչինչ չտանես իմ թշուառացած եւ սնոտի մարմնից, թէկուզ մի մազ, եւ սրան հանդերձ չհագցնե՛ս, այլ թաղի՛ր այս մազերով, որ Տէր Աստուած շնորհեց ինձ: Եւ դու չմնա՛ս այստեղ. յաջորդ գիշեր շտապ ե՛լ ու գնա՛, որպէսզի մինչեւ գիշերուայ հինգերորդ ժամը քո տեղը հասնես:

Եւ երբ ասաց այս, երկնքից ձայն լսեցի, որ ասում էր. «Բերէ՛ք անապատի փառաւորապէս ընտրեալ անօթը, բերէ՛ք արդարութիւն գործողին եւ Իմ կամքը կատարողին, բերէ՛ք կատարեալ քրիստոնեային եւ բարի ու հաւատարիմ ծառային: Մի՛ աբբայ Մարկոս, եկ հանգչի՛ր կենդանեաց երկրում, որին արժանացար քո ճգնութեամբ»: Այնժամ փութով ասաց. «Արի՛, եղբա՛յր, խոնարհուենք աղօթքի»: Եւ երբ խոնարհուեցինք աղօթքի, դարձեալ ձայն լսեցի, որ ասում էր. «Թո՛ղ քո նափորտը»**: Եւ երբ ապշած վեր նայեցի, տեսայ երանելի աբբայ Մարկոսի անբիծ հոգին հրեշտակների կարգում՝ սպիտակ նափորտով պատուած: Եւ հրեշտակների գունդը փառքով, սաղմոսելով ու երգերով տանում էր նրան երկինք,

---

* հսկում — անքուն գիշերային աղօթական պաշտամունք

** նափորտ — շուրջառ, թիկնոց, փիլոն

դէպի վերին լուսաւոր ոլորտներ: Այնժամ լուսացաւ այն առաւօտը, եւ տեսայ սատանայի յամառութիւնը, տեսայ հոգիների քննիչներին, որ մօտ մէկ ժամ արգելեցին սուրբին վեր բարձրանալ: Եւ երկնքից ձայն լսեցի, որ ասաց. «Հեռո՛ւ գնացէք, խաւարի որդիներ»: Այնժամ դեւերից մէկը բարձր աղաղակեց՝ ասելով. «Փախէ՛ք, սատանայի որդիներ, ամօթով էք մնալու, որովհետեւ այդ այրն արդար է»: Եւ երբ նրա հոգին, սատանայի բոլոր փորձութիւնների միջով անցնելով, վեր բարձրացաւ, այնժամ մի հրեղէն աջ տեսայ նրա վրայ, որից յետոյ տեսիլքը ծածկուեց ինձանից: Մինչեւ առաւօտ աղօթեցի եւ, սուրբ մարմինը տանելով քարայր, թաղեցի ու մուտքը քարերով ամուր փակեցի: Ապա աղօթելով իջայ այն լեռից եւ Աստծուն աղաչեցի, որ սուրբի աղօթքներով ինձ օգնական ուղարկի, որպէսզի առաջնորդելով ինձ դուրս բերի այն ահռելի անապատից:

Եւ մայրամուտին տեսայ այն երկու այրերին, որոնց տեսել էի երազում Յովհաննէս ծերի տանը եւ անապատում, ուր ինձ զօրացրեցին: Նրանք մօտեցան ինձ եւ ասացին.

—Ողջո՛յն քեզ, եղբա՛յր Սրապիոն, եւ երանի՜ քեզ, որ արժանացար տեսնելու Աստուծոյ երկիւղն ունեցող այն սուրբ մարդուն: Ճշմարտապէս դու այսօր թաղեցիր սուրբ աբբայ Մարկոսի երանելի մարմինը եւ արժանացար օրհնուելու նրա կողմից, որի նման եւ հաւասար մէկն այս աշխարհում չկայ որեւէ տեղ: Արդ, եկ այս երեկոյեան հովին գնանք, որովհետեւ ցերեկուայ անասելի տօթին չես կարող ընթանալ:

Եւ առանց դադար առնելու գնացինք մինչեւ առաւօտ՝ խօսելով միմեանց հետ Աստուծոյ բարերարութեան եւ սուրբ ծեր աբբայ Մարկոսի մասին: Իսկ երբ օրը բացուեց, ասացին.

—Գնա՛ խաղաղութեամբ եւ աղօթի՛ր մեզ համար:

Երբ հեռացան ինձանից, տեսայ, որ Կասկասիայում եմ՝ աբբայ Յովհաննէսի տան դռան առջեւ, որտեղից ճանապարհ էի ելել, եւ, այդտեղ ինձ տեսնելով, յոյժ զարմացած սկսեցի ցնծալ եւ օրհնել Աստծուն: Յովհաննէսը լսեց իմ գոհութեան ձայնը. արագ դուրս գալով սենեակից՝ տեսաւ ինձ ու ասաց. «Քրիստոսի խաղաղութեա՛մբ եկար, աբբա՛յ Սրապիոն», եւ փութով համբուրեց ինձ: Մտանք սենեակ եւ պատմեցի նրան ամէնը: Այնժամ ծերը բարձրաձայն օրհնեց Աստծուն եւ ասաց.

—Արդարե՛ւ, մենք քրիստոնեայ ենք միայն անունով, բայց ո՛չ՝ մեր գործերով: Արդ, խնդրենք մեր Տիրոջից, որ թողութիւն տայ մեր յանցանքներին եւ ողորմի մեզ ըստ Իր մեծ ողորմութեան եւ սուրբի աղօթքներով ու բարեխօսութեամբ ազատի մեզ թշնամու բոլոր փորձութիւններից ու որոգայթներից:

ԵՐԱՆԵԼԻ ՍԻՄԷՈՆ ՍԻՒՆԱԿԵԱՑԻ ՎԱՐՔԸ

Երանելի Սիմէոնը ասորիների Անտիոք քաղաքից էր բարեպաշտ Լեւոն արքայի ժամանակներում: Դեռեւս պատանի՝ եկեղեցում միշտ լսում էր Պօղոս առաքեալի գրուածքները, իսկ մի աստուածասէր ծերունուց տեղեկանում, որ գրուածքները հոգու փրկութեան համար են: Եւ, սրանք լսելով, իսկոյն հաստատում էր բարի գործերի մէջ: Մի օր ծնողներից գաղտնի նա գնում է վանք եւ դառնում կրօնաւոր: Եւ այնպիսի ճգնութիւնների է տրւում եւ անձանձրոյթ ծառայում եղբայրներին, որ բոլորը զարմանում են:

Մի օր, ջրհորում մազէ պարան գտնելով, ամենքից գաղտնի մերկանում է եւ այնքան ամուր պատում ողջ մարմինը, որ պարանը թաղւում է ոսկորների մէջ: Մարմինը նեխելով որդնոտում է, եւ նրանից ժահահոտութիւն է ելնում: Եւ երբ եղբայրներն իմանում են, նրա մարմինը տաք ջրով տրորելով հազիւ կարողանում են հանել պարանը, իսկ կրօնաւորներից ոմանք, արդարի ճգնութեանը նախանձելով, վանահօրը ստիպում են նրան վտարել վանքից: Եւ երբ հեռացրեցին երանելուն, լալով գնաց. եւ գտնելով մի խոր ու ցամաք, թունաւոր գեւուններով լի ջրհոր՝ իրեն նետեց օձերի մէջ եւ ոչինչ չէր ճաշակում: Օրեր անց Տիրոջ հրեշտակը երազում յայտնւում է վանահօրը եւ գանահարելով սպառնում մեծ պատժի ենթարկել, եթէ չգտնի Աստուծոյ ծառային: Եւ վանահայրը, երկիւղով լցուած, անյապաղ առաքում է կրօնաւորների, որոնք փնտրելով գտնում են նրան ամենախոր ջրհորի մէջ եւ, այնտեղից հանելով, տանում են վանք:

Առժամանակ վանքում մնալուց յետոյ Սիմէոնը գնում է անապատ, ուր շինում է իր նեղ արգելանոցը եւ չորս տարի բնակւում այնտեղ՝ միայն թրջած ոսպ ուտելով: Այնուհետեւ շինում է երկրից չորս գրկաչափ* բարձր սիւն, որի վրայ էլ մնում է եօթ տարի: Եւ աղօթքներով բազմաթիւ հիւանդների է բժշկում եւ ուսուցանում փրկել հոգիները՝ Աստուծոյ կամքը կատարելով:

Քսանեօթ տարի անց նրա մայրը, լսելով որդու մասին, գնում է նրան տեսնելու եւ չի կարողանում, քանզի երանելի Սիմէոնը չի կամենում, այլ, քաղցրութեամբ խօսելով, ասում է. «Թողութի՛ւն շնորհիր ինձ, մա՛յր իմ, եւ մի՛ ձգտիր ինձ տեսնել այս աշխարհում, այլ, եթէ արժանի լինեմ, հանդերձեալում Քրիստոսի գալստեանը կտեսնենք միմեանց: Արդ, ո՜վ մայրիկ իմ, հանգստացի՛ր իմ սեան խարսխի մօտ եւ ննջի՛ր»: Եւ մայրը, գլուխը հենելով սեանը, աւանդում է հոգին: Իսկ երանելի Սի-

* Մարդու գրկի տարողութեան չափ

մէոնը հրամայում է իր մօր մարմինը դնել սեան առաջ, ապա իջնում է թաղելու. եւ, տեսնելով իր մօրը, տխրում է: Եւ թաղում են նրան նոյն տեղում, որպէսզի, նրա գերեզմանը միշտ տեսնելով, աղօթի նրա հոգու համար:

Մի անգամ այդ վայրերի մի քանի որսորդներ, մի եղնիկ տեսնելով, հետապնդում, բայց չեն կարողանում որսալ: Այնժամ սուրբ Սիմէոնի աղօթքներով երդւում են այն եղնիկին չվնասել: Երբ եղնիկը լսում է նրանց երդումը, անմիջապէս դադար է առնում, իսկ որսորդները, զանց առնելով իրենց՝ սուրբի աղօթքներով երդումը, բռնելով մորթում են եւ ուտում. եւ դեռեւս կերակուրը բերանի մէջ, նրանց բոլոր ատամները թափւում են բերանից: Այնժամ, խիստ զղջալով, գնում են երանելի Սիմէոնի մօտ՝ իւրաքանչիւրն իր ձեռքում պահած իր ատամները, եւ զղջումով խոստովանում են այն, ինչ արել էին եղնիկի հետ: Եւ երանելի Սիմէոնը, գթալով նրանց, աղօթում եւ հրամայում է ատամները դնել բերանի մէջ: Եւ երբ այդպէս են անում, իսկոյն ողջանում են, քանի որ բոլոր ատամները, իւրաքանչիւրն իր տեղը գնալով, ամրանում են: Սրանից յետոյ, քանի որ նրա առաքինութիւնը յայտնի դարձաւ, հրամայեց սիւնը բարձրացնել քառասուն կանգուն: Երանելին սեան վրայ մնում էր քացոթեայ՝ ամռանը արեգակնակէզ լինելով, իսկ ձմռանը ժուժկալելով ձեան ու ցրտի մէջ:

Եւ ոմանք գալով դէպի վեր աղաղակեցին ու խնդրեցին երանելուն ջուր բխեցնել լեռան մերձակայքում, որն անջրդի վայր էր, քանի որ ուղեւորները խիստ չարչարւում էին ջրի համար: Եւ երանելին, նրանց աղաչանքներին ընդառաջելով, սեան վրայից ասում է. «Գնացէք այսինչ տեղը, այն անջրդի լեռան վրայ բրեցէք, եւ Աստուած ձեզ ջուր կտայ ըստ ձեր հայցումների»: Նրանք, հաւատքով գոհանալով նրանից, գնում եւ փորում են նշանակուած տեղը, եւ ելնում է յորդաբուխ, առատ ջուր: Ուրախանում են բոլոր ուղեւորներն ու լեռան մերձակայքում ապրողները: Նաեւ բազում վտանգուածներ ծովում եւ ցամաքում սուրբ Սիմէոնի անունով օգնութիւն էին կանչում՝ խնդրելով Աստծուն օգնել իրենց, եւ Աստուած սուրբի աղօթքներով իսկոյն փրկում էր նրանց նեղութիւններից:

Եւ քառասունեօթ տարի սեան վրայ մնալուց յետոյ խաղաղութեամբ հանգչում է ի Քրիստոս: Երանելուն իջեցնելով թաղում են իր սեան մօտ: Սիմէոնի աշակերտ եւ սպասաւոր Անտոնը գրում է նրա աստուածահաճոյ վարքը: Եւ երանելու ննջումն էր տարեմտի սեպտեմբեր ամսի մէկին՝ ի փառս մեր Քրիստոս Աստուծոյ, որ օրհնեալ է յաւիտեանս. ամէն:



ՀԱՅՈՑ ՆՈՐ ՎԿԱՆԵՐԸ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ՝
ՔՆԱՐԻԿ ՂԱՋԱՐԵԱՆԻ

Արժանայիշատակ Մ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի աշխատասիրութեամբ եւ Ս. Էջմիածնի միաբան Գալուստ Տէր-Մկրտչեանի գործակցութեամբ 1903 թ. Ս. Էջմիածնի Մայր Աթոռի տպարանում հրատարակուեց մի գիրք, որի ստեղծման նախնական նպատակն էր մահմեդականների տիրապետութեան շրջանում հայոց «ներքին կացութեան, կազմակերպութեան, ազգային քաղաքականութեան երեւոյթների մասին» վաւերական փաստեր մատուցելը: Սակայն, ի յուսախաբութիւն մեծանուն հետազօտողների, ուսումնասիրուող նիւթերում այս խնդրին համապատասխանող գրուածքները հիմնականում բազմաթիւ նահատակների մասին համառօտ վկայաբանութիւններ էին: Այսպիսին է այդ բազմամեայ պատմական ժամանակահատուածի (1155—1843) թողած հետքը «հայոց ներքին կեանքի» վրայ... Եւ հրատարակուող գիրքը ստացաւ իր համապատասխան վերնագիրը.

«ՀԱՅՈՑ ՆՈՐ ՎԿԱՆԵՐԸ»:

Այս վերնագիրը կրող նոր էջ բացելով՝ «Գանձասար» հանդէսն այսուհետ «Վարք սրբոցին» կից (տարբեր աղբիւրներից, այդ թւում, իհարկէ՝ նշեալ գրքից)՝ ընթերցողին կներկայացնի այնպիսի անձանց վարքեր ու վկայաբանութիւններ, որոնք տակաւին անյայտ են հայ հաւատացեալին, եւ որոնց անունները, թէպէտ, տեղ չեն գտել Հայ Եկեղեցու սրբարանում, սակայն արդարեւ գրուած են Կենաց Գրքում՝ Քրիստոսի բոլոր հաւատարիմ ծառաների կողքին:

Ներկայացուած վկայաբանութիւնների համար սկզբնաղբիւր են հանդիսացել Մ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի «Հայոց նոր վկաները» (Վաղարշապատ, 1903), Թեոդիկի «Գողգոթա թրքահայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարին» (խմբագրութեամբ Արա Գոլանճեանի, Նիւ—Եորք, 1985) եւ Գ. Տ. Չագմագճեանի «Տէր, զի բացցին աչք մեր» (Կիպրոս, 1957) գրքերում զետեղուած վաւերական փաստագրութիւնները:

ԴԱՒԻԹ ԽԱՐԲԵՐԴՑԻ (+1474)

Սա Խարբերդի երկրից էր՝ որդին Գրիգոր կոչուող քահանայի, իսկ նրա քեռայրը տաճկացել էր**: Եւ մի օր մի այլ գիւղ հարսանիքի գնալիս հանդիպեց սրան: Եւ իր երեսը դարձրեց նրանից՝ ասելով անհաւատ եւ ուրացող, որի համար այն պիղծը, գնալով քաղաք՝ դատաւորի մօտ, ասում է. «Իմ աներոջ որդի Դաւիթն անարգեց ինձ, իմ բերանը, իմ հաւատքը եւ մեր առաջնորդին»:*

Եւ դատաւորը Դաւթին ձերբակալել եւ բանտ նետել տուեց: Եւ ամէն օր մերթ շողոքորթութեամբ եւ մերթ սպառնալիքով կամենում էին նրան թուլացնել Քրիստոսի հաւատքից, բայց չկարողացան այն խախտել: Իսկ քսան օրից յետոյ վճռեցին հրով այրել:

Եւ, բանտից հանելով, քաղաքի ողջ բազմութիւնը սկսեց նրան չարչարել. սրով խոցոտեցին, փայտով ձաղկեցին, ապտակեցին, թքեցին եւ անողորմ վիրաւորեցին: Դաւթի հայրը՝ Գրիգոր քահանան, լալով յորդորում էր որդուն.

—Որդեակ, հօրդ ցանկալի եւ փափագելի՛ որդեակ, մի՛ երկնչիր այս չարչարանքներից, որ միայն մարմինդ են ապականում, իսկ հոգիդ՝ ո՛չ [տե՛ս Մատթ. Ժ 28], այլ ուրախացի՛ր, որ ժառանգորդ ես յաւիտենական անմահ կեանքի եւ անպատում ուրախութեան:

Իսկ Դաւիթը ցնծալի հոգով ասում էր.

—Հա՛յր իմ, մի՛ տարակուսիր իմ փրկութեան համար, որովհետեւ այսօր ինձ համար փեսայութեան եւ ուրախութեան օր է, եւ յոյս ունեմ ստանալ փրկութեան հանդերձ եւ ուրախութեան պատմուճան, իսկ չարչարանքներիս փոխարէն յաւիտենական հանգիստ եմ ակնկալում:

Անօրէնները, լսելով այս խօսքերը, կրակ վառեցին եւ Դաւթին տարան այրելու. եւ փայլեց նրա երեսը, ինչպէս Ստեփանոսինը [տե՛ս Գործք Զ 15]: Եւ Դաւթին նետեցին հրի մէջ, բայց սուրբը չայրուեց, այլ հուրը ծիրանագոյն լոյսի տեսք ստացաւ: Իսկ անօրէնները, Դաւթին հրից հանելով, սրախողխող արեցին, չարաչար խոցոտեցին ամբողջ մարմինը, մինչեւ նա շնչասպառ եղաւ, եւ ապա կրկին նետեցին հրի մէջ: Եւ սքանչելի նշան եղաւ, քանզի նրա սիրտն ու գլուխը չայրուեցին, իսկ մարմնի մասերն այնչափ այրուեցին, որ փոշիացան: Փոշին քամուն տուեցին եւ ոտնակոխ արեցին, իսկ նրա սիրտը տարան ու նետեցին քաղաքի հնոցը: Սակայն քաղաքն ու քաղաքի պղինձն այնպէս ճեղքուեցին,

---

* քրոջ ամուսինը

** Այսինքն՝ հաւատափոխ էր եղել. մահմեդականութիւն էր ընդունել:

որ անօրէններն ահից սասանուեցին եւ մեծ երկիւղի մէջ ընկան: Եւ մինչդեռ քրիստոնեաները սուգի եւ երկիւղի մէջ էին, իսկ Դաւթի հայրը կսկծագին մորմոքում էր, յանկարծակի սուրբ Դաւթի նշխարների վրայ ամենքին ակներեւ խաչանման պայծառ լոյս ճառագայթեց, եւ այդպէս՝ 15 օր, ամէն գիշեր: Եւ ուր էլ տարան սուրբ Դաւթի նշխարները, թէ տանը եւ թէ եկեղեցում փայլում էր եւ շողում լոյսով: Երեսուն օր անց երկին լոյս ճառագեց սուրբ Դաւթի նահատակման վայրում, որտեղ դէպի արեւելք թռչող աղաւնիները լուսափայլ երամներով սկսեցին պտոյտներ գործել, որը տեսնելով՝ հաւատացեալները սքանչանում էին եւ այս հրաշքի համար գոհութիւն մատուցում Աստծուն: Եւ մանկան հայրն ու մայրը եւ բոլոր ազգակիցները մխիթարուեցին եւ ուրախութեամբ գոհացան Աստծուց:

Քրիստոսի երանելի վկայ Դաւիթը նահատակուեց հայոց ԹՃԻԳ (1474) թուականի յունուարի 16-ին, կիրակի օրը, ի փառս մեր Քրիստոս Աստուծոյ:

ԼՈՅՍ ԳՐԻԳՈՐ (+ 1703)

Այս Գրիգորը Երեւան Թաղի* բնակիչներից էր, գեղեցկատեսիլ եւ վայելչահասակ 18-ամեայ պատանի, աղքատ ծնողների զաւակ: Նա Սպահան քաղաքում ծառայութեան է մտնում անգլիացի ոմն վաճառականի մօտ: Մի օր շուկայով անցնելիս նրա հօր հագուստի քղանցքն ընկնում է մի խանութպանի ջուր խմելու անօթի վրայ, որի պատճառով զայրացած խանութպանը, ուժգնապէս ծեծելով, վիրաւորում է նրան՝ անօթը պղծելու համար: Այսպէս վիրաւորուած հայրը գնում է անգլիացի վաճառականի տուն եւ իր Գրիգոր որդուն պատմում կատարուածի մասին: Հօրը պատահած աղէտը շարժում է որդու գութը, եւ նա, իր հետ վերցնելով անգլիացի պարոնի երկու այլազգի ծառաներին, գնում է շուկայ եւ, գտնելով այն խանութպանին, հարուածելով վիրաւորում է նրան եւ քարշ տալիս մինչեւ անգլիացու տուն: Խանութի բարկացած աշխատողները կամենում են մեծ մնաս հասցնել Գրիգոր ծառային: Ուստի նրա մասին զրպարտութիւն են յօրինում եւ, սուտ վկաներ առնելով, գնում են իրենց կրօնապետի մօտ ու տեղեկացնում, թէ այն Գրիգորը հայհոյել է իրենց հաւատքը, եւ նրանից խնդրում են ըստ օրէնքի վճիռ կայացնել:

Կրօնապետը պատասխանում է.

—Եթէ ձեր խօսքերը ճշմարիտ են, ապա այն այրը կամ պէտք է մեռնի, կամ մեր հաւատքն ընդունի:

Բողոքողները սուտ վկաների միջոցով հաստատում են իրենց խօսքերը եւ նրանից ստանում մահապարտութեան կամ ուրացութեան վճռագիր, որը, տանելով քաղաքի Ղազի դատաւորի մօտ, վաւերացնում եւ հաստատում են կնիքով, այնուհետեւ դիմում են քաղաքապետին, որը Շահնուազ խանի թոռն էր, ազգութեամբ վրացի: Վերջինս, տեսնելով խանութպանների եւ նախանձախնդիրների բազմութիւնը, որ իրեն էր դիմել հաւատքի հարցով, եւ ընդառաջելով նրանց նախանձախնդրութեանը, իր ծառաներին ուղարկում է անգլիացի պարոնի տուն՝ բերելու Գրիգորին եւ այն ծառայակիցներին, որոնք նրա հետ էին եղել: Այն օրերին անգլիացի վաճառականը հիւանդանալով վախճանւում է, եւ մնում են երկու անգլիացի պարոնները: Նրանք՝ պարսից հաւատքին եւ լեզուին անծանօթ, երկիւղելով յանձնում են Գրիգորին միացած այլազգի ծառաներին, որոնց տանում են քաղաքապետի մօտ եւ բանտարկում, իսկ Գրիգորին պահում են իրենց մօտ:

Բազմութիւնը, չխաղաղուելով, քաղաքապետի հետ միասին դի-

---

* Խօսքը Ջուղայի տասը թաղերից մէկի մասին է:

մում է արքայի եպարքոսին եւ բողոքարկում՝ աղաղակելով.

—Խնայիր քո ազգը, տէր, եւ զԹա՛ մեզ, որովհետեւ այն անհաւատ այրը (Գրիգորը) մեր հաւատակցին, սաստիկ ծեծելով եւ վիրաւորելով, մեծ անարգանքներով ու հայհոյութեամբ քարշ տալով, տարել է մինչեւ անգլիացի իր պարոնի դուռը եւ դեռ այսքանով էլ չի բաւարարուել, այլ հայհոյել է նաեւ մեր հաւատքն ու կրօնը:

Ի հաստատութիւն իրենց խօսքի՝ հանում են կրօնապետի փաստաթուղթը, ցոյց տալիս նրան եւ շարունակում աղաղակել.

—Վրէ՛ժ առ մեր օրէնքն արհամարհողներից, որովհետեւ պախարակելով անարգուեց այն եւ հոգի հաւատարեցուեց, քանզի անհաւատը համարձակօրէն հայհոյեց մեր հաւատը եւ մեր յայտնի պատգամաբերին:

Նրանք այնքան են բարձրացնում իրենց աղաղակի ձայները, որ եպարքոսը պարտաւորւում է լսել նրանց բողոքը եւ խոստանում վաղը եւեթ այդ դատը քննել: Յաջորդ օրը բազմութիւնը, դարձեալ հաւաքուելով եպարքոսի դուռը, բռնադատում էր նրան նոյն պահանջներով:

Անգլիացի պարոնները, տեսնելով, որ օրըստօրէ սաստկանում է խանութպանների վրէժխնդրութեան զայրոյթը, վախենում են գործի հետեւանքներից եւ Գրիգորին ազատ արձակում՝ նրան պատուիրելով գնալ ու թաքնուել գիւղերից մէկում, մինչեւ դադարի ամբոխի շփոթութիւնը:

Գրիգորը գնում է իր հօր տուն եւ այնտեղ մնում երեք օր՝ առանց այլ տեղ թաքնուելու: Այն օրերին բողոքարարներն անդադար յաճախում էին եպարքոսի մօտ եւ նրանից պատասխան սպասում: Կանչելով անգլիացի իշխանի թարգմանչին՝ ահով եւ սպառնալիքով նրանից պահանջում են Գրիգորին: Թարգմանիչը նրանց պատասխանում է.

—Մեր սպասաւորների հանած աղմուկից յետոյ մենք մեր տնից արտաքսեցինք նրանց, որոնց հետ եւ՝ Գրիգորին:

Սակայն եպարքոսը, չլսելով նրա խօսքերը, պահանջում է Գրիգորին, որպէսզի նրան հարցաքննեն այդ գործի առթիւ, եւ յուսադրում, որ, եթէ անպարտ գտնուի, կարձակուի առանց վնասուելու: Գրիգորի վիրաւոր հայրը գտնւում էր անգլիացու տանը, եւ անգլիացի պարոնի թարգմանիչն այդ գործից ազատուելու համար նրա մասին յայտնում է եպարքոսին՝ ասելով.

—Նա գիտի իր որդու տեղը, իսկ մենք չգիտենք, թէ ուր է նա:

Եպարքոսը մարդիկ է ուղարկում բերելու Գրիգորի հօրը, որոնք, գալով եւ տեսնելով անգլիացիների անփութութիւնը, բռնում են նրան եւ տանում եպարքոսի մօտ, որն էլ հրամայում է բանտ նետել նրան եւ սպառնում է մահով, եթէ չյայտնի իր որդու տեղը:

Արքունի ծառայողները, տեսնելով այն անգլիացի պարոնների անտարբերութիւնը գործի հանդէպ, հասկացնում են բողոքարկու խանութպաններին, որ չթուլացնեն դատը, մինչեւ որ Գրիգորին դարձնեն իրենց հաւատքին: Իսկ Գրիգորի հօրը մերթ սպառնալիքներով ու ահաբեկութեամբ են զարհուրեցնում, մերթ կեղծաւորութեամբ ու խաբէութեամբ յուսադրում, որ իր որդու համար չվախենայ, «քանզի յանցաւոր չէ, եւ նրա կողմից վիրաւորուած մարդը ողջ է մնացել եւ ահա շրջում է ողջանդամ»:

—Արդ, դու մի՛ վախեցիր, այլ ասա՛ քո որդու տեղը, եւ մենք թոյլ չենք տայ, որ նրա գլխից մի մազ անգամ պակասի, այլ եպարքոսը հարցաքննելուց յետոյ նրան քաց կթողնի,– այս խօսքերն իրենց երդումով հաստատելով համոզում են Գրիգորի հօրը:

Կանչելով մի հայ մարդու՝ Գրիգորի հայրն իր կնոջը գրել է տալիս (որովհետեւ ինքը գրել չգիտէր), որ Գրիգորի համար չկասկածի եւ թոյլ տայ, որ նա գայ: Այդ թուղթն առնելով եպարքոսի ծառաները գալիս ու տալիս են Գրիգորի մօրը, որը, կարդալով, պարզամտութեամբ նրանց ձեռքն է տալիս իր որդուն: Սրանք, խիստ ուրախանալով, վերցնում են Գրիգորին եւ վերադառնում քաղաք:

Դատախազից լսելով Գրիգորի բռնուելու մասին՝ ամբոխն ուրախանում է եւ սկսում ահաբեկել նրան ու մահուամբ սպառնալ, եթէ չդառնայ իրենց հաւատքին: Իսկ նա պատասխանում է.

—Ես իմ լոյս հաւատքը չեմ թողնի եւ իմ Քրիստոսի ճշմարիտ օրէնքը չեմ փոխանակի ձեր օրէնքի հետ:

Տեսնելով, որ Գրիգորն անարգում է իրենց խօսքը՝ նրան տանում, կանգնեցնում են իշխանի առաջ, որին եպարքոսը յանձնել էր վճռի կայացումը: Գրիգորին տեսնելով նա բազմաթիւ ազգու եւ խանդաղաշարժ բաներ է ասում նրան՝ խոստանալով գանձեր, պատուական ստացուածքներ ու գեղեցիկ կին, եթէ իրենց հաւատքին դառնայ: Սակայն Քրիստոսի հաւատարիմ ծառայ Գրիգորը պատասխանում է.

—Այն բարիքները, որ խոստացար տալ ինձ, անցաւոր են, սուտ եւ ընդունայն, իսկ իմ հաւատքը ճշմարիտ է եւ սուրբ, որովհետեւ հաստատուեց Քրիստոսի կողմից, որի ճշմարտութիւնը դուք իսկ վկայում էք: Արդ, լսեցէ՛ք ինձ. ես իմ ճշմարիտ Աստծուն չեմ թողնի եւ իմ ճշմարիտ հաւատքը չեմ ուրանայ:

Երբ լսում են Գրիգորի պատասխանը, ասում են.

—Այսօր ցնորուած է երեւում: Տարէ՛ք պահէ՛ք, թերեւս, խելքի գալով, զգաստանայ:

Յաջորդ օրը, դարձեալ կանգնեցնելով ատեանի առաջ, հարցնում են սպառնալիքներով եւ պարգեւների խոստումներով.

—Ուրանո՞ւմ ես քո հաւատքը:

Իշխանը, տեսնելով Գրիգորի հաստատուն հաւատը եւ լսելով նրա համարձակ պատասխանները, առաջարկում է այդ մասին յայտնել եպարքոսին, բայց զայրացած խանութպանները, հաւաքուելով նրա մօտ, ասում են.

—Քեզ է յանձնարարուած գործի կատարումը, դու էլ պէտք է նրան բռնութեամբ բերես մեր հաւատքին. իսկ եթէ յօժարութեամբ չդառնայ, մահուան է արժանի:

Բազմապիսի խօսքերով համոզում են իշխանին իրենց կամակից լինել՝ ասելով.

—Կայցտնե՛ս եպարքոսին, թէ կամենում ենք Գրիգորին տանել քաղաքի հրապարակ եւ այնտեղ, հաշտեցնելով խանութպաններին եւ անգլիացի պարոններին, վերջացնենք այս գործը: Իսկ մենք պատրաստ ենք սպանել նրան, երբ հրապարակ հասնի:

Այսպիսի դաւաճանութեամբ իրենց խորհուրդը կազմելով՝ բազմութեամբ հանդերձ գնում են եպարքոսի տեսան եւ այնտեղ, կրկնելով իրենց բողոքը, ասում.

—Այս պատանին անարգելի գտնուեց ըստ մեր օրէնքի եւ մեր հաւատակցին վիրաւորեց ու քարշ տուեց նրան: Արդ, եթէ հաճոյ է ձեր տէրութեանը, որ մենք այս այլասեռ պատանուց այսքան անարգանք կրենք, թո՛ղ լինի ձեր իշխանութեամբ, իսկ եթէ ոչ՝ դա՛տ արա մեր ու նրա միջեւ եւ վրէ՛ժ պահանջիր մեր հաւատքի համար:

Այսպիսի աղմկայոյզ գանգատներով մեծացնում էին այն դատը եւ եպարքոսից հրաման խնդրում, որ Գրիգորին ման տան ամբողջ քաղաքով, որ բոլորը տեսնեն նրան: Երբ եպարքոսի մօտ հաւաքուածները լսում են այս խօսքերը, բոլորն, իբրեւ օրէնքի վրէժխնդիրներ, ասում են.

—Նա չպիտի՛ ապրի:

Այնժամ եպարքոսն իր ծառաներին հրամայում է, որ Գրիգորին կապած տանեն քաղաքի հրապարակ եւ խաբէութեան դիմեն՝ թուլացնելու համար նրա հաւատքը, իսկ եթէ չհամոզուի, յայտնեն իրեն. այսպէս է վճռում, քանզի անտեղեակ էր ամբոխի դաւաճան խորհրդին:

Այդ հրամանից յետոյ դահիճները մօտենալով մերկացնում են Գրիգորին՝ թողնելով միայն շապիկով ու վարտիքով եւ տանում են դէպի հրապարակ: Իսկ ամբոխը, նրա վրայ գրոհելով, սպառնալիքներով ահաբեկում էր եւ ասում.

—Դարձի՛ր իսլամի հաւատքին, ապա թէ ոչ՝ մենք քեզ քարկոծելով եւ սրախողխող անելով կսպանենք:

Նրա բազուկներն այնքան պինդ են կապում ետեւից, որ արիւն է

հեղուում: Գանահարում եւ ստէպ-ստէպ հարուածում են գլխին, եւ նրա շուրջ խմբուած ամբոխը, նրան քաղաքի շուկայի հրապարակում ման տալով, մերթ սպառնալով եւ մերթ շողոքորթութեամբ յորդորում է դառնալ իր հաւատքին: Իսկ Քրիստոսի ծառայ Գրիգորը, արիական համբերութեամբ տանելով բոլոր վշտերը, բոլորին համարձակ պատասխանում էր՝ ջատագովելով Քրիստոսի հաւատքը: «Իզուր էք կարծում,- ասում էր նա,- թէ ինձ, մահուամբ ահաբեկելով, կվախեցնէք, եւ ես կուրանամ իմ ճշմարիտ հաւատքն ու իմ Աստուած Յիսուս Քրիստոսին»: Այս խօսքերից նրանք ատամներն էին կրճտացնում, իսկ երանելու տեսքը զուարթ էր ու պայծառ եւ ամբոխի սպառնալիքներից երկիւղի ու սրտաբեկութեան որեւէ նշան չէր արտայայտում:

Երբ հասցնում են հայոց վաճառականների իջեւանատուն, որ մօտ էր քաղաքի մեծ հրապարակին, Քրիստոսի ծառան, տեսնելով իր ծանօթներին ու համազգի դրացիներին, ասում է.

—Եղբայրնե՛ր, մի՛ կասկածէք մեր հաւատքի ճշմարտութեան հանդէպ իմ հաստատուն լինելու մէջ. ես պատրաստ եմ տանջանքների եւ յօժար եմ մեռնել:

Այնտեղ գտնուող քրիստոնեաներն, այդ լսելով եւ երանելի Գրիգորին տանջանքների դառը կապանքներում տեսնելով, հառաչելով լալիս էին դառնակսկիծ արտասուքներով:

Այնուհետեւ դահիճները Գրիգորին հասցնում են քաղաքի մեծ հրապարակ, ուր Քրիստոսի նահատակին տեսնելու համար չորս կողմից յորձանք էր տալիս այլազգի բազմութիւնը: Այնտեղից տանում են շահի պանդոկի մօտ, որ Դրամահատի դիմաց էր: Աւագ խանութպաններից մէկը, մօտենալով նրան, բազմութեամբ շրջապատուած, շողոքորթելով ասում է.

—Որդեա՛կ, դու մանուկ ես եւ նորահասակ, խնայի՛ր քո ջահելութիւնը եւ փրկի՛ր քո անձը, որովհետեւ այսքան մահմեդականները, որ հաւաքուել են, քեզ կենդանի չեն թողնի. ուստի հաւանութի՛ւն տուր իմ խօսքերին, դարձի՛ր քո մոլար կրօնից եւ ընդունի՛ր Մահմեդի հաւատքը, որ բարի է եւ երեւելի, ինչպէս տեսնում ես այս մահմեդականներին, որոնք բարգաւաճել են բարեկեցիկ կենցաղավարութեամբ եւ բարիքների ժառանգորդ են այս եւ հանդերձեալ կեանքում: Եւ արդ, լսի՛ր. ես քեզ խանութպան կկարգեմ եւ կյանձնեմ իմ երեւելի կրպակը, կընդունեմ քեզ ինչպէս իմ որդուն, կտամ երեք հարիւր թուման, պատուական ստացուածքներ եւ մի գեղեցիկ կին՝ հարուստների դուստրերից, ում որ դու կհաճես:

Եւ այլ պէս-պէս բարութիւններ խոստանալով նրան՝ բերում են մի ընտիր վերարկու, եւ կրպակատէրը միւսների հետ ասում է.

—Ահա՛ մեր խոստումի նշանը. հիմա հազի՛ր ու մի՛ յամառիր եւ գնա համբուրի՛ր խանութպանի ձեռքը:

Եւ ստիպում են ընդունել վերարկուն: Սակայն Քրիստոսի հաւատարիմ ծառան, մերժելով նրանց, պատասխանում է.

—Ձեր խոստացած բարիքներն ինձ ամենեւին պէտք չեն: Եւ եթէ դուք կամենում էք ինձ բարիք անել, թողէ՛ք՝ մնամ իմ հաւատքին, իսկ եթէ, իզուր դատապարտելով, ինձ սպանելու էք, զո՛ւք գիտէք:

Այնուհետեւ մերկացնում է իր կուրծքը եւ ասում.

—Արէ՛ք, ինչ որ կամենում էք:

Իսկ դահիճները յետադգում էին նրա մահը՝ յուսալով, որ թերեւս թուլանայ նրա հաւատքը:

Այնտեղ էին նաեւ նրան ծանօթ ուրացած հայերից ոմանք: Սրանք հայերէնով դիմում են նրան.

—Այժմ քեզ փրկելու համար առերես դաւանի՛ր նրանց հաւատքը, իսկ երբ արձակուես, գնա՛ քրիստոնեայ երկրների քաղաքներ եւ այնտեղ համարձակօրէն քո՛ հաւատքը պաշտիր:

Երանելի Գրիգորը պատասխանում է նրանց.

—Այս մահս, որն այժմ հասել է ինձ, որ քաղաքն էլ գնամ, պիտի լինի, եւ ուր էլ լինեմ, ինձ պատահելու է այն: Ուրեմն ինչո՞ւ առօրեայ կեանքիս համար կորցնեմ իմ ճշմարիտ հաւատքը եւ դատապարտուած լինեմ Քրիստոսի Ատեանում Նրա վերջին ահեղ Դատաստանի Օրը:

Այս ասելիս Գրիգորն ուրախ եւ զուարթ էր, որ մօտեցել էր իր նահատակութեան ժամը. այդ էր վկայում նրա դէմքի գոյնը, որը ժամ առ ժամ աւելի ու աւելի էր պայծառանում:

Երբ այլազգիների բազմութիւնը նրա ուրացման յոյսը կորցրեց, մէկը զաւազանով ուժգին հարուածեց նրա թիկունքին, ինչը տեսնելով բազմութիւնը գրոհեց նրա վրայ եւ այնտեղի բարձրավանդակից վայր գլորեց: Եւ նրանցից մէկը, մերկացնելով իր սուրը, հարուածեց նրա կրծքին, իսկ միւսները, կորզելով նրան, իջեւանատան մի սենեակ գցեցին եւ դուռը փակեցին, որովհետեւ չէին ուզում սպանել՝ յուսալով, թէ դրանից յետոյ հնարաւոր կլինի որսալ նրան. ուստի ասում էին դրսից.

—Այժմ ընդունի՛ր մեր խօսքերը, որպէսզի թերեւս փրկուես:

Իսկ նա ներսում արի սրտով խոստովանում էր Քրիստոս Աստծուն: Այդ լսելով՝ ամբոխը մեծաձայն աղաղակեց եւ յարձակուեց սենեակի վրայ, կոտրեց դուռը եւ ներս խուժեց: Այնտեղ նրանցից մէկը սրով հարուածեց նրա երեսին, միւսներն էլ սրով խոզխոզում էին նրա մարմինը, իսկ կէսը քարկոծում էր: Նրանց զէնքերի շառաչիւնը եւ քարկոծողների աղաղակը սարսափեցնում էին մօտակայքում գտնուողներին:

Եւ սուրբի թափած արիւնը հեղուում եւ ոռոգում էր այն վայրը... Այդ ահաւոր տեսարանից այլազգիներից ոմանց գուրթը շարժուում էր, եւ նրանք ողբում էին ու զարմանքով հարցնում միմեանց, թէ՝ տեսե՞լ էիք արդեօք այսպիսի բան: Եւ արհամարհում էին դատաւորի թոյլտուութիւնը:

Այն ժամին այնտեղ ոչ մի հայ չկար, որովհետեւ ամէնքն էլ վախից խոյս էին տուել: Բայց մահմեդականի զգեստ հագած մի հայ սուրբ նահատակի մօտ էր գտնուում եւ տեսնում նրա նահատակութեան հանդէսը. իրենց վրէժխնդրութեան մոլուցքը նրա վրայ սպառելով գցում են իջեւանատան մէջտեղը, իսկ երեկոյեան ոտքերից պարան են կապում եւ քարշ տալիս քաղաքի հրապարակ ու գցում սպանուած մահապարտների տեղը: Հայը, որ ներկայ էր սուրբի նահատակութեանը, այն գիշեր տեսնում է երանելի նահատակ Գրիգորին, որ, երեւալով իրեն, վառած մոմեր է տալիս եւ ասում. «Ահաւասի՛կ, վերցրո՛ւ քո փնտրածը»: Եւ նա, արթնանալով, գոհանում է Տիրոջից:

Այն գիշեր հայերը նահատակի մարմինը մինչեւ լոյս հսկելու համար չորս այլազգի պահապաններ են վարձում, որոնք գիշերը տեսնում են, որ սուրբի մարմնի վրայ մեծ լոյս է ծագել եւ ամբողջովին պարուրել այն: Եւ առաւօտեան այս մասին պատմում են քրիստոնեաներին ու մահմեդականներին:

Եպարքոսը, լսելով այդ ամենի, ինչպէս նաեւ՝ նրա վրայ ծագած լոյսի մասին, մեծապէս զղջում է սուրբին բազմութեան ձեռքը մատնելու համար եւ առաւօտեան շտապ հեծեալ է ուղարկում Զուղայի քրիստոնեաների մօտ, որպէսզի շուտով գան եւ վերցնեն նրա մարմինը: Հայերը գալիս, վերցնում են նահատակ Գրիգորի մարմինը քաղաքի հրապարակից ու տանում Երեւան թաղ եւ սուրբ Ամենափրկիչ եկեղեցու մօտ մեծ փառքով ամփոփում նրա երանելի մարմինը: Դառնակսկիծ արտասուքներով ողբում եւ ջերմեռանդութեամբ համբուրում էին նրա սուրբ մարմինը, իսկ ոմանք, որ, նահատակի հանդէպ սիրուց մղուած, այն գիշեր մնացել էին գերեզմանի մօտ, գիշերը պէս-պէս նշաններ են տեսնում, որոնց մասին պատմում են յաջորդ օրը:

Ահա այսպիսի բարի մահուամբ նահատակուեց երանելի Գրիգորը շահ Սուլթան Հօսէինի թագաւորութեան եօթերորդ տարում, հայոց ՌԴԾԳ (1703) թուականի յուլիսի 20-ին՝ սուրբ Ներսէս Հայրապետի եւ Խաղայ եպիսկոպոսի տօնին:

Նրա գերեզմանը գտնուում է Երեւան թաղի Մատրան կամ Ամառան եկեղեցու առջեւ՝ հետեւեալ տապանագրով.

Նահատակ վասն Քրիստոսի՝ որդի Ասադդի,

Գանձ կայ՝ եդեալ աստ ի շիրմի,

Նշխար մաքուր պատուականի
Ումեմն մանկան նահատակի,
Որ էր ամաց տամն եւ ութի,
Առոյգ տեսլեամբ յոյժ բաղձալի,
Որ սուրբ Գրիգոր վերաձայնի:
Նման եղեալ զուարթնոյն մեծի
Սրախողխող ճգամբ մեծի,
Եւ մարտիրոս ի դարս վերջի,
Դառն եւ դժնեայ ամանակի
Կատարեցաւ մահուամբ բարի,
Անուշահոտ բուրմամբ խնկի,
Միշտ առաջի կայ Քրիստոսի,
Բարեխօսէ իւր յիշողի
Եւ զյիշատակն կատարողի:
Ի թուոջ հայկազանի
Ռճ յիսներորդի,
Ի թիւս երիս մակադրի,
Ի վերայ միւս յոբելինի.
Յուլիս ամսոյ էր երրորդի,
Եւ տօն էր մեծ Ներսէս հայրապետի:

Մինչեւ այսօր նրա գերեզմանը Ջուղայեցիները պատում են որպէս սուրբի եւ նահատակի գերեզման: Եւ բազում հիւանդներ, մանաւանդ՝ կանայք, ջուր են լցնում նրա տապանաքարի վրայ եւ ըմպում այդ ջրից: Եւ շատերն, ըստ իրենց հաւատքի, բժշկւում են:

ՄԻՔԱՅԷԼ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՋԱՊԱՀԵԱՆ (+ 1909)

Աջապահեան գերդաստանն առ այսօր յայտնի է Հայ Եկեղեցուն տուած իր անթիւ մշակներով, որոնց մեծ մասը նախկինում պսակուել է վկայական մահով: Բազում նահատակութիւններ կրելով հանդերձ՝ Աջապահեան տոհմն աստուածային շնորհներով տոկաց եւ համբերեց իր աստուածատուր կոչման մէջ, քանզի պատերազմի ճակատում ընկնող զինուորի տեղը գրաւող քաջ հերոսի պէս նահատակ կաթողիկոսների, եպիսկոպոսների եւ վարդապետների տեղն անմիջապէս գրաւում էին Աջապահեան մեծ գերդաստանի յաջորդ զաւակները...*

* * *

1909 թ. ապրիլի 14-ին սկսուեց Ադանայի ջարդը: Թուրք խուժանը, յարձակուելով Մեսիսի վրայ, ամենից առաջ ձերբակալեց Մեսիսի առաջնորդին՝ նպատակ ունենալով դաւանափոխ անել նրան. «Մի՛ վախեցիր,- ասացին նրան,- քեզ վնասդ չի սպառնում. միայն ուրացի՛ր կրօնդ եւ կփրկուես»: Առաջնորդն ի պատասխան աղօթում է ու խաչակնքում: Այս տեսնելով՝ խուժանն առաւել խստութեամբ է կրկնում իր առաջարկը, սակայն առաջնորդը միայն աղօթում է ու խաչակնքում: Վայրագ խուժանն, առաւել բորբոքուած, երրորդում է իր հրամանը, իսկ առաջնորդը շարունակ աղօթում է ու խաչակնքում: Այդժամ ջարդարար գազաններից մէկը ձեռքին բռնած կօշկակարի հերիւնը խոթում է առաջնորդի աջ աչքը եւ կուրացնում: Սակայն առաջնորդն իր արիւնահոս դէմքի վրայ շարունակում է խաչակնքել եւ աղօթել: Նոյն ջարդարարը միեւնոյն հերիւնով կուրացնում է նաեւ առաջնորդի ձախ աչքը: Կուրացած առաջնորդ հայրն արիւնով ծածկուած դէմքի վրայ անտրտունջ, յարատեւօրէն խաչակնքում է՝ աղօթելով: Կատաղած խուժանը, գետնելով առաջնորդին, տապարի հարուածով կտրում է նրա խաչահանող ձեռքը: Իսկ առաջնորդը ձախ ձեռքով է սկսում խաչակնքել եւ անընդհատ աղօթել: Վայրագ խուժանը բորբոքուած զայրոյթի մէջ տապարի երկրորդ հարուածով կտրում է առաջնորդի ձախ ձեռքը եւս. առաջնորդը տակաւին աղօթում է: Ջարդարարները, մեծապէս զարմացած, կոտրում են նրա աջ ոտքը եւ ապշահար տեսնում, որ առաջնորդը շուրթերի թեթեւ շարժումներով շարունակում է աղօթել: Ջարդարարներն, առաջնորդի ձախ ոտքն էլ կոտրելով եւ անլուր խոշտանգումների ենթարկելով, չարաչար սպանում են եւ

* Կիլիկիայի կաթողիկոսների մեծագոյն մասը մինչեւ 1870 թ. Աջապահեան գերդաստանի զաւակներ են եղել:

այնուհետեւ նրա յաշտուած մարմինը նետում Ծիհան գետը:

Այս բազմաչարչար առաջնորդը, այս արիասիրտ հայը, Սուրբ Հոգով լցուած այս քրիստոնեան, Կիլիկիայի բարեհամբաւ ընտանիքի եւ մեծանուն գերդաստանի զաւակներից մէկը գերաշնորհ Միքայէլ ծայրագոյն վարդապետ Աջապահեանն էր, որն ընդամէնը քսանութ տարեկան էր, երբ վկայաբար նահատակուեց ի փառս Քրիստոսի: Ցարգանքնե՛ր այդ առաքելաշնորհ վարդապետին, բազմաչարչար հայր սուրբին, նրա անյայտ գերեզմանին ու անծանօթ յիշատակներին...

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի. ամէն:

ԳԱՆՁԱՍԱՐ

ԱՇՈՏ ՔԱՀԱՆԱՅ (+ 1909)

Արժանապատիւ տէր Աշոտ քահանայ Աւետեանը ծնուել է Կարին քաղաքում 1868 թուականին: Հոգեւոր կրթութիւն ստանալուց յետոյ՝ 1894 թ. նա քահանայ է ձեռնադրւում եւ շուտով, որպէս բազմարդիւն եւ եռանդուն երէց, վայելում ոչ միայն քաղաքի, այլեւ՝ հարեւան գիւղերի բնակչութեան համակրանքը: Երկար տարիներ նա նուիրուել է տեղի մանուկների դաստիարակութեան գործին եւ միաժամանակ հանդիսացել քաղաքի կրօնական ժողովի եւ Կարմիր վանք գիւղի տեսուչը: Ցայտնի է, որ նա անձամբ, մերձակայ գիւղերում հանգանակութիւններ կատարելով, կարողանում էր ապահովել դպրոցի գոյութիւնը:

Երբ սկսւում են չարաբաստիկ հալածանքները, Աշոտ քահանան իր ծանօթ ազգակիցների հետ ձերբակալւում ու բանտ է նետւում, որտեղից շուտով բոլորին հանում ու տանում են Մալաթիայի սպանդանոց-լեռը: Ոստիկանները շուրջ 4000 տղամարդու խումբ առ խումբ զատում են կանանցից եւ կապում ձեռքերը՝ պատրաստելով նահատակութեան: Տէր Աշոտ քահանան կամովին յայտնուել էր առաջին խմբի գլխին՝ իրականացնելու համար իր՝ Աստուծոյ նուիրեալ սպասաւորի վերջին առաքելութիւնը: Նա իր շուրջը գտնուողներին խրախուսում է արի մնալ մահուան հանդէպ եւ մեծ յուզմունքով բոլորին մղում է միաբերան աղօթել «Տէ՛ր, ողորմեա՛»-ն: Այնուհետեւ, ի վերուստ ներշնչուելով, դիմում է մի անօրինակ նուիրագործութեան. բարձրաձայնելով պատրաստի սրտայոյզ խոստովանանքը՝ «Զամենայն մեղս, զոր գործեալ եմ, քանզի մեղայ խորհրդով...», եւ ապա՝ սուրբ Հաղորդութեանը նախորդող խօսքերը՝ «Սա եղիցի մեզ ի յարութիւն եւ ի քաւութիւն...»՝ մի բուռ հող է նետում քերանը՝ բարձրագոչ հաւաստելով իր նորաստեղծ հօտին. «Տղանե՛ր, ամո՛ւր պահէք ձեր սրտերը, այս անիծեալ երկրի հողից կո՛ւլ տուէք որպէս Հաղորդութիւն»: Զուրդ խուժանը, «քէշի՛շ, քէշի՛շ» ոռնալով, սկսում է քաշքշել նրա սքեմի քղանցքից՝ տանելով դէպի ձոր, որից յետոյ կացնի, մանգաղի ու մահակի շաչիւնները նահատակուող հազարաւոր հայերի աղաղակների եւ ճիչերի հետ խառնում են ձորի լռութիւնը...

ԳԱՆՁԱՍԱՐ



ՀՈԳԵՒՈՐ ՄԱՍԿՈՅԹ

Վիգէն Ղազարեան

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ ԽՈՐԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

«Խորանների մեկնութիւնները»՝ ողջ միջնադարեան աշխարհում այդ եզակի վաւերագրերը, բովանդակելով զանազան նշաններ (սիմվոլներ), այլաբանութիւններ եւ թուային խորհուրդներ, ունեն նաեւ ուշագրաւ գեղագիտական հարցադրումներ, որոնց մի մասն առ այսօր մնում է ուժի մէջ:

Գեղագիտական հարցադրումները կերպարուեստում սահմանափակում ենք վայելքի ու գեղեցիկի միասնական մեկնաբանումով, նաեւ՝ գոյների, ճարտարապետական ու զարդային տարբեր մոտիւների յուզական բովանդակութեամբ: Սոյն մեկնութիւններում գոյների տեսութեան մասին խօսել ենք «Գանձասար» հանդէսի 2—րդ գրքում: Ուստի այն այստեղ բաց ենք թողնում՝ իբրեւ գեղագիտութեան վերաբերող մաս: Բաց ենք թողնում նաեւ թուային նշանական (սիմվոլիկ) յարաբերութիւնները, նման եւ ոչ նման այլաբանութիւնների ու խորհուրդների բարդ համակարգը, աստուածաբանական բազմաթիւ մէջբերումները, որոնք սոյն մեկնութիւններում կազմում են արուեստի տեսութեան համակարգի բաղկացուցիչ մասը եւ նոյնպէս ունեն գեղագիտական ուղղուածութիւն: Դրանց թերեւս անդրադառնանք յետագայում:

Իր «Խորանների մեկնութեան» մէջ, Աւետարանագիրքը համեմատելով դրախտի եւ Տիրոջ տանից բխող կենաց ջրի հետ, Ներսէս Շնորհալին բացայայտում է խորանապատկերների գեղագիտական ուղղուածութիւնը.

«Այս, որ ցանկեալս է ոչ պակուցիչ հրով եւ սրովբէական սրով բոցեղինեալ, այլ՝ հեշտալի եւ ծաղկերանգ նկարիւք եւ պաճուճազարդ գունաւք, խորանաց կերպագրութեամբ, այլեւ՝ տնկոց ոմանց ստեղծագործութեանց եւ ձագուց ձեւացելոց եւ յարիւնուածք սեղանոց եւ սեանց եւ ծաղկանց, որք ունին յինքեանս խորհուրդս խորին եւ իմաստս անյայտս եւ հանճարս ծածուկս, որովք ոչ է պարտ զանց առնել վայրապար»:

(«Եւ այս [գիրքը], որ ցանկուած է ոչ թէ զարհուրելի հրով եւ սերովբէական բոցեղէն սրով, այլ՝ հաճելի ու ծաղկերանգ նկարներով եւ պաճուճազարդ գոյներով՝ խորանների կերպագրութեամբ, ինչպէս նաեւ [կան] մի շարք տունկերի յօրինուածքներ եւ թռչունների ձեւաւորումներ, նաեւ՝ սեղանների, սիւների ու ծաղիկների յօրինուածքներ, որոնք իրենց մէջ ունեն խորին խորհուրդներ, անյայտ իմաստներ եւ ծածուկ գիտելիքներ, որոնք չպէտք է զանց առնել վայրիվերոյ կերպով»:)

Միանգամից իմաստալից գեղագիտական վայելքով, որ հակադրուած է խստութեանը, թէկուզ սերովբէական, մենք խորանների գեղեցիկ պատկերների բովանդակած հոգեւոր իմաստները վերապրելու հնարաւորութիւն ենք ստանում:

Ըստ Դիոնեսիոս Արիսպագացու եւս՝ զգայական պատկերներն են միակ ուղին հոգեւոր իմաստներն ըմբռնելու համար: Մինչդեռ երկնայինները (երկնային ոլորտների հրեշտակային դասերը) զգայական պատկերների կարիք չեն զգում:

«...ԶԱստուած եւ զաստուածային առաքինութիւն նոքա (երկնայինները — Վ. Ղ.) որպէս իմացութիւն իմանան, որպէս իւրեանց պարտ է, իսկ մեք զզայեալք պատկերաւք յաստուածային կոյս, ըստ կարողութեան, համբառնամք տեսութիւն»[ա]:

(«...Նրանք (երկնայինները — Վ. Ղ.) Աստծուն եւ աստուածային առաքինութիւնը ճանաչում են որպէս իմացութիւն, ինչպէս եւ պարտաւոր են, իսկ մենք զգայական պատկերներով ենք բարձրանում դէպի աստուածային կողմը՝ այն ըմբռնելով ըստ մեր կարողութեան»:)

Այն բնորոշումը, որ իւրաքանչիւր պատկերամոտիւ նշանակում է մի այլ իմաստ, քան ինքն է ներկայացնում, գալիս է մինչեւ այսօր: Դիոնեսիոսից բերուած քաղուածքը մի փոքր այլ ձեւով (արուեստն աներեւոյթ աշխարհի տպաւորումն է) ներկայացուած է Վ. Տատարկեւիչի մօտ[բ]: Որպէս նման ըմբռնման ժամանակակից օրինակ Վ. Տատարկեւիչը բերում է Սիւզան Կ. Լանգերի այն միտքը, որ արուեստը իւրատեսակ ձեւաստեղծում է (մեր մեկնիչի մօտ՝ «կերպագրութիւն», որ աւելի տարողունակ բառ է), այսինքն՝ ձեւերի, որոնք խորհրդանշում են մարդկային յոյզեր[գ]: Ըստ Բ. Կրոչէի եւս՝ «...եթէ սիմվոլը դիտւում է իբրեւ ինչ—որ անբաժան մի բան գեղարուեստական ինտուիցիայից, ապա այն հոմանիշ է բուն ինտուիցիայի, որը միշտ ունի իդեալական բնոյթ: Արուեստը երկակի էութիւն չի դրսեւորում, այն ունի միայն մէկ հիմք. ամէն ինչ նրանում սիմվոլիկ է, քանի որ ամէն ինչ իդեալական է»[դ]:

ա «Յաղագս յեկեղեցական քահանայապետութեան», Մատենադարան, ձեռ. 49, թ. 77
բ W. Tatarkiewicz. A History of Six Ideas. An Essay in Aesthetics. 1980, Warszawa, p. 30
գ նոյն տեղում, էջ 32
դ Б. Кроче. Эстетика как наука о выражении и как общая лингвистика. Часть I. Теория. М., 1920, с. 39

Շնորհալու մեկնութեան վերը բերուած քաղուածքում արտայայտութիւններն անթերի են թւում արուեստի տեսութեան առումով, յատկապէս, այսպէս կոչուած, ձեւի (ֆորմա) ըմբռնման տեսակէտից՝ «հեշտալի եւ ծաղկերանգ նկարիւք», «պաճուճազարդ գունաւք», «խորանաց կերպագրութեամբ», «յաւրինուածք սեղանոց եւ սեանց եւ ծաղկանց» եւ այլն: «Պաճուճազարդ գունաւք», — անմիջապէս զարդի (օրնամենտի) գունային մշակում, «խորանների կերպագրութեամբ»[1],— խորանների կերպի կամ կառուցուածքի ստեղծում, «հեշտալի եւ ծաղկերանգ նկարիւք», — աչքի համար հաճելի եւ պայծառ պատկերներ (ծաղիկներն ունեն միայն պայծառ եւ մաքուր գոյներ), «յաւրինուածք սեղանոց եւ սեանց եւ ծաղկանց», — սեղանների, ծաղիկների, սիւների բաշխում ըստ կոմպոզիցիայի («յաւրինուածքի»), որպէսզի հարստանայ խորանի կերպագրութիւնը: Այնուհետեւ, «տնկոց ոմանց ստեղծագործութեանց եւ ձագուց ձեւացելոց» արտայայտութիւնը եւս ունի երանգ՝ ոճաւորելու եւ ձեւ տալու, ընդ որում, ինչպէս բխում է ենթատեքստից՝ խորանի «կերպագրութեան» մէջ: Մեր հեղինակը «միմետիկ» (նմանողական) արժէքի հետ ընդունում է «տնկոց ոմանց ստեղծագործութեանց», այսինքն՝ յօրինելու, վերակերտելու, ոճաձեւման առկայութիւնը եւ ոչ՝ այլ կերպ, քան «խորին խորհուրդների», «անյայտ իմաստների», «ծածուկ հանճարների» կրողներ: Այս հատուածում մեկնիչը մի կողմից ցոյց է տալիս կերպարուեստի նրբութիւնների ընկալում, միւս կողմից՝ հաւատարմութիւն աստուածային գեղեցիկի եւ բարու (կալոկագաթիա) պլատոնական ըմբռնմանը: Ըստ Շնորհալու մեկնութեան՝ «աստուածագիծ մատեանները» (Սուրբ Գիրքը, աւելի շուտ՝ Աւետարանները, քանի որ խորանները նախորդում են Աւետարաններին) Աստծուն հռչակում են իբրեւ յաւիտենական բարի, եւ մեզ հասած բարին, որից հրաժարւում ենք սատանայի յորդորմամբ, աստուածային բարու մասն է: Եւ, չնայած բարուց մեր բոլոր խոտորումներին, բարու արմատը չի ցամաքում մեզ համար (դրա վկայութիւնն է Սուրբ Երրորդութեան Անձերից մէկի՝ Բան—Աստուծոյ մարմնաւորումը մեր փրկութեան համար): Խորանների բովանդակած պատկերամոտիւները ծառայում են հոգեւոր վայելչութիւնների եւ անապական (անանց, յաւէրժական) գեղեցկութիւնների համար: Եւ քանի որ բարին արտայայտութիւնն է աստուածային էութեան, ապա գեղեցիկը եւս նրա էութեան յատկանիշն է, քանի որ բարին եւ գեղեցիկն անբաժան են:

«Այս բարիս ուրինաբանի առ ի սրբազանից աստուածաբանիցն եւ որպէս ազնիւ եւ որպէս գեղեցիկ եւ որպէս զանր եւ որպէս զսիրելի եւ որքան այլ ինչ են

վայելուչք ազնուարարի եւ բերկրեցեալոյ գեղեցկութեանն աստուածաբանութիւնք»[ա]:

(«Այս բարին սրբազան աստուածաբաններն օրհնաբանում են եւ որպէս ազնիւ, եւ որպէս գեղեցիկ, եւ որպէս սէր, եւ որպէս սիրելի, եւ ազնուարար ու բերկրացնող գեղեցկութեան վայելուչ շատ որդիշ աստուածաբանութիւններով»:)

Արդ, բարին, գեղեցիկը, ազնիւը եւ այլ յատկանիշներ աստուածային տարբեր անուններ են, որոնք նոյն էութիւնն են արտայայտում:

Ի դէպ, զանազան պատկերամոտիւների (ծաղիկների, թռչունների, սիւների, կամարների, գոյների եւ այլն)՝ իբրեւ աստուածային մտաւոր (այսինքն՝ հոգեւոր) վայելքներին հասնելու նախադռան՝ Շնորհալու եւ միւս մեկնիչների բացատրութիւնը, պարզւում է, որ հենց միջնադարեան գեղանկարչութեան գլխաւոր գաղափարներից է, որոնց սաղմերը ֆրանսիական արուեստաբան եւ միջնադարագէտ Ա. Գրաբարը տեսնում է նոր պլատոնականութեան հիմնադիր Պլոտինի մօտ (Էնեադներ, 4, 3, 11): Ըստ Պլոտինի՝ պատկերը վերարտադրուած իրի հայելին է, որը ոչ միայն նիւթական իրերի արտաքին տեսքն արտացոլելու համար է, այլեւ, եւ յատկապէս, հասնելու տիեզերական հոգուն, իրերի հոգեւոր էութեանը եւ դրա միջոցով՝ աստուածայինին: Այսինքն՝ Պլոտինի համար պատկերի դերը բարձրագոյն բանականութեան կամ բանական տեսիլքի գեղեցկութիւնն է[բ]:

Չորրորդ մեկնութիւնը, որ վերագրել ենք Վանական Վարդապետին, եւ որտեղ գրեթէ բառացի կրկնւում են նորպլատոնական հասկացութիւնները, աւելի որոշակի է արտայայտւում.

«Յայս նայեցեալ յաւրինիչք Աւետարանիս (նկատի ունի ընդօրինակողներին եւ պատկերազարդողներին — Վ. Ղ.) գեղեցկերանգ ե որակաւք նկարեցին զսկիզբն՝ եւ զնախադրութիւն (այսինքն՝ նախադուռը՝ խորանները — Վ. Ղ.) փառազարդ եւ աստուածապայծառ մտաւոր գանձուցն, որ ի բանս Աւետարանացն գանձեալ են... խոթեալք յորդորմամբ առակաւոր իմաստիւքս, խնդրեսցուք, զի զոր ինչ ոչ երեւի աչաց»:

(«Սրան նայելով՝ Աւետարանը յարդարողները գեղեցկերանգ հինգ գոյնով նկարեցին Աւետարանների խօսքերում գանձուած փառազարդ եւ

ա Տե՛ս «The Armenian Version of the Works Attributed to Dionysios the Areopagite». Ed. by Robert W. Thomson. Louvain in Aedibus E. Peeters. 1987 (Scriptores armeniaci. Tomus 17. D. N. IV. 7. p. 159);

բ A. Grabar. Plotin et les origines de l' e'sthetique medievale.— «Cahiers arche'ologique. Fin de l' antiquite et Moyen Age». Vol. L. 1945, p. 17, 22

աստուածապայծառ մտաւոր գանձերի սկիզբը եւ նախադրութիւնը... շարժելով առակաւոր խմաստներով յորդորուած, որ փնտրենք այն, ինչ չի երեւում աչքերին):

Աւետարանի խօսքերի բովանդակած «մտաւոր գանձերը» յիշեցնում են Պլոտինի «մտաւոր գեղեցկութիւնը», որ կապւում էր բանականութեան կամ «ձեւերի» հետ[ա]:

Իսկ Շնորհալին ուշիմ դիտողից խնդրում է կերպագրուած, ձեւացուած, ստեղծագործուած պատկերների բովանդակած «խորին խորհուրդները», «անյայտ իմաստները», «ծածուկ հանճարները» զանց չառնել թեթեւամտօրէն: Ինչո՞ւ:

«Քանզի,- գրում է մեկնիչը,- ամենայն ինչ, որ յաշխարհի է, յերկուս հատանի՝ ի կարեւորն եւ ի վայելմունս: Կարեւորքն հարկաւորք են, որպէս լոյս եւ աւդ եւ երկիր եւ ի նմանէ՝ հաց եւ աղբիւրք ջրոց եւ հանդերձ, առանց որոց ոչ է հնար կեալ, իսկ վայելչութիւնքն հեշտալիքն են եւ փափկացուցիչքն, որպէս գինի եւ միրգք եւ համեմք եւ խորտկարարութիւնք եւ անուշահոտութիւնք եւ պայծառագունութիւնք եւ ականջաց հեշտալրութիւնք, որք զգայութեանց են հեշտացուցիչք եւ վայելչութիւնք եւ հանգիստք[2]: Այլ որք ոչ թուին զկարեւորք, մեծապէս ազգուտ գործեն կատարելոցն, յորժամ այս երեւելի գունովս եւ համով եւ հոտով եւ լրովն եւ հանգստեամբ ամբառնամք ի հոգեւորն եւ յիմանալի վայելչութիւնս յաւետիսն Աստուծոյ, զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց Իւրոց...»:

(«Քանզի,- գրում է մեկնիչը,- աշխարհի մէջ գտնուող ամէն ինչ բաժանւում է երկու մասի՝ անհրաժեշտի եւ վայելչականի: Անհրաժեշտներն են՝ ինչպէս լոյսը, օդը եւ հողը, որոնցից [ծագում են] ջրերի աղբիւրները, հացն ու հանդերձը, առանց որոնց անհնար է ապրել: Իսկ վայելչութիւններն են հեշտալի եւ համեղի բաները, ինչպէս գինին եւ մրգերը, համեմունքը, խորտկարարութիւններն ու անուշահոտութիւնները, պայծառ գոյներն ու հեշտալրութիւնները, որոնք զգայարաններին են հաճոյք եւ հանգիստ պատճառում: [Մակայն] կատարեալների համար մեծապէս օգտակար են եւ [այս] ոչ անհրաժեշտ թուացող բաները, երբ այս երեւելի գոյների եւ համի, հոտի եւ ձայնի հեշտութեամբ բարձրանում ենք դէպի Աստուծոյ աւետիսների հոգեւոր եւ իմանալի վայելչութիւնները, որոնք «ո՛չ աչքը տեսաւ, եւ ո՛չ ականջը լսեց, եւ մարդու սիրտը չընկաւ, որ պատրաստեց Աստուած Իր սիրելիներին...» [տես Ա Կորնթ. Բ 9]:)

Այստեղ մեկնիչները հասնում են երկրորդ կարեւոր գեղագիտական ըմբռնմանը՝ վայելչական ոլորտի եւ կենսական ոլորտի սահմանազատմանը: Այս ընդարձակ քաղուածքի սկզբնամասը չգտանք ձեւակերպուած ո՛չ անտիկ, ո՛չ քրիստոնեայ հեղինակների, ո՛չ էլ Դիոնեսիոս Արիսպագացու երկերում, որոնք մեծ ազդեցութիւն են ունեցել մեր մեկնիչների վրայ: Մօտաւորապէս այսօրինակ բաժանում («Ամենայն ինչ, որ յաշխարհի է, յերկուս հատանի՝ ի կարեւորն եւ ի վայելմունս»)[ա] [3], բայց ոչ թէ աշխարհի, այլ ցանկութիւնների համար, գտնում ենք յատկապէս Էպիկուրի մօտ: Դիոգենէս Լայերտացին վկայում է, որ, ըստ Էպիկուրի, «ցանկութիւնները լինում են ոմանք՝ բնական եւ անհրաժեշտ, միւսները՝ բնական, բայց ոչ՝ անհրաժեշտ, երրորդ՝ ոչ բնական եւ ոչ էլ անհրաժեշտ»: Բնական եւ անհրաժեշտ ցանկութիւններն Էպիկուրը համարում է նրանք, որոնք ազատում են տառապանքներից, օրինակ՝ ըմպելիքը՝ ծարաւի ժամանակ: Բնական, բայց ոչ անհրաժեշտ նրանք են, որոնք բազմազան են դարձնում վայելքը, բայց չեն վերացնում տառապանքները, օրինակ՝ ճոխ սեղանը: Ոչ բնական եւ ոչ անհրաժեշտ են, օրինակ, պսակները եւ պատուաւոր արձանները»[բ]: Աւելի չենք խորանում, որովհետեւ Էպիկուրը եւ մեր մեկնութիւնները սկսում են անսահմանօրէն հեռանալ միմեանցից:

Այնուհետեւ կարեւորն այն է, առանց որի անհնարն է ապրել (օդ, լոյս, ջուր, հանդերձ), իսկ վայելչականը (հեդոնիստականը)՝ առանց որի կարելի է ապրել (որն անհրաժեշտ չէ՝ ըստ Էպիկուրի), բայց հեշտալի է եւ փափկացուցիչ (հանգստաւէտ)՝ զգայարանների համար (գինի, միրգ, համեմունք, խորտիկներ, անուշահոտութիւններ, ախորժելի ձայներ): Ինչո՞ւ են այդ վայելչութիւնները. նրանք ստեղծուած են, որպէսզի «այս երեւելի գունովս եւ համով եւ հոտով եւ լրովն (լսողութեամբ — Վ. Ղ.) եւ հանգստեամբս ամբառնամք ի հոգեւորն եւ յիմանալի վայելչութիւն յաւետիսն Աստուծոյ, զոր ակն ոչ ետես, եւ ունկն ոչ լուաւ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց Իւրոց»: Այստեղ գրիչները «յաւետիսն» բառը (որոշ ձեռագրերում՝ «յաւետսն») հասկացել են ե՛ւ իբրեւ «խոստացուած», ե՛ւ իբրեւ «յաւիտենական»: Ուրեմն, կարեւորը կամ գործնականը (քաղց, ցուրտ, ծարաւ) պահանջի բաւարարումով այլեւս չի գործում: Մինչդեռ այն, ինչ վայելչութեան համար է եւ անհրաժեշտ չի թւում, ոչ թէ անպիտանի է (ըստ Էպի-

ա Plotinus with an English Translation by A. H. Armstrong' in Six Volumes. I, 1—9. The Loeb Classical Library. Cambridge. Mass., Harvard University Press, London, 1966, p. 261—263 (Enneads I, 6—9)

ա В. Татаркевич. Античная эстетика. М. "Искусство", 1977

բ Диоген Лаэртский. О жизни ученых и изречениях знаменитых философов. М., "Мысль", 1979, с. 440

կուրի դիոգենէսեան տարբերակի), այլ, ընդհակառակը, ըստ մեր մեկնիչնե-
րի՝ «մեծապէս աւգուտ գործեն կատարելոցն», երբ դրանց միջոցով միակ
հնարաւորութիւնն ենք ստանում բարձրանալու դէպի «Աստուծոյ յաւիտենա-
կան կամ խոստացուած հոգեւոր եւ իմանալի վայելչութիւնները», որոնք ան-
հաս են մարդուն: Եւ իրօք, բազմաթիւ ու բազմապիսի խորհուրդներն ու այ-
լաբանութիւնները պարզելուց յետոյ Շնորհալու մեկնութիւնն աւարտւում է,
կարելի է ասել, վսեմ բանաստեղծական ներբողով՝ նուիրուած խորանների
արուեստին, որ բարձրացւում է մինչեւ մարդու մաքրագործման, կատարելա-
գործման եւ խորանների ձեւաւորման արուեստի շնորհիւ աստուածային
«անապական» փառքի խորանը (Աւետարանների խորքերը) մտնելու արտօ-
նութեան՝ հիմք ընդունելով Պօղոս առաքեալի խօսքը. «Աներեւոյթքն Աստու-
ծոյ երեւելի արարածովքս իմացեալ տեսանին» [Հռոմ. Ա 20]: Դա փիլիսոփա-
յօրէն հիմնաւորել են Դաւիթ Անյաղթը Աստուծոյ անհիմանալիութեան մասին
Պիռոնոն սկեպտիկի դէմ ուղղուած իր հատուածում եւ ս. Օգոստինոսը, որ
ինքն էր քանդում դէպի աստուածայինը տանող ճանապարհի բոլոր արգելք-
ները եւ, նոր տեսակի գոյներ, լոյսեր, բոյրեր ու ձայներ որոնելով, ազդարա-
րում էր, որ «մարդիկ կարող են հարցնել, թէ ինչպէս իրենք յստակ կարող
են տեսնել Աստուծոյ աներեւոյթ բաները, որոնք հասկանալի են արարուած
բաներով»[ա]:

Մեր մեկնիչները քաջ գիտէին, որ չափաւոր եւ տեւական վայելքները,
երեւելի գոյները, համերը, հոտերը, անդորրը «հասկացող» եւ «կատարեալ»
մարդկանց համար կարող էին ոստնակ լինել՝ բարձրանալու դէպի Աստուծոյ
խոստացուած «իմանալի» (հոգեւոր) վայելչութիւնները, որոնց այնպէս
ձգտում էր Օգոստինոս Երանելին: «Ի՞նչ պէտք է ես սիրեմ, երբ սիրում եմ
Քեզ,— գրում է նա՝ դիմելով Աստծուն:— Ո՛չ մարմնացեալ էակների գեղեց-
կութիւնը, ո՛չ ժամանակների կարգը, ո՛չ մեր ըմբոշխնած լոյսի պայծառու-
թիւնը՝ այնքան հաճելի մեր աչքերին, ո՛չ ամէն տեսակ երգերի մեղեդիները,
ո՛չ ծաղիկների անուշ բոյրը, ո՛չ օծանելիքներն ու համեմունքները... Ես այս
բաներից ոչ մէկը չեմ սիրում: Ես սիրում եմ իմ Աստծուն, որ Ե՛ւ լոյս է, Ե՛ւ
ձայն, Ե՛ւ անուշաբուրութիւն, Ե՛ւ կերակուր, Ե՛ւ ողջագուրանք իմ ներքին
մարդու համար: Որտե՞ղ է շողում այն լոյսն իմ հոգու համար, որ ոչ մի տե-
ղից այն չի ստանում, որտե՞ղ է հնչում այն ձայնը, որից ժամանակը չի զրկի
ինձ, եւ ո՞ւր է գալիս այն բոյրը, որ ոչ մի քամի չի տարածում, եւ որտե՞ղ են

ա «Saint Augustine's Confessions with an English Translation by W. Watt in Two Volumes». II, Cambridge, Mass., London, p. 91. Նաեւ՝ Դաւիթ Անյաղթ. Երկասիրութիւնք փիլիսոփայականք. Երեւան, 1980, էջ 35:

ճաշակում այն կերակուրը, որը չի վերջանում... Սա այն է, ինչ սիրում եմ ես,
երբ սիրում եմ իմ Աստծուն»[ա]:

Մենք կաւելացնէինք, որ դա այն է, ինչը ձգտում էին խորհրդանշել
մեր մեկնիչները խորանապատկերների մոտիւներով:

Ս. Արեւշատեանը Դաւիթ Անյաղթի երկերի կապակցութեամբ
ուրուագծում է այն ուղին, որով անցել է զգայական իմաստալի վայելքների
միջոցով դէպի աստուածայինը բարձրանալու միտքը մինչեւ Շնորհալին: Նա
դա ցոյց է տալիս Դաւիթ Անյաղթի «Սահմանաց գրքի» եւ Դիոնեսիոս Արիս-
պագացու «Յաղագս երկնային քահանայապետութեանց» երկի որոշ ընդհա-
նուր մտքերի քննութեամբ: «Ըստ Դաւթի,— գրում է նա,— փիլիսոփայական
գիտութիւնն օգնում է մարդուն, Աստուծոյ կողմից ստեղծուած բնութիւնը
ճանաչելով, մօտենալ եւ ըմբռնել նաեւ նրա Արարչին, տեսանելիի ճանաչ-
ման միջոցով ըմբռնել անտեսանելին եւ գերզգայականը...»: Դրա համար
Դաւիթը տեսական փիլիսոփայութիւնը բաժանում է բնաբանութեան (ֆիզի-
կայի), մաթեմատիկայի եւ աստուածաբանութեան: Սկզբից հետազօտելով
բնութիւնը՝ այնուհետեւ վերացական մտածողութեան՝ մաթեմատիկայի միջո-
ցով միայն իմաստասէրը կարող է կամուրջ ստեղծել զգայականի եւ գերզգա-
յականի միջեւ եւ անցնել աստուածաբանութեան (ինչպէս անում են նաեւ մեր
մեկնութիւնների հեղինակները՝ պատկերային խորհրդաբանութիւնը յաճախ
ամրացնելով թուայինով. գուցէ դրա համար էր Շնորհալին բնաբանութիւն՝
ֆիզիկա համարում իր տրակտատը — Վ. Ղ.): Նոյն բանն անում է նաեւ
Արիսպագացին՝ պնդելով, որ «դրա պատճառը մեր բնութեան յատկութիւնն
է, այն, որ մենք չենք կարող անմիջականօրէն ամբառնալ դէպի հոգեւոր էու-
թիւնների ճանաչումը, մենք կարիք ունենք մեր բնութեանը յատուկ ու հա-
մապատասխան միջոցների, որոնք մեզ համար հասկանալի պատկերներով
երեւան են հանում անպատկերելին եւ գերզգայականը... որպէսզի մենք զգա-
յականի միջոցով բարձրանանք դէպի հոգեւորը եւ նշանակալի պատկերների
միջոցով ըմբռնենք պարզ, բարձրաբերձ երկնային քահանայապետութիւնեն-
ը»[բ]: «Բարձրագոյն յաղթանակը Արիսպագացին թերեւս տօնում է արեւ-
մտեան հողի վրայ»,— գրում է Օ. Բարդենհեւերը[գ]:

Կարծում ենք, հարկ չկայ հիմնաւորել Արիսպագացու ազդեցութիւնը
ողջ եւրոպական միջնադարի վրայ: Մեզանում մենք որոշ չափով ցոյց ենք

ա «St. Augustine's Confessions...». II (Book X, Chap. VI), p. 87—89
բ Դաւիթ Անյաղթ. Երկասիրութիւնք փիլիսոփայականք: Համահաւաք քննական բնագիրը եւ առաջաբանը՝ Ս. Ս. Արեւշատեանի. Երեւան, 1980, էջ 19—20
գ O. Bardenhewer. Geschichte der altchristlichen Literatur. Dritte Band. Darmstadt, 1962, s. 680

տալիս այդ ազդեցութիւնը «Խորանների մեկնութիւններում»:

Ինչպէս ցոյց է տալիս Հ. Մագուայրը, փաստօրէն պատկերին այլ իմաստ տալու գաղափարը գալիս է Դիոնեսիոս Արիսպագացուց: Այս հիմնադրոյթը Բիւզանդիայում ուղղակի փոխառել է Յովհան Դամասկացին, որը ժամանակակիցն էր Ստեփանոս Սիւնեցու եւ Յովհան Օձնեցու: Պատկերներին նուիրուած իր առաջին ճառում նա ասում է. «Աստուծոյ մօտ եղած անեռեւոյթ բաներն աշխարհի արարումից ի վեր երեւում եւ հասկացւում են արարուած իրերի միջոցով: Մենք տեսնում ենք ստեղծուող պատկերները, որոնք մեզ ներկայացնում են Աստուծոյ աղօտ արձագանքները, ինչպէս օրինակ՝ մենք խօսում ենք սուրբ եւ յաւէրժական Երրորդութեան մասին՝ պատկերուած իբրեւ արեւ կամ լոյս կամ ճառագայթ կամ ցայտող աղբիւր կամ... վարդի թուփ կամ ծաղիկ կամ քաղցր անուշահոտութիւն»[ա]: Ինչպէս տեսնում ենք, Դամասկացին դիմում է աւելի շատ գրական պատկերների՝ ի տարբերութիւն մեր մեկնիչների, որոնք դիմում են խորանների պատկերամոտիւներին[4]:

Ուրեմն, ինչպէս արուեստի (այստեղ՝ խորանապատկերների), այնպէս էլ գոյների, համերի, հոտերի զգայական ու հեշտալի վայելքը մեզ մօտեցնում է այն տեւական կամ խոստացուած հոգեւոր վայելքի ընկալմանը, ինչ պահուած է մեզ համար: Այսինքն՝ «իմանալին», «Աստուծոյ խոստացուած» վայելքը մենք կարող ենք ընկալել զգայական վայելքի (հեդոնիզմի) շնորհիւ[5]:

Այստեղ մենք կանգ ենք առնում երկու գաղափարի առջեւ: Առաջինի մասին խօսուեց վերեւում, եւ այն վերաբերում է պատկերի իմացական նպատակադրմանը: Երկրորդ գաղափարը հեդոնիստական է, առանց որի մենք ոչ մի աստուածային իմացութեան չենք հասնելու: Այդ մտածողութիւնը (ճանաչումը զգայութեան միջոցով) արտայայտուած էր արդէն Փիլոն Ալեքսանդրացու մօտ.

«Կին է նշանակաւ զգայութիւն, եւ այր՝ միտք. արդ, ի հարկէ պատահէ զգայութիւն զգալոյ, իսկ կցորդութեանն զգայութեանն՝ անցք անցանեն եւ ընդ միասն, քանզի շարժեալ լինի զգայութիւնն ի ստորակայէն, իսկ միտքն՝ ի զգայութենէն»[բ]:

ա Sե՛ս H. Maguire. Art and Eloquence in Byzantium. 1981, Princeton University Press, p. 10:

բ «Փիլոնի Եբրայեցւոյ մնացորդք ի Հայս, որ են Մեկնութիւն Ծննդոց եւ Ելից, ճառք ի Սամփսոն, ի Յովնան եւ Յերիս մանկունս կամ ի հրեշտակս ի հին թարգմանութենէ եղելով ի յոյն բնագրէ ի ձեռն սրբոց թարգմանչաց մերոց հեղեալ ի լատին բարբառ, աշխատասիրութեամբ հ. Մկրտչի աթոռակալ վարդապետի Միխթարեան Աւգերեանց». Վենետիկ, 1826, էջ 26

(«Կինն է նշանակաւոր զգայութիւն, եւ այրը՝ միտք. արդ, ի հարկէ զգայութիւնն առաջանում է զգայելիից, իսկ անցնելով զգայութիւններով, զգայելին անցնում է եւ մտքի մէջ, քանի որ զգայութիւնն առաջանում է առարկայականից, իսկ միտքը՝ զգայութիւնից»:)

Հեդոնիզմի նոյնատիպ տեսութիւն առկայ է Պոլ Վալերիի 1934 թ. «Էսթետիկական անվերջութիւն» յօդուածում: «Երբ մարդ քաղցած է,— գրում է նա,— քաղցի զգացումը նրան ստիպում է այնպէս վարուել, որ քաղցը շուտ չքանայ: Բայց եթէ մարդ վայելում է ուտելիքը, ապա ուզում է այդ վայելքը պահել, որպէսզի այն տեւի կամ վերսկսուի...»:

Այնուհետեւ, նշելով, որ նոյնը վերաբերում է միւս զգայութիւններին ու զգացումներին, Վալերին շարունակում է. «Տեսողութիւնը, շօշափելիքը, հոտառութիւնը, լսողութիւնը, շարժումը, խօսքը ժամանակ առ ժամանակ դրդում են որոնել նրանց յարուցած զգայութիւնները, ամրապնդել կամ վերսկսել դրանք: Այդ էֆեկտների գումարն իր անվերջ ուղղուածութեամբ, որոնք ես թուարկեցի այստեղ, կարող է կազմել էսթետիկական երեւոյթների ոլորտը... Այդ ոլորտում բաւարարումը վերստեղծում է պահանջ, հետեւանքը յարուցում է պատճառը...»[ա]:

Ուրեմն, ամփոփելով խորանների մեկնութիւններում մեր գեղագիտական դիտարկումների արդիւնքները, կստանանք հետեւեալ ուրուագիծը:

Նախ՝ խորանների բովանդակած բոլոր պատկերամոտիւները ոչ թէ կամայական են, այլ օժտուած են նշանակալի խորհրդով:

Երկրորդ՝ այդ պատկերամոտիւները, անմիջապէս ներգործելով զգայարանների վրայ եւ գեղագիտական հաճոյք պատճառելով նրանց (ներգործելով կամարների, սիւների, խոյակների ճարտարապետական կառուցուածքով, ծաղիկների, տունկերի, թռչունների, կենդանիների կերպագրութեամբ, ձեւերով եւ գոյներով), այդ սիմվոլները ճանաչողներին (դրա համար էլ գրուած են մեկնութիւնները) հոգեպէս նախապատրաստում են վերստին մտնելու աւետարանական խօսքերի բովանդակութեան խորքերը, այսպէս ասած՝ նախադուռ են ծառայում Աւետարանների համար: Եւ զգայական (իմա՝ գեղագիտական) վայելքը դառնում է անյայտը, աստուածայինը, հոգեւորը, մտաւորը (նոր պլատոնական հասկացութիւններ) ճանաչելու ուղի, ինչպէս զգայականը՝ Դաւիթ Անյաղթի եւ աստուածաբանների, կամ Սուրբ Գրքի պատկերները՝ Դիոնեսիոս Արիսպագացու, բանաստեղծական պատկերները՝ Յովհան Դամասկացու համար:

ա Поль Валери. Об искусстве, "Искусство", 1976, с. 113-114

Երրորդ՝ նոր պլատոնականութեան մէջ եւ յատկապէս Դիոնեսիոս Արիսպագացու «Յաղագս աստուածային անուանց» գրուածքում բարին եւ գեղեցիկը, ինչպէս նաեւ՝ ազնիւը, լոյսը եւ այլն, հանդէս են գալիս իբրեւ աստուածային անուններ, որոնք, արտացոլուելով առարկաների եւ արարուած աշխարհի մէջ, մեզ միշտ յիշեցնում են աստուածայինի մասին: Այդ սկզբունքն առաջնորդում է նաեւ մեր մեկնիչներին:

Չորրորդ՝ մեկնիչներն աշխարհը բաժանում են երկու մասի՝ անհրաժեշտի (պրակտիկի, ուտիլիտարի) եւ վայելչականի (հեդոնիզմ): Այսպիսի բաժանումը գալիս է էպիկուրեան-փիլիսոփայութիւնից: Եթէ անհրաժեշտի (պրակտիկի) ոլորտն այն բաներն են, առանց որոնց մարդ չի կարող ապրել (օդ, ջուր, օթեւան, հագուստ, առաջին անհրաժեշտութեան սնունդ), ապա վայելչականի ոլորտն ընդգրկում է այն բաները (պայծառ գոյներ, քաղցր ձայներ, նուրբ քիմքի համար ստեղծուած գինի, խորտկեղէն, համեմունք, անուշ բոյրեր եւ այլն), առանց որոնց մարդ կարող է գոյատեւել, բայց չի կարող բարձրանալ աստուածայինը ճաշակելու աստիճանի: Ուրեմն, զգայականի վայելքը (դա չպէտք է հասկանալ կոպիտ ձեւով) գեղարուեստական արտայայտութեան առաջին աստիճանն է: Այսինքն՝ մեր հասկացածով, եթէ նկարում են ծաղիկ ու թռչուն, նրանց հետ, բացի գոյնից ու կերպից, որոնք ներգործում են տեսողութեան վրայ, գործում է նաեւ անուշ բոյրի ու համի եւ քաղցր ձայնի զգացողութիւնը: Պատահական չէ, որ մեկնիչներն աքաղաղների պատկերի առիթով խօսում են առաւօտեան կանչի մասին, նոնենու պատկերի առիթով՝ նրա կեղեւի դառը համի եւ կեղեւի մէջ պարփակուած նոան հատիկների քաղցր համի մասին եւ այլն: Պատկերուած առարկան, անկախ մեր կամքից, յարուցում է տարբեր որակի զգայութիւններ: Խորանների մեկնութիւնների բովանդակած գեղագիտական հարցադրումներն այսօր եւս գործում են եւ ենթակայ են նոր հարստացումների գեղարուեստի ետնագոյն նիւթի վրայ:

Ծանօթութիւններ

1 Շատ նշանաւոր գեղագէտներ եւ արուեստագէտներ, սկսած Արիստոտէլից, ձեւակերտումը կամ, ինչպէս մեր մեկնիչի մօտ է, «կերպագրութիւնը» համարում են արուեստի նպատակներից մէկը, յաճախ՝ հիմնական (Tatarkievicz, Op.cit., p. 29—30):

2 Փիլոն Երրայեցու (Ա դար) «Կեանք իմաստնոց» գրուածքում գրեթէ նոյն կերպ են բացատրուած զգայական վայելքները, թէպէտ առաջնային են համարում «լսելիքն ու տեսանելիքը».

«Հինգ քաղաքս ի մեզ զգայութիւնքս են հեշտ ցանկութեանց գործիք, ի ձեռն որոց ամենեքեան կատարելագործին: Քանզի կամ տեսանելով զգունոց եւ զձեւոց զանազան պայծառութիւնս ի շնչաւորս եւ յանշունչս հեշտանամք, կամ ձայնից նուագատրաց լսելով, եւ կամ ըստ ճաշակի, այնր, որ ի կերակուր եւ յըմպելիք, եւ կամ ըստ հոտոյ յանուշահոտութիւն զոլորշեաց, եւ կամ որ կակղութեան եւ ջերմութեան եւ ողորկից եւ ըստ շօշափման»:[ա]

«Մեր մէջ հինգ քաղաքները զգայութիւններն են՝ հաճելի ցանկութիւնների գործիքներ, որոնց միջոցով բոլորն էլ կատարելագործում են: Քանզի հաճոյք ենք ստանում՝ տեսնելով շնչաւորների եւ անշունչների բովանդակած գոյների եւ ձեւերի զանազան պայծառութիւնները կամ լսելով երաժշտական հնչիւնները կամ ճաշակելով այն, ինչ կայ կերակուրներում եւ ըմպելիքներում, եւ կամ արձակուող անուշահոտութիւնները կամ էլ շօշափելով կակղութիւնը, ջերմութիւնը կամ ողորկութիւնը»:

3 Ըստ Վ. Բիչկովի՝ գեղեցիկի հեդոնիստական դերը՝ աստուածայինը կամ հոգեւորն ընկալելու նպատակով, արտայայտուած է Բարսեղ Կեսարացու մօտ[բ]: Բ. Կրոչէն թէեւ աշխարհի այսօրինակ բաժանման մասին չի խօսում, սակայն գեղագիտական (իմա՝ գեղարուեստական) ստեղծագործութեան մի փուլը համարում է «հեդոնիստական ուղեկցութիւնը կամ գեղեցիկի վայելքը» (գեղագիտական հաճոյք)[գ]:

4 Ռոմանական տաճարներում պատկերների բազմազանութիւնը լրիւ այլ կերպ էր ընկալւում ս. Բեռնարդի կողմից, որը ս. Թիերրիի աբբայ Ուիլեամին գրում էր. «Վանքում այնտեղ կարդացող եղբայրների աչքի առաջ ինչ օգուտ կայ այն ծիծաղելի հրէշներից, այն զարմանահրաշ ու ձեւախեղուած գեղեցկութիւնից, այն գեղե-

ա «Փիլոնի Եբրայեցւոյ ճառք թարգմանեալք նախնեաց մերոց, որոց հելլեն բնագիրք հասին առ մեզ». Վենետիկ, 1892, էջ 71—72

բ В. В. Бычков. Византийская эстетика (теоретические проблемы). М., "Искусство", 1977, с. 85

գ Кроче, там же, с.109

ցիկ ձեռախեղումից: Ինչ նպատակով են այն այլանդակ կապիկները, այն կատաղի առիւծները, այն հրէշաւոր կենդանիները, այն կիսամարդիկ, այն շերտաւոր վագրերը, այն մարտնչող ասպետները, իրենց փողերը փչող այն որսորդները: Այնտեղ շատ մարմիններ երեւում են մի գլխի տակ կամ էլ շատ գլուխներ՝ մի առանձին մարմնի տակ: Այնտեղ չորքոտանի գազանն ունի օձի պոչ, ձուկը՝ գազանի գլուխ: Այստեղ նաեւ ձիու առջեւի մասը շարունակւում է եռեւում այծի մասով, կամ եղջերաւոր գազանը կրում է ձիու ետնամասը: Կարճ ասած, այնքան շատ եւ զարմանահրաշ է ձեռակերտ ձեւերի բազմազանութիւնը, որ մենք աւելի շուտ զայթակղւում ենք կարդալ մարմարը, քան՝ մեր գրքերը, եւ մեր ամբողջ զարմանքը սպառում ենք աւելի շատ այս բաների վրայ, քան թէ՝ Աստուծոյ օրէնքի շուրջը խորհրդածելու...»: Ուրեմն, ըստ Բեռնարդի՝ «այս վանական քանդակները լրիւ զուրկ են դիդակտիկ իմաստից կամ կրօնական սիմվոլիզմից...»: «Հրէշները Բեռնարդի կողմից,— գրում է Մ. Շապիրոն,- չեն ճանաչւում իբրեւ չարի սիմվոլներ, ոչ էլ պատճառ կայ ենթադրելու, որ քանդակագործներն են դրանք այդպիսին համարել մտածուած կերպով»[ա]:

Նոյնիսկ գրքի գլխատառերը, ինչպէս նաեւ՝ ողջ շքեղ եկեղեցական արդուզարդը, միայն աչքին հաճոյք պատճառելու տեսակէտից էին ընկալւում ցեստերցեան վանականների կողմից ԺԲ դարում[բ], էջ 10): Մինչդեռ մեր մեկնիչները իւրաքանչիւր պատկերամտաի, նոյնիսկ՝ զոյն, անկախ նրանց հրապոյրի աստիճանից, դիտում էին իբրեւ խորհուրդ:

5 Գեղագիտական ոլորտում մեր հեղինակները, ինչպէս եւ՝ ստոյիկներին մօտ կանգնած մի շարք ուսեալներ (Կիկերոն, Փիլոն Ալեքսանդրացի եւ այլք), փորձում էին դիալեկտիկօրէն հաշտեցնել պլատոնականութիւնը, որն արուեստն ընդունում էր այնքանով, որքանով այն կարող էր նպաստել իմանալիների (իդեաների, մտքի, հոգեւորի) ընկալմանը, եւ էպիկուրեան հեդոնիզմը (արուեստը եւ զգայութիւնները ծառայում են վայելքին): Ըստ որում, ըստ Փիլոն Ալեքսանդրացու՝ միայն Աստծուն յատուկ բացարձակ գեղեցիկին փոքր—ինչ մերձենալու համար պէտք է ծառայի վայելքը[գ]:

Հայերէն հնագոյն թարգմանութեան մէջ վերոյիշեալ միտքը չգտանք: Փոխարէնը երկու այլ ճառերում այն փոքր—ինչ այլ ձեւով է արտայայտուած եւ աւելի համահնչիւն է մեր մեկնիչներին, որոնք վայելքներն արուեստից առաջ կապում են զգայութիւնների հետ: Փիլոնը չի տարբերակում այսպէս կոչուած «կարեւորը» եւ

ա Shapiro. Romanesgue Art. 1977, p. 6
բ Նոյն տեղում, էջ 10
գ Տե՛ս "История эстетической мысли". Том первый. Древний мир, средние века, М., "Искусство", 1985, с. 246т

«վայելչականը», ինչպէս մեր մեկնիչները եւ մասամբ՝ Էպիկուրը: Բայց նա աստուածային կամ ոգու ճանաչման համար թողնում է միայն տեսողութիւնը եւ մասամբ՝ լսողութիւնը՝ ճաշակելիքը, հոտոտելիքը եւ շօշափելիքը դիտելով իբրեւ ստորակարգ եւ կենդանական[ա]: Մեր մեկնիչները, ի տարբերութիւն Փիլոնի, «ստորակայ» զգայութիւնները չեն զրկում «աստուածային խոստացուած վայելքին» ծառայելու հնարաւորութիւնից:

ա Տե՛ս «Վեանք իմաստնոց» գրուածքը. «Փիլոնի Տեբրայեցւոյ ճառք թարգմանեալք նախնեաց մերոց, որոց բնագիրք հասին առ մեզ», Վենետիկ, 1882, էջ 71—74:

Տիգրան Խաչատրեան

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԿԵՐԸՄԲՌՆՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱՆՈՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՈՒԵՍՏՈՒՄ

«Երաց մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ է, ամենայն մարմին լուսաւոր եղիցի» [Մատթ. Զ 22]:

Հոգեւոր մշակոյթը ծնւում է հոգեւոր կեանքից՝ հանդիսանալով նրա անտեսանելի խորհուրդների տեսանելի արտայայտութիւնը եւ մատուցւում է աշխարհին՝ որպէս մարդկային կամքն ու գիտակցութիւնը դէպի յաւիտենական Կեանքի աղբիւրը ձգող հրաւէր: Ամենայն բարին ու լուսաւորը, ազնիւն ու սքանչելին, որ արարւում եւ ներգոյանում են հոգեւոր անձանց մէջ աստուածահաճ կեանք վարելու ընթացքում, իրենց բազմաբնոյթ արտայայտութիւնն են ստանում եկեղեցական արուեստում՝ դառնալով նրա հարստութիւնն ու զարդը:

Եկեղեցական կերպարուեստը բնականոն կերպով առարկայանում է կրօնական միջավայրում եւ դառնում հոգեւոր կենցաղավարութեան անմիջական բաղադրամաս: Այս պատճառով իր ճշմարիտ արտայայտութեան մէջ այն հասու եւ ընկալելի է միայն հոգեւոր նորոգութեան ընթացք ունեցող գիտակցութեանը: Այն երբէք չի ստեղծւում ցուցադրական նկատառումներով, այլ միայն՝ որոշակի—պաշտամունքային: Ուստի անսահմանօրէն հեռու է աշխարհի «ցուցահանդէսային» մտածողութիւնից: Այն չի պահանջում արուեստագէտի հնարամտութեամբ հիացող կամ վարպետութիւնը գովերգող **հանդիսատես**, այլ՝ երկնառաք խորհուրդների հետ նուիրական հաղորդակցութիւն փնտրող **աստուածապաշտ**, որը ոչ թէ **այցելել**, այլ **մուտք է գործել** Աստուծոյ պաշտամունքի տաճարը՝ հաւատքի խոստովանութեան դռնով:

Ինչպէս որ աստուածային խօսքի եւ եկեղեցական խորհուրդների ճշմարիտ սպասաւորութիւնը հոգեւորականից պահանջում է պատշաճագոյն վերաբերմունք եւ շնորհական նուիրագործութիւն, այնպէս էլ կրօնական արուեստը, ըստ իր պաշտամունքային նշանակութեան, ենթադրում է արուեստագէտի պատասխանատու եւ երկիւղած խորհրդազգածութիւն: Այն բացառում է ոչ միայն վարձկանի հոգեբանութեամբ, այլեւ «ազատ ստեղծագործողի» ինքնահնարութեամբ մերձեցումն իր սրբազան մատոյցներին:

Հնարաւոր է, որոշակի վարպետութիւն, ինչպէս նաեւ՝ խորհրդաբանական եւ նշանական իմացութիւններ ձեռք բերելով, յօրինել կրօնական կիրառութեան ենթակայ աշխատանքներ, սակայն անհնար է առանց ներքին

հոգեւոր կեանք ունենալու եւ առանց Շնորհի կրողունակութեան ստեղծել ճշմարիտ կրօնական արուեստ եւ մնայուն հոգեւոր արժէքներ, որոնք ոչ միայն արտաքնապէս ծառայեն իրենց առարկայական—ծիսական նպատակին, այլեւ հաղորդակցութեան միջոց հանդիսանան իմանալի աշխարհի խորհուրդների հետ՝ որպէս գործուն նշանակներ եւ խորհրդակիր պատկերներ:

Այլ է գեղագիտական արժէքների աշխարհիկ ըմբռնումը, եւ այլ՝ գեղեցիկի եւ ազնիւի հոգեւոր ընկալումը: Վերջինս պատշաճապէս ճանաչելու համար անհրաժեշտ է նախ եւ առաջ ճաշակել Աստուծոյ խօսքի ներազդումը, քանզի բոլոր կրօնական պատկերներն ու ծիսական պաշտամունքներն, անմիջականօրէն առնչուելով Աստուծոյ խօսքի հետ, պէտք է ամբողջապէս համահունչ լինեն նրան, ուստի եւ՝ ամենից առաջ կրեն այդ խօսքի ներգործութիւնը՝ նրա արդիւնքն ու արգասիքը դառնալով:

Ինչպէս վկայում է Պօղոս առաքեալը՝ **«Կենդանի է բանն Աստուծոյ եւ ազդու եւ հատու, քան զամենայն սուր երկայրի. եւ անցանէ մինչեւ ցորոշումն շնչոյ եւ ոգւոյ եւ յօդից եւ ուղղոյ»** *(Կենդանի է Աստուծոյ խօսքը, ազդու եւ աւելի հատու, քան ամէն մի երկայրի սուր. եւ կտրում— անցնում է մինչեւ շնչի եւ ոգու, յօդերի եւ ողնածուծի բաժանումը)* [Եբր. Դ 12]:

Ըստ Եկեղեցու վարդապետների մեկնութեան՝ սա վերաբերում է շնչաւորը հոգեւորից բաժանելու կարեւորագոյն իրողութեանը: *Շունչ* (*ψῦχή*) բառի տակ ս. հայրերն այստեղ հասկանում են զգայական ցանկութիւններն ու երկրաւոր իղձերը, իսկ *ոգի* (*πνεῦμα*)՝ հաւատքով եւ Շնորհով լուսաւորուած երկնային բաղձանքները, որոնց տիրաբար զատում է միմեանցից Աստուծոյ խօսքի ներգործութիւնը: Իր այսպէս կոչուած *որոշողական՝* **զատողական** յատկութեամբ այն թափանցում է մարդու ներքին, ծածուկ ոլորտները եւ սրտի բոլոր շարժումներն ուղղում դէպի երկնայինն ու վսեմը, իսկ ապականելի նկրտումները՝ պապանձեցնում՝ այսպէս զատելով ազնիւը պիղծից, ճշմարիտը՝ ստից եւ լուսաւորը՝ խաւարից: Ամբողջապէս հնազանդուելով Աստուծոյ խօսքի ներգործութեանը եւ իր կեանքով իրագործելով այն՝ մարդ վերստանում է իր աստուածակերտ ամբողջականութիւնը եւ հաստատւում ողջախոհութեան մէջ, մերձենում իր աստուածանմանութեան՝ *Աստուծոյ պատկերի* վերականգնմանը:

Այս իրողութեան հետ մեծապէս առնչելի է հոգեւոր պատկերըմբռնողութիւնը: Ինչպէս վերը նշուեց, եկեղեցական արուեստը, գոյատրուելով մարդու հոգեւոր կենցաղավարութեանն առընթեր եւ պաշտամունքային եւ աստուածճանաչողական նշանակութիւն կրելով, պէտք է ոչ միայն խորհրդանշական եւ թեմատիկ համապատասխանութիւն ունենայ աստուածաշնչեան խորհուրդների եւ աստուածաբանական հիմնաւորումների հետ, այլեւ իր կերպարային տպաւորութեամբ արտայայտի մաքուր հոգեւոր, շնչաւորից զատուած, յաւիտենութեան մէջ հաստատուած երկնային իրականութիւնը, որպէսզի, *իմանալի եւ աննիւթական իրողութիւնների ծածկոյթ* լի-

նելով, բարձրացնի մեր միտքը դէպի հոգեւոր աշխարհը*: Բնականաբար, այսպիսի արժէք կարող է ստեղծել այն անձնաւորութիւնը, ում մէջ կայացել է հոգեւորի եւ շնչաւորի զատումը, ով օժտուած է *շնորհական տեսումով*, որով տեսնում է Աստուծոյ փառքը եւ նրանում՝ յաւիտենական գոյութեան խորհուրդները, ում ողջ անձը հոգեղինացած է, եւ հոգու բոլոր զօրութիւններն ու մարմնի զգայութիւնները ենթարկուած են Աստուծոյ խօսքով լուսաւորուած մտքին: Այսպիսի յատկութեան ձեռքբերումը ենթադրում է բոլորովին այլ վերաբերմունք տեսանելի աշխարհի եւ սեփական զգայարանների հանդէպ, քան այն, ինչի սովոր է այսօրուայ աշխարհիկ արուեստագետը: Եւ, որքան էլ հակասական է թւում, հոգեւոր պատկերըմբռնողութեան ճշմարիտ սկզբնաւորումը պայմանաւորուած է զգայարանների եւ, ամենից առաջ, տեսողութեան զգայարանի ճգնաւորական սանձմամբ.

«Երբ միտքն աչաց հետեւի, մոլորի մարդն: Եւ երբ աչքն մտացն հետեւի, ուղղի մարդն... Զի աչքն երկրաւոր է, զերկիրս տեսանէ, եւ միտքն՝ զերկնայինս... Աչքն զներկայս տեսանէ, եւ միտքն՝ զհանդերձեալն... Աչքն պատրի, եւ միտքն ստուգիւ տեսանէ: Աչքն երբեմն տեսանէ, եւ միտքն՝ միշտ: Վասն որոյ յորժամ միտքն զվերինն խոկայ, հոգին նմա հետեւի, եւ շունչն եւ արիւնն ի նմա կապեալ: Այլեւ, մարմինն եւ զգայարանքն նոցին հետեւեալ, լինի մարդն երկնային: Եւ յորժամ զգայարանքն յերկիր կապի, եւ մարմին եւ արիւն եւ շունչ ի վայր քարշի, եւ հոգին եւ միտքն նոցա հետեւի, եւ լինի մարդն երկրաւոր»**:

«Երբ միտքն աչքերին է հետեւում, մարդը մոլորւում է, իսկ երբ աչքն է հետեւում մտքին, մարդն ուղղւում է... Քանզի աչքը երկրաւոր է եւ երկիրն է տեսնում, իսկ միտքը՝ երկնայինները... Աչքը ներկան է տեսնում, իսկ միտքը՝ հանդերձեալը... Աչքը խաբւում է, իսկ միտքը ստոյգ է տեսնում: Աչքը երբեմն է տեսնում, իսկ միտքը՝ միշտ: Այս պատճառով, երբ միտքը վերինն է խորհում, հոգին նրան է հետեւում, նաեւ շունչն ու արիւնը՝ նրան կապուած, այլեւ մարմինն ու զգայարանները՝ նրանց հետեւելով: [Եւ] մարդը երկնային է դառնում: Իսկ երբ զգայարանները երկրին են կապւում, եւ մարմինը, արիւնն ու շունչը դէպի ներքեւ են ձգում, եւ հոգին ու միտքը նրանց են հետեւում. եւ մարդը երկրաւոր է լինում»:

Վերինը խորհող, մաքրագործուած եւ հոգեղինացած միտքն ամէն ինչ տեսնում է շնորհական պարզութեամբ եւ չի ընկղմուած աշխարհի մեղսայարոյց տպաւորութիւնների մէջ:

«Կրկին է իմացումն. նախ՝ առանձին պարզ ըստ ինքեան տեսանէ զամենայն ինչ. այսպիսիս լոյս կոչի եւ լուսաւոր: Եւ երկրորդ՝ ի զգայարանս խառնեալ... եւ թիւրեալ... [եւ] խաւար կոչի, որ ի զգայութիւնս է կապեալ եւ հեշտացեալ»*:

«Երկակի է [մարդու] իմացումը. առաջինը՝ երբ իր առանձնակի պարզութեամբ է տեսնում ամէն ինչ. այսպիսին կոչւում է լոյս եւ լուսաւոր: Իսկ երկրորդը՝ որ խառնուած է զգայարանների հետ... եւ թիւրացած է... [եւ] կոչւում է խաւար, որ կապուած է զգայարանների հետ եւ հեշտացած»:

Ինչպէս տեսնում ենք, զգայարանների հետ չխառնուած տեսումը սկզբունքօրէն գերադասւում է ս. հայրերի կողմից: Եթէ անսրբազգաց գիտակցութիւնը լայն բացած աչքերով ներընդունում է ամէն մի պատահական տպաւորութիւն՝ առանց զանազանելու արարածի ներքին աստուածաստեղծ եւ անեղծ էութիւնը մարդու մեղքով եղծուած ապականելի կեղեւից եւ առանց տարբերելու լուսաւոր, աստուածահաճ ազդակ պարունակող կերտուածները մեղսայարոյց յօրինուածներից, ապա աստուածապաշտ անձը, իր սրտում կրելով Աստուծոյ խօսքի *զատողական* ներգործութիւնը, ամէն կերպ ձգտում է զատորոշուել ամենայն ախտաւոր եւ ապականելի տպաւորութիւնից՝ հասու լինելու համար այն հոգեւոր ճշմարտութիւններին, որոնց պատկերաւոր արտայայտման կոչուածութիւնն է գիտակցում իր անձում: Այդ զատորոշումը ենթադրում է ամբողջական ինքնանուիրում. յօժարակամ մուտք *նեղ դռնով* [Մատթ. է 13] դէպի նուիրական սպասաւորութեան եւ ճգնաւորական ծառայութեան խորանը, որպէսզի յայտնուի ուղղափառութեան կարգում՝ թէ՛ անձնական կենսակերպը եւ թէ՛ մասնագիտական գործընթացը հնազանդեցնելով Եկեղեցու վարդապետութեամբ հաստատուած հոգեւոր սկզբունքներին:

«Նախ տքնութեամբ եւ չարչարանօք մարմնոյ՝ պահօք, աղօթիւք, զետնախշտութեամբ եւ այլովք, զդիւրութիւն մարմնոյ ի բաց մերժեմք. եւ ապա իմացական տեսութիւնն մեր մաքրի եւ սրբի եւ թեթեւանայ ի ծանրութենէ»**:

«Նախ տքնութեամբ եւ մարմնի չարչարանքներով՝ պահքով, աղօթքով, զետնախշտութեամբ եւ այլ [ճգնութիւններով], յաղթահարում ենք մարմնի հեշտասիրութիւնը, եւ ապա՝ մաքրւում եւ սրբւում է մեր իմացական տեսութիւնը եւ թեթեւանում ծանրութիւնից»:

Նիւթեղէն ծանրութիւնից թեթեւացած եւ նրբացած միտքն անհրաժեշտ նախապայման է շնորհական տեսում եւ հոգեւոր պատկերըմբռնողութիւն ձեռք բերելու համար: Միայն ապաշխարութեամբ եւ ճգնութեամբ երկ-

* Ինչպէս ս. վարդապետներն են ասում՝ «Զանազան վարագուրք. զանազան ձեւքն... որ յեկեղեցւոջ կարգեալ են... եւ զարդսն... ծածկոյթ են իմանալեաց եւ աննիւթից իրաց եւ ի վեր ածեն մեզ յիմանային» (տե՛ս «Լուծմունք Դիոնեսիոսի ի Դաւթէ եւ Յակոբայ», ս. Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. N 55, էջ 12բ—13ա:
** Տե՛ս ս. Գրիգոր Տաթեւացի, «Համառօտ լուծմունք դժուարիմաց բանից ի մեկնութիւն գրոց Յոբայ» (ՄՄ, ձեռ. N 1115, էջ 70ա—բ):

* Տե՛ս ս. Գրիգոր Տաթեւացի, «Քարոզ վասն խոհեմութեան» («Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր», Կ. Պոլիս, 1741, էջ 99):
** Տե՛ս ս. Գրիգոր Տաթեւացի, «Քարոզ վասն կաթին գիտութեան» («Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր», Կ. Պոլիս, 1740, էջ 280):

ռային եւ աշխարհիկ տպաւորութիւններից մաքրուած եւ զգայական հեշտախտութիւններից ազատագրուած միտքն է ընդունակ Շնորհի ներազդմանը, որով թափանցում է հոգեւոր իրականութեան իմանալի աշխարհը եւ երկնային խորհուրդները տպաւորում իր մէջ՝ որպէս հոգեւոր պատկերների նախատիպեր:

Սակայն չպէտք է կարծել, թէ այս ամէնը ենթադրում է բացարձակ հեռացում տեսանելի աշխարհից: Ընդհակառակը՝ զգայարանների պահեցողական ինքնասանձամբ մաքրուած գիտակցութիւնը սկսում է Աստուծոյ արարածներին նայել մաքուր, *լուսաւոր աչքով՝* նրանցում փնտրելով արարչական մաքուր նախատիպը. այս պատճառով այն չի կառչում նրանց արտաքին, նիւթեղէն, ապականութեան եւ փոփոխութեան ենթակայ շերտից՝ սոսկ զգայապէս ընկալելով *զպատահմունքն ի վերայ եկեալ** (արտաքին պատահական կողմերը), այլ ներթափանցում է դէպի արարածի գոյաբանական յաւիտենական արմատը եւ տեսնում *զգոյացութիւն իրին ի ներքոյ եղեալ*** (իրի ներսում դրուած գոյացութիւնը):

Այսպէս, լուսաւոր աչք ունեցողի համար խորապէս ներդաշնակուած է իմանալի եւ զգալի աշխարհների տեսումը, քանզի ամէն մի զգալի արարած ընկալւում է որպէս հոգեւոր իրականութեան նշանակ: Այդ ներդաշնութեան սերմն իր սրտում է կրում ամէն մի ճշմարիտ քրիստոնեայ՝ իր կեանքով մարմնաւորելով Աստուածորդու տնօրինութիւնը, որով իրականացուեց Արարչի եւ արարածի, Աստուծոյ եւ մարդու հաշտեցումը: Այդ ներդաշնութեան արտացոլումն է հանդիսանում ամէն մի ճշմարիտ կրօնական պատկեր, ուր վերիմացական եւ անարտայայտելի, ձեւ ու կերպարանք չունեցող տնօրինական խորհուրդներն արտայայտուած են տեսանելի ձեւերով ու կերպարներով, ընդ որում՝ ոչ թէ սոսկ խորհրդանշաններով եւ զարդաձեւերով, այլ՝ կենդանի զգայական արտայայտչականութեամբ՝ զգայական իրերի վերոնշեալ տեսումից բխող, որը ոչ թէ հպաւորուած է նրանց նիթեղէն յատկանիշներին, այլ՝ տպաւորուած նրանց հոգեղէն էութեամբ:

Այսպիսի պատկերները յայտնւում են Եկեղեցու կեանքում որպէս սրբագործուած *սրտի բարի գանձերից բխած*—կերպաւորուած *խօսք* [Ղուկ. Զ 45], որպէս **թանձրացեալ յայտնութիւն՝** տրուած *ընտիր անօթների* միջոցով: Դրանք դառնում են կրօնական միջավայրում անհրաժեշտ կրթողական ազդակներ՝ օգնելով *նիւթական կերպարանօք համբառնալ առ աննիւթն**** եւ մեծապէս նպաստում են հաւատացեալի գիտակցութիւնը ճշմարիտ աշխարհըմբռնողութեան եւ ուղղափառ աստուածախոհութեան լուսոլորտում պահելու խնդրին:

Արդարեւ, ոչ ամենուր եւ ոչ ամէն ժամանակում կարող է Եկեղեցին արգասաւորուել այսպիսի կատարեալ պտուղներով, մինչդեռ նրա պաշտամունքային համակարգը միշտ եւ ամենուր պահանջում է նման ազդակների

* Տե՛ս ս. Գրիգոր Տաթեւացի, «Գիրք հարցմանց», էջ 120:
** Տե՛ս նոյն տեղում:
*** Տե՛ս «Լուծմունք Դիոնեսիոսի ի Դաւթ եւ Տակորայ», ՄՄ, ձեռ. N 55, էջ 17բ:

առկայութիւնը: Այս պատճառով Եկեղեցու աւանդութիւնը որդեգրել է բոլոր այդպիսի պատկերները եւ ամրագրել իր ժառանգութեան մէջ որպէս **կանոններ՝** իմաստուն նախանձախնդրութեամբ հետամուտ լինելով դրանց ընդօրինակութեանը: Նման մօտեցումն «արդարացւում» է այդ ստեղծագործութիւնների բացառիկ յայտնութենական բնոյթով, որի արժանիքը մէկ անգամ եւ ընդմիշտ յայտնուած եւ հանճարեղ պարզութեամբ հոգեւոր խորհուրդն իր մէջ բովանդակող ձեւի մէջ է, քանզի վերջինս, լինելով ոչ թէ վարպետութեան, այլ շնորհընկալութեան արգասիք, էապէս չի տուժում բարեխղճօրէն արուած ընդօրինակութիւններից: Աւելին, կանոնին հնազանդուող նկարիչը նրա միջոցով կարող է թափանցել պատկերի հոգեւոր բովանդակութեան մէջ եւ, հաղորդ դառնալով նրա ծագումնաբանական ակունքին, ստեղծել նոր, կենդանի պատկերներ՝ ըստ իր հոգեւոր մակարդակի եւ շնորհակրութեան աստիճանի: Այսպէս, եկեղեցական կերպարուեստում կանոնները իւրայատուկ զարգացում են ստացել՝ ներառելով նոր ճանաչողութիւններ ու սկզբունքներ, սակայն բնոյթով հաւատարիմ եւ հնազանդ մնալով իրենց նախօրինակ—յայտնութիւններին:

Այդ հնազանդութիւնը յար եւ նման է աստուածպաշտական կանոնակարգին ենթարկուելու կրօնաւորական սկզբունքին: Ինչպէս որ ս. հայրերի կողմից աստուածպաշտութեան համակարգում հաստատուած դաւանական բանաձեւերը, աղօթքներն ու ծիսակարգերը գործում են որպէս բարեխնամ սահմաններ՝ պահպանող ամենայն ինքնամիտ աստուածախոհութիւնից եւ վտանգաւոր ինքնագործութիւնից, այնպէս էլ պատկերագրական կանոնները հանդիսանում են որպէս շնչաւորը՝ հոգեւորից, պատահմունքայինը՝ գոյացականից, երեւակայականը յայտնութենականից զատորոշող սրբազան սահմաններ, որոնք չեն թողնում դուրս գալ ինքնահնար թափառումների, այլ պահում են նուիրական խորանի ներսում... Եւ, ինչպէս որ դաւանական բանաձեւերով իր հաւատը խոստովանող, հայրաւանդ աղօթքներով իր խօսքն Աստծուն ուղղող եւ ընդհանրական ծիսակարգով ս. Խորհուրդներին հաղորդակցուող հաւատացեալը յայտնւում է Սուրբ Հոգու խնամածութեամբ յագեցած ապահով խորհրդական միջավայրում, այնպէս էլ պատկերագրական կանոնների համապատասխանութեամբ իր ստեղծագործութիւնը կերտող նկարիչը յայտնւում է օրինաբեր եւ շնորհընկալ հոգեվիճակում՝ մերձ եւ հուպ այն շնորհաբուխ ակունքին, որի հայեցողութեան եւ յայտնութեան պտուղն են հանդիսացել աւանդուած կանոնները:

Ամենեւին չձգտելով անպայմանօրէն ստեղծել «նորը» եւ «սեփականը»՝ հոգեւոր արուեստի ճշմարիտ մշակները, հնազանդուելով ս. հայրերի կողմից հաստատուած կանոններին՝ որպէս ոչ պատահականօրէն, այլ՝ նախախնամօրէն յայտնուած իրական նախահիմքերի, ներընդունել են նրանցում պարունակուող արարողական սերմերը (որ կենդանի աճ եւ զարգացում են ենթադրում) եւ արժանացել կանոնը **նորովի** եւ **իւրովի** վերակերտելու եւ նորայայտ սկզբունքներով յագեցնելու «իրաւասութեանը»:

Կանոնները նրանց համար են կաշկանդիչ, ովքեր հեռու են աս-

տուածպաշտութիւնից եւ ինչպէս որ կեանքում են հակուած արատաւոր «ազատամտութեան», այնպէս էլ արուեստում փնտրում են «ազատ ստեղծագործական ձախրանք», որն իրականում ծառայութիւն եւ ստրկացում է մեղքին: Քանզի այդ «ազատութեան» մէջ ամէն ոք որսուած եւ կապուած է իր *սրտի ցանկութեամբ* [Հռոմ. Ա 24]՝ հեշտասիրութիւնից մինչեւ փառատենչութիւն ձգուած *ամօթական* կապանքներով:

Մինչդեռ բոլոր նրանք, ովքեր հաւատքով եւ ճշմարտասիրութեամբ յայտնուել են աստուածպաշտական կանոնակարգում եւ վայելել նրանում ապրուող շնորհական ազատութիւնը, պատկերագրական կանոնների գոյութեանը նայում են ոչ թէ որպէս կաշկանդիչ սահմանների, այլ՝ օրինեալ եւ օրինաբեր դռների, որոնցով ստեղծագործ կամքը մուտք է գործում դէպի հոգեւոր ընդարձակութիւն՝ հանդիպելով նրանում ամփոփուած անպարագիծ Շնորհի ճառագմանը: Այս *հանդիպման* մէջ ջնջւում են արտաքին—կոպիտ զգայական գրգիռների հետքերը՝ տեղի տալով ներքին—նրբագոյն շնորհական ազդակների, որոնց լոյսի ներքոյ բացայայտւում են կանոնների նշանակալի ծալքերում զետեղուած գերիմաստ խորհուրդները՝ նկարչին պարգեւելով արարողական իմաստութիւն ու եռանդ:

Այսպիսին է եղել անցեալում մեզ յայտնի բոլոր մեծանուն մշակների ստեղծագործական ներընթացը: Այս պատճառով նրանց ստեղծած պատկերները շնչում են խորհրդական ճանաչում կրող իմաստութեամբ եւ պարունակում մեծ շնորհական լիցք: Նրանց ամէն մի նոր հպումը կանոնի հետ նրանում անթեղուած նոր շերտի բացայայտութիւն է եղել՝ թէ՛ իմացական, թէ՛ զգացական—տպաւորական առումով: Եւ Եկեղեցու բազմամեայ աւանդութեան մէջ միեւնոյն կանոններով ստեղծուած բազմաքանակ ստեղծագործութիւններով, յիրաւի, մարդկային միտքը յաւէտ ներթափանցել է իրեն ի վերուստ տրուած յայտնութիւն—պատկերների խորհրդական անհունի մէջ, ճիշտ այնպէս, ինչպէս որ աստուածաշնչեան միեւնոյն խօսքերը կամ միեւնոյն դաւանական բանաձեւերը շարունակ մեկնուել եւ լուսաբանուել են Եկեղեցու վարդապետարանում՝ ամէն ժամանակի համար պահուած նոր իմացական ծալք բացայայտելով:

* * *

Անդրադառնալով մեր ժամանակներին՝ չենք կարող չխոստովանել, որ այսօր մեզանում եկեղեցական արուեստը մեծ անկման մէջ է գտնւում: Աւանդութեան յայտնի ընդհատումների հետեւանքով այն այժմ խիստ կտրուած է իր սրբազան նախահիմքերից եւ վաղուց ի վեր կորցրել է իր ամբողջական ուղղափառ նկարագիրը: Դէպի անցաւոր աշխարհն արտաբացուած տգիտութեան դռներով ներս են թափանցել բազում օտար եւ խառնածին տարրեր... Եւ եկեղեցիների ներքին յարդարանքն այժմ բնորոշւում է պատահական ընտրողութեամբ ներընդունուած, յաճախ կանոնների անտեղեակութեամբ կատարուած, տարաբնոյթ պատկերների եւ ծիսական պարագաների առկայութեամբ:

Առաւել տխրառիթ է այն իրողութիւնը, որ նոյն անհանդուրժելի ճակատագիրն է սպառնում մօտ ապագայում վերակառուցման եւ վերանորոգման ենթակայ տաճարներին...

Եւ մինչ ազգի ստեղծագործական ներուժն արտավատնւում է *այս աշխարհի* [Եփես. Բ 2] յոգնահեղձ խաչմերուկներում՝ *եղծանելի պսակների* [Ա Կորնթ. Թ 25] եւ անցաւոր վարձքի ողորմելի մխիթարութեամբ, հայոց բազմավրդով տաճարները լուռ յանդիմանութեամբ սպասում են իրենց ճշմարիտ մշակներին, ովքեր ուղղափառ նախանձախնդրութեամբ կձգտեն բազմախուռն ժամանակաշրջանների կուտած փոշու տակից վերհանել սրբաւանդ կանոնների գոյեղէն արմատները եւ, իրենց անձերում համադրելով ստեղծագործական օժտուածութիւնն ու աստուածպաշտական նուիրումը, արժանի կգտնուեն վերայարդարելու Աստուծոյ տաճարները...

Անուանի հայագէտ Ղեւոնդ Ալիշանի աշխատասիրութեամբ 1896 թուականին «Բազմավէպում» (հատոր ԾԴ, էջ 289—293, 348—352, 385—397, 446—450) «Պատկերուսոյց գիրք» վերնագրով հրատարակուեց ԺԶ դարի մի ձեռագրի նկարագրութիւնը (Վենետիկի Մխիթարեանների մատենադարան, N 1434), որը միջնադարի հայ մանրանկարչական արուեստում ուսուցողական նկատառումներով ստեղծուած ձեռնարկներից է:

«Գանձասարը» նպատակահարմար գտաւ վերահրատարակել այն՝ զգալիօրէն յաւելելով «Բազմավէպում» ներկայացուած պատկերները, ընտրելով այնպիսիները, որոնք առաւել օրինակելի են գեղագիտական, պատկերագրական եւ կանոնական առումներով:

Ղեւոնդ Ալիշան

ՊԱՏԿԵՐՈՒՍՈՅՑ ԳԻՐՔ

Այսպէս կ'անուանեմք առ ժամս, մինչեւ յարմարագոյն անուն մի պատշաճի, ձեռագիր գրքի մի, որոյ նմանը մինչեւ հիմա չեմք տեսած կամ լսած եւ փափագիմք, որ եթէ ծանօթ է ընթերցողաց կամ նմանն ունողաց, հաճին ծանուցանել ի գիտութիւն բանասիրաց եւ ի գովեստ մեր նախնեաց, որք ոչ միայն գեղեցիկ գրերով եւ գոյներով եւ աւելի կամ պակաս վայելուչ նկարներով եւ զարդերով շատ ու շատ ձեռաց վաստակ թողեր են մեզ՝ յետնոցս, յայլեւայլ գրեանս, այլ եւ ինչպէս գրչութեան ուսում եւ վարդապետութիւն աւանդեր են, այսպէս երեւի, թէ եւ Պատկերագրութեան կամ Նկարչութեան եւ Զարդագրութեան ուսում եւ օրինակ կամ գաղափար mode՝le աւանդած են՝ ամբողջ գիրք մի ձեւացնելով զարդուց եւ պատկերաց՝ թէ՛ գունաւոր եւ թէ՛ անգոյն: Ասոր հաւաստիք է հիմա մեր տեսած Ձեռագիրքն՝ (ըստ սովորական կոչման անտիպ գրոց), բայց սա հազիւ քանի մի թուղթ գրած ունի, բոլորն են զարդաձեւք եւ մանաւանդ՝ պատկերք՝ ըստ մեծի՛մասին նմանօրինակք ԺԴ-ԺԶ ձեռագրաց մէջ եղածներուն. նոր գրողաց եւ նկարչաց օրինակ տալու համար հնարուած, որպէս գուշակուի տեսութեամբ: Գուշակուի, կ'ըսեմք, վասն զի գիրքն, իր նպատակին կամ հեղինակին դիտման հասած ըլլալով (իրեն համար՝ յաջողութեամբ, իսկ մեզ՝ անյաջողութեամբ), այնքան գործածուած է, որ հինցեր եւ շատ մաշեր է, մանաւանդ՝ եզերքներն: Եւ չեմք գիտեր՝ որքան թուղթ կամ մագաղաթ հանուեր կորեր են, վասն զի ո՛չ սկիզբն կամ յառաջաբան ունի, ո՛չ վերջաբան կամ յիշատակարան եւ ո՛չ անուն. թէ՛ սկիզբէն եւ թէ՛ վերջէն պակսած է: Փոքրաչափ գիրք մ'է, իբր 0,18 Զ. երկայն, 0,14 լայն. բովանդակ մնացեալն է 59 թուղթ, յորոց 25-ը՝ մագաղաթ, 34-ը՝ բամբակեայ: Հնութեան կամ տարիքին մէկ հաւաստի յիշատակ մի կայ, յորմէ ստուգուի ԺԶ դարու սկզբում կամ ի վերջ ԺԵ-ին նկարագրուած ըլլալ. այս յիշատակն է մանրագիր տողիկ մի ի ներքեւ 75-րդ երեսին, «ՋՄԹ. թ. Սիրունի լաճն նախատակեցաւ ի մարերիի ԻԶ սուրբ Խաչի աթոռքի, հինգ»: Ձեւ գրոցն համեմատ է թուականին եւ շատ նման դիմացի երեսին գրուած տառերուն, որով գուշակուի, թէ գրողն զայն գրելու ատեն լսեր է այդ Սիրունի լաճին նահատակութինը, յամի 1511, յունիսի 5 կամ 6, բայց ս. Խաչի աթոռք ի՞նչ է, եւ իր հինգ թիւն, կ'ուզեմք ի հմտագունից տեղեկանալ. եթէ Ցայսմաւուրաց մէջ գտուի այդ նահատակութեան յիշատակն, դիւրանայ այս խնդիրս. բայց նախ փափագելի է գտնել զայն Ցայսմաւուրք թերեւս ի կողմանս Վանայ, ուր որ թուի գիրքն գրուած: Գրոց 11-րդ երեսում երկու երկայնաձեւ զարդուց միջոց այս գրուածս այլ կայ. «Աստուած ողորմի Ցուսէփին, ամէն»: Միթէ այդ նահատակեալ լա՞ճն է Ցուսէփդ, թէ՞ ուրիշ մէկ մի: Այս երկու յիշատակներէն զատ ուրիշ չկայ. բայց

կան քանի մի գրուածք այլ՝ կարճ կամ երկայն:

Կարճ գրուածներն բուն գրոց նիւթին եւ նպատակին վերաբերին, թէ եւ շատ քիչ տողք են, այլ գուշակել տան, թէ առաջ կամ ետեւ՝ երկարօրէն գրուած եւ վարդապետութիւն կար նկարչութեան արուեստին, թէ՛ տարից եւ զարդուց պատկերաց ձեւերու նկատմամբ եւ թէ՛ նկարուց գոյներու բաղադրութեանց:

Այս կարճ եւ քանի մի տող գրուածոց մէկն է յերես 15, զարդաձեւից եւ պատկերի մի միջոց համաոստագրեալ. «Ցառաջ Լազվարդն, Կանաչն, Լալ, Կարմիր, Ճնարակ. այս չորս դեղս Ոսկոյ աստառ է, (այսինքն՝ տակ կամ յատակ, fond). քանի Զընջուփրն շատ ազլաս (կամ ատլաս) հան, որ քարն ի քարն չհասնի, որ զգոյն չատէ. լաւ է»: Այս գրուածս հին է, բայց թերեւս՝ ոչ որքան վերոյգրեալ յիշատակարանքն: Աւելի նոր երեւի գրոց վերջին (118) երեսին վարի դի գրուածն՝ ներկերու եւ անոնց տակերու անուններ, կամ «Խրատք դեղոց. Լաժվարդի աստառի երեսուացք, Վարդ. Ալին՝ Լուք. Զընջուփրն՝ Բեհեզ. Կանաչքն..ակ. Մազադեղին (մազտաքէ) Բեհեզ . Լընքով շքէ ? Չինուն՝ Կանաչ. Ճնիրակին՝ Զընջուփր կամ Սիլիկոն... ադեղին Աւխրա (Ocre) դիր՝ կարմրով նշանէ... նկարէ յետոյ բացուացքէ. Չինու բացու(ացք) Սպիտակ»: - Գրոցս 110-րդ երեսն Քրիստոսի Խաչելութեան գունաւոր պատկեր է (որպիսութիւնն յիշուի յետոյ). Անոր եւ Իր Մօր միջոց կարմրով գրուած է. «ԶԱստուածածնի հանդերձին զմէկն ծիրանի արա հանապազ»: Գեղեցիկ խրատ. այս պատկերին մէջ այլ Ցիրամօր բուն հանդերձն կարմրագոյն է: Ուրիշ տեղ մի (երես 33) օտար, բայց հինկեկ գրով, (եզերքն մաշուած), գրուած է «մղ ? Ժիպակ. մղ.. Բ խառնի... ձե՛ռն դիր որ չորնայ.... դի՛ր ի քո ... սրի .. յինում Ղլայեկ. մղ. (ի վե(ռայ) լից ու խան(հանէ) ու լուայ.. ի վե)ռայ Սլ. (սլիկոն?) գրէ»: Սոյն երեսում կան սեւագիծ պատկերք աւետարանչաց Մատթէոսի եւ Մարկոսի, երկուքին վերեւ այլ գրուած անուններին եւ լազվարդ. Մարկոսի զգեստուց վրայ այլ տեղ-տեղ գրուած է Կանաչ. շ. բմ. ԾԲ շխ.: Ուրիշ շատ պատկերաց վրայ այլ գրուած են անուանք եւ աստիճանք ներկոց կամ գունոց. ինչպէս՝ Բաց (գոյն). Խորու. Բաց Ծիրանի. Բաց Խորու. եւ այլն. տեղ մ'այլ (երես 5)՝ «Ամիր աշրխան զարմանալի լուք է»: Այսքան փոքրիկ նշանակք այլ բաւական ցոյց կու տան ներկոց բաղադրութեան հմտութեան, եւ անոնց անուանց ու Դրից. ինչպէս են՝ Աստառն, Բացուացքն, Երեսուացք, եւ այլն: Բնագիր կամ թարգմանած ձեռագրաց մէջ գտուին աւելի երկայն խրատք այս արուեստիս:

Կարճ գրուածոց մէկ մ'այլ է (յերես 31), օտար բան, եւ օտար՝ այլ հին գրչաւ, Հարսին ու փեսայի օրհնէնք մի. բայց տողից կէս մասն շատ ջնջուած, թէ եւ ենթակայն մագաղաթ է. «Աստուածէն աւրհնութեամբն աւրհնէ զէս (այս) թագուհիս ու զթագաւորս, զինչ օրհնեց զերեք թագաւորքն ու եբեր ի յայրն Բեթղեհէմ... յերկրպագութիւն կուսած(ին) Աստուածածնին, որ տեսին... ու զմանուկն Քրիստոս ի խանձարուրս պատեալ ի մսուրն անբանից: Աստուած աւրհնէ զէս թագուհիս, զինչ աւրհնեց զՍառա... ետուր զՍահակ յամուլ յարգանդէ... Թագաւորն Քրիստոս աւրհնէ զթագաւորս ու զթագուհիս եւ զժողովուրդս»... Այսչափ մ'եւս կայ ջնջագիր:

Ի բաց թողլով երես մ'այլ (69) հմայական կամ պահպանակի գրուած, որոյ մեծ մասն չորս աւետարանաց առաջին տողերն է, երկար կոչուած գրուածքն են. Ա. չորս երես (70-3) Խրատական բանք, որ Ոսկեփորկաց մէջ գտուին, եւ Խիկարի կամ ծանօթ անուն հեղինակի մի կ'ընծայուին, եւ քանի մի տողով տուն-տուն բաժնուած են նոյնք եւ նմանք Սիրաքայ եւ Սողոմոնի Առակաց՝ ամենքն ալ *Որդեակ* կոչմամբ սկսուած, ինչպէս. «Որդեա՛կ, ի լեզուէ քումմէ երկիցես՝ որպէս յօտար թշնամւոյ, զի ոչ գիտես յորում ժամու ածէ ի վերայ քո չարիս»: Բ. Կիրակոս կաթողիկոսի կոնդակն, ըստ Թովմայի Մեծոփեցւոյ (տե՛ս Պտմ. Հայոց, Գ. 487) Վասն արձակման ի բանադրանաց՝ Աղթամարայ եւ Աղուանից կաթողիկոսաց եւ այլոց (44-46 երեսք): Գ . «Իմաստասիրի Վէճ ընդ գինի քարբառիւաւս», այսինքն՝ Բարոյախօս (53-54 երես), որ, թղթին վերջին տողին հասած, պակաս մնայ, եւ ասով այլ վկայուի գրոց այլ եւ այլ թղթոց կորսուիլն. գրուածն ութոտեան չափով է եւ *Իմաստասէրն ասէ, Գինին ասէ* կրկնելով՝ տրամաբանութիւն կամ զրուցատրութիւն է գինւոյ վնասու եւ օգտի վրայ: Դ. Երես 74-5 աւելի նշանաւոր եւ ոտանաւոր գրուած մի է բարոյական, Ադամայ եւ Եւայի դժբաղդութեան եւ Քրիստոսի Ծննդեամբ աշխարհի փրկագործութեան վրայօք. լեզուն մաս մի հայերէն, աւելի մասն՝ խառնափնդոր մի պարսիկ, թուրք, թերեւս եւ՝ քորդ: Այս ետքի երկու գրուածքը յետոյ հրատարակեմք՝ յիշեցնելով, որ ասոնց թղթոց եզերքն այլ մաշած կամ պակսած են, մանաւանդ՝ երկրորդն, որ հանդերձ գրերու փոքրկութեան եւ խտութեան եւ համաոստութեան՝ դժուարացնեն զկարդալն, ինչպէս լեզուն այլ՝ զհասկանալն: Այս ամէն գրուածքն միանգամայն 12 երես գրաւեն. քանի մ'այլ կէս կամ ամբողջ պարապ թողուածքն այլ համրելով՝ մնան ոչ պակաս, քան զհարիւր երեսք պատկերաց, որք մեր բուն քննելիքն են:

Պատկերքն գրեթէ բոլոր մէկ գրչի կամ մէկ ժամանակի գործ կ'երեւին, միայն քանի մի երես կամ երեսի մի պարապ տեղ յետին գրիչ մտեր է. յետնագոյն ձաբոտող գրիչ այլ կայ, որ եւ ոչ յիշելու կ'արժէ: Պատկերաց եւ զարդուց մեծագոյն մասն գծաձեւ են Linéaire, ընդհանրապէս բաց կարմիր գունով, քիչ անգամ՝ եւ կապոյտ: Կան եւ գունաւորեալ պատկերք ոչ սակաւ, այլ ոմանք՝ շատ նուաղեալ. ոսկի եւ փայլուն երանգ չկայ բնաւ: Առարկայք պատկերաց՝ շատն Հին եւ Նոր Կտակարանաց անձինք եւ ս. հարք ներկայացնեն, մասն մի՝ եւ Քրիստոսի տնօրէնութեանց եւ Աւետարանի պատմական դիպաց. մեծ մասն սովորական կրնայ ըսուիլ նախայիշեալ դարուց Աւետարանաց կամ Աստուածաշունչ գրոց մէջ գտուածներուն նման, որոց համեմատ է եւ ճարտարութիւն նկարուցն: Գտուին քանի մի անսովոր կամ հազուագիւտ պատկերք եւս նախահարց կամ այլ անձանց, մէկ-երկու այլ բոլորովին այլակերպք կամ հրէշակերպք. մէկն (եր. 59) գունաւորած *Վայրի մարդ* գրուած, կնճթատր, ագեւոր եւ եղջերաւոր, զոր ներկայացնեմք անգոյն. միւսն (եր. 23) շատ ճարտար ձեւացուցած հրէշ քառոտանի մի է՝ գլուխն մարդու դէմքով, այլ բովանդակ մարմնոյն մասունքն այլ եւ այլ չորքոտանեօք, թռչնովք եւ ձկամբք, տեղ-տեղ եւ մարդկային կերպարանօք բաղադրեալ. ինչպէս պիտի տեսնեն ընթերցողք, արեւելեան աւանդութեան եւ ճարտարութեան հնարք թուի սա:

Ինչպէս վարպետք գրի եւ նկարու արուեստը սովորեցնելու համար պարզ ձեւերէ կու սկսին, այսպէս այլ մեր հեղինակն կամ պատկերագիրն իր հաւաքման առաջին ութ կամ տասն երեսաց մէջ միայն զարդեր նկարած է, այնպիսիք, որ սովորաբար ձեռագիր, նաեւ՝ հին տպագիր Սաղմոսաց կանո-

նաց եւ Ծարականաց եզերքում կու տեսնուին. սեղի քան 50 այսպիսի զանազան երկայնաձեւ կամ ուղղահայեաց գծաձեւք կան, 30 մ'այլ՝ հորիզոնական դիրքով. մէկ քանիին վրայ միայն հազիւ կ'երեւին կերպարանք, ինչպէս՝ կէտ ձկան՝ Ցովնան ի բերանի. շատերուն վերի ծայրն խաչով մի կ'աւարտի, ոմանց այլ պոչին կամ ուրիշ մասին վրայ փոքր տաճար մի կայ, եւ ոմանց վարի կողմն՝ ծալապատիկ գառնուկ մի:



Նշանաւոր է (երես 12) կարմրագիծ բարակ զարդ մի, որոյ վարի լայն մասին մէջ փոքր, բայց լայն հաւասարամասն խաչաձեւ մի կայ՝ երկու դին պատած զոյգ մի թռչնովք կտուց-կտցի, որոյ վրայ՝ ներքագիծ ուղղակի թռչելու ձեւով աղաւնի մի թեւաբաց, այլ՝ գլխի-


թիւ 8

վայր՝ իբր Սուրբ Հոգի, որ կտցով բռնէ վերին մասը, որ է սկիհ մի՝ խաչանիշ ճշխարաւ ի վրայն:

Ցետ զարդաձեւից՝ պատկերագիրն ուզեր է վարժեցնել զարդագրերու, այսինքն՝ զարդերով գիրեր ձեւացնել թէ՛ պարզ գծերով եւ թէ՛ օղակաձեւ կամ ագուցիկ, շատ հեղ թռչնովք բաղադրեալ, քիչ հեղ՝ ձկամբ: Ասոնց օրինակ ըլլան մեր թիւքն 1-6. երկու Մ, երկու Ն, երկու Ե տառք. 7 թիւ մանչիկն այլ ներկայացնէ ● գիրը:

Այս երկու իբր տարրական ձեւանկարներէն զատ գրոց այլ եւ այլ իջից մէջ, բայց աւելի սկիզբներում, կան քանի մի կանոնաւոր ձեւով զարդք եւ քանի մ'այլ՝ քմահաճոյք եւ հնարագիտականք. առա-

թիւ 9

ջիններում կրնայ գաղափար մի ըլլալ բոլորակն՝ թիւ 8. երկրորդ տեսակին միւս մեծ բոլորակն՝ թ. 9, երեք շանց կամ գազանաց՝ զիրար խածատելով: Երբեմն թեւաւորաց եւ լուղակաց այլ այսպիսի իրարանցումն նկարեն ձեւագիրք եւ երբեմն այլ զանազան մարմ-

նոց մէկ գլուխ մի յարմարցնեն, ինչպէս այդ երեք ձկանցն՝ թիւ 10: Մեր՝ միջին, երբեմն եւ հին եւ նոր ձեռագրաց ծանօթք՝ շատ հեղ կու տեսնեն ասոնց մէջ, մանաւանդ՝ ի ճակատս զարդանկարուց՝ կնոջադէմ թռչուններ, որ հին առասպելեաց եւ հաւատոց շոշորդք են եւ շատ ազգաց յիշատակարանաց մէջ այլ գտուին. այսպիսի է մեր պատկերագրոց մէջ ընծայելոց մէկն՝ թ. 11. կան քանի մի հատ եւս աւելի սուր նայուածքով թռչնուհիք: Ուրիշ ատանց նման կամ անմման, բնական կամ անբնական զարդերն ու նկարները պիտի յիշենք, ուր որ հանդիպին, եւ ինչ կարգաւ որ ցուցնէ գրոց հիմակուան հաւաքումն, որ թուի այլայլած եւ պակասած հեղինակին կարգածէն:

թիւ 10

թիւ 11

* * *

Ցետ առաջին չորս թղթոց զարդաձեւերուն (տե՛ս երկու նմուշ՝ թիւ 1* [2-րդ երես], 2* [4-րդ երես])* իններորդ երեսն ներկայացնէ երեք պատկերք. ներքեւը՝ Դաւիթ՝ բիւզանդակերպ իմն հագուած, բարձով աթոռակի վրայ նստած, երկայն կոթով քնար ի ձեռին (թիւ 3*), որոյ քով պարզ չորս գծով նեղ երկայն քառակուսի ձեւ մի կայ, որ թուի սաղմոսաց պրակն: Դաւթի գլխուն վերեւը կանգնած է մէկ մի, որոյ լուսապսակ գլխոյն քով գրուած է հնկեկ գրով *Մովսէս մարգարէն*. բայց բաց ի իւր ձեռքի սրածայր եւ վերի կողմը խոտորնակ կամ խաչաթեւի մասով գաւազանէն ամենեին ի Գիրս ծանուցեալ Մովսէսի կերպարանք չունի, այլ՝ Հռովմայ գետնադամբանաց կամ հին նկարուց տեսնուած երիտասարդ անմօրուս կուպակաւոր եւ լուսապսակ սուրբ մի՝ անթեզան լայն լօդիկով, զոր ձախ բազկին վրայ ժողված է. լօդիկին տակի պատմուճանին փեշերուն վրայ եւ վերն այլ գրուած է ԼՋ, այսինքն լազուարտի գունով ներկելու է: Ասոր քովը կեցած

* Աստղանիշ թուով համարակալուած են մեր յաւելած պատկերները:



թիւ 1*

թիւ 2*

է նոյնպէս լուսապսակով կարճ մօրուօք մէկ մի՝ գրեթէ նոյնպէս հագուած (թիւ 4*), ձախ թեւին տակ՝ գիրք մի, զոր ոչ հեղինակն, այլ ուրիշ ոմն կարմրացուցեր է, նոյնպէս եւ աջ ձեռքը, զոր կարկառէ այն անձին, որոյ գլխոյ քով նոր եւ տձեւ գրուած է *Եղիա մարգարէ*: Այս պատկերաց մագաղաթ թղթոյն միւս (10-րդ) երեսն ներկայացնէ վեց պատկերք. երկուքն յայտնապէս մեր տօնած թագաւորքն են (Թէոդոս եւ Կոստանդիանոս), երկուքն այլ՝ բարձի վրայ ծունկ դրած, մէկն՝ երկայն ձողով խաչ ի ձեռին, միւս ձեռքն այլ՝ ի փէշ գօտւոյն, եթէ ուրիշ բան չէ բռնածն. միւսն՝ բազուկները ցածկեկ տարածած է եւ մէկ մատով կու ցուցնէ թերեւս իր դիմաց եղած երկու կիսանձն մարգարէ կամ աւետարանիչ (թիւ 5*, 6*), զի ձեռքերում գալարեալ պրակ կայ. ասոնց նման է հինգերորդն՝ զարմացմամբ նայող ի ձախ կողմն (թիւ 7*), ուր նկարագծած է խաչակալ թագաւորն: Միւս՝ վեցերորդն՝ կիսանձն, թուի հայրապետ կամ քահանայ մի մօրուանի՝ շուրջառով եւ փորուրարով ձեռքները հրաժարական ձեւով վերուցած (թիւ 8*):

թիւ 3*

11-րդ երեսն առաջին ուր երեսաց նման եզերական զարդաձեւեր է. ետեւի երեսն (12)՝ այլ եւ այլ տեսակ զարդ ու պատկեր. որոց մէկն է յիշեալ Սուրբ Հոգւոյ եւ սկիհով զարդն, միւսն՝ մեր օրինակած թիւ 10 միագլուխ եռանկունքն, նոյնպէս եւ այս 12 թիւն,

թիւ 12

որոյ ինչ ցուցընելն յայտնէ եւ վրայի գրուածն՝ *Իգնատիոս*, «գազանաց մանրեալ ժանեօքն»՝ ըստ շարականի, յորմէ կամ ի Մաշոցի եզերքէն առնուած է պատկերն: Այս մեր 10 եւ 12 թուոց քով կանգնած է թէ եւ անգիր, բայց ձեւէն ծանօթ ս. Հռիփսիմէ՝ թագ ի գլուխ, խաչ ի ձեռին, միւս ձեռքն այլ՝ կարկառած. մէջքին վրայ գրուած է ԿՐ, այսինքն՝ կարմիր գունաւորելի է:

թիւ 5*

թիւ 6*

Սոյն երեսին վրայ կայ եւ գեղեցիկ թոչնազարդ մի, նոյնպէս եւ գեղեցիկ 8 թոչնախառն գիր մի: Դարձեալ, բաց ուրիշ մանր զարդերէ, մեծկակ Ե մի մարդագլուխ, ի ձեռքն այլ զարդ մի, որով Ե գրոյն թեւն կ'երկնցնայ, գլխուն վրայէն այլ կ'երկարի զարդաձեւն թիւ 13:

թիւ 7*

13-րդ երես. քանի մի մանր զարդեր, եւ մեր թիւ 8 բոլորակն, հինգ այլ պատկերք՝ թիւ 14, երկուքն՝ մեծկակ եւ կանգուն կեցած, յունաձեւ քահանայական զգեստուք. մին յանուանէ նշանակուած *Ոսկիբերան Յոհան* աջովն օրհնելով, ի ձախում՝ գիրք. միւսն՝ *Սուրբ Բարսեղ*՝ նոյնպէս աջով օրհնելով, եւ ի ձախում՝ հասարակ սրածայր գաւազան կամ ցուպ: Նոյն կանգուն դիրքով, բայց աւելի փոքր, ուրիշ հայրապետ մի թուի. ասոր քով՝ կիսանձն առաքեալ կամ մարգարէ մի՝ աջը վերուցած, ի ձախումն երկայն գալարեալ պրակ: Ասոնց ներքեւ՝ նոյնպիսի անձ մի ծնրադիր՝ փոքրիկ գալարուն պրակ մի ի ձախում, աջը պարզած. դէպ ի ասոր գլուխն օրհնող ձեռք մի կայ՝ եռանկիւնի ձեւէ կամ թեզանէ դուրս ելած: Թղթին միւս իջում այլեւայլ ոճով պատկերք կան. երկուքն՝ վերոյգրեալ հայրապետաց նման, մէկ մի՝ աւելի մեծկակ բազմախաչեան նափորտով, գիրք՝ ի ձեռին՝ վրան գրուած *Սուրբ Ներսէս*՝ թ. 15. քովը՝ կլոր եւ անմօրուս դէմքով (զոր յետոյ մէկն թուխ կարմիր ներկեր է) քահանայազգեստ սուրբ մի. ասոր քովն այլ՝ ուրիշ անմօրուս մի՝ բուրվառ՝ աջում, տապանակ կամ տուփ մի՝ ի ձախում. թէ եւ տգէտ մի յետոյ գրեր է Տէր Ռստակէս, յայտնի է Ս. Ստեփանոս ըլլալն, հագած զգեստուց վրայ տեղ-տեղ գրուած է *ՃՆ*(արակ), պատմուճանին վրայ՝ *ԼՋ*: Ասոր քով յետոյ գծագրած կ'երեւի Յոհ. Մկրտիչ՝ եղջերաձեւ մազերով, վրան՝ մաշկեակ

թիւ 4*

մի առած: Այս ամենուն վերեւ կան երեք կիսանձինք. մէկն կնգղաւոր է գրուած (թիւ 9*), միւսն՝ *Թէոդոս* (թիւ 10*), զգեստուց վրայ գրուած *ԿՀ* (կանաչ), տեղ մ'այլ՝ *ալ.* միւսն *Դաւիթ* է՝ տոմս ի ձեռին. երկու թագաւորաց դիմաց այլ մէկ-մէկ օրինոր աջ գծած է: Դատարկ տեղ մ'այլ երկու գլուխ կարմրագծած է, մէկն՝ շատ նուրբ եւ կենդանի նայուածքով: Ցայտ է, որ այս պատկերքս ի ճաշոցաց եւ շարականաց օրինակուած են:

թիւ 14

թիւ 13

15-րդ երես. Ե գիր մի եւ այլ եւ այլ զարդեր, յորոց մէկն՝ ծորակով եւ անզարդ, միւսն՝ անծորակ այլ զարդարուն կուժ. յանկեան մի՝ բազմամանուած բոլորակ մի: Ամենէն նշանաւոր եւ երեսին կէսը գրաւող, ընդ երկայնութիւնն, մեծ լուսապսակով անձ մի՝ թերեւս կոյս մի՝ երկայն պատմուճանով, բայց ազդու կերպարանքով, նայուածքն՝ դէպ ի վեր, եւ ձեռքերն կէս վախով հիացում յայտնեն: Ասոր գլխուն եւ յիշեալ բոլորակին միջոց գրուած են այն չորս դեղոց (գունոց) անուանքն, զոր ի սկզբան նշանակեցինք: Այս անձին ոտից ներքեւ մոուղաւոր* աղազգուլ գլուխ մի կայ՝ ազդու նայուածքով, որ յետոյ գծագրած թուի:

* Մոուղ - ուտուցիկ կզակ

թիւ 9*

թիւ 8*

թիւ 15

թիւ 10*

թիւ 11*

թիւ 12*

16, 17 (թիւ 11*), 18 (թիւ 12*) երեսքն մարդոյ, թռչնոց, ձկանց խառնուածքով տառք են, յորոց մին է եւ մեր ցուցած ● գիրն (թ. 7): 17-րդ երեսում գրուած է առանց յարմարութեան անծանօթ հրեշտակաց անուններ. «Ցածրէլ եւ Սաղմիէլ հրեշտակն, որ ի վերայ դատաստանաց ունին իշխանութիւն», 19 եւ 21 երեսքն երկայն եւ կարճ զարդաձեւք են: 20-րդն մեր 11 թիւն է, անոր նման երկու այլ թռչնուհիք. դարձեալ՝ եռաբբուկ սիրամարգ մի, որ կա՛մ յետոյ գծուած է, կա՛մ հին գծագրածը սեւացուցեր են. նոյնպէս ըրած կ'երեւին ձառադէմ* գլուխ մի եւս: 22-րդ երեսն է հաւանօրէն Մատթէոսի Աւետարանի ճակատ մի, եռանկիւն ձեւի մէջ կարապի երկայն վզով կենդանի մի. ճակատին ներքեւ երկու գլուխ գծագրած են քառակուսի պատուանդանաց վրայ. երկուքին միջոցը գրուած է *Մատթէոս*.

23 երեսն է Պատկերագրոցս ամենէն նշանաւորն՝ այն նախայիշեալ բազմակերպեան բաղադրեալ հրէշն՝ թիւ 16:

Այս պատկերս մեծութեամբն այլ նշանաւոր է, որ մէկ երեսի մէջ չէ բովանդակուած,. այլ հրէշին թռչնամատն ոտքերն անցեր են 24-րդին վրայ, որոյ մեծ մասն պարապ թողուած է: Այդ 24-րդ երեսն ս. Մարկոսի Աւետարանի մի ճակատ է՝ զարդին մէկ կողմն միայն նկարուած եւ ի միջին մասին, որ է կիսաբոլոր, մէջ տեղը գլխակոր գազան մի, շրջանակին մէջ՝ այլ նման գազաններ իրարու ետեւէ վազուրտող: Այս էլ սիւնով մի երկու բաժնում է՝ մէկ կողմը Ս. Մարկոս նստած, սովորական կերպով ձեռքը բերնին դրած, ի զարմացման կամ մտածման. դիմացը՝ իր գրոց առաջին գիրն՝ *Ս*, երկու այլանդակ կենդանեօք ձեւացեալ, երկուքն այլ թաթերովն քառակուսի բան մի բռնեն. վերեւն գրուած է *Մարկոս*:

25-րդ երես. կէս ճակատ մի, յորում եւ բոլորակ մի ճարտար ագուցիկ մանուածքով դիմացն անձ մի կայ. մէկ ձեռքով կ'օրհնէ, միւսով տակառաձեւ բան մի բռնած է, անշուշտ, գրուածքը. լուսապսակին վրայ գրուած է *Նառում*:

27-րդ երեսն ներկայացնէ պարզ գծով շատ մանկադէմ հեծեալ մի, որ աւելի ս. Թէոդորոս թուի, քան ս. Գէորգ՝ երկայն խաչագլուխ նիզակին ծայրը ներքեւը գծուած ալէձեւ գալարեալ վիշապին բերնին մէջ մխած: Այս երեսին մէկ անկեան վրայ փոքրիկ սեւանկար հեծեալ մի կայ՝ զրահազգեստ, արշաւելու դիրքով եւ

թիւ 16

Այս երեսին վարի կողմէն նկարագծած է ծառի մի վրայ հեծած եւ բռնած տղայ մի՝ Քրիստոսի իշով յԵրուսաղէմ մտած ատեն եղածը նշանելով:

26-րդ երեսին նկարքն են բոլորակն թ. 9. նոյն տեսակ աւելի պզտիկ բոլորակ մի՝ չորս իրարախառն թռչնովք. պատկեր մ'այլ կայ՝ անուամբն նշանակուած *Ամբակում*, յայտ է, թէ՝ մարգարէն:

թուի Ս. Վարդան: Ասոր ներքեւ ամենափոքրիկ գունաւոր բաւական ճարտար նկար մի կայ, որ թուի ս. Աստուածածնի եւ ս. Յովսեփայ հեծած՝ զՅիսուս տանելն յԵգիպտոս: Վարի անկիւնում այլ կայ թագաւոր մի հեծեալ, բայց սա թերեւս յետոյ գծագրած է: Դիմացի մասամբ կտրած անկիւնն այլ ցուցնէ հին գծագրութեամբ մի կամ երկու փոքրագտակ գլուխ:

* ձառադէմ - խոժոռադէմ, դժմիտ

Թղթին միւս երեսն (28-րդ) 10 կամ 11 կիսանձն պատկերք ունի. մաշած անկեան վրայ երկու քովէ քով գլուխք կ'երեւան, բայց՝ մէկ մարմին, անշուշտ՝ Պետրոս եւ Պօղոս. ատոնց քով ս. Աստուածածին՝ թեւաբաց, աղօթելու կամ ի գիրկն ընդունելու ձեւով (թիւ 13*). անոր քով՝ Յիսուսի երկու խաչալուսապսակ դէմք. մէկն՝ օրհնելու ձեւով (թիւ 14*), միւսն՝ ձեռքն ի վերայ կրծոց: Ատոնցմէ վար կայ Եղիսէ մարգարէն՝ քովը *Մոլորեալ ոչխար* գրուած, Յիսուս՝ ոչխարն ի յուս: Աւելի վար՝ ս. Գրիգոր՝ ձեռնաբարձ աղօթող: Նոյնպէս Յոր՝ մէկ ձեռքն ի վեր, միւսին երկու մատն ամփոփած, Պետրոս՝ երկու ձեռքերն հաւասար կարկառած (թիւ 15*), սուրբ Յովհաննէս՝ ճղճղած մորուք եւ մազերով:

թիւ 13*

29-րդ երեսին թեթեւ կանաչ եւ կապոյտ գունով վեց հայրապետք նկարուած են քահանայական զգեստուք, ոմանք՝ բազմախաչեան նափորտով, մէկուն վրայ միայն նշմարուի *Գրիգոր* անունն. ամէնքն ալ լայն դեղնագոյն լուսապսակ ունին, եւ անոնց միջոց պարապ տեղերում չորս նման անպսակ գլուխներ նկարած են, ամէնքն ալ՝ մորուանի, ամէնքն ալ՝ բարակ ճարտար գծագրութեամբ, բայց աւելի կամ պակաս, մաշած եւ գունաթափ:

30-դ երեսն պարապ թողուած, յետոյ անարուեստ ձեռք մի կնգղաւոր մի գծագրեր է: 31-րդին վերեւը գրուած է օրհնէնքն հարսին ու փեսին (տե՛ս էջ 329), ներքեւը կան քանի մի իրարագուցիկ գծերով զարդք, որպիսիք մեր ամենէն հին ձեռագրաց մէջ գտուին: 32-րդ երեսն գրեթէ համանման է 28-րդին, քան զայն՝ աւելի բարակ նկարուած ութ պատկերք, եւ են զոյգ *Սուրբ Պետրոս եւ Պաւղոս (թիւ 16*), Սուրբ Աստուածածին,* խաչալուսապսակ *Յիսուս,* (Եղիսէ մարգարէ, Մոլորեալ Ոչխարն, Սուրբ Յովհաննէս Մկրտիչ) եւ *Յիսուս* մի եւս: 33-րդ երեսին վերի կիսում՝ Մատթէոս եւ Մարկոս աւետարանիչք, իւրաքանչիւր աթոռոյ վրայ բազմած գրելու ձեւով. վերեւինն գրուած է *յազվարդ*, Մարկոսի զգեստուց վրայ այլ՝ ուրիշ գունոց անուանց նշանք: Երեսին վարը հակառակ կողմէ գրուած է գունոց բաղադրութեան նուսխայն, զոր նախ օրինակեցինք (տե՛ս էջ330):

թիւ 14*

թիւ 15*

թիւ 16*

թիւ 17

34-րդ երեսն, աճուասիկ, այս եօթն նահապետաց պատկերքն է՝ թիւ 17, յորոց կրնան գուշակիլ ուրիշ պատկերներն ևս, թէ ու շատն, քան զասոնք, աւելի պարզ ու քիչ գծերով ձեւացած են: Նահապետաց առաջնորդ կարգուած է ամենուն նախահայրն Ադամ՝ միւսոց նման զգեստաւորեալ, զգեստուն գոյնն այլ գրուած է *բաց ծիրանի*, միւսոց վրայ՝ *լազվարդ*. ամէնքն այլ աղաչաւորի կերպարանօք թափօրապէս քայլուածք ձեւացնեն. մի՞թէ ընդ առաջ Քրիստոսի ելնեն, մինչ Սա իջաւ Հոգւովն՝ «աւետարանել հոգւոցն, որք էին ի բանտին» [տե՛ս Ա Պետրոս Գ 19], կամ թէ մարդկութեան դարուց անդադար ընթացքը ներկայացնեն:

թիւ 17*

35-րդն անշուշտ պատկերազարդ Աւետարանէ մ'առնուած է եւ է Յովակիմայ եւ Աննայի տեսնելն թոչնոց բոյն մի ծայր ծառի, զոր կու ցուցնէ հրեշտակ մի՝ յոյս տալով, որ իրենք այլ կրնան զաւակ ունենալ. պատկերին ճակատին վրայէն հրեշտակ մ'այլ կու ցուցնէ ձագուց մայրը, որ անոնց ուտելիք կու բերէ: Յովակիմայ տան շէնքին մասերուն վրայ նշանակած է գունոց անուններն՝ լազուարտ, կանաչ, կարմիր, ինչպէս եւ՝ ս. Աննայի զգեստուց վրայ այլ (թիւ 17*):

թիւ 18

36-րդ. Նոյնպէս Աւետարանէ մ'օրինակուած է աւետումն Գաբրիէլի առ ս. Կոյսն, որոյ զգեստուց վրայ նշանակած են գոյնքն. հրեշտակն, ըստ սովորականին, ունի ձախ ձեռքում շատ երկայն եւ նիզակաձայր գաւազան կամ քարոզակ. վրայն գոյներն նշանակուած են՝ *յազուտիր, գնձուփր*, թեւերուն մաս մ'այլ թուի *սեւ*, ս. Աստուածածնի զգեստն՝ *զուտիր*, տան շէնքն՝ *կանաչ*, կողմերն՝ *ճնապակ*, Անտոց բարձն՝ *ճնապակ*, ոտից տակի բարձն՝ *կարմիր* (թիւ 18):

թիւ 18*

37-րդ. Քրիստոսի ծննդեան պատկերն է՝ ըստ ձեռագիր Աւետարանաց, միանգամայն եւ հովուաց աւետիսն, մոգուց գալն, ս. Յովսեփայ զարմացեալ նստիլն. գոյներն այլ նշանակուած են. յատակն՝ *ոկի*, ս. Աստուածածնի անկողնի շրջանակն՝ *այլ գոյն*, ներքին կողմն՝ *գնձ(ուփր)*, ուրիշ տեղ՝ *կանաչ, ճնապակ* եւ այլն (թիւ 18*):

թիւ 19*

38-րդ. Քրիստոսի քառասնօրեայ ընծայումն ի տաճարին. ս. Աստուածածին եւ ս. Յովսէփ ընծայելու կամ զընծայեալն ընդունելու կերպով բազուկնին կարկառեն առ Յիսուս՝ ի գիրկս Սիմէոնի. ասոր քով կեցած է եւ պատաւն Անանա: Երեսին վարի կողմն Քրիստոսի մկրտութիւնն է՝ սովորական տգեղութեամբ. աւելի վայելուչ է Քրիստոսի սրբիչ բերող մանկադէմ հրեշտակն (թիւ 19*):

թիւ 20*

39-րդ. Յարութիւն Ղազարու, որոյ քորք ընկած կան յոտս Յիսուսի. ետեւը՝ երկու առաքեալք, առջեւը՝ երեք անձինք, որոց մէկն քիթը գոցէ, որ մեռելին հոտը չառնու: Երիզապատ Ղազարն տղու կերպարանք ունի բաց աչքերով: Նոյն երեսին քովընտի դիրքով գծագրած է Քրիստոսի այլակերպութիւնն (թիւ 20*):

թիւ 21*

40-րդ. Քրիստոսի մուտն յԵրուսաղէմ իշով. Զակքէոս՝ տղայակերպ՝ ծառի վրայ, կամ ճիւղ կտրող մանուկ մի (թիւ 21*):

թիւ 19

41-րդ. Հրեշտակն ի վերայ գերեզմանին Քրիստոսի. դիմացը՝ կանայքն իւղաբերք, որոց մէկն ունի ի ձեռին երկայն կոթով շերեփի կամ խնկանոցի նման աման (թիւ 19):

թիւ 22*

42-րդ. Համբարձումն Քրիստոսի՝ ոտից քով երկու գալարեալ հրեշտակաց ձեռք տալով, ներքեւ՝ 12 (ոչ 11) առաքեալք, երկայն-երկայն մատներով ձեռուքնին վեր վերուցած՝ մէջ տեղ կեցած է ս. Աստուածածին երկու կուսանօք, երեքն այլ՝ լուսապսակ. կուսանք բազուկնին վեր ատած են չափաւոր, իսկ ս. Աստուածածինն կրծոցը վրայ ափերը բացած (թիւ 22*):



թիւ 23*

43-րդ. Հոգեգալուստ. 12 առաքեալք բազմած են, նայուածքնին եւ ձեռաց դիրքն՝ զանազան կերպով. Պետրոսի ոտից տակ բարձ կամ պատուանդան կայ. վարի կողմն երկու կիսանձանց մէջ կանգնած է թագով եւ օղերով շնորհաղէմ կոյս մի՝ խաչաձեւ պարեգօտի, երկու ձեռաց մէջ դաստառակի պէս լաթեղէն մը բռնած, որ կա՛մ ս. Աստուածածին, կա՛մ Եկեղեցի ներկայացնէ: Հոգին Սուրբ կա՛մ առաջ նկարուած չէ, կա՛մ յետոյ մէկն բարակ գիծերը այլանդակեր է. հինին նշան մի չկայ: Տիրամօր աջակողմի անձն կոյս մի թուի՝ զարմացմամբ նոյն կողմը նայող, ձախակողմեանն այլ՝ իր կողմը նայող այծամօրուք մէկն, որ մատով բան մի ցուցնէ (թիւ 23*):

44-րդ, 45-րդ, 46-րդ երեսք Կիրակոս կաթողիկոսի կոնդակն են:

47-րդ. Աւետարանի մի ճակատ է. սրանկիւն կամարի մէջ է մանկադէմ աւետարանիչն՝ պրակն ի ձեռին. յատակին գոյներն՝ լազուարտ եւ ոսկի:

48-րդ. Պօղոս առաքեալ՝ մեծ լուսապսակով, կանգուն կեցած, զարմացական նայուածքով. յաջում՝ պրակ

թիւ 24*

մի՝ ձախովը ցուցնելով դիմացը (թիւ 24*): Յետոյ՝ կոշտ գծագրած եւ դէմքը քերած այլանդակ բան մի, որ ոտից ձեւէն թուի, թէ դեռ ըլլայ: Սոյն երեսին քովընտի գծագրած երկու դէմք այլ կան, բայց շատ ջնջուած, հազիւ նշմարուին. վերը կեցողն, խաչանիշ լուսապսակէն գուշակուի, որ Քրիստոս է, վարինն ի ծունկ իջած է:

49-րդ. վերեւ մէջտեղ՝ վեցթեւեան հրեշտակ մի, մէկ կողմն՝ այնպէս տեսող Եսայի մարգարէն, պրակն ի ձեռին, միւս կողմը՝ Դանիէլ. ներքեւն՝ երեք անձինք՝ պրակ ի ձեռին, միւս ձեռքով՝ օրհնողք. մին գրուած է *Մովսէս*, գոյնն՝ ճնարակ, միւսն՝ *Պետրոս*. երրորդն (Յուդ) թուի կաթողիկէ թուղթ գրող առաքեալն Յուդա:

50-րդ. մէկ կողմն՝ Յակոբոս, անշուշտ, Եղբայրն Տեառն՝ պրակ ի ձեռին, քալողի ձեւով, բաւական բարակ գծուած. միւս կողմն մեծկակ դիրքով եւ հաստ գծերով առաքեալ մի թուի՝ մէկ ձեռքն ի վեր վերուցած, իր վրան այլ երկնքէն օրհնող ձեռք մի կայ. ինքն միւս ձեռօք կ'օրհնէ դիմացը ծունկ դրած թագաւոր մի, զոր նոր եւ յետին տեսող մի կարծեր է Տրդատ եւ գրեր է *Գրիգոր Լուսաւորիչ*: Երեսին երկայնութեամբ քիթը ցցած մարդադէմ եւ զարդախառն նշանաւոր մեծ Ե գիր մի կայ, որ գուցէ մեծադիր Սաղմոսի մի առաջին գիրն ըլլայ («Երանեալ են ամբիծք...» [Սաղմ. ԾԺԸ 1]):

51-րդ. Ճակատ մի գրոց, վերի կողմն սեւ ու սպիտակ ագուցիկ զարդ մի, վարի կողմը կնիք մի զարնուած է՝ երկու բաժնուած, վարի մասին կ'երեւի *Ես*, բայց ոչ՝ Եսայի:

52-րդ. Երեսն պարապ մնացեր է, յետոյ մէկն կիսկատար անձ մի գծագրեր է:

(շարունակելի)